ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	ՀՕ-165-Ն	*Տեսակը*	Պաշտոնական Ինկորպորացիա
Տիպը	Օրենսգիրք	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀՊՏ 2016.11.04/79(1259) Հոդ.1038	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ Ազգային ժողով	*Ընդունման ամսաթիվը*	04.10.2016
Ստորագրող մարմինը	ՀՀ Նախագահ	*Ստորագրման ամսաթիվը*	01.11.2016
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	01.01.2018	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Ծանուցում

Օրենսգիրքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ Օրենսգրքի՝ 444-րդ հոդվածի 2-13-րդ մասերով սահմանված դրույթների, որոնք ուժի մեջ են մտնում նույն մասերով սահմանված ժամկետներում:

Կապեր այլ փաստաթղթերի հետ

Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2016 թվականի հոկտեմբերի 4-ին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

Մ Ա Ս 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

Բ Ա Ժ Ի Ն 1

ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՐԿԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Գ Լ Ո Ւ Խ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Հարկային օրենսգրքի կարգավորման առարկան

1. Հարկային օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում կիրառվող հարկերի (այսուհետ՝ հարկեր) և Օրենսգրքով նախատեսված վճարների (այսուհետ՝ վճարներ) հետ կապված հարաբերությունները (այսուհետ՝ հարկային հարաբերություններ), սահմանում է Հայաստանի Հանրապետության հարկային համակարգի սկզբունքները, հարկի և վճարի հասկացությունները, տեսակները, հարկ վճարողների շրջանակը, հարկի դրույքաչափերը, հարկի հաշվարկման, վճարման, իսկ Օրենսգրքով սահմանված դեպքերում՝ հարկային պարտավորությունների գանձման կարգն ու ժամկետները, ինչպես նաև հարկային արտոնությունները:

2. Վճար վճարողների շրջանակը, վճարների դրույքաչափերը, վճարների հաշվարկման, վճարման, գանձման կարգն

ու ժամկետները, ինչպես նաև վճարների գծով արտոնությունները սահմանվում են Օրենսգրքով կամ Հայաստանի Հանրապետության օրենքներով:

3. Հարկային հարաբերությունները հարկ վճարողների հաշվառման, սպասարկման, հարկերի ու վճարների սահմանման, հաշվարկման, վճարման, հարկային պարտավորությունների հաշվառման, իսկ Օրենսգրքով սահմանված դեպքերում՝ գանձման, հարկերի ու վճարների վերադարձման, հարկային արտոնությունների սահմանման, հարկ վճարողների, հարկային և լիազոր մարմինների լիազորությունների ու պարտականությունների ամրագրման, հարկային հսկողության իրականացման, Օրենսգրքի և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքների դրույթները խախտելու համար պատասխանատվության միջոցների կիրառության, հարկային պարտավորությունների կատարման ապահովման, ինչպես նաև հարկային վեճերի լուծման հետ կապված հարաբերություններն են:

4. Մաքսային վճարների տեսակները, վճարողների շրջանակը, դրույքաչափերը, հաշվարկման և վճարման կարգն ու ժամկետները, ինչպես նաև արտոնությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությամբ, եթե Օրենսգրքով այլ բան սահմանված չէ:

Հոդված 2. Հարկային հարաբերությունների կարգավորումը

1. Հայաստանի Հանրապետությունում հարկային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության վավերացված միջազգային պայմանագրերով, Օրենսգրքով, վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով, դրանց հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով, ինչպես նաև սույն հոդվածի 3-րդ մասի 1-6-րդ կետերում նշված իրավական ակտերով (այսուհետ՝ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտեր):

2. Վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով և սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով հարկային հարաբերությունները կարող են կարգավորվել միայն Օրենսգրքով սահմանված դեպքերում և սահմաններում:

3. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված իրավական ակտերից տարբերվող այլ իրավական ակտերով չեն կարող կարգավորվել հարկային հարաբերություններ, բացառությամբ,

1) Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի.

2) «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի.

3) Հայաստանի Հանրապետության քրեական և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքերի.

4) «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի.

5) «Հարկային ծառայության մասին» և «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների.

6) «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի:

4. Եթե հարկային հարաբերությունները կարգավորող՝ հավասար իրավական ուժ ունեցող իրավական ակտերի դրույթները պարունակում են հակասություններ, երկիմաստություններ կամ տարընթերցումներ, ապա դրանք մեկնաբանվում և կիրառվում են հարկ վճարողի օգտին:

5. Օրենսգրքով նոր տեսակի հարկի կամ վճարի սահմանում, հարկի կամ Օրենսգրքով սահմանված վճարի դրույքաչափի բարձրացում նախատեսող Հայաստանի Հանրապետության օրենքները կամ Հայաստանի Հանրապետության օրենքների նման դրույթները կարող են ուժի մեջ մտնել այդ օրենքների ընդունման օրը ներառող հարկային տարվան հաջորդող հարկային տարվա սկզբից, բայց ոչ շուտ, քան այդ օրենքների պաշտոնական հրապարակման օրը ներառող ամսվան հաջորդող յոթերորդ ամսվա սկզբից:

6. Հարկային արտոնության սահմանում նախատեսող Հայաստանի Հանրապետության օրենքները կամ Հայաստանի Հանրապետության օրենքների նման դրույթները կարող են ուժի մեջ մտնել այդ օրենքների ընդունման օրը ներառող հարկային տարվան հաջորդող հարկային տարվա սկզբից, եթե այդ օրենքներով ուժի մեջ մտնելու այլ ժամկետ սահմանված չէ:

(2-րդ հոդվածը փոփ. 03.06.19 ՀՕ-61-Ն)

Հոդված 3. Հայաստանի Հանրապետության հարկային համակարգի սկզբունքները

1. Հայաստանի Հանրապետությունում գործում է միասնական հարկային համակարգ՝ հիմնված հետևյալ սկզբունքների վրա.

1) **պարզություն և հստակություն՝** հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերը հարկ վճարողների և հարկային մարմնի համար պետք է լինեն պարզ, հստակ և իրենց մեջ չպարունակեն հակասություններ ու անորոշություններ.

2) **համախմբվածություն՝** հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերը պետք է լինեն

հնարավորին չափ համախմբված, և պետք է խուսափել առանձին իրավական ակտերով հարկային հարաբերությունների կարգավորումից.

3) **հավասարություն՝** հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերը պետք է հավասարապես կիրառվեն բոլոր հարկ վճարողների նկատմամբ.

4) **խտրականության բացակայություն՝** հարկերի ու վճարների կիրառությունը և հարկային վարչարարությունը չպետք է ունենան խտրական բնույթ՝ կախված սոցիալական, քաղաքական, կրոնական, էթնիկական, գաղափարական, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանված այլ գործոններից.

5) **համապարտադիրություն՝** բոլոր հարկ վճարողները պարտավոր են Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում, կարգով և չափով հաշվարկել և վճարել հարկեր ու վճարներ.

6) **թափանցիկություն և հաշվետվողականություն՝** հարկային վարչարարությունը պետք է լինի թափանցիկ, հրապարակային.

7) **ինքնահայտարարագրում և հարկային կարգապահություն՝** հարկ վճարողները պետք է Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով ինքնուրույն հաշվարկեն ու վճարեն հարկերը, վճարները.

8) **հարկային վարչարարության հավասարակշռվածություն՝** որևէ հարկ վճարողի չի կարող՝

ա. պարտադրվել վճարել այնպիսի հարկեր կամ վճարներ, որոնք սահմանված չեն Օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով.

բ. Օրենսգրքի կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջների խախտմամբ պարտադրվել վճարել Օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված հարկեր կամ վճարներ.

գ. պարտադրվել վճարել Օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված հարկերը կամ վճարները, քանի դեռ չեն լրացել դրանց վճարման՝ Օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված վերջնաժամկետները.

9) **պատասխանատվության անխուսափելիություն՝** հարկ վճարողները Օրենսգրքի կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջների խախտման համար անխուսափելիորեն ենթարկվելու են պատասխանատվության.

10) **պատասխանատվության համաչափություն՝** Օրենսգրքի կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջների խախտման համար նախատեսվող պատասխանատվությունը պետք է համաչափ լինի իրավախախտման ծանրությանը.

11) **բազմակարծություն և հրապարակայնություն՝** Օրենսգրքում և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներում փոփոխությունները և (կամ) լրացումները կատարվում են նախապես դրանք քննարկելով ոլորտի մասնագիտական-հասարակական կազմակերպությունների, գործարար միջավայրի ներկայացուցիչների և այլ շահագրգիռ պետական կառավարման մարմինների հետ.

12) **արդիականություն՝** հարկային համակարգը պետք է հիմնված լինի կառավարման (այդ թվում՝ էլեկտրոնային) արդի համակարգերի և մոտեցումների վրա.

13) **մրցունակություն՝** հարկային համակարգը պետք է ներդրումների ներգրավման և նպաստավոր գործարար միջավայրի ձևավորման տեսակետից լինի մրցունակ.

14) **արդյունավետություն՝** հարկային համակարգը պետք է հնարավորություն ընձեռի, որ հարկ վճարողների մոտ հաշվառումը, իսկ հարկային մարմնի մոտ՝ հարկային հսկողությունը իրականացվեն հնարավորինս փոքր ռեսուրսներով:

(3-րդ հոդվածը փոփ. 21.12.17 ՀՕ-266-Ն, 23.03.18 ՀՕ-261-Ն)

ԳԼՈՒԽ 2

ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 4. Օրենսգրքում կիրառվող հիմնական հասկացությունները

1. Հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի կիրառության իմաստով՝ ստորև նշված հասկացություններն ունեն հետևյալ իմաստն ու նշանակությունը.

1) **հարկ՝** պետական և (կամ) հասարակական կարիքների բավարարման նպատակով Հայաստանի Հանրապետության պետական և (կամ) համայնքների բյուջեներ վճարվող պարտադիր և անհատույց գումար, որը վճարվում է հարկ վճարողների կողմից՝ Օրենսգրքով սահմանված կարգով, չափերով և ժամկետներում.

2) **վճար՝** Օրենսգրքով նախատեսված պետական կամ տեղական վճար.

3) **տույժ՝** հարկերը կամ վճարները Օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված ժամկետներում չվճարելու կամ այդ ժամկետներից ուշ վճարելու համար Օրենսգրքով սահմանված պատասխանատվության միջոց.

4) **տուգանք՝** Օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված պահանջները չկատարելու կամ խախտումներով կատարելու համար սահմանված պատասխանատվության միջոց.

5) **ապառք՝** Օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված՝ վճարման վերջնաժամկետում չվճարված կամ չմարված հարկի կամ վճարի գումար.

6) **հարկի կամ վճարի կանխավճար՝** մինչև հաշվետու ժամանակաշրջանի ավարտը որոշակի ժամանակահատվածի համար Օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով հաշվարկվող և կատարվող՝ հարկի կամ վճարի վճարում.

7) **դեբետային գումար՝** Օրենսգրքով սահմանված կարգով իրականացվող հաշվանցման (պակասեցման) արդյունքում առաջացած՝ ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի միասնական հաշվարկում արտացոլված հարկի դեբետային գումար.

8) **միասնական հաշիվ՝** Օրենսգրքով սահմանված դեպքերում հարկ վճարողների հարկային պարտավորությունների մարման նպատակով գանձապետարանի կողմից վարվող պետական արտաբյուջետային միջոցների ավանդային ենթահաշիվ.

9) **գանձապետարան՝** Կառավարության կողմից լիազորված՝ ֆինանսական բնագավառում պետական կարգավորում իրականացնող պետական մարմնի կենտրոնական գանձապետարան.

10) **միասնական հաշվի գումար՝** գումար, որով Օրենսգրքով սահմանված կարգով կարող են մարվել հարկ վճարողի հարկային պարտավորությունները, որը կարող է առաջանալ՝

ա. միասնական հաշվին կատարված վճարումից,

բ. հարկային հաշվարկների (այդ թվում՝ ճշտված) ներկայացումից,

գ. դատարանի վճռի կատարման կամ բողոքարկման հանձնաժողովի ընդունած որոշման արդյունքում պարտավորության պակասեցումից կամ ավելացված արժեքի հարկի զրոյական դրույքաչափով հարկվող կամ Օրենսգրքի 89-րդ հոդվածի 2-րդ մասի 1-3-րդ կետերով սահմանված գործարքների մասով միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարների ավելացումից,

դ. ստուգման կամ ուսումնասիրության արդյունքներով պարտավորության պակասեցումից կամ ավելացված արժեքի հարկի զրոյական դրույքաչափով հարկվող կամ Օրենսգրքի 89-րդ հոդվածի 2-րդ մասի 1-3-րդ կետերով սահմանված գործարքների մասով միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարների ավելացումից,

ե. ավելացված արժեքի հարկի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների մասով ուսումնասիրության կամ ստուգման արդյունքներով արձանագրված (հիմնավորված) միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարներից,

զ. Օրենսգրքի 89-րդ հոդվածի 2-րդ մասի 1-3-րդ կետերով սահմանված գործարքների մասով ուսումնասիրության կամ ստուգման արդյունքներով արձանագրված (հիմնավորված) միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարներից,

է. մինչև 2018 թվականի հունվարի 1-ն ավարտված հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացված՝ ԱԱՀ-ի կամ ակցիզային հարկի հաշվարկներով (այդ թվում՝ ճշտված) առաջացած՝ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի կամ ակցիզային հարկի գումարներից և դեբետային գումարներից.

11) **հարկ վճարող՝** կազմակերպություն կամ ֆիզիկական անձ (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր, նոտար), որը Օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում ունի կամ կարող է ունենալ հարկ կամ վճար վճարելու պարտավորություն.

12) **հարկային մարմին՝** Պետական եկամուտների կոմիտե.

13) **հարկային վարչարարություն՝** լիազոր մարմնի՝ Օրենսգրքի և այլ իրավական ակտերի հիման վրա իրականացվող գործողությունների ամբողջություն՝ ուղղված հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի համատարած և ճիշտ կիրառության ապահովմանը.

14) **լիազոր մարմին՝** Օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում ու սահմաններում վարչարարություն կամ հսկողություն իրականացնող պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմին.

15) **ակտիվ՝** հարկ վճարողին սեփականության իրավունքով պատկանող ցանկացած գույք, գույքային իրավունք և անձնական ոչ գույքային իրավունք.

16) **ոչ նյութական ակտիվ՝** նյութական հիմք չունեցող ակտիվ, բացառությամբ դրամական միջոցների, ֆինանսական ակտիվների և գուդվիլի.

17) **ֆինանսական ակտիվ՝** հաշվապահական հաշվառման համապատասխան միջազգային ստանդարտներով սահմանված ֆինանսական ակտիվ, բացառությամբ դրամական միջոցների.

18) **կանխիկ դրամ՝** Հայաստանի Հանրապետության արժույթը կամ արտարժույթը՝ թղթադրամների կամ մետաղադրամների տեսքով.

19) **հիմնական միջոց՝** հաշվապահական հաշվառման համապատասխան միջազգային ստանդարտներով սահմանված հիմնական միջոց և ներդրումային գույք.

20) **ակտիվի սկզբնական արժեք՝** ակտիվի ձեռքբերման գնի (անհատույց ստացման դեպքում՝ ստացվող ակտիվի գնի, իսկ կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ ներդրման դեպքում՝ կողմերի պայմանավորվածությամբ որոշված գնի, որը ենթակա է գնահատման անկախ գնահատողի կողմից՝ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով), կառուցման կամ ստեղծման կամ մշակման ծախսերի (այդ թվում՝ չփոխհատուցվող և Օրենսգրքով սահմանված կարգով չհաշվանցվող (չնվազեցվող) հարկերի և վճարների), տեղափոխման, տեղակայման ծախսերի և (կամ) ձեռքբերման հետ

անմիջականորեն կապված այլ ծախսերի հանրագումար՝ դրամական արտահայտությամբ.

21) **պարտավորություն՝** հարկ վճարողի առկա պարտք.

22) **պարտավորության սկզբնական արժեք՝** պարտավորության առաջացման պահին այն կատարելու (մարելու) համար անհրաժեշտ ակտիվների հանրագումար՝ դրամական արտահայտությամբ.

23) **եկամուտ՝** ձեռնարկատիրական, անձնական և (կամ) պասիվ եկամուտ.

24) **ձեռնարկատիրական եկամուտ՝** կազմակերպության, անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի կողմից իրականացվող գործունեությանը վերագրվող ակտիվի աճ կամ պարտավորության նվազում, որը, առանձին վերցրած, հանգեցնում է կազմակերպության սեփական կապիտալի կամ անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի զուտ ակտիվների ավելացման, բացառությամբ Օրենսգրքի 108-րդ հոդվածով սահմանված եկամուտ չհամարվող տարրերի և սույն մասի 25-րդ կետի կիրառության իմաստով անձնական եկամուտ համարվող՝ անհատ ձեռնարկատեր կամ նոտար համարվող ռեզիդենտ ֆիզիկական անձի կողմից ստացվող շահաբաժինների: Սույն կետի կիրառության իմաստով՝ ձեռնարկատիրական եկամուտ է համարվում նաև անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեությունից ստացվող եկամուտը.

25) **անձնական եկամուտ՝** ֆիզիկական անձի կողմից աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում իրականացվող գործունեությանը վերագրվող կամ ցանկացած այլ հիմքով (բացառությամբ սույն մասի 24-րդ և 26-րդ կետերով սահմանված դեպքերի) ստացվող դրամական միջոց կամ այլ ակտիվ (այդ թվում՝ բնամթերային ձևով): Սույն կետի կիրառության իմաստով՝ անհատ ձեռնարկատեր կամ նոտար համարվող ռեզիդենտ ֆիզիկական անձի կողմից ստացվող շահաբաժինը համարվում է անձնական եկամուտ՝ անկախ շահաբաժինը որպես անհատ ձեռնարկատեր կամ որպես նոտար ստանալու հանգամանքից և սույն մասի 26-րդ կետի դրույթներից.

26) **պասիվ եկամուտ՝** ֆիզիկական անձի կամ Օրենսգրքի 27-րդ հոդվածի համաձայն, Հայաստանի Հանրապետությունում հաշվառված մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպության կողմից իր ակտիվների ներդրմամբ (տրամադրելով) բացառապես այլ անձանց գործունեությունից ստացվող եկամուտներ, մասնավորապես՝ շահաբաժին, տոկոս, ռոյալթի, վարձակալական վճար, ակտիվների արժեքի հավելաճ (բացառությամբ սույն մասի 24-րդ կետով սահմանված դեպքերի և սույն մասի 25-րդ կետի կիրառության իմաստով անձնական եկամուտ համարվող՝ անհատ ձեռնարկատեր կամ նոտար համարվող ռեզիդենտ ֆիզիկական անձի կողմից ստացվող շահաբաժինների).

27) **համախառն եկամուտ՝** հաշվետու ժամանակաշրջանում ստացված կամ ստացման ենթակա Օրենսգրքով սահմանված եկամուտների հանրագումար.

28) **ձեռնարկատիրական ծախս՝** կազմակերպության, անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի կողմից իրականացվող գործունեությանը վերագրվող ակտիվի նվազում կամ պարտավորության աճ, որը, առանձին վերցրած, հանգեցնում է կազմակերպության սեփական կապիտալի կամ անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի զուտ ակտիվների նվազեցման, բացառությամբ Օրենսգրքի 112-րդ հոդվածով սահմանված ծախս չհամարվող տարրերի.

29) **սեփական կապիտալ՝** կազմակերպության ակտիվների և պարտավորությունների տարբերություն.

30) **ակտիվի հաշվեկշռային արժեք՝** ակտիվի սկզբնական արժեքի և հարկման նպատակով դրանից կատարված նվազեցումների (այդ թվում՝ մաշվածության կամ ամորտիզացիոն մասհանումների) տարբերություն՝ հաշվի առած Օրենսգրքի 106-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված կարգով իրականացված վերագնահատման արդյունքները և Օրենսգրքի 121-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով սահմանված կապիտալ ծախսերը.

31) **պարտավորության հաշվեկշռային արժեք՝** պարտավորության սկզբնական արժեքի և հարկման նպատակով դրանից կատարված նվազեցումների տարբերություն՝ հաշվի առած Օրենսգրքի 106-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված կարգով իրականացված վերագնահատման արդյունքները.

32) **շահաբաժին՝** կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կամ փայահավաք կապիտալում մասնակցությունից (բաժնետոմսից, բաժնեմասից, փայաբաժնից) կամ համատեղ գործունեությունից, որպես շահույթի բաշխում (այդ թվում՝ միջանկյալ բաշխում), մասնակցի ստացած կամ ստացման ենթակա եկամուտ.

33) **տոկոս՝** այլ անձին վերադարձելիության սկզբունքով տրամադրված (այդ թվում՝ վճարային արժեթուղթ ձեռք բերելու դիմաց, որպես փոխառություն, որպես կանխավճար, սպասարկող բանկի բանկային հաշվին հաշվեգրված) դրամական միջոցների օգտագործման կամ իրացման գնի տարաժամկետ վճարման դիմաց ստացված կամ ստացման ենթակա եկամուտ: Տոկոս չի համարվում կետանցված վճարման համար օրենքով կամ գործարքով պարտավորեցված տույժը, ներառյալ՝ բանկային տոկոսը.

34) **ռոյալթի՝** հարկ վճարողի մտավոր սեփականության և այլ ոչ գույքային իրավունքների օգտագործումից ստացված կամ ստացման ենթակա եկամուտ: Ռոյալթի է համարվում մասնավորապես գյուտերի, արտոնագրերի, հեղինակային իրավունքի՝ գրականության, գիտության կամ արվեստի, ներառյալ՝ հեռուստատեսության կամ ռադիոհաղորդակցության համար կինոֆիլմեր, աուդիո և տեսաձայնագրություններ, համակարգչային ծրագրերի, վկայագրի, ապրանքային նշանի, գծագրի կամ մոդելի, սխեմայի, գաղտնի բանաձևի կամ գործընթացի կամ արդյունաբերական, առևտրային կամ գիտական տեղեկատվության կամ փորձի օգտագործման համար եկամուտը: Ռոյալթիի հասկացությունը Օրենսգրքի 10-րդ բաժնում կիրառվում է Օրենսգրքի 197-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իմաստով ու նշանակությամբ.

35) **վարձակալական վճար՝** այլ անձի կողմից գույքի օգտագործման դիմաց ստացված կամ ստացման ենթակա եկամուտ: Վարձակալական վճար է համարվում նաև ենթավարձակալի հատուցումը վարձակալին.

36) **ակտիվի արժեքի հավելաճ՝** Օրենսգրքի 27-րդ հոդվածի համաձայն, Հայաստանի Հանրապետությունում հաշվառված մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ Հայաստանի Հանրապետությունում հաշվառված մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի ակտիվի իրացման գնի և հաշվեկշռային արժեքի դրական տարբերություն.

37) **հարկային արտոնություն՝** Օրենսգրքով սահմանված հարկերի, Օրենսգրքով սահմանված վճարների, տույժերի և (կամ) տուգանքների հաշվարկման ու վճարման ընդհանուր կարգից և (կամ) ժամկետներից բացառություն, որի արդյունքում չի առաջանում հարկային պարտավորություն կամ նվազում, կամ վերանում է կատարման ենթակա հարկային պարտավորության գումարը, կամ հետաձգվում են դրա հաշվարկման և (կամ) կատարման ժամկետները.

38) **ապրանք՝** դրամական միջոցից, ֆինանսական ակտիվներից, ոչ նյութական ակտիվներից, գուդվիլից տարբերվող ցանկացած ակտիվ, եթե Օրենսգրքով այլ բան սահմանված չէ: Արտարժույթի փոխանակման կամ դիլերային վաճառքի գործունեության մեջ արտարժույթը ևս համարվում է ապրանք.

39) **նույն ապրանքներ՝** ապրանքներ, որոնք նույնական են բոլոր առումներով, ներառյալ՝ ֆիզիկական, քիմիական հատկանիշները, որակը, համբավը (ապրանքային նշանը), անշարժ գույքի դեպքում՝ նաև տեղակայման բնութագիրը: Ընդ որում, ապրանքային տեսքի շեղումները, որոնք սպառողների համար համեմատելի ապրանքներից մեկը մյուսից գերադասելու վճռորոշ պատճառ չեն կարող լինել, չեն հանդիսանում այդ ապրանքները նույնական չհամարելու բավարար պայման.

40) **համանման ապրանքներ՝** ապրանքներ, որոնք, նույնական չլինելով, ունեն նման հատկանիշներ և բաղադրանյութեր, որոնք հնարավորություն են տալիս դրանք կիրառելու նույն նշանակությամբ և լինել փոխարինելի: Ընդ որում, ապրանքների համանմանությունը որոշելու համար, ի թիվս այլ գործոնների, հաշվի են առնվում նաև դրանց որակը, համբավը (ապրանքային նշանը), անշարժ գույքի դեպքում՝ նաև տեղակայման բնութագիրը.

41) **ապրանքի մատակարարում՝** ապրանքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցում մեկ անձից մեկ այլ անձի՝ որևէ ձևով կատարվող հատուցմամբ (այդ թվում՝ մասնակի հատուցմամբ կամ դրամաշնորհների կամ սուբսիդիաների ձևով հատուցմամբ) կամ անհատույց: Սույն կետի կիրառության իմաստով՝ ապրանքի մատակարարում է համարվում նաև՝

ա. խողովակաշարերով և էլեկտրահաղորդման գծերով ապրանքի օտարումը,

բ. համատեղ գործունեության մասնակցի կողմից, որպես համատեղ գործունեության մեջ կատարվող ներդրում, համատեղ գործունեության հաշվետու մասնակցին ապրանքի տրամադրումը, եթե այդ ապրանքը տրամադրվում է մինչև հաշվետու մասնակցի կողմից Օրենսգրքի 32-րդ հոդվածով սահմանված հայտարարության ներկայացումը,

գ. գրավատուի կողմից գրավառուին կամ գրավառուի նշած անձին ապրանքի (գրավի առարկայի) նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը.

42) **ապրանքի տեղափոխություն՝** հարկ վճարողի կողմից իր առաքման վայրերի և (կամ) առաքման կետերի միջև տեղափոխվող կամ պահատվության, հանձնարարության, պրինցիպալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրերով կամ վերամշակման հանձնվող կամ վերադարձվող կամ վերամշակման ընդունված ապրանքանյութական արժեքների վերամշակման արդյունքում վերադարձվող կամ որևէ առաքման վայրից կամ առաքման կետից ձեռք բերված և տեղափոխվող (այդ թվում՝ փոխադրողի միջոցով) ապրանքի տեղաշարժ՝ առանց ապրանքի նկատմամբ սեփականության իրավունքի՝ մեկ անձից մեկ այլ անձին փոխանցման.

43) **աշխատանք՝** գործողություն, որի արդյունքն ունի նյութական բնույթ և կարող է օտարվել այլ անձի կարիքների և (կամ) պահանջմունքների բավարարման համար.

44) **ծառայություն՝** գործողություն, որի արդյունքը չունի նյութական բնույթ, և որը ստացողը սպառում է այդ գործողության ընթացքում.

45) **նույն աշխատանք՝** աշխատանքներ, որոնք նույնական են բոլոր առումներով, ներառյալ՝ աշխատանքը կատարողին ներկայացվող պահանջները, աշխատանքի որակը, աշխատանքը կատարողի համբավը (ապրանքային նշանը): Ընդ որում, աշխատանքների բնութագրիչների շեղումները, որոնք աշխատանքներն ընդունողների համար համեմատելի աշխատանքներից մեկը մյուսից գերադասելու վճռորոշ պատճառ չեն կարող լինել, չեն հանդիսանում այդ աշխատանքները նույնական չհամարելու բավարար պայման.

46) **նույն ծառայություն՝** ծառայություններ, որոնք նույնական են բոլոր առումներով, ներառյալ՝ ծառայությունը մատուցողին ներկայացվող պահանջները, ծառայության որակը, ծառայությունը մատուցողի համբավը (ապրանքային նշանը): Ընդ որում, ծառայությունների բնութագրիչների շեղումները, որոնք ծառայություններն ստացողների համար համեմատելի ծառայություններից մեկը մյուսից գերադասելու վճռորոշ պատճառ չեն կարող լինել, չեն հանդիսանում այդ ծառայությունները նույնական չհամարելու բավարար պայման.

47) **աշխատանքի կատարում՝** աշխատանքի կատարման արդյունքի սեփականության իրավունքի փոխանցում մեկ անձից մեկ այլ անձի՝ որևէ ձևով կատարվող հատուցմամբ (այդ թվում՝ մասնակի հատուցմամբ կամ դրամաշնորհների կամ սուբսիդիաների ձևով հատուցմամբ) կամ անհատույց: Սույն կետի կիրառության իմաստով՝ աշխատանքի կատարում է համարվում նաև համատեղ գործունեության մասնակցի կողմից, որպես համատեղ գործունեության մեջ կատարվող ներդրում, համատեղ գործունեության հաշվետու մասնակցի համար աշխատանքի կատարումը, եթե այդ աշխատանքը կատարվում է մինչև հաշվետու մասնակցի կողմից Օրենսգրքի 32-րդ հոդվածով սահմանված հայտարարության ներկայացումը.

48) **ծառայության մատուցում՝** մեկ անձի կողմից մեկ այլ անձի օգտին գործողության իրականացում՝ որևէ ձևով

կատարվող հատուցմամբ (այդ թվում՝ մասնակի հատուցմամբ կամ դրամաշնորհների կամ սուբսիդիաների ձևով հատուցմամբ) կամ անհատույց: Սույն կետի կիրառության իմաստով՝ ծառայության մատուցում է համարվում նաև համատեղ գործունեության մասնակցի կողմից, որպես համատեղ գործունեության մեջ կատարվող ներդրում, համատեղ գործունեության հաշվետու մասնակցին ծառայության մատուցումը, եթե այդ ծառայությունը մատուցվում է մինչև հաշվետու մասնակցի կողմից Օրենսգրքի 32-րդ հոդվածով սահմանված հայտարարության ներկայացումը.

49) **ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման գործարքների համեմատելի հանգամանքներ՝** գործոններ, որոնց ազդեցությամբ մատակարարվող ապրանքի, կատարվող աշխատանքի և (կամ) մատուցվող ծառայության գինը սովորաբար չի ենթարկվում փոփոխության: Մասնավորապես, համեմատելի հանգամանքները որոշելիս հաշվի են առնվում սեզոնայնությունը, մատակարարվող ապրանքի խմբաքանակը, կատարվող աշխատանքի և (կամ) մատուցվող ծառայության ծավալը, ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման պայմանները (մասնավորապես՝ առաքմամբ, առանց առաքման, կանխավճարով, գնորդի կողմից մատակարարին տարաժամկետ վճարմամբ, առկա կամ ապագայում ստեղծվելիք, կատարման ապահովմամբ, առանց կատարման ապահովման) և հարակից ծառայությունները (մասնավորապես՝ տեղակայում, փորձարկում), հետվաճառքային երաշխիքային սպասարկումը.

50) **իրացման շրջանառություն՝** ապրանքների մատակարարումից, աշխատանքների կատարումից և (կամ) ծառայությունների մատուցումից ստացման ենթակա ձեռնարկատիրական եկամուտ՝ դրամական արտահայտությամբ, որը չի ներառում ավելացված արժեքի հարկի, ակցիզային հարկի և (կամ) բնապահպանական հարկի գումարները.

51) **ֆիզիկական անձի անձնական գույք՝** սեփականության իրավունքով ֆիզիկական անձին պատկանող, սպառողական նպատակներով օգտագործման ենթակա անձնական, ընտանեկան կամ տնային օգտագործման գույք.

52) **ֆիզիկական անձի՝ ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող գույք՝** ֆիզիկական անձի անձնական գույք չհանդիսացող գույք, բացառությամբ Օրենսգրքով սահմանված դեպքերի.

53) **իրացում՝** մեկ անձից մեկ այլ անձի ապրանքի և (կամ) աշխատանքի կատարման արդյունքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցում կամ ծառայության մատուցում՝ որևէ ձևով կատարվող հատուցմամբ (այդ թվում՝ մասնակի).

54) **օտարում՝** մեկ անձից մեկ այլ անձի ապրանքի և (կամ) աշխատանքի կատարման արդյունքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցում կամ ծառայության մատուցում՝ որևէ ձևով կատարվող հատուցմամբ (այդ թվում՝ մասնակի) կամ անհատույց.

55) **անապրանք փաստաթուղթ՝** Օրենսգրքի 55-րդ հոդվածով սահմանված պահանջներին ձևականորեն համապատասխանող հաշվարկային փաստաթուղթ, որում նշված գործարքը (ապրանքի մատակարարում, աշխատանքի կատարում և (կամ) ծառայության մատուցում) այդ փաստաթուղթը կազմած կողմերի միջև փաստացի չի կատարվել կամ կատարվել է այդ փաստաթղթում նշված՝ Օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 7-րդ և (կամ) 8-րդ կետով սահմանված տվյալներից մեկի կամ մի քանիսի մեծությունից 20 և ավելի տոկոսով փոքր տվյալներով: Հաշվարկային փաստաթուղթը չի համարվում անապրանք փաստաթուղթ, եթե այն դուրս գրող հարկ վճարողը, ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման և (կամ) ծառայությունների մատուցման պայմանագրի համաձայն, կրում է գործարքը կատարելու պարտավորություն: Անապրանք փաստաթղթերը հարկ վճարողների կողմից հարկերի և (կամ) վճարների հաշվարկման և (կամ) վճարման համար հիմք չեն հանդիսանում.

56) **ուղեկցող փաստաթուղթ՝** Օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով ապրանքի մատակարարումը կամ տեղափոխությունը հավաստող՝ Օրենսգրքի 55-րդ հոդվածով սահմանված համապատասխան հաշվարկային փաստաթուղթ.

57) **առաքման վայր՝** հարկ վճարողին պատկանող կամ նրա կողմից օգտագործվող՝ հասցե ունեցող կամ չհասցեավորված անշարժ գույքի միավոր, առևտրի օբյեկտ, առևտրի իրականացման վայրի վաճառատեղ, անշարժ գույքի միավորներից որպես միասնություն կազմված անշարժ գույքի օբյեկտ, ընդերքի տեղամաս, ներբնակավայրային և բնակավայրերի սահմանագծերից դուրս աշխարհագրական օբյեկտ կամ ընդհանրական տարածք (նույն հասցեում գտնվող կամ չգտնվող, սակայն հարկ վճարողին տիրապետման կամ օգտագործման իրավունքով պատկանող մեկ ընդհանրական՝ այլ անձանց տիրապետման կամ օգտագործման իրավունքով պատկանող տարածքներով չսահմանազատված տարածք), որտեղից մատակարարվում կամ տեղափոխվում է ապրանքը.

58) **առաքման կետ՝** տրանսպորտային միջոց, որն օգտագործվում է հարկ վճարողի կողմից իր ապրանքները մատակարարելու կամ տեղափոխելու համար.

59) **էլեկտրոնային եղանակով հարկային հաշվարկների կամ այլ փաստաթղթերի ներկայացում՝** էլեկտրոնային տեղեկատվական համակարգի միջոցով՝ էլեկտրոնային տեխնոլոգիաների օգտագործմամբ (էլեկտրոնային թվային ստորագրության, էլեկտրոնային ծածկագրի և գաղտնաբառի կիրառման միջոցով) հարկային հաշվարկների կամ այլ փաստաթղթերի ներկայացում հարկային մարմին.

60) **էլեկտրոնային թվային ստորագրություն՝** «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ ստորագրող անձին նույնականացնող, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանող միջոց.

61) **էլեկտրոնային ծածկագիր և գաղտնաբառ՝** էլեկտրոնային թվային պայմանանշանների եզակի հաջորդականությամբ ներկայացված մուտքի անվան, ինչպես նաև գաղտնաբառի համակցություն, որը հնարավորություն է տալիս մուտք գործելու հարկային մարմնի տեղեկատվական համակարգ, նույնականացնել էլեկտրոնային

փաստաթուղթը ներկայացնողին, ինչպես նաև ապահովում է էլեկտրոնային համակարգ մուտք գործողին վերաբերող տեղեկությունների գաղտնիությունն ու պաշտպանվածությունն այլ անձանց կողմից կատարվող գործողություններից.

62) **հարկային վեճ՝** հարկերի ու վճարների հաշվարկման և վճարման, ինչպես նաև Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված այլ պահանջների կատարման նկատմամբ հարկային մարմնի կողմից հարկային հսկողության (այդ թվում՝ ստուգումների, ուսումնասիրությունների) իրականացման հետ կապված հարաբերությունների շրջանակներում հարկ վճարողի և հարկային մարմնի միջև առաջացող անհամաձայնություն.

63) **հարկային գաղտնիք՝** հարկ վճարողի, հարկ վճարողի գործունեության վերաբերյալ հարկային մարմնի կամ հարկային ծառայողի ստացած ցանկացած տեղեկություն, բացառությամբ՝

ա. հարկ վճարողի կողմից կամ նրա համաձայնությամբ հրապարակված տեղեկությունների,

բ. հարկ վճարողի հաշվառման համարի վերաբերյալ տեղեկության,

գ. հարկ վճարողի կանոնադրության մեջ ներառվող տեղեկությունների,

դ. հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտման և կիրառված պատասխանատվության միջոցների վերաբերյալ տեղեկությունների,

ե. հարկ վճարողի կամ հարկ վճարողի գործունեության վերաբերյալ միջազգային կամ միջգերատեսչական պայմանագրերի (համաձայնագրերի) հիման վրա այլ պետությունների հարկային կամ մաքսային մարմիններ ներկայացվող տեղեկությունների՝ այդ մարմիններ ներկայացնելու դեպքում,

զ. հարկ վճարողի կողմից հաշվետու ամսվա ընթացքում աշխատանքային և քաղաքացիաիրավական պայմանագրերի հիման վրա հայտարարագրված աշխատողների թվի վերաբերյալ տեղեկատվության,

է. միասնական հաշվի միջոցով մարված պարտավորությունների, ինչպես նաև միասնական հաշվի միջոցով չմարվող հարկերի, վճարների և պետական տուրքի գծով պարտավորությունների մարման վերաբերյալ տեղեկատվության,

ը. հարկ վճարողի հարկման համակարգի վերաբերյալ տեղեկատվության,

թ. Օրենսգրքի 308-րդ հոդվածով սահմանված և սույն կետում չնշված՝ հրապարակման ենթակա տեղեկությունների:

64) **պարտադիր ծանուցման ենթակա փաստաթղթեր՝** հարկային մարմնի կողմից իրականացվող վարչարարության (բացառությամբ հարկային ստուգումների և ուսումնասիրությունների) շրջանակներում ինչպես թղթային եղանակով, այնպես էլ էլեկտրոնային համակարգի միջոցով ընդունվող՝ Օրենսգրքով և օրենքով նախատեսված փաստաթղթեր (մասնավորապես արձանագրություններ, արգելանքի հանձնարարագրեր, որոշումներ, ծանուցագրեր).

65) **փաստաթղթերի էլեկտրոնային համակարգի միջոցով ընդունում՝** կառավարման ավտոմատացված համակարգերի կիրառմամբ պարտադիր ծանուցման ենթակա փաստաթղթերի ընդունում և հաստատում էլեկտրոնային եղանակով, իսկ այդ հաստատված փաստաթղթերի բնօրինակի համապատասխանությունն արտաքին ձևի՝ էլեկտրոնային փաստաթղթի վրա վավերացվում է դրանք ընդունող համապատասխան պաշտոնատար անձի էլեկտրոնային ստորագրությամբ.

66) **հարկ վճարողներին էլեկտրոնային ծանուցում՝** պարտադիր ծանուցման ենթակա փաստաթղթերի՝ հարկ վճարողներին էլեկտրոնային եղանակով իրազեկում, որն իրականացվում է հարկ վճարողի կողմից հարկային մարմին ներկայացված էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու, իսկ դրա բացակայության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրելու միջոցով: Էլեկտրոնային ծանուցման միջոցով իրազեկված պարտադիր ծանուցման ենթակա փաստաթուղթն ուժի մեջ է մտնում այն էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու կամ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրելու օրվան հաջորդող օրվանից.

67) **դեբիտորական պարտք՝** հարկ վճարողին այլ անձանց (դեբիտորների) կողմից վճարման (այլ ձևով հատուցման) ենթակա պարտքի գումար, բացառությամբ պետական կամ համայնքների բյուջեների նկատմամբ հարկային պարտավորությունների, տուրքերի և պարտադիր այլ վճարների գծով հարկ վճարողին վճարման (վերադարձման) ենթակա պարտքի գումարների.

68) **կրեդիտորական պարտք՝** հարկ վճարողի կողմից այլ անձանց (կրեդիտորներին) վճարման (այլ ձևով հատուցման) ենթակա պարտքի (այդ թվում՝ աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների, շահաբաժինների գծով) գումար, բացառությամբ պետական կամ համայնքների բյուջեների նկատմամբ հարկային պարտավորությունների, տուրքերի և պարտադիր այլ վճարների գծով հարկ վճարողի կողմից վճարման ենթակա պարտքի գումարների:

(4-րդ հոդվածը լրաց., փոփ., խմբ. 21.12.17 ՀՕ-266-Ն, խմբ., փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն, փոփ., լրաց. 21.06.18 ՀՕ-338-Ն, լրաց. 25.06.19 ՀՕ-68-Ն, 23.09.19 ՀՕ-172-Ն, խմբ. 10.09.19 ՀՕ-146-Ն)

Հոդված 5. Օրենսգրքում այլ հասկացությունների կիրառության կանոնները

1. Բացի Օրենսգրքի 4-րդ հոդվածով սահմանված հասկացություններից, Օրենսգրքում կիրառվում են նաև այլ հասկացություններ, որոնց իմաստն ու նշանակությունը մեկնաբանվում են Օրենսգրքի՝ այդ հասկացություններին վերաբերող համապատասխան բաժիններում կամ գլուխներում:

2. «Հարկման օբյեկտ», «վճարի օբյեկտ», «հարկման բազա», «վճարի բազա», «հաշվետու ժամանակաշրջան»

հասկացությունները հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերում կիրառվում են Օրենսգրքի՝ այդ հասկացություններին վերաբերող համապատասխան հոդվածներում նշված իմաստով ու նշանակությամբ:

3. Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ ԵՏՄ) մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման մասով հարկերի և վճարների հաշվարկման ու վճարման հետ կապված հարաբերությունների կարգավորման նպատակով Օրենսգրքում կիրառվող այն հասկացությունները, որոնք սահմանված չեն Օրենսգրքով, կիրառվում են ԵՏՄ մաքսային օրենսդրությամբ կամ մաքսային հարաբերություններ կարգավորող՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված իմաստներով:

4. Հաշվապահական հաշվառման ոլորտը կարգավորող իրավական ակտերում կիրառվող հասկացությունները Օրենսգրքում կիրառվում են այդ իրավական ակտերում կիրառվող իմաստով ու նշանակությամբ, եթե Օրենսգրքով այլ բան սահմանված չէ:

5. Քաղաքացիական, վարչական, քրեական, աշխատանքային, ընտանեկան, հողային, բնական պաշարների օգտագործման և շրջակա միջավայրի պահպանության, լիցենզավորման, ծանուցման, թույլտվության և այլ հատուկ ոլորտների իրավական ակտերում կիրառվող հասկացությունները Օրենսգրքում կիրառվում են համապատասխան ոլորտի իրավական ակտերում կիրառվող իմաստով ու նշանակությամբ, եթե Օրենսգրքով այլ բան սահմանված չէ:

6. Եթե Օրենսգրքում կիրառվող՝ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի (այսուհետ՝ ԱՏԳ ԱԱ) ծածկագրի՝ ԵՏՄ մաքսային օրենսդրությամբ սահմանված մեկնաբանությունը տարբերվում է համապատասխան ԱՏԳ ԱԱ ծածկագրի մասով Օրենսգրքով սահմանված մեկնաբանությունից, ապա կիրառվում է Օրենսգրքով սահմանված մեկնաբանությունը:

(5-րդ հոդվածը լրաց. 21.12.17 ՀՕ-266-Ն)

Գ Լ Ո Ւ Խ 3

ՀԱՐԿԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հոդված 6. Հարկի տեսակները

1. Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են՝

1) պետական հարկեր, որոնց տեսակներն են՝

ա. ավելացված արժեքի հարկը (այսուհետ նաև՝ ԱԱՀ),

բ. ակցիզային հարկը,

գ. շահութահարկը,

դ. եկամտային հարկը,

ե. բնապահպանական հարկը,

զ. ճանապարհային հարկը,

է. շրջանառության հարկը,

ը. ***(ենթակետն ուժը կորցրել է 25.06.19 ՀՕ-68-Ն)***

2) տեղական հարկեր, որոնց տեսակներն են՝

ա. անշարժ գույքի հարկը,

բ. փոխադրամիջոցների գույքահարկը:

2. Հայաստանի Հանրապետությունում չեն կարող սահմանվել այնպիսի հարկեր, որոնք նախատեսված չեն սույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով:

(6-րդ հոդվածը փոփ. 21.12.17 ՀՕ-266-Ն, 25.06.19 ՀՕ-68-Ն)

Հոդված 7. Վճարի տեսակները

1. Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են՝

1) պետական վճարներ, որոնց տեսակներն են՝

ա. պետական տուրքը,

բ. բնօգտագործման վճարը,

գ. սոցիալական վճարը,

դ. ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման (գործողության ժամկետի երկարաձգման) պարտադիր վճարը և օգտագործման պարտադիր վճարը,

ե. հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարը,

զ. կենսաթոշակային վճարը.

2) տեղական վճարներ, որոնց տեսակներն են՝

ա. տեղական տուրքը,

բ. տեղական վճարը:

(7-րդ հոդվածը լրաց. 21.12.17 ՀՕ-266-Ն)

Հոդված 8. Հարկման համակարգերը

1. Հայաստանի Հանրապետությունում գործում են հարկման ընդհանուր և հատուկ համակարգեր:

2. Հարկման ընդհանուր համակարգի շրջանակներում կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները հարկվում են, մասնավորապես, ԱԱՀ-ով և (կամ) շահութահարկով:

3. Հարկման հատուկ համակարգերից՝

1) շրջանառության հարկի համակարգի շրջանակներում կազմակերպությունները հարկվում են ԱԱՀ-ին և (կամ) շահութահարկին փոխարինող շրջանառության հարկով, իսկ անհատ ձեռնարկատերերը և նոտարները՝ շահութահարկով և ԱԱՀ-ին փոխարինող շրջանառության հարկով.

2) *(կետն ուժը կորցրել է 25.06.19 ՀՕ-68-Ն)*

3) միկրոձեռնարկատիրության համակարգի շրջանակներում կազմակերպությունները և ֆիզիկական անձինք Օրենսգրքի 56-րդ գլխով սահմանված դեպքերում ազատվում են մասնավորապես ԱԱՀ-ով և (կամ) շահութահարկով, ինչպես նաև շրջանառության հարկով հարկումից:

4. Հարկման հատուկ համակարգերում գործող կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների համար Օրենսգրքի՝ հարկման հատուկ համակարգերին վերաբերող բաժնով կարգավորվող հարաբերությունների մասով Օրենսգրքով սահմանված այլ հարկերը և վճարները (որոնց շրջանառության հարկը չի փոխարինում, կամ որոնցից միկրոձեռնարկատիրության սուբյեկտները չեն ազատվում) հաշվարկվում ու վճարվում են Օրենսգրքի՝ համապատասխան հարկին կամ վճարին վերաբերող բաժիններով սահմանված կարգով, եթե Օրենսգրքի՝ հարկման հատուկ համակարգերին վերաբերող համապատասխան գլուխներով այդ հարկերի և վճարների հաշվարկման ու վճարման մասով առանձնահատկություններ սահմանված չեն:

(8-րդ հոդվածը լրաց., խմբ. 21.12.17 ՀՕ-266-Ն, փոփ., խմբ. 25.06.19 ՀՕ-68-Ն)

Հոդված 9. Հարկի և վճարի սահմանման ընդհանուր պայմանները

1. Հարկը և վճարը համարվում են սահմանված միայն այն դեպքում, երբ սահմանված են հետևյալ տարրերը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի.

1) հարկ վճարողների շրջանակը.

2) հարկման օբյեկտը.

3) հարկման բազան.

4) հարկի դրույքաչափը.

5) հարկի հաշվարկման կարգը.

6) հարկի վճարման կարգը և ժամկետները:

2. Հարկի և բնօգտագործման վճարի սահմանման համար անհրաժեշտ տարրերը սահմանվում են Օրենսգրքով:

3. Սույն հոդվածի 1-ին մասի դրույթները չեն տարածվում Օրենսգրքով նախատեսված՝ բնօգտագործման վճարից տարբերվող այլ վճարների վրա, որոնց հետ կապված հարաբերությունները կարգավորվում են վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով:

4. Սույն հոդվածի 1-ին մասում նշված՝ հարկի սահմանման տարրերին վերաբերող՝ Օրենսգրքի 10-12-րդ, 14-րդ և 18-րդ հոդվածներով սահմանված կարգավորումները կիրառվում են նաև բնօգտագործման վճարի մասով:

5. Օրենսգրքի 6-7-րդ, 67-72-րդ և 76-80-րդ գլուխներով հարկի համար սահմանված այն կարգավորումները, որոնք չեն վերաբերում սույն հոդվածի 1-ին մասում նշված՝ հարկի սահմանման տարրերին, կիրառվում են նաև Օրենսգրքով նախատեսված վճարների մասով:

Հոդված 10. Հարկման օբյեկտը

1. Հարկման օբյեկտ է հանդիսանում ցանկացած գործարք, եկամուտ, գույք, գործունեության տեսակ (այդ թվում՝ գործողություն կամ գործառույթ) կամ ցանկացած այլ օբյեկտ, որի առկայությունը կամ որի նկատմամբ սեփականության իրավունքի առկայությունը կամ որի կատարումը, Օրենսգրքին համապատասխան, հարկ վճարողի մոտ առաջացնում է հարկի հաշվարկման կամ վճարման պարտավորություն:

2. Յուրաքանչյուր հարկի համար սահմանվում է հարկման առանձին օբյեկտ:

3. Հարկման միևնույն օբյեկտը հաշվետու ժամանակաշրջանում նույն հարկ վճարողի մոտ նույն տեսակի հարկով հարկվում է միայն մեկ անգամ:

Հոդված 11. Հարկման բազան

1. Հարկման բազան հարկման օբյեկտի արժեքային, ֆիզիկական կամ այլ բնութագիրն է:
2. Յուրաքանչյուր հարկի համար սահմանվում են հարկման առանձին բազա և դրա հաշվարկման կարգ:

Հոդված 12. Հարկի դրույքաչափը

1. Հարկի դրույքաչափն այն արժեքային (տոկոսային) և (կամ) հաստատուն մեծությունն է, որը կիրառվում է հարկման բազայի նկատմամբ՝ հարկի չափը որոշելու համար:
2. Յուրաքանչյուր հարկատեսակի համար սահմանվում է (են) հարկի առանձին դրույքաչափ (դրույքաչափեր):

Հոդված 13. Հաշվետու ժամանակաշրջանը

1. Հաշվետու ժամանակաշրջանը ժամանակահատված է, որի համար հաշվարկվում և վճարվում են հարկեր և (կամ) բնօգտագործման վճար, ներկայացվում են հարկային հաշվարկներ (բացառությամբ ներմուծման հարկային հայտարարագրերի, ապրանքների ներմուծման և անուղղակի հարկերի վճարման (կամ անուղղակի հարկերից ազատման, անուղղակի հարկերն այլ կարգով վճարելու) մասին հայտարարության և արտահանման հարկային հայտարարագրերի), կատարվում են Օրենսգրքով սահմանված այլ պարտավորություններ:
2. Հաշվետու ժամանակաշրջանը վերաբերում է միայն հարկային հաշվարկներին, իսկ ժամանակահատվածը՝ ինչպես հարկային այլ փաստաթղթերին, այնպես էլ վճարման վերջնաժամկետներին:
3. Հաշվետու ժամանակաշրջանը հաշվետու ամիսը կամ հաշվետու եռամսյակը կամ հաշվետու կիսամյակը կամ հաշվետու տարին է:
4. Հաշվետու ամիսը որևէ ամսվա 1-ից մինչև տվյալ ամսվա վերջին օրը ներառյալ ժամանակահատվածն է: Հաշվետու եռամսյակը որևէ տարվա հունվար, ապրիլ, հուլիս կամ հոկտեմբեր ամիսների 1-ից մինչև տվյալ տարվա համապատասխանաբար մարտ, հունիս, սեպտեմբեր կամ դեկտեմբեր ամիսների վերջին օրը ներառյալ ժամանակահատվածն է: Հաշվետու կիսամյակը որևէ տարվա հունվար կամ հուլիս ամիսների 1-ից մինչև տվյալ տարվա համապատասխանաբար հունիս կամ դեկտեմբեր ամիսների վերջին օրը ներառյալ ժամանակահատվածն է: Հաշվետու տարին կամ հարկային տարին որևէ տարվա հունվարի 1-ից մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածն է: Սույն մասի դրույթների կիրառության իմաստով, հաշվի են առնվում սույն հոդվածի 5-րդ և 6-րդ մասերով սահմանված առանձնահատկությունները:
5. Կազմակերպության պետական գրանցման (կազմակերպության առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների համար՝ պետական հաշվառման) կամ ֆիզիկական անձի՝ որպես անհատ ձեռնարկատեր պետական հաշվառման կամ որպես նոտար նշանակման դեպքերում հաշվետու ժամանակաշրջանի սկիզբ է համարվում կազմակերպության պետական գրանցման (կազմակերպության առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների համար՝ պետական հաշվառման) կամ ֆիզիկական անձի՝ որպես անհատ ձեռնարկատեր պետական հաշվառման կամ որպես նոտար նշանակման օրը:
6. Կազմակերպության լուծարման (կազմակերպության առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների համար՝ պետական հաշվառումից հանման) կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառումից հանման կամ նոտարի պաշտոնից ազատման դեպքերում հաշվետու ժամանակաշրջանի ավարտ է համարվում կազմակերպության լուծարման (կազմակերպության առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների համար՝ պետական հաշվառումից հանման) կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառումից հանման կամ նոտարի պաշտոնից ազատման օրը:

(13-րդ հոդվածը փոփ. 25.06.19 ՀՕ-68-Ն)

Հոդված 14. Հարկի հաշվարկման կարգը

1. Հարկի հաշվարկը կատարվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար՝ Օրենսգրքի՝ առանձին հարկատեսակներին վերաբերող բաժիններով կամ գլուխներով սահմանված կարգով, բացառությամբ Օրենսգրքով սահմանված դեպքերի:
2. Հարկի հաշվարկը հարկ վճարողները կատարում են ինքնուրույնաբար, բացառությամբ սույն հոդվածի 3-6-րդ մասերով սահմանված դեպքերի:
3. Օրենսգրքով սահմանված դեպքերում հարկի հաշվարկը կատարում են հարկային գործակալները:
4. Օրենսգրքի 5-րդ գլխով սահմանված կարգով իրականացվող համատեղ գործունեության մասով հարկի հաշվարկը, բացառությամբ Օրենսգրքի 32-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հարկերի, կատարում է համատեղ գործունեության

պայմանագրով հարկերի ու վճարների հաշվարկման և վճարման պարտավորություն ստանձնած մասնակիցը (այսուհետ՝ համատեղ գործունեության հաշվետու մասնակից), բացառությամբ սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված դեպքերի:

5. Օրենսգրքի 11-րդ և 12-րդ բաժիններով սահմանված դեպքերում հարկի հաշվարկը կատարում են համապատասխան հաշվառող մարմինները:

6. Օրենսգրքի 17-րդ բաժնով սահմանված դեպքերում հարկի հաշվարկը, իսկ Օրենսգրքի 6-րդ և 10-րդ բաժիններով սահմանված դեպքերում՝ կանխավճարի հաշվարկը կատարում է (կամ հարկի հաշվարկը ճշտում է) հարկային մարմինը:

7. Հարկի հաշվարկը կատարվում է հայկական դրամով:

(14-րդ հոդվածը լրաց. 21.12.17 ՀՕ-266-Ն)

Հոդված 15. Հարկի կամ բնօգտագործման վճարի հաշվարկման մեթոդները և հաշվառման եղանակները

(վերնագիրը լրաց. 21.12.17 ՀՕ-266-Ն)

1. Հարկի կամ բնօգտագործման վճարի հաշվարկը կատարվում է հաշվառման հաշվեգրման մեթոդով, եթե Օրենսգրքով չի նախատեսվում, որ հարկի կամ բնօգտագործման վճարի հաշվարկը կատարվում է հաշվառման դրամարկղային մեթոդով: Օրենսգրքի կիրառության իմաստով՝

1) հաշվառման հաշվեգրման մեթոդը նշանակում է, որ՝

ա. հարկ վճարողը եկամուտների և ծախսերի հաշվառումն իրականացնում է՝ ելնելով իր կողմից այդ եկամուտների ստացման իրավունքը ձեռք բերելու կամ իր համար այդ ծախսերը ճանաչելու պահից՝ անկախ հատուցումների ստացման կամ վճարումների կատարման պահից,

բ. հարկ վճարողը հարկերի, բնօգտագործման վճարի և հարկերից հաշվանցվող (պակասեցվող) գումարների հաշվառումն իրականացնում է՝ ելնելով հարկային պարտավորության ծագման կամ հարկերից հաշվանցվող (պակասեցվող) գումարների առաջացման պահից՝ անկախ իր կողմից իրականացվող գործարքների դիմաց հատուցումների ստացման կամ հաշվանցվող (պակասեցվող) գումարների գծով մատակարարներին կամ հարկային կամ մաքսային մարմիններին վճարումների կատարման պահից.

2) հաշվառման դրամարկղային մեթոդը նշանակում է, որ՝

ա. հարկ վճարողը եկամուտների և ծախսերի հաշվառումն իրականացնում է՝ ելնելով հատուցումների ստացման կամ վճարումների կատարման պահից՝ անկախ իր կողմից այդ եկամուտների ստացման իրավունքը ձեռք բերելու կամ իր համար այդ ծախսերը ճանաչելու պահից,

բ. հարկ վճարողը հարկերի, բնօգտագործման վճարի և հարկերից հաշվանցվող (պակասեցվող) գումարների հաշվառումն իրականացնում է՝ ելնելով իր կողմից իրականացվող գործարքների դիմաց հատուցումների ստացման կամ հաշվանցվող (պակասեցվող) գումարների գծով մատակարարներին կամ հարկային կամ մաքսային մարմիններին վճարումների կատարման պահից՝ անկախ հարկային պարտավորության ծագման կամ հարկերից հաշվանցվող (պակասեցվող) գումարների առաջացման պահից:

2. Սույն մասով սահմանված դեպքերում հարկի կամ բնօգտագործման վճարի հաշվարկը կատարվում է առանձնացված հաշվառման եղանակով: Հարկի կամ բնօգտագործման վճարի հաշվարկման առանձնացված եղանակը նշանակում է, որ՝

1) ***(կետն ուժը կորցրել է 25.06.19 ՀՕ-68-Ն)***

2) ***(կետն ուժը կորցրել է 25.06.19 ՀՕ-68-Ն)***

3) եթե հարկ վճարողը միաժամանակ իրականացնում է հարկման ոչ ենթակա և հարկման ենթակա գործունեության տեսակներ կամ գործարքներ, ապա հարկ վճարողը պարտավոր է վարել հարկման ոչ ենթակա գործունեության տեսակների կամ գործարքների մասով ձևավորվող հարկման օբյեկտների, հարկման բազաների, Օրենսգրքով սահմանված նվազեցումների, հաշվանցվող (պակասեցվող) գումարների և հարկման ենթակա գործունեության տեսակների կամ գործարքների մասով ձևավորվող հարկման օբյեկտների, հարկման բազաների, Օրենսգրքով սահմանված նվազեցումների, հաշվանցվող (պակասեցվող) գումարների առանձնացված հաշվառում.

4) եթե հարկ վճարողը միաժամանակ ստանում է հարկման ոչ ենթակա և հարկման ենթակա եկամուտներ, ապա հարկ վճարողը պարտավոր է վարել հարկման ոչ ենթակա եկամուտների, դրանց ստացման հետ ուղղակիորեն կապված նվազեցումների և հարկման ենթակա եկամուտների, դրանց ստացման հետ ուղղակիորեն կապված նվազեցումների առանձնացված հաշվառում.

5) եթե հարկ վճարողը միաժամանակ ստանում է հարկման նպատակով եկամուտ չհամարվող և հարկման նպատակով եկամուտ համարվող տարրեր (եկամուտներ), ապա հարկ վճարողը պարտավոր է վարել հարկման նպատակով եկամուտ չհամարվող տարրերի (եկամուտների), դրանց ստացման հետ ուղղակիորեն կապված նվազեցումների և հարկման նպատակով եկամուտ համարվող տարրերի (եկամուտների), դրանց ստացման հետ ուղղակիորեն կապված նվազեցումների առանձնացված հաշվառում.

6) եթե հարկ վճարողը միաժամանակ իրականացնում է միևնույն հարկի հիմնական և տարբերակված դրույքաչափերով հարկման ենթակա գործունեության տեսակներ կամ գործարքներ, ապա հարկ վճարողը պարտավոր է վարել այդ գործունեության տեսակների կամ գործարքների մասով ձևավորվող հարկման օբյեկտների ու հարկման

բազաների առանձնացված հաշվառում.

7) եթե հարկ վճարողն իրականացնում է այնպիսի գործարքներ (գործառնություններ), որոնց մասով ձևավորվող հարկման օբյեկտները և (կամ) հարկման բազաները Օրենսգրքով սահմանված դեպքերում կարող են վերանայվել կամ ճշգրտվել, ապա հարկ վճարողը պարտավոր է վարել այդ գործարքների (գործառնությունների) մասով ձևավորվող հարկման օբյեկտների և (կամ) հարկման բազաների առանձնացված հաշվառում.

8) եթե հարկ վճարողը համարվում է Օրենսգրքի 5-րդ գլխով սահմանված կարգով իրականացվող համատեղ գործունեության հաշվետու մասնակից կամ մասնակից, ապա հարկ վճարողը պարտավոր է վարել իր՝ համատեղ գործունեությունից տարբերվող գործունեության մասով ձևավորվող հարկման օբյեկտների, հարկման բազաների, հարկի գումարների, Օրենսգրքով սահմանված նվազեցումների, հաշվանցվող (պակասեցվող) գումարների և համատեղ գործունեության մասով ձևավորվող հարկման օբյեկտների, հարկման բազաների, հարկի գումարների, Օրենսգրքով սահմանված նվազեցումների, հաշվանցվող (պակասեցվող) գումարների առանձնացված հաշվառում.

9) եթե Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտ կազմակերպությունը կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձը Հայաստանի Հանրապետությունում ունի հաշվառված մշտական հաստատություն, ապա այդ ոչ ռեզիդենտ կազմակերպությունը կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձը պարտավոր է Հայաստանի Հանրապետությունում գտնվող ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի հաշվառված մշտական հաստատության մասով վարել ձևավորվող հարկման օբյեկտների, հարկման բազաների, հարկի գումարների, Օրենսգրքով սահմանված նվազեցումների և հաշվանցվող (պակասեցվող) գումարների առանձնացված հաշվառում:

3. Եթե սույն հոդվածի 2-րդ մասի 3-8-րդ կետերով սահմանված առանձնացված հաշվառում վարելը հնարավոր չէ, ապա սույն հոդվածի 2-րդ մասի 3-8-րդ կետերով սահմանված դեպքերում հարկման օբյեկտները, հարկման բազաները, հարկի գումարները, Օրենսգրքով սահմանված նվազեցումներն ու հաշվանցվող (պակասեցվող) գումարները (այն մասով, որ մասով առանձնացվող հաշվառում վարելը հնարավոր չէ) հաշվարկվում են տեսակարար կշիռների մեթոդով՝ հիմք ընդունելով՝

1) ***(կետն ուժը կորցրել է 25.06.19 ՀՕ-68-Ն)***

2) ***(կետն ուժը կորցրել է 25.06.19 ՀՕ-68-Ն)***

3) սույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով սահմանված դեպքում՝ հարկման ենթակա գործունեության տեսակներին կամ գործարքներին վերագրվող հարկման օբյեկտների, հարկման բազաների, Օրենսգրքով սահմանված նվազեցումների կամ հաշվանցվող (պակասեցվող) գումարների տեսակարար կշիռները հարկ վճարողի, համապատասխանաբար, ընդհանուր հարկման օբյեկտների, ընդհանուր հարկման բազաների, Օրենսգրքով սահմանված ընդհանուր նվազեցումների կամ ընդհանուր հաշվանցվող (պակասեցվող) գումարների կառուցվածքում.

4) սույն հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով սահմանված դեպքում՝ հարկման ենթակա եկամուտների տեսակարար կշիռները հարկ վճարողի ընդհանուր եկամուտների կառուցվածքում.

5) սույն հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով սահմանված դեպքում՝ հարկման նպատակով եկամուտ համարվող տարրերի (եկամուտների) տեսակարար կշիռները հարկ վճարողի ընդհանուր եկամուտների կառուցվածքում.

6) սույն հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով սահմանված դեպքում՝ հարկի հիմնական դրույքաչափից տարբերակված դրույքաչափով հարկման ենթակա գործունեության տեսակին կամ գործարքին վերագրվող հարկման օբյեկտների կամ հարկման բազաների տեսակարար կշիռները հարկ վճարողի, համապատասխանաբար, ընդհանուր հարկման օբյեկտների կամ ընդհանուր հարկման բազաների կառուցվածքում.

7) սույն հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով սահմանված դեպքում՝ այդ կետում նշված գործարքների (գործառնությունների) մասով ձևավորվող հարկման օբյեկտների կամ հարկման բազաների տեսակարար կշիռները հարկ վճարողի, համապատասխանաբար, ընդհանուր հարկման օբյեկտների կամ ընդհանուր հարկման բազաների կառուցվածքում.

8) սույն հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով սահմանված դեպքում՝ համատեղ գործունեությունից տարբերվող գործունեության մասով ձևավորվող հարկման օբյեկտների, հարկման բազաների, Օրենսգրքով սահմանված նվազեցումների կամ հաշվանցվող (պակասեցվող) գումարների տեսակարար կշիռները հարկ վճարողի, համապատասխանաբար, ընդհանուր հարկման օբյեկտների, ընդհանուր հարկման բազաների, Օրենսգրքով սահմանված ընդհանուր նվազեցումների կամ ընդհանուր հաշվանցվող (պակասեցվող) գումարների կառուցվածքում:

4. Սույն հոդվածի կիրառության իմաստով համարվում է, որ առանձնացված հաշվառում վարելը հնարավոր չէ, եթե հարկման օբյեկտները կամ հարկման բազաները կամ հարկի գումարները կամ եկամուտները կամ դրանց ստացման հետ կապված՝ Օրենսգրքով սահմանված նվազեցումները կամ հաշվանցվող (պակասեցվող) գումարները հնարավոր չէ ուղղակիորեն վերագրել հարկման ենթակա, հարկման ոչ ենթակա, հարկման տարբեր համակարգերում հարկման ենթակա, տարբերակված դրույքաչափով հարկման ենթակա՝

1) կոնկրետ գործարքին կամ

2) գործունեության կոնկրետ տեսակին կամ

3) եկամտի կոնկրետ տեսակին:

5. Եթե սույն հոդվածի 2-րդ մասի 3-8-րդ կետերով սահմանված առանձնացված հաշվառում վարելը հնարավոր է, սակայն հարկ վճարողն այն չի ապահովել, ապա հարկային մարմինն իրավունք ունի հարկ վճարողի հարկման օբյեկտները կամ հարկման բազաները կամ հարկի գումարները կամ եկամուտները կամ դրանց ստացման հետ կապված՝ Օրենսգրքով սահմանված նվազեցումները կամ հաշվանցվող (պակասեցվող) գումարները որոշելու սույն հոդվածի 3-րդ

մասի 3-8-րդ կետերով սահմանված համապատասխան տեսակարար կշիռների մեթոդի կիրառությամբ:

6. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ առանձնացված հաշվառման եղանակի և սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ տեսակարար կշիռների մեթոդի կիրառության կանոնների առանձնահատկությունները սահմանված են Օրենսգրքի հատուկ մասի՝ առանձին հարկատեսակներին վերաբերող բաժիններում:

7. Օրենսգրքի՝ առանձին հարկատեսակներին վերաբերող բաժիններով սահմանված դեպքերում հարկի կամ հարկման բազայի հաշվարկման համար հիմք հանդիսացող հաշվառումն իրականացվում է հաշվապահական հաշվառումը և ֆինանսական հաշվետվությունները կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված դրույթների հիման վրա, եթե Օրենսգրքով չեն նախատեսվում դրանց կիրառության առանձնահատկություններ:

8. Անհատ ձեռնարկատեր կամ նոտար համարվող ֆիզիկական անձի կողմից ստացվող եկամուտները որպես անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի կամ որպես տվյալ ֆիզիկական անձի եկամուտներ համարելու առումով հիմք է ընդունվում գործարքի կողմ որպես անհատ ձեռնարկատեր կամ նոտար կամ որպես ֆիզիկական անձ հանդես գալու հանգամանքը:

(15-րդ հոդվածը լրաց., փոփ. 21.12.17 ՀՕ-266-Ն, փոփ. 25.06.19 ՀՕ-68-Ն)

Հոդված 16. Արտարժույթով արտահայտված գործարքների ու գործառնությունների հաշվառման կանոնները

1. Արտարժույթով արտահայտված գործարքների ու գործառնությունների շրջանակներում՝

1) ապրանքների ներմուծման կամ արտահանման գործառնությունների մասով ձևավորվող հարկման բազաները և ապրանքների սկզբնական արժեքները որոշվում են՝

ա. ԵՏՄ անդամ չհամարվող պետությունից ապրանքի ներմուծման կամ ԵՏՄ անդամ չհամարվող պետություն ապրանքի արտահանման գործառնությունների դեպքում՝ համապատասխանաբար ապրանքի ներմուծման կամ ապրանքի արտահանման մաքսային հայտարարագրի գրանցման ամսաթվի դրությամբ (անկախ հետագայում այդ գործառնությունների մասով ԵՏՄ միասնական մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի ներմուծման ճշտված մաքսային հայտարարագիր կամ ապրանքի արտահանման ճշտված մաքսային հայտարարագիր ներկայացնելու հանգամանքից)՝ ելնելով այդ օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից,

բ. ԵՏՄ անդամ պետությունից ապրանքի ներմուծման կամ ԵՏՄ անդամ պետություն ապրանքի արտահանման գործառնությունների դեպքում՝ համապատասխանաբար ապրանքը Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու) կամ ապրանքը Հայաստանի Հանրապետությունից արտահանելու (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու) ամսաթվի դրությամբ՝ ելնելով այդ օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից: Այն դեպքում, երբ ապրանքը Հայաստանի Հանրապետության սահմանը հատում է օդային տրանսպորտով կամ փոստային օպերատորի կողմից մատուցվող փոստային ծառայության միջոցով, ԵՏՄ անդամ պետությունից ապրանքի ներմուծման կամ ԵՏՄ անդամ պետություն ապրանքի արտահանման գործառնությունների դեպքում ապրանքի հարկման բազան և սկզբնական արժեքը որոշվում են տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերի՝ կոնոսամենտում, բեռնագրում կամ այլ փաստաթղթերում նշված ամսաթվի դրությամբ՝ ելնելով այդ օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից.

2) Հայաստանի Հանրապետության տարածքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կազմակերպության կամ ռեզիդենտ ֆիզիկական անձի և Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի (բացառությամբ ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի՝ Հայաստանի Հանրապետությունում հաշվառված մշտական հաստատության) միջև կատարվող՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման գործարքների դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետությունում հաշվառված մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպության կողմից իրականացվող՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման գործարքի գծով ավելացված արժեքի հարկի հաշվարկման և վճարման պարտավորությունը, Օրենսգրքի 4-րդ բաժնի համաձայն, կրում է գործարքի կողմ համարվող՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կազմակերպությունը կամ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆիզիկական անձը կամ ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի՝ Հայաստանի Հանրապետությունում հաշվառված մշտական հաստատությունը, ձևավորվող հարկման բազաները և սկզբնական արժեքները որոշվում են համապատասխան հաշվարկային փաստաթղթի դուրս գրման ամսաթվի դրությամբ (անկախ հետագայում այդ գործարքների ճշգրտման արդյունքում Օրենսգրքով սահմանված կարգով ճշգրտող հաշվարկային փաստաթուղթ դուրս գրելու հանգամանքից կամ անկախ հետագայում այդ գործարքի մասով դուրս գրված հաշվարկային փաստաթուղթը չեղարկելու հանգամանքից)՝ ելնելով այդ օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից.

3) հարկային գործակալի կողմից վճարվող՝ հարկման ենթակա եկամուտներից հարկի գումարը հաշվարկվում է այդ եկամուտների վճարման ամսաթվի դրությամբ՝ ելնելով այդ օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի

հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից:

4) սույն մասի 1-3-րդ կետերում չնշված դեպքերում ձևավորվող հարկման բազաները և ապրանքների սկզբնական արժեքները որոշվում են համապատասխան հաշվարկային փաստաթղթի դուրսգրման, իսկ հաշվարկային փաստաթղթի բացակայության դեպքում՝ գործարքին կամ գործառնությանը վերաբերող՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմված այլ փաստաթղթերի կազմման ամսաթվի դրությամբ՝ ելնելով այդ օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից:

2. Սույն հոդվածի կիրառության իմաստով, որպես տվյալ օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեք, հիմք է ընդունվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից մինչև տվյալ օրվա ժամը 16:00-ն հրապարակված միջին փոխարժեքը:

(16-րդ հոդվածը լրաց. 21.12.17 ՀՕ-266-Ն, 21.06.18 ՀՕ-338-Ն, խմբ., փոփ., լրաց. 25.06.19 ՀՕ-68-Ն)

(16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետը 25.06.19 ՀՕ-68-Ն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետով ուժի մեջ է մտնում 25.06.19 ՀՕ-68-Ն օրենքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է այդ օրը և դրանից հետո ԵՏՄ անդամ պետությունից ապրանքի ներմուծման կամ ԵՏՄ անդամ պետություն ապրանքի արտահանման գործառնությունների վրա: 2018 թվականի հունվարի 1-ից հետո ԵՏՄ անդամ պետությունից ապրանքի ներմուծման կամ ԵՏՄ անդամ պետություն ապրանքի արտահանման գործառնությունների դեպքում ապրանքի հարկման բազան և սկզբնական արժեքը 25.06.19 ՀՕ-68-Ն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված կարգով հաշվարկած լինելու հանգամանքը Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի կիրառության առումով հարկային իրավախախտում չի համարվում: 2018 թվականի հունվարի 1-ից հետո մինչև 25.06.19 ՀՕ-68-Ն օրենքի պաշտոնական հրապարակման օրը ԵՏՄ անդամ պետությունից ապրանքի ներմուծման կամ ԵՏՄ անդամ պետություն ապրանքի արտահանման գործառնությունների մասով՝ համապատասխանաբար ներմուծման կամ ապրանքի արտահանման հարկային հայտարարագիր ներկայացված չլինելու փաստը հարկային հսկողության շրջանակներում հայտնաբերվելու դեպքում այդ ապրանքի մասով հարկման բազան և սկզբնական արժեքը որոշվում են 25.06.19 ՀՕ-68-Ն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված կարգով:)

Հոդված 17. Բնամթերային ձևով արտահայտված գործարքների ու գործառնությունների հաշվառման կանոնները

1. Բնամթերային (ոչ դրամական) ձևով արտահայտված գործարքների ու գործառնությունների շրջանակներում ձևավորվող հարկման բազաներն ու ակտիվների սկզբնական արժեքները որոշվում են ազատ (շուկայական) գների հիման վրա՝ Կառավարության սահմանած կարգով:

(17-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Հոդված 18. Հարկի վճարման կարգը և ժամկետները

1. Հարկի վճարումը կատարվում է հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո (իսկ Օրենսգրքով սահմանված դեպքերում՝ նաև կանխավճարների տեսքով՝ մինչև հաշվետու ժամանակաշրջանի ավարտը):

2. Հարկի (այդ թվում՝ կանխավճարի) վճարման ժամկետները սահմանվում են Օրենսգրքի հատուկ մասով՝ յուրաքանչյուր հարկատեսակի գծով առանձին:

3. Հարկի (այդ թվում՝ կանխավճարի), տույժի և (կամ) տուգանքի վճարումը կատարվում է վճարահաշվարկային համակարգի միջոցով, հայկական դրամով:

4. Հարկի (այդ թվում՝ կանխավճարի), տույժի և (կամ) տուգանքի վճարումը համարվում է կատարված վճարողին սպասարկող բանկի վճարման հանձնարարականի հիման վրա Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից միասնական գանձապետական հաշվին գումարի հաշվեգրման օրը:

5. Միասնական հաշվի միջոցով մարվող հարկային պարտավորությունների մարման նպատակով՝

1) հարկ վճարողները հարկի վճարումը կատարում են միասնական հաշվին.

2) հարկի վճարման հանձնարարականում վճարման նպատակի վերաբերյալ նշում չի կատարվում, իսկ նշում կատարվելու դեպքում այն հարկային մարմնի կողմից հաշվի չի առնվում:

6. Հարկի վճարում կատարելու ժամանակ սխալի առկայության դեպքում կիրառվում են հետևյալ կանոնները.

1) վճարումն ըստ հարկ վճարողի նույնականացնելու համար առաջնային է համարվում հարկ վճարողի հաշվառման համարը, այնուհետև՝ հանրային ծառայությունների համարանիշը, իսկ դրա բացակայության դեպքում՝ հանրային ծառայությունների համարանիշի բացակայության վերաբերյալ լիազոր մարմնի տրամադրած տեղեկանքի պատճենը.

2) եթե վճարողը սխալմամբ վճարման հանձնարարականում, որպես հարկ վճարող, նշել է այլ անձի, որի արդյունքում մարվել է այլ անձի հարկային պարտավորությունը, ապա կատարված է համարվում այլ անձի հարկային պարտավորությունը, իսկ գումարը վճարողին վերադարձման ենթակա չէ: Այս դեպքում վճարողը այլ անձի նկատմամբ

ձեռք է բերում քաղաքացիաիրավական պահանջի իրավունք:
(18-րդ հոդվածը փոփ. 25.06.19 ՀՕ-68-Ն)

Հոդված 19. Հարկային արտոնությունները

1. Օրենսգրքով կամ Հայաստանի Հանրապետության օրենքներով կարող են սահմանվել հարկային արտոնությունների հետևյալ տեսակները.
1) հարկից ազատում.
2) հարկման օբյեկտի նվազեցում.
3) հարկման բազայի նվազեցում.
4) հարկի դրույքաչափի նվազեցում.
5) հարկի նվազեցում.
6) հարկի վճարման ժամկետի հետաձգում.
7) Օրենսգրքի դրույթները խախտելու համար հաշվարկված՝ Օրենսգրքով սահմանված տույժերից և տուգանքներից ազատում, նվազեցում, վճարման ժամկետների հետաձգում:
2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հարկային արտոնությունների տեսակները կիրառելի են նաև բնօգտագործման վճարի համար:
3. Հարկային արտոնությունները սահմանվում են բացառապես Օրենսգրքով կամ Հայաստանի Հանրապետության օրենքներով:
4. Հարկ վճարողը կարող է հարկային մարմին ներկայացնել հարկային մարմնի հաստատած ձևով հայտարարություն և հրաժարվել հարկային արտոնությունից օգտվելու իրավունքից, բացառությամբ սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված դեպքերի: Սույն մասով սահմանված հայտարարության ներկայացման դեպքում՝
1) հարկային արտոնությունը դադարում է գործել հայտարարության ներկայացման օրվանից հետո ձևավորվող հարկման օբյեկտների մասով.
2) հայտարարության ներկայացման օրվանից հետո իրականացվող գործարքները, գործառնությունները Օրենսգրքի կիրառության իմաստով համարվում են հարկվող գործարքներ, գործառնություններ.
3) հարկ վճարողը մինչև հայտարարության ներկայացման օրն ընդգրկող հարկային տարվան հաջորդող հարկային տարվա ավարտը չի կարող հրաժարվել հարկային արտոնությունից չօգտվելու վերաբերյալ հայտարարությունից.
4) հարկ վճարողի կողմից չօգտագործված հարկային արտոնությունը ենթակա չէ փոխանցման հաջորդ հաշվետու ժամանակաշրջաններ՝ ապագա հարկային պարտավորությունների նվազեցման նպատակով.
5) հարկային արտոնությունից չօգտվելը հարկ վճարողին չի ազատում հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթները խախտելու դեպքում նրա նկատմամբ սահմանված պատասխանատվության միջոցների կիրառությունից:
5. Հարկման հատուկ համակարգերում գործող կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների համար Օրենսգրքի՝ հարկման հատուկ համակարգերին վերաբերող բաժնով կարգավորվող հարաբերությունների մասով ԱԱՀ-ի և շահութահարկի գծով Օրենսգրքով սահմանված հարկային արտոնությունները կասեցվում են, բացառությամբ Հայաստանի Հանրապետություն ապրանքի ներմուծման գործառնությունների համար ԱԱՀ-ի գծով սահմանված հարկային արտոնությունների:
6. Սույն հոդվածի 4-րդ մասի դրույթները չեն տարածվում Օրենսգրքի 79-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ ԱԱՀ-ի գումարների (կամ դրանց մի մասի) վճարման ժամկետի հետաձգումը վաղաժամ դադարեցնելու մասին գրավոր հայտարարություն ներկայացնելու դեպքերի վրա:
(19-րդ հոդվածը լրաց. 21.12.17 ՀՕ-266-Ն)

Հոդված 20. Կրկնակի հարկման բացառումը

1. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կազմակերպությունների և Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆիզիկական անձանց կողմից Հայաստանի Հանրապետությունից դուրս ստացված կամ ստացման ենթակա՝ շահութահարկի և եկամտային հարկի հարկման օբյեկտները ներառվում են այդ կազմակերպությունների և ֆիզիկական անձանց՝ համապատասխան հարկատեսակով հարկման օբյեկտի մեջ և ենթակա են հարկման Հայաստանի Հանրապետությունում Օրենսգրքով սահմանված կարգով, եթե Օրենսգրքով այլ բան սահմանված չէ:
2. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կազմակերպությունների և Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆիզիկական անձանց հարկման նպատակով սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով որոշվող հարկման օբյեկտների գծով հաշվարկված հարկերի գումարները նվազեցվում են համապատասխան հարկերի այն գումարների չափերով, որոնք այդ կազմակերպություններից և ֆիզիկական անձանցից գանձվել են օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:
3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով հարկերի գումարները նվազեցվում են օտարերկրյա

պետություններում ձևավորվող հարկման օբյեկտներից Օրենսգրքով սահմանված կարգով և դրույքաչափով հաշվարկվող համապատասխան հարկերի գումարները չգերազանցող չափերով:

4. Եթե սույն հոդվածի 3-րդ մասի համաձայն նվազեցման ենթակա շահութահարկի կամ եկամտային հարկի գումարը գերազանցում է տվյալ հաշվետու տարվա արդյունքներով առաջացած՝ համապատասխանաբար շահութահարկի կամ եկամտային հարկի պարտավորությունը, ապա հարկերի գերազանցող գումարները ենթակա են նվազեցման կազմակերպության կամ ֆիզիկական անձի հաջորդ հաշվետու տարիների համապատասխան հարկատեսակի պարտավորություններից:

Բ Ա Ժ Ի Ն 2

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԸ (ՀԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ) ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆԸ
(վերնագիրը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Գ Լ Ո Ւ Խ 4

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻՆՔ

Հոդված 21. Կազմակերպությունը

1. Օրենսգրքի կիրառության իմաստով՝ կազմակերպություններ են համարվում՝

1) Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս պետական մարմինների, Հայաստանի Հանրապետության համայնքները՝ ի դեմս համայնքային կառավարչական հիմնարկների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը, Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած իրավաբանական անձինք, Հայաստանի Հանրապետությունում հաշվառված հիմնարկները.

2) օտարերկրյա պետությունում գրանցված կազմակերպությունները.

3) միջազգային կազմակերպությունները.

4) Օրենսգրքի 27-րդ հոդվածով սահմանված մշտական հաստատությունները՝ անկախ Օրենսգրքի 58-րդ գլխով սահմանված կարգով, որպես հարկ վճարող, հարկային մարմնում հաշվառված լինելու հանգամանքից.

5) ներդրումային ֆոնդերը:

(21-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Հոդված 22. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ կազմակերպությունները

1. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կազմակերպություն (այսուհետ՝ ռեզիդենտ կազմակերպություն) է համարվում այն կազմակերպությունը, որի գտնվելու վայրը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունը:

2. Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտ կազմակերպություն (այսուհետ՝ ոչ ռեզիդենտ կազմակերպություն) է համարվում այն կազմակերպությունը, որը, սույն հոդվածի 1-ին մասի համաձայն, չի համարվում ռեզիդենտ կազմակերպություն:

Հոդված 23. Կազմակերպության գտնվելու վայրը

1. Կազմակերպության գտնվելու վայր է համարվում կազմակերպության պետական գրանցման վայրը (հիմնարկի դեպքում՝ պետական հաշվառման վայրը):

2. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ներդրումային ֆոնդի գտնվելու վայր է համարվում ֆոնդի կառավարչի գտնվելու վայրը:

Հոդված 24. Ֆիզիկական անձը

1. Օրենսգրքի կիրառության իմաստով՝ ֆիզիկական անձինք են համարվում՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիները.

2) օտարերկրյա քաղաքացիները.

3) քաղաքացիություն չունեցող անձինք:

2. Օրենսգրքի կիրառության իմաստով՝ ֆիզիկական անձինք են համարվում նաև՝

1) անհատ ձեռնարկատերերը.

2) նոտարները:

3. Օրենսգրքի կիրառության իմաստով՝ Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին ճանաչվում է միայն որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացի:

Հոդված 25. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք

1. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆիզիկական անձինք (այսուհետ՝ ռեզիդենտ ֆիզիկական անձինք) են համարվում այն ֆիզիկական անձինք, որոնք հարկային տարում Հայաստանի Հանրապետությունում փաստացի գտնվել են 183 և ավելի օր:

2. Սույն հոդվածի կիրառության իմաստով՝ Հայաստանի Հանրապետությունում փաստացի գտնվելու ամբողջական օրեր են համարվում նաև Հայաստանի Հանրապետություն ժամանելու և Հայաստանի Հանրապետությունից մեկնելու օրերը՝ անկախ այդ օրերի ընթացքում ֆիզիկական անձի՝ Հայաստանի Հանրապետությունում փաստացի գտնվելու ժամերի քանակից:

3. Ռեզիդենտ ֆիզիկական անձինք են համարվում նաև՝

1) այն ֆիզիկական անձինք, որոնց կենսական շահերի կենտրոնը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում: Սույն կետի կիրառության իմաստով՝ կենսական շահերի կենտրոնը այն վայրն է, որտեղ կենտրոնացած են ֆիզիկական անձի ընտանեկան կամ տնտեսական շահերը: Մասնավորապես, համարվում է, որ ֆիզիկական անձի կենսական շահերի կենտրոնը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում, եթե Հայաստանի Հանրապետությունում է գտնվում նրա տունը կամ այլ բնակարանը, ընտանիքը, մասնագիտական կամ այլ գործունեության հիմնական վայրը.

2) Հայաստանի Հանրապետությունում պետական ծառայության մեջ գտնվող՝ ժամանակավորապես Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս աշխատող ֆիզիկական անձինք:

4. Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք (այսուհետ՝ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք) են համարվում այն ֆիզիկական անձինք, որոնք, սույն հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն, չեն հանդիսանում ռեզիդենտ ֆիզիկական անձինք:

5. Օրենսգրքի կիրառության իմաստով՝ եթե ֆիզիկական անձը, սույն հոդվածի 1-ին և (կամ) 3-րդ մասերի համաձայն, հարկային տարվա որևէ օրվա դրությամբ համարվում է ռեզիդենտ, ապա այդ ֆիզիկական անձը համարվում է ռեզիդենտ ամբողջ հարկային տարվա համար:

Հոդված 26. Ֆիզիկական անձի բնակության վայրը

1. Օրենսգրքի կիրառության իմաստով՝ ֆիզիկական անձի բնակության վայր է համարվում այն վայրը, որտեղ ֆիզիկական անձը օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվառված է (այդ թվում՝ որպես անհատ ձեռնարկատեր կամ նոտար), իսկ հաշվառման վայրի բացակայության դեպքում ֆիզիկական անձի բնակության վայր է համարվում ֆիզիկական անձի փաստացի բնակության վայրը:

Հոդված 27. Ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի մշտական հաստատությունը

1. Հայաստանի Հանրապետությունում ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի մշտական հաստատություն (այսուհետ՝ մշտական հաստատություն) է համարվում Օրենսգրքի 58-րդ գլխով սահմանված կարգով, որպես հարկ վճարող, հարկային մարմնում հաշվառված՝ սույն մասում նշված՝ Հայաստանի Հանրապետությունում գործունեության վայրերից որևէ մեկը, որի միջոցով ոչ ռեզիդենտ կազմակերպությունը կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձը Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն՝ անկախ գործունեության իրականացման ժամանակահատվածից, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքի.

1) արտադրության իրականացման, վերամշակման, կոմպլեկտավորման, վերափաթեթավորման, փաթեթավորման և (կամ) ապրանքների մատակարարման ցանկացած վայրը.

2) կառավարման ցանկացած վայրը.

3) ընդերքի երկրաբանական հետազոտության, հետախուզության իրականացման, օգտակար հանածոների արդյունահանման նախապատրաստական աշխատանքների և (կամ) օգտակար հանածոների արդյունահանման և (կամ) աշխատանքների կատարման, հետախուզության և (կամ) օգտակար հանածոների արդյունահանման նկատմամբ հսկողության և (կամ) դիտարկման ծառայությունների մատուցման ցանկացած վայրը.

4) գործունեության իրականացման ցանկացած վայրը՝ կապված խաղային մեքենաների, համակարգչային ցանցերի և հաղորդակցման ուղիների, ատրակցիոնների տեղադրման, հարմարեցման և շահագործման, ինչպես նաև տրանսպորտային կամ այլ ենթակառուցվածքի հետ.

5) Հայաստանի Հանրապետության տարածքում ապրանքների վաճառքի վայրը, եթե այլ բան սահմանված չէ սույն հոդվածի 3-րդ մասով.

6) շինարարական գործունեության և (կամ) շինարարական-մոնտաժային աշխատանքների իրականացման, ինչպես նաև այդ աշխատանքների իրականացման նկատմամբ վերահսկողական ծառայությունների մատուցման ցանկացած վայրը.

7) ներկայացուցչության կամ մասնաճյուղի գտնվելու վայրը, բացառությամբ այն ներկայացուցչության, որն իրականացնում է բացառապես սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված գործունեություն.

8) կազմակերպության կամ ֆիզիկական անձի գտնվելու վայրը, որը, ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի անունից «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, Հայաստանի Հանրապետությունում իրականացնում է միջնորդական գործունեություն.

9) Օրենսգրքի 5-րդ գլխի կամ օտարերկրյա պետության օրենսդրության համաձայն՝ ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի հետ կնքված՝ համատեղ գործունեության պայմանագրի շրջանակներում իրականացվող համատեղ գործունեության հաշվետու մասնակցի գտնվելու վայրը, եթե այդ համատեղ գործունեությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության տարածքում:

2. Սույն հոդվածի 1-ին մասում չնշված՝ Հայաստանի Հանրապետության տարածքում աշխատանքների կատարման և (կամ) ծառայությունների մատուցման դեպքում մշտական հաստատություն է համարվում այն վայրը, որտեղ ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի վարձած աշխատողների և (կամ) այլ անձնակազմի միջոցով կատարվում են աշխատանքներ և (կամ) մատուցվում են ծառայություններ, եթե այդ գործունեությունը Հայաստանի Հանրապետության տարածքում հարկային տարում շարունակվում է 183 և ավելի օրացուցային օր՝ սկսած ձեռնարկատիրական գործունեության իրականացումը սկսելու օրվանից՝ մեկ ծրագրի կամ մեկից ավելի կապակցված ծրագրերի շրջանակներում:

Սույն հոդվածի կիրառության իմաստով՝ կապակցված ծրագրեր են համարվում այն ծրագրերը, որոնց վերաբերյալ պայմանագրերը համարվում են փոխկապակցված կամ փոխկախված:

Փոխկապակցված են համարվում այն պայմանագրերը, որոնք միաժամանակ բավարարում են հետևյալ պայմանները.

1) այդպիսի պայմանագրերով ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի կամ նրա հետ փոխկապակցված կազմակերպության կամ ֆիզիկական անձի կողմից միևնույն հարկային գործակալի կամ նրա հետ փոխկապակցված կազմակերպության կամ ֆիզիկական անձի համար կատարվում են նույն աշխատանքները կամ միևնույն հարկային գործակալին կամ նրա հետ փոխկապակցված կազմակերպությանը կամ ֆիզիկական անձին մատուցվում են նույն ծառայությունները.

2) մեկ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման և (կամ) ծառայությունների մատուցման ավարտի օրվա և մեկ այլ պայմանագրի կնքման օրվա միջև ընկած ժամանակահատվածը չի գերազանցում տասներկուամսյա անընդմեջ ժամանակահատվածը:

Փոխկախված են համարվում այն պայմանագրերը, որոնք կնքվել են ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի կամ նրա հետ փոխկապակցված կազմակերպության կամ ֆիզիկական անձի և հարկային գործակալի կամ նրա հետ փոխկապակցված կազմակերպության կամ ֆիզիկական անձի միջև, որի դեպքում ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի կամ նրա հետ փոխկապակցված կազմակերպության կամ ֆիզիկական անձի կողմից պարտավորությունների չկատարումը ազդում է այդ ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի կամ նրա հետ փոխկապակցված կազմակերպության կամ ֆիզիկական անձի կողմից այլ պայմանագրերի կատարման վրա:

3. Հայաստանի Հանրապետության տարածքում կազմակերպվող ցուցահանդեսներում և տոնավաճառներում ապրանքների վաճառքի դեպքում ոչ ռեզիդենտ կազմակերպությունը կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձը Հայաստանի Հանրապետությունում ձևավորում է մշտական հաստատություն, եթե այդ գործունեությունը շարունակվում է ավելի քան երեսուն օր:

4. Հայաստանի Հանրապետության տարածքում ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի կողմից իրականացվող՝ ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի հիմնական գործունեությունից տարբերվող՝ նախապատրաստական և (կամ) օժանդակ գործունեության իրականացումը չի հանգեցնում մշտական հաստատության ձևավորման, եթե այդ գործունեությունն իրականացվում է ոչ ավել, քան երեք տարի ժամանակով: Ընդ որում, նախապատրաստական և (կամ) օժանդակ գործունեությունը պետք է իրականացվի անմիջապես տվյալ ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի, այլ ոչ թե այլ կազմակերպության կամ ֆիզիկական անձի համար: Նախապատրաստական և (կամ) օժանդակ գործունեություն են համարվում՝

1) Հայաստանի Հանրապետությունում գտնվող ցանկացած վայրի օգտագործումը ոչ ռեզիդենտ կազմակերպությանը կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձին պատկանող ապրանքների՝ բացառապես պահպանման և (կամ) ցուցադրման նպատակով.

2) մշտական գործունեության վայրում բացառապես ապրանքների գնումը՝ առանց դրանց վաճառքի.

3) մշտական գործունեության վայրում բացառապես տեղեկատվության հավաքումը, մշակումը և (կամ) տարածումը,

գովազդը կամ ապրանքների, աշխատանքների, ծառայությունների շուկայի ուսումնասիրությունը, որն իրականացվում է ոչ ռեզիդենտի կողմից, եթե այդ գործունեությունը չի հանդիսանում այդ ոչ ռեզիդենտի հիմնական գործունեությունը:

5. Անկախ սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթներից, եթե ոչ ռեզիդենտ կազմակերպությունը կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձը կախյալ գործակալ համարվող կազմակերպության կամ ֆիզիկական անձի միջոցով Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն, ապա այդ դեպքում համարվում է, որ այդ ոչ ռեզիդենտ կազմակերպությունը կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձը Հայաստանի Հանրապետության տարածքում ունի մշտական հաստատություն՝ կապված ցանկացած գործունեության հետ, որը կախյալ գործակալն իրականացնում է այդ ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի համար: Սույն հոդվածի կիրառության իմաստով՝ կախյալ գործակալ է համարվում այն կազմակերպությունը կամ ֆիզիկական անձը, որը միաժամանակ բավարարում է հետևյալ պայմանները.

1) պայմանագրային հարաբերությունների հիման վրա լիազորված է Հայաստանի Հանրապետությունում ներկայացնել ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի շահերը, գործել ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի անունից և հաշվին, գործել և (կամ) իրականացնել որոշակի իրավաբանական գործողություններ.

2) սույն մասի 1-ին կետում նշված գործունեությունը չի իրականացվում մաքսային ներկայացուցչի, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակցի և այլ բրոկերային գործունեության շրջանակներում (բացառությամբ ապահովագրական միջնորդական գործունեության).

3) դրա գործունեությունը չի սահմանափակվում գործունեության այն տեսակներով, որոնք սահմանված են սույն հոդվածի 4-րդ մասով:

6. Եթե սույն հոդվածի 7-րդ մասով այլ բան սահմանված չէ, ապա ոչ ռեզիդենտ կազմակերպությունը կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձը, որը Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնող կազմակերպությանը կամ ֆիզիկական անձին, այդ թվում՝ մշտական հաստատության միջոցով գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ կազմակերպությանը կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձին, մատուցում է օտարերկրյա աշխատուժի տրամադրման ծառայություններ, այդ ծառայությունների մասով Հայաստանի Հանրապետության տարածքում չի ձևավորվում մշտական հաստատություն, եթե՝

1) աշխատուժը գործում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնող կազմակերպության կամ ֆիզիկական անձի անունից և շահերից,

2) օտարերկրյա աշխատուժի տրամադրման ծառայություն մատուցող ոչ ռեզիդենտ կազմակերպությունը կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձը պատասխանատվություն չի կրում աշխատուժի կատարած աշխատանքի արդյունքի համար:

7. Այն դեպքում, երբ ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի կողմից Հայաստանի Հանրապետությունում իրականացվող գործունեությունը բնութագրվում է մշտական հաստատության՝ սույն հոդվածով սահմանված հատկանիշներով, այդ ոչ ռեզիդենտ կազմակերպությունը կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձը պարտավոր է Օրենսգրքի 58-րդ գլխով սահմանված կարգով, որպես հարկ վճարող, հաշվառվել հարկային մարմնում: Եթե ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի կողմից իրականացվող գործունեությունը հանգեցնում է երկու և ավելի մշտական հաստատությունների ձևավորման, որոնք, սույն հոդվածի և Օրենսգրքի 58-րդ գլխի համաձայն, պետք է հաշվառվեն հարկային մարմնում, ապա հաշվառման ենթակա է մշտական հաստատություններից միայն մեկը: Ոչ ռեզիդենտ կազմակերպությունը կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձը կարող է Օրենսգրքի 58-րդ գլխով սահմանված կարգով, որպես հարկ վճարող, հաշվառվել հարկային մարմնում նաև այն դեպքում, երբ նրա կողմից Հայաստանի Հանրապետությունում իրականացվող գործունեությունը դեռևս չի բնութագրվում մշտական հաստատության՝ սույն հոդվածով սահմանված հատկանիշներով:

8. Եթե ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի կողմից Հայաստանի Հանրապետությունում իրականացվող գործունեությունը բնութագրվում է մշտական հաստատության՝ սույն հոդվածով սահմանված հատկանիշներով, սակայն այդ ոչ ռեզիդենտ կազմակերպությունը կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձը Օրենսգրքի 58-րդ գլխով սահմանված կարգով, որպես հարկ վճարող, չի հաշվառվել հարկային մարմնում, ապա այդ ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի նկատմամբ կիրառվում են Օրենսգրքով սահմանված՝ հարկերի ու վճարների հաշվարկման և վճարման այն կարգավորումները, որոնք կիրառելի են մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի նկատմամբ:

9. Ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում համատեղ գործունեության պայմանագրի շրջանակներում գործունեության իրականացման դեպքում այդ պայմանագրի յուրաքանչյուր կողմի գործունեությունը հանգեցնում է մշտական հաստատության ձևավորման՝ սույն հոդվածի դրույթներին համապատասխան:

10. Սույն հոդվածի կիրառության իմաստով՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի գործունեության իրականացման սկիզբ է համարվում՝

1) հետևյալ երևույթներից որևէ մեկի տեղի ունենալու օրը.

ա. Հայաստանի Հանրապետության տարածքում ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման և (կամ) ծառայությունների մատուցման պայմանագրի կնքում,

բ. Հայաստանի Հանրապետության տարածքում իր անունից գործողություններ կատարելու թույլտվության ստացում,

գ. Հայաստանի Հանրապետության տարածքում ապրանքների ձեռքբերում կամ Հայաստանի Հանրապետություն ապրանքների ներմուծում՝ իրացման նպատակով,

դ. համատեղ գործունեության պայմանագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության տարածքում ապրանքների մատակարարում, աշխատանքների կատարում և ծառայությունների մատուցում,

ե. Հայաստանի Հանրապետության տարածքում աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման նպատակով աշխատանքի, ծառայությունների ձեռքբերում.

2) Հայաստանի Հանրապետության տարածքում ֆիզիկական անձի հետ առաջին աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագրի կնքման օրը կամ սույն մասի 1-ին կետով սահմանված պայմանագրերում նշված պայմանների իրականացման համար աշխատողի՝ Հայաստանի Հանրապետություն ժամանելու օրը: Ընդ որում, Հայաստանի Հանրապետության տարածքում ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի կողմից գործունեության իրականացման սկիզբը չի կարող լինել ավելի շուտ, քան սույն մասի 1-ին կետի «ա»-«ե» ենթակետերով սահմանված ժամկետներից որևէ մեկը.

3) ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի կողմից սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերում նշված գործունեության տեսակներ իրականացնելու իրավունքը հաստատող փաստաթղթի ուժի մեջ մտնելու օրը:

Սույն հոդվածով սահմանված պայմաններից մի քանիսի առկայության դեպքում Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեության իրականացման սկիզբ է համարվում սույն հոդվածում նշված առավել վաղ ժամկետը:

(27-րդ հոդվածը լրաց., փոփ. 21.12.17 ՀՕ-266-Ն)

Հոդված 28. Հարկ վճարողի (հարկային գործակալի) պաշտոնատար անձը

1. Օրենսգրքի կիրառության իմաստով՝ հարկ վճարողի (հարկային գործակալի) պաշտոնատար անձ է համարվում այն ֆիզիկական անձը, որը օրենքի ուժով կամ հարկ վճարողի (հարկային գործակալի) կողմից հարկային մարմնի սահմանած ձևի լիազորագրով լիազորված է ներկայացնել հարկ վճարողին (հարկային գործակալին) հարկային մարմնում, բացառությամբ սույն հոդվածով սահմանված դեպքերի:

2. Ներդրումային ֆոնդի (բացառությամբ կենսաթոշակային ֆոնդի)՝ որպես հարկ վճարողի հետ կապված բոլոր հարաբերություններում նրա փոխարեն հանդես է գալիս տվյալ ներդրումային ֆոնդի կառավարիչը՝ այդ ներդրումային ֆոնդի հաշվին:

3. «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ պետական կամ համայնքային պաշտոն զբաղեցնող անձինք չեն կարող հանդես գալ որպես հարկ վճարողի պաշտոնատար անձինք:

Հոդված 29. Հարկային գործակալը

1. Հարկային գործակալը հարկ վճարողներին եկամուտներ վճարող (հատկացնող կամ բնամթերային ձևով տրամադրող)՝ Օրենսգրքի 58-րդ գլխով սահմանված կարգով հարկային մարմնում որպես հարկ վճարող հաշվառված կազմակերպությունն է, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը, որի վրա, Օրենսգրքի համաձայն, դրված է հարկ վճարողներին եկամուտներ վճարելիս (հատկացնելիս կամ բնամթերային ձևով տրամադրելիս) նրանց եկամուտներից հարկերը կամ վճարները հաշվարկելու, պահելու (գանձելու) և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարելու պարտավորությունը: Սույն մասի կիրառության իմաստով՝ հարկային գործակալի կողմից հարկ վճարողին եկամտի վճարում (հատկացում կամ բնամթերային ձևով տրամադրում) է համարվում նաև՝

1) հարկային գործակալի կողմից եկամտի վճարումը (հատկացումը կամ բնամթերային ձևով տրամադրումը) եկամուտ ստացող հարկ վճարողի նշած անձին.

2) հարկային գործակալի նշած անձի կողմից եկամտի վճարումը (հատկացումը կամ բնամթերային ձևով տրամադրումը) եկամուտ ստացող հարկ վճարողին:

2. Եթե, Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրի համաձայն, կազմակերպությունն ազատվում է հարկ վճարողներին եկամուտներ վճարելիս (հատկացնելիս կամ բնամթերային ձևով տրամադրելիս) նրանց եկամուտներից հարկերը հաշվարկելու, պահելու (գանձելու) և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարելու պարտավորությունից, ապա այդ կազմակերպությունը կարող է հարկային մարմին ներկայացնել հարկային մարմնի սահմանած ձևի հայտարարություն և կամավորության սկզբունքով հանդես գալ որպես հարկային գործակալ: Այս դեպքում հարկային գործակալը հարկի հաշվարկումը, պահումը (գանձումը) և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարումը առաջին անգամ կատարում է հայտարարությունը ներկայացնելու օրը ներառող համապատասխան հաշվետու ժամանակաշրջանի համար:

3. Հարկային գործակալներն իրենց պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվություն են կրում Օրենսգրքով սահմանված կարգով:

(29-րդ հոդվածը լրաց. 21.06.18 ՀՕ-338-Ն)

Հոդված 30. Փոխկապակցված կազմակերպությունները և (կամ) ֆիզիկական անձինք

1. Օրենսգրքի կիրառության իմաստով՝ կազմակերպությունները և (կամ) ֆիզիկական անձինք համարվում են փոխկապակցված, եթե՝

1) ռեզիդենտ առևտրային կազմակերպության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20 տոկոս և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնեմասը) պատկանում է այլ ռեզիդենտ առևտրային կազմակերպությանը, անհատ ձեռնարկատիրոջը կամ նոտարին.

2) ռեզիդենտ առևտրային կազմակերպության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20 տոկոս և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնեմասը) պատկանում է անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այն ֆիզիկական անձին, որին միաժամանակ պատկանում է այլ ռեզիդենտ առևտրային կազմակերպության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20 տոկոս և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնեմասը):

2. Անկախ սույն հոդվածի 1-ին մասում նշված պայմանների առկայությունից՝ կազմակերպությունները և (կամ) ֆիզիկական անձինք համարվում են փոխկապակցված, եթե Օրենսգրքի 70-րդ գլխով սահմանված երրորդ անձից (այդ թվում՝ պետական մարմնից) ստացված կամ օպերատիվ-հետախուզական գործողությունների արդյունքում ձեռք բերված տեղեկությունների հիման վրա կազմակերպությունները և (կամ) ֆիզիկական անձինք, ընդհանուր տնտեսական շահերից ելնելով համաձայնեցված գործելու հիմքով, հարկային մարմնի սահմանած կարգով, հարկային մարմնի ղեկավարի որոշմամբ ճանաչվում են որպես փոխկապակցված: Սույն մասի կիրառության իմաստով, հարկ վճարողներին որպես փոխկապակցված ճանաչելիս հաշվի են առնվում, մասնավորապես, հետևյալ հանգամանքները.

1) միմյանց միջև կատարվող գործարքների ծավալը, պարբերականությունը.

2) միմյանցից ձեռք բերվող ապրանքների հետագա վաճառքի գներն ու առևտրային վերադիրները.

3) որևէ ապրանքային շուկայում ունեցած մասնաբաժնի մեծությունը:

3. Օրենսգրքի 73-րդ գլխով սահմանված՝ տրանսֆերային գնագոյացման կանոնների կիրառության իմաստով, կազմակերպություններին և ֆիզիկական անձանց փոխկապակցված համարելու լրացուցիչ կարգավորումները սահմանվում են այդ գլխով:

Գ Լ Ո Ւ Խ 5

ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

Հոդված 31. Համատեղ գործունեության պայմանագիրը

1. Կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը իրավունք ունեն իրենց համատեղ գործունեությունն իրականացնելու առանց նոր իրավաբանական անձ կազմավորելու՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված՝ համատեղ գործունեության պայմանագրի շրջանակներում:

Հոդված 32. Համատեղ գործունեության մասնակիցները և հաշվետու մասնակիցը

1. Համատեղ գործունեության մասով հարկերի (բացառությամբ հարկային գործակալի կողմից պահվող եկամտային հարկի և շահութահարկի, բնապահպանական հարկի և տեղական հարկերի), վճարների (բացառությամբ բնօգտագործման վճարի, սոցիալական վճարի և տեղական վճարների), կանխավճարների հաշվարկման և վճարման պարտավորությունը կատարում է համատեղ գործունեության հաշվետու մասնակիցը:

2. Համատեղ գործունեության մասով Օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով հարկերի մուտքագրումը կատարվում է հաշվետու մասնակցի միասնական հաշվին:

3. Համատեղ գործունեության հաշվետու մասնակից է համարվում համատեղ գործունեության այն մասնակիցը, որը բնութագրվում է սույն մասում նշված հատկանիշներով՝ ըստ առաջնահերթության.

1) համարվում է ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանք արտադրող և (կամ) ներմուծող ռեզիդենտ կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր: Եթե համատեղ գործունեության մասնակիցների մեջ կան ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանք արտադրող և (կամ) ներմուծող մեկից ավելի ռեզիդենտ կազմակերպություններ կամ անհատ ձեռնարկատերեր, ապա համատեղ գործունեության հաշվետու մասնակից է համարվում այն ռեզիդենտ կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը, որը համատեղ գործունեության պայմանագրի կնքման պահին համատեղ գործունեության մեջ ունի առավելագույն ներդրում.

2) համարվում է դրոշմավորման ենթակա ապրանք արտադրող և (կամ) ներմուծող ռեզիդենտ կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր: Եթե համատեղ գործունեության մասնակիցների մեջ կան պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանք արտադրող և (կամ) ներմուծող մեկից ավելի ռեզիդենտ կազմակերպություններ կամ անհատ

ձեռնարկատերեր, ապա համատեղ գործունեության հաշվետու մասնակից է համարվում այն ռեզիդենտ կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը, որը համատեղ գործունեության պայմանագրի կնքման պահին համատեղ գործունեության մեջ ունի առավելագույն ներդրում.

3) համարվում է ռեզիդենտ կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր և ունի համատեղ գործունեության շրջանակներում իրականացվող գործունեության որևէ տեսակով զբաղվելու ծանուցում կամ թույլտվություն: Եթե համատեղ գործունեության մասնակիցների մեջ կան համատեղ գործունեության շրջանակներում իրականացվող գործունեության որևէ տեսակով զբաղվելու ծանուցում կամ թույլտվություն ունեցող մեկից ավելի ռեզիդենտ կազմակերպություններ կամ անհատ ձեռնարկատերեր, ապա համատեղ գործունեության հաշվետու մասնակից է համարվում այն ռեզիդենտ կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը, որը համատեղ գործունեության պայմանագրի կնքման պահին համատեղ գործունեության մեջ ունի առավելագույն ներդրում.

4) համարվում է ավելացված արժեքի հարկ վճարող ռեզիդենտ կազմակերպություն: Եթե համատեղ գործունեության մասնակիցների մեջ կան ավելացված արժեքի հարկ վճարող համարվող մեկից ավելի ռեզիդենտ կազմակերպություններ, ապա համատեղ գործունեության հաշվետու մասնակից է համարվում ավելացված արժեքի հարկ վճարող համարվող այն ռեզիդենտ կազմակերպությունը, որը համատեղ գործունեության պայմանագրի կնքման պահին համատեղ գործունեության մեջ ունի առավելագույն ներդրում.

5) համարվում է ավելացված արժեքի հարկ վճարող ռեզիդենտ անհատ ձեռնարկատեր: Եթե համատեղ գործունեության մասնակիցների մեջ կան ավելացված արժեքի հարկ վճարող համարվող մեկից ավելի ռեզիդենտ անհատ ձեռնարկատերեր, ապա համատեղ գործունեության հաշվետու մասնակից է համարվում ավելացված արժեքի հարկ վճարող համարվող այն ռեզիդենտ անհատ ձեռնարկատերը, որը համատեղ գործունեության պայմանագրի կնքման պահին համատեղ գործունեության մեջ ունի առավելագույն ներդրում.

6) համարվում է ռեզիդենտ կազմակերպություն: Եթե համատեղ գործունեության մասնակիցների մեջ կան մեկից ավելի ռեզիդենտ կազմակերպություններ, ապա համատեղ գործունեության հաշվետու մասնակից է համարվում այն ռեզիդենտ կազմակերպությունը, որը համատեղ գործունեության պայմանագրի կնքման պահին համատեղ գործունեության մեջ ունի առավելագույն ներդրում.

7) համարվում է ռեզիդենտ անհատ ձեռնարկատեր: Եթե համատեղ գործունեության մասնակիցների մեջ կան մեկից ավելի ռեզիդենտ անհատ ձեռնարկատերեր, ապա համատեղ գործունեության հաշվետու մասնակից է համարվում այն ռեզիդենտ անհատ ձեռնարկատերը, որը համատեղ գործունեության պայմանագրի կնքման պահին համատեղ գործունեության մեջ ունի առավելագույն ներդրում:

4. Սույն հոդվածի 3-րդ մասի 1-7-րդ կետերով սահմանված դեպքերում, եթե համատեղ գործունեության պայմանագրի կնքման պահին համատեղ գործունեության մասնակիցների մեջ կան համատեղ գործունեության մեջ առավելագույն ներդրում ունեցող մեկից ավելի մասնակիցներ (երկու մասնակցի դեպքում՝ հավասար ներդրում ունեցող երկու մասնակիցներ), ապա համատեղ գործունեության հաշվետու մասնակիցը որոշվում է մասնակիցների փոխադարձ համաձայնությամբ:

5. Համատեղ գործունեության ընթացքում համատեղ գործունեության մասնակիցների կազմում փոփոխություն կատարվելու և (կամ) համատեղ գործունեության մասնակիցների ունեցած ներդրումներում փոփոխություններ կատարվելու դեպքում համատեղ գործունեության հաշվետու մասնակիցը չի փոխվում, բացառությամբ սույն հոդվածի 8-րդ մասով սահմանված դեպքերի:

6. Կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը կարող է համատեղ գործունեության հաշվետու մասնակից լինել միայն մեկ համատեղ գործունեության պայմանագրով:

7. Համատեղ գործունեության հաշվետու մասնակիցը, մինչև համատեղ գործունեության շրջանակներում առաջին գործարքի իրականացումը, պարտավոր է հարկային մարմին ներկայացնել հարկային մարմնի սահմանած ձևով հայտարարություն՝ համատեղ գործունեության հաշվետու մասնակից լինելու մասին (համատեղ գործունեության մյուս մասնակիցների համաձայնության վերաբերյալ նշումներով)՝ դրան կցելով համատեղ գործունեության մասին պայմանագրի պատճենը: Հարկային մարմինը սույն մասում նշված հայտարարությունը ստանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ուսումնասիրում է այն ներկայացնողի՝ համատեղ գործունեության հաշվետու մասնակից լինելու համար սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված նախապայմանները բավարարելու կամ չբավարարելու հանգամանքները և համապատասխանաբար ընդունում է հայտարարությունը կամ այն հետ է վերադարձնում ներկայացնողին՝ գրավոր ձևով նշելով հայտարարության ընդունումը մերժելու հիմքը: Եթե հարկային մարմինն ընդունում է հայտարարությունը, հետագայում հայտարարության ընդունման հարցը չի կարող վերանայվել՝ անգամ եթե պարզվում է, որ սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված նախապայմաններից որևէ մեկը բավարարված չի եղել: Հայտարարությունը հարկային մարմնի կողմից ստանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, այն ներկայացնողին չվերադարձնելու դեպքում հայտարարությունը համարվում է ընդունված հարկային մարմնի կողմից այն ստանալու հաջորդ օրվանից:

8. Եթե համատեղ գործունեության հաշվետու մասնակիցը դադարում է համարվել համատեղ գործունեության պայմանագրի կողմ, ապա սույն հոդվածի համաձայն, ընտրվում է համատեղ գործունեության նոր հաշվետու մասնակից, որի մասին ընտրվելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, սույն հոդվածի 7-րդ մասի համաձայն, հարկային մարմին է ներկայացվում համապատասխան հայտարարություն՝ դրան կցելով համատեղ գործունեության մասին պայմանագրի պատճենը: Հարկային մարմինը սույն մասում նշված հայտարարությունը ստանալուց հետո՝ հինգ

աշխատանքային օրվա ընթացքում, ուսումնասիրում է այն ներկայացնողի՝ համատեղ գործունեության հաշվետու մասնակից լինելու համար սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված նախապայմանները բավարարելու կամ չբավարարելու հանգամանքները և համապատասխանաբար ընդունում է հայտարարությունը կամ այն վերադարձնում է ներկայացնողին՝ գրավոր ձևով նշելով հայտարարության ընդունումը մերժելու հիմքը: Եթե հարկային մարմինն ընդունում է հայտարարությունը, հետագայում հայտարարության ընդունման հարցը չի կարող վերանայվել՝ անգամ եթե պարզվում է, որ սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված նախապայմաններից որևէ մեկը բավարարված չի եղել: Հայտարարությունը հարկային մարմնի կողմից ստանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, այն ներկայացնողին չվերադարձնելու դեպքում հայտարարությունը համարվում է ընդունված հարկային մարմնի կողմից այն ստանալու հաջորդ օրվանից:

9. Համատեղ գործունեության պայմանագիրը օրենսդրությամբ սահմանված կարգով դադարելու դեպքում համատեղ գործունեության հաշվետու մասնակիցը պարտավոր է հինգ աշխատանքային օրվա ընթացքում հարկային մարմին ներկայացնել հարկային մարմնի սահմանած ձևով հայտարարություն:

(32-րդ հոդվածը փոփ. 25.06.19 ՀՕ-68-Ն)

Գ Լ Ո Ւ Խ 6

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ (ՀԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԻ) ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Հոդված 33. Հարկ վճարողների (հարկային գործակալների) և դրանց պաշտոնատար անձանց պարտականությունները

1. Հարկ վճարողը (հարկային գործակալը) և դրա պաշտոնատար անձը պարտավոր է՝

1) Օրենսգրքով այլ բան սահմանված չլինելու դեպքում Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով և ժամկետներում ինքնուրույն հաշվարկել և կատարել իր հարկային պարտավորությունները՝ Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում և կարգով կատարելով նաև հարկի և (կամ) վճարի կանխավճարներ.

2) վարել Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված հաշվառում, իսկ օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ նաև հաշվապահական հաշվառում.

3) Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով և ժամկետներում հարկային մարմին ներկայացնել հարկային հաշվարկները.

4) ներկայացնել հարկային արտոնությունների իր իրավունքը հաստատող փաստաթղթերը.

5) ապահովել հարկման բազայի հաշվարկման և հարկային հաշվարկների ներկայացման համար անհրաժեշտ փաստաթղթերի, ստացվող եկամուտների կամ կատարվող ծախսերի, վճարվող (պահվող) հարկերի մեծությունը հիմնավորող փաստաթղթերի պահպանումը ոչ պակաս, քան հինգ տարի ժամկետում՝ սկսած այն հաշվետու ժամանակաշրջանից, որին այդ փաստաթղթերը վերաբերում են.

6) հաշվարկային փաստաթղթերի՝ ռուսերեն և անգլերեն լեզուներից տարբերվող լեզուներով լրացված (կազմված) օրինակներին կից ապահովել դրանց հայերեն թարգմանված տարբերակները՝ առանց նոտարական վավերացման.

7) իր գործունեության իրականացման յուրաքանչյուր հասցեում՝ առավել տեսանելի տեղում (իսկ գտնվելու և (կամ) կառավարման որոշումների ընդունման, օպերատիվ ֆինանսական ղեկավարման վայրերում՝ համապատասխան ցուցանակների վրա), փակցնել հարկային մարմնի սահմանած ձևի հայտարարություն՝ նշելով հարկ վճարողի լրիվ անվանումը (անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հայրանունը), հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության տվյալ վայրի հասցեն և տվյալ հասցեում իրականացվող գործունեության տեսակը (տեսակները).

8) աշխատանքային պայմաններ ապահովել հարկային հսկողության իրականացման համար, այդ թվում՝ հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձանց տրամադրել հարկի կամ վճարի հաշվարկման և վճարման համար անհրաժեշտ փաստաթղթերը, տվյալները և այլ տեղեկությունները, դրանց լուսապատճենները (լուսապատճենահանման ծախսերը կատարվում են հարկային մարմնի միջոցների հաշվին) կամ կրկնօրինակները.

9) Օրենսգրքի 17-րդ բաժնով սահմանված կարգով համալիր հարկային ստուգում իրականացնող պաշտոնատար անձանց գրավոր պահանջով էլեկտրոնային կրիչով տրամադրել հաշվապահական հաշվառման համակարգչային ծրագրի միջոցով ստեղծված ֆայլի պատճենը (ստուգման հանձնարարականով ընդգրկվող ժամանակահատվածի մասով).

10) չխոչընդոտել հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձանց ծառայողական պարտականությունների կատարմանը, կատարել նրանց օրինական պահանջները.

11) իրենց բացակայության ընթացքում իրենց պարտականությունները կատարելու նպատակով նշանակել (լիազորել) իրենց փոխարինող պաշտոնատար անձանց.

12) հարկային հսկողության արդյունքում կազմվող ակտերի, արձանագրությունների և դրանց նախագծերի, տեղեկանքների և վարչական ակտերի փաստերի հետ չհամաձայնելու և դրանք չստորագրելու դեպքում այդ մասին համապատասխան նշում կատարել նշյալ փաստաթղթերում:

13) պետական գրանցում ստանալուց (հաշվառվելուց) հետո՝ մինչև առաջին հաշվետու ժամանակաշրջանի համար Օրենսգրքով նախատեսված՝ հարկային հաշվարկները ներկայացնելու վերջին օրը ներառյալ, հարկային մարմին ներկայացնել, իսկ Օրենսգրքով նշված փաստաթղթերն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու պարտադիր պահանջ նախատեսված լինելու և հարկային մարմնի հետ էլեկտրոնային եղանակով հարկային հաշվարկների ներկայացման մասին պայմանագիր կնքված լինելու դեպքում՝ հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի «Անձնական գրասենյակ» բաժնում լրացնել այն էլեկտրոնային փոստի հասցեն, որին հարկային մարմնի կողմից էլեկտրոնային եղանակով ծանուցվելու են պարտադիր ծանուցման ենթակա փաստաթղթերը:

2. Հարկ վճարողը (հարկային գործակալը) և դրա պաշտոնատար անձն ունեն նաև Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված այլ պարտականություններ:

(33-րդ հոդվածը փոփ. 21.12.17 ՀՕ-266-Ն, լրաց. 21.06.18 ՀՕ-338-Ն)

Հոդված 34. Հարկ վճարողների (հարկային գործակալների) և դրանց պաշտոնատար անձանց իրավունքները

1. Հարկ վճարողը (հարկային գործակալը) և դրա պաշտոնատար անձն իրավունք ունեն՝

1) Օրենսգրքով սահմանված կարգով դիմելու հարկային մարմին՝ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթների կիրառման վերաբերյալ պարզաբանում ստանալու համար.

2) ինքնուրույն կամ իրենց լիազորած ներկայացուցչի միջոցով հարկային մարմնում ներկայացնելու իրենց շահերը.

3) օգտվելու Օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված հարկային արտոնություններից.

4) Օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով դիմելու հարկային մարմին՝ միասնական հաշվին առկա գումարը վերադարձնելու համար.

5) ծանոթանալու հարկային հսկողության արդյունքում կազմվող ակտերին, արձանագրություններին և դրանց նախագծերին, տեղեկանքներին և վարչական ակտերին.

6) հարկային մարմին ներկայացնելու բացատրություններ և պարզաբանումներ հարկերի և վճարների հաշվարկման ու վճարման, ինչպես նաև հարկային հսկողության արդյունքների վերաբերյալ.

7) արգելելու հարկային մարմնի կողմից հարկային հսկողության իրականացումը, հարկային մարմնի պաշտոնատար անձանց չտրամադրելու փաստաթղթեր կամ բացատրություններ, եթե հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձինք խախտել են Օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և (կամ) 36-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի դրույթները, և (կամ) եթե հարկային մարմինը խախտել է Օրենսգրքի 337-339-րդ և (կամ) 341-րդ հոդվածների դրույթները՝ այդ մասին երեք աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ծանուցելով հարկային մարմնի ղեկավարին.

8) չկատարելու հարկային մարմնի պաշտոնատար անձանց լիազորություններից, ինչպես նաև հարկային հսկողության նպատակներից ու հարցերից չբխող պահանջներ.

9) հարկային հսկողության ցանկացած փուլում մասնակից դարձնելու մասնագետների, փորձագետների, աուդիտորների և (կամ) փաստաբանների.

10) Օրենսգրքով և օրենսդրությամբ սահմանված կարգով բողոքարկելու հարկային մարմնի պաշտոնատար անձանց որոշումները, գործողությունները կամ անգործությունը.

11) պահանջելու հարկային մարմնի և հարկային մարմնի պաշտոնատար անձանց ընդունած ապօրինի որոշումների, գործողությունների կամ անգործության հետևանքով իրենց պատճառված վնասի փոխհատուցում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

2. Հարկ վճարողը (հարկային գործակալը) և դրա պաշտոնատար անձն ունեն նաև Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված այլ իրավունքներ:

Գ Լ Ո Ւ Խ 7

ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ (ՀԱՐԿԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ) ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 35. Հարկային մարմնի (հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձի) պարտականությունները

1. Հարկային մարմինը (հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձը) պարտավոր է՝

1) պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը, հարկ վճարողների (հարկային գործակալների) իրավունքներն ու օրինական շահերը.

2) իրականացնել հարկ վճարողների հաշվառում.

3) իրազեկման ու բացատրական աշխատանքներ իրականացնել հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթների և դրանց փոփոխությունների կիրառության վերաբերյալ, հարկ վճարողներին (հարկային

գործակալներին) տեղեկացնել հարկերի և վճարների մասին.

4) հարկ վճարողների (հարկային գործակալների) կողմից հարկային մարմին ներկայացվող գրավոր, բանավոր կամ էլեկտրոնային հարցադրումներին սահմանված կարգով տալ համապատասխան պարզաբանումներ.

5) Օրենսգրքով սահմանված դեպքերում, կարգով և ժամկետներում հարկ վճարողին (հարկային գործակալին) վերադարձնել միասնական հաշվին առկա գումարները.

6) հարկ վճարողի (հարկային գործակալի) դիմումի հիման վրա հարկային մարմնի սահմանած կարգով և ձևով տրամադրել տեղեկանք (այդ թվում՝ հարկ վճարողի կողմից պահանջվելու դեպքում՝ նաև անգլերեն և ռուսերեն)՝ Հայաստանի Հանրապետությունում վճարված պետական հարկերի և պետական վճարների վերաբերյալ.

7) հսկողություն իրականացնել հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի պահանջների պահպանման նկատմամբ.

8) հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի՝ հանցագործության հատկանիշներով խախտման դեպքեր հայտնաբերելու դեպքում օրենքով սահմանված կարգով անցկացնել հետաքննություն.

9) պահպանել հարկային գաղտնիքը, հարկային գաղտնիք համարվող տեղեկատվությունը օրենքով սահմանված դեպքերում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով տրամադրել այդ տեղեկությունների օգտագործմամբ աշխատանքներ կատարելու իրավասություն ունեցող պետական մարմիններին.

10) Օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում քննարկել հարկ վճարողի ներկայացրած դիմում-բողոքը հարկային մարմնի կամ հարկային ծառայողի գործողությունների կամ անգործության դեմ և ընդունված որոշման մասին պատշաճ կարգով ծանուցել հարկ վճարողին.

11) իրականացնել ծառայողական քննություն հարկային ծառայողների կատարած խախտումների վերաբերյալ.

12) հարկային հսկողության ընթացքում՝

ա. պահպանել Օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված պահանջները,

բ. դուրս չգալ հարկային հսկողության հանձնարարագրում նշված նպատակների և հարցերի շրջանակից,

գ. հարկ վճարողին (հարկային գործակալին) և նրա պաշտոնատար անձանց ծանոթացնել իրենց իրավունքներին և պարտականություններին,

դ. չխոչընդոտել հարկ վճարողի (հարկային գործակալի) բնականոն աշխատանքին,

ե. երեք աշխատանքային օրվա ընթացքում գրավոր պատասխանել հարկ վճարողի (հարկային գործակալի) կամ նրա պաշտոնատար անձի՝ անմիջականորեն հարկային հսկողությանն առնչվող և հարկային հսկողության ենթակա ժամանակաշրջանին վերաբերող ցանկացած գրավոր հարցման, բացառությամբ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթների վերաբերյալ պաշտոնական պարզաբանումների:

2. Հարկային մարմինը (հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձը) ունի նաև Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված այլ պարտականություններ:

(35-րդ հոդվածը փոփ. 19.06.19 ՀՕ-88-Ն)

Հոդված 36. Հարկային մարմնի (հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձի) լիազորությունները

1. Հարկային մարմինը (հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձը) լիազորված է՝

1) հարկ վճարողների (հարկային գործակալների) մոտ Օրենսգրքի 17-րդ բաժնով սահմանված կարգով իրականացնել հարկային հսկողություն՝ Օրենսգրքի նույն բաժնով սահմանված՝ հարկային մարմնին լիազորություններ վերապահող օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ.

2) Օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով ինքնուրույն հաշվարկել, վերահաշվարկել, ճշգրտել հարկ վճարողի (հարկային գործակալի) հարկային պարտավորությունները.

3) օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված լիազորությունների շրջանակներում Օրենսգրքով սահմանված կարգով հարկային հսկողություն իրականացնել օրենքով սահմանված՝ լիցենզավորման կամ ծանուցման կամ թույլտվության ենթակա գործունեությունն առանց լիցենզիայի կամ առանց ծանուցման կամ առանց թույլտվության իրականացնող (այդ թվում՝ ընդերքը կամ բնական պաշարներն օգտագործող) հարկ վճարողների մոտ.

4) Օրենսգրքով սահմանված կարգով կատարել չափագրումներ, գույքագրումներ, հսկիչ գնումներ.

4.1) իրականացնել հարկ վճարողի գործարքների մոնիտորինգ, գործունեության այլ ոլորտային վերլուծություններ և դրանց արդյունքներով գնահատված ռիսկերի նվազեցման վերաբերյալ ծանուցագրերի միջոցով իրազեկել հարկ վճարողներին.

5) օրենքով սահմանված կարգով պահել ու հարկային ծառայողների միջոցով կրել, օգտագործել զենք և զինամթերք.

6) օրենքով սահմանված կարգով իրականացնել օպերատիվ-հետախուզական միջոցառումներ՝ նախապատրաստվող, կատարվող կամ կատարված հարկային իրավախախտումների վերաբերյալ առկա տեղեկությունների, ինչպես նաև հարկային հանցագործության կատարման մասին վկայող այլ փաստերի ու հանգամանքների առկայության դեպքում.

7) օպերատիվ անհրաժեշտությունից ելնելով՝ օգտագործել կազմակերպությունների և ֆիզիկական անձանց փոխադրամիջոցներն ու կապի միջոցները՝ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցելով ծախսերը.

8) կազմակերպություններին և ֆիզիկական անձանց տրված լիցենզիաները կամ ծանուցումները կամ

թույլտվությունները ուժը կորցրած ճանաչելու կամ դրանց գործողությունը կասեցնելու միջնորդագրեր ներկայացնել լիազորված մարմիններ.

9) առաջարկություններ ներկայացնել ստուգում իրականացնող այլ պետական մարմիններ՝ վարչական կամ քրեական պատասխանատվություն առաջացնող հարկային հսկողության շրջանակներում բացահայտված չարաշահումների և այլ խախտումների կապակցությամբ՝ համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար.

10) հայց ներկայացնել դատարան, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող, դատարանում գործը վարելու համար տալ լիազորագրեր.

11) հարկային պարտավորությունների գանձումն ապահովելու նպատակով Օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով արգելանք դնել հարկ վճարողի (հարկային գործակալի) գույքի վրա.

12) պարզաբանումներ տրամադրել հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթների կիրառության վերաբերյալ.

13) հարկային հսկողության ընթացքում՝

ա. պահանջել բացառապես այնպիսի փաստաթղթեր, տվյալներ, բացատրություններ, տեղեկանքներ, հաշվարկներ և այլ տեղեկություններ, որոնք անմիջականորեն առնչվում են իրենց իրավասության շրջանակներում իրականացվող հարկային հսկողության նպատակներին ու հարցերին,

բ. Օրենսգրքով սահմանված դեպքերում Կառավարության սահմանած կարգով վերցնել փաստաթղթեր (այդ թվում՝ բնօրինակների, կրկնօրինակների կամ լուսապատճենների ձևով), իրեր (նյութական կրիչով տվյալ հարկային ստուգմանն առնչվող տեղեկատվություն պարունակող փաստաթղթերի կրկնօրինակ) կամ փորձանմուշներ, որոնք անմիջականորեն առնչվում են հարկային հսկողության նպատակներին ու հարցերին, և որոնք վերցնելը չի խոչընդոտում հարկ վճարողի բնականոն աշխատանքին: Պահանջը վերանալուն պես, բայց ոչ ուշ, քան փաստաթղթերը վերցնելուց երեք տարի հետո դրանք վերադարձվում են հարկ վճարողին,

գ. հարկային հսկողության ենթարկվող հարկ վճարողի ներկայացուցչի մասնակցությամբ անարգել մուտք գործել հարկ վճարողի գրասենյակային, առևտրային, արտադրական, պահեստային, արխիվային, տարածքներ և հարկ վճարողի գործունեությունն իրականացնելու համար օգտագործվող այլ տարածքներ ու շինություններ, գույքագրման, չափագրման, ինչպես նաև Օրենսգրքով սահմանված այլ դեպքերում կապարակնքել այդ տարածքներն ու շինությունները, դրամարկղերը, բեռնաթափքերը, բեռնախցիկները, ցիստեռնները, իրականացնել սույն կետում նշված տարածքների ու շինությունների, ինչպես նաև փոխադրամիջոցների, փաստաթղթերի ու առարկաների զննում,

դ. անհրաժեշտության դեպքում հարկային հսկողությանը ներգրավել հարկ վճարողի (հարկային գործակալի) մասնագետներին՝ հարկ վճարողի (հարկային գործակալի) կամ նրա պաշտոնատար անձի համաձայնությամբ,

ե. բացառապես հարկային հսկողության նպատակների ու հարցերի շրջանակներում հարկ վճարողից (հարկային գործակալից) կամ նրա պաշտոնատար անձից պահանջել անցկացնել ակտիվների և պարտավորությունների գույքագրում, այդ թվում՝ ներգրավելով հարկ վճարողի (հարկային գործակալի) համապատասխան աշխատակիցների և մասնագետների,

զ. Օրենսգրքով սահմանված կարգով ներգրավել մասնագետների, փորձագետների և թարգմանիչների,

է. պահանջել վերացնել Օրենսգրքով սահմանված կարգով հայտնաբերված՝ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտումները:

2. Հարկային մարմինը (հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձը) ունի նաև Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված այլ լիազորություններ:

(36-րդ հոդվածը լրաց. 21.12.17 ՀՕ-266-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն, 25.06.19 ՀՕ-68-Ն)

Բ Ա Ժ Ի Ն 3

ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՀԱՇՎԵՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Գ Լ ՈՒ Խ 8

ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԿԱՏԱՐՈՒՄԸ

Հոդված 37. Ապրանքի մատակարարման վայրը

1. Ապրանքի մատակարարման վայրը համարվում է Հայաստանի Հանրապետությունը, եթե ապրանքի մատակարարման պահին այն գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքում, կամ եթե ապրանքն արտահանվում է Հայաստանի Հանրապետությունից:

2. Եթե ապրանքի մատակարարման վայրը, սույն հոդվածի 1-ին մասի համաձայն, չի համարվում Հայաստանի Հանրապետությունը, ապա այդ ապրանքի մատակարարման վայրը համարվում է Հայաստանի Հանրապետությունից դուրս:

Հոդված 38. Ապրանքի մատակարարման պահը

1. Եթե Օրենսգրքով կամ սույն հոդվածով այլ բան սահմանված չէ, ապա ապրանքի մատակարարման պահ է համարվում սույն մասում նշված առավել վաղ առաջացող պահը.

1) այն պահը, երբ ապրանքը հանձնվում է այլ անձի, բացառությամբ այն դեպքերի, երբ ապրանքի նկատմամբ սեփականության իրավունքը, ապրանքի մատակարարման պայմանագրի համաձայն, այլ անձի է անցնում այլ պահի, որի դեպքում ապրանքի մատակարարման պահ է համարվում այդ պահը, կամ

2) այն պահը, երբ առաքված ապրանքն ընդունում է այլ անձը, բացառությամբ այն դեպքերի, երբ ապրանքի նկատմամբ սեփականության իրավունքը, ապրանքի մատակարարման պայմանագրի համաձայն, այլ անձի է անցնում այլ պահի, որի դեպքում ապրանքի մատակարարման պահ է համարվում այդ պահը:

2. Եթե ապրանքի նկատմամբ սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման, ապա այդ ապրանքի մատակարարման պահ է համարվում դրա նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման պահը:

3. Եթե ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով նախատեսվում է, որ պայմանագրի գործողության ժամկետի ավարտին լիզինգի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է անցնել վարձակալին, ապա լիզինգի առարկա հանդիսացող ապրանքի մատակարարման պահ է համարվում համապատասխան հարկատեսակի համար յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրը՝ լիզինգի պայմանագրով նախատեսված՝ հաշվեգրված լիզինգային վճարներին համապատասխանող չափով:

Հոդված 39. Աշխատանքի կատարման և ծառայության մատուցման վայրը

1. Աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման վայրը համարվում է Հայաստանի Հանրապետությունը, եթե՝

1) կատարվող աշխատանքները և (կամ) մատուցվող ծառայությունները անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող կամ կառուցվող կամ կառուցվելիք անշարժ գույքի հետ: Սույն կետում նշված աշխատանքներին և (կամ) ծառայություններին մասնավորապես վերաբերում են՝

ա. շինարարության նախապատրաստման և իրականացման (ներառյալ՝ հետախուզման, նախագծման, դիզայներական, մոնտաժային, հեղինակային և տեխնիկական վերահսկողության) աշխատանքները և ծառայությունները,

բ. անշարժ գույքի նորոգման, վերականգնման և կանաչապատման աշխատանքները և ծառայությունները,

գ. անշարժ գույքի առք ու վաճառքի գործակալների ու փորձագետների կողմից կատարվող աշխատանքները և մատուցվող ծառայությունները (ներառյալ՝ անշարժ գույքի գնահատման ծառայությունները),

դ. անշարժ գույքը վարձակալության (այդ թվում՝ ֆինանսական վարձակալության (լիզինգի) կամ օգտագործման տրամադրելու ծառայությունները.

2) կատարվող աշխատանքները և (կամ) մատուցվող ծառայությունները անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող շարժական գույքի (այդ թվում՝ տրանսպորտային միջոցի) հետ, բացառությամբ շարժական գույքի վարձակալության (այդ թվում՝ ֆինանսական վարձակալության (լիզինգի) կամ օգտագործման տրամադրելու ծառայությունների).

3) մշակույթի, արվեստի, ուսուցման (կրթության), գիտության, առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի, զբոսաշրջության, հանգստի և սպորտի ոլորտի ծառայությունները փաստացի մատուցվում են Հայաստանի Հանրապետության տարածքում.

4) կազմակերպությունը, որի գտնվելու վայրը, Օրենսգրքի 4-րդ գլխի համաձայն, համարվում է Հայաստանի Հանրապետությունը կամ ֆիզիկական անձը, որի բնակության վայրը, Օրենսգրքի 4-րդ գլխի համաձայն, համարվում է Հայաստանի Հանրապետությունը կամ մշտական հաստատությունը ընդունում է հետևյալ աշխատանքները կամ ստանում է հետևյալ ծառայությունները (այդ թվում՝ այն դեպքերում, երբ աշխատանքներն ուղղակիորեն ընդունում է կամ ծառայություններն ուղղակիորեն ստանում է ոչ ռեզիդենտ կազմակերպությունը կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձը, սակայն դրանց օգտագործումը (սպառումը) փաստացի կատարվում է դրանց մշտական հաստատության կողմից).

ա. արտոնագրերի, լիցենզիաների, ծանուցումների, թույլտվությունների, առևտրային նշանների, ապրանքային նշանների, հեղինակային իրավունքներ և համանման այլ ծառայություններ,

բ. էլեկտրոնային հաշվողական մեքենաների և տվյալների բազաների (հաշվիչ տեխնիկայի ծրագրային միջոցների և տեղեկատվական արտադրանքի) ծրագրերի մշակման աշխատանքներ, ծառայություններ, դրանց հարմարեցման ու ձևափոխման ծառայություններ,

գ. խորհրդատվական, իրավաբանական, հաշվապահական, աուդիտորական, ինժեներական, գովազդային, դիզայներական, մարկետինգային ծառայություններ, տեղեկատվության մշակման (այդ թվում՝ տեղեկատվության հավաքման ու ընդհանրացման) և փոխանցման (հաղորդման), գիտահետազոտական, փորձարարական-կոնստրուկտորական և փորձարարական-տեխնոլոգիական (տեխնոլոգիական) աշխատանքներ, ինչպես նաև սույն

ենթակետում նշված ծառայություններին համանման այլ ծառայություններ,

դ. անձնակազմի (աշխատակիցների) աշխատանքի տրամադրման ծառայություններ այն դեպքում, երբ անձնակազմն աշխատում է այդ ծառայությունները ստացողի գործունեության վայրում,

ե. շարժական գույքը (բացառությամբ տրանսպորտային միջոցների վարձակալության (այդ թվում՝ ֆինանսական վարձակալության (լիզինգի) կամ օգտագործման տրամադրելու ծառայությունների, որոնց մատուցման վայրը որոշվում է սույն մասի 6-րդ կետով սահմանված կարգով) վարձակալության (այդ թվում՝ ֆինանսական վարձակալության (լիզինգի) կամ օգտագործման տրամադրելու ծառայություններ),

զ. պատվիրատուի համար սույն կետով սահմանված աշխատանքները կատարող և (կամ) ծառայությունները մատուցող կազմակերպություն և (կամ) ֆիզիկական անձ ներգրավելու գործակալական ծառայություններ.

5) Հայաստանի Հանրապետությունում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպության կողմից մատուցվում են բեռների և (կամ) ուղևորների փոխադրման այնպիսի տրանսպորտային ծառայություններ, որոնք սկսվում և ավարտվում են Հայաստանի Հանրապետության տարածքում.

6) աշխատանքը կատարող և (կամ) ծառայությունը մատուցող կազմակերպության կամ մշտական հաստատության գտնվելու վայրը կամ աշխատանքը կատարող և (կամ) ծառայությունը մատուցող ֆիզիկական անձի բնակության վայրը, Օրենսգրքի 4-րդ գլխի համաձայն, համարվում է Հայաստանի Հանրապետությունը, եթե այլ բան սահմանված չէ սույն մասի 1-4-րդ կետերով և 2-րդ մասի 1-ին կետով:

2. Աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման վայրը համարվում է Հայաստանի Հանրապետությունից դուրս, եթե՝

1) կազմակերպությունը, որի գտնվելու վայրը, Օրենսգրքի 4-րդ գլխի համաձայն, չի համարվում Հայաստանի Հանրապետությունը, կամ ֆիզիկական անձը, որի բնակության վայրը, Օրենսգրքի 4-րդ գլխի համաձայն, չի համարվում Հայաստանի Հանրապետությունը, ընդունում կամ ստանում է սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում նշված աշխատանքները կամ ծառայությունները (բացառությամբ այն դեպքերի, երբ աշխատանքներն ուղղակիորեն ընդունում է կամ ծառայություններն ուղղակիորեն ստանում է ոչ ռեզիդենտ կազմակերպությունը կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձը, սակայն դրանց օգտագործումը (սպառումը) փաստացի կատարվում է դրանց մշտական հաստատության կողմից).

2) աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման վայրը, սույն հոդվածի 1-ին մասի համաձայն, չի համարվում Հայաստանի Հանրապետությունը:

3. Եթե կազմակերպության կամ ֆիզիկական անձի կողմից կատարվում են մի քանի տեսակի աշխատանքներ և (կամ) մատուցվում են մի քանի տեսակի ծառայություններ, և մի տեսակի աշխատանքների կատարումը կամ ծառայությունների մատուցումը մյուս տեսակի աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման նկատմամբ կրում է օժանդակ բնույթ, ապա օժանդակ աշխատանքների կատարման կամ օժանդակ ծառայությունների մատուցման վայր է ճանաչվում հիմնական աշխատանքների կատարման կամ հիմնական ծառայությունների մատուցման վայրը:

4. Օրենսգրքի կիրառության իմաստով՝

1) աշխատանքների կամ ծառայությունների բնորոշումն իրականացվում է Հայաստանի Հանրապետությունում կիրառվող՝ տնտեսական գործունեության տեսակների դասակարգչին համապատասխան,

2) աշխատանքը կամ ծառայությունը համարվում է Օրենսգրքի համապատասխան հոդվածում, մասում, կետում կամ ենթակետում նշված այլ աշխատանքին կամ ծառայությանը համանման, եթե այն ընդգրկված է Հայաստանի Հանրապետությունում կիրառվող՝ տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի այն դասում, որում ընդգրկված են համապատասխանաբար՝ տվյալ հոդվածում, մասում, կետում կամ ենթակետում նշված այլ աշխատանքը կամ ծառայությունը:

(39-րդ հոդվածը փոփ., խմբ. 21.12.17 ՀՕ-266-Ն, փոփ. 21.06.18 ՀՕ-338-Ն, փոփ., խմբ. 25.06.19 ՀՕ-68-Ն)

Հոդված 40. Աշխատանքի կատարման և ծառայության մատուցման պահը

1. Հանրային ծառայությունների և կոմունալ ծառայությունների մատուցման պահ է համարվում յուրաքանչյուր ամսվա վերջին օրը:

2. Գույքը վարձակալության կամ ֆինանսական վարձակալության (լիզինգի) տրամադրելու (եթե պայմանագրով չի նախատեսվում, որ պայմանագրի գործողության ժամկետի ավարտին լիզինգի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է անցնել վարձակալին) կամ գույքը օգտագործման տրամադրելու ծառայությունների մատուցման պահ է համարվում համապատասխան հարկատեսակի համար յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրը, իսկ եթե այդ ծառայությունների մատուցման պայմանագրով նախատեսված է, որ ծառայության մատուցումն ավարտվում է մինչև հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրը, ապա ծառայության մատուցման պահ է համարվում ծառայության մատուցման վերջին օրը:

3. Բաժանորդագրային հիմունքներով մատուցվող ծառայությունների (մասնավորապես, համակարգչային ծրագրերից, տվյալների բազաներից, արտոնագրերից, լիցենզիաներից, ծանուցումներից, թույլտվություններից, առևտրային նշաններից, ապրանքային նշաններից, հեղինակային իրավունքներից և համանման այլ իրավունքներից

օգտվելու ծառայությունների) մատուցման պահ է համարվում յուրաքանչյուր ամսվա վերջին օրը, իսկ եթե այդ ծառայությունների մատուցման պայմանագրերում նախատեսված են ծառայությունների մատուցման այլ ժամկետներ (փուլեր), ապա այդ ծառայությունների մատուցման պահ է համարվում այդ ժամկետների (փուլերի) վերջին օրը:

4. Եթե Օրենսգրքով այլ բան սահմանված չէ, ապա սույն հոդվածի 1-3-րդ մասերում չնշված աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման պահ է համարվում սույն մասում նշված առավել վաղ առաջացող պահը.

1) այն պահը, երբ՝

ա. աշխատանք կատարողը աշխատանքի կատարման արդյունքի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցում է աշխատանքն ընդունողին,

բ. ծառայություն մատուցողն ավարտում է ծառայություն ստացողի օգտին գործողության իրականացումը (այդ թվում՝ ըստ պայմանագրով նախատեսված փուլերի),

գ. ծառայություն մատուցողը ոչ նյութական ակտիվի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցում է ծառայություն ստացողին.

2) աշխատանքն ընդունողը և (կամ) ծառայությունը ստացողը հաստատում է աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման գործարքի մասով աշխատանք կատարողի և (կամ) ծառայություն մատուցողի կողմից դուրս գրված հաշվարկային փաստաթուղթը:

5. Եթե սույն հոդվածի 1-3-րդ մասերում չնշված աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման պահը հնարավոր չէ որոշել սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով, ապա այդ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման պահ է համարվում՝

1) այն պահը, երբ աշխատանք կատարող և (կամ) ծառայություն մատուցող կազմակերպությունը կամ ֆիզիկական անձը, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման պայմանագրին համապատասխան, իրավունք է ձեռք բերել, չվերադարձնելով նախկինում ստացված՝ աշխատանքի չկատարված մասին և (կամ) ծառայության չմատուցված մասին համապատասխանող գումարը (բացառությամբ օրենքով նախավճար համարվող գումարի), դադարեցնել աշխատանքի կատարումը և (կամ) ծառայության մատուցումը.

2) այն հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրը, որում ակնհայտ է դարձել, որ աշխատանք ընդունողը և (կամ) ծառայություն ստացողը առնվազն տվյալ հաշվետու ժամանակաշրջանում արդեն իսկ ընդունել է այդ աշխատանքը և (կամ) ստացել է այդ ծառայությունը, իսկ աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման պայմանագրով նախատեսված դեպքում՝ տվյալ փուլով նախատեսված աշխատանքը և (կամ) ծառայությունը:

(40-րդ հոդվածը փոփ. 21.12.17 ՀՕ-266-Ն)

Հոդված 41. Ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման գործարքի անվավեր ճանաչումը

1. Օրենսգրքի կիրառության նպատակով ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման գործարքը անվավեր է ճանաչվում դատարանի վճռի համաձայն:

2. Անվավեր ճանաչված գործարքը դրա կողմերի համար Օրենսգրքով սահմանված իրավական հետևանքներ (այդ թվում՝ իրավունքներ և պարտականություններ) չի առաջացնում, բացառությամբ սույն հոդվածի 2.1-ին մասով սահմանված դեպքերում գործարքի անվավերության հետևանքների:

2.1. Գործարքի անվավերության դեպքում կողմերի համար Օրենսգրքով սահմանված իրավական հետևանքներ (այդ թվում՝ իրավունքներ և պարտականություններ) առաջանում են միայն չվերադարձված ապրանքի, չվերադարձված աշխատանքի արդյունքի և (կամ) չվերադարձված ծառայության արդյունքի մասով:

3. Անվավեր ճանաչված գործարքի մասով նախկինում դուրս գրված հաշվարկային փաստաթուղթը, Օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն, ճանաչվում է անվավեր:

4. Գործարքն անվավեր ճանաչելու դեպքում գործարքի կողմեր համարվող հարկ վճարողները գործարքի անվավեր ճանաչման արդյունքները, Օրենսգրքի համապատասխան բաժինների համաձայն, արտացոլում են սույն հոդվածի 1-ին մասով սահմանված՝ դատարանի վճռի ամսաթիվն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանների համար հարկային մարմին ներկայացվող համապատասխան հարկային հաշվարկներում:

5. Եթե ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման գործարքի անվավեր ճանաչման՝ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերն առկա չեն, սակայն գործարքի կողմերն այն անվավեր են ճանաչել, ապա գործարքի անվավեր ճանաչումը հաշվի չի առնվում:

(41-րդ հոդվածը լրաց. 21.06.18 ՀՕ-338-Ն)

Հոդված 42. Ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման գործարքի ճշգրտումը

1. Օրենսգրքի կիրառության նպատակով ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և (կամ)

ծառայության մատուցման գործարքը ճշգրտվում է հետևյալ դեպքերում.

1) գործարքի առարկան պիտանիության (պահպանման) ժամկետ ունեցող ապրանք է.

2) գործարքի առարկան հանրային կամ կոմունալ ծառայություն է, և գործարքի կողմերի միջև կնքված գրավոր պայմանագրով նախատեսված է, որ այդ ծառայությունների ծավալը հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո կարող է ճշգրտվել.

3) գործարքի առարկա համարվող ապրանքի քանակը, ծավալը և (կամ) որակական հատկանիշները, ապրանքի մատակարարման պայմանագրի համաձայն, ստուգվում են գնորդի կողմից ապրանքի ընդունման պահին, և պարզվում է, որ դրանցից որևէ մեկը չի համապատասխանում պայմանագրով սահմանված պայմաններին, որի հետևանքով ապրանքը (կամ դրա մի մասը) ենթակա է մասնակի ընդունման կամ վերադարձման.

4) գործարքի առարկա համարվող ապրանքները մատակարարվել են ավելի, քան սահմանված է եղել հաշվարկային փաստաթղթով, և գնորդի կողմից ավելի մատակարարված ապրանքներն ընդունվել են.

5) աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման այն գործարքների դեպքում, երբ կատարված աշխատանքների կամ մատուցված ծառայությունների ծավալը գործարքի ավարտին ավելի կամ պակաս է սկզբնապես դուրս գրված համապատասխան հաշվարկային փաստաթղթով նախատեսված ծավալից, բացառությամբ այն դեպքերի, երբ՝

ա. աշխատանքները կամ ծառայություններն արդեն իսկ (փաստացի) կատարվել կամ մատուցվել են գործարքի իրական պայմաններին համապատասխանող՝ դուրս գրված հաշվարկային փաստաթղթում նշված պայմաններով,

բ. աշխատանքի կամ ծառայության բովանդակությունն այնպիսին է, որ աշխատանքի կամ ծառայության արդյունքի հետ հանձնումը հնարավոր չէ:

Դուրս գրված այն հարկային հաշվի կամ հաշիվ վավերագրի մասով, որի դուրսգրման օրը ներառող հարկային տարվանից անցել է երեք հարկային տարի, չի կարող դուրս գրվել համապատասխանաբար ճշգրտող հարկային հաշիվ կամ ճշգրտող հաշիվ վավերագիր:

2. Ճշգրտված գործարքը դրա կողմերի համար Օրենսգրքով սահմանված իրավական հետևանքներ, այդ թվում՝ իրավունքներ և պարտականություններ, առաջացնում է միայն այն մասով, որը մնում է գործարքի ճշգրտման արդյունքում:

3. Ճշգրտված գործարքի մասով նախկինում դուրս գրված հաշվարկային փաստաթուղթը շարունակում է համարվել վավեր փաստաթուղթ, սակայն ճշգրտված գործարքի մասով ապրանք մատակարարողը, աշխատանք կատարողը և (կամ) ծառայություն մատուցողը (բացառությամբ հանրային ծառայություններ մատուցող հարկ վճարողների) Օրենսգրքի 56-րդ հոդվածով սահմանված կարգով դուրս է գրում նաև Օրենսգրքի 55-րդ հոդվածով սահմանված՝ համապատասխան ճշգրտող հաշվարկային փաստաթուղթ: Հանրային ծառայություններ մատուցող հարկ վճարողները գործարքի ճշգրտման արդյունքն արտացոլում են, հանրային ծառայությունների ոլորտը կարգավորող լիազոր մարմնի ընդունած իրավական ակտերի համաձայն, ճշգրտման կատարման օրը ներառող ամսվա ընթացքում իրականացված՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման գործարքի համար դուրս գրվող համապատասխան հաշվարկային փաստաթղթում:

4. Գործարքի ճշգրտման դեպքում գործարքի կողմեր համարվող հարկ վճարողները (բացառությամբ սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված հարկ վճարողների) պարտավոր են գործարքի ճշգրտման արդյունքները՝

1) ԱԱՀ-ի և ակցիզային հարկի մասով արտացոլել համապատասխան ճշգրտող հաշվարկային փաստաթղթի դուրս գրման օրը ներառող հաշվետու ժամանակաշրջանների համար Օրենսգրքի 52-րդ և 53-րդ հոդվածներով սահմանված կարգով իրենց կողմից կազմվող և հարկային մարմին ներկայացվող հարկային հաշվարկներում, եթե գործարքի ճշգրտման արդյունքում նվազում են գործարքից առաջացած հարկային պարտավորության և հաշվանցման (պակասեցման) ենթակա հարկի գումարները.

2) ԱԱՀ-ի և ակցիզային հարկի մասով արտացոլել հիմնական գործարքի կատարման օրը ներառող հաշվետու ժամանակաշրջանների համար Օրենսգրքի 52-րդ և 53-րդ հոդվածներով սահմանված կարգով իրենց կողմից կազմվող և հարկային մարմին ներկայացվող հարկային հաշվարկներում, եթե գործարքի ճշգրտման արդյունքում ավելանում են գործարքից առաջացած հարկային պարտավորության և հաշվանցման (պակասեցման) ենթակա հարկի գումարները.

3) այլ հարկերի և բնօգտագործման վճարի մասով արտացոլել հիմնական գործարքի կատարման օրը ներառող հաշվետու ժամանակաշրջանների համար Օրենսգրքի 52-րդ և 53-րդ հոդվածներով սահմանված կարգով իրենց կողմից կազմվող և հարկային մարմին ներկայացվող հարկային հաշվարկներում:

5. Հանրային ծառայություններ մատուցող հարկ վճարողները պարտավոր են գործարքի ճշգրտման արդյունքներն արտացոլել ճշգրտման կատարման օրը ներառող հաշվետու ժամանակաշրջանի համար Օրենսգրքի 52-րդ և 53-րդ հոդվածներով սահմանված կարգով իրենց կողմից կազմվող և հարկային մարմին ներկայացվող հարկային հաշվարկում:

6. Եթե ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման գործարքի ճշգրտման՝ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերն առկա չեն, սակայն ապրանք մատակարարողը, աշխատանք կատարողը և (կամ) ծառայություն մատուցողը կատարել է գործարքի ճշգրտում (դուրս է գրել ճշգրտող հաշվարկային փաստաթուղթ), ապա գործարքի ճշգրտումը հաշվի չի առնվում:

(42-րդ հոդվածը խմբ. 21.12.17 ՀՕ-266-Ն, լրաց., խմբ. 21.06.18 ՀՕ-338-Ն)

Հոդված 43. Հարկային պարտավորությունը

1. Հարկային պարտավորություն է համարվում որևէ տեսակի հարկի և (կամ) վճարի, ինչպես նաև Օրենսգրքի և (կամ) վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքների դրույթները խախտելու համար հաշվարկված՝ Օրենսգրքով և (կամ) վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված տույժերի, տուգանքների, ինչպես նաև վնասի հատուցման գումարներ վճարելու՝ հարկ վճարողի պարտավորությունը, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի:

2. Օրենսգրքի 16-րդ բաժնի կիրառության իմաստով՝ հարկային պարտավորությունը ներառում է միայն հարկերի (բացառությամբ ճանապարհային հարկի, տեղական հարկերի, ինչպես նաև բնապահպանական հարկի գծով պարտավորության այն գումարների, որոնց համար, Օրենսգրքի 8-րդ բաժնի համաձայն, հարկային հաշվարկ ներկայացնելու պահանջ սահմանված չէ), սոցիալական վճարի, բնօգտագործման վճարի (բացառությամբ բնօգտագործման վճարի գծով պարտավորության այն գումարների, որոնց համար, Օրենսգրքի 10-րդ բաժնի համաձայն, հարկային հաշվարկ ներկայացնելու պահանջ սահմանված չէ) և հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարի, ինչպես նաև Օրենսգրքի և (կամ) սույն մասում նշված վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքների դրույթները խախտելու համար հաշվարկված՝ Օրենսգրքով և (կամ) սույն մասում նշված վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված տույժերի, տուգանքների, ինչպես նաև վնասի հատուցման գումարներ վճարելու՝ հարկ վճարողի պարտավորությունը:

Հոդված 44. Հարկային պարտավորության ծագումը

1. Հարկային պարտավորությունը ծագում է Օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում:

2. Օրենսգրքի 17-րդ բաժնով սահմանված կարգով իրականացվող ստուգումների և Օրենսգրքի 343-րդ հոդվածի 5-րդ մասի 2-6-րդ կետերով սահմանված ուսումնասիրությունների արդյունքում Օրենսգրքի և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջների խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե դրանք հարկ վճարողին առաջադրվել են խախտումը կատարելու հարկային տարվան անմիջապես հաջորդող երրորդ հարկային տարին լրանալուց հետո (բացառությամբ սույն հոդվածի 5-րդ մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքի), իսկ Օրենսգրքի՝ անշարժ գույքի հարկին և փոխադրամիջոցների գույքահարկին վերաբերող բաժինների պահանջների խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու հարկային տարվան անմիջապես հաջորդող տասներորդ հարկային տարին լրանալուց հետո:

3. Սույն հոդվածի 2-րդ մասի կիրառության իմաստով՝ խախտումը կատարելու հարկային տարի է համարվում խախտում պարունակող համապատասխան հարկային հաշվարկը հարկային մարմին ներկայացնելու համար Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված ժամկետի վերջին օրը ներառող հարկային տարին:

4. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է, եթե հարկ վճարողի, հարկ վճարողի պաշտոնատար անձի բացակայության կամ ի հայտ եկած այլ հանգամանքների հետևանքով անհնարին է դառնում ստուգման կամ այլ կերպ հարկային պարտավորությունների հաշվարկման իրականացումը: Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված վաղեմության ժամկետի ընթացքը սույն մասով սահմանված հիմքերով կասեցվում է այդ հիմքերի (կամ դրանցից որևէ մեկի) առկայությունը հարկային մարմնի համապատասխան պաշտոնատար անձի կողմից Կառավարության սահմանած կարգով արձանագրվելու պահից: Սույն մասով սահմանված՝ կասեցման հիմքերի դադարեցումից հետո վաղեմության ժամկետի ընթացքը շարունակվում է, եթե հարկային մարմինը կամ հարկային մարմնի համապատասխան պաշտոնատար անձը գիտեր կամ կարող էր իմանալ կասեցման հիմքերի դադարեցման մասին:

5. Հարկ վճարողի կողմից ներկայացվող հարկային հաշվարկով հարկային պարտավորությունները կամ հաշվանցվող (պակասեցվող) գումարները չեն կարող փոփոխվել, եթե դրանք վերաբերում են այն հաշվետու ժամանակաշրջանին, որի վերջին օրվանից անցել է երեք տարի, եթե այլ բան նախատեսված չէ սույն մասով:

Սույն մասով սահմանված ժամկետի և սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետի միջև ընկած ժամանակահատվածում հարկ վճարողի կողմից կարող է ներկայացվել սույն մասի առաջին պարբերությամբ սահմանված ժամկետում ներառված հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող հարկային պարտավորությունները նվազեցնող կամ հաշվանցվող (պակասեցվող) գումարներն ավելացնող հարկային հաշվարկ, որը հարկային մարմնի կողմից կարող է ստուգվել այդ հաշվարկը ներկայացնելու օրվան հաջորդող մեկ տարվա ընթացքում:

6. Եթե հարկային մարմնին հայտնի են դարձել հարկ վճարողների կողմից ներկայացված հարկային հաշվարկներում առկա անճշտություններ, որոնք Օրենսգրքով սահմանված դեպքերում ու կարգով հնարավոր չէ ճշտել ճշտված հարկային հաշվարկների ներկայացման միջոցով կամ Օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում անհրաժեշտ է վերահաշվարկել հարկ վճարողի հարկային պարտավորությունները, ապա այդ պարտավորությունները կարող են ճշտվել Կառավարության սահմանած կարգով՝ առանց հարկ վճարողների մոտ ստուգումների (այդ թվում՝ վերստուգումների) իրականացման: Եթե սույն մասով սահմանված՝ հարկային

պարտավորությունների ճշտման արդյունքում առաջանում է հարկային պարտավորություն կամ ավելանում է նախկինում առաջացած հարկային պարտավորությունը, ապա հարկ վճարողն ազատվում է հարկի գումարը պակաս ցույց տալու համար Օրենսգրքով սահմանված տուգանքի կիրառումից: Սույն մասի կիրառության իմաստով՝ հարկային պարտավորությունների կամ հաշվանցվող (պակասեցվող) գումարների փոփոխություն չի կատարվում՝

1) եթե լրացել են հարկային պարտավորությունների առաջադրման՝ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետները.

2) եթե լրացել են հարկային պարտավորությունների փոփոխության՝ սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետները, և եթե հարկային պարտավորության ճշտումը հանգեցնում է հարկային պարտավորության նվազեցման կամ հաշվանցվող (պակասեցվող) գումարների ավելացման.

3) հարկ վճարողի մոտ իրականացվող ստուգումների կամ ուսումնասիրությունների ընթացքում, ինչպես նաև դրանց կասեցման ժամանակահատվածում՝ ստուգմանը կամ ուսումնասիրությանը վերաբերող հարկի կամ վճարի գծով:

7. Օրենսգրքի և Հայաստանի Հանրապետության այլ օրենքների խախտմամբ հարկ վճարողների վերաբերյալ ձեռք բերված տեղեկությունները չեն կարող հիմք հանդիսանալ հարկային պարտավորությունների հաշվարկման և գանձման համար:

8. Որևէ տեղեկություն հիմք չի հանդիսանում հարկ վճարողի հարկային պարտավորության հաշվարկման և գանձման համար, քանի դեռ հարկ վճարողը դրան ծանոթանալու և համապատասխան բացատրություններ տալու հնարավորություն չի ունեցել, բացառությամբ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան պարտապանի գործունեության կասեցման պահից վերջինիս անունից կառավարչի կողմից հարկային մարմին ներկայացված՝ սնանկության վարույթի ընթացքում հարկերի և (կամ) վճարների գծով լրացուցիչ առաջացած պարտավորությունների վերաբերյալ հարկային մարմնի սահմանած ձևով տեղեկատվության, որի հիման վրա հաշվարկվում են պարտապանի հարկային պարտավորությունները:

(44-րդ հոդվածը փոփ., լրաց. 21.12.17 ՀՕ-266-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն, 21.06.18 ՀՕ-338-Ն)

Հոդված 45. Հարկային պարտավորության դադարումը

1. Հարկային պարտավորությունը դադարում է՝

1) երբ այն կատարվում է.

2) երբ սահմանվում է հարկային պարտավորության գծով ազատման կամ նվազեցման հարկային արտոնություն՝ ազատված կամ նվազեցված պարտավորության չափով.

3) երբ կազմակերպության կամ ֆիզիկական անձի սնանկության գործը դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով ավարտվում է, և բացակայում է որևէ անձ, որը, Օրենսգրքի համաձայն, պատասխանատվություն է կրում հարկային պարտավորության կատարման համար.

4) երբ այն դառնում է անհուսալի և անհուսալի դառնալուց հետո՝ հինգ տարվա ընթացքում, չի գանձվում.

5) երբ ֆիզիկական անձը մահանում է, բացառությամբ Օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված դեպքերի.

6) վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի կիրառության իմաստով՝ չկատարված հարկային պարտավորությունները համարվում են անհուսալի, եթե՝

1) անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձի հարկային պարտավորությունների բռնագանձման կատարողական վարույթներն ավարտվել են պարտապանի կամ նրա գույքի գտնվելու վայրը պարզելու անհնարինության, պարտապանի՝ գույք կամ եկամուտներ չունենալու, կամ պահանջատիրոջ պահանջները բավարարելու համար բավարար գույք չունենալու հիմքով.

2) կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի՝ մեկ միլիոն դրամը չգերազանցող հարկային պարտավորությունների բռնագանձման կատարողական վարույթներն ավարտվել են պարտապանի կամ նրա գույքի գտնվելու վայրը պարզելու անհնարինության, պարտապանի՝ գույք կամ եկամուտներ չունենալու, կամ պահանջատիրոջ պահանջները բավարարելու համար բավարար գույք չունենալու հիմքով, եթե բացակայում են անհատ ձեռնարկատիրոջը կամ նոտարին սնանկ ճանաչելու հիմքերը.

3) մահացած կամ դատարանի վճռով մահացած ճանաչված ֆիզիկական անձը չունի որևէ ժառանգ կամ ժառանգը (ժառանգները) հրաժարվում են ժառանգությունից.

4) անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի սնանկության վերաբերյալ գործն ավարտելու մասին դատարանի վճռի հիման վրա անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցումը ստանում է պետական գրանցում, կամ անհատ ձեռնարկատերը հանվում է պետական հաշվառումից, կամ նոտարն ազատվում է պաշտոնից:

3. Անհուսալի հարկային պարտավորությունների մասով հարկային մարմինը վարում է առանձնացված հաշվառում: Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված հիմքով դադարած անհուսալի հարկային պարտավորությունները հանվում են հաշվառումից: Անհուսալի համարվող հարկային պարտավորությունների հաշվառման և հաշվառումից հանելու կարգը սահմանում է Կառավարությունը, իսկ այլ հարկային պարտավորությունների հաշվառման և հաշվառումից հանելու կարգը սահմանում է հարկային մարմինը:

(45-րդ հոդվածը փոփ. 21.12.17 ՀՕ-266-Ն, 23.03.18 ՀՕ-261-Ն)

Հոդված 46. Հարկային պարտավորության կատարումը (մարումը)

1. Միասնական հաշվի միջոցով մարվող հարկային պարտավորության կատարում (մարում) է համարվում Օրենսգրքին համապատասխան հաշվարկված՝ վճարման ենթակա հարկի, ինչպես նաև դրա գծով տույժերի և (կամ) տուգանքների գումարների հաշվեգրումը միասնական հաշվից համապատասխան հարկի գծով պարտավորությունը հաշվառող՝ պետական բյուջեի գանձապետական հաշվին:

2. Միասնական հաշվի միջոցով չմարվող հարկային պարտավորության (բացառությամբ տեղական հարկերի) կատարում (մարում) է համարվում Օրենսգրքին համապատասխան հաշվարկված՝ վճարման ենթակա հարկի, ինչպես նաև դրա գծով տույժերի և (կամ) տուգանքների գումարների՝

1) վճարումը համապատասխան հարկի գծով պարտավորությունը հաշվառող՝ պետական բյուջեի գանձապետական հաշվին.

2) միասնական հաշվի միջոցով չմարվող այլ հարկի գծով պարտավորությունը հաշվառող՝ պետական բյուջեի գանձապետական հաշվից գումարի հաշվանցումը տվյալ հարկի գծով պարտավորությունը հաշվառող՝ պետական բյուջեի գանձապետական հաշվին.

3) միասնական հաշվից գումարների հաշվանցումը տվյալ հարկի գծով պարտավորությունը հաշվառող՝ պետական բյուջեի գանձապետական հաշվին:

3. Տեղական հարկերի գծով հարկային պարտավորության կատարում (մարում) է համարվում Օրենսգրքին համապատասխան հաշվարկված՝ վճարման ենթակա հարկի, ինչպես նաև դրա գծով տույժերի և (կամ) տուգանքների գումարների վճարումը համապատասխան հարկի գծով պարտավորությունը հաշվառող՝ տեղական բյուջեի գանձապետական հաշվին:

4. Օրենսգրքով սահմանված դեպքում հարկային պարտավորության կատարումը կարող է դրվել հարկային գործակալի, հավատարմագրային կառավարչի, համատեղ գործունեության հաշվետու մասնակցի, կոմիսիոների, գործարքի իրականացման ժամանակ իր անունից հանդես եկող գործակալի վրա, ինչպես նաև կարող է սահմանվել համապարտ պատասխանատվություն՝ հարկային պարտավորությունների կատարման մասով:

5. Հարկային պարտավորությունները պետք է կատարվեն մինչև Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված վերջնաժամկետները, բացառությամբ Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերի:

6. Հարկային պարտավորությունը Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված վերջնաժամկետներում չկատարվելու կամ մասնակի կատարվելու դեպքում հարկային մարմինը, իսկ տեղական հարկերի ու տեղական վճարների մասով՝ տեղական ինքնակառավարման մարմինը իրավասու են Օրենսգրքի 19-րդ բաժնով սահմանված կարգով ձեռնարկել հարկային պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներ:

(46-րդ հոդվածը լրաց. 21.12.17 ՀՕ-266-Ն)

Հոդված 47. Հարկային պարտավորության կատարումը կազմակերպության լուծարման դեպքում

1. Լուծարվող կազմակերպության հարկային պարտավորությունների կատարումը դրվում է այդ կազմակերպության լուծարման հանձնաժողովի վրա՝ այդ կազմակերպության դրամական միջոցների, ներառյալ՝ գույքի վաճառքից ստացված միջոցների հաշվին: Լուծարման հանձնաժողովը պարտավոր է առկա հարկային պարտավորությունն ընդգրկել լուծարման հաշվեկշռում:

2. Օրենսգրքի 54-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով սահմանված դեպքերում ներկայացված հարկային հաշվարկների հիման վրա առաջացած հարկային պարտավորությունները ենթակա են կատարման մինչև Օրենսգրքով սահմանված վերջնաժամկետը, բայց ոչ ուշ, քան կազմակերպության լուծարման օրը:

3. Եթե լուծարվող կազմակերպությունն ունի գերավճարներ, ապա այդ գումարները ներառվում են լուծարային զանգվածի մեջ և ուղղվում են լուծարվող կազմակերպության պարտավորությունների կատարմանը:

(47-րդ հոդվածը փոփ. 21.12.17 ՀՕ-266-Ն)

Հոդված 48. Հարկային պարտավորության կատարումը անհատ ձեռնարկատիրոջը պետական հաշվառումից հանելու դեպքում

1. Անհատ ձեռնարկատերն իրավունք ունի մինչև պետական հաշվառումից դուրս գալու դիմում ներկայացնելը հարկային մարմին ներկայացնելու դիմում՝ համալիր հարկային ստուգում անցնելու համար:

2. Եթե անհատ ձեռնարկատերը մինչև պետական հաշվառումից դուրս գալը չի դիմել հարկային մարմին Օրենսգրքով սահմանված կարգով համալիր հարկային ստուգում անցնելու համար, ապա հարկային մարմինն իրավունք ունի

ֆիզիկական անձի մոտ Օրենսգրքով սահմանված կարգով իրականացնելու համալիր հարկային ստուգում անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառումից դուրս գալու օրվան հաջորդող երեք տարիների ընթացքում:

(48-րդ հոդվածը փոփ. 21.12.17 ՀՕ-266-Ն)

Հոդված 49. Հարկային պարտավորության կատարումը կազմակերպության վերակազմակերպման դեպքում

1. Վերակազմակերպված կազմակերպության հարկային պարտավորությունները կատարվում են կազմակերպության իրավահաջորդի (իրավահաջորդների) կողմից սույն հոդվածով սահմանված կարգով:

2. Կազմակերպությունների միաձուլման դեպքում հարկային պարտավորությունների կատարման առումով իրավահաջորդ է համարվում այդ կազմակերպությունների միաձուլումից առաջացած կազմակերպությունը:

3. Կազմակերպությունների միացման դեպքում հարկային պարտավորությունների կատարման առումով իրավահաջորդ է համարվում այն կազմակերպությունը, որին միացել է կազմակերպությունը:

4. Կազմակերպության բաժանման դեպքում հարկային պարտավորությունների կատարման առումով իրավահաջորդ են համարվում այդ բաժանումից առաջացած կազմակերպությունները՝ բաժանիչ հաշվեկշռին համապատասխան:

5. Կազմակերպության կազմից մեկ կամ մի քանի կազմակերպության առանձնացման դեպքում վերակազմակերպված իրավաբանական անձի հարկային պարտավորությունները առանձնացված կազմակերպություններից յուրաքանչյուրին են անցնում բաժանիչ հաշվեկշռին համապատասխան:

6. Կազմակերպության վերակազմավորման դեպքում հարկային պարտավորությունների կատարման առումով իրավահաջորդ է համարվում այդ կազմակերպության վերակազմավորման արդյունքում առաջացած կազմակերպությունը:

Հոդված 50. Հարկային պարտավորությունների կատարումը համատեղ գործունեության դեպքում

1. Համատեղ գործունեության մասով հարկային պարտավորությունների կատարման համար համատեղ գործունեության մասնակիցները կրում են համապարտ պատասխանատվություն:

2. Համատեղ գործունեության հաշվետու մասնակցի կամ համատեղ գործունեության մասնակիցներից որևէ մեկի կողմից համատեղ գործունեության մասով հարկային պարտավորությունների ամբողջական կատարման դեպքում համատեղ գործունեության մնացած բոլոր մասնակիցների կողմից այդ գործունեության մասով հարկային պարտավորությունները համարվում են կատարված:

Հոդված 51. Հարկային պարտավորությունների կատարումը և հարկերի վերադարձը ֆիզիկական անձի մահվան կամ ֆիզիկական անձին դատարանի վճռով մահացած ճանաչելու դեպքում

1. Ֆիզիկական անձի մահվան կամ ֆիզիկական անձին դատարանի վճռով մահացած ճանաչելու դեպքում մահվան օրվա դրությամբ նրա չկատարված հարկային պարտավորությունները (բացառությամբ անշարժ գույքի հարկի և (կամ) փոխադրամիջոցների գույքահարկի գծով հարկային պարտավորությունների) կատարվում են նրա ժառանգի կողմից (մեկից ավելի ժառանգների դեպքում չկատարված հարկային պարտավորությունները կատարվում են ժառանգների կողմից՝ ժառանգած՝ ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող գույքի շուկայական արժեքին համամասնորեն), բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի: Ֆիզիկական անձի մահվան կամ ֆիզիկական անձին դատարանի վճռով մահացած ճանաչելու դեպքում մահվան օրվա դրությամբ անշարժ գույքի հարկի և (կամ) փոխադրամիջոցների գույքահարկի գծով նրա չկատարված հարկային պարտավորությունները կատարվում են Օրենսգրքի՝ համապատասխանաբար 11-րդ և 12-րդ բաժիններով սահմանված կարգով:

2. Եթե մահացած կամ դատարանի վճռով մահացած ճանաչված ֆիզիկական անձի ժառանգը հրաժարվում է ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող գույքի ժառանգությունից, ապա իր մասով ազատվում է հարկային պարտավորության կատարումից:

3. Մահացած կամ դատարանի վճռով մահացած ճանաչված ֆիզիկական անձի ժառանգը իրեն փոխանցվող հարկային պարտավորության մեծությունը պարզելու նպատակով կարող է դիմել մահացած կամ դատարանի վճռով մահացած ճանաչված ֆիզիկական անձի հաշվառման վայրի հարկային մարմին կամ տեղական հարկերով հարկման օբյեկտները հաշվառող համապատասխան տեղական ինքնակառավարման մարմին, որոնք պարտավոր են դիմումն ստանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, տրամադրել տեղեկատվություն ժառանգին փոխանցվող հարկային պարտավորության մեծության մասին: Հարկային մարմնի կողմից ներկայացված տեղեկատվության մեջ նշված հարկային պարտավորության չափը չի կարող փոփոխվել, եթե տեղեկատվությունը տրամադրվել է Օրենսգրքով սահմանված կարգով իրականացված ստուգման արդյունքում:

4. *(մասն ուժը կորցրել է 21.12.17 ՀՕ-266-Ն)*

5. Նոտարները պարտավոր են յուրաքանչյուր հաշվետու եռամսյակի համար մինչև այդ եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ Կառավարության սահմանած կարգով հարկային մարմին ներկայացնել տեղեկատվություն հաշվետու եռամսյակի ընթացքում իրենց մատուցած նոտարական ծառայությունների շրջանակներում հայտնի դարձած՝ մահացած կամ դատարանի վճռով մահացած ճանաչված ֆիզիկական անձի ժառանգի (ժառանգների) կողմից ժառանգված՝ ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող գույքի և ժառանգի (ժառանգների) կողմից հարկային պարտավորություններն ստանձնելու մասին:

6. Մահացած կամ դատարանի վճռով մահացած ճանաչված ֆիզիկական անձի ժառանգը իրեն փոխանցվող հարկային պարտավորությունը պարտավոր է կատարել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով կազմվող վարչական ակտի հիման վրա՝ մինչև ժառանգությունն ընդունելու օրը ներառող ամսվան հաջորդող երրորդ ամսվա 20-ը ներառյալ:

7. Ֆիզիկական անձի մահվան կամ ֆիզիկական անձին դատարանի վճռով մահացած ճանաչելու դեպքում մահվան օրվա դրությամբ նրա անձնական հաշվի քարտում առկա՝ հարկի դեբետային գումարները, միասնական հաշվի գումարների մնացորդները, ինչպես նաև գերավճարները ենթակա են վերադարձման նրա ժառանգին (մեկից ավելի ժառանգների դեպքում՝ ժառանգներին՝ ժառանգած՝ ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող գույքի շուկայական արժեքին համամասնորեն):

8. Եթե մահացած կամ դատարանի վճռով մահացած ճանաչված ֆիզիկական անձի ժառանգը (ժառանգները), սույն հոդվածի 1-ին մասի համաձայն, ստանձնում են մահացած կամ դատարանի վճռով մահացած ճանաչված ֆիզիկական անձի չկատարված հարկային պարտավորությունները կատարելու պարտականություն, ապա սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված գումարները ենթակա են վերադարձման միայն այն դեպքում, երբ այդ հարկային պարտավորություններն ամբողջությամբ կատարված են:

9. Մահացած կամ դատարանի վճռով մահացած ճանաչված ֆիզիկական անձի ժառանգը սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված հարկի գումարների մեծությունը պարզելու նպատակով կարող է դիմել մահացած կամ դատարանի վճռով մահացած ճանաչված ֆիզիկական անձի հաշվառման վայրի հարկային մարմին կամ տեղական հարկերով հարկման օբյեկտները հաշվառող համապատասխան տեղական ինքնակառավարման մարմին, որոնք պարտավոր են դիմումն ստանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, տրամադրել տեղեկատվություն այդ գումարների մեծության մասին:

10. Սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված հարկի գումարները մահացած կամ դատարանի վճռով մահացած ճանաչված ֆիզիկական անձի ժառանգին տրամադրվում են մինչև ժառանգությունն ընդունելու օրը ներառող ամսվան հաջորդող երրորդ ամսվա 20-ը ներառյալ, եթե սույն հոդվածի 8-րդ մասով այլ բան սահմանված չէ:

11. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հարկային պարտավորությունները մահացած կամ դատարանի վճռով մահացած ճանաչված ֆիզիկական անձի ժառանգի կողմից կատարվում են և սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված հարկի գումարները մահացած կամ դատարանի վճռով մահացած ճանաչված ֆիզիկական անձի ժառանգին տրամադրվում են հարկային մարմնի սահմանած կարգով:

(51-րդ հոդվածը փոփ., լրաց. 21.12.17 ՀՕ-266-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն, 21.06.18 ՀՕ-338-Ն)

Գ Լ Ո Ւ Խ 9

ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ

Հոդված 52. Հարկային հաշվարկը և դրա կազմումը

1. Հարկային հաշվարկը հարկ վճարողի (Օրենսգրքով սահմանված դեպքերում՝ հարկային գործակալի, հավատարմագրային կառավարչի, համատեղ գործունեության հաշվետու մասնակցի, կոմիսիոների, գործարքի իրականացման ժամանակ իր անունից հանդես եկող գործակալի, անչափահաս ֆիզիկական անձանց դեպքում՝ նաև ծնողի կամ խնամակալի կամ հոգաբարձուի) կողմից հարկային մարմին ներկայացվող գրավոր տեղեկատվություն է հաշվետու ժամանակաշրջանում կամ Օրենսգրքով սահմանված հարկման օբյեկտ համարվող որևէ գործարքի կամ գործառնության համար հաշվարկված հարկի կամ վճարի վերաբերյալ:

2. Հարկային հաշվարկներում պարտադիր լրացման ենթակա են հետևյալ տվյալները.

1) հարկ վճարողի լրիվ անվանումը.

2) հարկ վճարողի գտնվելու վայրը.

3) հարկ վճարողի հաշվառման համարը, իսկ ավելացված արժեքի հարկ վճարողների դեպքում՝ նաև ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը.

4) հաշվետու ժամանակաշրջանը կամ Օրենսգրքով սահմանված հարկման օբյեկտ համարվող գործարքի կամ գործունեության կատարման օրը, որի համար ներկայացվում է հարկային հաշվարկը.

5) հարկ վճարողի (հարկ վճարողի պաշտոնատար անձի) կամ հարկ վճարողի լիազոր անձի ստորագրությունը:

3. Համատեղ գործունեության հաշվետու մասնակցի կողմից համատեղ գործունեության համար ներկայացվող հարկային հաշվարկներում (այդ թվում՝ ճշտված) արտացոլվում են ինչպես համատեղ գործունեությանը վերաբերող, այնպես էլ անմիջականորեն համատեղ գործունեության հաշվետու մասնակցին վերաբերող ցուցանիշները (արդյունքները): Անհրաժեշտության դեպքում համատեղ գործունեության մասով հարկային պարտավորությունները ճշտելու և դրանց գանձումն ապահովելու նպատակով համատեղ գործունեության հաշվետու մասնակցի հաշվառման հարկային մարմինը իրավունք ունի համատեղ գործունեության հաշվետու մասնակցից գրավոր պահանջելու ներկայացնել լրացուցիչ գրավոր տեղեկություններ՝ նրա կողմից ներկայացված հարկային հաշվարկներում արտացոլված ընդհանուր ցուցանիշներում համատեղ գործունեությանը վերաբերող ցուցանիշների (արդյունքների) վերաբերյալ: Համատեղ գործունեության հաշվետու մասնակիցը պարտավոր է սույն մասով սահմանված տեղեկությունները ներկայացնել հարկային մարմնից համապատասխան պահանջը ստանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4. Հարկային հաշվարկների ձևերը և դրանց լրացման կարգը սահմանում է հարկային մարմինը (այդ թվում՝ Օրենսգրքով սահմանված դեպքերում հարկային հաշվարկը այլ գերատեսչություններին նույնպես ներկայացնելու պահանջ սահմանված լինելու դեպքերում՝ այդ գերատեսչությունների հետ համատեղ): Անկախ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ հարկային հաշվարկում պարտադիր լրացման ենթակա տվյալներից, հարկային հաշվարկի ձևում նախատեսված լինելու դեպքերում պարտադիր լրացման ենթակա են նաև ֆիզիկական անձին վերաբերող անձնական տվյալները, այդ թվում՝ անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, հանրային ծառայությունների համարանիշը, բնակության կամ հաշվառման վայրի հասցեն, հեռախոսահամարը, ընտանիքի անդամների վերաբերյալ տեղեկատվությունը:

(52-րդ հոդվածը լրաց. 21.12.17 ՀՕ-266-Ն)

Հոդված 53. Հարկային հաշվարկի ներկայացումը

1. Հարկ վճարողը (Օրենսգրքով սահմանված դեպքերում՝ հարկային գործակալը, հավատարմագրային կառավարիչը, համատեղ գործունեության հաշվետու մասնակիցը, կոմիսիոները, գործարքի իրականացման ժամանակ իր անունից հանդես եկող գործակալը, անչափահաս ֆիզիկական անձանց դեպքում՝ նաև ծնողը կամ խնամակալը կամ հոգաբարձուն) հարկային հաշվարկները հարկային մարմին է ներկայացնում հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո՝ Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված ժամկետներում, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված դեպքերի:

2. Մինչև հաշվետու ժամանակաշրջանը ավարտվելը տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացված հարկային հաշվարկները համարվում են չներկայացված, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված դեպքերի:

3. Հարկային հաշվարկը կարող է ներկայացվել մինչև հաշվետու ժամանակաշրջանը ավարտվելը, եթե՝

1) կազմակերպությունը գտնվում է լուծարման գործընթացում (կազմակերպության առանձնացված ստորաբաժանումը կամ հիմնարկը գտնվում է պետական հաշվառումից հանման գործընթացում).

2) անհատ ձեռնարկատերը պետական հաշվառումից հանվում է.

3) նոտարը պաշտոնից ազատվում է:

4. ***(մասն ուժը կորցրել է 25.06.19 ՀՕ-68-Ն)***

5. Հարկային հաշվարկները հարկային մարմին են ներկայացվում էլեկտրոնային եղանակով, բացառությամբ՝

1) այն հարկային հաշվարկների, որոնցում պարունակվում է գաղտնիք համարվող և (կամ) սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն: Սույն կետում նշված հարկային հաշվարկները կարող են հարկային մարմին ներկայացվել նաև թղթային եղանակով.

2) Օրենսգրքով սահմանված կամ Կառավարության սահմանած դեպքերի, երբ հարկային հաշվարկները կարող են հարկային մարմին ներկայացվել նաև թղթային եղանակով:

6. Եթե հարկային հաշվարկի էլեկտրոնային տարբերակը մինչև համապատասխան հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրը տեղադրված չէ հարկային մարմնի կայքում, ապա հարկային հաշվարկն ուշ ներկայացնելու համար Օրենսգրքով սահմանված պատասխանատվության միջոցների կիրառության առումով, համապատասխան հարկային հաշվարկի ներկայացման համար Օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված վերջնաժամկետը հետաձգվում է համապատասխան հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվանից մինչև հարկային հաշվարկի էլեկտրոնային տարբերակը հարկային մարմնի կայքում տեղադրվելու օրը ներառված օրերի չափով:

7. Հարկային հաշվարկը էլեկտրոնային եղանակով հարկային մարմին ներկայացնելու օր է համարվում հարկային մարմնի՝ հարկային հաշվարկների ընդունման էլեկտրոնային համակարգի կողմից ինքնաշխատ եղանակով հարկ վճարողին ներկայացվող՝ հարկային հաշվարկի ստացումը և գրանցումը հավաստող համապատասխան էլեկտրոնային ծանուցագրում նշված օրը, իսկ հարկային հաշվարկը թղթային եղանակով հարկային մարմին ներկայացնելու օր է համարվում հարկային հաշվարկը փոստային բաժանմունքում ընդունվելու օրվա օրացուցային կնիքի արտատիպում նշված օրը:

8. Եթե հարկ վճարողը (Օրենսգրքով սահմանված դեպքերում՝ հարկային գործակալը, հավատարմագրային կառավարիչը, համատեղ գործունեության հաշվետու մասնակիցը, կոմիսիոները, գործարքի իրականացման ժամանակ իր

անունից հանդես եկող գործակալը, անչափահաս ֆիզիկական անձանց դեպքում՝ նաև ծնողը կամ խնամակալը կամ հոգաբարձուն) հարկային մարմին է ներկայացնում հարկային մարմնի հաստատած ձևով հայտարարություն՝

1) որևէ օրվանից սկսած՝ անորոշ ժամկետով գործունեությունը դադարեցնելու մասին, ապա հայտարարության մեջ նշված՝ գործունեությունը դադարեցնելու օրվանից (բայց ոչ շուտ, քան գործունեությունը դադարեցնելու մասին հայտարարության ներկայացման օրը) մինչև գործունեությունը վերսկսելու մասին հարկային մարմնի հաստատած ձևով ներկայացվող հայտարարության մեջ նշված՝ գործունեությունը վերսկսելու օրը (բայց ոչ շուտ, քան գործունեությունը վերսկսելու մասին հայտարարության ներկայացման օրը) ընկած ժամանակահատվածում ներառվող՝ որևէ հարկատեսակի կամ վճարի համար Օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված ամբողջական հաշվետու ժամանակաշրջանների համար հարկ վճարողը հարկային մարմին հարկային հաշվարկներ (այդ թվում՝ «զրոյական») չի ներկայացնում, բացառությամբ սույն հոդվածի 9-րդ մասով սահմանված հարկային հաշվարկների.

2) որևէ օրվանից սկսած՝ որոշակի ժամկետով գործունեությունը դադարեցնելու մասին, ապա հայտարարության մեջ նշված՝ գործունեությունը դադարեցնելու օրվանից (բայց ոչ շուտ, քան գործունեությունը դադարեցնելու մասին հայտարարության ներկայացման օրը) մինչև հայտարարության մեջ նշված՝ գործունեությունը վերսկսելու օրը ընկած ժամանակահատվածում ներառվող՝ որևէ հարկատեսակի կամ վճարի համար Օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված ամբողջական հաշվետու ժամանակաշրջանների համար հարկ վճարողը հարկային մարմին հարկային հաշվարկներ (այդ թվում՝ «զրոյական») չի ներկայացնում, բացառությամբ սույն հոդվածի 9-րդ մասով սահմանված հարկային հաշվարկների:

Սույն մասի կիրառության իմաստով՝

1) որոշակի ժամկետով գործունեությունը դադարեցնելու դեպքում հարկ վճարողի գործունեությունը համարվում է վերսկսված հարկ վճարողի հայտարարության մեջ նշված՝ գործունեությունը վերսկսելու օրվանից, իսկ անորոշ ժամկետով գործունեությունը դադարեցնելու դեպքում հարկ վճարողի գործունեությունը համարվում է վերսկսված հարկ վճարողի՝ գործունեությունը վերսկսելու մասին հայտարարության մեջ նշված՝ գործունեությունը վերսկսելու օրվանից.

2) գործունեության դադարեցման ժամանակահատվածում հարկ վճարողի կողմից գործունեությունը վերսկսելու և այդ մասին համապատասխան հայտարարություն չներկայացնելու դեպքում հարկ վճարողի գործունեությունը համարվում է վերսկսված՝ գործունեությունը փաստացի վերսկսելու օրվանից:

9. Սույն հոդվածի 8-րդ մասի կիրառության իմաստով՝ գործունեության վերսկսում չի համարվում՝

1) հարկ վճարողի կողմից իր աշխատողների համար օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների, ինչպես նաև ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների հաշվարկումն ու վճարումը (այդ թվում՝ աշխատողի՝ հարկադիր պարապուրդում կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածի համար), որի դեպքում հարկ վճարողը, որպես հարկային գործակալ, հարկային մարմին է ներկայացնում եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ամփոփ հաշվարկ.

2) վարչական ծախսերի կատարումը, այդ թվում՝ վարձակալական վճարների կամ տոկոսների վճարումը կամ բաժանորդագրային հիմունքներով ստացվող ծառայությունների (մասնավորապես, հանրային ծառայությունների կամ կոմունալ ծառայությունների կամ համակարգչային ծրագրերից, տվյալների բազաներից, արտոնագրերից, լիցենզիաներից, ծանուցումներից, թույլտվություններից, առևտրային նշաններից, ապրանքային նշաններից, հեղինակային իրավունքներից և համանման այլ իրավունքներից օգտվելու ծառայությունների) համար վճարումը, որի դեպքում հարկ վճարողը հարկային մարմին է ներկայացնում սույն կետում նշված ծախսերի հայտարարագրման համար անհրաժեշտ՝ Օրենսգրքով սահմանված հարկային հաշվարկները.

3) ավանդադրված կամ հաշվարկային հաշվում առկա դրամական միջոցների նկատմամբ տոկոսների հաշվեգրումից եկամուտների ստացումը, որի դեպքում հարկ վճարողը հարկային մարմին է ներկայացնում սույն կետում նշված եկամուտների հայտարարագրման համար անհրաժեշտ՝ Օրենսգրքով սահմանված հարկային հաշվարկները.

4) Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու վերաբերյալ հայտարարության կամ Օրենսգրքի 254-րդ հոդվածով սահմանված՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարության կամ Օրենսգրքի 267-րդ հոդվածով սահմանված՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարության ներկայացումը.

5) հարկերի, վճարների կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ վճարների վճարումը.

6) գործընկեր հարկ վճարողներին վճարումների կատարումը և (կամ) նրանցից վճարումների ընդունումը, գործընկեր հարկ վճարողների կողմից սույն մասի 2-րդ կետով սահմանված ծախսերի գծով դուրս գրվող, ինչպես նաև մինչև գործունեության դադարեցումն ընկած հաշվետու ժամանակաշրջաններում կատարված բոլոր ծախսերի գծով դուրս գրված հաշվարկային փաստաթղթերի վավերացումը (հաստատումը).

7) հարկային հաշվարկների կամ ճշտված հարկային հաշվարկների ներկայացումը.

8) հարկ վճարողի մոտ աուդիտի (այդ թվում՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի) անցկացումը.

9) շահութահարկի կանխավճարների կատարման այլընտրանքային եղանակի ընտրության վերաբերյալ հայտարարություն ներկայացնելը:

10. Հարկային հաշվարկներ չեն կարող ներկայացվել այն դեպքերում, եթե հարկային հաշվարկը վերաբերում է՝

1) այն հաշվետու ժամանակաշրջանին, որը տվյալ հարկատեսակի գծով արդեն ստուգվել է հարկային մարմնի (իսկ Օրենսգրքով սահմանված դեպքերում՝ հարկային հաշվարկները այլ լիազոր մարմիններին ներկայացնելու դեպքում՝ այդ

մարմնի) կողմից.

2) այն հաշվետու ժամանակաշրջանին, որի ստուգումը՝ տվյալ հարկատեսակի մասով, սկսվել է, սակայն հաշվարկի ներկայացման օրը ստուգման ընթացքը կասեցված է.

3) այն հաշվետու ժամանակաշրջանին, որի վերջին օրվանից անցել է երեք տարի, բացառությամբ Օրենսգրքի 44-րդ հոդվածի 5-րդ մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքի:

11. Ավելացված արժեքի հարկի մասով հարկային հաշվարկներ չեն կարող ներկայացվել նաև այն դեպքերում (ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկ ներկայացվելու դեպքում՝ տվյալ հաշվարկը ԱԱՀ-ի մասով հաշվի չի առնվում), եթե հարկային հաշվարկը վերաբերում է՝

1) այն հաշվետու ժամանակաշրջանին, որը միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարների հիմնավորվածության ուսումնասիրության նպատակով արդեն ուսումնասիրվել է հարկային մարմնի կողմից.

2) այն հաշվետու ժամանակաշրջանին, որի ուսումնասիրությունը՝ միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարների հիմնավորվածության ուսումնասիրության նպատակով, սկսվել է, սակայն հաշվարկի ներկայացման օրը ուսումնասիրության ընթացքը կասեցված է:

(53-րդ հոդվածը փոփ., խմբ., լրաց. 21.12.17 ՀՕ-266-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն, փոփ., խմբ., լրաց. 21.06.18 ՀՕ-338-Ն, լրաց., փոփ. 25.06.19 ՀՕ-68-Ն)

Հոդված 54. Հարկային հաշվարկի ճշտումը

1. Հարկ վճարողի (Օրենսգրքով սահմանված դեպքերում՝ հարկային գործակալի, հավատարմագրային կառավարչի, համատեղ գործունեության հաշվետու մասնակցի, կոմիսիոների, գործարքի իրականացման ժամանակ իր անունից հանդես եկող գործակալի, անչափահաս ֆիզիկական անձանց դեպքում՝ նաև ծնողի կամ խնամակալի) կողմից հարկային մարմին ներկայացված հարկային հաշվարկում սխալների ինքնուրույն հայտնաբերման դեպքում դրանց ճշտման արդյունքներով, սույն հոդվածով սահմանված կարգով, կարող են ներկայացվել ճշտված հարկային հաշվարկներ:

2. Օրենսգրքի կիրառության իմաստով՝ հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո ներկայացված մեկից ավելի հարկային հաշվարկներից առաջինը համարվում է հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված հարկային հաշվարկ, իսկ մյուսները՝ ճշտված հարկային հաշվարկ: Արտահանման կամ ներմուծման տվյալ գործառնության մասով ներկայացված մեկից ավելի ներմուծման հարկային հայտարարագրերից կամ արտահանման հարկային հայտարարագրերից առաջինը համարվում է տվյալ գործառնության համար ներկայացված հայտարարագիր, իսկ մյուսները՝ ճշտված հայտարարագիր:

3. Կազմակերպության լուծարման (կազմակերպության առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների համար՝ պետական հաշվառումից հանման) կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառումից հանման կամ նոտարի պաշտոնից ազատման դեպքերում՝

1) մինչև հաշվետու ժամանակաշրջանները ավարտվելը հարկային մարմին ներկայացված հարկային հաշվարկները համարվում են հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացված հարկային հաշվարկներ, եթե դրանց ներկայացումից հետո՝ մինչև հաշվետու ժամանակաշրջանները ավարտվելը, կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը կամ նոտարը որևէ գործարք կամ գործառնություն չի իրականացնում.

2) սույն մասի 1-ին կետով սահմանված հարկային հաշվարկների ներկայացումից հետո՝ մինչև հաշվետու ժամանակաշրջանների ավարտը, կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի կողմից որևէ գործարք կամ գործառնություն իրականացնելու դեպքում հաշվետու ժամանակաշրջանների ավարտից հետո այդ հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացված նոր հարկային հաշվարկները համարվում են ճշտված հարկային հաշվարկներ:

4. Եթե ճշտված հարկային հաշվարկի ներկայացման արդյունքում առաջանում է հարկային պարտավորություն կամ ավելանում է նախկինում առաջացած հարկային պարտավորությունը, ապա հարկ վճարողն ազատվում է հարկի գումարը պակաս ցույց տալու համար Օրենսգրքով սահմանված տուգանքի կիրառումից:

5. Օրենսգրքի 53-րդ հոդվածի 10-11-րդ մասերով սահմանված՝ հարկային հաշվարկներ ներկայացնելու սահմանափակումները տարածվում են նաև ճշտված հարկային հաշվարկներ ներկայացնելու դեպքերի վրա, ինչպես նաև Օրենսգրքի 44-րդ հոդվածի 5-րդ մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքի վրա:

(54-րդ հոդվածը լրաց. 21.12.17 ՀՕ-266-Ն, փոփ. 21.06.18 ՀՕ-338-Ն, 25.06.19 ՀՕ-68-Ն)

Գ Լ Ո Ւ Խ 10

ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Հոդված 55. Հաշվարկային փաստաթուղթը և դրա կազմումը

1. Հաշվարկային փաստաթուղթը սույն հոդվածով սահմանված պահանջները բավարարող՝ հարկ վճարողի կողմից

դուրս գրվող փաստաթուղթ է, որով հիմնավորվում է՝

1) ապրանքի մատակարարումից, աշխատանքի կատարումից և (կամ) ծառայության մատուցումից եկամտի ստացման իրավունք ձեռք բերելը: Սույն կետի կիրառության իմաստով՝ Օրենսգրքով սահմանված դեպքերում եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված՝ անկախ հաշվարկային փաստաթղթի դուրս գրման հանգամանքից.

2) ապրանքի ձեռքբերման, աշխատանքի ընդունման և (կամ) ծառայության ստացման գծով ծախսի ճանաչումը.

3) ապրանքի մատակարարումը օտարերկրյա քաղաքացուն կամ քաղաքացիություն չունեցող անձին.

4) ապրանքի տեղափոխությունը:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված գործարքների և գործողությունների փաստաթղթավորման նպատակով կիրառվում են հետևյալ հաշվարկային փաստաթղթերը.

1) հարկային հաշիվ.

2) ճշգրտող հարկային հաշիվ.

3) հաշիվ վավերագիր.

4) ճշգրտող հաշիվ վավերագիր.

5) հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոն.

6) ԱԱՀ-ի վերադարձի հարկային հաշիվ.

7) ապրանքի տեղափոխության բեռնագիր (այսուհետ՝ բեռնագիր):

3. Սույն հոդվածի 2-րդ մասի՝

1) 1-4-րդ կետերով սահմանված հաշվարկային փաստաթղթերը կիրառվում են ապրանքի մատակարարումից, աշխատանքի կատարումից և (կամ) ծառայության մատուցումից եկամտի ստացման իրավունքի ձեռքբերումը, ապրանքի ձեռքբերման, աշխատանքի ընդունման և (կամ) ծառայության ստացման գծով ծախսի ճանաչումը, իսկ Օրենսգրքով սահմանված դեպքերում՝ նաև հարկի գումարի պակասեցումները, ինչպես նաև ձեռք բերված ապրանքի տեղափոխությունը փաստաթղթավորելու համար.

2) 5-րդ կետով սահմանված հաշվարկային փաստաթուղթը կիրառվում է ապրանքի մատակարարումից, աշխատանքի կատարումից և (կամ) ծառայության մատուցումից եկամտի ստացման իրավունքի ձեռքբերումը, իսկ Օրենսգրքի 381-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերությամբ սահմանված տեղեկատվությունը (տվյալները) պարունակելու դեպքում՝ նաև ապրանքի ձեռքբերման, աշխատանքի ընդունման և (կամ) ծառայության ստացման գծով ծախսի ճանաչումը, ինչպես նաև ձեռք բերված ապրանքի տեղափոխությունը փաստաթղթավորելու համար.

3) 6-րդ կետով սահմանված հաշվարկային փաստաթուղթը կիրառվում է հարկի գումարը հետ ստանալու իրավունքի ձեռքբերումը փաստաթղթավորելու համար.

4) 7-րդ կետով սահմանված հաշվարկային փաստաթուղթը կիրառվում է ապրանքի տեղափոխությունը փաստաթղթավորելու համար:

4. Հարկային հաշվում կամ ճշգրտող հարկային հաշվում պարտադիր ներառվում են՝

1) հաշվարկային փաստաթղթի սերիան ու համարը.

2) հաշվարկային փաստաթղթի դուրսգրման ամսաթիվը.

3) ապրանքի մատակարարման ամսաթիվը, աշխատանքի կատարումն ավարտելու (այդ թվում՝ ըստ պայմանագրով նախատեսված փուլերի) ամսաթիվը և (կամ) ծառայության մատուցումն ավարտելու (այդ թվում՝ ըստ պայմանագրով նախատեսված փուլերի) ամսաթիվը.

4) ավելացված արժեքի հարկի դրույքաչափն ու գումարը՝ առանձին սյունակով կամ տողով.

5) ակցիզային հարկի գումարը՝ առանձին սյունակով կամ տողով (ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների մատակարարման դեպքում).

6) բնապահպանական հարկի գումարը՝ առանձին սյունակով կամ տողով (միայն Օրենսգրքի 8-րդ բաժնով սահմանված՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքներ ներմուծող-իրացնողների և արտադրող-իրացնողների կողմից հաշվարկային փաստաթղթերի դուրս գրման դեպքում).

7) գործարքի առարկա հանդիսացող ապրանքի անվանացանկն ու քանակը և (կամ) աշխատանքի, ծառայության տեսակն ու ծավալը.

8) գործարքի առարկա հանդիսացող ապրանքի միավորի գինը, առևտրային զեղչը՝ առկայության դեպքում (այդ թվում՝ հրապարակային առևտրային զեղչը), ընդհանուր արժեքը և (կամ) աշխատանքի, ծառայության սակագինը, առևտրային զեղչը՝ առկայության դեպքում (այդ թվում՝ հրապարակային առևտրային զեղչը) ու ընդհանուր արժեքը.

9) ապրանք մատակարարող, աշխատանք կատարող և (կամ) ծառայություն մատուցող՝

ա. հարկ վճարողի հաշվառման համարը, իսկ ավելացված արժեքի հարկ վճարողների դեպքում՝ նաև ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը,

բ. կազմակերպության լրիվ անվանումը, գտնվելու և գործունեությունը փաստացի իրականացնելու վայրի հասցեները, իսկ ապրանքների մատակարարման դեպքում՝ առաքման վայրի հասցեն կամ առաքման կետի տվյալները, պաշտոնատար անձի անունը, ազգանունը և ստորագրությունը,

գ. ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրի հասցեն, անձնագրի (կամ անձը նույնականացնող այլ փաստաթղթի) սերիան և (կամ) համարը, իսկ անհատ ձեռնարկատեր լինելու դեպքում՝ նաև գործունեությունը փաստացի իրականացնելու վայրի հասցեն, «անհատ ձեռնարկատեր» կամ «ԱՁ» նշումը, առաքման վայրի հասցեն կամ առաքման կետի տվյալները, պաշտոնատար անձի անունը, ազգանունը և ստորագրությունը.

10) ապրանք ձեռք բերող, աշխատանք ընդունող և (կամ) ծառայություն ստացող՝

ա. հարկ վճարողի հաշվառման համարը, իսկ ավելացված արժեքի հարկ վճարողների դեպքում՝ նաև ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը,

բ. կազմակերպության լրիվ անվանումը, գտնվելու և գործունեությունը փաստացի իրականացնելու վայրի հասցեները, իսկ ապրանքների մատակարարման դեպքում՝ ապրանքների նշանակման վայրի հասցեն, պաշտոնատար անձի անունը, ազգանունը և ստորագրությունը,

գ. ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրի հասցեն, անձնագրի (կամ անձը նույնականացնող այլ փաստաթղթի) սերիան և (կամ) համարը, իսկ անհատ ձեռնարկատեր լինելու դեպքում՝ նաև գործունեությունը փաստացի իրականացնելու վայրի հասցեն, «անհատ ձեռնարկատեր» կամ «ԱՁ» նշումը, ապրանքների նշանակման վայրի հասցեն (բացառությամբ այն դեպքերի, երբ ապրանքը գնորդին է հանձնվում առաքման վայրում), պաշտոնատար անձի անունը, ազգանունը և ստորագրությունը:

5. Հաշիվ վավերագրում կամ ճշգրտող հաշիվ վավերագրում պարտադիր ներառվում են սույն հոդվածի 4-րդ մասում նշված՝ հարկային հաշվում կամ ճշգրտող հարկային հաշվում պարտադիր ներառման ենթակա տվյալները, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետով սահմանված տվյալների:

6. ԱԱՀ-ի վերադարձի հարկային հաշվում պարտադիր ներառվող տվյալների շրջանակը սահմանում է Կառավարությունը:

7. Բեռնագրում պարտադիր ներառվում են սույն հոդվածի 4-րդ մասի 1-ին և 2-րդ կետերում նշված՝ հարկային հաշվում կամ ճշգրտող հարկային հաշվում պարտադիր ներառման ենթակա տվյալները, իսկ սույն հոդվածի 4-րդ մասի 3-րդ, 7-րդ և 9-րդ կետերով սահմանված տվյալների փոխարեն ներառվում են համապատասխանաբար՝

1) ապրանքի տեղափոխության ամսաթիվը.

2) տեղափոխվող ապրանքի անվանացանկն ու քանակը.

3) ապրանք տեղափոխող՝

ա. հարկ վճարողի հաշվառման համարը, իսկ ավելացված արժեքի հարկ վճարողների դեպքում՝ նաև ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը,

բ. կազմակերպության լրիվ անվանումը, գտնվելու վայրի հասցեն, առաքման վայրի հասցեն կամ առաքման կետի տվյալները, տեղափոխվող ապրանքի նշանակման վայրի հասցեն, պաշտոնատար անձի անունը, ազգանունը և ստորագրությունը,

գ. անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, բնակության վայրի հասցեն, անձնագրի (կամ անձը նույնականացնող այլ փաստաթղթի) սերիան և (կամ) համարը, գործունեությունը փաստացի իրականացնելու վայրի հասցեն, «անհատ ձեռնարկատեր» կամ «ԱՁ» նշումը, տեղափոխվող ապրանքի նշանակման վայրի հասցեն, պաշտոնատար անձի անունը, ազգանունը և ստորագրությունը:

8. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված հաշվարկային փաստաթղթերում, բացի սույն հոդվածի 4-7-րդ մասերում նշված տվյալներից, այդ հաշվարկային փաստաթղթերը դուրս գրող և (կամ) ստացող հարկ վճարողների հայեցողությամբ կարող են ներառվել նաև այլ տվյալներ:

9. Օրենսգրքի 56-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված դեպքերում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կազմակերպության, Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆիզիկական անձի կամ մշտական հաստատության կողմից դուրս գրվող հարկային հաշվում, իսկ Օրենսգրքով սահմանված դեպքերում՝ նաև ճշգրտող հարկային հաշվում, որպես ապրանք մատակարարող, աշխատանք կատարող և (կամ) ծառայություն մատուցող հարկ վճարողի հաշվառման համար և ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համար նշվում են Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կազմակերպության, Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆիզիկական անձի կամ մշտական հաստատության հարկ վճարողի հաշվառման համարը և ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը:

10. Եթե ապրանքը ձեռք է բերվում, աշխատանքը ընդունվում է, և (կամ) ծառայությունը ստացվում է Հայաստանի Հանրապետությունում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպությունից կամ մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձից, ապա այդ գործարքների մասով դուրս գրվող՝ սույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերում նշված հաշվարկային փաստաթղթերում սույն հոդվածի 4-7-րդ մասերում նշված որոշ տվյալների բացակայության դեպքում հաշվարկային փաստաթղթերը համարվում են սույն հոդվածով սահմանված պահանջները բավարարող, եթե՝

1) առկա է գործարքն իրականացնող կողմերի միջև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր պայմանագիր, որտեղ նշված են հաշվարկային փաստաթղթում բացակայող բոլոր տվյալները և հաշվարկային փաստաթղթում հղում է կատարված այդ պայմանագրին, կամ

2) գործարքն իրականացվում է գործարքն իրականացնող կողմի տված գրավոր լիազորագրի հիման վրա, որտեղ նշված են հաշվարկային փաստաթղթում բացակայող բոլոր տվյալները:

11. Էլեկտրոնային առևտրի շրջանակներում կատարվող՝ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված գործարքները կարող են փաստաթղթավորվել վճարահաշվարկային ծառայություններ մատուցող կազմակերպությունների կողմից տրամադրվող փաստաթղթերով կամ այդ կազմակերպությունների կողմից կիրառվող՝ վճարային գործիքներ սպասարկող սարքավորումների միջոցով տպագրվող փաստաթղթերով:

12. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով չսահմանված գործարքների ու գործառնությունների (այդ թվում՝ աշխատողներին աշխատավարձ հաշվարկելու, պետական և տեղական հարկեր, տուրքեր, վճարներ կամ Օրենսգրքով

չսահմանված այլ վճարներ վճարելու), ինչպես նաև վճարահաշվարկային համակարգի կամ վարկային կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների գծով ծախսերը կարող են փաստաթղթավորվել հաշվարկային փաստաթուղթ չհամարվող այլ փաստաթղթերով:

13. Անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց հետ կնքված քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում ընդունվող աշխատանքների և (կամ) ստացվող ծառայությունների, գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղվող՝ անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանցից ձեռք բերվող գյուղատնտեսական արտադրանքի, անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանցից ձեռք բերվող կամ վարձակալությամբ օգտագործվող գույքի, Հայաստանի Հանրապետությունում հաշվառված մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպությունից կամ Հայաստանի Հանրապետությունում հաշվառված մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձից ձեռք բերվող ապրանքների, ընդունվող աշխատանքների և (կամ) ստացվող ծառայությունների, ինչպես նաև կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ ներդրվող գույքի գծով առաջացող ծախսերը կարող են փաստաթղթավորվել հաշվարկային փաստաթուղթ չհամարվող՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմված այլ փաստաթղթերով, եթե դրանցում առկա են սույն հոդվածի 4-րդ մասի 2-րդ, 3-րդ և 7-10-րդ կետերում (բացառությամբ անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց համար 9-րդ կետի «ա» ենթակետի և 10-րդ կետի «ա» ենթակետի) նշված՝ հարկային հաշվում կամ ճշգրտող հարկային հաշվում պարտադիր ներառման ենթակա տվյալները:

(55-րդ հոդվածը լրաց., փոփ. 21.12.17 ՀՕ-266-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն, լրաց. 21.06.18 ՀՕ-338-Ն, փոփ., խմբ., լրաց. 25.06.19 ՀՕ-68-Ն)

(55-րդ հոդվածի 13-րդ մասը 25.06.19 ՀՕ-68-Ն օրենքի 71-րդ հոդվածի համաձայն ուժի մեջ է մտնում համապատասխան ծախսերի փաստաթղթավորման կարգը սահմանող՝ Կառավարության որոշումն ուժի մեջ մտնելու պահից: Կարգը սահմանող՝ Կառավարության որոշումը կընդունվի 25.06.19 ՀՕ-68-Ն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:)

Հոդված 56. Հաշվարկային փաստաթղթի դուրսգրումը, անվավեր ճանաչումը, չեղարկումը

1. Կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը և նոտարը ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման գործարքների մասով պարտավոր են դուրս գրել Օրենսգրքով սահմանված համապատասխան հաշվարկային փաստաթղթեր:

2. Մանրածախ առևտրի, բնակչության համար աշխատանքների կատարման և (կամ) բնակչությանը ծառայությունների մատուցման գործարքների մասով հաշվարկային փաստաթղթերի դուրսգրման հատուկ ծրագրեր (բիլինգային համակարգեր) կիրառող կամ Օրենսգրքի 74-րդ գլխով սահմանված կարգով հսկիչ դրամարկղային մեքենա շահագործող ապրանք մատակարարողը, աշխատանք կատարողը և (կամ) ծառայություն մատուցողը կարող է հարկային հաշիվ կամ հաշիվ վավերագիր դուրս չգրել, եթե ապրանքի գնորդը, աշխատանքն ընդունողը և (կամ) ծառայությունն ստացողը չի պահանջում դուրս գրել հարկային հաշիվ կամ հաշիվ վավերագիր:

3. Հաշվարկային փաստաթղթերը դուրս են գրվում էլեկտրոնային եղանակով, բացառությամբ՝

1) հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնի, ինչպես նաև այն հաշվարկային փաստաթղթերի, որոնցում պարունակվում է գաղտնիք համարվող և (կամ) սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն.

2) Կառավարության սահմանած դեպքերի, երբ հաշվարկային փաստաթղթերը կարող են դուրս գրվել Կառավարության սահմանած կարգով:

4. Հաշվարկային փաստաթղթերը դուրս են գրվում ապրանքը մատակարարելու, աշխատանքի կատարումն ավարտելու (այդ թվում՝ ըստ պայմանագրով նախատեսված փուլերի) և (կամ) ծառայության մատուցումն ավարտելու (այդ թվում՝ ըստ պայմանագրով նախատեսված փուլերի) պահին, բացառությամբ սույն հոդվածի 8-րդ մասով սահմանված դեպքերի, իսկ բեռնագիրը դուրս է գրվում մինչև ապրանքի տեղափոխությունը:

5. Օրենսգրքի 5-րդ գլխով սահմանված կարգով իրականացվող համատեղ գործունեության շրջանակներում՝

1) իրականացված գործարքների մասով հարկերի հաշվարկման համար հիմք հանդիսացող հաշվարկային փաստաթղթերը դուրս են գրվում համատեղ գործունեության հաշվետու մասնակցի կողմից կամ ստացվում են համատեղ գործունեության հաշվետու մասնակցի անունով.

2) համատեղ գործունեության մասնակիցների կողմից համատեղ գործունեության մեջ կատարված ներդրումներին վերաբերող՝ ակտիվների և ձեռքբերման, աշխատանքների ընդունման և ծառայությունների ստացման հաշվարկային փաստաթղթերի մեկ օրինակը՝ համապատասխան ակտիվների քանակներն ու ծառայությունների ծավալներն արտացոլող հանձնման-ընդունման ակտերի մեկ օրինակի հետ միասին, փոխանցվում է համատեղ գործունեության հաշվետու մասնակցին: Սույն կետում նշված փաստաթղթերի մեկական օրինակները դրանք փոխանցող մասնակիցները պարտավոր են Օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետում պահպանել նաև իրենց մոտ:

6. Հանձնարարության կամ պրինցիպալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրերով ապրանքներ մատակարարող կամ աշխատանքներ կատարող կամ ծառայություններ մատուցող՝ հանձնակատար կամ գործակալ համարվող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը՝ համապատասխանաբար հանձնարարողի կամ պրինցիպալի անունից կարող են դուրս գրել հարկային հաշիվներ,

ճշգրտող հարկային հաշիվներ, ԱԱՀ-ի վերադարձի հարկային հաշիվներ, ինչպես նաև հաշիվ վավերագրեր կամ ճշգրտող հաշիվ վավերագրեր, եթե հանձնակատարին կամ գործակալին տրվել է այդպիսի հաշվարկային փաստաթղթեր դուրս գրելու լիազորագիր: Սույն մասով սահմանված դեպքերում հանձնակատարի կամ գործակալի կողմից դուրս գրվող հաշվարկային փաստաթղթերում, բացի նրանց տվյալներից, լրացվում է նաև հանձնարարողին կամ պրինցիպալին վերաբերող՝ Օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասում նշված տեղեկատվությունը:

7. Այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետությունում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետությունում իրականացվող՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման գործարքի գծով ավելացված արժեքի հարկի հաշվարկման և վճարման պարտավորությունը, Օրենսգրքի 4-րդ բաժնի համաձայն, կրում են գործարքի կողմ համարվող՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը, նոտարը կամ մշտական հաստատությունը, ապա այդ գործարքի մասով հարկային հաշիվը, իսկ Օրենսգրքով սահմանված դեպքերում նաև՝ ճշգրտող հարկային հաշիվը դուրս է գրվում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կազմակերպության, անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի կամ մշտական հաստատության կողմից:

8. Գործունեության կազմակերպման առանձնահատկություններով պայմանավորված՝

1) հաշվարկային փաստաթղթերը (բացառությամբ հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնների) կարող են դուրս գրվել նախօրոք՝ պայմանով, որ այդ հաշվարկային փաստաթղթում նշված ապրանքները պետք է մատակարարվեն հաշվարկային փաստաթղթում նշված՝ ապրանքների մատակարարման օրը, կամ աշխատանքները պետք է կատարվեն, կամ կատարումը ավարտվի հաշվարկային փաստաթղթում նշված՝ աշխատանքների կատարման կամ կատարումն ավարտելու օրը, կամ ծառայությունները պետք է մատուցվեն, կամ մատուցումն ավարտվի հաշվարկային փաստաթղթում նշված՝ ծառայությունների մատուցման կամ մատուցումը ավարտելու օրը.

2) հանրային ծառայությունների և կոմունալ ծառայությունների մատուցման գործարքների մասով հաշվարկային փաստաթղթերը կարող են դուրս գրվել հաշվարկային ժամանակահատվածի համար ծառայությունների մատուցումն ավարտելուց հետո.

3) սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված դեպքերում հարկային հաշվի դուրսգրումը սույն հոդվածով սահմանված ժամկետում կատարելու անհնարինության դեպքում հարկային հաշիվը դուրս է գրվում մատակարարի կողմից ապրանքի, աշխատանքի կամ ծառայության արժեքի վերաբերյալ ներկայացված հաշվարկային կամ վճարային փաստաթուղթը փաստացի ստանալու օրը:

9. Սույն հոդվածի 5-7-րդ մասերով սահմանված կարգով դուրս գրված հաշվարկային փաստաթղթերը, Օրենսգրքի կիրառության իմաստով, հավասարեցվում են ապրանք մատակարարող, աշխատանք կատարող և (կամ) ծառայություն մատուցող կազմակերպության կամ ֆիզիկական անձի կողմից դուրս գրված հաշվարկային փաստաթղթերին:

10. Ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման գործարքին վերաբերող հաշվարկային փաստաթուղթն ապրանք մատակարարող, աշխատանք կատարող և (կամ) ծառայություն մատուցող կազմակերպության, անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի նախաձեռնությամբ կարող է չեղարկվել հետևյալ դեպքերում.

1) հաշվարկային փաստաթուղթը դուրս է գրվել այն հարկ վճարողի անունով, որին ապրանք չի մատակարարվել, որի համար աշխատանք չի կատարվել, և (կամ) որին ծառայություն չի մատուցվել.

2) հարկային հաշիվը դուրս է գրվել Օրենսգրքի 67-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներից որևէ մեկի խախտմամբ.

3) Օրենսգրքի 345-րդ հոդվածի 11-րդ մասի 2-րդ կետով սահմանված դեպքերում.

4) ապրանքների մատակարարմանը, աշխատանքների կատարմանը կամ ծառայությունների մատուցմանը վերաբերող հաշվարկային փաստաթուղթը լրացվել է սխալներով, որոնք կարող են այն դուրս գրողի կամ ստացողի համար իրավական կամ ֆինանսական հետևանքներ առաջացնել (օրինակ՝ տուգանք, ծախսագրման կամ հաշվանցման արգելք).

5) հաշվարկային փաստաթղթով մատակարարվող ապրանքի, կատարվող աշխատանքի կամ մատուցվող ծառայության ընդհանուր արժեքի հաշվարկմանը մասնակցող որևէ տվյալ (քանակ (ծավալ), գին, ակցիզային հարկ, ավելացված արժեքի հարկի դրույքաչափ կամ ավելացված արժեքի հարկի գումար) լրացվել է սխալ:

Չեղարկված հաշվարկային փաստաթուղթը դրա կողմերի համար Օրենսգրքով սահմանված իրավական հետևանքներ, այդ թվում՝ իրավունքներ և պարտականություններ, չի առաջացնում:

11. Անվավեր ճանաչված գործարքի մասով նախկինում դուրս գրված հաշվարկային փաստաթուղթը ենթակա է անվավեր ճանաչման:

11.1. Այն գործարքի մասով, որի կատարման օրը ներառող հարկային տարվանից անցել է երեք հարկային տարի, հաշվարկային փաստաթուղթ (այդ թվում՝ ճշգրտող) չի կարող դուրս գրվել:

12. Հաշվարկային փաստաթղթերի դուրսգրման, անվավեր ճանաչման և չեղարկման կարգերը սահմանում է Կառավարությունը:

13. Ճշգրտման ենթակա գործարքի մասով դուրս է գրվում ճշգրտող հարկային հաշիվ կամ ճշգրտող հաշիվ վավերագիր:

(56-րդ հոդվածը փոփ., լրաց., խմբ. 21.12.17 ՀՕ-266-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն, լրաց., փոփ. 21.06.18 ՀՕ-338-Ն)

Հոդված 57. Ապրանքների մատակարարման կամ տեղափոխության գործարքների փաստաթղթավորման պարտադիր պահանջները

1. Հայաստանի Հանրապետության տարածքում մատակարարվող կամ տեղափոխվող՝ շարժական, նյութական գույք հանդիսացող ապրանքների (բացառությամբ հանրային ծառայություններ մատուցող հարկ վճարողների կողմից հանրային ծառայությունների ենթակառուցվածքները շահագործելու և (կամ) սպասարկելու նպատակով տեղափոխվող ապրանքների, Կառավարության սահմանած ցանկում ներառված ոլորտներում գործունեություն իրականացնող հարկ վճարողների կողմից տեղափոխվող հիմնական միջոցների, ինչպես նաև խողովակաշարերով և էլեկտրահաղորդման գծերով ապրանքների և արտարժույթի) մատակարարումը կամ տեղափոխությունը պարտադիր կարգով իրականացվում է ուղեկցող փաստաթղթերով:

2. Հարկ վճարողի կողմից տեղափոխվող ապրանքն ուղեկցվում է ապրանքի տեղափոխությունը հավաստող՝ սահմանված կարգով դուրս գրված բեռնագրով, Օրենսգրքով սահմանված դեպքերում՝ ճշգրտող հարկային հաշվով կամ ճշգրտող հաշիվ վավերագրով, հարկ վճարողի կողմից Օրենսգրքով սահմանված դեպքերում կանխիկ դրամական հաշվարկներով ձեռք բերված ապրանքների տեղափոխության դեպքում՝ հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնով, իսկ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված և տեղափոխվող ապրանքի տեղափոխությունը՝

ա. ԵՏՄ անդամ չհամարվող պետություններից ներմուծման դեպքում՝ ապրանքի ներմուծման մաքսային հայտարարագրով.

բ. ԵՏՄ անդամ պետություններից ցամաքային տրանսպորտով ներմուծման դեպքում՝ տարանցման հայտարարագրով, ինչպես նաև ցանցային կապի միջոցներով ապրանքների հետագծելիությունն ապահովող և հարկային մարմին տեղեկատվություն հաղորդող էլեկտրոնային սարքերով (այսուհետ՝ ապրանքների հետագծելիությունն ապահովող էլեկտրոնային սարք), իսկ օդային տրանսպորտով ներմուծման դեպքում՝ օդային ուղու հաշվարկային փաստաթղթով:

3. Սույն հոդվածի կիրառության իմաստով՝ առանց ուղեկցող փաստաթղթի մատակարարվող կամ տեղափոխվող ապրանք են համարվում՝

1) այն ապրանքները կամ դրանց մի մասը (ուղեկցող փաստաթղթերի համեմատությամբ քանակական ավելցուկը), որոնք փաստացի մատակարարվում կամ տեղափոխվում են առանց Օրենսգրքով սահմանված համապատասխան ուղեկցող փաստաթղթի.

2) այն ապրանքները, որոնք փաստացի մատակարարվում կամ տեղափոխվում են Օրենսգրքի պահանջները չբավարարող՝ մատակարարման կամ տեղափոխման ուղեկցող փաստաթղթով.

3) փաստացի մատակարարվող (այդ թվում՝ ձեռք բերողի կողմից տեղափոխվող) այն ապրանքները, որոնք ուղեկցվում են ապրանքների տեղափոխության համար սահմանված ուղեկցող փաստաթղթով:

4) ԵՏՄ անդամ պետություններից ցամաքային տրանսպորտով Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված այն ապրանքները, որոնք Օրենսգրքի 358.1-ին հոդվածով սահմանված դեպքում փաստացի մատակարարվում կամ տեղափոխվում են առանց ապրանքների հետագծելիությունն ապահովող էլեկտրոնային սարքի:

4. Սույն հոդվածի կիրառության իմաստով՝ մատակարարվող կամ տեղափոխվող ապրանքները կամ դրանց մի մասը (ուղեկցող փաստաթղթերի համեմատությամբ քանակական ավելցուկը) համարվում են առանց ուղեկցող փաստաթղթի նաև այն դեպքում, երբ դրանք փաստացի մատակարարվում կամ տեղափոխվում են արդեն իսկ մատակարարված կամ տեղափոխված ապրանքների համար սահմանված կարգով դուրս գրված ուղեկցող փաստաթղթերով:

5. Սույն հոդվածի կիրառության իմաստով՝ ուղեկցող հաշվարկային փաստաթղթերի համար Օրենսգրքի պահանջները համարվում են չբավարարված, եթե այդ հաշվարկային փաստաթղթերում բացակայում են հետևյալ վավերապայմանները.

1) ուղեկցող փաստաթղթի սերիան և համարը.

2) ուղեկցող փաստաթղթի դուրսգրման ամսաթիվը.

3) ապրանքի մատակարարման կամ տեղափոխության ամսաթիվը.

4) ապրանքներ մատակարարող կամ տեղափոխող (բացառությամբ ձեռք բերողի կողմից տեղափոխման դեպքի) հարկ վճարողի՝ Օրենսգրքի 55-րդ հոդվածով պահանջվող տվյալները.

5) առաքման վայրի հասցեն կամ առաքման կետի տվյալները (փոխադրամիջոցի մակնիշը և պետական համարանիշը), որտեղից մատակարարվում կամ տեղափոխվում է ապրանքը.

6) մատակարարվող կամ տեղափոխվող ապրանքի նշանակման վայրի հասցեն, բացառությամբ այն դեպքերի, երբ ապրանքները գնորդին հանձնվում են առաքման վայրում.

7) գործարքի առարկա հանդիսացող՝ մատակարարվող (ձեռք բերողի կողմից տեղափոխվելու դեպքում՝ տեղափոխվող) ապրանքների անվանացանկն ու քանակը, ապրանքների ընդհանուր արժեքը՝ հանրագումարով.

8) տեղափոխվող ապրանքների անվանացանկն ու քանակը.

9) մատակարարվող կամ տեղափոխվող ապրանքի գնորդի (ստացողի)՝ Օրենսգրքի 55-րդ հոդվածով պահանջվող տվյալները, ֆիզիկական անձանց համար՝ անունը, ազգանունը:

6. Սույն հոդվածի 5-րդ մասի կիրառության իմաստով՝

1) չհասցեավորված (բնակավայրերից դուրս աշխարհագրական օբյեկտ հանդիսացող) առաքման վայրերի կամ նշանակման վայրերի դեպքում որպես նշանակման վայրի հասցե նշվում է այն վարչատարածքային միավորի անվանումը, որի տարածքում գտնվում են նշված վայրը և տվյալ վայրի ընդունված անվանումը, իսկ անվանման բացակայության դեպքում՝ այն վավերապայմանները, որոնք առավել բնութագրիչ են տվյալ վայրին.

2) ուղեկցող հաշվարկային փաստաթղթին ներկայացվող պահանջները համարվում են բավարարված նաև այն դեպքերում, երբ ուղեկցող փաստաթղթերի վավերապայմաններում առկա են ոչ էական թերություններ (վրիպակներ, ոչ իրավաբանական անճշտություններ և բացթողումներ), պայմանով, որ առկա վավերապայմաններն, ըստ էության, հիմնավորում են սույն հոդվածի 5-րդ մասի պահանջների կատարված լինելը:

7. Առանց ուղեկցող փաստաթղթի մատակարարվող կամ տեղափոխվող ապրանքի մասով սույն հոդվածի դրույթները չեն տարածվում հարկ վճարողի կողմից Օրենսգրքով սահմանված դեպքերում կանխիկ դրամական հաշվարկներով վաճառված ապրանքների վրա, երբ պարտադիր է հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառումը: Առանց ուղեկցող փաստաթղթի մատակարարվող կամ տեղափոխվող ապրանքի մասով սույն հոդվածի դրույթները տարածվում են ապրանքներ ձեռք բերող հարկ վճարողների կողմից տեղափոխվելու դեպքում տեղափոխվող ապրանքների վրա՝ անկախ ապրանքներ վաճառող հարկ վճարողի համար հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր լինելու հանգամանքից:

(57-րդ հոդվածը լրաց., փոփ. 21.12.17 ՀՕ-266-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն, 21.06.18 ՀՕ-338-Ն)

Մ Ա Ս 2

ՀԱՏՈՒԿ ՄԱՍ

Բ Ա Ժ Ի Ն 4

ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԸ

Գ Լ Ո Ւ Խ 11

ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԸ ԵՎ ՎՃԱՐՈՂՆԵՐԸ

Հոդված 58. Ավելացված արժեքի հարկը

1. Ավելացված արժեքի հարկը Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ հարկման օբյեկտ համարվող գործարքների և (կամ) գործառնությունների իրականացման համար Օրենսգրքով սահմանված կարգով, չափով և ժամկետներում պետական բյուջե վճարվող պետական հարկ է:

Հոդված 59. Ավելացված արժեքի հարկ վճարողները

1. Եթե սույն հոդվածի 2-րդ, 2.1-ին և 3-րդ մասերով այլ բան սահմանված չէ, ապա ԱԱՀ վճարողներ են համարվում սույն հոդվածի 4-րդ մասի 1-ին կետին համապատասխան հարկային մարմնում որպես ԱԱՀ վճարող հաշվառված կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները՝ հետևյալ դեպքերում և ժամկետներում.

1) տվյալ հարկային տարվա հունվարի 1-ից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը, եթե հարկ վճարողը տվյալ հարկային տարվա հունվարի 1-ի դրությամբ, Օրենսգրքի 13-րդ բաժնի համաձայն, չի կարող համարվել շրջանառության հարկ վճարող կամ Օրենսգրքի 13-րդ բաժնով սահմանված ժամկետում հարկային մարմին չի ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով շրջանառության հարկ վճարող համարվելու և հարկային մարմնի հաստատած ձևով միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն.

2) հարկային տարվա ընթացքում պետական գրանցում ստացած (օրենքով սահմանված դեպքերում՝ հաշվառված) կազմակերպությունը կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված կամ որպես նոտար նշանակված ֆիզիկական անձը՝ համապատասխանաբար, պետական գրանցման (օրենքով սահմանված դեպքերում՝ հաշվառման) կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման կամ որպես նոտար նշանակման օրվանից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը, եթե հարկ վճարողը համապատասխանաբար պետական գրանցման (օրենքով սահմանված դեպքերում՝ հաշվառման) կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման կամ որպես նոտար նշանակման օրվա դրությամբ, Օրենսգրքի 13-րդ բաժնի համաձայն, չի կարող համարվել շրջանառության հարկ վճարող կամ Օրենսգրքի 13-րդ բաժնով սահմանված ժամկետում հարկային մարմին չի ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով շրջանառության հարկ վճարող համարվելու և հարկային մարմնի հաստատած ձևով միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու

վերաբերյալ հայտարարություն.

3) հարկային տարվա ընթացքում որպես միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարած կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը՝ որպես միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարելու օրվանից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը, եթե հարկ վճարողը որպես միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարելու օրվա դրությամբ, Օրենսգրքի 13-րդ բաժնի համաձայն, չի կարող համարվել շրջանառության հարկ վճարող կամ Օրենսգրքի 13-րդ բաժնով սահմանված ժամկետում հարկային մարմին չի ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն: Սույն կետով սահմանված դեպքերում որպես միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարելու օրվանից մինչև այդ օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ հարկ վճարողը հարկային մարմին է ներկայացնում հարկային մարմնի հաստատած ձևով՝ ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու վերաբերյալ հայտարարություն (այսուհետ սույն բաժնում՝ հայտարարություն)՝ նշելով որպես միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարելու համապատասխան հիմքը և օրը.

4) հայտարարությունում նշված օրվանից (բայց հայտարարությունը ներկայացնելու օրվան նախորդող 20-րդ օրվանից ոչ շուտ) մինչև հայտարարությունում նշված հարկային տարվա ավարտը, եթե հարկ վճարողը հարկային մարմին է ներկայացրել հայտարարություն՝ նշում կատարելով ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու մասին: Եթե հարկ վճարողը, Օրենսգրքի 13-րդ բաժնի համաձայն, դադարում է համարվել շրջանառության հարկ վճարող մինչև հայտարարությունում նշված օրը, ապա շրջանառության հարկ վճարողը ԱԱՀ վճարող է համարվում սույն մասի 5-րդ կետով սահմանված կարգով (հայտարարությունը հաշվի չի առնվում): Եթե հարկ վճարողը, Օրենսգրքի 13-րդ բաժնի համաձայն, դադարել է համարվել միկրոձեռնարկատիրության սուբյեկտ մինչև հայտարարությունում նշված օրը, և եթե հարկ վճարողը, որպես միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարելու օրվա դրությամբ, Օրենսգրքի 13-րդ բաժնի համաձայն, չի կարող համարվել շրջանառության հարկ վճարող կամ Օրենսգրքի 13-րդ բաժնով սահմանված ժամկետում հարկային մարմին չի ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն, ապա միկրոձեռնարկատիրության սուբյեկտն ԱԱՀ վճարող է համարվում սույն մասի 3-րդ կետով սահմանված կարգով (հայտարարությունը հաշվի չի առնվում).

5) հարկային տարվա այն պահից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը, որ պահից հարկ վճարողը Օրենսգրքի 13-րդ բաժնի համաձայն, տվյալ հարկային տարում դադարում է համարվել շրջանառության հարկ վճարող: Ընդ որում, հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության 115 միլիոն դրամի շեմը (այսուհետ նաև՝ ԱԱՀ-ի շեմ) գերազանցելու հիմքով ԱԱՀ վճարող համարվելու դեպքում ԱԱՀ-ն հաշվարկվում և վճարվում է ԱԱՀ-ի շեմը գերազանցող մասով: Շրջանառության հարկ վճարող համարվելուց դադարելու հիմքերից որևէ մեկը տեղի ունենալու օրվանից մինչև այդ օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ հարկ վճարողը հարկային մարմին է ներկայացնում հայտարարություն՝ նշելով շրջանառության հարկ վճարող համարվելուց դադարելու համապատասխան հիմքը և օրը:

2. Սույն հոդվածի 4-րդ մասի 1-ին կետին համապատասխան հարկային մարմնում որպես ԱԱՀ վճարող հաշվառված ոչ առևտրային կազմակերպությունները և գյուղատնտեսական արտադրանք արտադրող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը ԱԱՀ վճարողներ են համարվում հետևյալ դեպքերում և ժամկետներում.

1) տվյալ հարկային տարվա հունվարի 1-ից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը, եթե կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ՝ Օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով հաշվարկվող՝ նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը գերազանցել է 115 միլիոն դրամը.

2) հարկային տարվա այն պահից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը, որ պահին կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ՝ Օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով հաշվարկվող՝ գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը գերազանցում է 115 միլիոն դրամը: Ընդ որում, հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության 115 միլիոն դրամի շեմը գերազանցելու հիմքով ԱԱՀ վճարող համարվելու դեպքում ԱԱՀ-ն հաշվարկվում և վճարվում է ԱԱՀ-ի շեմը գերազանցող մասով: Գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության 115 միլիոն դրամը գերազանցելու օրվանից մինչև այդ օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ սույն մասում նշված հարկ վճարողը հարկային մարմին է ներկայացնում հայտարարություն՝ նշելով ԱԱՀ-ի շեմը գերազանցելու օրը.

3) հայտարարությունում նշված օրվանից (բայց հայտարարությունը ներկայացնելու օրվան նախորդող 20-րդ օրվանից ոչ շուտ) մինչև հայտարարությունում նշված հարկային տարվա ավարտը, եթե կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը հարկային մարմին է ներկայացրել հայտարարություն՝ նշում կատարելով ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու մասին: Եթե սույն մասում նշված հարկ վճարողի՝ Օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով հաշվարկվող՝ գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության 115 միլիոն դրամը գերազանցում է մինչև հայտարարությունում նշված օրը, ապա սույն մասում նշված հարկ վճարողը ԱԱՀ վճարող է համարվում սույն մասի 2-րդ կետով սահմանված կարգով (հայտարարությունը հաշվի չի առնվում):

Եթե կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը գյուղատնտեսական արտադրանքի արտադրության հետ միաժամանակ իրականացնում է նաև այլ գործունեություն, ապա ԱԱՀ վճարող է համարվում սույն հոդվածի 1-ին մասով

սահմանված դեպքերում և ժամկետներով:

2.1 Սույն հոդվածի 4-րդ մասի 1-ին կետին համապատասխան՝ հարկային մարմնում որպես ԱԱՀ վճարող հաշվառված՝ հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերն ԱԱՀ վճարողներ են համարվում հետևյալ դեպքերում և ժամկետներում.

1) տվյալ հարկային տարվա հունվարի 1-ից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը, եթե Օրենսգրքի 13-րդ բաժնով սահմանված ժամկետում հարկային մարմին չի ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն.

2) հարկային տարվա ընթացքում պետական գրանցում ստացած (օրենքով սահմանված դեպքերում՝ հաշվառված) կազմակերպությունը կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված ֆիզիկական անձը՝ համապատասխանաբար, պետական գրանցման (օրենքով սահմանված դեպքերում՝ հաշվառման) կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման օրվանից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը, եթե հարկ վճարողն Օրենսգրքի 13-րդ բաժնով սահմանված ժամկետում հարկային մարմին չի ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն.

3) հայտարարությունում նշված օրվանից (բայց հայտարարությունը ներկայացնելու օրվան նախորդող 20-րդ օրվանից ոչ շուտ) մինչև հայտարարությունում նշված հարկային տարվա ավարտը, եթե հարկ վճարողը հարկային մարմին է ներկայացրել հայտարարություն՝ նշում կատարելով ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու մասին:

3. Սույն հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետին համապատասխան հարկային մարմնում որպես ԱԱՀ վճարող հաշվառված կազմակերպությունները ԱԱՀ վճարողներ են համարվում հայտարարությունում նշված օրվանից (բայց հայտարարությունը ներկայացնելու օրվան նախորդող 20-րդ օրվանից ոչ շուտ) մինչև հայտարարությունում նշված հարկային տարվա ավարտը:

4. Օրենսգրքի 14-րդ բաժնով սահմանված կարգով հարկային մարմնում որպես ԱԱՀ վճարողներ հաշվառվում են՝

1) կազմակերպությունները (բացառությամբ սույն մասի 2-րդ կետով սահմանված կազմակերպությունների), անհատ ձեռնարկատերերը և նոտարները.

2) կամավորության սկզբունքով հայտարարություն ներկայացնելու դեպքում՝

ա. Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս պետական մարմինների,

բ. Հայաստանի Հանրապետության համայնքները՝ ի դեմս համայնքային կառավարչական հիմնարկների,

գ. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը:

5. Հարկային մարմնում որպես ԱԱՀ վճարող չհաշվառված կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները չեն համարվում ԱԱՀ վճարողներ, սակայն Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ հարկման օբյեկտ համարվող գործարքներ և (կամ) գործառնություններ իրականացնելու դեպքում պարտավոր են Օրենսգրքով սահմանված կարգով, չափով և ժամկետներում հաշվարկել և պետական բյուջե վճարել այդ գործարքներից և (կամ) գործառնություններից առաջացող ԱԱՀ-ի գումարները, բացառությամբ սույն մասի երկրորդ պարբերությամբ սահմանված դեպքերի:

Ոչ առևտրային կազմակերպությունները և գյուղատնտեսական արտադրանք արտադրող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը մինչև Օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով հաշվարկվող՝ գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության 115 միլիոն դրամը գերազանցելը Օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված՝ հարկման օբյեկտ համարվող գործարքներ իրականացնելու դեպքում (բացառությամբ գյուղատնտեսական արտադրանք չհամարվող ապրանքների մատակարարման գործարքների), այդ գործարքներից Օրենսգրքով սահմանված կարգով, չափով և ժամկետներում ԱԱՀ հաշվարկելու և պետական բյուջե վճարելու պարտավորություն չեն կրում:

6. Անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձինք չեն համարվում ԱԱՀ վճարողներ, սակայն եթե նրանք Հայաստանի Հանրապետության տարածք են ներմուծում ապրանքներ (այդ թվում՝ ԵՏՄ անդամ պետություններից), որոնց ներմուծումը, «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, համարվում է ձեռնարկատիրական գործունեության նպատակով իրականացվող ներմուծում, կամ եթե մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք իրականացնում են ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող՝ ապրանքների ներմուծման գործառնություններ, ապա պարտավոր են Օրենսգրքով սահմանված կարգով, չափով և ժամկետներում հաշվարկել և պետական բյուջե վճարել այդ գործառնություններից առաջացող ԱԱՀ-ի գումարները:

(59-րդ հոդվածը խմբ., փոփ., լրաց. 21.12.17 ՀՕ-266-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն, 21.06.18 ՀՕ-338-Ն, 25.06.19 ՀՕ-68-Ն)

(59-րդ հոդվածը փոփոխվել է 25.06.19 ՀՕ-68-Ն և օրենքի 71-րդ հոդվածի համաձայն՝ մինչև 25.06.19 ՀՕ-68-Ն օրենքի պաշտոնական հրապարակման օրը ներառյալ ընթացիկ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության 58.35 միլիոն դրամի շեմը գերազանցած հարկ վճարողները 2019 թվականի ընթացքում շարունակում են համարվել ԱԱՀ վճարողներ:)

ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏԸ, ՀԱՐԿՄԱՆ ԲԱԶԱՆ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Հոդված 60. Ավելացված արժեքի հարկով հարկման օբյեկտը

1. ԱԱՀ-ով հարկման օբյեկտ են համարվում հետևյալ գործարքներն ու գործառնությունները.

1) ապրանքի մատակարարումը, եթե ապրանքի մատակարարման վայրը, Օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն, համարվում է Հայաստանի Հանրապետությունը.

2) աշխատանքի կատարումը և (կամ) ծառայության մատուցումը (բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի): Սույն կետի կիրառության իմաստով՝ ծառայության մատուցում է համարվում նաև՝

ա. ապրանքի՝ վարձակալության կամ օգտագործման տրամադրումը (բացառությամբ ապրանքի ֆինանսական վարձակալության (լիզինգի) այն դեպքերի, երբ վարձակալության պայմանագրով նախատեսվում է ապրանքի սեփականության իրավունքի փոխանցում վարձակալին),

բ. փոխառության տրամադրումը,

գ. ոչ նյութական ակտիվի օտարումը,

դ. ոչ նյութական ակտիվի օգտագործման տրամադրումը,

3) «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով Հայաստանի Հանրապետություն ապրանքի ներմուծումը.

4) ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքի ներմուծումը:

2. Ապրանքի մատակարարման գործարքը ԱԱՀ-ով հարկման օբյեկտ չի համարվում, եթե ապրանքի մատակարարման վայրը, Օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն, չի համարվում Հայաստանի Հանրապետությունը:

3. Բեռների, փոստի և (կամ) ուղևորների՝ ցանկացած տեսակի տրանսպորտային միջոցով փոխադրման տրանսպորտային ծառայության մատուցման գործարքը ԱԱՀ-ով հարկման օբյեկտ չի համարվում, եթե այն սկսվում և ավարտվում է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս:

(60-րդ հոդվածը լրաց. 21.12.17 ՀՕ-266-Ն, լրաց. 21.06.18 ՀՕ-338-Ն)

Հոդված 61. Ավելացված արժեքի հարկով հարկման բազան

1. Ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման գործարքների դեպքում, եթե Օրենսգրքի 62-րդ հոդվածով այլ բան սահմանված չէ, ապա ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում դրանց արժեքը՝ դրամական արտահայտությամբ՝ առանց ԱԱՀ-ի:

2. «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով Հայաստանի Հանրապետություն ապրանքի ներմուծման դեպքում, եթե Օրենսգրքի 62-րդ հոդվածով այլ բան սահմանված չէ, ապա ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում ԵՏՄ միասնական մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով որոշվող մաքսային արժեքի, մաքսատուրքի, իսկ Օրենսգրքի 5-րդ բաժնի համաձայն՝ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքի ներմուծման դեպքում՝ նաև Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված ակցիզային հարկի հանրագումարը:

3. ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքի ներմուծման դեպքում, եթե Օրենսգրքի 62-րդ հոդվածով այլ բան սահմանված չէ, ապա ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում ներմուծվող ապրանքի ձեռքբերման արժեքը, իսկ Օրենսգրքի 5-րդ բաժնի համաձայն՝ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքի ներմուծման դեպքում՝ ներմուծվող ապրանքի ձեռքբերման արժեքի և Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված ակցիզային հարկի հանրագումարը:

4. Հայաստանի Հանրապետության տարածքից «Արտահանում» մաքսային ընթացակարգով արտահանված, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքից ԵՏՄ անդամ պետություն արտահանված՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքի մատակարարման գործարքի դեպքում ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հաշվարկվող մաքսային արժեքը:

Հոդված 62. Ավելացված արժեքի հարկով հարկման բազայի որոշման առանձնահատկությունները

1. Ապրանքի մատակարարման գործարքի՝ ԱԱՀ-ով հարկման բազան որոշելիս Օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հարկման բազային գումարվում են նաև՝

1) Օրենսգրքի 5-րդ բաժնի համաձայն՝ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքի մատակարարման դեպքում՝ Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված ակցիզային հարկի գումարը.

2) Օրենսգրքի 8-րդ բաժնի համաձայն՝ բնապահպանական հարկով հարկման ենթակա ապրանքի մատակարարման

դեպքում՝ Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված բնապահպանական հարկի գումարը:

2. Տարայավորված ապրանքի մատակարարման դեպքում տարայի արժեքը ներառվում է ԱԱՀ-ով հարկման բազայի մեջ:

3. Ծխախոտի արտադրանքի ներմուծման և (կամ) մատակարարման գործարքների դեպքում ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում ծխախոտի արտադրանքի տուփի վրա Կառավարության սահմանած կարգով մակնշված՝ ծխախոտի արտադրանքի առավելագույն մանրածախ գինը՝ առանց ԱԱՀ-ի:

4. ԵՏՄ միասնական մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով՝

1) վերամշակման նպատակով Հայաստանի Հանրապետության տարածքից «Վերամշակում՝ մաքսային տարածքից դուրս» մաքսային ընթացակարգով արտահանված կամ վերամշակման նպատակով ԵՏՄ անդամ պետություններ արտահանված հումքից ստացված ապրանքի ներմուծման դեպքում ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում հումքի վերամշակման աշխատանքների և (կամ) ծառայությունների արժեքը, իսկ հումքի վերամշակման արդյունքում Օրենսգրքի 5-րդ բաժնի համաձայն՝ ակցիզային հարկով հարկման ենթակա նոր ապրանքի ստացման դեպքում ԱԱՀ-ով հարկման բազայում ներառվում է նաև այդ նոր ապրանքի համար Օրենսգրքի 5-րդ բաժնով սահմանված կարգով հաշվարկված ակցիզային հարկի գումարը.

2) նորոգման (վերանորոգման) նպատակով Հայաստանի Հանրապետության տարածքից «Վերամշակում՝ մաքսային տարածքից դուրս» մաքսային ընթացակարգով արտահանված կամ նորոգման (վերանորոգման) նպատակով ԵՏՄ անդամ պետություններ արտահանված գույքի ներմուծման դեպքում ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում այդ գույքի նորոգման (վերանորոգման) համար օգտագործված պահեստամասերի, դետալների, հանգույցների, այլ լրակազմող տարրերի արժեքը:

Սույն մասով սահմանված դեպքերում՝ գործարքի կողմերի միջև կազմված փաստաթղթերի (այդ թվում՝ պայմանագրերի, հաշվարկային փաստաթղթերի) բացակայության, կամ այդ փաստաթղթերում հումքի վերամշակման աշխատանքների և (կամ) ծառայությունների, գույքի նորոգման (վերանորոգման) համար օգտագործված պահեստամասերի, դետալների, հանգույցների, այլ լրակազմող տարրերի արժեք նախատեսված չլինելու պարագայում ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում՝

ա. վերամշակման նպատակով Հայաստանի Հանրապետության տարածքից «Վերամշակում՝ մաքսային տարածքից դուրս» մաքսային ընթացակարգով արտահանված հումքից ստացված ապրանքի ներմուծման դեպքում՝ վերամշակման արդյունք հանդիսացող ներմուծվող ապրանքի մաքսային արժեքի և արտահանված հումքի մաքսային արժեքի դրական տարբերությունը, իսկ հումքի վերամշակման արդյունքում Օրենսգրքի 5-րդ բաժնի համաձայն՝ ակցիզային հարկով հարկման ենթակա նոր ապրանքի ստացման դեպքում ԱԱՀ-ով հարկման բազայում ներառվում է նաև այդ նոր ապրանքի համար Օրենսգրքի 5-րդ բաժնով սահմանված կարգով հաշվարկված ակցիզային հարկի գումարը,

բ. վերամշակման նպատակով ԵՏՄ անդամ պետություններ արտահանված հումքից ստացված ապրանքի ներմուծման դեպքում՝ վերամշակման արդյունք հանդիսացող ներմուծվող ապրանքի հաշվեկշռային արժեքի և արտահանված հումքի հաշվեկշռային արժեքի դրական տարբերությունը, իսկ հումքի վերամշակման արդյունքում Օրենսգրքի 5-րդ բաժնի համաձայն՝ ակցիզային հարկով հարկման ենթակա նոր ապրանքի ստացման դեպքում ԱԱՀ-ով հարկման բազայում ներառվում է նաև այդ նոր ապրանքի համար Օրենսգրքի 5-րդ բաժնով սահմանված կարգով հաշվարկված ակցիզային հարկի գումարը, եթե այդ գումարը չի ներառվել վերամշակման արդյունք հանդիսացող ներմուծվող ապրանքի հաշվեկշռային արժեքում,

գ. նորոգման (վերանորոգման) նպատակով Հայաստանի Հանրապետության տարածքից «Վերամշակում՝ մաքսային տարածքից դուրս» մաքսային ընթացակարգով արտահանված գույքի ներմուծման դեպքում՝ նորոգված (վերանորոգված) ներմուծվող գույքի մաքսային արժեքի և արտահանված գույքի մաքսային արժեքի դրական տարբերությունը,

դ. նորոգման (վերանորոգման) նպատակով ԵՏՄ անդամ պետություններ արտահանված գույքի ներմուծման դեպքում՝ նորոգված (վերանորոգված) ներմուծվող գույքի հաշվեկշռային արժեքի և արտահանված գույքի հաշվեկշռային արժեքի դրական տարբերությունը:

5. ԵՏՄ միասնական մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով՝

1) վերամշակման նպատակով «Վերամշակում՝ մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգով Հայաստանի Հանրապետություն ներմուծված կամ վերամշակման նպատակով ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծված հումքից ստացված ապրանքի արտահանման դեպքում ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում հումքի վերամշակման աշխատանքների և (կամ) ծառայությունների արժեքը, իսկ հումքի վերամշակման արդյունքում Օրենսգրքի 5-րդ բաժնի համաձայն՝ ակցիզային հարկով հարկման ենթակա նոր ապրանքի ստացման դեպքում ԱԱՀ-ով հարկման բազայում ներառվում է նաև այդ նոր ապրանքի համար Օրենսգրքի 5-րդ բաժնով սահմանված կարգով հաշվարկված ակցիզային հարկի գումարը.

2) նորոգման (վերանորոգման) նպատակով «Վերամշակում՝ մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգով Հայաստանի Հանրապետություն ներմուծված կամ նորոգման (վերանորոգման) նպատակով ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծված գույքի արտահանման դեպքում ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում այդ գույքի նորոգման (վերանորոգման) համար օգտագործված պահեստամասերի, դետալների, հանգույցների, այլ լրակազմող տարրերի արժեքը:

Սույն մասով սահմանված դեպքերում գործարքի կողմերի միջև կազմված փաստաթղթերի (այդ թվում՝ պայմանագրերի, հաշվարկային փաստաթղթերի) բացակայության, կամ այդ փաստաթղթերում հումքի վերամշակման

աշխատանքների և (կամ) ծառայությունների, գույքի նորոգման (վերանորոգման) համար օգտագործված պահեստամասերի, դետալների, հանգույցների, այլ լրակազմող տարրերի արժեք նախատեսված չլինելու պարագայում՝

ա. վերամշակման նպատակով «Վերամշակում՝ մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգով Հայաստանի Հանրապետություն ներմուծված հումքից ստացված ապրանքի արտահանման դեպքում ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում վերամշակման արդյունք հանդիսացող արտահանվող ապրանքի մաքսային արժեքի և ներմուծված հումքի մաքսային արժեքի դրական տարբերությունը,

բ. վերամշակման նպատակով ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծված հումքից ստացված ապրանքի արտահանման դեպքում ԱԱՀ-ով հարկման բազան համարվում է 0,

գ. նորոգման (վերանորոգման) նպատակով «Վերամշակում՝ մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգով Հայաստանի Հանրապետություն ներմուծված գույքի արտահանման դեպքում ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում նորոգված (վերանորոգված) արտահանվող գույքի մաքսային արժեքի և ներմուծված գույքի մաքսային արժեքի դրական տարբերությունը,

դ. նորոգման (վերանորոգման) նպատակով ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծված գույքի արտահանման դեպքում ԱԱՀ-ով հարկման բազան համարվում է 0:

6. Ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման անհատույց կամ իրական արժեքից էականորեն ցածր արժեքով հատուցմամբ գործարքների դեպքում ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում այդ գործարքների իրական արժեքի 80 տոկոսը, բացառությամբ սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված դեպքերի: Սույն մասի կիրառության իմաստով՝

1) համարվում է, որ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքն իրականացվել է իրական արժեքից էականորեն ցածր արժեքով, եթե դրա հատուցման արժեքը (առանց ԱԱՀ-ի) 20 և ավելի տոկոսով ցածր է նույն, իսկ դրա բացակայության դեպքում՝ համանման ապրանքի մատակարարման, համանման աշխատանքի կատարման կամ համանման ծառայության մատուցման գործարքների իրական արժեքից (առանց ԱԱՀ-ի), բացառությամբ՝

ա. օրենքով սահմանված դեպքերում հրապարակային սակարկության միջոցով իրականացվող գործարքների,

բ. ապրանքի մատակարարման կամ աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման այն գործարքների, որոնք իրականացվում են հարկ վճարողի կողմից նախապես ընդունված գրավոր ակտում նշված կամ նախապես ընդունված այլ իրավական ակտում նշված առևտրային զեղչի չափով պակաս արժեքով, և այդ առևտրային զեղչը սույն ենթակետում նշված ակտերով սահմանված ժամանակահատվածում արտացոլվում է հարկ վճարողի կողմից դուրս գրվող հաշվարկային փաստաթղթերում.

2) գործարքի իրական արժեքի որոշման համար սույն կետում նշված առաջնահերթությամբ հիմք է ընդունվում՝

ա. համեմատելի հանգամանքներում տվյալ հարկ վճարողի կողմից նույն ապրանքի մատակարարման, նույն աշխատանքի կատարման կամ նույն ծառայության մատուցման դեպքում Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված՝ ԱԱՀ-ով հարկման բազան, իսկ դրա բացակայության դեպքում՝ գործարար շրջանակներում համեմատելի հանգամանքներում նույն ապրանքի մատակարարման, նույն աշխատանքի կատարման կամ նույն ծառայության մատուցման դեպքում որպես ԱԱՀ-ով հարկման բազա հիմք ընդունվող մեծությունը կամ

բ. համեմատելի հանգամանքներում տվյալ հարկ վճարողի կողմից համանման ապրանքի մատակարարման, համանման աշխատանքի կատարման կամ համանման ծառայության մատուցման դեպքում Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված՝ ԱԱՀ-ով հարկման բազան, իսկ դրա բացակայության դեպքում՝ գործարար շրջանակներում համեմատելի հանգամանքներում համանման ապրանքի մատակարարման, համանման աշխատանքի կատարման կամ համանման ծառայության մատուցման դեպքերում որպես ԱԱՀ-ով հարկման բազա հիմք ընդունվող մեծությունը:

Սույն կետի կիրառության իմաստով՝ նույն կամ համանման ապրանքի մատակարարման, նույն կամ համանման աշխատանքի կատարման կամ նույն կամ համանման ծառայության մատուցման գործարքների համեմատելի հանգամանքները որոշվում են համապատասխան գործարքի կատարման օրվան նախորդող 365 օրվա ընթացքում նույն կամ համանման ապրանքի մատակարարման, նույն կամ համանման աշխատանքի կատարման կամ նույն կամ համանման ծառայության մատուցման գործարքների հիման վրա:

7. Կառավարության որոշումների հիման վրա ԱԱՀ վճարողների կողմից ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման անհատույց գործարքների դեպքում ԱԱՀ-ով հարկման բազան համարվում է 0 դրամ, իսկ իրական արժեքից ցածր արժեքով հատուցմամբ գործարքների դեպքում ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում ստացման ենթակա հատուցման գումարը՝ առանց ԱԱՀ-ի:

8. Շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների, հողամասերի օտարման դեպքում ԱԱՀ-ով հարկման բազան որոշվում է Օրենսգրքի 61-րդ հոդվածով և սույն հոդվածով սահմանված կարգով, բայց ոչ պակաս, քան դրանց համար Օրենսգրքի 228-րդ հոդվածով սահմանված կարգով որոշվող՝ անշարժ գույքի հարկով հարկման բազայի չափով, բացառությամբ սույն մասով սահմանված դեպքի: Սույն պարբերության դրույթները չեն կիրառվում, եթե սույն պարբերությամբ սահմանված գույքային միավորների օտարման գործարքի կողմ է համարվում պետությունը կամ համայնքը (բացառությամբ այն դեպքերի, երբ գործարքը կատարվում է այլ կազմակերպության միջոցով):

Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով օտարվող (օտարված) սեփականության դիմաց սեփականատիրոջը՝ կառուցված բազմաբնակարան (այդ թվում՝ բազմաֆունկցիոնալ) կամ ստորաբաժանված շենքի բնակարաններով կամ այլ տարածքներով, իսկ բնակելի թաղամասերում կամ համալիրներում՝ բնակելի տներով

հատուցելու դեպքում ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասով որոշվող արժեքը:

9. Շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների, հողամասերի վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքով տրամադրման գործարքների դեպքում ԱԱՀ-ով հարկման բազան որոշվում է Օրենսգրքի 61-րդ հոդվածով և սույն հոդվածով սահմանված կարգով, բայց ոչ պակաս, քան դրանց համար Օրենսգրքի 228-րդ հոդվածով սահմանված կարգով որոշվող՝ անշարժ գույքի հարկով հարկման բազայի, իսկ դրա բացակայության դեպքում՝ անշարժ գույքի հարկով հարկման տվյալ օբյեկտի ընդհանուր մակերեսում վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնված տարածքի մակերեսի տեսակարար կշռին համապատասխանող հարկման բազայի 2.5 տոկոսի չափով՝ հաշվարկված տարեկան կտրվածքով: Այդ մեծությունը, ըստ ԱԱՀ-ի ամբողջական հաշվետու ժամանակաշրջանների, բաշխվում է հավասարաչափ:

ԱԱՀ-ի հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում սույն մասով սահմանված գույքը վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվելու և (կամ) այդ գույքի վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքը դադարեցվելու դեպքում այդ հաշվետու ժամանակաշրջանում նշված գործարքների մասով ԱԱՀ-ով հարկման բազան որոշվում է որպես սույն մասի առաջին պարբերությամբ որոշված հարկման բազայի և հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում գույքը վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվելու օրերի՝ ԱԱՀ-ի հաշվետու ժամանակաշրջանում ներառվող օրերի մեջ ունեցած տեսակարար կշռի արտադրյալ:

Սույն մասի դրույթները չեն կիրառվում, եթե սույն մասով սահմանված գույքային միավորների վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնելու գործարքի կողմ է համարվում պետությունը կամ համայնքը (բացառությամբ այն դեպքերի, երբ գործարքը կատարվում է այլ կազմակերպության միջոցով):

10. Հանձնարարության պայմանագրի հիման վրա հանձնակատարի կողմից ծառայությունների մատուցման դեպքում հանձնակատարի համար ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում հանձնակատարին հասանելիք գումարը (վարձատրության և հանձնակատարի կողմից իր անունով կատարած ծախսերի դիմաց, որպես փոխհատուցում, վճարվող գումարը)՝ առանց ԱԱՀ-ի, իսկ հանձնարարողի համար ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում հանձնարարության պայմանագրի հիման վրա հանձնակատարի միջոցով ապրանքի մատակարարման կամ աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ընդհանուր արժեքը՝ առանց ԱԱՀ-ի:

11. Կոմիսիայի պայմանագրի հիման վրա կոմիսիոների կողմից ապրանքի մատակարարման կամ աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման դեպքում (բացառությամբ սույն մասով սահմանված դեպքի) կոմիսիոների համար ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում կոմիսիայի պայմանագրի հիման վրա իր կողմից մատակարարված ապրանքի կամ կատարված աշխատանքի կամ մատուցված ծառայության ընդհանուր արժեքը (առանց ԱԱՀ-ի), իսկ կոմիտենտի համար ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում կոմիսիայի պայմանագրի հիման վրա կոմիսիոների միջոցով մատակարարված ապրանքի կամ կատարված աշխատանքի կամ մատուցված ծառայության արժեքի (առանց ԱԱՀ-ի) և կոմիսիոներին հասանելիք գումարի (առանց ԱԱՀ-ի) տարբերությունը: Կոմիսիոների համար ԱԱՀ-ով հարկման բազան որոշվում է իր կողմից մատակարարված ապրանքի կամ կատարված աշխատանքի կամ մատուցված ծառայության ընդհանուր արժեքով նաև այն դեպքերում, երբ կոմիսիայի պայմանագրի հիման վրա կոմիսիոների կողմից այլ անձից ձեռք բերված ապրանքը կամ ընդունված աշխատանքի արդյունքը կամ ստացված ծառայությունը հանձնվում է կոմիտենտին:

Եթե կոմիսիայի պայմանագրի հիման վրա ապրանքի մատակարարման կամ աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման գործարքը, Օրենսգրքի համաձայն, ենթակա չէ ԱԱՀ-ով հարկման կամ ենթակա է ԱԱՀ-ի 0 տոկոս դրույքաչափով հարկման, ապա կոմիսիոների համար ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում իրեն հասանելիք գումարը (վարձատրության և կոմիսիոների կողմից իր անունով կատարած ծախսերի դիմաց որպես փոխհատուցում վճարվող գումարը)՝ առանց ԱԱՀ-ի:

12. Գործակալության պայմանագրի հիման վրա գործակալի կողմից ապրանքի մատակարարման կամ աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման դեպքում՝

1) եթե գործակալը գործում է պրինցիպալի անունից և պրինցիպալի հաշվին, ապա գործակալի և պրինցիպալի համար ԱԱՀ-ով հարկման բազան որոշվում է սույն հոդվածի 10-րդ մասով սահմանված՝ համապատասխանաբար հանձնակատարի և հանձնարարողի համար ԱԱՀ-ով հարկման բազայի որոշման կանոններով.

2) եթե գործակալը գործում է իր անունից և պրինցիպալի հաշվին, ապա գործակալի և պրինցիպալի համար ԱԱՀ-ով հարկման բազան որոշվում է սույն հոդվածի 11-րդ մասով սահմանված՝ համապատասխանաբար կոմիսիոների և կոմիտենտի համար ԱԱՀ-ով հարկման բազայի որոշման կանոններով:

13. Պատվիրատուի տված հումքից և նյութերից ապրանքների արտադրության, շաղկցման կամ որևէ այլ կերպ տարայավորման դեպքում, երբ հումքի, նյութերի և արտադրված, շաղկցված կամ որևէ այլ կերպ տարայավորված ապրանքի նկատմամբ սեփականության իրավունքը պատկանում է պատվիրատուին, արտադրողի, շաղկցողի կամ որևէ այլ կերպ տարայավորողի համար ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում այդ հումքից և նյութերից ապրանքների արտադրության, շաղկցման կամ որևէ այլ կերպ տարայավորման աշխատանքների և (կամ) ծառայությունների արժեքը՝ առանց ԱԱՀ-ի:

14. Աճուրդի միջոցով ապրանքի մատակարարման դեպքում աճուրդի կազմակերպչի համար ԱԱՀ-ով հարկման

բազա է համարվում մատակարարվող ապրանքի սեփականատիրոջ և (կամ) այլ անձի կողմից աճուրդի կազմակերպչին տրվող միջնորդավճարի (պարգևավճարի, տոկոսի և այլն) գումարը՝ առանց ԱԱՀ-ի:

15. Զբոսաշրջության գործունեության մասով ԱԱՀ-ով հարկման բազան որոշվում է Օրենսգրքի 61-րդ հոդվածով և սույն հոդվածով սահմանված կարգով՝ առանց միջազգային ուղևորափոխադրման համար զբոսաշրջային օպերատորի կամ զբոսաշրջային գործակալի կողմից վճարվող գումարի:

16. Պետության կամ լիազոր մարմնի սահմանած սակագներով ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործարքների համար ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում համապատասխան սակագնի (առանց ԱԱՀ-ի) և դրա կիրառության հետ կապված՝ պետական բյուջեից տրամադրվող սուբսիդիայի (առանց ԱԱՀ-ի) հանրագումարը:

17. Եթե Կառավարության սահմանած ապրանքատեսակների մատակարարման գործարքների մասով ապրանքի մատակարարման դիմաց հատուցման ենթակա գումարը, կնքված պայմանագրի համաձայն, ենթակա է ճշտման՝ ճշգրտվող տվյալների (ապրանքի վերջնական քանակի, որակական հատկանիշների) հիման վրա՝ ապրանքն ստանալուց կամ դրա վերամշակումն ավարտելուց հետո, ապա այդ ապրանքի մատակարարման դեպքում ԱԱՀ-ով հարկման բազան որոշվում է օտարերկրյա բորսայի կամ հանդեսի կողմից հրապարակվող տվյալներով որոշվող՝ ապրանքի միավորի հաշվարկային գնի և տվյալ ապրանքի մատակարարման պայմանագրով նախատեսվող ճշգրտվող տվյալների (մասնավորապես՝ ապրանքի վերջնական քանակի, որակական հատկանիշների) հիման վրա (անկախ վերջնահաշվարկի արդյունքում վճարման ենթակա հատուցման գումարից): Սույն մասի կիրառության իմաստով՝

1) հարկման բազայի որոշման նպատակով ճշգրտվող տվյալները, դրանց ճշգրտման առավելագույն սահմանները, ինչպես նաև ապրանքի միավորի հաշվարկային գնի որոշման կարգը (ներառյալ՝ հաշվարկային գնի որոշման պարբերականությունը) սահմանում է Կառավարությունը.

2) ապրանքի մատակարարման գործարքների դեպքում ապրանքի մատակարարման դիմաց հատուցման ենթակա գումարի (առանց ԱԱՀ-ի) ավելացումը կամ պակասեցումը ներառվում է ապրանքի մատակարարման դիմաց հատուցման ենթակա վերջնական գումարը հայտնի դառնալու օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկում՝ որպես ԱԱՀ-ով հարկման բազայի ավելացում կամ պակասեցում:

18. Գույքի հավատարմագրային կառավարման արդյունքում իրականացված՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների մասով հավատարմագրային կառավարչի համար ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում իր և կառավարման հիմնադրի կողմից իրականացված գործարքների համար Օրենսգրքով սահմանված կարգով որոշվող հարկման բազաների ընդհանուր արժեքը:

19. Ֆինանսական հետևյալ գործարքների համար ԱԱՀ-ով հարկման բազան որոշվում է հետևյալ ձևով.

1) արտարժույթի առուվաճառքի գործարքների համար ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում արտարժույթի վաճառքի և ձեռքբերման արժեքների դրական տարբերությունը.

2) ցպահանջ, ժամկետային, խնայողական և նման այլ ավանդների ընդունման, բանկային և այլ հաշիվների բացման, վարման և սպասարկման, ինչպես նաև վճարահաշվարկային ծառայությունների համար ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում այդ ծառայությունների մատուցման համար գանձվող վճարը՝ առանց ԱԱՀ-ի.

3) վարկերի (փոխառությունների) տրամադրման ծառայությունների համար ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում դրանց դիմաց ստացվող տոկոսային եկամուտը՝ դրամական արտահայտությամբ, ինչպես նաև վարկերի (փոխառությունների) տրամադրման պահին միանվագ գանձվող՝ վարկի (փոխառության) տրամադրման վճարը, վարկի սպասարկման (այդ թվում՝ մոնիտորինգի) համար որոշակի պարբերականությամբ գանձվող վճարները, վարկային հայտի ուսումնասիրության համար գանձվող վճարը, վարկային հաշիվների բացման, վարման և սպասարկման համար գանձվող վճարները.

4) ֆակտորինգային ծառայությունների համար ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում ծառայություն մատուցողին զիջվող դրամական պահանջի և ծառայությունից օգտվողին փոխանցվող դրամական միջոցների տարբերությունը.

5) երաշխավորությունների, բանկային երաշխիքների տրամադրման, ակրեդիտիվների բացման ծառայությունների համար ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում այդ ծառայությունների մատուցման դիմաց գանձվող վճարը՝ առանց ԱԱՀ-ի.

6) արժեթղթերի, այդ թվում՝ մուրհակների, չեկերի, վճարագրերի, վճարային այլ արժեթղթերի, վճարային փաստաթղթերի թողարկման և (կամ) օտարման գործարքների համար ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում արժեթղթերի օտարման գինը՝ առանց ԱԱՀ-ի.

7) արժեթղթերի ի պահ ընդունման կամ հաշվառման ծառայությունների համար ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում այդ ծառայությունների մատուցման դիմաց գանձվող վճարը՝ առանց ԱԱՀ-ի.

8) մուրհակների, չեկերի, վճարագրերի, վճարային այլ արժեթղթերի, վճարային փաստաթղթերի զեղչման, փոխանցման, զիջման գործարքների կամ սպասարկման ծառայությունների համար ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում զեղչը՝ առանց ԱԱՀ-ի կամ սպասարկման ծառայության մատուցման դիմաց գանձվող վճարը՝ առանց ԱԱՀ-ի.

9) վճարային քարտերի և այլ գործիքների թողարկման, զեղչման, փոխանցման, զիջման գործարքների կամ սպասարկման ծառայությունների համար ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում վճարային քարտերի և այլ գործիքների տրամադրման վճարը՝ առանց ԱԱՀ-ի կամ սպասարկման ծառայության մատուցման դիմաց գանձվող վճարը՝ առանց

ԱԱՀ-ի.

10) կանխիկի տրամադրման ծառայությունների համար ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում այդ ծառայությունների համար գանձվող կանխիկացման վճարը՝ առանց ԱԱՀ-ի.

11) արժեթղթերի հավատարմագրային կառավարման ծառայությունների համար ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում հավատարմագրային կառավարչի մատուցած հավատարմագրային կառավարման ծառայությունների համար գանձվող վճարը (վարձատրությունը)՝ առանց ԱԱՀ-ի.

12) բանկային ոսկու օտարման դեպքում ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում բանկային ոսկու արժեքը՝ առանց ԱԱՀ-ի.

13) բանկային ոսկով արտահայտված հաշիվների բացման և վարման, դրանցով այլ գործառնությունների կատարման ծառայությունների համար ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում սպասարկման վճարը՝ առանց ԱԱՀ-ի.

14) օրենքով սահմանված կարգով բանկի կամ վարկային կազմակերպության սեփականությունը դարձած՝ անհատ ձեռնարկատեր չհամարվող ֆիզիկական անձանց մինչ այդ պատկանող գրավի առարկայի օտարման դեպքում ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում գրավի առարկայի օտարման արժեքը՝ առանց ԱԱՀ-ի.

15) գումարների (հասույթների, կոմունալ և այլ վճարների) ընդունման, ինչպես նաև աշխատավարձերի, թոշակների, նպաստների, ապահովագրական և այլ վճարների կատարման ծառայությունների համար ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում այդ ծառայությունների համար գանձվող վճարը՝ առանց ԱԱՀ-ի.

16) եթե ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով նախատեսվում է, որ պայմանագրի գործողության ժամկետի ավարտին լիզինգի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է անցնել վարձակալին, ապա ԱԱՀ-ով հարկման բազան որոշվում է Օրենսգրքի 61-րդ հոդվածով և սույն հոդվածով սահմանված կարգով, իսկ եթե ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով չի նախատեսվում, որ պայմանագրի գործողության ժամկետի ավարտին լիզինգի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է անցնել վարձակալին, ապա ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում ֆինանսական վարձակալությունից ստացման ենթակա տոկոսագումարը:

20. Օրենսգրքի 88-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով նախատեսված՝ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների օտարման դեպքում ԱԱՀ-ով հարկման բազան որոշվում է Օրենսգրքի 61-րդ հոդվածով և սույն հոդվածով սահմանված կարգով, բայց ոչ պակաս, քան դրանց համար Օրենսգրքի 88-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով սահմանված օտարման նվազագույն գների (ներառյալ՝ ակցիզային հարկը) չափով՝ առանց ԱԱՀ-ի:

(62-րդ հոդվածը փոփ., լրաց. 21.12.17 ՀՕ-266-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն, 24.10.18 ՀՕ-407-Ն, լրաց. 25.06.19 ՀՕ-68-Ն)

Հոդված 63. Ավելացված արժեքի հարկի դրույքաչափերը

1. Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների ու գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ԱԱՀ-ն հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով, բացառությամբ Օրենսգրքի 64-րդ և 65-րդ հոդվածներով սահմանված գործարքների ու գործառնությունների:

2. Ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման դիմաց ԱԱՀ-ի գումարը ներառող հատուցման գումարի մեջ ԱԱՀ-ի գումարը որոշվում է 16.67 տոկոս դրույքաչափի հաշվարկային մեծությամբ, եթե՝

1) կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը, Օրենսգրքի պահանջների խախտմամբ, իրեն չի համարել ԱԱՀ վճարող.

2) ԱԱՀ վճարող համարվող կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը ԱԱՀ-ի 20 տոկոս դրույքաչափով հարկման ենթակա՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների գծով դուրս գրված հաշվարկային փաստաթղթում առանձին տողով չի նշել ԱԱՀ-ի դրույքաչափն ու գումարը.

3) ԱԱՀ վճարող համարվող կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը ԱԱՀ-ի 20 տոկոս դրույքաչափով հարկման ենթակա՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների գծով հաշվարկային փաստաթուղթ դուրս չի գրել.

4) ԱԱՀ վճարող համարվող կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների և (կամ) գործառնությունների գծով միայն ՀԴՄ կտրոն է տրամադրել գնորդին:

3. Օրենսգրքի 65-րդ հոդվածով սահմանված գործարքների հարկման բազայի նկատմամբ ԱԱՀ-ն հաշվարկվում է 0 տոկոս դրույքաչափով:

(63-րդ հոդվածը փոփ., լրաց. 21.12.17 ՀՕ-266-Ն)

Գ Լ Ո Ւ Խ 13

ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ԶՐՈՅԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓՈՎ ՀԱՐԿՈՒՄԸ

Հոդված 64. Ավելացված արժեքի հարկից ազատված գործարքներն ու գործառնությունները

1. ԱԱՀ-ից ազատելը Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների ու գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ԱԱՀ չհաշվարկելն է:

2. ԱԱՀ-ից ազատվում են Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հետևյալ գործարքներն ու գործառնությունները.

1) հանրակրթական ուսումնական հաստատությունների, մանկապատանեկան ստեղծագործական և գեղագիտական կենտրոնների, երաժշտական, նկարչական, արվեստի և գեղարվեստի ուսումնական հաստատությունների, մարզադպրոցների, արհեստագործական ուսումնարանների, որակավորման և վերաորակավորման, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսուցման ծառայությունների մատուցումը: Սույն կետում նշված հասկացությունները կիրառվում են «Կրթության մասին», «Հանրակրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում նույն հասկացությունների կիրառության իմաստով ու նշանակությամբ.

2) դպրոցական գրերի և նոտայի տետրերի, նկարչական ալբոմների, մանկական և դպրոցական գրականության, դպրոցական ուսումնական հրատարակությունների, բուհերի, մասնագիտացված գիտական կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի հրատարակած գիտական և ուսումնական հրատարակությունների օտարումը: Սույն կետով սահմանված արտոնությունների կիրառության շրջանակը սահմանում է Կառավարությունը.

3) Կառավարության սահմանած չափանիշներին համապատասխանող գիտահետազոտական աշխատանքների կատարումը.

4) հանրակրթական հիմնական ծրագրերի շրջանակներում աշխատանքների կատարումը: Սույն կետով սահմանված արտոնության կիրառության շրջանակը սահմանում է Կառավարությունը.

5) հանրակրթության ոլորտում իրականացվող՝ կրթության և գիտության բնագավառում Կառավարության լիազոր մարմնի ճանաչած, երաշխավորած և Կառավարության սահմանած չափորոշիչներին համապատասխանող կրթական բնույթի առարկայական մրցույթներին, մրցաշարերին, օլիմպիադաներին մասնակցության իրավունքի տրամադրումը.

6) նախադպրոցական հիմնարկներում երեխաներին պահելու, տուն-ինտերնատներում, մանկատներում, արատներ ունեցող երեխաներ կամ հաշմանդամներ խնամող հաստատություններում, ծերանոցներում գտնվող անձանց խնամքի հետ կապված ծառայությունների մատուցումը, ինչպես նաև խնամվողների կողմից այնտեղ պատրաստված ապրանքների օտարումը, աշխատանքների կատարումը, ծառայությունների մատուցումը: Սույն կետով սահմանված արտոնությունների կիրառության շրջանակը սահմանում է Կառավարությունը.

7) հասարակական, բարեգործական և կրոնական կազմակերպությունների կողմից ապրանքների անհատույց մատակարարումը, աշխատանքների անհատույց կատարումը և (կամ) ծառայությունների անհատույց մատուցումը.

8) թաղման բյուրոների, գերեզմանատների, ինչպես նաև մահվան և հուղարկավորության հետ կապված ծիսական բնույթի այլ աշխատանքների կատարումը, ծառայությունների մատուցումը և համապատասխան պարագաների օտարումը.

9) կրոնական ծիսակատարությունների կազմակերպման ծառայությունների մատուցումը, կրոնական կազմակերպություններին կրոնական պարագաների օտարումը, ինչպես նաև կրոնական կազմակերպությունների կողմից այդ պարագաների օտարումը.

10) օտարերկրյա պետությունների, միջազգային միջկառավարական (միջպետական) կազմակերպությունների, միջազգային, օտարերկրյա և Հայաստանի Հանրապետության հասարակական, բարեգործական, կրոնական կազմակերպությունների, առանձին բարերարների կողմից ապրանքների ներմուծումը, ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը և ծառայությունների մատուցումը՝ մարդասիրական օգնության և բարեգործական ծրագրերի (գործունեության) շրջանակներում, ինչպես նաև նման ծրագրերի իրականացման հետ անմիջականորեն կապված և դրանց համար զգալի նշանակություն ունեցող ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը և ծառայությունների մատուցումը: Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով) ուղղակիորեն նշված չլինելու դեպքում ծրագրի (գործունեության) տարբերակումն ըստ մարդասիրական օգնության և բարեգործական բնույթի, ինչպես նաև սույն կետի համաձայն, ԱԱՀ-ից ազատվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների շրջանակները որոշում է Կառավարության լիազոր մարմինը.

11) բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների, մասնավորապես հիվանդությունների կանխարգելման, ախտորոշման, բժշկական խորհրդատվության, բուժական, վերականգնողական, բժշկական փորձաքննության անցկացման ծառայությունների մատուցումը.

12) դոնորային արյան և դրա բաղադրամասերի, մայրական կաթի, պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, բժշկական տեխնիկայի և բժշկական նշանակության ապրանքների օտարումը, բժշկական կազմակերպություններում բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում պացիենտների պատրաստած ապրանքների օտարումը, աշխատանքների կատարումը, ծառայությունների մատուցումը: Սույն կետով սահմանված արտոնությունների կիրառության շրջանակը սահմանում է Կառավարությունը.

13) պետության կամ համայնքի կողմից կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում գույքի ներդրումը.

14) բռնագրավման կամ նվիրատվության ձևով ապրանքի մատակարարումը պետությանը: Սույն կետը չի

տարածվում բռնագանձման ձևով պետությանը ապրանքի մատակարարման գործարքների վրա, որոնց դեպքում ապրանքի մատակարարման գործարքը ենթակա է ԱԱՀ-ով հարկման Օրենսգրքով սահմանված կարգով.

15) հողամասից կամովին հրաժարվելու դեպքում սեփականության իրավունքով պատկանող հողամասի օտարումը համայնքին կամ պետությանը.

16) հողամասի կամ այլ անշարժ գույքի փոխանակությունը, եթե այդ գործարքի կողմ են հանդիսանում պետությունը և (կամ) համայնքը.

17) սուբսիդիաների, սուբվենցիաների և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում իրականացվող՝ ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը և (կամ) ծառայության մատուցումը, եթե նշված ծրագրերն արժանացել են Կառավարության ձևավորած մասնագիտական հանձնաժողովի դրական եզրակացությանը: Սույն կետում նշված մասնագիտական հանձնաժողովի գործունեության կարգը և կազմը, ինչպես նաև հանձնաժողովի կողմից սուբսիդիաների, սուբվենցիաների և դրամաշնորհային ծրագրերի՝ որպես արտոնյալ որակավորման, փոփոխման կամ կասեցման կարգերը սահմանում է Կառավարությունը.

18) պետական կառավարման մարմինների և (կամ) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից այն ծառայությունների մատուցումը, որոնց համար օրենքով սահմանված է պետական տուրքի և (կամ) տեղական տուրքի վճարում, ինչպես նաև պետական կառավարչական և (կամ) համայնքային կառավարչական հիմնարկների կողմից ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը և (կամ) ծառայության մատուցումն այն մասով, որից հասույթը հաշվեգրվել է պետական կամ համայնքների բյուջեների օգտին: Սույն կետի կիրառության իմաստով՝ հասույթի կամ դրա մի մասի հաշվեգրումը պետական կամ համայնքների բյուջեների օգտին պետք է հիմնավորվի դրանց համապատասխան գանձապետական հաշվին փոխանցմամբ.

19) կոնցեսիոների (օպերատորի) կողմից Կառավարության սահմանած չափանիշների համաձայն Կառավարության լիազոր մարմնի կողմից որպես կոնցեսիայի պայմանագիր որակված գործարքի պայմանների շրջանակներում կոնցեդենտին (շնորհատուին) պատկանող ենթակառուցվածքային ակտիվների, դրանց առանձին տարրերի վրա կատարված բարելավման արդյունքի կամ գնված կամ կառուցված կամ փոխարինված ենթակառուցվածքային ակտիվների (նյութական կամ ոչ նյութական), դրանց կազմում առանձին տարրերի՝ կոնցեսիայի պայմանագրի գործողության ընթացքում կամ ավարտին կոնցեդենտին (շնորհատուին) օտարումը, ինչպես նաև կոնցեդենտին (շնորհատուին) կոնցեսիոն ծառայությունների մատուցումը: Սույն կետի կիրառության իմաստով՝

ա. կոնցեդենտ (շնորհատու) է համարվում պետական կամ համայնքային մարմինը, որը որոշակի ժամանակահատվածով կոնցեսիոներին (օպերատորին) է տրամադրում հանրային ծառայությունների ենթակառուցվածքներ՝ դրանք շահագործելու և (կամ) սպասարկելու նպատակով,

բ. կոնցեսիոներ (օպերատոր) է համարվում ռեզիդենտ կազմակերպությունը, որին կոնցեդենտի (շնորհատուի) կողմից տրամադրվում են հանրային ծառայությունների ենթակառուցվածքներ՝ հանրային ծառայություն մատուցելու և (կամ) այն բարելավելու նպատակով, և որը շահագործում և (կամ) սպասարկում է այդ ենթակառուցվածքները սահմանված ժամանակաշրջանի ընթացքում.

20) ԱՏԳԱԱ 8432, 8433, 8434, 8436, 8701 ծածկագրերին դասվող տեխնիկայի և մասերի, 31 ապրանքախմբի ծածկագրերին դասվող պարարտանյութերի, 3808 91, 3808 92, 3808 93, 3808 94, 3808 99 ապրանքախմբի ծածկագրերին դասվող թունաքիմիկատների, 0106 41 000, 0106 90 00 90, 5305 00 000 0, 9406 00 310 0 ծածկագրերին դասվող ապրանքների, ինչպես նաև գյուղատնտեսական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների սերմերի և տնկանյութի օտարումը.

21) անմիջական արտադրողի կողմից Հայաստանի Հանրապետությունում արտադրված՝ ԱՏԳԱԱ 570110, 570210 ծածկագրերին դասվող ձեռագործ գորգերի օտարումը.

22) ջրօգտագործողների ընկերությունների կողմից ոռոգման ջրի օտարումը.

23) ազատ տնտեսական գոտու կազմակերպչին և ազատ տնտեսական գոտու շահագործողին ծառայությունների մատուցումը, ազատ տնտեսական գոտու կազմակերպչի և ազատ տնտեսական գոտու շահագործողի համար աշխատանքների կատարումը, ազատ տնտեսական գոտու տարածքում ապրանքների մատակարարումը.

24) թերթերի և ամսագրերի օտարումը.

25) Կառավարության սահմանած ցանկում նշված թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի օտարումը.

26) թանկարժեք մետաղների և թանկարժեք մետաղներից պատրաստված՝ ԱՏԳԱԱ 7106, 7108, 7109, 7110, 7113, 7115 ծածկագրերին դասվող՝ ոսկերչական նշանակության կիսապատրաստուկների օտարումը.

27) ծխախոտի արտադրանք արտադրող չհանդիսացող և ծխախոտի արտադրանք ներմուծող չհանդիսացող հարկ վճարողների կողմից ծխախոտի արտադրանքի օտարումը.

28) Շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարայով տարայավորված ապրանք արտադրողի կողմից Կառավարության սահմանած չափանիշները բավարարող շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարայի օտարումը.

29) խաղատների գործունեության կազմակերպումը.

30) շահումով խաղերի (այդ թվում՝ ինտերնետ շահումով խաղերի), տոտալիզատորի և ինտերնետ տոտալիզատորի կազմակերպումը.

31) ապրանքի մատակարարման հրապարակային պայմանագրով սահմանված երաշխիքային ժամանակահատվածում տվյալ ապրանքի հետ կապված սպասարկման ծառայությունների անհատույց մատուցումը, այդ ծառայությունների շրջանակներում սահմանված որակին չհամապատասխանող ապրանքների, դրանց լրակազմող

տարրերի փոխարինման նպատակով ապրանքի անհատույց մատակարարումը, այն ապրանքների մատակարարումն ու ծառայությունների մատուցումը, որոնց արժեքը ներառված է հրապարակային պայմանագրերի համաձայն մատակարարվող ապրանքների արժեքում: Սույն կետը կարող է կիրառվել այն դեպքում, երբ կնքված պայմանագրի պայմանները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 442-րդ հոդվածով սահմանված՝ հրապարակային պայմանագրերին ներկայացվող պահանջներին: Այն դեպքերում, երբ ապրանքի մատակարարման հրապարակային պայմանագրով նախատեսվում է այլ ապրանքների մատակարարում և (կամ) ծառայությունների մատուցում, ապա հրապարակային պայմանագրով մատակարարվող ապրանքի արժեքում այլ ապրանքների և (կամ) ծառայությունների արժեքը ներառելու փաստը պետք է հիմնավորվի հաշվապահական հաշվառման մեջ կիրառվող սկզբնական հաշվառման փաստաթղթերով և ԱԱՀ վճարողի կողմից հաստատված փաստաթղթերով (հրաման, հաստատված ինքնարժեքի հաշվարկ և այլն).

32) կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում բաժնեմասի կամ փայի նկատմամբ սեփականության իրավունքի օտարումը.

33) օրենքով սահմանված կարգով իրականացվող՝ կազմակերպության վերակազմակերպման շրջանակներում ապրանքի մատակարարումը և (կամ) ծառայության մատուցումը.

34) սեփականաշնորհման կամ ապապետականացման գործարքների շրջանակներում ապրանքի մատակարարումը.

35) Հայաստանի Հանրապետության տարածք մշակութային արժեքների ներմուծումը.

36) Հայաստանի Հանրապետության տարածքից «Արտահանում» մաքսային ընթացակարգից տարբերվող մաքսային ընթացակարգով (բացառությամբ «Վերամշակում՝ մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգով ներմուծված ապրանքների նկատմամբ «Վերաարտահանում» մաքսային ընթացակարգի կիրառման դեպքերի) արտահանված ապրանքների մատակարարումը.

37) օրենսդրությամբ սահմանված կարգով լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակ ունեցող հարկ վճարողի կամ Կառավարության հավանությանն արժանացած ծրագիր իրականացնող ռեզիդենտ շահութահարկ վճարողների խմբի կողմից ԵՏՄ անդամ չհամարվող պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք ապրանքների ներմուծումը, եթե այդ ապրանքները կամ դրանց վերամշակման արդյունքում ստացված ապրանքները ներմուծման օրվանը հաջորդող 180 օրվա ընթացքում արտահանվում են (այդ թվում՝ ԵՏՄ անդամ պետություններ).

38) Հայաստանի Հանրապետության տարածքից «Արտահանում» մաքսային ընթացակարգով ԵՏՄ անդամ չհամարվող պետություն արտահանված կամ Հայաստանի Հանրապետության տարածքից ԵՏՄ անդամ պետություն արտահանված սև և գունավոր մետաղների ջարդոնի մատակարարումը.

39) անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի կողմից իրենց անձնական գույքի օտարման գործարքները.

40) անհատ ձեռնարկատիրոջը կամ նոտարին պատկանող՝ ժառանգության զանգվածում ներառվող գույքի՝ ժառանգին օտարումը.

41) Հայաստանի Հանրապետություն ժամանող ֆիզիկական անձանց կողմից «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ իրենց անձնական օգտագործման գույքի ներմուծումը.

42) Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձանց կողմից «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ իրենց անձնական օգտագործման գույքի ներմուծումը.

43) օտարերկրյա պետություններում գործող Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմիններում ծառայող դիվանագետների և Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայությանը կից գործող ռազմական, առևտրական և այլ կցորդների, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու այլ երկրների թեմերում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից հոգևոր ծառայության նշանակված քաղաքացիների կողմից ծառայության ավարտից հետո «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ իրենց անձնական օգտագործման գույքի ներմուծումը.

44) ապահովագրական և վերաապահովագրական ծառայությունների, ներառյալ՝ դրանց հետ կապված՝ ապահովագրական միջնորդների և գործակալների կողմից ծառայությունների մատուցումը.

45) կենսաթոշակային ապահովման ծառայությունների, ներառյալ՝ դրանց հետ կապված՝ միջնորդների և գործակալների կողմից ծառայությունների մատուցումը.

46) «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով նախաձեռնողի կողմից ակտիվների օտարումն արժեթղթավորման հիմնադրամին կամ վաճառողին, վաճառողի կողմից ակտիվների օտարումն արժեթղթավորման հիմնադրամին, «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում նախաձեռնողի կողմից արժեթղթավորման հիմնադրամից ակտիվների հետգնումը կամ արժեթղթավորման հիմնադրամի հետ ակտիվների փոխանակումը, ինչպես նաև ակտիվների օտարումը «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ստեղծված արժեթղթավորման ֆոնդին, արժեթղթավորման ֆոնդին ակտիվն օտարած անձի կողմից արժեթղթավորման ֆոնդից ակտիվների հետգնումը կամ արժեթղթավորման ֆոնդի հետ ակտիվների փոխանակումը.

47) բանկերի, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների, վճարահաշվարկային կազմակերպությունների, վարկային կազմակերպությունների, ինչպես նաև սույն կետով սահմանված դեպքերում՝ այլ հարկ վճարողների կողմից հետևյալ ֆինանսական գործարքների ու գործառնությունների կատարումը.

ա. ցպահանջ, ժամկետային, խնայողական և նման այլ ավանդների ընդունման, բանկային և այլ հաշիվների բացման, վարման ու սպասարկման ծառայությունների, այդ թվում՝ վճարահաշվարկային ծառայությունների մատուցումը,

բ. բանկերի, վարկային կազմակերպությունների և այլ հարկ վճարողների կողմից վարկերի կամ փոխառությունների տրամադրման, այդ թվում՝ պարտքերի կամ առևտրային գործարքների ֆինանսավորման ու ֆակտորինգային այլ ծառայությունների մատուցումը,

գ. երաշխավորությունների, բանկային երաշխիքների տրամադրման, ակրեդիտիվների բացման ծառայությունների մատուցումը,

դ. բանկերի, վարկային կազմակերպությունների և այլ հարկ վճարողների կողմից արժեթղթերի օտարումը, արժեթղթերի ի պահ ընդունման և հաշվառման ծառայությունների մատուցումը,

ե. մուրհակների, չեկերի, վճարագրերի, վճարային այլ արժեթղթերի, վճարային փաստաթղթերի, քարտերի և այլ գործիքների թողարկման, զեղչման, փոխանցման, զիջման կամ սպասարկման ծառայությունների մատուցումը, ինչպես նաև այլ հարկ վճարողների կողմից մուրհակների, չեկերի, վճարագրերի, վճարային այլ արժեթղթերի, վճարային փաստաթղթերի օտարումը,

զ. բանկերի, վարկային կազմակերպությունների և այլ հարկ վճարողների կողմից արտարժույթի (թղթադրամի և մետաղադրամի, բացառությամբ դրամագիտական նշանակություն ունեցող և այդ նպատակով օգտագործվող մետաղադրամների և բանկային տոմսերի) օտարումը և (կամ) փոխանակումը հայկական դրամի հետ, բանկերի, վարկային կազմակերպությունների և այլ հարկ վճարողների կողմից կնքվող ածանցյալ ֆինանսական գործիքների օտարումը, փոխանցումը, փոխանակումը կամ այլ կերպ օտարումը և այդ գործարքներով նախատեսված բոլոր վճարումների կատարումը, բացառությամբ այն վճարումների, որոնք իրականացվում են այնպիսի գույքի փաստացի մատակարարման դիմաց, որի օտարումը Օրենսգրքի համաձայն ենթակա է ԱԱՀ-ով հարկման,

է. կանխիկի տրամադրման ծառայությունների մատուցումը,

ը. բանկերի, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների և այլ հարկ վճարողների կողմից ներդրումային ֆոնդի կառավարման, ներառյալ՝ իր կողմից կառավարվող (այդ թվում՝ պատվիրակման արդյունքում) ներդրումային ֆոնդի թողարկած արժեթղթերի տեղաբաշխման և (կամ) հետգնման (մարման) ծառայությունների մատուցումը,

թ. ներդրումային ֆոնդի պահառության ծառայության մատուցումը,

ժ. արժեթղթերի հավատարմագրային կառավարման ծառայության մատուցումը,

ժա. բանկային ոսկու օտարումը, բանկային ոսկով արտահայտված հաշիվների բացման ու վարման, դրանցով այլ գործառնությունների կատարման ծառայությունների մատուցումը, ինչպես նաև բանկերին և վարկային կազմակերպություններին բանկային ձուլակտորների օտարումը,

ժբ. օրենքով սահմանված կարգով բանկի կամ վարկային կազմակերպության սեփականությունը դարձած՝ անհատ ձեռնարկատեր և նոտար չհամարվող ֆիզիկական անձանց մինչ այդ պատկանող գրավի առարկայի օտարումը: Սույն ենթակետի կիրառության իմաստով՝ գրավի առարկան մինչև բանկի կամ վարկային կազմակերպության սեփականությունը դառնալը համարվում է անհատ ձեռնարկատեր և նոտար չհամարվող ֆիզիկական անձանց պատկանող, եթե գրավի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքի վկայականում նշված չէ, որ այն պատկանում է տվյալ անհատ ձեռնարկատիրոջը կամ նոտարին,

ժգ. գումարների (հասույթների, պարտադիր, կոմունալ և այլ վճարների) ընդունման, ինչպես նաև աշխատավարձի, թոշակների, նպաստների, ապահովագրական և այլ վճարների կատարման ծառայությունների մատուցումը,

ժդ. լիզինգային պայմանագրի շրջանակներում բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ներմուծված այն ապրանքների ֆինանսական վարձակալությամբ (լիզինգով) օտարումը, որոնց ներմուծման ժամանակ ԱԱՀ-ն օրենսդրությամբ սահմանված կարգով չի հաշվարկվել և չի վճարվել,

ժե. բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ֆինանսական վարձակալության (լիզինգի) ծառայության մատուցումը, եթե ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով չի նախատեսվում, որ պայմանագրի գործողության ժամկետի ավարտին լիզինգի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է անցնել վարձակալին:

ԱԱՀ-ից չեն ազատվում սույն կետով սահմանված ծառայությունների հետ կապված քաղվածքների և այլ տեղեկությունների ձևակերպման և տրամադրման, արժեթղթերի, չեկերի, վճարագրերի, վճարային փաստաթղթերի, քարտերի, թղթադրամի, մետաղադրամի, բանկային ոսկու պատրաստման, ֆաքսիմիլային ծառայությունների մատուցումը.

48) օտարերկրյա զբոսաշրջիկին մատուցվող զբոսաշրջության ոլորտի ծառայությունները, ինչպես նաև զբոսաշրջիկային գործակալությունների կողմից մատուցվող գործակալական ծառայությունները, եթե այդ ծառայությունների շրջանակներում ուղևորությունները, ճանապարհորդությունները, էքսկուրսիաներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության տարածքում.

49) ներդրումային ֆոնդի կողմից անշարժ գույքի օտարումը տվյալ ներդրումային ֆոնդում մասնակցություն ունեցող անձին, եթե անշարժ գույքը նախկինում ներդրումային ֆոնդի կողմից, որպես ներդրումային ֆոնդում փայի կամ բաժնետոմսի դիմաց ներդրում, ձեռք է բերվել տվյալ անձից.

50) «Անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգի գործողությունը եզրափակելու նպատակով անմաքս առևտրի խանութի կազմակերպչի կողմից այն օտարերկրյա ապրանքների՝ «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային

ընթացակարգով ներմուծումը, որոնք իրացվել են «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 2017 թվականի ապրիլի 11-ի պայմանագրի 1-ին հավելվածով հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 243-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետում նշված անձանց.

51) ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետությունում գործող անմաքս առևտրի խանութներ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքի ներմուծումը.

52) ԵՏՄ ԱՏԳ ԱԱ 8702 40 000, 8703 80 000 և 8711 60 ծածկագրերին դասվող տրանսպորտային միջոցների ներմուծումը և (կամ) օտարումը.

53) Հայաստանի Հանրապետությունում աճեցված տոհմային կենդանի խոշոր եղջերավոր անասունների օտարումը Հայաստանի Հանրապետության տարածքում.

54) «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19.7-րդ և 19.8-րդ հոդվածներով սահմանված գործունեության տեսակների շրջանակներում ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը և (կամ) ծառայությունների մատուցումը:

(64-րդ հոդվածը խմբ., փոփ., լրաց. 21.12.17 ՀՕ-266-Ն, խմբ. 08.02.18 ՀՕ-124-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն, 21.06.18 ՀՕ-338-Ն, լրաց. 25.06.19 ՀՕ-68-Ն, 19.06.19 ՀՕ-87-Ն)

(07.06.19 ՀՕ-63-Ն օրենքի 1-ին հոդվածով լրացված 64-րդ հոդվածի 2-րդ մասի 52-րդ կետը գործում է մինչև 2022 թվականի հունվարի 1-ը՝ համաձայն 07.06.19 ՀՕ-63-Ն-ի 2-րդ հոդվածի)

Հոդված 65. Ավելացված արժեքի հարկի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքները

1. ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկումը Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների հարկման բազայի նկատմամբ ԱԱՀ-ն 0 տոկոս դրույքաչափով հաշվարկվել է:

2. ԱԱՀ-ի 0 տոկոս դրույքաչափով հարկվում են Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ հետևյալ գործարքները.

1) Հայաստանի Հանրապետության տարածքից «Արտահանում» մաքսային ընթացակարգով արտահանված ապրանքի (բացառությամբ սև և գունավոր մետաղների ջարդոնի) մատակարարումը.

2) Հայաստանի Հանրապետության տարածքից ԵՏՄ անդամ պետություն արտահանված՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքի (բացառությամբ սև և գունավոր մետաղների ջարդոնի) մատակարարումը՝ Օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված փաստաթուղթը հարկային մարմին ներկայացնելու դեպքում.

3) սույն մասի 1-ին և (կամ) 2-րդ կետերով սահմանված գործարքների հետ ուղղակիորեն կապված՝ ապրանքների փաթեթավորման, բեռնման, բեռնաթափման, ուղեկցման և համանման այլ աշխատանքների կատարումը և (կամ) ծառայությունների մատուցումը.

4) բեռների, փոստի և (կամ) ուղևորների փոխադրման՝ միջազգային տրանսպորտային ծառայությունների մատուցումը: Սույն կետի կիրառության իմաստով՝

ա. բեռների, փոստի և (կամ) ուղևորների՝ ցանկացած տեսակի տրանսպորտային միջոցով փոխադրման տրանսպորտային ծառայությունը համարվում է միջազգային, եթե այն սկսվում է Հայաստանի Հանրապետությունում և ավարտվում է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կամ եթե այն սկսվում է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս և ավարտվում է Հայաստանի Հանրապետության տարածքում.

բ. տրանսպորտային ծառայություն է համարվում նաև այլ կազմակերպությունների և (կամ) ֆիզիկական անձանց միջոցով (ներգրավմամբ) բեռների, փոստի և (կամ) ուղևորների փոխադրման կազմակերպման միջնորդական գործունեությունը.

5) ԵՏՄ միասնական մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով վերամշակման նպատակով «Վերամշակում՝ մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգով Հայաստանի Հանրապետություն ներմուծված կամ վերամշակման նպատակով ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծված հումքից ստացված ապրանքի արտահանման դեպքում հումքի վերամշակման աշխատանքների կատարումը և (կամ) ծառայությունների մատուցումը.

6) ԵՏՄ միասնական մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով նորոգման (վերանորոգման) նպատակով «Վերամշակում՝ մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգով Հայաստանի Հանրապետություն ներմուծված կամ նորոգման (վերանորոգման) նպատակով ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծված գույքի արտահանման դեպքում այդ գույքի նորոգման (վերանորոգման) համար օգտագործված պահեստամասերի, դետալների, հանգույցների, այլ լրակազմող տարրերի մատակարարումը՝ նորոգողի (վերանորոգողի) կողմից.

7) «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով Հայաստանի Հանրապետություն ներմուծված ապրանքները Հայաստանի Հանրապետություն ներմուծման մաքսային մարմնից մինչև Հայաստանի Հանրապետությունից արտահանման մաքսային մարմին տեղափոխելու հետ ուղղակիորեն կապված աշխատանքների կատարումը և (կամ) ծառայությունների մատուցումը.

8) միջազգային երթուղիներով թռիչքներ իրականացնող օդանավերի՝

ա. լիցքավորման համար անհրաժեշտ վառելանյութի ու ամբողջ երթուղու ընթացքում օդանավերում անձնակազմի և ուղևորների սպառման համար նախատեսվող ապրանքների մատակարարումը.

բ. սպասարկման (ներառյալ աերոնավիգացիոն, թռիչք-վայրէջքի), նորոգման, վերասարքավորման, միջազգային երթուղիներով փոխադրվող ուղևորների, ուղեբեռների, բեռների և փոստի սպասարկման աշխատանքների կատարումը և

(կամ) ծառայությունների մատուցումը, փոխադրման ընթացքում ուղևորներին ծառայությունների մատուցումը.

9) այն միջնորդական ծառայությունների մատուցումը, որոնք անմիջականորեն կապված են և ապահովում են սույն մասի 8-րդ կետում նշված ծառայությունների մատուցումը.

10) անմաքս առևտրի խանութից ապրանքների մանրածախ վաճառքը միջազգային երթուղիներով մեկնող կամ ժամանող ուղևորներին, ինչպես նաև այլ հարկ վճարողների կողմից անմաքս առևտրի խանութում վաճառքի համար նախատեսվող ապրանքների մատակարարումը անմաքս առևտրի խանութի կազմակերպչին.

11) այն աշխատանքների կատարումը և (կամ) ծառայությունների մատուցումը, որոնց կատարման վայրը և (կամ) մատուցման վայրը, Օրենսգրքի 39-րդ հոդվածի համաձայն, չի համարվում Հայաստանի Հանրապետությունը.

12) Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչություններին և հյուպատոսական հիմնարկներին, դրանց հավասարեցված միջազգային կազմակերպություններին (այսուհետ՝ դիվանագիտական ներկայացուցչություններ) ապրանքների մատակարարումը, նրանց համար աշխատանքների կատարումը և (կամ) ծառայությունների մատուցումը:

Սույն կետով սահմանված գործարքների նկատմամբ ԱԱՀ-ի 0 տոկոս դրույքաչափը կիրառվում է միայն այն պետությունների դիվանագիտական ներկայացուցչությունների նկատմամբ, որոնց օրենսդրությամբ ԱԱՀ-ի 0 տոկոս դրույքաչափի կիրառություն է սահմանված տվյալ երկրում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության համար, կամ եթե նման կարգ նախատեսվում է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

Սույն կետի կիրառությունն ապահովելու նպատակով, սույն կետով սահմանված դիվանագիտական ներկայացուցչությունների ցանկերը և դրանցում կատարվող փոփոխությունները Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը Կառավարության սահմանած կարգով տրամադրում է հարկային մարմնին: Սույն պարբերությամբ նշված ցանկերը և դրանցում կատարվող փոփոխությունները հարկային մարմինը տեղադրում է իր պաշտոնական ինտերնետային կայքում:

Սույն կետով սահմանված դեպքերում ԱԱՀ-ի 0 տոկոս դրույքաչափի՝

ա. կիրառությունը հիմնավորվում է ապրանք մատակարարող, աշխատանք կատարող և (կամ) ծառայություն մատուցող ԱԱՀ վճարողի կողմից Օրենսգրքի 56-րդ հոդվածով սահմանված կարգով համապատասխան հաշիվ վավերագրերի դուրսգրմամբ,

բ. կիրառությունը և դիվանագիտական ներկայացուցչություններին իրենց կողմից ձեռք բերված ապրանքների, ընդունված աշխատանքների և (կամ) ստացված ծառայությունների գներում ներառված ԱԱՀ-ի գումարների փոխհատուցումն իրականացվում է Կառավարության սահմանած կարգով, եթե սույն կետում նշված գործարքների մասով հաշիվ վավերագրերի դուրս գրման փոխարեն դուրս են գրվել հարկային հաշիվներ կամ հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոններ.

13) Հայաստանի Հանրապետությունում սահմանված կարգով գրանցված Էլեկտրակապի օպերատորի կամ փոստային կապի օպերատորի կողմից օտարերկրյա համապատասխան օպերատորներին այն ծառայությունների մատուցումը, որոնց մասով, համապատասխանաբար՝ Էլեկտրակապի միջազգային միության (ԷՄՄ) կանոնադրությանը կամ Համաշխարհային փոստային միության կանոնադրությանը համապատասխան, կատարվում է միջազգային փոխկապակցման ծառայությունների շրջանակներում միմյանց մատուցված ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարների փոխադարձ հաշվարկ:

(65-րդ հոդվածը փոփ. 21.12.17 ՀՕ-266-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն, լրաց. 21.06.18 ՀՕ-338-Ն)

ԳԼՈՒԽ 14

ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ

Հոդված 66. Հարկային հաշիվների և ճշգրտող հարկային հաշիվների դուրսգրումը

1. ԱԱՀ վճարողները Օրենսգրքի 56-րդ հոդվածով սահմանված դեպքերում պարտավոր են դուրս գրել հարկային հաշիվներ, իսկ Օրենսգրքի 42-րդ հոդվածով սահմանված դեպքերում՝ նաև ճշգրտող հարկային հաշիվներ (այսուհետ սույն բաժնում՝ հարկային հաշիվներ):

2. Անկախ սույն հոդվածի 1-ին մասի դրույթներից, Օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 1-5-րդ կետերով սահմանված դեպքերում հարկային հաշիվներ դուրս չեն գրվում:

Հոդված 67. Հարկային հաշիվների դուրսգրման սահմանափակումները

1. Հարկային հաշիվներ դուրս չեն գրում՝

1) ԱԱՀ վճարող չհամարվողները՝ ԱԱՀ վճարող չհամարվելու հաշվետու ժամանակաշրջաններում իրականացված գործարքների մասով: Սույն կետի գործողությունը չի տարածվում այն դեպքերի վրա, երբ հարկային հաշիվը դուրս է

գրվում հանձնարարության կամ պրինցիպալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրերով ապրանքներ մատակարարող կամ աշխատանքներ կատարող կամ ծառայություններ մատուցող՝ հանձնակատար կամ գործակալ համարվող կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից՝ համապատասխանաբար ԱԱՀ վճարող համարվող հանձնարարողի կամ ԱԱՀ վճարող համարվող պրինցիպալի անունից.

2) ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման այն գործարքների մասով, որոնք ազատված են ԱԱՀ-ից.

3) ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման այն գործարքների մասով, որոնք ենթակա են ԱԱՀ-ի 0 տոկոս դրույքաչափով հարկման.

4) Օրենսգրքի 13-րդ բաժնով սահմանված՝ հատուկ հարկային համակարգերի շրջանակներում կատարվող՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման գործարքների մասով.

5) ապրանքի մատակարարման և ծառայության մատուցման այն գործարքների մասով, որոնք, Օրենսգրքի 60-րդ հոդվածի՝ համապատասխանաբար 2-րդ և 3-րդ մասերի համաձայն, չեն համարվում ԱԱՀ-ով հարկման օբյեկտ:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերում հարկային հաշվի փոխարեն կազմվում և Օրենսգրքի 56-րդ հոդվածով սահմանված դեպքերում և կարգով դուրս են գրվում հաշիվ վավերագրեր:

3. Եթե ԱԱՀ վճարողը միաժամանակ իրականացնում է սույն հոդվածի 1-ին մասի 2-5-րդ կետերով սահմանված որևէ գործարք և այնպիսի գործարք, որի մասով պետք է դուրս գրվի հարկային հաշիվ, ապա կարող է հարկային հաշվում ներառել նաև սույն հոդվածի 1-ին մասի 2-5-րդ կետերով սահմանված գործարքը:

(67-րդ հոդվածը լրաց., փոփ. 21.06.18 ՀՕ-338-Ն)

Հոդված 68. Հարկային հաշիվների վավերացումը

1. ԱԱՀ վճարողները էլեկտրոնային ստորագրությամբ վավերացնում են հաշվետու ժամանակաշրջանում ձեռք բերված ապրանքների, ընդունված աշխատանքների և ստացված ծառայությունների գծով մատակարարների, աշխատանք կատարողների և ծառայություն մատուցողների (այսուհետ սույն բաժնում՝ մատակարարների) կողմից դուրս գրված հարկային հաշիվները:

2. Օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքում Օրենսգրքի 56-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված կարգով հարկային հաշվի դուրսգրումը համարվում է տվյալ հարկային հաշվի՝ էլեկտրոնային ստորագրությամբ վավերացում:

Հոդված 69. Հաշվետու ժամանակաշրջանը

1. ԱԱՀ-ի հաշվարկման և վճարման համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր հաշվետու ամիսը:

Հոդված 70. Պետական բյուջե վճարման ենթակա ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման կարգը

1. ԱԱՀ վճարողները հաշվետու ժամանակաշրջանի համար պետական բյուջե են վճարում այդ ժամանակաշրջանում իրականացված՝ Օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված՝ հարկման օբյեկտ համարվող գործարքների հարկման բազայի նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարների և Օրենսգրքի 71-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվանցվող (պակասեցվող) ԱԱՀ-ի գումարների (եթե Օրենսգրքի 72-րդ հոդվածով այլ բան սահմանված չէ) դրական տարբերությունը:

2. Հայաստանի Հանրապետությունում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետությունում իրականացված՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման, ինչպես նաև այդ ոչ ռեզիդենտ կազմակերպությանը կամ Հայաստանի Հանրապետությունում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձին սեփականության իրավունքով պատկանող ապրանքները Հայաստանի Հանրապետություն ներմուծելու (այդ թվում՝ ԵՏՄ անդամ պետություններից)՝ ԱԱՀ-ով հարկման ենթակա գործարքների ու գործառնությունների գծով Օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում ԱԱՀ-ի հաշվարկման և վճարման պարտավորությունը այդ ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի փոխարեն՝ որպես հարկային գործակալ, կրում են պայմանագրային հարաբերությունների կողմ հանդիսացող ԱԱՀ վճարողները:

Սույն մասով սահմանված դեպքերում՝

1) ԱԱՀ-ով հարկման ենթակա գործարքների ու գործառնությունների հարկման բազան որոշվում է Օրենսգրքի 61-րդ և 62-րդ հոդվածներով սահմանված կարգով.

2) ԱԱՀ-ով հարկման ենթակա գործարքները համարվում են Հայաստանի Հանրապետությունում իրականացված, եթե ապրանքի մատակարարման վայրը Օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն, իսկ աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման վայրը, Օրենսգրքի 39-րդ հոդվածի համաձայն, համարվում է Հայաստանի Հանրապետությունը.

3) ԱԱՀ-ով հարկման ենթակա գործարքների մասով ԱԱՀ-ի հաշվարկման ժամանակ ԱԱՀ-ի շեմը հաշվի չի առնվում.

4) պայմանագրային հարաբերությունների կողմ հանդիսացող ԱԱՀ վճարողն ազատվում է ԱԱՀ-ի հաշվարկման և վճարման պարտավորությունից, եթե ապրանքի ներմուծման փաստաթղթերով (այդ թվում՝ ներմուծման հարկային հայտարարագրով կամ ներմուծման մաքսային հայտարարագրով) հիմնավորվում է, որ ներմուծումը կատարվել է ԱԱՀ վճարողի անունով՝ անկախ ապրանքի նկատմամբ սեփականության իրավունքը Հայաստանի Հանրապետության տարածքում փոխանցվելու հանգամանքից.

5) Օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում ԱԱՀ-ի հաշվարկման և վճարման պարտավորությունը կրում է Հայաստանի Հանրապետությունում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպությունը կամ մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձը, եթե պայմանագրային հարաբերությունների կողմը համարվում է միկրոձեռնարկատիրության սուբյեկտ կամ շրջանառության հարկ վճարող:

(70-րդ հոդվածը փոփ. 21.06.18 ՀՕ-338-Ն, 25.06.19 ՀՕ-68-Ն)

Հոդված 71. Ավելացված արժեքի հարկի հաշվանցումների (պակասեցումների) իրականացման կարգը

1. ԱԱՀ-ի հաշվանցվող (պակասեցվող) գումարներ են համարվում՝

1) Հայաստանի Հանրապետության տարածքում հաշվետու ժամանակաշրջանում ձեռք բերված ապրանքների, ընդունված աշխատանքների և (կամ) ստացված ծառայությունների գծով մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվներում (այդ թվում՝ այն դեպքում, երբ հարկային հաշվի դուրսգրման ամսաթիվը ներառված է հաշվետու ժամանակաշրջանին նախորդող կամ հաջորդող որևէ հաշվետու ժամանակաշրջանում, սակայն հարկային հաշվում նշված գործարքը կատարվել է (այսինքն՝ հարկային հաշվում նշված՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ամսաթիվը ներառված է) այդ հաշվետու ժամանակաշրջանում) առանձնացված ԱԱՀ-ի գումարները: Սույն կետով սահմանված ԱԱՀ-ի գումարները հաշվանցվում (պակասեցվում) են՝

ա. ապրանքների ձեռքբերման, աշխատանքների ընդունման և (կամ) ծառայությունների ստացման օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով, եթե համապատասխան գործարքին վերաբերող՝ մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվը ապրանքը ձեռք բերողի, աշխատանքն ընդունողի և (կամ) ծառայությունը ստացողի կողմից Օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով վավերացվել է մինչև ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի ներկայացման համար Օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վերջնաժամկետի օրը ներառյալ,

բ. համապատասխան գործարքին վերաբերող՝ մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվը ապրանքը ձեռք բերողի, աշխատանքն ընդունողի և (կամ) ծառայությունը ստացողի կողմից Օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով վավերացվելու օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով, եթե հարկային հաշիվը չի վավերացվել մինչև ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի ներկայացման համար Օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վերջնաժամկետի օրը ներառյալ.

2) «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված ապրանքների համար Օրենսգրքով սահմանված կարգով և չափով հաշվարկված և վճարված ԱԱՀ-ի գումարները: Սույն կետով սահմանված ԱԱՀ-ի գումարները հաշվանցվում (պակասեցվում) են՝

ա. ապրանքների ներմուծման մաքսային հայտարարագրի գրանցման օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով, բացառությամբ սույն կետի «գ» ենթակետով սահմանված դեպքերի,

բ. ԵՏՄ միասնական մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքների ներմուծման ճշտված մաքսային հայտարարագիր ներկայացնելու դեպքում՝ ներմուծման ճշտված մաքսային հայտարարագրի գրանցման և ԱԱՀ-ի լրացուցիչ գումարների վճարման օրերն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի, իսկ այդ օրերը տարբեր հաշվետու ժամանակաշրջաններում ներառված լինելու դեպքում՝ դրանցից վերջինը ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով՝ հաշվանցման (պակասեցման) ենթակա ԱԱՀ-ի լրացուցիչ գումարի մասով,

գ. Օրենսգրքի 79-րդ հոդվածով սահմանված՝ ապրանքների ներմուծման մասով մաքսային մարմնին վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարի վճարման ժամկետի հետաձգման դեպքում՝ ԱԱՀ-ի համապատասխան գումարի վճարման (այդ թվում՝ մասնակի) օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով՝ վճարված ԱԱՀ-ի գումարի չափով,

դ. ապրանքների ներմուծման գծով մաքսային մարմնի կողմից իրականացվող հետբացթողումային ստուգման

արդյունքում ԱԱՀ-ի գծով լրացուցիչ պարտավորություն առաջադրելու դեպքում՝ այդ պարտավորության կատարման (այդ թվում՝ մասնակի) օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով՝ վճարված ԱԱՀ-ի գումարի չափով.

3) ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների համար Օրենսգրքով սահմանված կարգով և չափով հաշվարկված և վճարված ԱԱՀ-ի գումարները: Սույն կետով սահմանված ԱԱՀ-ի գումարները հաշվանցվում (պակասեցվում) են՝

ա. ապրանքները Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու) օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով, եթե ապրանքների ներմուծման հարկային հայտարարագիրը հարկային մարմին է ներկայացվել և ներմուծման մասով ԱԱՀ-ի գումարները (մասնակի վճարման դեպքում՝ մասնակի վճարված ԱԱՀ-ի գումարները) վճարվել են մինչև ապրանքները Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու) օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի ներկայացման համար Օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վերջնաժամկետի օրը ներառյալ,

բ. ապրանքների ներմուծման հարկային հայտարարագրի՝ հարկային մարմին ներկայացման և ԱԱՀ-ի գումարների վճարման օրերը ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի, իսկ այդ օրերը տարբեր հաշվետու ժամանակաշրջաններում ներառված լինելու դեպքում՝ դրանցից վերջինը ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով, այդ թվում՝ սույն կետի «դ» ենթակետով սահմանված դեպքերում, եթե ապրանքների ներմուծման հարկային հայտարարագիրը հարկային մարմին չի ներկայացվել, և (կամ) ներմուծման մասով ԱԱՀ-ի գումարները չեն վճարվել մինչև ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի ներկայացման համար Օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վերջնաժամկետի օրը ներառյալ,

գ. ԵՏՄ միասնական մաքսային օրենսդրությամբ կամ Օրենսգրքով սահմանված կարգով ապրանքների ներմուծման ճշտված հարկային հայտարարագիր ներկայացնելու դեպքում՝ ներմուծման ճշտված հարկային հայտարարագրի ներկայացման և ԱԱՀ-ի լրացուցիչ գումարների վճարման օրերն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի, իսկ այդ օրերը տարբեր հաշվետու ժամանակաշրջաններում ներառված լինելու դեպքում՝ դրանցից վերջինը ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով՝ հաշվանցման (պակասեցման) ենթակա ԱԱՀ-ի լրացուցիչ գումարի մասով, եթե սույն ենթակետով այլ բան սահմանված չէ: ԵՏՄ միասնական մաքսային օրենսդրությամբ կամ Օրենսգրքով սահմանված կարգով ապրանքների ներմուծման ճշտված հարկային հայտարարագիրը մինչև հաշվետու ժամանակաշրջանի համար ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի ներկայացման համար Օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վերջնաժամկետի օրը ներառյալ ներկայացնելու և մինչև այդ օրը ԱԱՀ-ի լրացուցիչ գումարները վճարված լինելու դեպքում ներմուծման ճշտված հարկային հայտարարագրով արտացոլված ԱԱՀ-ի լրացուցիչ գումարները հաշվանցվում են տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով,

դ. Օրենսգրքի 79-րդ հոդվածով սահմանված՝ ապրանքների ներմուծման մասով հարկային մարմնին վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարի վճարման ժամկետի հետաձգման դեպքում՝ ԱԱՀ-ի համապատասխան գումարի վճարման (այդ թվում՝ մասնակի) օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով՝ վճարված ԱԱՀ-ի գումարի չափով,

ե. հարկային մարմնի կողմից իրականացվող ստուգման արդյունքում ապրանքների ներմուծման մասով ԱԱՀ-ի գծով լրացուցիչ պարտավորություն առաջադրելու դեպքում՝ այդ պարտավորության կատարման (այդ թվում՝ մասնակի) օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով՝ վճարված ԱԱՀ-ի լրացուցիչ գումարի չափով.

4) Հայաստանի Հանրապետության տարածքում հաշվետու ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետությունում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպությունից ձեռք բերված ապրանքների, ընդունված աշխատանքների և (կամ) ստացված ծառայությունների գծով Օրենսգրքի 56-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված կարգով ԱԱՀ վճարողների կողմից դուրս գրվող հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները: Սույն կետով սահմանված ԱԱՀ-ի գումարները հաշվանցվում (պակասեցվում) են՝

ա. ապրանքների ձեռքբերման, աշխատանքների ընդունման և (կամ) ծառայությունների ստացման օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով, եթե համապատասխան գործարքին վերաբերող հարկային հաշիվը դուրս է գրվել մինչև ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի ներկայացման համար Օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վերջնաժամկետի օրը ներառյալ,

բ. համապատասխան գործարքին վերաբերող հարկային հաշվի դուրսգրման օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով, եթե հարկային հաշիվը դուրս է գրվել ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի ներկայացման համար Օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վերջնաժամկետից հետո.

5) կոմիսիայի կամ գործակալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրերի հիման վրա կոմիտենտի և կոմիսիոների կամ պրինցիպալի և գործակալի միջև իրականացված գործարքների մասով կոմիտենտի կամ պրինցիպալի կողմից համապատասխանաբար կոմիսիոների կամ գործակալի անունով դուրս գրված

հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները՝ սույն մասի 1-ին կետի «ա» և «բ» ենթակետերով սահմանված կանոններով.

6) կոմիսիայի կամ գործակալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրերի հիման վրա կոմիսիոների և կոմիտենտի կամ գործակալի և պրինցիպալի միջև իրականացված գործարքների մասով կոմիսիոների կամ գործակալի կողմից համապատասխանաբար կոմիտենտի կամ պրինցիպալի անունով դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները՝ սույն մասի 1-ին կետի «ա» և «բ» ենթակետերով սահմանված կանոններով.

7) կոմիսիայի կամ գործակալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրերի հիման վրա կոմիսիոների և երրորդ կողմի կամ գործակալի և երրորդ կողմի միջև իրականացված գործարքների մասով համապատասխանաբար կոմիսիոների կամ գործակալի կողմից երրորդ կողմի անունով դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները՝ սույն մասի 1-ին կետի «ա» և «բ» ենթակետերով սահմանված կանոններով.

8) կոմիսիայի կամ գործակալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրերի հիման վրա երրորդ կողմի և կոմիսիոների կամ երրորդ կողմի և գործակալի միջև իրականացված գործարքների մասով երրորդ կողմի կողմից համապատասխանաբար կոմիսիոների կամ գործակալի անունով դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները՝ սույն մասի 1-ին կետի «ա» և «բ» ենթակետերով սահմանված կանոններով.

9) հավատարմագրային կառավարման հանձնված գույքի կազմում ներառվող՝ այդ գործարքների իրականացման նպատակով կատարված ձեռքբերումների գծով հարկային հաշիվներում, ներմուծման մաքսային և հարկային հայտարարագրերում առանձնացված ԱԱՀ-ի գումարները՝ սույն հոդվածով սահմանված կանոններով:

(71-րդ հոդվածը լրաց. 21.12.17 ՀՕ-266-Ն, փոփ. 21.06.18 ՀՕ-338-Ն, խմբ. 25.06.19 ՀՕ-68-Ն)

Հոդված 72. Հաշվանցումների (պակասեցումների) կատարման սահմանափակումները

1. Օրենսգրքի 70-րդ և 74-րդ հոդվածներով սահմանված կարգով բյուջե վճարման ենթակա կամ բյուջեից փոխհատուցման ենթակա ԱԱՀ-ի գումարների հաշվարկման նպատակով ԱԱՀ-ի հաշվանցումներ (պակասեցումներ) չեն կատարում՝

1) ԱԱՀ վճարող չհամարվողները.

2) եթե ձեռք բերված և (կամ) ներմուծված ապրանքները, ընդունված աշխատանքները և (կամ) ստացված ծառայությունները վերագրվում են ԱԱՀ-ից ազատված գործարքներին, բացառությամբ Օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 19-րդ և 31-րդ կետերով սահմանված դեպքերի, երբ ԱԱՀ-ի հաշվանցումները (պակասեցումները) կատարվում են Օրենսգրքով սահմանված կարգով՝ անկախ ձեռք բերված և (կամ) ներմուծված ապրանքները, ընդունված աշխատանքները և (կամ) ստացված ծառայությունները ԱԱՀ-ից ազատված գործարքներին վերագրվելու հանգամանքից.

3) եթե ձեռք բերված և (կամ) ներմուծված ապրանքները, ընդունված աշխատանքները և (կամ) ստացված ծառայությունները վերագրվում են Օրենսգրքի 13-րդ բաժնով սահմանված՝ հարկման հատուկ համակարգերի շրջանակներում հարկման ենթակա գործարքներին.

4) եթե ձեռք բերված և (կամ) ներմուծված ապրանքները, ընդունված աշխատանքները և (կամ) ստացված ծառայությունները վերագրվում են այն գործարքներին, որոնք, Օրենսգրքի 60-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն, չեն համարվում ԱԱՀ-ով հարկման օբյեկտ.

5) եթե ձեռք բերված և (կամ) ներմուծված ապրանքները, ընդունված աշխատանքները և (կամ) ստացված ծառայությունները վերագրվում են Օրենսգրքի 67-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներից որևէ մեկի խախտմամբ դուրս գրված հարկային հաշվին վերաբերող գործարքին.

6) եթե հարկային հաշիվը, Օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 55-րդ կետի համաձայն, համարվում է անապրանք փաստաթուղթ.

7) եթե հարկային հաշվին վերաբերող գործարքը, Օրենսգրքի 41-րդ հոդվածի համաձայն, ճանաչվել է անվավեր.

8) եթե ոչ իրացման նպատակով ձեռք են բերվել և (կամ) ներմուծվել են թեթև մարդատար ավտոմեքենաներ, բացառությամբ այն դեպքերի, երբ թեթև մարդատար ավտոմեքենաներն օգտագործվում են վարձույթով տրամադրելու համար: Սույն կետի կիրառության իմաստով, համարվում է, որ թեթև մարդատար ավտոմեքենան ձեռք է բերվել և (կամ) ներմուծվել է ոչ իրացման նպատակով, եթե ավտոմեքենայի սեփականության իրավունքը օրենքով սահմանված կարգով ստացել է պետական գրանցում:

(72-րդ հոդվածը փոփ. 21.12.17 ՀՕ-266-Ն, 21.06.18 ՀՕ-338-Ն)

Հոդված 73. Պարտավորությունների ու հաշվանցումների (պակասեցումների) վերաձևակերպման կարգը

1. Եթե ապրանքի ձեռքբերումը կամ ներմուծումը (այդ թվում՝ հիմնական միջոցի կառուցումը), աշխատանքի

ընդունումը կամ ծառայության ստացումը (այսուհետ սույն բաժնում՝ ձեռքբերումներ) ուղղակիորեն վերագրվում են ԱԱՀ-ի 20 կամ 0 տոկոս դրույքաչափով հարկման ենթակա գործարքներին (այսուհետ սույն բաժնում՝ ԱԱՀ-ով հարկվող գործարքներ) կամ հնարավոր չէ ուղղակիորեն վերագրել ԱԱՀ-ով հարկվող կամ Օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 2-4-րդ կետերով սահմանված գործարքներին (այսուհետ սույն բաժնում՝ ԱԱՀ-ով չհարկվող գործարքներ), ապա այդ ձեռքբերումների գծով ԱԱՀ-ի գումարների հաշվանցումը (պակասեցումը) Օրենսգրքով սահմանված կարգով կատարվում է ձեռքբերումների կատարման հաշվետու ժամանակաշրջանում:

2. Եթե ձեռքբերումները, որոնց մասով նախորդ հաշվետու ժամանակաշրջաններում Օրենսգրքով սահմանված կարգով կատարվել է ԱԱՀ-ի գումարների հաշվանցում (պակասեցում), հետագա հաշվետու ժամանակաշրջաններում ամբողջությամբ կամ մասնակիորեն վերագրվում են ԱԱՀ-ով չհարկվող գործարքներին, ապա՝

1) ապրանքի (բացառությամբ հիմնական միջոցի), աշխատանքի կամ ծառայության մասով՝

ա. հաշվանցված (պակասեցված) ԱԱՀ-ի գումարները ենթակա են վերաձևակերպման՝ հաշվետու ժամանակաշրջանում հաշվանցման (պակասեցման) ենթակա գումարներից նվազեցման՝ տվյալ հաշվետու ժամանակաշրջանում ԱԱՀ-ով չհարկվող գործարքներին ուղղակիորեն վերագրված մասին համապատասխանող արժեքի նկատմամբ ԱԱՀ-ի 20 տոկոս դրույքաչափով հաշվարկված գումարի չափով,

բ. հաշվանցված (պակասեցված) ԱԱՀ-ի գումարները ենթակա են վերաձևակերպման՝ հաշվետու ժամանակաշրջանում հաշվանցման (պակասեցման) ենթակա գումարներից նվազեցման՝ հաշվետու ժամանակաշրջանում իրականացված բոլոր գործարքների ընդհանուր հարկման բազայի մեջ ԱԱՀ-ով չհարկվող գործարքների հարկման բազայի տեսակարար կշռին համապատասխանող գործակցով որոշվող հարկի գումարի չափով, եթե հաշվետու ժամանակաշրջանում տվյալ ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը վերագրվում է ԱԱՀ-ով հարկվող և ԱԱՀ-ով չհարկվող գործարքներին, և եթե տվյալ ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր չէ ուղղակիորեն վերագրել ԱԱՀ-ով հարկվող և ԱԱՀ-ով չհարկվող գործարքներին,

գ. հաշվանցված (պակասեցված) ԱԱՀ-ի գումարները ենթակա են վերաձևակերպման՝ հաշվետու ժամանակաշրջանում հաշվանցման (պակասեցման) ենթակա գումարներից նվազեցման՝ տվյալ ապրանքի, աշխատանքի կամ ծառայության՝ ԱԱՀ-ով հարկվող գործարքներին չվերագրված մասին համապատասխանող հարկման բազայի նկատմամբ ԱԱՀ-ի 20 տոկոս դրույքաչափով հաշվարկված գումարի չափով, եթե հաշվետու ժամանակաշրջանում ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումն ԱԱՀ-ով չհարկվող գործարք է.

2) հիմնական միջոցի կամ ոչ նյութական ակտիվի մասով՝

ա. հաշվանցված (պակասեցված) ԱԱՀ-ի գումարները ենթակա են վերաձևակերպման՝ հաշվետու ժամանակաշրջանում հաշվանցման (պակասեցման) ենթակա գումարներից նվազեցման՝ տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար Օրենսգրքի 121-րդ հոդվածով սահմանված չափերով այդ հիմնական միջոցի կամ ոչ նյութական ակտիվի համար հաշվարկվող ամորտիզացիոն մասհանման գումարի նկատմամբ ԱԱՀ-ի 20 տոկոս դրույքաչափով հաշվարկված գումարի չափով, եթե տվյալ հաշվետու ժամանակաշրջանում այդ հիմնական միջոցի կամ ոչ նյութական ակտիվի օգտագործումը վերագրվել է բացառապես ԱԱՀ-ով չհարկվող գործարքներին,

բ. հաշվանցված (պակասեցված) ԱԱՀ-ի գումարները ենթակա են վերաձևակերպման՝ հաշվետու ժամանակաշրջանում հաշվանցման (պակասեցման) ենթակա գումարներից նվազեցման՝ տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար Օրենսգրքի 121-րդ հոդվածով սահմանված չափերով այդ հիմնական միջոցի կամ ոչ նյութական ակտիվի համար հաշվարկվող ամորտիզացիոն մասհանման գումարի նկատմամբ ԱԱՀ-ի 20 տոկոս դրույքաչափով հաշվարկված գումարի և հաշվետու ժամանակաշրջանում իրականացված բոլոր գործարքների ընդհանուր հարկման բազայի մեջ ԱԱՀ-ով չհարկվող գործարքների հարկման բազայի տեսակարար կշռին համապատասխանող գործակցի արտադրյալի չափով, եթե հաշվետու ժամանակաշրջանում տվյալ հիմնական միջոցը կամ ոչ նյութական ակտիվը միաժամանակ վերագրվում է ԱԱՀ-ով հարկվող և ԱԱՀ-ով չհարկվող գործարքներին,

գ. հաշվանցված (պակասեցված) ԱԱՀ-ի գումարները ենթակա են վերաձևակերպման՝ հաշվետու ժամանակաշրջանում հաշվանցման (պակասեցման) ենթակա գումարներից նվազեցման՝ տվյալ հիմնական միջոցի կամ ոչ նյութական ակտիվի հաշվեկշռային արժեքի նկատմամբ ԱԱՀ-ի 20 տոկոս դրույքաչափով հաշվարկված գումարի չափով, եթե հաշվետու ժամանակաշրջանում տվյալ հիմնական միջոցի կամ ոչ նյութական ակտիվի օտարումն ԱԱՀ-ով չհարկվող գործարք է:

3. Եթե ձեռքբերումներն ուղղակիորեն վերագրվում են ԱԱՀ-ով չհարկվող գործարքներին, ապա այդ ձեռքբերումների գծով ԱԱՀ-ի գումարները հաշվանցման (պակասեցման) ենթակա չեն ձեռքբերումների կատարման հաշվետու ժամանակաշրջանում:

4. Եթե ձեռքբերումները, որոնց մասով նախորդ հաշվետու ժամանակաշրջաններում Օրենսգրքով սահմանված կարգով կատարվել է ԱԱՀ-ի հաշվանցվող (պակասեցվող) գումարների նվազեցում (ԱԱՀ-ի գումարները Օրենսգրքի 6-րդ բաժնով սահմանված կարգով միացվել են ձեռքբերումների արժեքին), հետագա հաշվետու ժամանակաշրջաններում ամբողջությամբ կամ մասնակիորեն վերագրվում են ԱԱՀ-ով հարկվող գործարքներին, ապա՝

1) ապրանքի (բացառությամբ հիմնական միջոցի), աշխատանքի կամ ծառայության մասով՝

ա. չհաշվանցված (չպակասեցված) ԱԱՀ-ի գումարները ենթակա են վերաձևակերպման՝ հաշվետու ժամանակաշրջանում հաշվանցման (պակասեցման) ենթակա գումարներին ավելացման՝ տվյալ հաշվետու ժամանակաշրջանում ԱԱՀ-ով հարկվող գործարքներին ուղղակիորեն վերագրված մասին համապատասխանող արժեքի

նկատմամբ ԱԱՀ-ի 16.67 տոկոս հաշվարկային դրույքաչափով հաշվարկված գումարի չափով,

բ. չհաշվանցված (չպակասեցված) ԱԱՀ-ի գումարները ենթակա են վերաձևակերպման՝ հաշվետու ժամանակաշրջանում հաշվանցման (պակասեցման) ենթակա գումարներին ավելացման՝ հաշվետու ժամանակաշրջանում իրականացված բոլոր գործարքների ընդհանուր հարկման բազայի մեջ ԱԱՀ-ով հարկվող գործարքների հարկման բազայի տեսակարար կշռին համապատասխանող գործակցով որոշվող հարկի գումարի չափով, եթե հաշվետու ժամանակաշրջանում տվյալ ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը վերագրվում է ԱԱՀ-ով հարկվող և ԱԱՀ-ով չհարկվող գործարքներին, և եթե տվյալ ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր չէ ուղղակիորեն վերագրել ԱԱՀ-ով հարկվող և ԱԱՀ-ով չհարկվող գործարքներին,

գ. չհաշվանցված (չպակասեցված) ԱԱՀ-ի գումարները ենթակա են վերաձևակերպման՝ հաշվետու ժամանակաշրջանում հաշվանցման (պակասեցման) ենթակա գումարներին ավելացման՝ տվյալ ապրանքի, աշխատանքի կամ ծառայության՝ ԱԱՀ-ով չհարկվող գործարքներին չվերագրված մասին համապատասխանող հարկման բազայի նկատմամբ ԱԱՀ-ի 16.67 տոկոս հաշվարկային դրույքաչափով հաշվարկված գումարի չափով, եթե հաշվետու ժամանակաշրջանում ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումն ԱԱՀ-ով հարկվող գործարք է.

2) հիմնական միջոցի կամ ոչ նյութական ակտիվի մասով՝

ա. չհաշվանցված (չպակասեցված) ԱԱՀ-ի գումարները ենթակա են վերաձևակերպման՝ հաշվետու ժամանակաշրջանում հաշվանցման (պակասեցման) ենթակա գումարներին ավելացման՝ տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար Օրենսգրքի 121-րդ հոդվածով սահմանված չափերով այդ հիմնական միջոցի կամ ոչ նյութական ակտիվի համար հաշվարկվող ամորտիզացիոն մասհանման գումարի նկատմամբ ԱԱՀ-ի 16.67 տոկոս հաշվարկային դրույքաչափով հաշվարկված գումարի չափով, եթե տվյալ հաշվետու ժամանակաշրջանում այդ հիմնական միջոցի կամ ոչ նյութական ակտիվի օգտագործումը վերագրվել է բացառապես ԱԱՀ-ով հարկվող գործարքներին,

բ. չհաշվանցված (չպակասեցված) ԱԱՀ-ի գումարները ենթակա են վերաձևակերպման՝ հաշվետու ժամանակաշրջանում հաշվանցման (պակասեցման) ենթակա գումարներին ավելացման՝ տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար Օրենսգրքի 121-րդ հոդվածով սահմանված չափերով այդ հիմնական միջոցի կամ ոչ նյութական ակտիվի համար հաշվարկվող ամորտիզացիոն մասհանման գումարի նկատմամբ ԱԱՀ-ի 16.67 տոկոս հաշվարկային դրույքաչափով հաշվարկված գումարի և հաշվետու ժամանակաշրջանում իրականացված բոլոր գործարքների ընդհանուր հարկման բազայի մեջ ԱԱՀ-ով հարկվող գործարքների հարկման բազայի տեսակարար կշռին համապատասխանող գործակցի արտադրյալի չափով, եթե հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում տվյալ հիմնական միջոցը կամ ոչ նյութական ակտիվը միաժամանակ վերագրվում է ԱԱՀ-ով հարկվող և ԱԱՀ-ով չհարկվող գործարքներին,

գ. չհաշվանցված (չպակասեցված) ԱԱՀ-ի գումարները ենթակա են վերաձևակերպման՝ հաշվետու ժամանակաշրջանում հաշվանցման (պակասեցման) ենթակա գումարներին ավելացման՝ տվյալ հիմնական միջոցի կամ ոչ նյութական ակտիվի հաշվեկշռային արժեքի նկատմամբ ԱԱՀ-ի 16.67 տոկոս հաշվարկային դրույքաչափով հաշվարկված գումարի չափով, եթե հաշվետու ժամանակաշրջանում տվյալ հիմնական միջոցի կամ ոչ նյութական ակտիվի օտարումն ԱԱՀ-ով հարկվող գործարք է:

5. Եթե սույն հոդվածով սահմանված կարգով որոշվող՝ հաշվանցման (պակասեցման) ենթակա գումարի հաշվանցումը (պակասեցումը) հետաձգվում է Օրենսգրքի 71-րդ հոդվածով սահմանված հիմքերով, ապա այդ գումարների հաշվանցումը (պակասեցումը) կատարվում է դրա իրավունքի առաջացման հաշվետու ժամանակաշրջաններում՝ հիմք ընդունելով համապատասխան ձեռքբերումների կատարման հաշվետու ժամանակաշրջանում իրականացված՝ ԱԱՀ-ով հարկվող կամ ԱԱՀ-ով չհարկվող գործարքների հարկման բազաների տեսակարար կշիռները՝ առանց հաշվի առնելու հաշվանցման (պակասեցման) իրավունքի առաջացման հաշվետու ժամանակաշրջանում իրականացված՝ ԱԱՀ-ով հարկվող կամ ԱԱՀ-ով չհարկվող գործարքների հարկման բազաների տեսակարար կշիռները:

6. ԱԱՀ վճարողների կատարած ձեռքբերումների կորստի դեպքում այդ ձեռքբերումներին վերաբերող ԱԱՀ-ի գումարները ենթակա չեն հաշվանցման (պակասեցման), եթե այդ կորուստները Օրենսգրքի 6-րդ բաժնի համաձայն, հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցման ենթակա չեն: Օրենսգրքի 6-րդ բաժնի համաձայն՝ կորուստների մեծությունը տարեկան կտրվածքով սահմանված լինելու դեպքում ԱԱՀ-ի յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում կորստի տարեկան նորմայի համեմատությամբ ավել կամ պակաս հաշվարկված ԱԱՀ-ի հաշվանցվող (պակասեցվող) գումարը տարեկան արդյունքներով վերահաշվարկվում է տվյալ տարվա ԱԱՀ-ի վերջին հաշվետու ժամանակաշրջանում՝ տարբերությունը դիտարկելով որպես վերջին հաշվետու ժամանակաշրջանում ԱԱՀ-ի հաշվանցվող (պակասեցվող) գումարի ավելացում կամ պակասեցում:

7. ԱԱՀ վճարողների կողմից հիմնական միջոցի լուծարման դեպքում, որի մասով նախորդ հաշվետու ժամանակաշրջաններում Օրենսգրքով սահմանված կարգով կատարվել է ԱԱՀ-ի գումարների հաշվանցում (պակասեցում), հաշվանցված (պակասեցված) ԱԱՀ-ի գումարները ենթակա են վերաձևակերպման՝ հաշվետու ժամանակաշրջանում հաշվանցման (պակասեցման) ենթակա գումարներից նվազեցման՝ տվյալ հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի նկատմամբ ԱԱՀ-ի 20 տոկոս դրույքաչափով հաշվարկված գումարի չափով:

Սույն մասում նշված հիմնական միջոցը հետագայում որպես նույն նպատակային նշանակության հիմնական միջոց օտարելու դեպքում սույն մասով սահմանված կարգով հաշվանցման (պակասեցման) ենթակա գումարներից նվազեցված

ԱԱՀ-ի գումարները կրկին ենթակա են վերաձևակերպման՝ օտարման օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանում հաշվանցման (պակասեցման) ենթակա գումարներին ավելացման, եթե հաշվետու ժամանակաշրջանում տվյալ հիմնական միջոցի օտարումն ԱԱՀ-ով հարկվող գործարք է:

8. Եթե ոչ իրացման նպատակով ձեռք բերված կամ ներմուծված թեթև մարդատար ավտոմեքենաների մասով ԱԱՀ-ի գումարները, Օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն, նվազեցվել են հաշվանցման (պակասեցման) ենթակա ԱԱՀ-ի գումարներից, ապա տվյալ ավտոմեքենայի հետագա օտարման դեպքում նախկինում չհաշվանցված (չպակասեցված) ԱԱՀ-ի գումարներն ավելացվում են ավտոմեքենայի օտարման օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով հաշվանցման (պակասեցման) ենթակա գումարներին՝ տվյալ ավտոմեքենայի հաշվեկշռային արժեքի նկատմամբ ԱԱՀ-ի 16.67 տոկոս հաշվարկային դրույքաչափով հաշվարկված գումարի չափով, եթե հաշվետու ժամանակաշրջանում տվյալ ավտոմեքենայի օտարումն ԱԱՀ-ով հարկվող գործարք է:

Սույն մասով սահմանված դեպքում ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով հաշվանցման (պակասեցման) ենթակա գումարներին ԱԱՀ-ի գումարների ավելացումը կատարվում է, եթե ավտոմեքենայի օտարման պահին օտարողը, Օրենսգրքի համաձայն, համարվում է ԱԱՀ վճարող՝ անկախ ավտոմեքենայի ձեռքբերման և (կամ) ներմուծման պահին ԱԱՀ վճարող համարվելու հանգամանքից:

9. Եթե ԵՏՄ միասնական մաքսային օրենսդրությամբ կամ Օրենսգրքով սահմանված կարգով ներկայացվող՝ ապրանքների ներմուծման (այդ թվում՝ ԵՏՄ անդամ պետություններից ներմուծման) ճշտված մաքսային կամ հարկային հայտարարագրով նախկինում ներկայացված՝ ներմուծման մաքսային կամ հարկային հայտարարագրում առանձնացված ԱԱՀ-ի գումարները նվազում են, ապա ներմուծման մաքսային կամ հարկային հայտարարագրում և ներմուծման ճշտված մաքսային կամ հարկային հայտարարագրում առանձնացված ԱԱՀ-ի գումարների տարբերությունը նվազեցվում է ներմուծման ճշտված մաքսային կամ հարկային հայտարարագրի գրանցման կամ հարկային մարմին ներկայացման օրը ներառող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով հաշվանցման (պակասեցման) ենթակա ԱԱՀ-ի գումարներից:

10. Եթե ապրանքների ներմուծման գծով մաքսային մարմնի կողմից իրականացվող հետբացթողումային ստուգման արդյունքում ներմուծման մաքսային հայտարարագրում առանձնացված ԱԱՀ-ի գումարները նվազում են, ապա ներմուծման մաքսային հայտարարագրում առանձնացված ԱԱՀ-ի գումարների նվազած մասը նվազեցվում է հետբացթողումային ստուգման ակտի կազմման օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով հաշվանցման (պակասեցման) ենթակա ԱԱՀ-ի գումարներից:

11. Անհատ ձեռնարկատիրոջ հաշվառումից դուրս գալու և կամ նոտարի պաշտոնից ազատվելու դեպքում համապատասխանաբար հաշվառումից դուրս գալու կամ նոտարի պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ առկա ակտիվների (բացառությամբ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների) գծով նախկինում հաշվանցված (պակասեցված) ԱԱՀ-ի գումարները, իսկ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մասով՝ նախկինում հաշվանցված ԱԱՀ-ի գումարների այն մասը, որը համապատասխանում է անհատ ձեռնարկատիրոջ հաշվառումից դուրս գալու կամ նոտարի պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ հիմնական միջոցի կամ ոչ նյութական ակտիվի հաշվեկշռային արժեքին, հաշվանցման (պակասեցման) ենթակա ԱԱՀ-ի գումարներից նվազեցվում են մինչև հաշվառումից դուրս գալը կամ մինչև նոտարի պաշտոնից ազատվելը վերջին անգամ որպես ԱԱՀ վճարող հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով: Սույն մասը կիրառվում է նաև այն դեպքում, եթե հաշվառումից դուրս գալու կամ նոտարի պաշտոնից ազատվելու պահին անհատ ձեռնարկատերը կամ նոտարը համարվում է շրջանառության հարկ վճարող կամ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ:

12. Օրենսգրքի համաձայն՝ ԱԱՀ վճարողների մոտ հարկման ընդհանուր համակարգից հարկման հատուկ համակարգեր տեղափոխվելու օրվա դրությամբ առկա կամ հարկման հատուկ համակարգում գտնվելու ընթացքում առաջացած ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարը հետագայում կրկին հարկման ընդհանուր համակարգ տեղափոխվելու դեպքում կարող է մարվել ԱԱՀ-ի պարտավորությունների հաշվին: Սույն մասի կիրառության իմաստով՝ հարկման հատուկ համակարգում գտնվելու ընթացքում առաջացած ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարը հաշվարկելիս հաշվի են առնվում հարկման ընդհանուր համակարգից հարկման հատուկ համակարգեր տեղափոխվելու օրվա դրությամբ հարկ վճարողի մոտ առկա ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարը, այդ ժամանակաշրջանում Օրենսգրքով սահմանված դեպքերում ներկայացված ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկներով պետական բյուջե վճարման կամ հաշվանցման (պակասեցման) ենթակա ԱԱՀ-ի գումարները:

13. Հաշվանցված (պակասեցված) ԱԱՀ-ի գումարների մասով սույն հոդվածով սահմանված դեպքերում և կարգով վերաձևակերպումներ (նվազեցումներ) չկատարելը, եթե այն հանգեցրել է հաշվետու ժամանակաշրջանում պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարը Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկվող չափից պակաս ցույց տալու, Օրենսգրքի 403-րդ հոդվածի կիրառության իմաստով՝ համարվում է որպես հարկային հաշվարկում հարկի գումարը պակաս ցույց տալ:

14. Սույն հոդվածով սահմանված կարգով վերաձևակերպումներ չեն կատարվում, եթե վերաձևակերպում կատարելու՝ սույն հոդվածով սահմանված հաշվետու ժամանակաշրջանում հարկ վճարողը չի համարվում ԱԱՀ վճարող:

(73-րդ հոդվածը լրաց. 21.12.17 ՀՕ-266-Ն, 21.06.18 ՀՕ-338-Ն, փոփ. 25.06.19 ՀՕ-68-Ն)

Հոդված 74. Պետական բյուջեից փոխհատուցման ենթակա ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման կարգը

1. ԱԱՀ վճարողներին հաշվետու ժամանակաշրջանի գործունեության արդյունքներով պետական բյուջեից փոխհատուցման ենթակա ԱԱՀ-ի գումարը հաշվարկվում է որպես այդ ժամանակաշրջանում իրականացված՝ Օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված՝ հարկման օբյեկտ համարվող գործարքների հարկման բազայի նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարի և Օրենսգրքի 71-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվանցվող (պակասեցվող) ԱԱՀ-ի գումարների (եթե Օրենսգրքի 72-րդ հոդվածով այլ բան սահմանված չէ) բացասական տարբերություն (այսուհետ՝ ԱԱՀ-ի փոխհատուցվող գումար):

2. Հաշվետու ժամանակաշրջանի գործունեության արդյունքներով առաջացող ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարն ուղղվում է հաշվետու ժամանակաշրջանների գործունեության արդյունքներով ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկներով առաջացող՝ պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարների, ինչպես նաև Օրենսգրքի 17-րդ բաժնով սահմանված կարգով հարկային մարմնի կողմից իրականացվող ստուգման կամ ուսումնասիրության արդյունքում արձանագրվող՝ ԱԱՀ-ի լրացուցիչ գումարների մարմանը, բացառությամբ սույն մասով և սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի:

Եթե յուրաքանչյուր հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ ԱԱՀ վճարողն ունի ԱԱՀ-ի փոխհատուցվող գումար, ապա այդ գումարը ԱԱՀ վճարողի գրավոր դիմումի հիման վրա Օրենսգրքի 17-րդ բաժնով սահմանված կարգով իրականացվող ստուգման կամ ուսումնասիրության արդյունքներով հիմնավորվելու դեպքում մուտքագրվում է միասնական հաշվին:

3. ԱԱՀ-ի 0 տոկոս դրույքաչափով հարկման ենթակա գործարքների ու գործառնությունների իրականացման դեպքում ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարները ԱԱՀ վճարողի գրավոր դիմումի հիման վրա Օրենսգրքի 17-րդ բաժնով սահմանված կարգով իրականացվող ստուգման կամ ուսումնասիրության արդյունքներով հիմնավորվելու դեպքում մուտքագրվում են միասնական հաշվին, եթե հարկ վճարողն ունի ԱԱՀ-ի փոխհատուցվող գումար: Այս դեպքում հարկ վճարողի միասնական հաշվին մուտքագրվում է ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի այն մասը, որը չի գերազանցում հաշվետու ժամանակաշրջանում ԱԱՀ-ի 0 տոկոս դրույքաչափով հարկվող գործարքների հարկման բազայի 20 տոկոսը, իսկ ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի այդ չափը գերազանցող մասը շարունակվում է հաշվառվել որպես փոխհատուցվող գումար և հետագայում ԱԱՀ-ի գումարի գծով հարկային պարտավորությունների մարմանն ուղղվում է կամ միասնական հաշվին մուտքագրվում է սույն հոդվածով սահմանված կարգով:

(74-րդ հոդվածը փոփ. 25.06.19 ՀՕ-68-Ն)

(74-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունը 25.06.19 ՀՕ-68-Ն օրենքի 71-րդ հոդվածի համաձայն վերաբերում է 2019 թվականի հուլիսի 1-ից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկներով առաջացող փոխհատուցվող գումարներին:)

Հոդված 75. Ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի միասնական հաշվարկների ներկայացումը

1. ԱԱՀ վճարողները մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկներ:

2. Օրենսգրքի 59-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված հարկ վճարողները հարկման օբյեկտ համարվող գործարք իրականացնելու դեպքում այդ գործարքի իրականացման օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար մինչև այդ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկներ:

3. Օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերության 5-րդ կետով սահմանված դեպքերում ոչ ռեզիդենտ կազմակերպությունը Օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ հարկման օբյեկտ համարվող գործարք իրականացնելու դեպքում այդ գործարքի իրականացման օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար մինչև այդ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով թղթային եղանակով հարկային մարմնի՝ Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանը սպասարկող ստորաբաժանում է ներկայացնում ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկներ:

4. Օրենսգրքի 67-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներից որևէ մեկի խախտմամբ հարկային հաշիվ դուրս գրելու դեպքում հարկային հաշիվ դուրս գրողը հարկային հաշվի դուրս գրման օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար մինչև այդ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին է ներկայացնում ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկ:

(75-րդ հոդվածը փոփ. 21.12.17 ՀՕ-266-Ն, 21.06.18 ՀՕ-338-Ն)

Հոդված 76. ԵՏՄ անդամ պետություններ արտահանված ապրանքների մատակարարման գործարքների հարկման բազայի նկատմամբ ավելացված արժեքի հարկի զրոյական դրույքաչափի կիրառությունը

1. Հայաստանի Հանրապետության տարածքից ԵՏՄ անդամ պետություններ արտահանված՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների մատակարարման գործարքների նկատմամբ ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափի կիրառությունը հիմնավորվում է արտահանման հարկային հայտարարագիրը արտահանողի կողմից հարկային մարմին ներկայացնելու օրը:

2. Այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետության տարածքից ԵՏՄ անդամ պետություններ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների արտահանումն իրականացվում է հանձնարարության, կոմիսիայի կամ գործակալության պայմանագրերի հիման վրա՝ համապատասխանաբար հանձնակատարի, կոմիսիոների կամ գործակալի կողմից, իսկ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված՝ արտահանման հարկային հայտարարագիրը հարկային մարմին է ներկայացվում համապատասխանաբար հանձնակատարի, կոմիսիոների կամ գործակալի կողմից, ապա արտահանված ապրանքների մատակարարման գործարքների նկատմամբ ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափի կիրառությունը համապատասխանաբար հանձնարարողի, կոմիտենտի կամ պրինցիպալի մոտ կարող է հիմնավորվել, եթե համապատասխան հաշվարկային փաստաթղթերով հիմնավորվի հանձնակատարի, կոմիսիոների կամ գործակալի կողմից արտահանողի ապրանքների արտահանման փաստը:

Հոդված 77. ԵՏՄ անդամ պետություններից ապրանքների ներմուծման դեպքում հարկային մարմին ներկայացվող փաստաթղթերը

1. ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների ներմուծման դեպքում (այդ թվում՝ Օրենսգրքի 59-րդ հոդվածի 6-րդ մասով, ինչպես նաև Օրենսգրքի 79-րդ հոդվածով սահմանված դեպքերում) հարկ վճարողը պարտավոր է մինչև ապրանքները Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու) օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ հարկային մարմին ներկայացնել միայն հետևյալ փաստաթղթերը.

1) ներմուծողի լրացրած՝ ներմուծման հարկային հայտարարագիրը.

2) ապրանքների ներմուծման և անուղղակի հարկերի վճարման (կամ անուղղակի հարկերից ազատման, անուղղակի հարկերն այլ կարգով վճարելու) մասին ներմուծողի լրացրած հայտարարությունը՝ թղթային կրիչով (չորս օրինակից) և էլեկտրոնային տարբերակով կամ ապրանքների ներմուծման և անուղղակի հարկերի վճարման (կամ անուղղակի հարկերից ազատման, անուղղակի հարկերն այլ կարգով վճարելու) մասին ներմուծողի լրացրած հայտարարությունը՝ էլեկտրոնային տարբերակով՝ հարկ վճարողի էլեկտրոնային (թվային) ստորագրությամբ:

2. Այն դեպքում, երբ ԵՏՄ անդամ պետություններից ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքները Հայաստանի Հանրապետության տարածք են ներմուծվում հանձնարարության, կոմիսիայի կամ գործակալության պայմանագրերի հիման վրա՝ համապատասխանաբար հանձնակատարի, կոմիսիոների կամ գործակալի կողմից, կամ ԵՏՄ անդամ այլ պետության ռեզիդենտի՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվող մշտական հաստատության կողմից կամ Հայաստանի Հանրապետությունում կազմակերպվող տոնավաճառի մասնակցի կողմից, սույն հոդվածի 1-ին մասով սահմանված փաստաթղթերը համապատասխանաբար հանձնակատարը, կոմիսիոները կամ գործակալը կամ ԵՏՄ անդամ պետության ռեզիդենտի՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվող մշտական հաստատությունը կամ Հայաստանի Հանրապետությունում կազմակերպվող տոնավաճառի կազմակերպիչը հարկային մարմին է ներկայացնում մինչև այդ ապրանքները կամ դրանց մի մասը գնորդին օտարելու օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

3. Այն դեպքում, երբ գնորդի կողմից ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծված՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքի նկատմամբ սեփականության իրավունքը գնորդին է անցնում Հայաստանի Հանրապետության տարածքում, սույն հոդվածի 1-ին մասով սահմանված փաստաթղթերը գնորդը հարկային մարմին է ներկայացնում մինչև այդ ապրանքի նկատմամբ սեփականության իրավունքը իրեն անցնելու օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

Գ Լ Ո Ւ Խ 15

ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ, ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԵՎ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՇՎԻՆ ՄՈՒՏՔԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Հոդված 78. Ավելացված արժեքի հարկի գումարի վճարումը

1. ԱԱՀ վճարողները Օրենսգրքի 70-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված՝ պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարները պետական բյուջե են վճարում մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ՝ որպես հարկային մարմնին վճարվող գումարներ:

2. Օրենսգրքի 59-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված հարկ վճարողները հարկման օբյեկտ համարվող գործարք իրականացնելու դեպքում այդ գործարքից առաջացող ԱԱՀ-ի գումարը պետական բյուջե են վճարում մինչև այդ գործարքի իրականացման օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ՝ որպես հարկային մարմնին վճարվող գումարներ:

3. Օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերության 5-րդ կետով սահմանված դեպքերում ոչ ռեզիդենտ կազմակերպությունը Օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ հարկման օբյեկտ համարվող գործարք իրականացնելու դեպքում այդ գործարքից առաջացող ԱԱՀ-ի գումարը պետական բյուջե է վճարում մինչև այդ գործարքի իրականացման օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ՝ որպես հարկային մարմնին վճարվող գումարներ:

4. Օրենսգրքի 67-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներից որևէ մեկի խախտմամբ հարկային հաշիվ դուրս գրելու դեպքում հարկային հաշիվ դուրս գրողը այդ հարկային հաշվում նշված ԱԱՀ-ի գումարը պետական բյուջե է վճարում մինչև այդ գործարքի իրականացման օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ՝ որպես հարկային մարմնին վճարվող գումարներ:

5. «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների համար Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված ԱԱՀ-ի գումարները Հայաստանի Հանրապետության պետական բյուջե են վճարվում մինչև «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ապրանքների բաց թողնումը (եթե ԵՏՄ միասնական օրենսդրությամբ այլ ժամկետ սահմանված չէ)՝ որպես մաքսային մարմնին վճարվող գումարներ:

6. ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների համար Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված ԱԱՀ-ի գումարները Հայաստանի Հանրապետության պետական բյուջե են վճարվում մինչև ապրանքները Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու) օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ՝ որպես հարկային մարմնին վճարվող գումարներ, բացառությամբ սույն հոդվածի 7-րդ և 8-րդ մասերով սահմանված դեպքերի:

7. Օրենսգրքի 77-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված ԱԱՀ-ի գումարները հանձնակատարի, կոմիսիոների կամ գործակալի կամ ԵՏՄ անդամ պետության ռեզիդենտի՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվող մշտական հաստատության կամ Հայաստանի Հանրապետությունում կազմակերպվող տոնավաճառի կազմակերպչի կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե են վճարվում մինչև համապատասխանաբար հանձնակատարի, կոմիսիոների կամ գործակալի կամ ԵՏՄ անդամ այլ պետության ռեզիդենտի՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվող մշտական հաստատության կամ Հայաստանի Հանրապետությունում կազմակերպվող տոնավաճառի մասնակցի կողմից ապրանքները գնորդին օտարելու օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ՝ որպես հարկային մարմնին վճարվող գումարներ:

8. Օրենսգրքի 77-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերում Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված ԱԱՀ-ի գումարները գնորդի կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե են վճարվում մինչև ապրանքների նկատմամբ սեփականության իրավունքը իրեն անցնելու օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ՝ որպես հարկային մարմնին վճարվող գումարներ:

(78-րդ հոդվածը փոփ. 21.12.17 ՀՕ-266-Ն, 21.06.18 ՀՕ-338-Ն)

Հոդված 79. Ավելացված արժեքի հարկի գումարի վճարման ժամկետի հետաձգումը

1. Կառավարության որոշմամբ ընտրված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներդրումային ծրագրերի շրջանակներում ապրանքների ներմուծման մասով հաշվարկված ԱԱՀ-ի գումարների վճարման ժամկետը հետաձգվում է երեք տարի ժամկետով:

Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ընտրության կարգը սահմանում է Կառավարությունը:

2. Սույն հոդվածի 1-ին մասի կիրառության իմաստով՝ ԱԱՀ-ի վճարման ժամկետի հետաձգման ժամանակաշրջանի սկիզբ է համարվում՝

1) «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով Հայաստանի Հանրապետություն ապրանքների ներմուծման դեպքում՝ մաքսային մարմինների կողմից մաքսային հայտարարագրի գրանցման ամսաթիվը (օրը).

2) ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների ներմուծման դեպքում՝ ներմուծման հարկային հայտարարագրի ներկայացման ամսաթիվը (օրը), բայց ոչ ուշ, քան տվյալ ապրանքների ներմուծման (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու) օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

3. Սույն հոդվածի 1-ին մասին համապատասխան վճարման ժամկետը հետաձգված ԱԱՀ-ի գումարները ենթակա են վճարման պետական բյուջե մինչև հետաձգման ժամկետը լրանալու օրը ներառյալ:

4. Սույն հոդվածի 1-ին մասին համապատասխան վճարման ժամկետը հետաձգված ԱԱՀ-ի գումարների (կամ դրանց մի մասի) վճարման ժամկետի հետաձգումը դադարեցվում է (ԱԱՀ-ի վճարման պարտավորությունն առաջանում է) մինչև այդ մասում նշված ժամկետի լրանալը, եթե հարկ վճարողը «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով Հայաստանի Հանրապետություն կատարվող ներմուծումների մասով մաքսային մարմիններին, իսկ ԵՏՄ անդամ պետություններից կատարվող՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների ներմուծումների մասով՝ հարկային մարմնին, ներկայացնում է ԱԱՀ-ի գումարների (կամ դրանց մի մասի) վճարման ժամկետի հետաձգումը վաղաժամ դադարեցնելու մասին գրավոր հայտարարություն՝ հարկային և (կամ) մաքսային մարմնի սահմանած ձևով: Սույն մասով սահմանված դեպքերում ԱԱՀ-ի գումարների (կամ դրանց մի մասի) վճարման ժամկետի հետաձգումը դադարեցվում է (ԱԱՀ-ի վճարման պարտավորությունն առաջանում է) հայտարարությունը ներկայացնելու օրվան հաջորդող օրը, և հայտարարությունում նշված չափով ԱԱՀ-ի գումարները ենթակա են վճարման պետական բյուջե մինչև հայտարարության ներկայացման օրվան հաջորդող տասներորդ օրը ներառյալ:

5. Եթե սույն հոդվածով սահմանված՝ ապրանքների ներմուծման մասով հաշվարկված ԱԱՀ-ի գումարների վճարման ժամկետի հետաձգման հնարավորությունից օգտված հարկ վճարողը մինչև հետաձգման ժամկետի ավարտը լուծարվում է կամ հանվում է հաշվառումից, ապա վճարման ժամկետը հետաձգված ԱԱՀ-ի գումարները ենթակա են վճարման պետական բյուջե մինչև հարկ վճարողի լուծարումը կամ հաշվառումից հանումը:

6. Սույն հոդվածի 3-5-րդ մասերով սահմանված ժամկետում ԱԱՀ-ի գումարները չվճարվելու դեպքում Օրենսգրքի 401-րդ հոդվածով սահմանված տույժերի հաշվարկումը և այդ գումարների նկատմամբ հսկողությունը «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների մասով իրականացնում է մաքսային մարմինը, իսկ ԵՏՄ անդամ պետություններից ներմուծվող՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների մասով՝ հարկային մարմինը:

Հաշվարկված ԱԱՀ-ի գումարները և դրանք սահմանված ժամկետում չվճարելու դեպքերում դրանց նկատմամբ հաշվարկված տույժերը վճարվում են պետական բյուջե՝ որպես «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների մասով մաքսային մարմին վճարվող գումարներ, իսկ ԵՏՄ անդամ պետություններից ներմուծվող՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների մասով՝ հարկային մարմին վճարվող գումարներ:

7. Սույն հոդվածի 3-5-րդ մասերի համաձայն պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարներն արտացոլվում են պարտավորության առաջացման հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկում՝ որպես ներմուծված ապրանքների մասով պետական բյուջեի նկատմամբ պարտավորության գումարներ, որոնք հաշվետու ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացված՝ ԱԱՀ-ով հարկման ենթակա գործարքների համար ԱԱՀ-ի պարտավորության ընդհանուր գումարի հաշվարկմանը չեն մասնակցում: Սույն մասով սահմանված՝ ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկները ներկայացվում են՝ անկախ սույն հոդվածի 3-5-րդ մասերի համաձայն պետական բյուջե վճարման պարտավորություն առաջանալու պահին հետաձգման արտոնությունից օգտված հարկ վճարողի՝ ԱԱՀ վճարող համարվելու կամ չհամարվելու հանգամանքից:

8. Սույն հոդվածի 3-5-րդ մասերի համաձայն պետական բյուջե վճարված ԱԱՀ-ի գումարները ԱԱՀ վճարողների կողմից Օրենսգրքով սահմանված կարգով ենթակա են հաշվանցման (հաշվարկված պարտավորություններից պակասեցման)՝ դրանց վճարման օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով՝ որպես ներմուծված ապրանքների համար վճարված ԱԱՀ-ի գումարներ:

(79-րդ հոդվածը խմբ. 25.10.17 ՀՕ-191-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Հոդված 80. Ավելացված արժեքի հարկի գումարի մուտքագրումը միասնական հաշվին

1. Օրենսգրքի 74-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված դեպքերում ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարները Օրենսգրքի՝ հարկային վարչարարության մասով սահմանված կարգով և ժամկետներում մուտքագրվում են միասնական հաշվին:

2. Օրենսգրքով սահմանված չափից ավելի վճարված ԱԱՀ-ի գումարները Օրենսգրքի՝ հարկային վարչարարության մասով սահմանված կարգով և ժամկետներում մուտքագրվում են միասնական հաշվին:

Հոդված 81. Ավելացված արժեքի հարկի գումարի փոխհատուցումը

1. Օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում ձեռք բերված ապրանքների արտահանման դեպքում դրանց գների մեջ ներառված և Հայաստանի

Հանրապետության տարածքում վճարված ԱԱՀ-ի գումարները Կառավարության սահմանած դեպքերում և կարգով փոխհատուցվում են օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց:

(81-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Բ Ա Ժ Ի Ն 5

ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԸ

Գ Լ Ո Ւ Խ 16

ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԸ ԵՎ ՎՃԱՐՈՂՆԵՐԸ

Հոդված 82. Ակցիզային հարկը

1. Ակցիզային հարկը Օրենսգրքի 84-րդ հոդվածով սահմանված՝ հարկման օբյեկտ համարվող գործարքների և (կամ) գործառնությունների իրականացման համար Օրենսգրքով սահմանված կարգով, չափով և ժամկետներում պետական բյուջե վճարվող պետական հարկ է:

Հոդված 83. Ակցիզային հարկ վճարողները

1. Ակցիզային հարկ վճարողներ են համարվում Օրենսգրքի 84-րդ հոդվածով սահմանված՝ հարկման օբյեկտ համարվող գործարքներ և (կամ) գործառնություններ իրականացնող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը:

2. Ռեզիդենտ կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կամ ոչ ռեզիդենտի մշտական հաստատության հետ կնքված պայմանագրերով նրանց կողմից տրված հումքից Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրված կամ տարայավորված՝ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքի մատակարարման գործարքի մասով ակցիզային հարկ վճարող է համարվում համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կազմակերպությունը կամ Հայաստանի Հանրապետությունում հաշվառված անհատ ձեռնարկատերը կամ ոչ ռեզիդենտի մշտական հաստատությունը՝ որպես պատվիրատու:

3. Մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի հետ կնքված պայմանագրերով նրանց կողմից տրված հումքից Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրված կամ տարայավորված՝ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքի մասով ակցիզային հարկ վճարող է համարվում այդ ապրանքն արտադրող կամ տարայավորող կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը:

4. Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք չեն համարվում ակցիզային հարկ վճարողներ, սակայն եթե նրանք Հայաստանի Հանրապետության տարածք են ներմուծում ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներ (այդ թվում՝ ԵՏՄ անդամ պետություններից), որոնց ներմուծումը, «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն համարվում է ձեռնարկատիրական գործունեության նպատակով իրականացվող ներմուծում, ապա պարտավոր են Օրենսգրքով սահմանված կարգով, չափով և ժամկետներում հաշվարկել և պետական բյուջե վճարել այդ ներմուծումներից առաջացող ակցիզային հարկի գումարները:

Գ Լ Ո Ւ Խ 17

ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏԸ, ՀԱՐԿՄԱՆ ԲԱԶԱՆ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Հոդված 84. Ակցիզային հարկով հարկման օբյեկտը

1. Ակցիզային հարկով հարկման օբյեկտ են համարվում ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների մասով իրականացվող հետևյալ գործարքները և (կամ) գործառնությունները.

1) արտադրողի կողմից արտադրված կամ տարայավորված՝ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքի մատակարարումը, եթե ապրանքի մատակարարման վայրը Օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն համարվում է Հայաստանի Հանրապետությունը: Սույն կետի կիրառության իմաստով՝ Օրենսգրքի 83-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերում ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքի մատակարարում է համարվում նաև ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքի հանձնումը պատվիրատուին.

2) «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ակցիզային հարկով հարկման ենթակա

ապրանքի ներմուծումը Հայաստանի Հանրապետություն.

3) ԵՏՄ անդամ պետություններից ակցիզային հարկով հարկման ենթակա՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքի ներմուծումը Հայաստանի Հանրապետություն.

4) ավտոգազալիցքավորման ճնշակայանում սեղմված բնական գազի մատակարարումը: Սույն կետի կիրառության իմաստով՝ ավտոգազալիցքավորման ճնշակայանում սեղմված բնական գազի մատակարարում է համարվում նաև ավտոգազալիցքավորման ճնշակայան շահագործող հարկ վճարողի կողմից ներտնտեսական կարիքների համար սեղմված բնական գազի սպառումը:

Հոդված 85. Ակցիզային հարկով հարկման բազան

1. Օրենսգրքի 84-րդ հոդվածով սահմանված՝ ակցիզային հարկով հարկման օբյեկտ համարվող գործարքների և (կամ) գործառնությունների դեպքում ակցիզային հարկով հարկման բազա է համարվում ապրանքի քանակը (ծավալը)՝ արտահայտված Օրենսգրքի 88-րդ հոդվածով սահմանված՝ չափման բնաիրային միավորներով:

(85-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն, խմբ. 25.06.19 ՀՕ-68-Ն)

Հոդված 86. Ակցիզային հարկով հարկման բազայի որոշման առանձնահատկությունները

(հոդվածն ուժը կորցրել է 25.06.19 ՀՕ-68-Ն)

Հոդված 87. Ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքները

1. Ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներն են՝

1) էթիլային սպիրտը (բացառությամբ կոնյակի սպիրտի).

2) սպիրտային խմիչքները.

3) գարեջուրը.

4) գինին.

5) ծխախոտի արտադրանքը (այդ թվում՝ ծխախոտի արդյունաբերական փոխարինիչները, սիգարները, սիգարելաները).

6) քսայուղը.

7) բենզինը.

8) դիզելային վառելիքը.

9) հում նավթը.

10) նավթամթերքները.

11) նավթային գազերը.

12) գազանման այլ ածխաջրածինները (բացառությամբ սեղմված չհամարվող բնական գազի).

13) սեղմված բնական գազը:

Սույն մասի 13-րդ կետի կիրառության իմաստով՝ սեղմված բնական գազ է համարվում ԱՏԳ ԱԱ 2711 21 ապրանքային դիրքին դասվող բնական գազը, որը ստացվում է մի քանի փուլով (խառնուրդի մաքրում, խոնավության և այլ աղտոտիչների հեռացում ու սեղմում) գազի մշակման արդյունքում՝ առանց բնական գազի բաղադրության փոփոխության:

Հոդված 88. Ակցիզային հարկի դրույքաչափերը

1. Օրենսգրքի 84-րդ հոդվածով սահմանված՝ ակցիզային հարկով հարկման օբյեկտ համարվող գործարքների ու գործառնությունների (բացառությամբ սույն մասի աղյուսակի 1-ին, 2-րդ, 11-րդ և 21-րդ տողերով նախատեսված ապրանքային դիրքերին դասվող ապրանքների մասով իրականացվող գործարքների և գործառնությունների) հարկման բազայի նկատմամբ ակցիզային հարկը հաշվարկվում է սույն մասով սահմանված դրույքաչափերի և սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ ակցիզային հարկի հաշվարկման գործակցի արտադրյալով: ԱՏԳ ԱԱ 2207, 2208 (բացառությամբ 2208 90 330 0, 2208 90 380 0, 2208 90 480 0, 2208 20, 2208 30, 2208 40), 2402 (բացառությամբ 2402 10 00011, 2402 90 00011, 2402 10 00012 2402 90 00012) և 2403 99 90 090 ապրանքային դիրքերին դասվող ապրանքների մասով իրականացվող գործարքների և գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ակցիզային հարկը հաշվարկվում է սույն մասով սահմանված դրույքաչափերով.

Ապրանքի ծածկագիրը՝ ըստ ԱՏԳԱԱ-ի	Ապրանքախմբի անվանումը	Հարկման բազայի չափման միավորը	Ակցիզային հարկի դրույքաչափերը (դրամ)			
			2020 թվականի հունվարի 1-ից	2021 թվականի հունվարի 1-ից	2022 թվականի հունվարի 1-ից	2023 թվականի հունվարի 1-ից
2207	էթիլային սպիրտ	1 լիտր (100 տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով)	2600	3380	4400	5700
2208 (բացառությամբ 2208 90 330 0 2208 90 380 0 2208 90 480 0 2208 20 2208 30 2208 40)	սպիրտային խմիչքներ	1 լիտր	1560	2030	2640	3430
2208 90 330 0 2208 90 380 0 2208 90 480 0	պտուղներից և (կամ) հատապտուղներից պատրաստված օղի	1 լիտր	800			
2208 20	կոնյակ, բրենդի և այլ սպիրտային թուրմեր	1 լիտր (100-տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով)	ա. 1-ից մինչև 3 տարի, ներառյալ՝ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 3000 բ. 4-ից մինչև 5 տարի, ներառյալ՝ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 3500 գ. 6-ից մինչև 10 տարի, ներառյալ՝ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 6000 դ. 11-ից մինչև 15 տարի, ներառյալ՝ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 8500 ե. 16-ից մինչև 19 տարի, ներառյալ՝ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 14000 զ. 20 և ավելի տարի հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 22000			
2208 30 2208 40	վիսկի, ռոմ և այլ սպիրտային թուրմեր	1 լիտր	7000			
2203	գարեջուր	1 լիտր	130			
2204	խաղողի գինի	1 լիտր	150			

2205	վերմուտ և խաղողի այլ գինիներ	1 լիտր	1000			
2206 (բացառությամբ 2206 00 390 2206 00 590 2206 00 890)	խմորման ենթարկված այլ ըմպելիքներ (խնձորի սիդր, պերրու (տանձի սիդր), մեղրաըմպելիք), բացառությամբ պտղային, հատապտղային, մրգային գինիների և գինենյութի	1 լիտր	270			
2206 00 390 2206 00 590 2206 00 890	պտղային, հատապտղային, մրգային և այլ գինիներ	1 լիտր	150			
2402 (բացառությամբ 2402 10 00011 2402 90 00011 2402 10 00012 2402 90 00012)	ծխախոտի արտադրանք	1000 հատ	9625	11070	12730	14640
2402 10 00011 2402 90 00011	սիգար	1000 հատ	605000			
2402 10 00012 2402 90 00012	սիգարելա	1000 հատ	16500			
2403 (բացառությամբ 2403 99 90 090)	ծխախոտի արդյունաբերական փոխարինիչներ	1 կգ	1500			
2710 19 710 - 2710 19 980 3403 19 100 0, 3403 19 900 0, 3403 99 000 0	քսայուղ	1 կգ	500			
2710 12	բենզին	1 տոննա	40000			
2710 (բացառությամբ 2710 12 2710 19 710 - 2710 19 980)	դիզելային վառելիք	1 տոննա	13000			
2709	հում նավթ, նավթամթերքներ	1 տոննա	27000			

2711 (բացառությամբ 2711 11 2711 21)	նավթային գազեր և գազանման այլ ածխաջրածիններ	1 տոննա	1000			
2711 21	սեղմված բնական գազ	1 տոննա	34000			
2403 99 90 090	ծխախոտի արտադրանք	1000 հատ	2000	2300	2700	3100

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերում հիմք են ընդունվում ակցիզային հարկի հաշվարկման հետևյալ գործակիցները.

	2020 թվականի հունվարի 1-ից	2021 թվականի հունվարի 1-ից	2022 թվականի հունվարի 1-ից	2023 թվականի հունվարի 1-ից
Ակցիզային հարկի հաշվարկման գործակից	1.0	1.03	1.06	1.09

3. ԱՏԳ ԱԱ 2208 ծածկագրին դասվող՝ 40 տոկոսից բարձր սպիրտայնությամբ ապրանքների համար սպիրտայնության 40 տոկոսը գերազանցող յուրաքանչյուր ամբողջական տոկոսային կետի համար ակցիզային հարկի դրույքաչափին ավելացվում է 7.5 դրամով (բացառությամբ կոնյակի սպիրտի), իսկ ներառյալ ինը տոկոս սպիրտայնությամբ ապրանքների համար ակցիզային հարկը յուրաքանչյուր լիտրի համար սահմանվում է 100 դրամ:

4. Ակցիզային հարկ վճարողների, ինչպես նաև ակցիզային հարկ վճարող չհամարվող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ԱՏԳ ԱԱ 2207 ծածկագրին դասվող՝ շշալցված ապրանքների և ԱՏԳ ԱԱ 2208 ծածկագրին դասվող ապրանքների (բացառությամբ 40 տոկոս և բարձր սպիրտայնությամբ չշշալցված կոնյակի, չշշալցված կոնյակի սպիրտի և ԱՏԳ ԱԱ 2208 20 ծածկագրին դասվող՝ շշալցված ապրանքների) օտարման դեպքում այդ ապրանքների օտարման գինը (ներառյալ՝ ակցիզային հարկը և ավելացված արժեքի հարկը) չի կարող պակաս լինել մեկ լիտրի համար 6000 դրամից՝ 100-տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով:

5. Ակցիզային հարկ վճարողների կողմից ԱՏԳ ԱԱ 2208 20 ծածկագրին դասվող՝ շշալցված ապրանքների օտարման դեպքում այդ ապրանքների օտարման գինը (առանց ակցիզային հարկի և ավելացված արժեքի հարկի)՝ 100-տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով, չի կարող պակաս լինել մեկ լիտրի համար՝

1) մինչև 3 տարի, ներառյալ՝ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 5000 դրամից.
2) 4-ից մինչև 5 տարի, ներառյալ՝ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 5500 դրամից.
3) 6-ից մինչև 7 տարի, ներառյալ՝ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 6000 դրամից.
4) 8-ից մինչև 10 տարի, ներառյալ՝ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 9000 դրամից.
5) 11 և ավելի տարի հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 14000 դրամից:

6. ԱՏԳԱԱ 220820 ծածկագրին դասվող՝ կոնյակ ներմուծող, արտադրող և (կամ) տարայավորող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը պարտավոր են կոնյակի տարայի վրա Կառավարության սահմանած կարգով մակնշել դրա հնացման աստիճանը՝ ըստ տարիների: ԱՏԳԱԱ 220820 ծածկագրին դասվող կոնյակի հնացման աստիճանի վերաբերյալ տարայի վրա մակնշման բացակայության դեպքում ակցիզային հարկը հաշվարկվում է սույն հոդվածի 1-ին մասի աղյուսակի՝ ԱՏԳԱԱ 220820 ծածկագրին վերաբերող տողի «զ» ենթակետով սահմանված դրույքաչափից ոչ պակաս չափով:

7. Բենզինի մեկ տոննայի համար սահմանված ակցիզային հարկի և Օրենսգրքի 4-րդ բաժնով սահմանված կարգով հաշվարկված ԱԱՀ-ի հանրագումարը 135000 դրամի և սույն հոդվածի 2-րդ մասով յուրաքանչյուր տարվա համար սահմանված՝ ակցիզային հարկի հաշվարկման գործակցի արտադրյալից պակաս լինելու դեպքում ակցիզային հարկն ավելացվում է այն չափով, որ բենզինի մեկ տոննայի համար ակցիզային հարկի և ԱԱՀ-ի հանրագումարը հավասարվի 135000 դրամի և սույն հոդվածի 2-րդ մասով յուրաքանչյուր տարվա համար սահմանված՝ ակցիզային հարկի

հաշվարկման գործակցի արտադրյալին:

(88-րդ հոդվածը փոփ., լրաց. 21.12.17 ՀՕ-266-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն, խմբ., լրաց. 13.06.18 ՀՕ-357-Ն, փոփ. 09.04.19 ՀՕ-16-Ն, խմբ. 25.06.19 ՀՕ-68-Ն)

ԳԼՈՒԽ 18

ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 89. Ակցիզային հարկից ազատված գործարքները

1. Ակցիզային հարկից ազատելը Օրենսգրքի 84-րդ հոդվածով սահմանված՝ ակցիզային հարկով հարկման օբյեկտ համարվող գործարքների հարկման բազայի նկատմամբ ակցիզային հարկ չհաշվարկելն է:

2. Ակցիզային հարկից ազատվում են Օրենսգրքի 84-րդ հոդվածով սահմանված հետևյալ գործարքները.

1) Հայաստանի Հանրապետության տարածքից «Արտահանում» մաքսային ընթացակարգով արտահանված՝ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքի մատակարարումը.

2) Հայաստանի Հանրապետության տարածքից ԵՏՄ անդամ պետություն արտահանված՝ ակցիզային հարկով հարկման ենթակա՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքի մատակարարումը՝ Օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված փաստաթուղթը հարկային մարմին ներկայացնելու դեպքում.

3) ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների մատակարարումը անմաքս առևտրի խանութի կազմակերպչին, ինչպես նաև կենտրոնացված մատակարարումների կազմակերպման շրջանակներում անմաքս առևտրի խանութում վաճառքի համար նախատեսված՝ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների մատակարարումը կենտրոնացված մատակարարին: Ընդ որում, կենտրոնացված մատակարարը պարտավոր է ձեռք բերելուց հետո՝ 60 օրացուցային օրվա ընթացքում, սույն կետում նշված ապրանքները մատակարարել անմաքս առևտրի խանութի կազմակերպչին: Հարկ վճարողին կենտրոնացված մատակարարի կարգավիճակը տրամադրում է անմաքս առևտրի խանութի կազմակերպիչը: Անմաքս առևտրի խանութի կազմակերպչի կողմից հարկ վճարողին կենտրոնացված մատակարարի կարգավիճակ տրամադրելու մասին հարկային մարմնին տեղեկացնելու, ինչպես նաև կենտրոնացված մատակարարի մոտ սույն կետում նշված ապրանքները հաշվառելու կարգը սահմանում է Կառավարությունը.

4) 40 տոկոս և բարձր սպիրտայնությամբ չշշալցված կոնյակի մատակարարումը կոնյակ արտադրող կազմակերպություններին կամ անհատ ձեռնարկատերերին.

5) բռնագրավման կամ նվիրատվության ձևով ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը պետությանը կամ համայնքին: Սույն կետը չի տարածվում ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքի նկատմամբ սեփականության իրավունքի՝ բռնագանձման ձևով պետությանը կամ համայնքին օտարման գործարքների վրա, որոնց դեպքում գործարքը ենթակա է ակցիզային հարկով հարկման՝ Օրենսգրքով սահմանված կարգով.

6) «Անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգի գործողությունը եզրափակելու նպատակով անմաքս առևտրի խանութի կազմակերպչի կողմից ակցիզային հարկով հարկման ենթակա այն օտարերկրյա ապրանքների՝ «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ներմուծումը, որոնք իրացվել են «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 2017 թվականի ապրիլի 11-ի պայմանագրի 1-ին հավելվածով հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 243-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետում նշված անձանց.

7) ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետությունում գործող անմաքս առևտրի խանութներ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքի ներմուծումը:

(89-րդ հոդվածը լրաց. 21.12.17 ՀՕ-266-Ն, խմբ. 25.06.19 ՀՕ-68-Ն)

ԳԼՈՒԽ 19

ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ

Հոդված 90. Հաշվետու ժամանակաշրջանը

1. Ակցիզային հարկի հաշվարկման և վճարման համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր հաշվետու ամիսը:

Հոդված 91. Պետական բյուջե վճարման ենթակա ակցիզային հարկի գումարի հաշվարկման կարգը

1. Ակցիզային հարկ վճարողները հաշվետու ժամանակաշրջանի համար պետական բյուջե են վճարում այդ ժամանակաշրջանում իրականացված՝ Օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերով սահմանված՝ հարկման օբյեկտ համարվող գործարքների հարկման բազայի նկատմամբ հաշվարկված ակցիզային հարկի գումարների և Օրենսգրքի 92-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվանցվող (պակասեցվող) ակցիզային հարկի գումարների (եթե Օրենսգրքի 93-րդ հոդվածով այլ բան սահմանված չէ) դրական տարբերությունը:

Հոդված 92. Ակցիզային հարկի հաշվանցումների (պակասեցումների) իրականացման կարգը

1. Ակցիզային հարկի հաշվանցվող (պակասեցվող) գումարներ են համարվում՝

1) Հայաստանի Հանրապետության տարածքում հաշվետու ժամանակաշրջանում ձեռք բերված՝ ակցիզային հարկով հարկման ենթակա հումքի գծով մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվներում (այդ թվում՝ այն դեպքում, երբ հարկային հաշվի դուրս գրման ամսաթիվը ներառված է հաշվետու ժամանակաշրջանին նախորդող կամ հաջորդող որևէ հաշվետու ժամանակաշրջանում, սակայն հարկային հաշվում նշված գործարքը կատարվել է (այսինքն՝ հարկային հաշվում նշված՝ ապրանքի մատակարարման ամսաթիվը ներառված է) այդ հաշվետու ժամանակաշրջանում) առանձնացված ակցիզային հարկի գումարները: Սույն կետով սահմանված ակցիզային հարկի գումարները հաշվանցվում (պակասեցվում) են՝

ա. հումքի ձեռքբերման օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող՝ ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով, եթե համապատասխան գործարքին վերաբերող՝ մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվը հումքը ձեռք բերողի կողմից Օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով վավերացվել է մինչև ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի ներկայացման համար Օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վերջնաժամկետի օրը ներառյալ,

բ. համապատասխան գործարքին վերաբերող՝ մատակարարների դուրս գրած հարկային հաշիվը հումքը ձեռք բերողի կողմից Օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով վավերացվելու օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող՝ ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով, եթե հարկային հաշիվը չի վավերացվել մինչև ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի ներկայացման համար Օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վերջնաժամկետի օրը ներառյալ.

2) «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված՝ ակցիզային հարկով հարկման ենթակա հումքի համար Օրենսգրքով սահմանված կարգով և չափով հաշվարկված և վճարված ակցիզային հարկի գումարները: Սույն կետով սահմանված ակցիզային հարկի գումարները հաշվանցվում (պակասեցվում) են՝

ա. հումքի ներմուծման մաքսային հայտարարագրի գրանցման օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող՝ ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով,

բ. ԵՏՄ միասնական մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով հումքի ներմուծման ճշտված մաքսային հայտարարագիր ներկայացնելու դեպքում՝ ներմուծման ճշտված մաքսային հայտարարագրի գրանցման և ակցիզային հարկի լրացուցիչ գումարների վճարման օրերն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի, իսկ այդ օրերը տարբեր հաշվետու ժամանակաշրջաններում ներառված լինելու դեպքում՝ դրանցից վերջինը ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող՝ ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով՝ հաշվանցման (պակասեցման) ենթակա ակցիզային հարկի լրացուցիչ գումարի մասով,

գ. հումքի ներմուծման գծով մաքսային մարմնի կողմից իրականացվող հետբացթողումային ստուգման արդյունքում ակցիզային հարկի գծով լրացուցիչ պարտավորություն առաջադրելու դեպքում՝ այդ պարտավորության կատարման (այդ թվում՝ մասնակի) օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող՝ ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով՝ վճարված ակցիզային հարկի գումարի չափով.

3) ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված՝ ակցիզային հարկով հարկման ենթակա՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող հումքի համար Օրենսգրքով սահմանված կարգով և չափով հաշվարկված և վճարված ակցիզային հարկի գումարները: Սույն կետով սահմանված ակցիզային հարկի գումարները հաշվանցվում (պակասեցվում) են՝

ա. հումքը Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու) օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող՝ ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով, եթե հումքի ներմուծման հարկային հայտարարագիրը հարկային մարմին է ներկայացվել և ներմուծման մասով ակցիզային հարկի գումարները վճարվել են մինչև հումքը Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու) օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի ներկայացման համար Օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վերջնաժամկետի օրը ներառյալ,

բ. հումքի ներմուծման հարկային հայտարարագրի՝ հարկային մարմին ներկայացման և ակցիզային հարկի գումարների վճարման օրերը ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի, իսկ այդ օրերը տարբեր հաշվետու ժամանակաշրջաններում ներառված լինելու դեպքում՝ դրանցից վերջինը ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող՝ ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով, եթե հումքի ներմուծման

հարկային հայտարարագիրը հարկային մարմին չի ներկայացվել, և (կամ) ներմուծման մասով ակցիզային հարկի գումարները չեն վճարվել մինչև ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի ներկայացման համար Օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վերջնաժամկետի օրը ներառյալ,

գ. ԵՏՄ միասնական մաքսային օրենսդրությամբ կամ Օրենսգրքով սահմանված կարգով հումքի ներմուծման ճշտված հարկային հայտարարագիր ներկայացնելու դեպքում՝ ներմուծման ճշտված հարկային հայտարարագրի ներկայացման և ակցիզային հարկի լրացուցիչ գումարների վճարման օրերն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի, իսկ այդ օրերը տարբեր հաշվետու ժամանակաշրջաններում ներառված լինելու դեպքում՝ դրանցից վերջինը ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով՝ հաշվանցման (պակասեցման) ենթակա ակցիզային հարկի լրացուցիչ գումարի մասով, եթե սույն ենթակետով այլ բան սահմանված չէ: ԵՏՄ միասնական մաքսային օրենսդրությամբ կամ Օրենսգրքով սահմանված կարգով հումքի ներմուծման ճշտված հարկային հայտարարագիրը մինչև հաշվետու ժամանակաշրջանի համար ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի ներկայացման համար Օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վերջնաժամկետի օրը ներառյալ ներկայացնելու և մինչև այդ օրը ակցիզային հարկի լրացուցիչ գումարները վճարված լինելու դեպքում ներմուծման ճշտված հարկային հայտարարագրով արտացոլված ակցիզային հարկի լրացուցիչ գումարները հաշվանցվում են տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով,

դ. հարկային մարմնի կողմից իրականացվող ստուգման արդյունքում հումքի ներմուծման մասով ակցիզային հարկի գծով լրացուցիչ պարտավորություն առաջադրելու դեպքում՝ այդ պարտավորության կատարման (այդ թվում՝ մասնակի) օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով՝ վճարված ակցիզային հարկի լրացուցիչ գումարի չափով:

(92-րդ հոդվածը խմբ. 25.06.19 ՀՕ-68-Ն)

Հոդված 93. Հաշվանցումների (պակասեցումների) կատարման սահմանափակումները

1. Օրենսգրքի 91-րդ և 95-րդ հոդվածներով սահմանված կարգով բյուջե վճարման ենթակա կամ բյուջեից փոխհատուցման ենթակա ակցիզային հարկի գումարների հաշվարկման նպատակով ակցիզային հարկի հաշվանցումներ (պակասեցումներ) չեն կատարում՝

1) ակցիզային հարկ վճարող չհամարվողները.

2) եթե ձեռք բերված և (կամ) ներմուծված՝ ակցիզային հարկով հարկման ենթակա հումքը վերագրվում է ակցիզային հարկից ազատված գործարքներին, բացառությամբ Օրենսգրքի 89-րդ հոդվածի 2-րդ մասի 1-3-րդ կետերով սահմանված դեպքերի.

3) եթե հարկային հաշիվը Օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 55-րդ կետի համաձայն համարվում է անապրանք փաստաթուղթ.

4) եթե հարկային հաշվին վերաբերող գործարքը Օրենսգրքի 41-րդ հոդվածի համաձայն ճանաչվել է անվավեր:

Հոդված 94. Պարտավորությունների ու հաշվանցումների (պակասեցումների) վերաձևակերպման կարգը

1. Ակցիզային հարկ վճարողների կողմից ձեռք բերված՝ ակցիզային հարկով հարկման ենթակա հումքի կորստի դեպքում այդ հումքին վերաբերող ակցիզային հարկի գումարները ենթակա չեն հաշվանցման (պակասեցման), եթե այդ կորուստները, Օրենսգրքի 6-րդ բաժնի համաձայն, հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցման ենթակա չեն: Օրենսգրքի 6-րդ բաժնի համաձայն՝ կորուստների մեծությունը տարեկան կտրվածքով սահմանված լինելու դեպքում ակցիզային հարկի յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում կորստի տարեկան նորմայի համեմատությամբ ավել հաշվարկված ակցիզային հարկի հաշվանցվող (պակասեցվող) գումարը տարեկան արդյունքներով վերահաշվարկվում է տվյալ տարվա ակցիզային հարկի վերջին հաշվետու ժամանակաշրջանում՝ տարբերությունը դիտարկելով որպես վերջին հաշվետու ժամանակաշրջանում ակցիզային հարկի հաշվանցվող (պակասեցվող) գումարի պակասեցում:

2. Եթե ԵՏՄ միասնական մաքսային օրենսդրությամբ կամ Օրենսգրքով սահմանված կարգով ներկայացվող՝ ակցիզային հարկով հարկման ենթակա հումքի ներմուծման (այդ թվում՝ ԵՏՄ անդամ պետություններից ներմուծման) ճշտված մաքսային կամ հարկային հայտարարագրով նախկինում ներկայացված՝ ներմուծման մաքսային կամ հարկային հայտարարագրում առանձնացված ակցիզային հարկի գումարները նվազում են, ապա ներմուծման մաքսային կամ հարկային հայտարարագրում և ներմուծման ճշտված մաքսային կամ հարկային հայտարարագրում առանձնացված ակցիզային հարկի գումարների տարբերությունը նվազեցվում է ներմուծման ճշտված մաքսային կամ հարկային հայտարարագրի գրանցման կամ հարկային մարմին ներկայացման օրը ներառող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող՝ ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով հաշվանցման (պակասեցման) ենթակա ակցիզային հարկի գումարներից:

3. Եթե ակցիզային հարկով հարկման ենթակա հումքի ներմուծման գծով մաքսային մարմնի կողմից իրականացվող

հետբացթողումային ստուգման արդյունքում ներմուծման մաքսային հայտարարագրում առանձնացված ակցիզային հարկի գումարները նվազում են, ապա ներմուծման մաքսային հայտարարագրում առանձնացված ակցիզային հարկի գումարների նվազած մասը նվազեցվում է հետբացթողումային ստուգման ակտի կազմման օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող՝ ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով հաշվանցման (պակասեցման) ենթակա ակցիզային հարկի գումարներից:

4. Հաշվանցված (պակասեցված) ակցիզային հարկի գումարների մասով սույն հոդվածով սահմանված դեպքերում և կարգով վերաձևակերպումներ (նվազեցումներ) չկատարելը Օրենսգրքի 403-րդ հոդվածի կիրառության իմաստով համարվում է հարկային հաշվարկում հարկի գումարը պակաս ցույց տալ:

Հոդված 95. Պետական բյուջեից փոխհատուցման ենթակա ակցիզային հարկի գումարի հաշվարկման կարգը

1. Ակցիզային հարկ վճարողներին հաշվետու ժամանակաշրջանի գործունեության արդյունքներով պետական բյուջեից փոխհատուցման ենթակա ակցիզային հարկի գումարը հաշվարկվում է որպես այդ ժամանակաշրջանում իրականացված՝ Օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերով սահմանված՝ հարկման օբյեկտ համարվող գործարքների հարկման բազայի նկատմամբ հաշվարկված ակցիզային հարկի գումարի և Օրենսգրքի 92-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվանցվող (պակասեցվող) ակցիզային հարկի գումարների (եթե Օրենսգրքի 93-րդ հոդվածով այլ բան սահմանված չէ) բացասական տարբերություն (այսուհետ՝ ակցիզային հարկի փոխհատուցվող գումար):

2. Հաշվետու ժամանակաշրջանի գործունեության արդյունքներով առաջացող ակցիզային հարկի փոխհատուցվող գումարն ուղղվում է հաշվետու ժամանակաշրջանների գործունեության արդյունքներով ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկներով առաջացող՝ պետական բյուջե վճարման ենթակա ակցիզային հարկի գումարների, ինչպես նաև Օրենսգրքի 17-րդ բաժնով սահմանված կարգով հարկային մարմնի կողմից իրականացվող ստուգման կամ ուսումնասիրության արդյունքում արձանագրվող՝ ակցիզային հարկի լրացուցիչ գումարների մարմանը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի:

3. Օրենսգրքի 89-րդ հոդվածի 2-րդ մասի 1-3-րդ կետերով սահմանված գործարքների ու գործառնությունների իրականացման դեպքում ակցիզային հարկի փոխհատուցվող գումարները ակցիզային հարկ վճարողի գրավոր դիմումի հիման վրա Օրենսգրքի 17-րդ բաժնով սահմանված կարգով իրականացվող ստուգման կամ ուսումնասիրության արդյունքներով հիմնավորվելու դեպքում մուտքագրվում են միասնական հաշվին, եթե հարկ վճարողն ունի ակցիզային հարկի փոխհատուցվող գումար:

Հոդված 96. ԱԱՀ-ի և ակցիզային հարկի գծով միասնական հաշվարկների ներկայացումը

1. Ակցիզային հարկ վճարողները մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկներ, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի:

2. Ակցիզային հարկ վճարողները Օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և (կամ) 3-րդ կետերով սահմանված հարկման օբյեկտների մասով ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկներ չեն ներկայացնում:

Հոդված 97. ԵՏՄ անդամ պետություններ արտահանված՝ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների մատակարարման գործարքների՝ ակցիզային հարկից ազատումը

1. Հայաստանի Հանրապետության տարածքից ԵՏՄ անդամ պետություններ արտահանված՝ ակցիզային հարկով հարկման ենթակա՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների մատակարարման գործարքների՝ ակցիզային հարկից ազատումը հիմնավորվում է արտահանման հարկային հայտարարագիրը արտահանողի կողմից հարկային մարմին ներկայացնելու օրը:

2. Այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետության տարածքից ԵՏՄ անդամ պետություններ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների արտահանումն իրականացվում է հանձնարարության, կոմիսիայի կամ գործակալության պայմանագրերի հիման վրա, համապատասխանաբար հանձնակատարի, կոմիսիոների կամ գործակալի կողմից, իսկ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված՝ արտահանման հարկային հայտարարագիրը հարկային մարմին է ներկայացվում համապատասխանաբար հանձնակատարի, կոմիսիոների կամ գործակալի կողմից, ապա արտահանված ապրանքների մատակարարման գործարքների՝ ակցիզային հարկից ազատումը համապատասխանաբար հանձնարարողի, կոմիտենտի կամ պրինցիպալի մոտ կարող է հիմնավորվել, եթե համապատասխան հաշվարկային փաստաթղթերով հիմնավորվի հանձնակատարի, կոմիսիոների կամ գործակալի կողմից արտահանողի ապրանքների արտահանման փաստը:

Հոդված 98. ԵՏՄ անդամ պետություններից ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների ներմուծման դեպքում հարկային մարմին ներկայացվող փաստաթղթերը

1. ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք ակցիզային հարկով հարկման ենթակա՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների ներմուծման դեպքում (այդ թվում՝ Օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքերում) հարկ վճարողը պարտավոր է մինչև ապրանքները Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու) օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ հարկային մարմին ներկայացնել Օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված փաստաթղթերը:

2. Այն դեպքում, երբ ԵՏՄ անդամ պետություններից ակցիզային հարկով հարկման ենթակա՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքները Հայաստանի Հանրապետության տարածք են ներմուծվում հանձնարարության, կոմիսիայի կամ գործակալության պայմանագրերի հիման վրա՝ համապատասխանաբար հանձնակատարի, կոմիսիոների կամ գործակալի կողմից, կամ ԵՏՄ անդամ այլ պետության ռեզիդենտի՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվող մշտական հաստատության կողմից կամ Հայաստանի Հանրապետությունում կազմակերպվող տոնավաճառի մասնակցի կողմից, Օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված փաստաթղթերը համապատասխանաբար հանձնակատարը, կոմիսիոները կամ գործակալը կամ ԵՏՄ անդամ այլ պետության ռեզիդենտի՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվող մշտական հաստատությունը կամ Հայաստանի Հանրապետությունում կազմակերպվող տոնավաճառի կազմակերպիչը հարկային մարմին է ներկայացնում մինչև այդ ապրանքները կամ դրանց մի մասը գնորդին օտարելու օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

3. Այն դեպքում, երբ գնորդի կողմից ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծված՝ ակցիզային հարկով հարկման ենթակա՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների նկատմամբ սեփականության իրավունքը գնորդին է անցնում Հայաստանի Հանրապետության տարածքում, Օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված փաստաթղթերը գնորդը հարկային մարմին է ներկայացնում մինչև այդ ապրանքի նկատմամբ սեփականության իրավունքը իրենց անցնելու օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

Գ Լ Ո Ւ Խ 20

ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ, ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԵՎ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՇՎԻՆ ՄՈՒՏՔԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Հոդված 99. Ակցիզային հարկի գումարի վճարումը

1. Ակցիզային հարկ վճարողները Օրենսգրքի 91-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված՝ պետական բյուջե վճարման ենթակա ակցիզային հարկի գումարները պետական բյուջե են վճարում մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ՝ որպես հարկային մարմնին վճարվող գումարներ:

2. «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով Հայաստանի Հանրապետություն ներմուծվող՝ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների համար Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված ակցիզային հարկի գումարները Հայաստանի Հանրապետության պետական բյուջե են վճարվում մինչև «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ապրանքների բաց թողնումը (եթե ԵՏՄ միասնական օրենսդրությամբ այլ ժամկետ սահմանված չէ)՝ որպես մաքսային մարմնին վճարվող գումարներ:

3. ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող՝ ակցիզային հարկով հարկման ենթակա՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների համար Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված ակցիզային հարկի գումարները Հայաստանի Հանրապետության պետական բյուջե են վճարվում մինչև ապրանքները Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու) օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ՝ որպես հարկային մարմնին վճարվող գումարներ, բացառությամբ ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող՝ ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորման ենթակա՝ ակցիզային հարկով հարկման ենթակա՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների, որոնց համար Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված ակցիզային հարկի գումարները Հայաստանի Հանրապետության պետական բյուջե են վճարվում սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում՝ որպես մաքսային մարմնին վճարվող գումարներ:

4. Օրենսգրքի 98-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված ակցիզային հարկի գումարները հանձնակատարի, կոմիսիոների կամ գործակալի կամ ԵՏՄ անդամ այլ պետության ռեզիդենտի՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվող մշտական հաստատության կամ Հայաստանի Հանրապետությունում կազմակերպվող տոնավաճառի կազմակերպչի կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե են վճարվում մինչև համապատասխանաբար հանձնակատարի, կոմիսիոների կամ գործակալի կամ

ԵՏՄ անդամ այլ պետության ռեզիդենտի՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվող մշտական հաստատության կամ Հայաստանի Հանրապետությունում կազմակերպվող տոնավաճառի մասնակցի կողմից ապրանքները գնորդին օտարելու օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ՝ որպես հարկային մարմնին վճարվող գումարներ:

5. Օրենսգրքի 98-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերում Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված ակցիզային հարկի գումարները գնորդի կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե են վճարվում մինչև ապրանքների նկատմամբ սեփականության իրավունքը իրեն անցնելու օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ՝ որպես հարկային մարմնին վճարվող գումարներ:

Հոդված 100. Ակցիզային հարկի գումարի մուտքագրումը միասնական հաշվին

1. Օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերում ակցիզային հարկի փոխհատուցվող գումարները Օրենսգրքի՝ հարկային վարչարարության մասով սահմանված կարգով և ժամկետներում մուտքագրվում են միասնական հաշվին:

2. Օրենսգրքով սահմանված չափից ավելի վճարված ակցիզային հարկի գումարները Օրենսգրքի՝ հարկային վարչարարության մասով սահմանված կարգով և ժամկետներում մուտքագրվում են միասնական հաշվին:

Հոդված 101. Ակցիզային հարկի գումարի փոխհատուցումը

1. Արդյունաբերական կազմակերպությունների կողմից ձեռք բերված՝ ԱՏԳ ԱԱ 2710 19 710 - 2710 19 980 ապրանքախմբի ծածկագրերին դասվող ապրանքների (բացառությամբ ԱՏԳ ԱԱ 2710 19 820 ապրանքախմբի ծածկագրին դասվող շարժիչային յուղերի) մասով վճարված ակցիզային հարկի գումարները Կառավարության սահմանված կարգով և ժամկետներում փոխհատուցվում են այդ կազմակերպություններին:

2. Ռեզիդենտ կազմակերպության, անհատ ձեռնարկատիրոջ կամ մշտական հաստատության կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներ արտադրողներից կամ տարայավորողներից ձեռք բերված՝ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքները Հայաստանի Հանրապետության տարածքից «Արտահանում» մաքսային ընթացակարգով արտահանելու, ինչպես նաև ակցիզային հարկով հարկման ենթակա՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքները Հայաստանի Հանրապետության տարածքից ԵՏՄ անդամ պետություն արտահանելու դեպքում վճարված ակցիզային հարկի գումարները փոխհատուցվում են Կառավարության սահմանած կարգով և ժամկետներում:

(101-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Բ Ա Ժ Ի Ն 6

ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԸ

Գ Լ Ո Ւ Խ 21

ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԸ ԵՎ ՎՃԱՐՈՂՆԵՐԸ

Հոդված 102. Շահութահարկը

1. Շահութահարկը Օրենսգրքի 104-րդ հոդվածով սահմանված հարկման օբյեկտի համար Օրենսգրքով սահմանված կարգով, չափով և ժամկետներում պետական բյուջե վճարվող պետական հարկ է:

Հոդված 103. Շահութահարկ վճարողները

1. Շահութահարկ վճարողներ են համարվում՝

1) ռեզիդենտ կազմակերպությունները, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի.

2) Հայաստանի Հանրապետությունում հաշվառված՝

ա. անհատ ձեռնարկատերերը,

բ. նոտարները.

3) Հայաստանի Հանրապետությունում հաշվառված, կանոնները գրանցած պայմանագրային ներդրումային ֆոնդերը (բացառությամբ կենսաթոշակային ֆոնդերի և երաշխիքային ֆոնդերի).

4) ոչ ռեզիդենտ կազմակերպությունները, ինչպես նաև մշտական հաստատության միջոցով Հայաստանի

Հանրապետությունում գործունեություն իրականացնող և (կամ) մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետության աղբյուրներից եկամուտ ստացող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք:

2. Անկախ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներից, շահութահարկ վճարողներ չեն համարվում՝

1) Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս պետական մարմինների.

2) Հայաստանի Հանրապետության համայնքները՝ ի դեմս համայնքային կառավարչական հիմնարկների.

3) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը.

4) Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունները և հյուպատոսական հիմնարկները, դրանց հավասարեցված միջազգային կազմակերպությունները.

5) Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա ստեղծված հատուցման հիմնադրամը:

(103-րդ հոդվածը լրաց. 21.12.17 ՀՕ-266-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Գ Լ ՈՒ Խ 22

ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏԸ, ՀԱՐԿՄԱՆ ԲԱԶԱՆ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Հոդված 104. Շահութահարկով հարկման օբյեկտը

1. Շահութահարկով հարկման օբյեկտ է համարվում՝

1) ռեզիդենտ կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետությունում հաշվառված անհատ ձեռնարկատերերի և նոտարների (այսուհետ՝ ռեզիդենտ շահութահարկ վճարողներ) համար՝ Հայաստանի Հանրապետության աղբյուրներից և (կամ) Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող աղբյուրներից ստացվող կամ ստացման ենթակա (այսուհետ՝ սույն բաժնում՝ ստացվող) համախառն եկամուտը, բացառությամբ Հայաստանի Հանրապետությունում հաշվառված անհատ ձեռնարկատերերի և նոտարների անձնական եկամուտների.

2) Հայաստանի Հանրապետությունում հաշվառված, կանոնները գրանցած ներդրումային ֆոնդերի (բացառությամբ կենսաթոշակային ֆոնդերի և երաշխիքային ֆոնդերի), ինչպես նաև «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա ստեղծված արժեթղթավորման հիմնադրամի համար՝ զուտ ակտիվների հանրագումարը.

3) ոչ ռեզիդենտ կազմակերպությունների, ինչպես նաև մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող և (կամ) մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետության աղբյուրներից եկամուտ ստացող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց (այսուհետ՝ ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողներ) համար՝ Հայաստանի Հանրապետության աղբյուրներից ստացվող համախառն եկամուտը, բացառությամբ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող և (կամ) մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետության աղբյուրներից եկամուտ ստացող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց՝ Հայաստանի Հանրապետության աղբյուրներից ստացվող անձնական եկամուտների:

Հոդված 105. Շահութահարկով հարկման բազան

1. Շահութահարկով հարկման բազա են համարվում՝

1) ռեզիդենտ շահութահարկ վճարողների համար՝ հարկվող շահույթը, որը որոշվում է որպես Օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված համախառն եկամտի և Օրենսգրքի 110-րդ հոդվածով սահմանված նվազեցումների դրական տարբերություն.

2) Հայաստանի Հանրապետությունում հաշվառված, կանոնները գրանցած ներդրումային ֆոնդերի (բացառությամբ կենսաթոշակային ֆոնդերի և երաշխիքային ֆոնդերի), ինչպես նաև «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա ստեղծված արժեթղթավորման հիմնադրամի համար՝ զուտ ակտիվների հանրագումարը, որը որոշվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած և հարկային մարմնի հետ համաձայնեցրած կարգով: Սույն կետի կիրառության իմաստով՝ ներդրումային ֆոնդի զուտ ակտիվներից չեն նվազեցվում ներդրումային ֆոնդի մասնակիցներին ներդրումային ֆոնդի ակտիվներից շահաբաժնի կամ նման այլ ձևով կատարված բաշխումների գումարները.

3) մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող և (կամ) մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետության աղբյուրներից եկամուտ ստացող ոչ ռեզիդենտ կազմակերպությունների և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց (այսուհետ՝ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողներ) համար՝ հարկվող շահույթը, որը որոշվում է որպես Օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված համախառն եկամտի և Օրենսգրքի 110-րդ հոդվածով սահմանված նվազեցումների դրական տարբերություն՝ հաշվի առնելով

Օրենսգրքի 133-րդ հոդվածով սահմանված առանձնահատկությունները.

4) առանց մշտական հաստատության Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող և (կամ) առանց մշտական հաստատության Հայաստանի Հանրապետության աղբյուրներից եկամուտ ստացող ոչ ռեզիդենտ կազմակերպությունների (այսուհետ՝ առանց մշտական հաստատության Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողներ) համար՝ Օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված համախառն եկամուտը.

5) մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ կազմակերպությունների՝ մշտական հաստատությանը չվերագրվող գործունեության և (կամ) եկամուտների մասով՝ Օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված համախառն եկամուտը:

(105-րդ հոդվածը փոփ. 21.12.17 ՀՕ-266-Ն)

Հոդված 106. Շահութահարկով հարկման բազայի որոշման սկզբունքները

1. Շահութահարկով հարկման բազան որոշելիս՝

1) հաշվառումն իրականացվում է հաշվապահական հաշվառումը և ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված սկզբունքների և կանոնների հիման վրա, եթե Օրենսգրքի սույն բաժնով և Օրենսգրքի ընդհանուր մասով դրանց կիրառության առանձնահատկություններ սահմանված չեն.

2) ակտիվները և պարտավորությունները հաշվի են առնվում սկզբնական արժեքով, բացառությամբ օրենքով սահմանված կարգով վերագնահատված ակտիվների և պարտավորությունների, որոնք հաշվի են առնվում վերագնահատված արժեքով: Սույն կետի կիրառության իմաստով՝ ակտիվները և (կամ) պարտավորությունները համարվում են օրենքով սահմանված կարգով վերագնահատված, եթե վերագնահատումը կատարվել է այն օրենքին համապատասխան, որով սահմանված է, որ ակտիվների և (կամ) պարտավորությունների վերագնահատումն իրականացվում է շահութահարկով հարկման բազայի որոշման կամ շահութահարկի հաշվարկման նպատակով.

3) ձեռք բերված ակտիվների գծով ձեռք բերումից հետո Օրենսգրքի 73-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերին համապատասխան հաշվանցման (պակասեցման) ենթակա ԱԱՀ-ի գումարների ճշգրտումները (ավելացումները, նվազեցումները) այդ ակտիվների սկզբնական կամ հաշվեկշռային արժեքները չեն փոփոխում.

4) հարկային հսկողության արդյունքում հայտնաբերված՝ ակտիվների պակասորդի մասով հարկման բազայի ավելացում կամ պակասեցում չի կատարվում.

5) հաշվի են առնվում միայն Օրենսգրքով սահմանված պահուստների ստեղծման հետևանքով առաջացող եկամուտները և նվազեցումները:

Հոդված 107. Եկամուտների ստացման աղբյուրները

1. Հայաստանի Հանրապետության աղբյուրներից ստացվող եկամուտներ են համարվում՝

1) ձեռնարկատիրական եկամուտները՝ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում.

2) պասիվ եկամուտները՝ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերում:

Սույն մասի 1-ին և 2-րդ կետերում նշված եկամուտներում ներառվում են նաև՝

1) ռեզիդենտ շահութահարկ վճարողին կամ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողին Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ծառայությունների մատուցումից ոչ ռեզիդենտի կողմից ստացվող եկամուտները՝ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքերում.

2) Օրենսգրքի 109-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված եկամուտները.

3) այլ եկամուտները՝ սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքերում:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի կիրառության նպատակով ձեռնարկատիրական եկամուտները համարվում են Հայաստանի Հանրապետության աղբյուրներից ստացվող եկամուտներ, եթե՝

1) ապրանքի մատակարարման վայրը, Օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն, համարվում է Հայաստանի Հանրապետությունը.

2) աշխատանքը փաստացի կատարվել կամ ծառայությունը փաստացի մատուցվել է Հայաստանի Հանրապետության տարածքում՝ անկախ Օրենսգրքի 39-րդ հոդվածի դրույթներից: Մասնավորապես, սույն բաժնի կիրառության իմաստով, համարվում է, որ աշխատանքը փաստացի կատարվել կամ ծառայությունը փաստացի մատուցվել է Հայաստանի Հանրապետության տարածքում, եթե՝

ա. շինարարության նախապատրաստման և իրականացման (ներառյալ՝ հետախուզման, նախագծման, դիզայներական, մոնտաժային, հեղինակային և տեխնիկական վերահսկողության), անշարժ գույքի նորոգման, վերականգնման և կանաչապատման, ինչպես նաև անշարժ գույքի առք ու վաճառքի գործակալների ու փորձագետների կողմից կատարվող աշխատանքները և մատուցվող ծառայությունները (ներառյալ՝ անշարժ գույքի գնահատման

ծառայությունները) անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող կամ կառուցվող անշարժ գույքի հետ,

բ. բեռների և (կամ) ուղևորների փոխադրման տրանսպորտային ծառայությունը (բացառությամբ փոստային ծառայության և օդային տրանսպորտով բեռների և (կամ) ուղևորների փոխադրման տրանսպորտային ծառայության) փաստացի մատուցվում է Հայաստանի Հանրապետության տարածքում: Այն դեպքում, երբ բեռների և (կամ) ուղևորների փոխադրման տրանսպորտային ծառայության միայն մի մասն է փաստացի մատուցվում Հայաստանի Հանրապետության տարածքում, և ծառայության մատուցման գործարքին վերաբերող հաշվարկային փաստաթղթերում առանձնացված է Հայաստանի Հանրապետության տարածքում փաստացի մատուցվող ծառայության դիմաց հատուցումը, ապա Հայաստանի Հանրապետության աղբյուրներից ստացվող եկամուտ է համարվում միայն այդ մասին համապատասխանող եկամուտը: Սույն ենթակետի կիրառության իմաստով՝ ծառայության մատուցման գործարքին վերաբերող հաշվարկային փաստաթղթերում Հայաստանի Հանրապետության տարածքում փաստացի մատուցվող ծառայության դիմաց հատուցումը համարվում է առանձնացված, եթե այդ փաստաթղթում առանձին նշված է սահմանային բնակավայրից (այդ թվում՝ հարևան պետության տարածքում գտնվող) մինչև Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող նշանակման վայր (կամ հակառակը) բեռների և (կամ) ուղևորների փոխադրման տրանսպորտային ծառայության դիմաց հատուցումը: Սույն ենթակետի կիրառության իմաստով՝ տրանսպորտային ծառայություն է համարվում նաև այլ կազմակերպությունների և (կամ) ֆիզիկական անձանց միջոցով (ներգրավմամբ) բեռների և (կամ) ուղևորների փոխադրման կազմակերպման միջնորդական գործունեությունը,

գ. փոստային ծառայությունը կամ օդային տրանսպորտով բեռների և (կամ) ուղևորների փոխադրման տրանսպորտային ծառայությունը փաստացի մատուցվում է Հայաստանի Հանրապետության տարածքում: Այն դեպքում, երբ փոստային ծառայության կամ օդային տրանսպորտով բեռների և (կամ) ուղևորների փոխադրման տրանսպորտային ծառայության միայն մի մասն է փաստացի մատուցվում Հայաստանի Հանրապետության տարածքում, և Կառավարության լիազոր մարմնի կողմից տրվող տեղեկանքում առանձնացված է Հայաստանի Հանրապետության տարածքում փաստացի մատուցվող ծառայության ծավալը՝ արտահայտված համապատասխան չափման միավորներով, ապա Հայաստանի Հանրապետության աղբյուրներից ստացվող եկամուտը որոշվում է ծառայության դիմաց ընդհանուր հատուցման և Հայաստանի Հանրապետության տարածքում փաստացի մատուցվող ծառայության ծավալի՝ ծառայության ընդհանուր ծավալում ունեցած տեսակարար կշռի արտադրյալի չափով, բացառությամբ սույն կետի «ե» ենթակետով սահմանված դեպքերի,

դ. սույն կետի «բ» և «գ» ենթակետերով սահմանված ծառայությունների հետ ուղղակիորեն կապված՝ ապրանքների փաթեթավորման, բեռնման, բեռնաթափման, ուղեկցման և համանման այլ աշխատանքների կատարման և (կամ) ծառայությունների մատուցման ժամանակ ապրանքները փաստացի գտնվել են Հայաստանի Հանրապետության տարածքում,

ե. փոստային ծառայությունը սկսվում է Հայաստանի Հանրապետության տարածքում (այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետության տարածքում սկսվող փոստային ծառայությունն ավարտվում է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս, ապա անկախ ծառայության մատուցման գործարքին վերաբերող հաշվարկային փաստաթղթերում Հայաստանի Հանրապետության տարածքում փաստացի մատուցվող ծառայության դիմաց հատուցումը առանձնացված լինելու հանգամանքից, Հայաստանի Հանրապետությունում գտնվող աղբյուրներից ստացվող եկամուտ է համարվում գործարքի դիմաց հատուցման ողջ գումարը),

զ. հեռահաղորդակցության ծառայությունները մատուցվել են հեռահաղորդակցության օպերատորների կողմից՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող և (կամ) գրանցված հեռահաղորդակցության տեխնիկական միջոցների օգտագործմամբ,

է. տեղեկատվությունը հաղորդվում է Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող հասցեից և (կամ) Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող հասցեին,

ը. գովազդի պատրաստումը և (կամ) տարածումը կատարվում է Հայաստանի Հանրապետության տարածքում,

թ. աուդիտորական ծառայություն ստացող անձը օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված կամ հաշվառված է Հայաստանի Հանրապետությունում.

3) այդ եկամուտները ստացվել են Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող միջնորդական գործունեությունից.

4) այդ եկամուտները ստացվել են ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի կողմից՝ Հայաստանի Հանրապետությունում իր մշտական հաստատությանը կառավարման, ֆինանսական կամ ապահովագրական ծառայությունների մատուցումից:

Եթե ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի կատարած աշխատանքների կամ մատուցված ծառայությունների բնույթով պայմանավորված՝ հնարավոր չէ առանձնացնել Հայաստանի Հանրապետության տարածքում կատարված աշխատանքի կամ մատուցված ծառայության մասը, կամ եթե հնարավոր չէ եկամուտը վերագրել Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող աղբյուրներին, ապա այդ աշխատանքների կատարումից կամ ծառայությունների մատուցումից ստացվող եկամուտներն ամբողջությամբ համարվում են Հայաստանի Հանրապետության աղբյուրներից ստացվող եկամուտներ:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի կիրառության նպատակով պասիվ եկամուտները համարվում են Հայաստանի Հանրապետության աղբյուրներից ստացվող եկամուտներ, եթե՝

1) շահաբաժինները ստացվում են ռեզիդենտ կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում

մասնակցությունից (բաժնետոմսից, բաժնեմասից, փայաբաժնից) կամ Օրենսգրքի 5-րդ գլխով սահմանված համատեղ գործունեությունից.

2) տոկոսները ստացվում են ռեզիդենտ կազմակերպությունից կամ մշտական հաստատությունից կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացի ֆիզիկական անձից (այդ թվում՝ անհատ ձեռնարկատիրոջից, նոտարից).

3) ռոյալթիները ստացվում են ռեզիդենտ կազմակերպությունից կամ մշտական հաստատությունից կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացի ֆիզիկական անձից (այդ թվում՝ անհատ ձեռնարկատիրոջից, նոտարից).

4) վարձակալական վճարը կամ սերվիտուտի վճարը ստացվում է՝

ա. Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող անշարժ գույքի տիրապետման և (կամ) օգտագործման իրավունքի տրամադրման դիմաց,

բ. այնպիսի շարժական գույքի (բացառությամբ օդանավերի) տիրապետման և (կամ) օգտագործման իրավունքի տրամադրման դիմաց, որը վարձակալության պայմանագրի գործողության ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված է (ենթակա է գրանցման) Հայաստանի Հանրապետությունում, կամ որը վարձակալության պայմանագրի կնքման պահին գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքում.

5) ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի ակտիվների (բացառությամբ բաժնետոմսերի և ներդրում վկայող այլ արժեթղթերի) արժեքի հավելաճը ստացվում է Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող ակտիվների օտարումից (բացառությամբ այն դեպքերի, երբ ակտիվների արժեքի հավելաճը մշտական հաստատության ձեռնարկատիրական գործունեության արդյունք է), իսկ բաժնետոմսերի և ներդրում վկայող այլ արժեթղթերի պարագայում՝ եթե արժեքի հավելաճը ստացվում է ռեզիդենտ կազմակերպության բաժնետոմսերի կամ այդ կազմակերպության թողարկած՝ ներդրում վկայող այլ արժեթղթերի օտարումից: Ընդ որում՝

ա. ակտիվների՝ Հայաստանի Հանրապետություն ներմուծման, տեղափոխման և (կամ) տեղակայման փաստը հաստատող փաստաթղթերի առկայության դեպքում ակտիվների սկզբնական արժեքը որոշվում է՝ հաշվի առնելով վերջիններիս ներմուծմանը վերաբերող փաստաթղթերում (ներմուծման մաքսային հայտարարագիր կամ ներմուծման հարկային հայտարարագիր), տեղափոխմանը և (կամ) տեղակայմանը վերաբերող հաշվարկային փաստաթղթերում նշված արժեքը, եթե բացակայում են սույն կետի «բ» ենթակետով սահմանված՝ ակտիվների ձեռքբերման հաշվարկային փաստաթղթերը,

բ. ակտիվների ձեռքբերման փաստը հաստատող հաշվարկային փաստաթղթերի առկայության դեպքում ակտիվների սկզբնական արժեքը որոշվում է՝ հաշվի առնելով վերջիններիս ձեռքբերմանը, տեղափոխմանը և (կամ) տեղակայմանը վերաբերող հաշվարկային փաստաթղթերում նշված արժեքը,

գ. մաշվածության կամ ամորտիզացիայի (այսուհետ՝ ամորտիզացիա) ենթակա ակտիվների օտարման դեպքում ակտիվների օտարումից ստացվող ակտիվների արժեքի հավելաճը հաշվարկվում է՝ հաշվի առնելով օտարման պահին դրանց հաշվեկշռային արժեքը, որի համար հիմք է հանդիսանում օտարողի տված փաստաթուղթը,

դ. օրենքով սահմանված կարգով վերագնահատված ակտիվների օտարման դեպքում ակտիվների օտարումից ստացվող ակտիվների արժեքի հավելաճը հաշվարկվում է՝ հաշվի առնելով դրանց վերագնահատված արժեքը, եթե այդ վերագնահատման արդյունքները հաշվի են առնվում շահութահարկով հարկման բազան կամ շահութահարկը որոշելիս,

ե. արտարժույթի փոխանակման դեպքում ակտիվների արժեքի հավելաճը հաշվարկվում է որպես Հայաստանի Հանրապետության դրամով ստացված դրամական միջոցների և դրանց դիմաց վճարված արտարժույթի՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով Հայաստանի Հանրապետության դրամով վերահաշվարկված գումարի դրական տարբերություն,

զ. ոչ ռեզիդենտի կողմից օտարվող ակտիվների մասով սույն կետի «ա», «բ» և «գ» ենթակետերում նշված փաստաթղթերի բացակայության դեպքում ակտիվների արժեքի հավելաճ է համարվում ոչ ռեզիդենտի կողմից օտարվող ակտիվների ամբողջ արժեքը.

6) այլ պասիվ եկամուտները ստացվում են ռեզիդենտ կազմակերպությունից կամ մշտական հաստատությունից կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացի ֆիզիկական անձից (այդ թվում՝ անհատ ձեռնարկատիրոջից, նոտարից):

4. Սույն հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերության 1-ին կետի կիրառության նպատակով ռեզիդենտ շահութահարկ վճարողին կամ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողին Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ծառայությունների մատուցումից ոչ ռեզիդենտի կողմից ստացվող եկամուտները համարվում են Հայաստանի Հանրապետության աղբյուրներից ստացվող եկամուտներ, եթե այդ եկամուտները ստացվում են խորհրդատվական, իրավաբանական, հաշվապահական, կառավարման, փորձագիտական, մարկետինգային, գովազդային, թարգմանչական, ինժեներական և համանման այլ ծառայությունների մատուցումից:

5. Սույն հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերության 3-րդ կետի կիրառության նպատակով սույն հոդվածի 2-4-րդ մասերում չնշված այլ եկամուտները համարվում են Հայաստանի Հանրապետության աղբյուրներից ստացվող եկամուտներ, եթե դրանք ստացվում են ռեզիդենտ կազմակերպությունից կամ մշտական հաստատությունից կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացի ֆիզիկական անձից (այդ թվում՝ անհատ ձեռնարկատիրոջից, նոտարից), բացառությամբ սույն մասի երկրորդ պարբերությամբ սահմանված դեպքերի:

Եթե հնարավոր չէ սույն մասում նշված այլ եկամուտը վերագրել Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող աղբյուրներին, ապա այդ եկամուտներն ամբողջությամբ համարվում են Հայաստանի Հանրապետության աղբյուրներից ստացվող եկամուտներ:

6. Այն եկամուտները, որոնք, սույն հոդվածի 1-5-րդ մասերի համաձայն, չեն համարվում Հայաստանի Հանրապետության աղբյուրներից ստացվող եկամուտներ, համարվում են Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող աղբյուրներից ստացվող եկամուտներ:

(107-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Հոդված 108. Եկամուտ չհամարվող տարրերը

1. Շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով շահութահարկ վճարողների համար եկամուտ չեն համարվում՝

1) մասնակիցների (բաժնետեր, փայատեր, անդամ) կողմից շահութահարկ վճարողի կանոնադրական կապիտալում (հիմնադրամում) կատարված ներդրումները, ինչպես նաև նախորդ հարկային տարիների հարկային վնասը մարելու նպատակով մասնակիցների (բաժնետեր, փայատեր, անդամ) կողմից շահութահարկ վճարողի սեփական կապիտալի այլ տարրերում կատարված ներդրումները՝ նախորդ հարկային տարիների հարկային վնասը չգերազանցող չափով.

2) շահութահարկ վճարողի լուծարման մասին որոշման առկայության դեպքում մասնակիցների (բաժնետեր, փայատեր, անդամ) կողմից շահութահարկ վճարողի սեփական կապիտալում կատարված ներդրումները.

3) շահութահարկ վճարողի բաժնետոմսերի, բաժնեմասերի կամ փայաբաժինների տեղաբաշխման գնի և անվանական արժեքի դրական տարբերությունը.

4) շահութահարկ վճարողի կողմից հետ գնված իր բաժնետոմսերի, բաժնեմասերի կամ փայաբաժինների իրացման և հաշվեկշռային արժեքի դրական տարբերությունը, եթե այդ բաժնետոմսերը, բաժնեմասերը կամ փայաբաժինները հետ են գնվել օրենքի պահանջով.

5) այլ կազմակերպության լուծարման դեպքում շահութահարկ վճարողի՝ այդ կազմակերպությունում ունեցած բաժնետոմսերի, բաժնեմասերի կամ փայաբաժինների դիմաց ստացվող մնացորդային գույքի արժեքի և բաժնետոմսերի, բաժնեմասերի կամ փայաբաժինների հաշվեկշռային արժեքի դրական տարբերությունը.

6) համատեղ գործունեության մասնակցից, որպես համատեղ գործունեության մեջ կատարվող ներդրում, համատեղ գործունեության հաշվետու մասնակցի ստացված ապրանքները, ընդունված աշխատանքները և (կամ) ստացված ծառայությունները, եթե սույն կետում նշված գործարքները կատարվում են հաշվետու մասնակցի կողմից Օրենսգրքի 32-րդ հոդվածով սահմանված հայտարարության ներկայացումից հետո.

7) ակտիվների, այդ թվում՝ արտարժույթի, արտարժույթով արտահայտված այլ ակտիվների, ինչպես նաև բանկային ոսկով և այլ թանկարժեք մետաղներով արտահայտված ակտիվների վերագնահատման դրական արդյունքը.

8) պարտավորությունների, այդ թվում՝ արտարժույթով արտահայտված պարտավորությունների, ինչպես նաև բանկային ոսկով և այլ թանկարժեք մետաղներով արտահայտված պարտավորությունների վերագնահատման բացասական արդյունքը.

9) հարկային արտոնությունների և վճարների գծով տրվող արտոնությունների գումարները.

10) հարկային պարտավորությունների կատարմանն ուղղվող՝ պետական կամ համայնքային բյուջեից տրամադրվող գումարները.

11) ոչ առևտրային կազմակերպությունների անհատույց ստացած ակտիվները (այդ թվում՝ անդամավճարները), աշխատանքները և ծառայությունները.

12) հարկ վճարողի լուծարման դեպքում մինչև հազար դրամ հարկային պարտավորության գումարը.

13) ներդրումային ֆոնդերում մասնակցությունը հավաստող արժեթղթերից ստացվող եկամուտները (այդ թվում՝ դրանց օտարումից, փոխանակումից, այլ նմանատիպ գործարքներից, շահաբաժինների բաշխումից կամ նման այլ ձևով կատարված բաշխումներից, ինչպես նաև պայմանագրային ներդրումային ֆոնդի ակտիվների հաշվին կատարված գործարքներից).

14) միասնական հաշվին առկա գումարների վերադարձն Օրենսգրքի 327-րդ հոդվածով սահմանված ժամկետից 30 օրվանից ավելի ուշացնելու դեպքում այդ ժամկետին հաջորդող յուրաքանչյուր ուշացված օրվա համար հարկ վճարողի օգտին հաշվեգրվող տույժերը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով և չափով շահութահարկ վճարողին (հարկային գործակալին) վերադարձվող (փոխհատուցվող)՝ աշխատանքի վարձատրությանն ուղղվող աշխատավարձից և դրան հավասարեցված վճարումներից հաշվարկված և վճարված եկամտային հարկի գումարները.

15) խաղատների, շահումով խաղերի և (կամ) ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման գործունեությունից ստացվող եկամուտները.

16) վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար էներգաարտադրողի՝ էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձից ստացվող հատուցման գումարները, ինչպես նաև հավասար փոխհոսքերի դեպքում ինքնավար էներգաարտադրողի կողմից էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձին մատակարարված էլեկտրական էներգիայի դիմաց էլեկտրական էներգիայի տեսքով ստացվող փոխհատուցումները.

17) Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային համակարգի կուտակային բաղադրիչի շրջանակներում անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի համար (օգտին) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից կատարվող կուտակային վճարները:

18) Կառավարության լիազորած մարմնի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համատեղ

հաստատած կարգի համաձայն՝ բանկերում և վարկային կազմակերպություններում հաշվառված՝ ֆիզիկական անձանց (բացառությամբ որպես անհատ ձեռնարկատեր կամ որպես նոտար վարկ ստացած ֆիզիկական անձանց) նկատմամբ ձևավորված և մինչև 2018 թվականի մայիսի 31-ը անհուսալի ճանաչված ակտիվների մասով մինչև դրանց անհուսալի ճանաչելը հաշվարկված և նախկինում հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցված՝ տվյալ ֆիզիկական անձին ներված (այդ թվում՝ մասնակի) տույժերի և (կամ) տուգանքների գումարները: Հարկման նպատակով եկամուտ չեն համարվում նաև փոխառուների նկատմամբ ձևավորված և անհուսալի ճանաչված ակտիվների գծով արտահաշվեկշռում (հետհաշվեկշռային հաշիվներում) հաշվառվելու ընթացքում հաշվարկված տոկոսները և (կամ) տույժերը և (կամ) տուգանքները՝ դրանց հաշվառման (հաշվարկման, հաշվեգրման) պահին, ինչպես նաև դրանց հետագա զիջման կամ ներման (այդ թվում՝ մասնակի) դեպքում.

19) «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19.7-րդ և 19.8-րդ հոդվածներով սահմանված գործունեության տեսակներից ստացվող եկամուտները:

2. Շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողների համար եկամուտ չեն համարվում նաև՝

1) արտաքին տնտեսական գործունեությունից ստացվող եկամուտները: Արտաքին տնտեսական գործունեություն է համարվում՝

ա. ոչ ռեզիդենտի կողմից ռեզիդենտ շահութահարկ վճարողին ապրանքի մատակարարումը, եթե այդ ապրանքի ներմուծման փաստաթղթերով (այդ թվում՝ ներմուծման հարկային հայտարարագրով կամ ներմուծման մաքսային հայտարարագրով) հիմնավորվում է, որ ներմուծումը կատարվել է ռեզիդենտ շահութահարկ վճարողի անունով՝ անկախ ապրանքի նկատմամբ սեփականության իրավունքը Հայաստանի Հանրապետության տարածքում փոխանցվելու հանգամանքից,

բ. սույն կետի «ա» ենթակետով սահմանված՝ ապրանքի մատակարարման գործարքի հետ ուղղակիորեն կապված՝ ապրանքների փաթեթավորման, բեռնման, տրանսպորտային, բեռնաթափման, ուղեկցման, ապահովագրության և համանման այլ աշխատանքների կատարումը և (կամ) ծառայությունների մատուցումը, եթե այդ աշխատանքները կատարվել և (կամ) ծառայությունները, ապրանքի մատակարարման պայմանագրի համաձայն, մատուցվել են ապրանքը մատակարարող ոչ ռեզիդենտի կողմից,

գ. ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ռեզիդենտին կամ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող այլ ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողին ապրանքի մատակարարումը:

(108-րդ հոդվածը փոփ. 13.12.17 ՀՕ-264-Ն, լրաց. 21.12.17 ՀՕ-266-Ն, 21.06.18 ՀՕ-338-Ն, 25.06.19 ՀՕ-68-Ն)

(108-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետը 25.06.19 ՀՕ-68-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետով ուժը կկորցնի 01.01.2021-ին)

Հոդված 109. Եկամտի առանձին տեսակների հաշվառման առանձնահատկությունները

1. Շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով՝

1) շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների, հողամասերի (այսուհետ սույն մասում՝ շենք) օտարումից եկամուտը հաշվարկվում է դրանց համար Օրենսգրքի 228-րդ հոդվածով սահմանված կարգով որոշվող՝ անշարժ գույքի հարկով հարկման բազայից (այսուհետ սույն մասում՝ կադաստրային արժեք) ոչ պակաս չափով: Այդ չափից պակաս հատուցման (առանց ԱԱՀ-ի) դեպքում կադաստրային արժեքի և փաստացի հատուցման գումարի (առանց ԱԱՀ-ի) դրական տարբերությունը՝ որպես ներված պարտավորություն, գործարքի կատարման օրը ներառվում է նոր սեփականատիրոջ եկամուտների մեջ, բացառությամբ այն դեպքերի, երբ օտարողը հանդիսանում է անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձ, որի դեպքում նոր սեփականատիրոջ մոտ ներված պարտավորություն չի առաջանում: Ընդ որում, ռեզիդենտ շահութահարկ վճարողի կամ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի կողմից շենքն այլ անձի (ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ կազմակերպություն, անհատ ձեռնարկատեր կամ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ) կադաստրային արժեքից ցածր գնով (այդ թվում՝ ԱԱՀ-ը) օտարելու դեպքում՝

ա. օտարող ռեզիդենտ շահութահարկ վճարողի կամ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի եկամուտները հաշվարկվում են շենքի կադաստրային արժեքի չափով, որից նվազեցվում է օտարման օրն ընդգրկող ամսվա 1-ի դրությամբ տվյալ շենքի հաշվեկշռային արժեքը, ինչպես նաև ռեզիդենտ շահութահարկ վճարողի կամ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի համար այդ գործարքից օրենքով սահմանված կարգով լրացուցիչ հաշվարկվող այլ հարկեր,

բ. գնորդ ռեզիդենտ շահութահարկ վճարողի կամ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի համար շենքի սկզբնական

արժեքը որոշվում է կադաստրային արժեքով, իսկ շենքի կադաստրային արժեքի և փաստացի ձեռքբերման գնի (առանց ԱԱՀ-ի) տարբերությունը՝ որպես ներված պարտավորություն, ներառվում է համախառն եկամտի մեջ.

2) շենքը վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնելու գործարքների մասով եկամուտը հաշվարկվում է դրանց կադաստրային արժեքի, իսկ դրա բացակայության դեպքում՝ անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտի ընդհանուր մակերեսում վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնված մակերեսի տեսակարար կշռին համապատասխանող կադաստրային արժեքի 2.5 տոկոսից ոչ պակաս չափով՝ հաշվարկված տարեկան կտրվածքով: Այդ չափից պակաս հատուցման (առանց ԱԱՀ-ի) դեպքում կադաստրային արժեքի, իսկ դրա բացակայության դեպքում՝ անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտի ընդհանուր մակերեսում վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնված մակերեսի տեսակարար կշռին համապատասխանող հարկման բազայի 2.5 տոկոսի և փաստացի վարձակալական վճարի (առանց ԱԱՀ-ի) դրական տարբերությունը՝ որպես ներված պարտավորություն, սույն հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով սահմանված պահին ներառվում է վարձակալի կամ փոխառուի եկամուտների մեջ, բացառությամբ այն դեպքերի, երբ վարձատուն կամ փոխատուն հանդիսանում է անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձ, որի դեպքում վարձակալի կամ փոխառուի մոտ ներված պարտավորություն չի առաջանում: Ընդ որում՝

ա. ռեզիդենտ շահութահարկ վճարողի կամ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի կողմից շենքն այլ անձի կադաստրային արժեքի 2.5 տոկոսից (տարեկան կամ տարեկանի վերածած) ցածր գումարով (այդ թվում՝ ԱԱՀ-ը) վարձակալության հանձնման դեպքում՝

- վարձատու ռեզիդենտ շահութահարկ վճարողի կամ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի եկամուտները հաշվարկվում են շենքի կադաստրային արժեքի տարեկան 2.5 տոկոսից ելնելով (հաշվի առնելով հաշվետու տարում շենքի վարձակալության փաստացի ժամանակահատվածը), և շահութահարկով հարկման բազան որոշելիս համախառն եկամտից նվազեցվում են շենքի ամորտիզացիոն մասհանումները (կարճաժամկետ կամ գործառնական վարձակալության դեպքում), ինչպես նաև ռեզիդենտ շահութահարկ վճարողի կամ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի համար այդ գործարքից օրենքով սահմանված կարգով լրացուցիչ հաշվարկվող այլ հարկեր,

- վարձակալ ռեզիդենտ շահութահարկ վճարողի կամ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի համար վարձակալության հետ կապված ծախսերը հաշվարկվում են շենքի կադաստրային արժեքի տարեկան 2.5 տոկոսից ելնելով (հաշվի առնելով հաշվետու տարում շենքի վարձակալության փաստացի ժամանակահատվածը), և շենքի վրա կատարված ծախսերի (ընթացիկ, կապիտալ) տարբերակումը կատարվում է դրա կադաստրային արժեքից ելնելով, իսկ շենքի կադաստրային արժեքի 2.5 տոկոսի (հաշվի առնելով հաշվետու տարում շենքի վարձակալության փաստացի ժամանակահատվածը) և փաստացի վարձավճարի (առանց ԱԱՀ-ի) տարբերությունը՝ որպես ներված պարտավորություն, ներառվում է համախառն եկամտի մեջ,

բ. ռեզիդենտ շահութահարկ վճարողի կամ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի կողմից շենքն այլ անձի անհատույց օգտագործման հանձնելու դեպքում՝

- փոխատու ռեզիդենտ շահութահարկ վճարողի կամ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի եկամուտները հաշվարկվում են շենքի կադաստրային արժեքի 2.5 տոկոսից ելնելով (հաշվի առնելով հաշվետու տարում շենքի անհատույց օգտագործման փաստացի ժամանակահատվածը), և շահութահարկով հարկման բազան որոշելիս համախառն եկամտից նվազեցվում են շենքի ամորտիզացիոն մասհանումները, ինչպես նաև ռեզիդենտ շահութահարկ վճարողի կամ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի համար այդ գործարքից օրենքով սահմանված կարգով լրացուցիչ հաշվարկվող այլ հարկեր,

- փոխառու ռեզիդենտ շահութահարկ վճարողի կամ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի համար վարձավճարները հաշվարկվում են շենքի կադաստրային արժեքի տարեկան 2.5 տոկոսից ելնելով (հաշվի առնելով հաշվետու տարում շենքի անհատույց օգտագործման փաստացի ժամանակահատվածը), և շենքի վրա կատարված ծախսերի (ընթացիկ, կապիտալ) տարբերակումը կատարվում է դրա կադաստրային արժեքից ելնելով, իսկ շենքի կադաստրային արժեքի 2.5 տոկոսը (հաշվի առնելով հաշվետու տարում շենքի անհատույց օգտագործման փաստացի ժամանակահատվածը)՝ որպես ներված պարտավորություն, ներառվում է համախառն եկամտի մեջ:

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում սույն կետով սահմանված գույքը վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվելու և (կամ) այդ գույքի վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքը դադարեցվելու դեպքում այդ հաշվետու ժամանակաշրջանում նշված գործարքների մասով եկամուտը հաշվարկվում է որպես սույն կետի առաջին պարբերությամբ սահմանված եկամտի և հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում գույքը վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվելու օրերի՝ հաշվետու ժամանակաշրջանում ներառվող օրերի մեջ ունեցած տեսակարար կշռի արտադրյալ.

3) ռեզիդենտ շահութահարկ վճարողի կամ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի կողմից շենքն այլ անձի կադաստրային արժեքի 2.5 տոկոսից (տարեկան կամ տարեկանի վերածած) ոչ պակաս գնով (այդ թվում՝ ԱԱՀ-ը) վարձակալության հանձնման դեպքում հարկերը հաշվարկվում են, և ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են՝ հիմք ընդունելով գործարքի փաստացի գինը:

Սույն մասի դրույթները չեն կիրառվում, եթե սույն մասով սահմանված գույքային միավորների օտարման կամ վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնելու գործարքի կողմ է համարվում պետությունը կամ համայնքը (բացառությամբ այն դեպքերի, երբ գործարքը կատարվում է այլ կազմակերպության միջոցով):

2. Միջնորդական ծառայությունների մատուցումից (հանձնարարության, կոմիսիայի կամ գործակալության պայմանագրերի հիման վրա ծառայությունների մատուցումից) ստացվող եկամուտը որոշվում է հանձնակատարի, կոմիսիոների կամ գործակալի վարձատրության և նրանց կողմից իրենց անունով կատարած ծախսերի դիմաց, որպես փոխհատուցում, ստացվող հատուցման հանրագումարով:

3. Օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ հաշվառման հաշվեգրման մեթոդի կիրառության շրջանակներում եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված, եթե համապատասխան գումարը ենթակա է շահութահարկ վճարողին (բացառությամբ առանց մշտական հաստատության Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի) անվերապահ վճարման (հատուցման), կամ շահութահարկ վճարողը (բացառությամբ առանց մշտական հաստատության Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի) կատարել է գործարքից կամ պայմանագրից բխող պարտավորությունները, եթե նույնիսկ այդ իրավունքի բավարարման պահը հետաձգվել է, կամ վճարումներն իրականացվում են մաս-մաս: Մասնավորապես՝

1) ապրանքի մատակարարումից եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված Օրենսգրքի 38-րդ հոդվածով սահմանված՝ ապրանքի մատակարարման պահին.

2) աշխատանքի կատարումից և (կամ) ծառայության մատուցումից եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված Օրենսգրքի 40-րդ հոդվածով սահմանված՝ աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման պահին.

3) տոկոսների տեսքով եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված պարտքի ժամկետը լրանալու պահից: Եթե պարտքի ժամկետը ներառում է մի քանի հաշվետու ժամանակաշրջան, ապա պարտքին վերաբերող տոկոսների տեսքով եկամուտները հաշվեգրվում են այդ հաշվետու ժամանակաշրջաններին համապատասխան.

4) վարձակալական վճարի տեսքով եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված վարձակալության պայմանագրի ժամկետը լրանալու պահից: Եթե վարձակալության պայմանագրի ժամկետը ներառում է մի քանի հաշվետու ժամանակաշրջան, ապա վարձակալական վճարների տեսքով եկամուտները հաշվեգրվում են այդ հաշվետու ժամանակաշրջաններին համապատասխան.

5) շահաբաժինների տեսքով եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված բաժնետերերի (փայատերերի) ժողովի կողմից հաշվետու տարվա գործունեության արդյունքներով ստացված շահույթից շահաբաժինների բաշխման մասին որոշման ընդունման օրը:

4. Շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով շահութահարկ վճարողների համար եկամուտ են համարվում նաև՝

1) առևտրային կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների անհատույց ստացված ակտիվները: Սույն կետով սահմանված դեպքում՝

ա. ակտիվները (բացառությամբ դրամական միջոցների և հողամասերի) եկամուտ են համարվում այն հարկային տարում, երբ դրանք ճանաչվում են որպես ծախս կամ կորուստ՝ անկախ այդ ծախսը կամ կորուստը համախառն եկամտից նվազեցնելու հանգամանքից,

բ. դրամական միջոցները եկամուտ են համարվում դրանց ստացման հարկային տարում, բացառությամբ պետության կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում ստացված նպատակային դրամական միջոցների, որոնք եկամուտ են համարվում այն հարկային տարում, երբ այդ դրամական միջոցները կամ այդ դրամական միջոցներով ձեռք բերված, կառուցված, ստեղծված կամ մշակված ակտիվները ճանաչվում են որպես ծախս՝ անկախ այդ ծախսը համախառն եկամտից նվազեցնելու հանգամանքից: Պետության կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում որպես արդեն իսկ կատարված ծախսերի կամ ստացված վնասների փոխհատուցում ստացված նպատակային դրամական միջոցները եկամուտ են համարվում դրանց ստացման հարկային տարում,

գ. հողամասերը եկամուտ են համարվում տասը հարկային տարիների ընթացքում, ներառյալ՝ դրանց ստացման հարկային տարին՝ յուրաքանչյուր հարկային տարում հավասարաչափ: Եթե սույն ենթակետով սահմանված ժամանակահատվածում անհատույց ստացված հողամասն օտարվում է, ապա հողամասի արժեքի՝ դեռևս եկամուտ չհամարված մասը եկամուտ է համարվում հողամասի օտարման հարկային տարում,

դ. ակտիվների սկզբնական արժեքները, եթե սույն կետի «ե» ենթակետով այլ բան սահմանված չէ, որոշվում են այդ ակտիվների ստացման գործարքներին վերաբերող փաստաթղթերում նշված արժեքների հիման վրա, իսկ այդ փաստաթղթերում արժեք նշված չլինելու դեպքում՝ դրանք ստացող շահութահարկ վճարողի նախաձեռնությամբ իրականացվող փորձաքննության արդյունքներով որոշվող շուկայական գների հիման վրա,

ե. շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների, հողամասերի

սկզբնական արժեքները որոշվում են Օրենսգրքի 228-րդ հոդվածով սահմանված կարգով որոշվող՝ անշարժ գույքի հարկով հարկման բազայից ոչ պակաս չափով.

2) համատեղ գործունեության մասնակցից, որպես համատեղ գործունեության մեջ կատարվող ներդրում, համատեղ գործունեության հաշվետու մասնակցի ստացած ակտիվները, եթե դրանք ստացվում են մինչև հաշվետու մասնակցի կողմից Օրենսգրքի 32-րդ հոդվածով սահմանված հայտարարության ներկայացումը: Սույն կետով սահմանված ակտիվները՝

ա. եկամուտ են համարվում սույն մասի 1-ին կետի «ա», «բ» և «գ» ենթակետերով սահմանված կարգերով,

բ. ակտիվների սկզբնական արժեքները որոշվում են Օրենսգրքի 31-րդ հոդվածով սահմանված՝ համատեղ գործունեության պայմանագրի համաձայն, իսկ համատեղ գործունեության պայմանագրով ներդրման արժեք նախատեսված չլինելու դեպքում՝ հաշվետու մասնակցի նախաձեռնությամբ իրականացվող փորձաքննության արդյունքներով որոշվող շուկայական գների հիման վրա.

3) դատարանի որոշումների հիման վրա տիրազուրկ ճանաչված և սեփականության իրավունքով շահութահարկ վճարողին փոխանցվող ակտիվները: Սույն կետով սահմանված ակտիվները եկամուտ են համարվում սույն մասի 1-ին կետով սահմանված կարգով և չափով.

4) տիրազուրկ ակտիվների նկատմամբ շահութահարկ վճարողի կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով (բացառությամբ դատարանի որոշումների հիման վրա) իր իրավունքների ճանաչման դեպքում՝ տիրազուրկ ակտիվները: Սույն կետով սահմանված՝

ա. ակտիվները եկամուտ են համարվում դրանց նկատմամբ շահութահարկ վճարողի իրավունքների ճանաչման հարկային տարում,

բ. ակտիվների սկզբնական արժեքները որոշվում են դրանք ստացող շահութահարկ վճարողի մոտ առկա նույն, իսկ դրա բացակայության դեպքում՝ համանման ակտիվների արժեքի չափով, իսկ այդպիսի ակտիվների բացակայության դեպքում՝ դրանք ստացող շահութահարկ վճարողի նախաձեռնությամբ իրականացվող փորձաքննության արդյունքներով որոշվող շուկայական գների հիման վրա.

5) գույքագրման ժամանակ հայտնաբերված գույքի ավելցուկը՝ հիմք ընդունելով այդ գույքի սկզբնական արժեքը: Սույն կետի կիրառության իմաստով՝ գույքագրման ժամանակ հայտնաբերված գույքի ավելցուկ է համարվում այն գույքը, որը շահութահարկ վճարողի մոտ որևէ կերպ հաշվառված չէ, և միաժամանակ առկա չեն այդ գույքի՝ շահութահարկ վճարողին կամ այլ կազմակերպությանը կամ այլ ֆիզիկական անձին սեփականության իրավունքով պատկանելիությունը հիմնավորող փաստաթղթերը, բացառությամբ այն դեպքերի, երբ գույքը շահութահարկ վճարողի կողմից օգտագործվում է վարձակալության կամ անհատույց օգտագործման պայմանագրի հիման վրա: Սույն կետով սահմանված դեպքում՝

ա. գույքը եկամուտ է համարվում դրա հայտնաբերման հարկային տարում,

բ. գույքի սկզբնական արժեքը որոշվում է այն ստացող շահութահարկ վճարողի մոտ առկա նույն, իսկ դրա բացակայության դեպքում՝ համանման գույքի արժեքի չափով, իսկ այդպիսի գույքի բացակայության դեպքում՝ ստացող շահութահարկ վճարողի նախաձեռնությամբ իրականացվող փորձաքննության արդյունքներով որոշվող շուկայական գների հիման վրա.

6) կողմերի միջև փաստացի առաջացած (առկա) պարտավորությունների՝ ամբողջությամբ կամ մասնակի զեղչումից կամ ներումից ստացվող եկամուտները, բացառությամբ հարկային արտոնությունների և վճարների գծով տրվող արտոնությունների գումարների: Սույն կետի կիրառության իմաստով՝ պարտավորության զեղչումից ստացվող եկամուտ չի առաջանում, եթե զեղչվում է կողմերի միջև իրականացվող գործարքի արժեքը՝ մինչև կողմերի մոտ պարտավորությունների փաստացի առաջացման պահը.

7) ապահովագրական հատուցումները.

8) պատճառված վնասի (կրած կորստի) հատուցումից ստացվող այլ եկամուտները.

9) տույժերի, տուգանքների և գույքային այլ պատժամիջոցների տեսքով եկամուտները, բացառությամբ միասնական հաշվին առկա գումարների վերադարձն Օրենսգրքի 327-րդ հոդվածով սահմանված ժամկետից 30 օրվանից ավելի ուշացնելու դեպքում այդ ժամկետին հաջորդող յուրաքանչյուր ուշացված օրվա համար հարկ վճարողի օգտին հաշվեգրված տույժերի.

10) անվավեր ճանաչված գործարքների մասով նախորդ հաշվետու ժամանակաշրջաններում հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից կատարված նվազեցումները.

11) Կառավարության սահմանած կարգով շահութահարկ վճարողների (բացառությամբ սույն մասի 12-րդ կետով սահմանված դեպքերի) կողմից՝

ա. դուրս գրված հարկման նպատակով դուրս գրման ենթակա կրեդիտորական պարտքերի գումարները,

բ. նախկինում դուրս գրված անհուսալի դեբիտորական պարտքերի մարման գումարները,

գ. դուրս չգրված դեբիտորական պարտքերի մարման դեպքում՝ սահմանված կարգով պահուստին կատարված մասհանումների գումարները:

Սույն կետի կիրառության իմաստով՝

ա. այն դեպքում, երբ սահմանված չէ դեբիտորական կամ կրեդիտորական պարտքի մարման ժամկետ, դեբիտորական կամ կրեդիտորական պարտքի մարման ժամկետ է համարվում այդ պարտքը առաջացնող գործարքի (գործառնության, փաստի) կատարման օրվան հաջորդող 60-րդ օրը,

բ. ցպահանջ դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հայցային վաղեմության ժամկետի ընթացքը սկսվում է

պահանջ ներկայացնելու օրվանից, բայց գործարքի կատարմանը հաջորդող 61-րդ օրվանից ոչ ուշ,

գ. այն դեպքում, երբ դեբիտորական կամ կրեդիտորական պարտքի մարման ժամկետը մինչև դրանց անհուսալի դառնալը փոխադարձ համաձայնությամբ երկարաձգվում է, դեբիտորական կամ կրեդիտորական պարտքը համարվում է կետանցված նոր ժամկետում չմարվելու դեպքում,

դ. դեբիտորական կամ կրեդիտորական պարտքի մասնակի մարումը չի համարվում պարտքի (չմարված գումարի մասով) մարման ժամկետի հետաձգում,

ե. նույն հարկ վճարողների միջև տարբեր գործարքներից (գործառնություններից, փաստերից) առաջացած դեբիտորական կամ կրեդիտորական պարտքերի մարման (մասնակի մարման) դեպքում՝ մարվող (մասնակի մարվող) դեբիտորական կամ կրեդիտորական պարտքի վերաբերյալ տեղեկության բացակայության դեպքում մարված (մասնակի մարված) է ընդունվում ավելի վաղ ժամկետում առաջացած դեբիտորական կամ կրեդիտորական պարտքը,

զ. անհուսալի ճանաչված դեբիտորական կամ կրեդիտորական պարտքի դուրսգրումը չի համարվում դեբիտորական կամ կրեդիտորական պարտքի ներում,

է. այն դեպքում, երբ դեբիտորական կամ կրեդիտորական պարտքերի գծով հաշվարկվել են տույժեր, տուգանքներ կամ տոկոսներ, ապա այդ դեբիտորական կամ կրեդիտորական պարտքերն անհուսալի ճանաչելու և դուրս գրելու ժամանակ դրանց հետ մեկտեղ անհուսալի են ճանաչվում և դուրս գրվում դրանց գծով հաշվարկված տույժերը, տուգանքները կամ տոկոսները,

ը. նույն հարկ վճարողների միջև տարբեր գործարքներից (գործառնություններից, փաստերից) միմյանց նկատմամբ հանդիպակաց դեբիտորական կամ կրեդիտորական պարտքերի հաշվանցումը կատարվում է միայն գրավոր համաձայնությամբ,

թ. կրեդիտորական պարտքի ներման կամ այլ ձևով պարտքը չպահանջելու վերաբերյալ պարտատիրոջ որոշման և (կամ) համաձայնության կամ երրորդ անձին պարտքի անհատույց փոխանցման դեպքում եկամուտ է համարվում ներված կամ չպահանջված կամ անհատույց փոխանցված կրեդիտորական պարտքի գումարը, եթե մինչ այդ այն չի դիտվել որպես անհուսալի: Սույն ենթակետի կիրառության իմաստով՝ համարվում է, որ առկա է այլ ձևով կրեդիտորական պարտքը չպահանջելու վերաբերյալ պարտատիրոջ որոշում և (կամ) համաձայնություն, եթե կրեդիտորական պարտքի կետանցված դառնալու օրվան հաջորդող երեք հարկային տարիների ընթացքում պարտատերը պարտքի կատարումն ապահովելու պահանջով չի դիմել դատարան, բացառությամբ հանրային ծառայությունների մատուցման արդյունքում առաջացող կրեդիտորական պարտքերի,

ժ. Կառավարության սահմանած կարգի համաձայն անհուսալի չճանաչված կրեդիտորական պարտքը երրորդ անձին հատուցմամբ փոխանցման, իսկ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դեպքերում կրեդիտորական պարտքը նոտարի կամ դատարանի դեպոզիտ վճարելու դեպքում եկամուտ է համարվում կրեդիտորական պարտքի՝ չհատուցված (չվճարված) մասը.

12) Կառավարության լիազոր մարմնի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համատեղ սահմանած կարգով բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների և արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց կողմից՝

ա. դուրս գրված անհուսալի կրեդիտորական պարտքերի գումարները,

բ. նախկինում հաշվեկշռից դուրս գրված անհուսալի ակտիվների և ինվեստիցիոն արժեթղթերի՝ հաշվեկշռում վերականգնման արդյունքում հաշվեգրված եկամուտները, բացառությամբ Օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով սահմանված դեպքերի,

գ. հաշվեկշռից դուրս չգրված ակտիվների դեպքում՝ սահմանված կարգով ձևավորված պահուստների նվազեցման գծով հաշվեգրված եկամուտները.

13) ապահովագրական ընկերությունների տեխնիկական պահուստների, տեխնիկական պահուստներում վերաապահովագրողի մասնաբաժնի գծով ճանաչվող եկամուտները.

14) վերաապահովագրության փոխանցված պայմանագրերից ապահովագրական ընկերությունների ստացվող կոմիսիոն վարձատրությունները.

15) «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և ժամկետներում ածանցյալ ֆինանսական գործիքների միասնական գրանցամատյանում գրանցված ածանցյալ ֆինանսական գործիքներով ստացվող այն վճարումները, որոնք ձևավորվել են պարտավորությունների հաշվանցի և (կամ) զուտացման արդյունքում: Սույն կետի կիրառությունն ապահովելու նպատակով հարկային մարմնին առևտրի գրանցամատյանից տեղեկությունների տրամադրման կարգը, ժամկետները և ծավալները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և հարկային մարմնի համատեղ իրավական ակտով.

16) Օրենսգրքի 73-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, հաշվանցման (պակասեցման) ենթակա ԱԱՀ-ի գումարներին ավելացվող գումարները, եթե այդ գումարները շահութահարկով հարկման նպատակով ճանաչվել են որպես համախառն եկամտից նվազեցում: Սույն կետով սահմանված ավելացվող գումարները ներառվում են այն հարկային տարվա համախառն եկամտի մեջ, որում ներառված՝ ԱԱՀ-ի հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով կատարվում է հաշվանցման (պակասեցման) ենթակա ԱԱՀ-ի գումարների ավելացումը:

5. Եթե Կառավարության սահմանած ապրանքատեսակների մատակարարման գործարքների մասով ապրանքի մատակարարման դիմաց հատուցման ենթակա գումարը, կնքված պայմանագրի համաձայն, ենթակա է ճշտման՝

ճշգրտվող տվյալների (ապրանքի վերջնական քանակի, որակական հատկանիշների) հիման վրա՝ ապրանքն ստանալուց կամ դրա վերամշակումն ավարտելուց հետո, ապա այդ ապրանքի մատակարարման դեպքում եկամուտը որոշվում է օտարերկրյա բորսայի կամ հանդեսի կողմից հրապարակվող տվյալներով որոշվող՝ ապրանքի միավորի հաշվարկային գնի և տվյալ ապրանքի մատակարարման պայմանագրով նախատեսվող ճշգրտվող տվյալների (մասնավորապես՝ ապրանքի վերջնական քանակի, որակական հատկանիշների) հիման վրա (անկախ վերջնահաշվարկի արդյունքում վճարման ենթակա հատուցման գումարից): Սույն մասի կիրառության իմաստով՝

1) եկամտի որոշման նպատակով ճշգրտվող տվյալները, դրանց ճշգրտման առավելագույն սահմանները, ինչպես նաև ապրանքի միավորի հաշվարկային գնի որոշման կարգը (ներառյալ՝ հաշվարկային գնի որոշման պարբերականությունը) սահմանում է Կառավարությունը.

2) ապրանքի մատակարարման գործարքների դեպքում ապրանքի մատակարարման դիմաց եկամտի ավելացումը կամ պակասեցումը ներառվում է ապրանքի մատակարարման դիմաց եկամտի վերջնական գումարը հայտնի դառնալու օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող շահութահարկի հաշվարկում՝ որպես եկամտի ավելացում կամ պակասեցում:

(109-րդ հոդվածը փոփ. 13.12.17 ՀՕ-264-Ն, խմբ., փոփ. 21.12.17 ՀՕ-266-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն, լրաց. 21.06.18 ՀՕ-338-Ն, 25.06.19 ՀՕ-68-Ն)

Հոդված 110. Նվազեցումները

1. Ռեզիդենտ շահութահարկ վճարողների հարկման բազան որոշելիս Օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված համախառն եկամտից նվազեցվում են ձեռնարկատիրական ծախսերը (այսուհետ՝ ծախսեր), կորուստները և այլ նվազեցումները՝ Օրենսգրքի սույն բաժնով սահմանված կարգով և չափով:

2. Մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողների հարկման բազան որոշելիս Օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված համախառն եկամտից նվազեցվում են ծախսերը, կորուստները և այլ նվազեցումները՝ Օրենսգրքի սույն բաժնով սահմանված կարգով և չափով:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված նվազեցումների միևնույն գումարը համախառն եկամտից նվազեցվում է միայն մեկ անգամ:

Հոդված 111. Ծախսերը

1. Ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի հարկման բազան որոշելիս Օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի՝ համապատասխանաբար 1-ին և 3-րդ կետերով սահմանված համախառն եկամտից նվազեցվում են շահութահարկ վճարողի կատարած՝ Օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 1-5-րդ կետերով, ինչպես նաև նույն հոդվածի 11-13-րդ մասերով սահմանված փաստաթղթերով հիմնավորված ծախսերը, եթե սույն հոդվածի 2-րդ մասով և Օրենսգրքի 113-րդ հոդվածով այլ բան սահմանված չէ:

2. Անկախ սույն հոդվածի 1-ին մասի դրույթներից՝ ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի հարկման բազան որոշելիս թույլատրվում է առանց փաստաթղթերով հիմնավորման համախառն եկամտից նվազեցնել Օրենսգրքի 117-րդ հոդվածով սահմանված չափը չգերազանցող օրապահիկի, ինչպես նաև դաշտային պայմաններում և տեղափոխման (տեղաշարժման) աշխատանքների կատարման դեպքում՝ Կառավարության սահմանած չափը չգերազանցող չափով տրվող հատուցման գումարները:

(111-րդ հոդվածը փոփ. 21.12.17 ՀՕ-266-Ն, 23.03.18 ՀՕ-261-Ն, փոփ., լրաց. 21.06.18 ՀՕ-338-Ն)

Հոդված 112. Ծախս չհամարվող տարրերը

1. Շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով շահութահարկ վճարողների համար ծախս չեն համարվում՝

1) սեփական կապիտալի բաշխումը մասնակիցներին՝ շահաբաժինների կամ նման այլ ձևով.

2) այլ հարկ վճարողի սեփական կապիտալում կատարված ներդրումները.

3) շահութահարկ վճարողի կողմից հետ գնված իր բաժնետոմսերի, բաժնեմասերի կամ փայաբաժինների իրացման և հաշվեկշռային արժեքի բացասական տարբերությունը.

4) այլ կազմակերպության լուծարման դեպքում շահութահարկ վճարողի՝ այդ կազմակերպությունում ունեցած բաժնետոմսերի, բաժնեմասերի կամ փայաբաժինների դիմաց ստացվող մնացորդային գույքի արժեքի և բաժնետոմսերի, բաժնեմասերի կամ փայաբաժինների հաշվեկշռային արժեքի բացասական տարբերությունը.

5) համատեղ գործունեության մասնակցի կողմից, որպես համատեղ գործունեության մեջ կատարվող ներդրում, համատեղ գործունեության հաշվետու մասնակցին փոխանցված ապրանքները, նրա համար կատարված աշխատանքները և (կամ) նրան մատուցված ծառայությունները.

6) ակտիվների, այդ թվում՝ արտարժույթի, արտարժույթով արտահայտված այլ ակտիվների, ինչպես նաև բանկային ոսկով և այլ թանկարժեք մետաղներով արտահայտված ակտիվների վերագնահատման բացասական արդյունքը.

7) պարտավորությունների, այդ թվում՝ արտարժույթով արտահայտված պարտավորությունների, ինչպես նաև բանկային ոսկով և այլ թանկարժեք մետաղներով արտահայտված պարտավորությունների վերագնահատման դրական արդյունքը.

8) ոչ առևտրային կազմակերպությունների անհատույց ստացած ակտիվների (այդ թվում՝ անդամավճարների), աշխատանքների և ծառայությունների գծով ծախսը կամ դրանց հաշվին կատարված ծախսը, այլ նվազեցումը կամ առաջացած կորուստը.

9) հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների լուծարման ծախսերը, ինչպես նաև լուծարվող հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքները.

10) հարկ վճարողի լուծարման դեպքում միասնական հաշվին առկա՝ մինչև հազար դրամ գումարը.

11) ներդրումային ֆոնդերում մասնակցությունը հավաստող արժեթղթերի ձեռքբերման և օտարման, ինչպես նաև այդ ֆոնդերում մասնակցության հետ կապված այլ ծախսերը.

12) խաղատների, շահումով խաղերի և (կամ) ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման գործունեության գծով կատարվող ծախսերը.

13) ինքնավար էներգաարտադրողների կողմից էլեկտրական էներգիայի արտադրության հետ կապված ծախսերը.

14) «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19.7-րդ և 19.8-րդ հոդվածներով սահմանված գործունեության տեսակների գծով կատարվող ծախսերը:

(112-րդ հոդվածի լրաց. 25.06.19 ՀՕ-68-Ն)

(112-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետը 25.06.19 ՀՕ-68-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետով ուժը կկորցնի 01.01.2021-ին)

Հոդված 113. Հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից կատարվող նվազեցումների սահմանափակումները

1. Ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի հարկման բազան որոշելիս համախառն եկամտից չեն նվազեցվում՝

1) պետական կամ համայնքների բյուջեներ կամ կուտակային կենսաթոշակային համակարգին կատարվող վճարումների կամ հարկային մարմնի կողմից վերահսկվող այլ գումարների մասով Օրենսգրքով կամ այլ օրենքներով սահմանված կարգով հաշվարկվող և վճարվող տույժերը, տուգանքները և այլ գույքային պատժամիջոցները.

2) անհատույց տրամադրած ակտիվները, անհատույց կատարված աշխատանքները կամ անհատույց մատուցված ծառայությունները, ներառյալ պարտավորությունները, բացառությամբ Օրենսգրքի 120-րդ հոդվածով և 123-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված դեպքերի.

3) սեփականության իրավունքով շահութահարկ վճարողին պատկանող, սակայն ֆինանսական վարձակալությամբ (լիզինգով) տրված հիմնական միջոցների մասով Օրենսգրքի 121-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հաշվարկվող ամորտիզացիոն մասհանումների գծով ծախսերը.

4) այն եկամուտների ստացման հետ կապված ծախսերը, որոնք շահութահարկով հարկման բազան որոշելիս նվազեցվում են համախառն եկամտից.

5) Օրենսգրքի 4-րդ, 5-րդ և 8-րդ բաժիններով սահմանված կարգով և չափով հաշվանցվող (պակասեցվող) ԱԱՀ-ի, ակցիզային հարկի և բնապահպանական հարկի գումարները.

6) ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման անհատույց կամ իրական արժեքից էականորեն ցածր արժեքով հատուցմամբ գործարքների դեպքում ԱԱՀ-ով և ակցիզային հարկով հարկման բազաների նկատմամբ Օրենսգրքի 4-րդ և 5-րդ բաժիններով սահմանված կարգով և չափով հաշվարկվող և վճարվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի գումարները.

7) Օրենսգրքի 114-120-րդ հոդվածներով սահմանված՝ շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով նորմավորվող ծախսերի՝ նորմաները գերազանցող մասը:

Հոդված 114. Վարկերի և փոխառությունների գծով վճարվող տոկոսները

1. Ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի հարկման բազան որոշելիս համախառն եկամտից չեն նվազեցվում՝

1) վարկերի և (կամ) փոխառությունների գծով հաշվարկվող տոկոսների գումարների (այդ թվում՝ ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրերի շրջանակներում հաշվարկվող տոկոսների գումարների) այն մասը, որը գերազանցում է հարկային տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկին համապատասխանող գումարները: Սույն կետի կիրառության իմաստով՝ վարկերի և (կամ) փոխառությունների գծով հաշվարկվող տոկոսների գումարները Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկին համապատասխանող գումարների հետ համեմատվում են առանձին-առանձին՝ ըստ յուրաքանչյուր վարկի և (կամ) փոխառության.

2) բանկ և վարկային կազմակերպություն չհամարվող սուբյեկտներից ներգրավված փոխառությունների գծով հարկային տարվա ընթացքում հաշվարկվող տոկոսների գումարների այն մասը, որը հարկային տարվա արդյունքներով գերազանցում է՝

ա. շահութահարկ վճարողի (բացառությամբ բանկերի և վարկային կազմակերպությունների)՝ հարկային տարվա վերջին օրվա դրությամբ առկա սեփական կապիտալի դրական մեծության կրկնապատիկը,

բ. բանկ կամ վարկային կազմակերպություն համարվող շահութահարկ վճարողի՝ հարկային տարվա վերջին օրվա դրությամբ առկա սեփական կապիտալի դրական մեծության ինն ապատիկը:

Հարկային տարվա վերջին օրվա դրությամբ առկա սեփական կապիտալի բացասական մեծության դեպքում բանկ և վարկային կազմակերպություն չհամարվող սուբյեկտներից ներգրավված փոխառությունների գծով հարկային տարվա ընթացքում հաշվարկվող տոկոսների գումարները շահութահարկ վճարողի հարկման բազան որոշելիս համախառն եկամտից չեն նվազեցվում:

Սույն կետի կիրառության իմաստով՝ սեփական կապիտալը հաշվարկվում է որպես Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկվող ակտիվների և պարտավորությունների տարբերություն:

Սույն կետի դրույթները չեն տարածվում Կառավարության սահմանած ցանկում ընդգրկված՝ միջազգային զարգացման կազմակերպություններից ստացված փոխառությունների գծով հաշվարկվող տոկոսների գումարների, ինչպես նաև պարտքային արժեթղթերի հրապարակային տեղաբաշխման միջոցով ներգրավված միջոցների գծով հաշվարկվող տոկոսների գումարների վրա.

3) բանկ և վարկային կազմակերպություն չհամարվող շահութահարկ վճարողների ստացած վարկերի և (կամ) փոխառությունների գծով հաշվարկվող տոկոսների գումարները, եթե այդ վարկերի և (կամ) փոխառությունների գումարները անտոկոս տրամադրվում են այլ հարկ վճարողների.

4) բանկ և վարկային կազմակերպություն չհամարվող շահութահարկ վճարողների ստացած վարկերի և (կամ) փոխառությունների գծով հաշվարկվող տոկոսների գումարների այն մասը, որը գերազանցում է այդ վարկերի և (կամ) փոխառությունների գումարների հաշվին այլ հարկ վճարողներին տրամադրված փոխառությունների գծով ստացվող տոկոսների գումարները:

Սույն մասի 3-րդ և 4-րդ կետերի կիրառության իմաստով՝

ա. ստացած վարկերի և (կամ) փոխառությունների գծով հաշվարկվող տոկոսների գումարները, ինչպես նաև այլ հարկ վճարողներին տրամադրված փոխառությունների գծով ստացվող տոկոսների գումարները հաշվարկվում են յուրաքանչյուր հարկային տարվա կտրվածքով,

բ. հարկման բազան որոշելիս համախառն եկամտից չնվազեցվող ծախսերի մեծությունը որոշվում է ստացած վարկերի և (կամ) փոխառությունների գծով հաշվարկվող տոկոսների հանրագումարի և այլ հարկ վճարողներին տրամադրված փոխառությունների գծով ստացվող տոկոսների հանրագումարի տարբերությամբ՝ առանց հաշվի առնելու յուրաքանչյուր վարկի և (կամ) փոխառության գծով հաշվարկվող և (կամ) ստացվող տոկոսների գումարները: Ընդ որում, հարկման բազան որոշելիս համախառն եկամտից չնվազեցվող ծախսերի մեծությունը որոշվում է ստացած վարկերի և (կամ) փոխառությունների՝ միայն այն գումարների գծով հաշվարկվող տոկոսների գումարների մասով, որոնք տրամադրվել են այլ հարկ վճարողների,

գ. հարկման բազան որոշելիս համախառն եկամտից չնվազեցվող ծախսերի մեծությունը որոշելիս ստացած վարկերի և (կամ) փոխառությունների գումարների գծով այն տոկոսների գումարները, որոնք, Օրենսգրքի 121-րդ հոդվածի 7-րդ մասի 5-րդ կետի համաձայն, ներառվում են (կապիտալացվում են) ակտիվի սկզբնական արժեքի մեջ, հաշվարկին չեն մասնակցում:

(114-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Հոդված 115. Վարձակալական վճարները

1. Ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի հարկման բազան որոշելիս համախառն եկամտից չեն նվազեցվում՝

1) շահութահարկ վճարողի կողմից վարձակալությամբ վերցված հիմնական միջոցների և (կամ) ոչ նյութական ակտիվների գծով վճարվող վարձակալական վճարները, եթե դրանք անհատույց օգտագործմամբ տրամադրվում են այլ հարկ վճարողների: Սույն կետի կիրառության իմաստով՝ համախառն եկամտից նվազեցման ոչ ենթակա

վարձակալական վճարը՝

ա. հիմնական միջոցի (այդ թվում՝ դրա մի մասի) և (կամ) ոչ նյութական ակտիվի անհատույց օգտագործմամբ տրամադրելու ժամանակահատվածի համար նույն հիմնական միջոցի (այդ թվում՝ դրա մի մասի) և (կամ) նույն ոչ նյութական ակտիվի նույն ժամանակահատվածի համար վճարվող վարձակալական վճարն է, բացառությամբ սույն կետի «բ» ենթակետով սահմանված դեպքերի,

բ. որոշվում է որպես վարձակալությամբ վերցված շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների, հողամասերի (այդ թվում՝ դրանց մի մասի) անհատույց օգտագործմամբ տրամադրելու ժամանակահատվածի համար Օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված կարգով որոշվող եկամտի և նույն շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների, հողամասերի (այդ թվում՝ դրանց մի մասի) նույն ժամանակահատվածի համար վճարվող վարձակալական վճարի բացասական տարբերություն.

2) շահութահարկ վճարողի կողմից վարձակալությամբ վերցված հիմնական միջոցների և (կամ) ոչ նյութական ակտիվների գծով վճարվող վարձակալական վճարների այն մասը, որը գերազանցում է այդ հիմնական միջոցները և (կամ) ոչ նյութական ակտիվները այլ հարկ վճարողների ենթավարձակալության տրամադրելու դիմաց ստացվող վարձակալական վճարներին: Սույն կետի կիրառության իմաստով՝ համախառն եկամտից նվազեցման ոչ ենթակա վարձակալական վճարը որոշվում է որպես հիմնական միջոցի (այդ թվում՝ դրա մի մասի) և (կամ) ոչ նյութական ակտիվի ենթավարձակալության տրամադրելու ժամանակահատվածի համար ստացվող վարձակալական վճարի (հաշվի առնելով Օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթները) և նույն հիմնական միջոցի (այդ թվում՝ դրա մի մասի) և (կամ) նույն ոչ նյութական ակտիվի վարձակալության նույն ժամանակահատվածի համար վճարվող վարձակալական վճարի բացասական տարբերություն:

(115-րդ հոդվածը լրաց. 25.06.19 ՀՕ-68-Ն)

Հոդված 116. Ներկայացուցչական ծախսերը

1. Ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի հարկման բազան որոշելիս համախառն եկամտից չի նվազեցվում ներկայացուցչական ծախսերի այն մասը, որը գերազանցում է հարկային տարվա համախառն եկամտի 0.5 տոկոսը կամ հինգ միլիոն դրամը, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի:

2. Պետական գրանցման (օրենքով սահմանված դեպքերում՝ հաշվառման) կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման կամ որպես նոտար նշանակման հարկային տարվա հարկման բազան որոշելիս համախառն եկամտից նվազեցման ենթակա ներկայացուցչական ծախսերի առավելագույն թույլատրելի մեծությունը հաշվարկելու առումով հարկային տարվա համախառն եկամտի 0.5 տոկոսի սահմանափակումը հաշվի չի առնվում:

3. Սույն հոդվածի կիրառության իմաստով՝ ներկայացուցչական ծախսեր են համարվում այլ կազմակերպությունների և ֆիզիկական անձանց հետ փոխշահավետ համագործակցություն հաստատելու և (կամ) այն պահպանելու նպատակով կատարվող ծախսերը:

Հոդված 117. Գործուղման ծախսերը

1. Ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի հարկման բազան որոշելիս համախառն եկամտից չի նվազեցվում գործուղման ծախսերի (մասնավորապես՝ օրապահիկ, գիշերավարձ, տրանսպորտային ծախսեր, ժամանակավոր գրանցման հետ կապված ծախսեր) այն մասը, որը գերազանցում է՝

1) Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործուղման դեպքում՝ հարկային տարվա համախառն եկամտի հինգ տոկոսը, բացառությամբ սույն կետի երկրորդ պարբերությամբ և սույն մասի 2-րդ կետով սահմանված դեպքերի:

Պետական գրանցման (օրենքով սահմանված դեպքերում՝ հաշվառման) կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման կամ որպես նոտար նշանակման հարկային տարվա հարկման բազան որոշելիս համախառն եկամտից նվազեցման ենթակա գործուղման ծախսերի առավելագույն թույլատրելի մեծությունը հաշվարկելու առումով հարկային տարվա համախառն եկամտի հինգ տոկոսի սահմանափակումը հաշվի չի առնվում.

2) Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս աշխատանքների կատարման և (կամ) ծառայությունների մատուցման դեպքում պատվիրատուի հետ կնքված պայմանագրերում կամ պատվիրատուի կողմից վավերացված հաշվարկային փաստաթղթերում առանձնացված՝ այդ աշխատանքների կատարման և (կամ) ծառայությունների մատուցման իրացման շրջանառության 80 տոկոսը: Սույն կետով սահմանված դեպքերում պատվիրատուի հետ կնքված պայմանագրերի և պատվիրատուի վավերացրած հաշվարկային փաստաթղթերի բացակայության կամ այդ պայմանագրերում ու հաշվարկային փաստաթղթերում աշխատանքների կատարման և (կամ) ծառայությունների մատուցման իրացման շրջանառությունն առանձնացված չլինելու դեպքում շահութահարկով հարկման բազան որոշելիս համախառն եկամտից նվազեցման ենթակա գործուղման ծախսերի թույլատրելի առավելագույն մեծությունը որոշվում է

սույն մասի 1-ին կետով սահմանված կարգով:

Սույն մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված դեպքերում գործուղվողի՝ գործուղման մեջ գտնվելու յուրաքանչյուր օրացուցային օրվա համար օրապահիկի ծախսը կարող է նվազեցվել 30 հազար դրամը, իսկ Կառավարության կողմից այլ գումար սահմանված լինելու դեպքում՝ Կառավարության կողմից սահմանված գումարը չգերազանցող գումարի չափով.

3) Հայաստանի Հանրապետության տարածքում գործուղման դեպքում՝ գործուղվողի՝ գործուղման մեջ գտնվելու յուրաքանչյուր օրացուցային օրվա համար օրապահիկի գծով 12 հազար դրամը: Ընդ որում, շինարարություն իրականացնող շահութահարկ վճարողների համար Հայաստանի Հանրապետության տարածքում օրապահիկի ծախսերի ամսական հանրագումարը չի կարող գերազանցել տվյալ շինարարությունում ընդգրկված յուրաքանչյուր վարձու աշխատողի հաշվով հաշվարկված՝ տվյալ ամսվա աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների հանրագումարը:

2. Սույն հոդվածի կիրառության իմաստով՝ գործուղման ծախսեր են համարվում շահութահարկ վճարողին կամ նրա աշխատողին Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով գործուղելու դեպքում գործուղվողին նույն օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում հատուցում տրամադրելու համար կատարվող ծախսերը:

(117-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Հոդված 118. Կառավարման ծառայությունների ծախսերը

1. Ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի հարկման բազան որոշելիս համախառն եկամտից չի նվազեցվում առանց մշտական հաստատության Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողից կամ առանց մշտական հաստատության Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող և (կամ) առանց մշտական հաստատության Հայաստանի Հանրապետության աղբյուրներից եկամուտ ստացող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձից ստացվող կառավարման ծառայությունների դիմաց կատարվող ծախսերի այն մասը, որը գերազանցում է հարկային տարվա համախառն եկամտի երկու տոկոսը, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված դեպքերի: Սույն մասով սահմանված՝ կառավարման ծառայությունների դիմաց կատարվող ծախսերի մեջ ներառվում են նաև մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողների կողմից ստացվող կառավարման ծառայությունների դիմաց կատարվող այն ծախսերը, որոնք, որպես եկամուտներ, չեն վերագրվում մշտական հաստատությանը:

2. Պետական գրանցման (օրենքով սահմանված դեպքերում՝ հաշվառման) կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման կամ որպես նոտար նշանակման հարկային տարվա հարկման բազան որոշելիս համախառն եկամտից նվազեցման ենթակա կառավարման ծառայությունների ծախսերի առավելագույն թույլատրելի մեծությունը որոշվում է հարկային տարվա համախառն եկամտի երկու տոկոսի չափով, իսկ եթե տվյալ հարկային տարվա համախառն եկամտի երկու տոկոսը փոքր է երկու միլիոն դրամից, ապա կառավարման ծառայությունների ծախսերը համախառն եկամտից նվազեցվում են երկու միլիոն դրամը չգերազանցող չափով:

3. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված սահմանափակումը չի կիրառվում տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային տեխնիկայի բնագավառում նորամուծությունների ներդրման և ինովացիոն գործունեություն իրականացնող ռեզիդենտ կազմակերպությունների հիմնադիր հանդիսացող ոչ ռեզիդենտ կազմակերպություններից և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանցից, ինչպես նաև միջազգային վարկային (դրամաշնորհային) պայմանագրերի (համաձայնագրերի) շրջանակներում ոչ ռեզիդենտ կազմակերպություններից և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանցից ստացվող կառավարման ծառայությունների ծախսերի նկատմամբ:

4. Սույն հոդվածի կիրառության իմաստով, կառավարման ծառայությունների ծախսեր են համարվում հարկ վճարողի գործունեությունը փաստացի ղեկավարելու համար այլ հարկ վճարողների կողմից կատարվող աշխատանքների և (կամ) մատուցվող ծառայությունների (բացառությամբ վարձու աշխատող համարվող անձանց կողմից կատարվող աշխատանքների) դիմաց կատարվող ծախսերը, որոնք չեն ներառում կառավարման գծով խորհրդատվության և հավատարմագրային կառավարման դիմաց կատարվող ծախսերը:

Հոդված 119. Կամավոր կենսաթոշակային բաղադրիչի շրջանակներում կատարվող կենսաթոշակային վճարները

1. Ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի հարկման բազան որոշելիս համախառն եկամտից չեն նվազեցվում՝

1) վարձու աշխատողի համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կամավոր կենսաթոշակային բաղադրիչի շրջանակներում կատարվող կենսաթոշակային վճարների այն մասը, որը գերազանցում է

տվյալ վարձու աշխատողի աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հանրագումարի 7.5 տոկոսը.

2) իր համար՝ որպես անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կամավոր կենսաթոշակային բաղադրիչի շրջանակներում կատարվող կենսաթոշակային վճարների այն մասը, որը գերազանցում է հարկման բազայի հինգ տոկոսը:

Հոդված 120. Այլ ծախսերը

1. Ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի հարկման բազան որոշելիս համախառն եկամտից չեն նվազեցվում՝

1) շահութահարկ վճարողի հետ աշխատանքային կամ քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ գտնվող ֆիզիկական անձի՝ գործուղման հետ չկապված կեցության ծախսերը (մասնավորապես, այդ ֆիզիկական անձի համար վարձակալված բնակարանի կամ առանձնատան վարձակալական վճարները, վարձակալության պայմանագրով նախատեսված՝ էլեկտրաէներգիայի, գազի, ջրի, հեռախոսի վճարները և այլ կոմունալ ծախսերը)՝ անկախ շահութահարկ վճարողի և այդ ֆիզիկական անձի միջև կնքված աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագրերում շահութահարկ վճարողի կողմից այդ ծախսերը կատարելու պարտավորություն ստանձնած լինելու հանգամանքից, բացառությամբ սույն կետի երկրորդ պարբերությամբ սահմանված դեպքերի:

Սույն կետի առաջին պարբերությամբ սահմանված սահմանափակումը չի կիրառվում այն դեպքերում, երբ շահութահարկ վճարողի և ֆիզիկական անձի միջև կնքված աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագրով նախատեսված է, որ ֆիզիկական անձի աշխատավարձը կամ վարձատրությունը ներառում է նաև վերոնշյալ ծախսերը.

2) ֆիզիկական անձանց օգնության, սննդի կազմակերպման, նրանց համար սոցիալ-մշակութային միջոցառումների կազմակերպման և համանման այլ ծախսերի այն մասը, որը գերազանցում է հարկային տարվա համախառն եկամտի 0.25 տոկոսը, իսկ հարկային տարվա ընթացքում համախառն եկամտի բացակայության դեպքում՝ այդ հարկային տարվա ընթացքում հաշվեգրված աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հանրագումարի մեկ տոկոսը.

3) անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող յուրաքանչյուր ֆիզիկական անձի հետ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում աշխատանքների ընդունման և (կամ) ծառայությունների ստացման գործարքներին վերաբերող՝ Օրենսգրքի 55-րդ հոդվածի 13-րդ մասին համապատասխան հաշվարկային փաստաթուղթ չհամարվող՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմված այլ փաստաթղթերով հիմնավորված ծախսերի այն մասը, որը ամսական կտրվածքով գերազանցում է երեք միլիոն դրամը:

(120-րդ հոդվածը լրաց. 21.12.17 ՀՕ-266-Ն, 21.06.18 ՀՕ-338-Ն)

Հոդված 121. Ծախսերի առանձին տեսակների հաշվառման առանձնահատկությունները

1. Ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցվում են ամորտիզացիայի ենթակա, սեփականության իրավունքով ռեզիդենտ շահութահարկ վճարողին կամ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողին պատկանող կամ ֆինանսական վարձակալությամբ (լիզինգով) ստացված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումների գծով ծախսերը: Ընդ որում՝

1) հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների յուրաքանչյուր միավորի գծով ամորտիզացիոն մասհանման գումարը հաշվարկվում է հարկային տարվա կտրվածքով (հաշվի առնելով նաև սույն մասի 6-րդ կետով սահմանված դրույթները)՝ որպես տվյալ հիմնական միջոցի և ոչ նյութական ակտիվի սկզբնական արժեքի և սույն մասի 3-5-րդ կետերով հիմնական միջոցների առանձին խմբերի և ոչ նյութական ակտիվների համար սահմանված՝ ամորտիզացիոն ժամկետների հարաբերություն.

2) օրենքով սահմանված կարգով վերագնահատված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների յուրաքանչյուր միավորի գծով վերագնահատումից հետո ամորտիզացիոն մասհանման գումարը հաշվարկվում է հարկային տարվա կտրվածքով (հաշվի առնելով նաև սույն մասի 6-րդ կետով սահմանված դրույթները)՝ որպես տվյալ հիմնական միջոցի և ոչ նյութական ակտիվի հաշվեկշռային արժեքի և սույն մասի 3-5-րդ կետերով հիմնական միջոցների առանձին խմբերի և ոչ նյութական ակտիվների համար սահմանված՝ ամորտիզացիոն նվազագույն ժամկետների հիման վրա հաշվարկված՝ ամորտիզացիոն մնացորդային ժամկետների հարաբերություն.

3) հիմնական միջոցների առանձին խմբերի համար կիրառվում են հետևյալ ամորտիզացիոն նվազագույն ժամկետները.

Տող	Հիմնական միջոցների խմբերը	Ամորտիզացիոն նվազագույն ժամկետը (տարի)
1)	Շենքեր, շինություններ, անշարժ գույքի միավոր համարվող գծային ինժեներական ենթակառուցվածքներ (էլեկտրահաղորդման և կապի համակարգեր (այդ թվում՝ օդային և ստորգետնյա մալուխային գծեր) և դրանց հենասյուներ, ջրարբիացման, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգեր, գազատարների և ջերմամատակարարման համակարգեր, ոռոգման համակարգեր, ջրամբարներ), բացառությամբ 2-րդ տողում նշվածների	20
2)	Հյուրանոցների, պանսիոնատների, հանգստյան տների, առողջարանների, կրթական և ուսումնական հաստատությունների շենքեր և շինություններ	10
3)	Արտադրական սարքավորումներ	5
4)	Հոսքային գծեր, ռոբոտատեխնիկա	3
5)	Հաշվողական և համակարգչային տեխնիկա, հաղորդակցական սարքավորանք	1
6)	Այլ հիմնական միջոցներ (այդ թվում՝ բանող անասուններ, բազմամյա տնկիներ և հողերի բարելավմանն ուղղված կապիտալ ներդրումներ)	8

4) շահութահարկ վճարողը կարող է ընտրել հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն այլ ժամկետներ (այդ թվում՝ ինչպես տվյալ հիմնական միջոցի և ոչ նյութական ակտիվի համար առաջին անգամ ամորտիզացիոն մասհանում հաշվարկելու պահին, այնպես էլ դրանից հետո), սակայն հիմնական միջոցների տվյալ խմբի համար սույն մասի 3-րդ կետով, իսկ ոչ նյութական ակտիվների համար՝ սույն մասի 5-րդ կետով սահմանված ժամկետներից ոչ պակաս չափով: Սույն կետով սահմանված դեպքերում յուրաքանչյուր անգամ տվյալ հիմնական միջոցի և ոչ նյութական ակտիվի ամորտիզացիոն ժամկետը վերանայելուց հետո ամորտիզացիոն մասհանման գումարը հաշվարկվում է հարկային տարվա կտրվածքով (հաշվի առնելով նաև սույն մասի 6-րդ կետով սահմանված դրույթները)՝ որպես տվյալ հիմնական միջոցի և ոչ նյութական ակտիվի՝ մինչև ամորտիզացիոն ժամկետի վերանայումն առկա հաշվեկշռային արժեքի և վերանայված ամորտիզացիոն ժամկետների հիման վրա հաշվարկված՝ ամորտիզացիոն մնացորդային ժամկետների հարաբերություն.

5) ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ժամկետները որոշում է շահութահարկ վճարողը՝ ելնելով դրանց հնարավոր օգտագործման ժամկետներից: Վերջիններիս որոշման անհնարինության դեպքում ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանվում է տասը տարի, սակայն ոչ ավելի, քան շահութահարկ վճարողի գործունեության ժամկետը: Սույն կետի կիրառության իմաստով՝ Կառավարության սահմանած չափանիշների համաձայն՝ Կառավարության լիազոր մարմնի կողմից որպես կոնցեսիայի պայմանագրեր որակված՝ ծառայությունների մատուցման կոնցեսիոն համաձայնությունների (այսուհետ՝ կոնցեսիոն պայմանագիր) շրջանակներում կոնցեսիոների (օպերատորի) համար ոչ նյութական ակտիվ է համարվում նաև կոնցեսիոն պայմանագրի շրջանակներում կոնցեդենտից (շնորհատուից) ստացված՝ հանրային ծառայությունների ենթակառուցվածքների (այդ թվում՝ կոնցեսիոների (օպերատորի) կողմից կոնցեդենտին (շնորհատուին) պատկանող ենթակառուցվածքային ակտիվների, դրանց առանձին տարրերի վրա կատարված բարելավման արդյունքի կամ գնված կամ կառուցված ու սեփականության իրավունքով կոնցեդենտին (շնորհատուին) հանձնված ենթակառուցվածքային ակտիվների (նյութական կամ ոչ նյութական), դրանց կազմում առանձին տարրերի) շահագործման իրավունքը: Սույն կետի կիրառության իմաստով՝

ա. կոնցեդենտ (շնորհատու) է համարվում պետական կամ համայնքային մարմինը, որը որոշակի ժամանակահատվածով կոնցեսիոներին (օպերատորին) է տրամադրում հանրային ծառայությունների ենթակառուցվածքներ՝ դրանք շահագործելու և (կամ) սպասարկելու նպատակով,

բ. կոնցեսիոներ (օպերատոր) է համարվում ռեզիդենտ կազմակերպությունը, որին կոնցեդենտի (շնորհատուի) կողմից տրամադրվում են հանրային ծառայությունների ենթակառուցվածքներ՝ հանրային ծառայություն մատուցելու և (կամ)

այն բարելավելու նպատակով, և որը շահագործում և (կամ) սպասարկում է այդ ենթակառուցվածքները սահմանված ժամանակաշրջանի ընթացքում.

6) հարկային տարվա ընթացքում հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների՝

ա. ձեռքբերման, ստացման, կառուցման, ստեղծման կամ մշակման (այսուհետ սույն հոդվածում՝ ձեռքբերման) դեպքում (բացառությամբ սույն կետի «գ» ենթակետով սահմանված դեպքերի) այդ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումների գծով ծախսերը կատարվում են դրանց ամորտիզացման օրվանից՝ սույն մասի 1-ին, 2-րդ և (կամ) 4-րդ կետերով սահմանված կարգով հարկային տարվա կտրվածքով հաշվարկված ամորտիզացիոն մասհանման գումարի և հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացման օրվանից մինչև հարկային տարվա ավարտն ընկած ժամանակահատվածում ներառված ամբողջական ամիսների թվի 1/12-ի արտադրյալի չափով՝ ոչ ամբողջական ամիսների համար հաշվի առնելով նաև սույն կետի վերջին պարբերության դրույթները,

բ. օտարման կամ լուծարման դեպքում (բացառությամբ սույն կետի «գ» ենթակետով սահմանված դեպքերի) այդ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումների գծով ծախսերը կատարվում են հարկային տարվա սկզբից մինչև դրանց օտարման կամ լուծարման օրը (իսկ եթե մինչև օտարման կամ լուծարման օրը հիմնական միջոցը և ոչ նյութական ակտիվը դադարել են համարվել ամորտիզացման ենթակա, ապա՝ մինչև ամորտիզացման ենթակա համարվելուց դադարելու օրը)՝ սույն մասի 1-ին, 2-րդ և (կամ) 4-րդ կետերով սահմանված կարգով հարկային տարվա կտրվածքով հաշվարկված ամորտիզացիոն մասհանման գումարի և հարկային տարվա սկզբից մինչև հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարման կամ լուծարման օրը (իսկ եթե մինչև օտարման կամ լուծարման օրը հիմնական միջոցը և ոչ նյութական ակտիվը դադարել են համարվել ամորտիզացման ենթակա, ապա՝ մինչև ամորտիզացման ենթակա համարվելուց դադարելու օրը) ընկած ժամանակահատվածում ներառված ամբողջական ամիսների թվի 1/12-ի արտադրյալի չափով՝ ոչ ամբողջական ամիսների համար հաշվի առնելով նաև սույն կետի վերջին պարբերության դրույթները,

գ. ձեռքբերման և օտարման կամ ձեռքբերման և լուծարման դեպքում այդ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումների գծով ծախսերը կատարվում են դրանց ամորտիզացման օրվանից մինչև դրանց օտարման կամ լուծարման օրը (իսկ եթե մինչև օտարման կամ լուծարման օրը հիմնական միջոցը և ոչ նյութական ակտիվը դադարել են համարվել ամորտիզացման ենթակա, ապա՝ մինչև ամորտիզացման ենթակա համարվելուց դադարելու օրը)՝ սույն մասի 1-ին, 2-րդ և (կամ) 4-րդ կետերով սահմանված կարգով հարկային տարվա կտրվածքով հաշվարկված ամորտիզացիոն մասհանման գումարի և հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացման օրվանից մինչև հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարման կամ լուծարման օրը (իսկ եթե մինչև օտարման կամ լուծարման օրը հիմնական միջոցը և ոչ նյութական ակտիվը դադարել են համարվել ամորտիզացման ենթակա, ապա՝ մինչև ամորտիզացման ենթակա համարվելուց դադարելու օրը) ընկած ժամանակահատվածում ներառված ամբողջական ամիսների թվի 1/12-ի արտադրյալի չափով՝ ոչ ամբողջական ամիսների համար հաշվի առնելով նաև սույն կետի վերջին պարբերության դրույթները,

դ. հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացման ենթակա դառնալու և (կամ) ամորտիզացման ենթակա համարվելուց դադարելու դեպքում այդ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումների գծով ծախսերը կատարվում են դրանց ամորտիզացման օրվանից մինչև դրանց ամորտիզացման ենթակա համարվելուց դադարելու օրը՝ սույն մասի 1-ին, 2-րդ և (կամ) 4-րդ կետերով սահմանված կարգով հարկային տարվա կտրվածքով հաշվարկված ամորտիզացիոն մասհանման գումարի և հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացման օրվանից մինչև հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացման ենթակա համարվելուց դադարելու օրը ընկած ժամանակահատվածում ներառված ամբողջական ամիսների թվի 1/12-ի արտադրյալի չափով՝ ոչ ամբողջական ամիսների համար հաշվի առնելով նաև սույն կետի վերջին պարբերության դրույթները:

Սույն կետի «ա»-«դ» ենթակետերով սահմանված դեպքերում ոչ ամբողջական ամիսների համար ամորտիզացիոն մասհանման գումարը հաշվարկվում է սույն մասի 1-ին, 2-րդ և (կամ) 4-րդ կետերով սահմանված կարգով հարկային տարվա կտրվածքով հաշվարկված ամորտիզացիոն մասհանման գումարի և այդ ոչ ամբողջական ամիսներում ներառված օրերի թվի 1/365-ի արտադրյալի չափով.

7) մինչև հանքի շահագործման սկիզբը կատարված մակաբացման աշխատանքների գծով ճանաչված ակտիվներն ամորտիզացվում են հաստատված օգտակար հանածոյի ընդհանուր պաշարի արդյունահանմանը համամասնորեն՝ ներառվելով արդյունահանվող օգտակար հանածոյի ինքնարժեքում: Հանքի շահագործումն սկսելուց հետո կատարված մակաբացման աշխատանքների գծով ծախսերը վերագրվում են մակաբացման աշխատանքների արդյունքում արդյունահանվող օգտակար հանածոյի ինքնարժեքին: Մակաբացման աշխատանքների գծով ծախսերի՝ արդյունահանվող օգտակար հանածոյի ինքնարժեքին վերագրելու կարգը սահմանում է Կառավարությունը:

2. Անկախ սույն հոդվածի 1-ին մասի դրույթներից՝

1) ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի հարկման բազայի որոշման նպատակով մինչև 50 հազար դրամ (ներառյալ) արժողությամբ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների սկզբնական արժեքի չափով ծախսը համախառն եկամտից ամբողջությամբ նվազեցվում է այդ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվները ձեռք բերելու հարկային տարվա ընթացքում.

2) Օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ Կառավարության որոշմամբ ընտրված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներդրումային ծրագրերի շրջանակներում, ինչպես նաև Օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ Կառավարության որոշմամբ հավանության արժանացած գործարար ծրագրերի շրջանակներում սահմանված ցանկում ներառված՝ ներմուծվող կամ ձեռք բերվող (կառուցվող, մշակվող) հիմնական միջոցների ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանվում է ռեզիդենտ շահութահարկ վճարողի հայեցողությամբ, բայց ոչ պակաս, քան մեկ տարի:

3. Ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցվում են՝

1) հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների (այդ թվում՝ գործառնական վարձակալությամբ կամ ֆինանսական վարձակալությամբ (լիզինգով) կամ անհատույց օգտագործմամբ վերցված) վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերը՝ սույն կետի «ա»-«գ» ենթակետերով սահմանված կարգով: Սույն կետի կիրառության իմաստով՝ հիմնական միջոցի և ոչ նյութական ակտիվի վրա կատարված ծախսը համարվում է կապիտալ բնույթի ծախս, եթե այն գերազանցում է տվյալ հիմնական միջոցի և ոչ նյութական ակտիվի սկզբնական արժեքի (օրենքով սահմանված կարգով իրականացված վերագնահատման դեպքում՝ վերագնահատված արժեքի), հինգ տոկոսը, կամ եթե հարկային տարվա ընթացքում հիմնական միջոցի և ոչ նյութական ակտիվի վրա կատարված՝ հիմնական միջոցի և ոչ նյութական ակտիվի սկզբնական արժեքի (օրենքով սահմանված կարգով իրականացված վերագնահատման դեպքում՝ վերագնահատված արժեքի) հինգ տոկոսը չգերազանցող առանձին ծախսերի հանրագումարը գերազանցում է տվյալ հիմնական միջոցի և ոչ նյութական ակտիվի սկզբնական արժեքի (օրենքով սահմանված կարգով իրականացված վերագնահատման դեպքում՝ վերագնահատված արժեքի) 15 տոկոսը՝ այդ չափը գերազանցող մասով: Յուրաքանչյուր ամսվա ընթացքում յուրաքանչյուր հիմնական միջոցի և ոչ նյութական ակտիվի վրա կատարված՝ հիմնական միջոցի և ոչ նյութական ակտիվի սկզբնական արժեքի (օրենքով սահմանված կարգով իրականացված վերագնահատման դեպքում՝ վերագնահատված արժեքի) հինգ տոկոսը գերազանցող կապիտալ բնույթի ծախսերն ավելացվում են դրանց կատարման ամսվա 1-ի դրությամբ տվյալ հիմնական միջոցի և ոչ նյութական ակտիվի հաշվեկշռային արժեքին, իսկ հիմնական միջոցի և ոչ նյութական ակտիվի սկզբնական արժեքի (օրենքով սահմանված կարգով իրականացված վերագնահատման դեպքում՝ վերագնահատված արժեքի) հինգ տոկոսը չգերազանցող առանձին ծախսերի հանրագումարի՝ հիմնական միջոցի և ոչ նյութական ակտիվի սկզբնական արժեքի (օրենքով սահմանված կարգով իրականացված վերագնահատման դեպքում՝ վերագնահատված արժեքի) 15 տոկոսը գերազանցող մասն ավելացվում է գերազանցելու օրն ընդգրկող ամսվա 1-ի դրությամբ տվյալ հիմնական միջոցի և ոչ նյութական ակտիվի հաշվեկշռային արժեքին, և այդ ամսվանից սկսած՝ տվյալ հիմնական միջոցը և ոչ նյութական ակտիվը ամորտիզացվում են՝

ա. մնացորդային ամորտիզացիոն ժամանակահատվածում (այդ թվում՝ այն դեպքում, երբ հիմնական միջոցի ամորտիզացիոն ժամկետը ընտրել է շահութահարկ վճարողը՝ սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն), եթե տվյալ ամսվա ընթացքում տվյալ հիմնական միջոցի վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերը չեն գերազանցում դրանց կատարման հարկային տարվա հունվարի 1-ի դրությամբ տվյալ հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքը, իսկ հիմնական միջոցը հարկային տարվա հունվարի 1-ից հետո ձեռք բերված լինելու դեպքում՝ սկզբնական արժեքը,

բ. մնացորդային ամորտիզացիոն ժամանակահատվածում (այդ թվում՝ այն դեպքում, երբ հիմնական միջոցի ամորտիզացիոն ժամկետը ընտրել է շահութահարկ վճարողը՝ սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն), բայց ոչ պակաս տվյալ հիմնական միջոցի համար սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված ամորտիզացիոն նվազագույն ժամկետից, եթե տվյալ ամսվա ընթացքում տվյալ հիմնական միջոցի վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերը գերազանցում են դրանց կատարման հարկային տարվա հունվարի 1-ի դրությամբ տվյալ հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքը, իսկ հիմնական միջոցը հարկային տարվա հունվարի 1-ից հետո ձեռք բերված լինելու դեպքում՝ սկզբնական արժեքը, և եթե սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով տվյալ հիմնական միջոցի համար սահմանված ամորտիզացիոն նվազագույն ժամկետը պակաս է ութ տարուց,

գ. մնացորդային ամորտիզացիոն ժամանակահատվածում (այդ թվում՝ այն դեպքում, երբ հիմնական միջոցի ամորտիզացիոն ժամկետը ընտրել է շահութահարկ վճարողը՝ սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն), բայց ոչ պակաս ութ տարուց, եթե տվյալ ամսվա ընթացքում տվյալ հիմնական միջոցի վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերը գերազանցում են դրանց կատարման հարկային տարվա հունվարի 1-ի դրությամբ տվյալ հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքը, իսկ հիմնական միջոցը հարկային տարվա հունվարի 1-ից հետո ձեռք բերված լինելու դեպքում՝ սկզբնական արժեքը, և եթե սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով տվյալ հիմնական միջոցի համար սահմանված ամորտիզացիոն նվազագույն ժամկետը կազմում է ութ տարի և ավելի,

դ. ոչ նյութական ակտիվի դեպքում՝ մնացորդային ամորտիզացիոն ժամանակահատվածում.

2) հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվի (այդ թվում՝ գործառնական վարձակալությամբ կամ ֆինանսական վարձակալությամբ (լիզինգով) կամ անհատույց օգտագործմամբ վերցված) վրա կատարված ընթացիկ բնույթի ծախսերը՝ դրանց կատարման տարվա ընթացքում: Սույն կետի կիրառության իմաստով՝ հիմնական միջոցի և ոչ նյութական ակտիվի վրա կատարված ծախսը համարվում է ընթացիկ բնույթի ծախս, եթե սույն մասի 1-ին կետի համաձայն՝ այն չի համարվում կապիտալ բնույթի ծախս:

Սույն մասի կիրառության իմաստով՝

1) հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվի վրա կատարված ծախսերը՝ որպես կապիտալ կամ ընթացիկ

բնույթի ծախսեր, դասակարգելու համար գործառնական վարձակալությամբ կամ ֆինանսական վարձակալությամբ (լիզինգով) կամ անհատույց օգտագործմամբ վերցված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների սկզբնական և (կամ) հաշվեկշռային արժեքներ են ընդունվում վարձատուի կամ լիզինգատուի կամ անհատույց օգտագործման տրամադրողի մոտ հաշվառված՝ համապատասխանաբար սկզբնական և (կամ) հաշվեկշռային արժեքները, որոնք նշվում են համապատասխան ակտում կամ պայմանագրում կամ հանձնման-ընդունման փաստաթղթում: Դրանցում սկզբնական և (կամ) հաշվեկշռային արժեքների բացակայության դեպքում այդ արժեքները համարվում են զրո.

2) գործառնական վարձակալությամբ կամ ֆինանսական վարձակալությամբ (լիզինգով) կամ անհատույց օգտագործմամբ վերցված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերն ամորտիզացնելու համար որպես ամորտիզացիոն նվազագույն ժամկետ է ընդունվում սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված ժամկետը, իսկ որպես մնացորդային ամորտիզացիոն ժամանակահատված է ընդունվում վարձատուի կամ լիզինգատուի կամ անհատույց օգտագործման տրամադրողի մոտ հաշվառված մնացորդային ամորտիզացիոն ժամանակահատվածը, որոնք նշվում են համապատասխան ակտում կամ պայմանագրում կամ հանձնման-ընդունման փաստաթղթում: Դրանցում մնացորդային ամորտիզացիոն ժամանակահատվածի բացակայության դեպքում որպես մնացորդային ամորտիզացիոն ժամանակահատված է ընդունվում սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված ժամկետը.

3) գործառնական վարձակալությամբ կամ ֆինանսական վարձակալությամբ (լիզինգով) կամ անհատույց օգտագործմամբ վերցված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվի վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերը համախառն եկամտից նվազեցվում են այն դեպքում, երբ այդ ծախսերի կատարման պարտականությունը համապատասխան ակտով կամ պայմանագրով կրում է վարձակալը կամ օգտագործողը.

4) գործառնական վարձակալության կամ ֆինանսական վարձակալության (լիզինգի) կամ անհատույց օգտագործման պայմանագրի լուծման և (կամ) փաստացի դադարեցման դեպքում կապիտալ բնույթի ծախսերի չամորտիզացված մնացորդը վարձակալի կամ օգտագործողի համախառն եկամտից նվազեցման ենթակա չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ վարձակալը կամ օգտագործողը կապիտալ բնույթի ծախսերի չամորտիզացված մնացորդը հատուցման դիմաց օտարում է վարձատուին կամ հիմնական միջոցը և ոչ նյութական ակտիվը օգտագործման տրամադրողին.

5) ամորտիզացիայի ոչ ենթակա հիմնական միջոցների (այդ թվում՝ հողամասերի) վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերն ամորտիզացվում են սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով այլ հիմնական միջոցների համար սահմանված ամորտիզացիոն նվազագույն ժամկետում՝ հաշվի առնելով սույն պարբերության 1-4-րդ կետերով սահմանված դրույթները:

4. Ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի հարկման բազայի որոշման նպատակով շահութահարկ վճարողի կողմից բնական պաշարների արդյունահանման նախապատրաստական, երկրաբանական հետախուզման և նախագծահետախուզական աշխատանքների վրա կատարվող ծախսերը համախառն եկամտից նվազեցվում են սույն հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով ոչ նյութական ակտիվների գծով ամորտիզացիոն մասհանումների գումարի որոշման համար սահմանված կարգով:

5. Ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի հարկման բազայի որոշման նպատակով՝

1) ձեռք բերվող շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների, հողամասերի սկզբնական արժեքը ընդունվում է դրանց համար Օրենսգրքի 228-րդ հոդվածով սահմանված կարգով որոշվող՝ անշարժ գույքի հարկով հարկման բազայից ոչ պակաս չափով.

2) շենքերը, շինությունները (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքները, հողամասերը վարձակալության կամ անհատույց օգտագործման վերցնելու գործարքների մասով ծախսը ընդունվում է դրանց համար Օրենսգրքի 228-րդ հոդվածով սահմանված՝ անշարժ գույքի հարկով հարկման բազայի, իսկ դրա բացակայության դեպքում՝ անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտի ընդհանուր մակերեսում վարձակալության կամ անհատույց օգտագործման վերցված մակերեսի տեսակարար կշռին համապատասխանող հարկման բազայի 2.5 տոկոսից ոչ պակաս չափով՝ հաշվարկված տարեկան կտրվածքով:

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում սույն կետով սահմանված գույքը վարձակալության կամ անհատույց օգտագործման վերցնելու և (կամ) այդ գույքի վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքը դադարեցվելու դեպքում այդ հաշվետու ժամանակաշրջանում նշված գործարքների մասով ծախսը ընդունվում է որպես սույն կետի առաջին պարբերությամբ սահմանված ծախսի և գույքը վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքով վերցրած լինելու օրերի՝ հաշվետու ժամանակաշրջանում ներառվող օրերի մեջ ունեցած տեսակարար կշռի արտադրյալ:

Սույն մասի 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե սույն մասով սահմանված գույքային միավորների ձեռքբերման կամ վարձակալության կամ անհատույց օգտագործման վերցնելու գործարքի կողմ է համարվում պետությունը կամ համայնքը (բացառությամբ այն դեպքերի, երբ գործարքը կատարվում է այլ կազմակերպության միջոցով) կամ եթե օտարողը կամ վարձատուն (փոխատուն) հանդիսանում է անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձը:

6. Ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի հարկման բազայի որոշման նպատակով,

համախառն եկամուտը նվազեցվում է անմիջականորեն շահութահարկ վճարողի կողմից կամ նրա պատվերով իրականացվող գիտահետազոտական և (կամ) փորձակոնստրուկտորական աշխատանքների ու ծառայությունների վրա կատարվող ծախսերի չափով՝ այդ ծախսերի կատարման հարկային տարվա ընթացքում ամբողջովին: Սույն մասի կիրառության իմաստով՝

1) գիտահետազոտական և (կամ) փորձակոնստրուկտորական աշխատանքների ու ծառայությունների վրա կատարվող ծախսերը համախառն եկամտից նվազեցվում են, եթե գիտահետազոտական և (կամ) փորձակոնստրուկտորական աշխատանքների ու ծառայությունների համար վճարվող գումարներն առանձնացված են պատվիրատուի և կատարողի միջև կնքվող պայմանագրերում և (կամ) պատվիրատուի և կատարողի միջև կազմվող՝ Օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 1-5-րդ կետերով սահմանված հաշվարկային փաստաթղթերում.

2) գիտահետազոտական աշխատանքներ ու ծառայություններ են համարվում ձեռք բերված գիտելիքների ընդլայնման, նոր գիտելիքների ստացման ու կիրառման նպատակով կատարվող գիտական հետազոտություններն ու մշակումները, այդ թվում՝

ա. հիմնարար գիտական հետազոտությունները՝ բնության օրենքների, մարդու գործունեության, հասարակության կառուցվածքի և զարգացման հիմնական օրինաչափությունների մասին ունեցած գիտելիքների ընդլայնմանն ու նոր գիտելիքների ձեռքբերմանն ուղղված տեսական կամ փորձարարական գործունեությունը,

բ. կիրառական գիտական հետազոտությունները՝ հիմնականում գործնական նշանակություն ունեցող, որոշակի խնդիրների լուծմանը նպատակաուղղված հետազոտությունները, որոնցից են գիտական հետազոտությունների կամ գործնական փորձի միջոցով ձեռք բերված գիտելիքների վրա հիմնված և մարդու կյանքի ու առողջության պահպանմանը, նոր նյութերի, արտադրանքի, ծառայությունների, համակարգերի կամ մեթոդների ստեղծմանը և դրանց հետագա կատարելագործմանն ուղղված փորձարարական մշակումները.

3) փորձակոնստրուկտորական աշխատանքներ ու ծառայություններ են համարվում ինժեներական օբյեկտի կամ տեխնիկական համակարգի որոշակի կոնստրուկցիայի մշակումը, գծագրի կամ նշանային միջոցների այլ համակարգի մակարդակով նոր օբյեկտի մտահղացումների և տարբերակների մշակումը, տեխնոլոգիական գործընթացների մշակումը, այդ թվում՝

ա. արտադրանքի կամ տեխնոլոգիայի այլընտրանքների գնահատումը,

բ. արտադրանքի փորձանմուշների նախագծումը, կառուցումը և փորձարկումը,

գ. նոր տեխնոլոգիաների կիրառմամբ՝ գործիքների, ձուլամայրերի, կաղապարների և դրոշմոցների նախագծումը.

4) գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքներում ու ծառայություններում չեն ներառվում՝

ա. կրթությունը և կադրերի պատրաստումը (վերապատրաստումը),

բ. մարկետինգային գործունեությունը,

գ. ընդհանուր նշանակության տեղեկությունների հավաքումը և մշակումը,

դ. ստանդարտացումը,

ե. մասնագիտացված բժշկական աշխատանքներն ու ծառայությունները,

զ. գոյություն ունեցող ծրագրային ապահովման հարմարեցումը (ադապտացումը, պահպանումը և ուղեկցումը), բացառությամբ տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային տեխնիկայի բնագավառում գոյություն ունեցող ծրագրային ապահովման հարմարեցման (ադապտացման, պահպանման և ուղեկցման),

է. արտադրության գործընթացում նորամուծությունների ներդրումը, բացառությամբ տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային տեխնիկայի բնագավառում նորամուծությունների ներդրման,

ը. կառավարումը,

թ. սոցիոլոգիական և այլ հարցումների անցկացումը, դրանց արդյունքների ամփոփումը և առաջարկությունների մշակումը, գործող օրենսդրության ու վիճակագրական տվյալների վերլուծությունը:

7. Ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի հարկման բազայի որոշման նպատակով՝

1) ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման և (կամ) ծառայությունների մատուցման հետ անմիջականորեն կապված ծախսերը համախառն եկամտից նվազեցվում են այդ ապրանքների մատակարարմանը, աշխատանքների կատարմանը և (կամ) ծառայությունների մատուցմանը համամասնորեն.

2) առևտրական (առք ու վաճառքի) գործունեության առարկա հանդիսացող ապրանքների սկզբնական արժեքը համախառն եկամտից նվազեցվում է այդ ապրանքների մատակարարմանը համամասնորեն.

3) սույն մասի 1-ին և 2-րդ կետերում չնշված ակտիվների (այդ թվում՝ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների) հաշվեկշռային արժեքը համախառն եկամտից նվազեցվում է այդ ակտիվների օտարմանը համամասնորեն.

4) շահութահարկ վճարողի գործունեության հետ կապված վարչական ծախսերը, իրացման ծախսերը, ոչ արտադրական բնույթի այլ ծախսերը համախառն եկամտից նվազեցվում են այն հարկային տարվա ընթացքում, որին դրանք վերաբերում են.

5) ֆինանսական ծախսերը համախառն եկամտից նվազեցվում են այն հարկային տարվա ընթացքում, որին դրանք վերաբերում են, բացառությամբ հաշվապահական հաշվառման ոլորտը կարգավորող օրենսդրությամբ սահմանված այն դեպքերի, երբ դրանք ներառվում են (կապիտալացվում են) ակտիվի սկզբնական արժեքի մեջ:

Սույն մասի 4-րդ և 5-րդ կետերի կիրառության իմաստով համարվում է, որ ծախսը վերաբերում է տվյալ հարկային տարվան, եթե ծախսի կատարման համար հիմք հանդիսացող հաշվարկային փաստաթղթում նշված գործարքը

կատարվել է (այսինքն՝ հաշվարկային փաստաթղթում նշված՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ամսաթիվը ներառված է) այդ հարկային տարվա մեջ (այդ թվում՝ այն դեպքում, երբ հաշվարկային փաստաթղթի դուրսգրման ամսաթիվը ներառված է հարկային տարվան նախորդող կամ հաջորդող որևէ հարկային տարվա մեջ:

Սույն մասի կիրառության իմաստով՝

1) ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման և (կամ) ծառայությունների մատուցման հետ անմիջականորեն կապված ծախսեր են համարվում, մասնավորապես, հումքի, նյութերի, դետալների, հանգույցների, կիսապատրաստուկների ծախսերը, արտադրական գործընթացներում, աշխատանքների կատարման և (կամ) ծառայությունների մատուցման գործընթացներում ներգրավված անձնակազմի աշխատանքի վարձատրության ծախսերը, գործատուի կողմից այդ անձնակազմի համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կամավոր կուտակային կենսաթոշակային սխեմայի շրջանակներում կատարվող կուտակային վճարները, շահագործման մեջ գտնվող արտադրական նշանակության հիմնական միջոցների և շահագործման մեջ գտնվող ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումները, ինչպես նաև այդ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վրա կատարվող ծախսերը.

2) վարչական ծախսեր են համարվում, մասնավորապես, կառավարման անձնակազմի աշխատանքի վարձատրության ծախսերը, գործատուի կողմից այդ անձնակազմի համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կամավոր կուտակային կենսաթոշակային սխեմայի շրջանակներում կատարվող կուտակային վճարները, գործուղումների, նյութական և տրանսպորտային սպասարկման, կառավարման տեխնիկական միջոցների և ոչ արտադրական (ընդհանուր տնտեսական) նշանակության հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումները, այդ հիմնական միջոցների վրա կատարվող ծախսերը, ներկայացուցչական ծախսերը, դատական ծախսերը, աուդիտորական, հաշվապահական, խորհրդատվական և տեղեկատվական ծառայությունների ստացման ծախսերը, կադրերի պատրաստման և վերապատրաստման ծախսերը, աշխատուժի հավաքագրման ծախսերը, գրասենյակային, փոստային, հեռախոսային, հեռագրային և նմանատիպ այլ ծառայությունների ստացման ծախսերը.

3) իրացման ծախսեր են համարվում, մասնավորապես, ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման և (կամ) ծառայությունների մատուցման հետ կապված՝ ապրանքների փաթեթավորման, պահպանման, բեռնման, տեղափոխման, բեռնաթափման, ուղեկցման, գովազդի և մարկետինգի ծախսերը.

4) ոչ արտադրական բնույթի այլ ծախսեր են համարվում, մասնավորապես, գյուտարարական, ռացիոնալիզատորական, գիտահետազոտական, նախագծային և փորձակոնստրուկտորական աշխատանքների ընդունման և (կամ) ծառայությունների ստացման ծախսերը, շահագործման մեջ չգտնվող արտադրական նշանակության հիմնական միջոցների և շահագործման մեջ չգտնվող ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումները, ինչպես նաև այդ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վրա կատարվող ծախսերը.

5) ֆինանսական ծախսեր են համարվում, մասնավորապես, վարկերի և փոխառությունների գծով հաշվարկվող տոկոսները (այդ թվում՝ ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրերի շրջանակներում հաշվարկվող տոկոսները), վարկերի և փոխառությունների ստացման հետ կապված ծախսերը (այդ թվում՝ ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրերի կնքման հետ կապված ծախսերը, արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման հետ կապված ծախսերը:

8. Ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի հարկման բազայի որոշման նպատակով ծախս են համարվում նաև՝

1) ապահովագրական և վերաապահովագրական վճարները հետևյալ կարգով.

ա. որպես ապահովադիր հանդես գալու դեպքում իր աշխատողների համար կատարվող ապահովագրական վճարները, եթե այդ վճարների կատարումը պարտադրված է օրենքով,

բ. որպես գործատու հանդես գալու դեպքում իր վարձու աշխատողների առողջության ապահովագրության համար կատարվող ապահովագրական վճարները՝ յուրաքանչյուր վարձու աշխատողի համար եկամտի ստացման յուրաքանչյուր ամսվա հաշվով մինչև 10 հազար դրամի չափով.

2) բարձրագույն ուսումնական հաստատության ուսանողական համակազմի մինչև 10 տոկոսին ծառայության մատուցման հետ կապված ծախսերը՝ անկախ այդ ծառայությունների դիմաց ուսանողների կողմից հատուցում կատարվելու հանգամանքից.

3) օրենսդրությամբ սահմանված դեպքերում և չափով վարձու աշխատողի ժամանակավոր անաշխատունակության նպաստների (բացառությամբ «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ մայրության նպաստների)՝ գործատուի միջոցների հաշվին վճարվող գումարները.

4) պատճառված վնասի (կորստի) հատուցումը.

5) տույժերը, տուգանքները և գույքային այլ պատժամիջոցները, բացառությամբ Օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված դեպքերի.

6) չփոխհատուցվող և Օրենսգրքով սահմանված կարգով չհաշվանցվող (չպակասեցվող) հարկերը (բացառությամբ Օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված դեպքերի) և վճարները.

7) Օրենսգրքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հաշվանցման (պակասեցման) ենթակա ԱԱՀ-ի գումարներից

նվազեցվող գումարները, եթե նույն մասում նշված ակտիվների գծով ծախսերը հարկման բազայի որոշման նպատակով ենթակա են համախառն եկամտից նվազեցման: Սույն կետով սահմանված նվազեցվող գումարները ներառվում են այն հարկային տարվա ծախսերի մեջ, որում ներառված՝ ԱԱՀ-ի հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով կատարվում է հաշվանցման (պակասեցման) ենթակա ԱԱՀ-ի գումարների նվազեցումը:

(121-րդ հոդվածը խմբ. 25.10.17 ՀՕ-191-Ն, լրաց., փոփ. 21.12.17 ՀՕ-266-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Հոդված 122. Կորուստները

1. Ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցվում են գույքի բնական կորուստները՝ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով, ինչպես նաև գույքի՝ փաստաթղթերով հիմնավորված որակական, պատահական, տեխնոլոգիական և (կամ) այլ կորուստները՝ սույն հոդվածի համապատասխանաբար 3-7-րդ մասերով սահմանված կարգով:

2. Գույքի բնական կորուստը համախառն եկամտից նվազեցվում է Կառավարության սահմանած չափը չգերազանցող չափով՝ այդ կորստի տեղի ունենալու կամ այդ կորուստը հայտնաբերելու հարկային տարվա ընթացքում: Սույն մասի կիրառության իմաստով՝ գույքի բնական կորուստ է համարվում գույքի պահպանության կամ տեղափոխության ընթացքում ֆիզիկաքիմիական, մեխանիկական կամ կենսաբանական գործոնների ազդեցությամբ պայմանավորված՝ գույքի քաշի, չափի, ծավալի և (կամ) քանակի նվազումը: Կառավարության կողմից բնական կորստի չափ սահմանված չլինելու կամ բնական կորստի չափը Կառավարության սահմանած չափը գերազանցելու դեպքում համախառն եկամուտը այդ կորստի չափով (բնական կորստի չափը Կառավարության սահմանած չափը գերազանցելու դեպքում՝ գերազանցող չափով) չի նվազեցվում:

3. Գույքի՝ փաստաթղթերով հիմնավորված որակական կորուստը համախառն եկամտից նվազեցվում է այդ կորստի տեղի ունենալու կամ այդ կորուստը հայտնաբերելու հարկային տարվա համախառն եկամտի մեկ տոկոսը չգերազանցող չափով՝ տվյալ հարկային տարվա ընթացքում: Սույն մասի կիրառության իմաստով՝ գույքի որակական կորուստ է համարվում պիտանիության (պահպանման) ժամկետ ունեցող ապրանքի պիտանիության (պահպանման) ժամկետի սպառման կամ ժամանակի ընթացքում մաշվածության և (կամ) քայքայման արդյունքում գույքի սպառողական հատկանիշների անկման կամ Օրենսգրքով կամ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում ապրանքի մատակարարման արգելքների կամ սահմանափակումների առաջացման արդյունքում շրջանառությունից հանվող գույքը կամ ապրանքը:

4. Գույքի՝ փաստաթղթերով հիմնավորված պատահական կորուստը համախառն եկամտից նվազեցվում է ամբողջ չափով՝ այդ կորստի տեղի ունենալու կամ այդ կորուստը հայտնաբերելու հարկային տարվա ընթացքում: Սույն մասի կիրառության իմաստով՝ գույքի պատահական կորուստ է համարվում գույքի կորուստը, ոչնչացումը կամ վնասումը, որը տեղի է ունեցել հրդեհի, ջրհեղեղի, երկրաշարժի կամ այլ տարերային աղետի, նավաբեկման, պատերազմի, մարտական գործողությունների, զինված հարձակման, զանգվածային անկարգությունների, ապստամբության կամ նման այլ արտակարգ իրադարձությունների (ներառյալ՝ օրենքով սահմանված ապահովագրական պատահարները) հետևանքով:

5. Գույքի՝ փաստաթղթերով հիմնավորված տեխնոլոգիական կորուստը համախառն եկամտից նվազեցվում է որպես նյութածախսի տարր՝ սույն մասով սահմանված չափով՝ Օրենսգրքի 121-րդ հոդվածի 7-րդ մասի առաջին պարբերության 1-ին կետով սահմանված կարգով, իսկ սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված դեպքերում՝ նաև այդ մասով սահմանված չափով և կարգով: Սույն մասի կիրառության իմաստով՝ գույքի տեխնոլոգիական կորուստ են համարվում՝

1) շահութահարկ վճարողի կողմից միավոր արտադրանքի արտադրության (հավաքման, պատրաստման) համար սահմանված՝ հումքի, նյութերի, դետալների և (կամ) հանգույցների ծախսի նորմայի այն մասը, որը արտադրության (հավաքման, պատրաստման) գործընթացում օգտագործվող տեխնոլոգիայի հետևանքով կորցրել է իր որակական հատկանիշները.

2) խոտան արտադրանքը՝ շահութահարկ վճարողի սահմանած նորմայի չափով.

3) օրենսդրությամբ կամ Կառավարության լիազոր մարմնի սահմանած տեխնոլոգիական կորուստները:

6. Գույքի՝ փաստաթղթերով հիմնավորված այլ կորուստը համախառն եկամտից նվազեցվում է այդ կորստի չափով՝ սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված կարգով: Սույն մասի կիրառության իմաստով՝ գույքի՝ փաստաթղթերով հիմնավորված այլ կորուստը սույն հոդվածի 2-5-րդ մասերում չնշված՝ գույքի փաստացի այլ կորուստն է:

7. Սույն հոդվածի 5-րդ մասում նշված՝ գույքի՝ փաստաթղթերով հիմնավորված տեխնոլոգիական կորստի որևէ նորմա սահմանված չլինելու կամ որևէ նորմա գերազանցվելու դեպքում, ինչպես նաև սույն հոդվածի 6-րդ մասում նշված՝ գույքի՝ փաստաթղթերով հիմնավորված այլ կորուստների առկայության դեպքում համապատասխան կորուստները համախառն եկամտից նվազեցվում են՝

ա. վնաս պատճառողի կողմից կորուստն ամբողջությամբ կամ մաս-մաս կամովին հատուցելու դեպքում՝ կորստի ամբողջական կամ մաս-մաս հատուցման հարկային տարում,

բ. վնաս պատճառողին չպարզելու հետևանքով նախաքննության մարմնի կողմից քրեական գործը կասեցնելու կամ կարճելու մասին որոշում ընդունելու դեպքում՝ այդ որոշման ընդունման հարկային տարում,

գ. դատարանի կողմից վնաս պատճառողին մեղավոր կամ անմեղ ճանաչելու վերաբերյալ դատական ակտ ընդունելու դեպքում՝ այդ ակտն ուժի մեջ մտնելու հարկային տարում:

8. Սույն հոդվածի 3-6-րդ մասերով սահմանված՝ կորուստների փաստաթղթավորման կարգը սահմանում է Կառավարությունը:

(122-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Հոդված 123. Այլ նվազեցումները

1. Ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցվում են՝

1) անվավեր ճանաչված գործարքների մասով նախորդ հաշվետու ժամանակաշրջաններում հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտում ներառված գումարները.

2) Կառավարության սահմանած կարգով շահութահարկ վճարողների (բացառությամբ սույն մասի 3-րդ կետով սահմանված դեպքերի) կողմից՝

ա. անհուսալի դեբիտորական պարտքերի դուրսգրման համար պահուստին կատարվող մասհանումները,

բ. անհուսալի դեբիտորական պարտքերի դուրսգրման դեպքում՝ այդ նպատակով ստեղծված պահուստին կատարված մասհանումները գերազանցող գումարները,

գ. նախկինում դուրս գրված անհուսալի կրեդիտորական պարտքերի մարման գումարները.

Սույն կետի կիրառության իմաստով՝ 100 հազար դրամը գերազանցող ընդհանուր գումարով դեբիտորական պարտքը համարվում է անհուսալի դեբիտորական պարտքի գումարը բռնագանձելու պահանջը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ դատական ակտի (վճռի, որոշման կամ կարգադրության, բացառությամբ դեբիտորական պարտքի գումարը ներելու կամ այն որևէ հիմքով չպահանջելու վերաբերյալ կայացված վճռի, որոշման կամ կարգադրության)՝ օրինական ուժի մեջ մտնելու օրվանից.

3) Կառավարության լիազոր մարմնի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համատեղ սահմանած կարգով բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների և արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց կողմից՝

ա. անհուսալի դեբիտորական պարտքերի դուրսգրման համար պահուստին կատարվող մասհանումները,

բ. անհուսալի դեբիտորական պարտքերի դուրսգրման դեպքում՝ այդ նպատակով ստեղծված պահուստին կատարված մասհանումները գերազանցող գումարները,

գ. նախկինում դուրս գրված անհուսալի կրեդիտորական պարտքերի մարման գումարները.

4) հարկային տարվան նախորդող հարկային տարիների գործունեության արդյունքներով առաջացած հարկային վնասները՝ որպես Օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կամ 3-րդ կետով սահմանված համախառն եկամտի և Օրենսգրքի 110-րդ հոդվածով սահմանված նվազեցումների բացասական տարբերություն: Սույն կետի կիրառության իմաստով՝ հարկային վնասները նվազեցվում են այդ վնասների առաջացման հարկային տարվան հաջորդող հինգ հարկային տարիների համախառն եկամտից՝ հաշվի առնելով սույն կետով սահմանված հետևյալ կանոններն ու սահմանափակումները.

ա. հարկային տարվան նախորդող հինգ հարկային տարիների (կամ դրանցից մի քանիսի) գործունեության արդյունքներով առաջացած հարկային վնասները համախառն եկամտից նվազեցնելու հաջորդականության առումով առաջնահերթորեն նվազեցված է համարվում ավելի վաղ առաջացած հարկային վնասը,

բ. հարկային տարվան նախորդող 5 հարկային տարիների (կամ դրանցից մի քանիսի) գործունեության արդյունքներով առաջացած հարկային վնասները, տվյալ հարկային տարվա ծախսերը և տվյալ հարկային տարվա կորուստները համախառն եկամտից նվազեցնելու հաջորդականության առումով առաջնահերթորեն նվազեցված են համարվում տվյալ հարկային տարվա ծախսերը և տվյալ հարկային տարվա կորուստները,

գ. Օրենսգրքի 13-րդ բաժնով սահմանված՝ հարկման հատուկ համակարգերի շրջանակներում իրականացվող գործունեության արդյունքներով առաջացած հարկային վնասները համախառն եկամտից նվազեցման ենթակա չեն,

դ. մինչև Օրենսգրքի 13-րդ բաժնով սահմանված՝ հարկման հատուկ համակարգերի շրջանակներում գործունեություն սկսելը՝ հարկման ընդհանուր համակարգի շրջանակներում իրականացված գործունեության արդյունքներով առաջացած հարկային վնասները հետագայում կրկին հարկման հատուկ համակարգից հարկման ընդհանուր համակարգ անցնելու դեպքում համախառն եկամտից նվազեցնելու առումով այդ վնասների առաջացման հարկային տարվան հաջորդող հինգ հարկային տարիների հաշվարկում ներառվում են նաև հարկման հատուկ համակարգերի շրջանակներում գործունեության իրականացման տարիները,

ե. բաժանման ձևով կազմակերպության վերակազմակերպման դեպքում նախորդող հինգ հարկային տարիների գործունեության արդյունքներով առաջացած հարկային վնասը նոր ստեղծված կազմակերպություններին փոխանցվում է հավասարաչափ, եթե բաժանիչ հաշվեկշռով այլ չափ նախատեսված չէ,

զ. առանձնացման ձևով կազմակերպության վերակազմակերպման դեպքում նախորդող 5 հարկային տարիների գործունեության արդյունքներով առաջացած հարկային վնասը նվազեցվում է միայն այն կազմակերպության համախառն

եկամտից, որից առանձնացել են այլ կազմակերպություն կամ կազմակերպություններ (չի փոխանցվում առանձնացված կազմակերպությանը կամ կազմակերպություններին), եթե բաժանիչ հաշվեկշռով այլ բան նախատեսված չէ,

է. սույն կետի «ե» և «զ» ենթակետերի համաձայն՝ հարկային վնասները նվազեցնելու իրավունք ունեցող կազմակերպությունների մոտ նախորդող հինգ հարկային տարիների հաշվարկը կատարելիս հաշվի են առնվում նաև վերակազմակերպվող կազմակերպության մոտ՝ մինչև բաժանումը կամ առանձնացումը, այդ հարկային վնասների առկայության հարկային տարիները, որոնց մասին, ըստ հարկային վնասների առաջացման հարկային տարիների, նշում է կատարվում բաժանիչ հաշվեկշռում,

ը. միաձուլման ձևով կազմակերպությունների վերակազմակերպման դեպքում միաձուլված կազմակերպությունների նախորդող հինգ հարկային տարիների գործունեության արդյունքներով առաջացած հարկային վնասները չեն նվազեցվում նոր ստեղծված կազմակերպության համախառն եկամտից,

թ. միացման ձևով կազմակերպությունների վերակազմակերպման դեպքում միացող կազմակերպության կամ կազմակերպությունների նախորդող հինգ հարկային տարիների գործունեության արդյունքներով առաջացած հարկային վնասները չեն նվազեցվում այն կազմակերպության համախառն եկամտից, որին միացել են այլ կազմակերպություն կամ կազմակերպություններ,

ժ. միացման ձևով կազմակերպությունների վերակազմակերպման դեպքում այն կազմակերպության նախորդող հինգ հարկային տարիների գործունեության արդյունքներով առաջացած հարկային վնասները, որին միացել են այլ կազմակերպություն կամ կազմակերպություններ, չեն նվազեցվում տվյալ կազմակերպության համախառն եկամտից.

5) գրադարաններին, թանգարաններին, հանրակրթական դպրոցներին, տուն-գիշերօթիկներին, ծերանոցներին, մանկատներին, բժշկական հաստատություններին, ինչպես նաև ոչ առևտրային կազմակերպություններին տրամադրված ակտիվների, դրանց համար կատարված աշխատանքների և (կամ) դրանց մատուցված ծառայությունների արժեքը, բայց ոչ ավելի, քան հարկային տարվա համախառն եկամտի 0.25 տոկոսը.

6) շահութահարկ վճարողի մոտ վարձու աշխատող համարվող (այդ թվում՝ համատեղության կարգով), ինչպես նաև քաղաքացիաիրավական պայմանագրի հիման վրա աշխատանք կատարող կամ քաղաքացիաիրավական պայմանագրի հիման վրա շահութահարկ վճարողին ծառայություն մատուցող յուրաքանչյուր հաշմանդամի համար հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների, ինչպես նաև քաղաքացիաիրավական պայմանագրից ստացվող եկամուտների հանրագումարի 150 տոկոսը՝ անկախ աշխատավարձը և դրան հավասարեցված այլ վճարումները շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցնելու հանգամանքից.

7) «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և ժամկետներում ածանցյալ ֆինանսական գործիքների միասնական գրանցամատյանում գրանցված ածանցյալ ֆինանսական գործիքներով կատարվող այն վճարումները, որոնք ձևավորվել են պարտավորությունների հաշվանցի և (կամ) զուտացման արդյունքում: Սույն կետի կիրառությունն ապահովելու նպատակով հարկային մարմնին առևտրի գրանցամատյանից տեղեկությունների տրամադրման կարգը, ժամկետները և ծավալները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և հարկային մարմնի համատեղ իրավական ակտով:

2. Ռեզիդենտ շահութահարկ վճարողի հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցվում են նաև ստացվող շահաբաժինները:

(123-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն, լրաց. 25.06.19 ՀՕ-68-Ն)

Հոդված 124. Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների և արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից կատարվող այլ նվազեցումները

1. Ռեզիդենտ կազմակերպություն համարվող բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների և արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցվում են նաև՝

1) Կառավարության լիազորած մարմնի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համատեղ սահմանած կարգով բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների և արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց ակտիվների և (կամ) ինվեստիցիոն արժեթղթերի հնարավոր կորուստների պահուստներին ուղղված գումարները.

2) ապահովագրական և վերաապահովագրական հատուցումները.

3) ապահովագրական ընկերությունների տեխնիկական պահուստների, տեխնիկական պահուստներում վերաապահովագրողի մասնաբաժնի գծով կատարվող ծախսերը.

4) կեղծ թղթադրամների և վճարային փաստաթղթերի պատճառով կրած կորուստների չափով:

(124-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Հոդված 125. Շահութահարկի դրույքաչափերը

1. Ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի (մշտական հաստատությանը վերագրվող եկամուտների գծով ձևավորվող հարկման բազայի մասով) հարկման բազայի նկատմամբ շահութահարկը հաշվարկվում է 18 տոկոս դրույքաչափով, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված դեպքերի: Օրենսգրքի կիրառության իմաստով՝ համարվում է, որ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի եկամուտները վերագրվում են մշտական հաստատությանը, եթե այդ եկամուտները հիմնավորող հաշվարկային փաստաթղթերը դուրս են գրվել մշտական հաստատության կողմից՝ անկախ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի և գործարքի մյուս կողմի միջև կնքված պայմանագրերում, որպես եկամուտ ստացող, մշտական հաստատությունը նշված չլինելու հանգամանքից:

2. Հայաստանի Հանրապետությունում հաշվառված, կանոնները գրանցած ներդրումային ֆոնդերի (բացառությամբ կենսաթոշակային ֆոնդերի և երաշխիքային ֆոնդերի), ինչպես նաև «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա ստեղծված արժեթղթավորման հիմնադրամի հարկման բազայի նկատմամբ շահութահարկը հաշվարկվում է 0.01 տոկոս դրույքաչափով:

3. Օրենսգրքի 13-րդ բաժնով սահմանված՝ հարկման հատուկ համակարգերում գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատերերը և նոտարները գործունեության այդ տեսակների մասով շահութահարկը վճարում են ամսական հինգ հազար դրամի չափով (անկախ այն հանգամանքից, թե անհատ ձեռնարկատերը կամ նոտարը քանի հարկման հատուկ համակարգում է գործունեություն իրականացնում), որը նրանց համար գործունեության այդ տեսակների մասով համարվում է շահութահարկի գծով վերջնական հարկային պարտավորություն:

Սույն մասի կիրառության իմաստով՝

1) այն հարկ վճարողը, որը հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով հայտարարություն՝

ա. որևէ օրվանից սկսած՝ անորոշ ժամկետով գործունեությունը դադարեցնելու մասին, ապա հայտարարության մեջ նշված՝ գործունեությունը դադարեցնելու օրվանից (բայց ոչ շուտ, քան գործունեությունը դադարեցնելու մասին հայտարարություն ներկայացնելու օրը) մինչև գործունեությունը վերսկսելու մասին հարկային մարմնի հաստատած ձևով ներկայացվող հայտարարության մեջ նշված՝ գործունեությունը վերսկսելու օրը (բայց ոչ շուտ, քան գործունեությունը վերսկսելու մասին հայտարարություն ներկայացնելու օրը) ընկած ժամանակահատվածում ներառվող ամբողջական ամիսների համար սույն մասով սահմանված չափով շահութահարկ չի հաշվարկում և չի վճարում,

բ. որևէ օրվանից սկսած՝ որոշակի ժամկետով գործունեությունը դադարեցնելու մասին, ապա հայտարարության մեջ նշված՝ գործունեությունը դադարեցնելու օրվանից (բայց ոչ շուտ, քան գործունեությունը դադարեցնելու մասին հայտարարություն ներկայացնելու օրը) մինչև հայտարարության մեջ նշված՝ գործունեությունը վերսկսելու օրն ընկած ժամանակահատվածում ներառվող ամբողջական ամիսների համար սույն մասով սահմանված չափով շահութահարկ չի հաշվարկում և չի վճարում.

2) եթե նոր հաշվառված անհատ ձեռնարկատերը կամ նոտարը մինչև հաշվառման օրվան հաջորդող օրվա ավարտը հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով հայտարարություն՝

ա. հաշվառման օրվանից սկսած՝ անորոշ ժամկետով գործունեությունը դադարեցնելու մասին, ապա այդ օրվանից մինչև գործունեությունը վերսկսելու մասին հարկային մարմնի հաստատած ձևով ներկայացվող հայտարարության մեջ նշված՝ գործունեությունը վերսկսելու օրը (բայց ոչ շուտ, քան գործունեությունը վերսկսելու մասին հայտարարություն ներկայացնելու օրը) ընկած ժամանակահատվածում ներառվող ամբողջական ամիսների համար սույն մասով սահմանված չափով շահութահարկ չի հաշվարկում և չի վճարում,

բ. հաշվառման օրվանից սկսած՝ որոշակի ժամկետով գործունեությունը դադարեցնելու մասին, ապա այդ օրվանից մինչև հայտարարության մեջ նշված՝ գործունեությունը վերսկսելու օրն ընկած ժամանակահատվածում ներառվող ամբողջական ամիսների համար սույն մասով սահմանված չափով շահութահարկ չի հաշվարկում և չի վճարում:

4. Առանց մշտական հաստատության Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի հարկման բազայի նկատմամբ շահութահարկը հաշվարկվում է հետևյալ դրույքաչափերով.

1) ապահովագրական հատուցումների, վերաապահովագրական վճարների և փոխադրման (ֆրախտի) դիմաց ստացված եկամուտների մասով՝ հինգ տոկոս.

2) պասիվ եկամուտների մասով՝ տասը տոկոս, բացառությամբ սույն մասի 3.1-ին և 4-րդ կետերով սահմանված դեպքերի.

3) ***(կետն ուժը կորցրել է 25.06.19 ՀՕ-68-Ն)***

3.1) շահաբաժինների մասով՝ հինգ տոկոս.

4) արժեթղթերի օտարումից ստացվող ակտիվների արժեքի հավելաճի մասով՝ զրո տոկոս.

5) Հայաստանի Հանրապետության աղբյուրներից ստացվող՝ սույն մասի 1-4-րդ կետերում չնշված այլ եկամուտների մասով՝ 20 տոկոս:

5. Եթե մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի եկամուտները չեն վերագրվում մշտական հաստատությանը, ապա այդ եկամուտների

գծով ձևավորվող հարկման բազայի նկատմամբ շահութահարկը հաշվարկվում է սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված դրույքաչափերով: Օրենսգրքի կիրառության իմաստով՝ համարվում է, որ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի եկամուտները չեն վերագրվում մշտական հաստատությանը, եթե այդ եկամուտները հիմնավորող հաշվարկային փաստաթղթերը դուրս չեն գրվել մշտական հաստատության կողմից՝ անկախ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի և գործարքի մյուս կողմի միջև կնքված պայմանագրերում մշտական հաստատությունը որպես եկամուտ ստացող նշված լինելու հանգամանքից:

6. Ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի կողմից Կառավարության սահմանած հարկման հատուկ ազատական համակարգեր ունեցող երկրներում (աշխարհագրական տարածքներում) գրանցված (հաշվառված) կազմակերպություններից ապրանքների ձեռքբերման համար այդ երկրներում (տարածքներում) գրանցված (հաշվառված) կազմակերպությանը կատարված կանխավճարների դիմաց արդյունքը կանխավճարի կատարման օրվան հաջորդող 365 օրվա ընթացքում չստացվելու դեպքում կատարված կանխավճարը դրա կատարման օրվան հաջորդող 366-րդ օրն այդ կազմակերպության համար համարվում է Հայաստանի Հանրապետության աղբյուրներից ստացվող այլ եկամուտ, որի նկատմամբ շահութահարկը հաշվարկվում է սույն հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով սահմանված դրույքաչափով:

(125-րդ հոդվածը լրաց., խմբ. 21.12.17 ՀՕ-266-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն, լրաց., փոփ. 21.06.18 ՀՕ-338-Ն, 25.06.19 ՀՕ-68-Ն)

(125-րդ հոդվածի 1-ին մասը 25.06.19 ՀՕ-68-Ն օրենքի 31-րդ հոդվածի 1-ին կետի փոփոխությամբ ուժի մեջ կմտնի 01.01.2020-ին և կկիրառվի 2020 թվականի և դրան հաջորդող հաշվետու ժամանակաշրջանների համար շահութահարկի հաշվարկման նպատակով, իսկ 125-րդ հոդվածի 4-րդ մասը 25.06.19 ՀՕ-68-Ն օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ կետի փոփոխությամբ ուժի մեջ կմտնի 01.01.2020-ին և կկիրառվի 2020 թվականի հունվարի 1-ից հետո ընկած ժամանակահատվածներին վերագրվող (այդ ժամանակահատվածների գործունեության արդյունքում ստացվող) շահույթներից՝ որպես շահույթի բաշխում, մասնակցի ստացած շահաբաժինների վրա:)

Գ Լ Ո Ւ Խ 23

ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 126. Շահութահարկի վճարումից ազատումը

1. Մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ընդգրկված հարկային տարիների համար շահութահարկի վճարումից ազատվում են գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղված շահութահարկ վճարողները՝ իրենց կողմից գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացվող եկամտի, ինչպես նաև այլ ակտիվների իրացումից ստացվող և այլ եկամուտների մասով, եթե այլ ակտիվների իրացումից ստացվող և այլ եկամուտների տեսակարար կշիռը համապատասխան հարկային տարվա համախառն եկամտի մեջ չի գերազանցում տասը տոկոսը: Այլ ակտիվների իրացումից ստացվող և այլ եկամուտների տեսակարար կշիռը համապատասխան հարկային տարվա համախառն եկամտի մեջ տասը տոկոսը գերազանցելու դեպքում սույն մասով նախատեսված արտոնությունը գործում է միայն գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացվող եկամտի մասով: Սույն մասի կիրառության իմաստով՝

1) գյուղատնտեսական արտադրանք են համարվում հարկ վճարողի կողմից իրականացված գործողությունների արդյունքում կենդանիների կամ բույսերի կենսաբանական վերափոխման միջոցով վերջնական կամ միջանկյալ սպառման համար ստացվող, մասնավորապես՝

ա. հացահատիկային և հացահատիկաոլոռային մշակաբույսերը,

բ. տեխնիկական մշակաբույսերը,

գ. պալարապտղային, բանջարային, բոստանային մշակաբույսերը և փակ գրունտի արտադրանքը,

դ. դաշտային մշակման կերային մշակաբույսերը,

ե. կերարտադրության այլ արտադրանքը,

զ. պարտեզների, խաղողի այգիների, պտղատու այգիների, հատապտղանոցների և ծաղկաբուծության արտադրանքը,

է. ծառերի և թփերի սերմերը, պտուղներում եղած սերմերը,

ը. ծառերի և թփերի սածիլները,

թ. ծառերի և թփերի տնկիները,

ժ. անասնաբուծության արտադրանքը,

ժա. խոզաբուծության արտադրանքը,

ժբ. ոչխարաբուծության և այծաբուծության արտադրանքը,

ժգ. թռչնաբուծության արտադրանքը,

ժդ. ձիաբուծության, էշաբուծության և ջորիաբուծության արտադրանքը,

ժե. եղջերվաբուծության և ուղտաբուծության արտադրանքը,

ժզ. ճագարաբուծության, մորթատու գազանաբուծության և որսորդական տնտեսության արտադրանքը,

ժէ. ձկնաբուծության, մեղվաբուծության, շերամաբուծության, արհեստական սերմնավորման արտադրանքը.

2) մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ընդգրկված հարկային տարիների համար գյուղատնտեսական արտադրանքի գծով ստացվող եկամտի ճշգրիտ հաշվարկման անհնարինության դեպքում այն հաշվարկվում է՝ հիմնվելով Օրենսգրքի բաղկացուցիչ մասը կազմող հավելված 2-ով սահմանված՝ կադաստրային գնահատման կարգով հաշվարկված հաշվարկային զուտ եկամտի տվյալների վրա:

2. Շահութահարկի վճարումից ազատվում է «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը հետևյալ եկամուտների մասով.

1) առևտրային բանկերի կողմից «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով վճարվող պարբերական, միանվագ և լրացուցիչ երաշխիքային վճարների մասով.

2) հիմնադրամի կողմից ֆիզիկական անձանց հատուցվող և բանկերի նկատմամբ ձեռք բերվող պահանջի հիման վրա բանկերից ստացվող գումարների մասով.

3) այն եկամուտների մասով, որոնք ստացվել են հետևյալ ակտիվներում կատարված ներդրումներից.

ա. Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթերում,

բ. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում և բարձր վարկանիշ ունեցող օտարերկրյա առաջնակարգ բանկերում՝ որպես բանկային ավանդ և (կամ) բանկային հաշիվ,

գ. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի արժեթղթերում,

դ. ոսկու ստանդարտացված ձուլակտորներում,

ե. բարձր վարկանիշ ունեցող երկրների կառավարությունների և (կամ) կենտրոնական բանկերի արժեթղթերում,

զ. բարձր վարկանիշ ունեցող առաջնակարգ կազմակերպությունների և (կամ) բանկերի արժեթղթերում,

է. հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի համաձայնությամբ՝ այլ ֆինանսական ակտիվներում:

3. Շահութահարկի վճարումից ազատվում է «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա ստեղծված բյուրոն՝ այդ օրենքի համաձայն բյուրոյի կազմում ստեղծված երաշխավորման ֆոնդին կատարվող բոլոր վճարների, ինչպես նաև Երաշխավորման ֆոնդի օգտին ստացված բոլոր այլ գումարների մասով, ներառյալ՝ այն եկամուտների մասով, որոնք ստացվել են երաշխավորման ֆոնդի միջոցներից կատարված ներդրումներից:

4. Շահութահարկի վճարումից ազատվում է Համահայկական բանկը:

5. Շահութահարկի վճարումից ազատվում են ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողները՝ Հայաստանի Հանրապետության պետական արտարժութային պարտատոմսերից տոկոսի կամ մարելիս զեղչի ձևով ստացվող եկամուտների, ինչպես նաև նշյալ պարտատոմսերի օտարումից, այլ արժեթղթերով փոխանակումից կամ նման այլ գործարքներից ստացվող եկամուտների մասով:

6. Շահութահարկի վճարումից ազատվում են ձեռագործ գորգերի արտադրությամբ զբաղվող շահութահարկ վճարողները՝ ձեռագործ գորգերի իրացումից ստացվող եկամտի մասով:

7. Շահութահարկի վճարումից ազատվում են ազատ տնտեսական գոտու շահագործող համարվող շահութահարկ վճարողները՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված ազատ տնտեսական գոտում իրականացվող գործունեությունից ստացվող եկամտի մասով:

(126-րդ հոդվածը լրաց., փոփ. 21.12.17 ՀՕ-266-Ն)

Հոդված 127. Շահութահարկի նվազեցումը

1. Կառավարության որոշմամբ հավանության արժանացած գործարար ծրագիր իրականացնող ռեզիդենտ շահութահարկ վճարողի (բացառությամբ առևտրի կամ ֆինանսական ոլորտում գործունեություն իրականացնող ռեզիդենտ շահութահարկ վճարողների) գործարար ծրագրի մեկնարկման ու դրան հաջորդող հինգ հարկային տարիների շահութահարկի գումարը նվազեցվում է գործարար ծրագրի շրջանակներում ստեղծված նոր աշխատատեղերի մասով համապատասխան հարկային տարվա ընթացքում հաշվարկված լրացուցիչ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների 100 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան համապատասխան հարկային տարվա համար հաշվարկված փաստացի շահութահարկի գումարի 30 տոկոսը:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված՝ գործարար ծրագրերի հավանության արժանացման և լրացուցիչ աշխատավարձի հաշվարկման կարգը սահմանում է Կառավարությունը:

3. Ռեզիդենտ շահութահարկ վճարողի հաշվետու տարվա շահութահարկի գումարը նվազեցվում է առանձին խմբերի քաղաքացիներին օրենքով կամ օրենքով սահմանված դեպքերում՝ Կառավարության որոշմամբ սահմանված զեղչ

սակագներով կամ անվճար ծառայությունների մատուցման հետևանքով չստացված (պակաս ստացված) եկամուտների չափով, բացառությամբ

1) եթե հաշվետու տարվա պետական բյուջեի մասին Հայաստանի Հանրապետության օրենքով տվյալ ռեզիդենտ շահութահարկ վճարողի համար սահմանված է սուբսիդիայի հատկացում.

2) եթե տվյալ ռեզիդենտ շահութահարկ վճարողին այդ ծառայությունների մատուցման իրավունքը տրվել է համապատասխան լիցենզավորման կամ ծանուցման կամ մրցույթի անցկացման կարգով և լիցենզիայի կամ ծանուցման կամ մրցույթի պայմաններում նախատեսվել է, որ առանձին խմբերի քաղաքացիներին օրենքով կամ օրենքով սահմանված դեպքերում Կառավարության որոշմամբ սահմանված զեղչ սակագներով կամ անվճար ծառայությունների մատուցման արդյունքում առաջացած հարկային վնասները փոխհատուցման ենթակա չեն:

(127-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն, 21.06.18 ՀՕ-338-Ն)

Հոդված 128. Շահութահարկի նվազեցված դրույքաչափերը

(հոդվածն ուժը կորցրել է 21.06.18 ՀՕ-338-Ն)

(21.06.18 ՀՕ-338-Ն օրենքի 86-րդ հոդվածի համաձայն՝ մինչև 2019 թվականի հունվարի 1-ը Կառավարության հավանությանն արժանացած՝ Օրենսգրքի 128-րդ հոդվածով սահմանված ծրագիր իրականացնող ռեզիդենտ շահութահարկ վճարողի և այդ ծրագրում ընդգրկված Հայաստանի Հանրապետության այլ ռեզիդենտ շահութահարկ վճարողների նկատմամբ Օրենսգրքի 128-րդ հոդվածը շարունակում է կիրառվել մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:)

Գ Լ Ո Ւ Խ 24

ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ

Հոդված 129. Հաշվետու ժամանակաշրջանը

1. Ռեզիդենտ շահութահարկ վճարողների, Հայաստանի Հանրապետությունում հաշվառված, կանոնները գրանցած պայմանագրային ներդրումային ֆոնդերի (բացառությամբ կենսաթոշակային ֆոնդերի և երաշխիքային ֆոնդերի), ինչպես նաև մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողների մասով շահութահարկի հաշվարկման և վճարման համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր հաշվետու տարին:

Հոդված 130. Պետական բյուջե վճարման ենթակա շահութահարկի գումարի հաշվարկման կարգը

1. Հաշվետու ժամանակաշրջանի գործունեության արդյունքներով ռեզիդենտ շահութահարկ վճարողները պետական բյուջե են վճարում այդ հաշվետու ժամանակաշրջանին վերաբերող հարկման բազայի նկատմամբ Օրենսգրքի 125-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափով հաշվարկված շահութահարկի գումարների և շահութահարկի նվազեցվող գումարների դրական տարբերությունը: Սույն մասի կիրառության իմաստով՝ շահութահարկի նվազեցվող գումարներ են համարվում՝

1) Օրենսգրքի 135-րդ հոդվածով սահմանված կարգով և չափով հաշվարկված շահութահարկի կանխավճարները.

2) Օրենսգրքի 20-րդ հոդվածով սահմանված՝ օտարերկրյա պետություններում գանձված շահութահարկի կամ շահույթից հաշվարկվող այլ հարկի գումարները.

3) Օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով սահմանված՝ շահութահարկի նվազեցվող գումարները:

2. Հաշվետու ժամանակաշրջանի գործունեության արդյունքներով Հայաստանի Հանրապետությունում հաշվառված, կանոնները գրանցած ներդրումային ֆոնդերը (բացառությամբ կենսաթոշակային ֆոնդերի և երաշխիքային ֆոնդերի) պետական բյուջե են վճարում այդ ժամանակաշրջանին վերաբերող հարկման բազայի նկատմամբ Օրենսգրքի 125-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույքաչափով հաշվարկված շահութահարկի գումարները:

3. Հաշվետու ժամանակաշրջանի գործունեության արդյունքներով մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողները (մշտական հաստատությանը վերագրվող եկամուտների գծով ձևավորվող հարկման բազայի մասով) պետական բյուջե են վճարում այդ ժամանակաշրջանին վերաբերող հարկման բազայի նկատմամբ Օրենսգրքի 125-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափով հաշվարկված շահութահարկի գումարների և շահութահարկի նվազեցվող գումարների դրական տարբերությունը: Սույն մասի կիրառության իմաստով՝ շահութահարկի նվազեցվող գումարներ են համարվում՝

1) Օրենսգրքի 135-րդ հոդվածով սահմանված կարգով և չափով կատարված շահութահարկի կանխավճարները.

2) մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողին վճարված՝ մշտական հաստատությանը վերագրվող եկամուտներից ձևավորվող հարկման բազայի մասով Օրենսգրքի 125-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դրույքաչափերով և Օրենսգրքի 132-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային գործակալի կողմից հաշվարկված և պահված շահութահարկի գումարները:

4. Առանց մշտական հաստատության Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողներին վճարված եկամուտների գծով ձևավորվող հարկման բազայի, ինչպես նաև մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողներին վճարված՝ մշտական հաստատությանը չվերագրվող եկամուտների գծով ձևավորվող հարկման բազայի մասով Օրենսգրքի 125-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դրույքաչափերով և Օրենսգրքի 132-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային գործակալի կողմից հաշվարկված և պահված շահութահարկի գումարները համարվում են պետական բյուջե վճարման ենթակա շահութահարկի վերջնական գումարներ:

5. Հաշվետու ժամանակաշրջանի գործունեության արդյունքներով առանց մշտական հաստատության Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողները, ինչպես նաև մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողները՝ մշտական հաստատությանը չվերագրվող եկամուտների մասով, պետական բյուջե են վճարում հարկային գործակալ չհամարվողների կողմից ստացված եկամուտների գծով ձևավորվող հարկման բազայի նկատմամբ Օրենսգրքի 125-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված համապատասխան դրույքաչափով հաշվարկված շահութահարկի գումարները:

(130-րդ հոդվածը փոփ. 21.12.17 ՀՕ-266-Ն, 21.06.18 ՀՕ-338-Ն)

Հոդված 131. Պետական բյուջեից փոխհատուցման ենթակա շահութահարկի գումարի հաշվարկման կարգը

1. Հաշվետու ժամանակաշրջանի գործունեության արդյունքներով ռեզիդենտ շահութահարկ վճարողներին և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողներին պետական բյուջեից փոխհատուցման ենթակա շահութահարկի գումարը հաշվարկվում է որպես հաշվետու ժամանակաշրջանին վերաբերող հարկման բազայի նկատմամբ Օրենսգրքի 125-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափով հաշվարկված շահութահարկի գումարների և Օրենսգրքի 130-րդ հոդվածի համապատասխանաբար 1-ին կամ 3-րդ մասով սահմանված՝ շահութահարկի նվազեցվող գումարների բացասական տարբերություն:

(131-րդ հոդվածը փոփ. 21.06.18 ՀՕ-338-Ն)

Հոդված 132. Շահութահարկը հաշվարկելը և պահելը հարկային գործակալի կողմից

1. Ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողներին վճարված եկամուտների գծով ձևավորվող հարկման բազայի մասով շահութահարկը հաշվարկում և պահում է հարկային գործակալը՝ հիմք ընդունելով Օրենսգրքի 125-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դրույքաչափերը, եթե՝

1) եկամուտները վճարվում են առանց մշտական հաստատության Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողին.

2) եկամուտները վճարվում են մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողին, սակայն այդ եկամուտները չեն վերագրվում մշտական հաստատությանը:

2. Սույն հոդվածի կիրառության իմաստով՝ շահութահարկով հարկման օբյեկտի հաշվառումն իրականացվում է (հարկի հաշվարկը կատարվում է) հաշվառման դրամարկղային մեթոդով: Մասնավորապես, հարկի հաշվարկման համար հիմք հանդիսացող՝ եկամտի վճարում են համարվում՝

1) կանխիկ կամ անկանխիկ փողային վճարումը, այդ թվում՝ մաս-մաս կատարված վճարումը՝ անկախ եկամտի ստացման իրավունքը ծագած լինելու հանգամանքից.

2) այլ գույքով հատուցումը.

3) դեբիտորական և կրեդիտորական պարտքերի փոխադարձ հաշվանցումը (մարումը).

4) պարտքերի վերաձևակերպումը կամ նորացումը.

5) հարկային գործակալի նկատմամբ առկա՝ եկամտի ստացման պահանջի իրավունքի՝ հարկային գործակալ չհանդիսացող անձին զիջումը.

6) եկամտի ստացման պահանջի ներումը.

7) Օրենսգրքի 109-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով սահմանված՝ շահաբաժինների բաշխման մասին որոշման ընդունումը:

3. Եթե սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված կանխիկ կամ անկանխիկ փողային վճարումները,

համապատասխան գործարքը չկատարվելու հանգամանքով պայմանավորված, վերադարձվում են՝

1) մինչև այդ վճարումների կատարման օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային գործակալի կողմից Օրենսգրքի 134-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ նախորդ հաշվետու եռամսյակում ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողներին վճարված եկամուտների, այդ եկամուտներից հաշվարկված, պահված և պետական բյուջե վճարված շահութահարկի գումարների մասին հաշվարկի փաստացի ներկայացումը, բայց ոչ ուշ, քան այդ հաշվարկի ներկայացման համար Օրենսգրքի 134-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված վերջնաժամկետը, ապա համարվում է, որ ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողին եկամուտ չի վճարվել.

2) այդ վճարումների կատարման օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային գործակալի կողմից Օրենսգրքի 134-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ նախորդ հաշվետու եռամսյակում ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողներին վճարված եկամուտների, այդ եկամուտներից հաշվարկված, պահված և պետական բյուջե վճարված շահութահարկի գումարների մասին հաշվարկի ներկայացումից հետո, ապա հարկային գործակալը կարող է Օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգով հարկային մարմին ներկայացնել ճշտված հաշվարկ:

4. Ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողներին վճարվող շահաբաժիններից շահութահարկը հաշվարկում և պահում է հարկային գործակալը՝ հիմք ընդունելով Օրենսգրքի 125-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դրույքաչափերը՝ անկախ ստացվող շահաբաժինների՝ մշտական հաստատությանը վերագրվելու հանգամանքից:

(132-րդ հոդվածը փոփ. 21.12.17 ՀՕ-266-Ն)

Հոդված 133. Մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի շահութահարկի հաշվարկման առանձնահատկությունները

1. Մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողը պարտավոր է մշտական հաստատությանը վերագրվող եկամուտների ու ծախսերի մասով վարել առանձնացված հաշվառում:

2. Մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի հարկման բազան որոշելիս համախառն եկամտից նվազեցվում են միայն այն ծախսերը (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունից դուրս կատարված), որոնք հիմնավորող հաշվարկային փաստաթղթերում, որպես ապրանք ձեռք բերողին, աշխատանք ընդունողին և (կամ) ծառայություն ստացողին վերաբերող՝ Օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 10-րդ կետով սահմանված տվյալներ, նշված են մշտական հաստատության համապատասխան տվյալները:

Հոդված 134. Շահութահարկի հաշվարկների ներկայացումը

1. Ռեզիդենտ շահութահարկ վճարողները, Հայաստանի Հանրապետությունում հաշվառված, կանոնները գրանցած պայմանագրային ներդրումային ֆոնդերը (բացառությամբ կենսաթոշակային ֆոնդերի և երաշխիքային ֆոնդերի), ինչպես նաև մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողները մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հարկային տարվա ապրիլի 20-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում շահութահարկի հաշվարկ: Մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի կողմից հարկային մարմին ներկայացվող՝ սույն մասով սահմանված շահութահարկի հաշվարկում ներառվում է նաև մշտական հաստատությանը չվերագրվող եկամուտների գծով ձևավորվող հարկման բազան և Օրենսգրքի 130-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգով հաշվարկվող շահութահարկի գումարը:

2. Հարկային գործակալները մինչև յուրաքանչյուր հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում նախորդ հաշվետու եռամսյակում ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողներին վճարված եկամուտների, այդ եկամուտներից հաշվարկված, պահված և պետական բյուջե վճարված շահութահարկի գումարների մասին հաշվարկ:

3. Հարկային գործակալի բացակայության դեպքում առանց մշտական հաստատության Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողները մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հարկային տարվա ապրիլի 20-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմնի՝ Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանն սպասարկող ստորաբաժանում են ներկայացնում շահութահարկի հաշվարկներ:

(134-րդ հոդվածը փոփ. 21.12.17 ՀՕ-266-Ն)

Գ Լ Ո Ւ Խ 25

ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԵՎ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՇՎԻՆ ՄՈՒՏՔԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Հոդված 135. Շահութահարկի կանխավճարները

1. Ռեզիդենտ շահութահարկ վճարողը և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողը պարտավոր են ընթացիկ հարկային տարվա յուրաքանչյուր եռամսյակի համար՝ մինչև տվյալ եռամսյակի վերջին ամսվա 20-ը ներառյալ, կատարել շահութահարկի կանխավճարներ (բացառությամբ սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված դեպքերի)՝ նախորդ հարկային տարվա շահութահարկի գումարի 20 տոկոսի չափով, եթե տվյալ հարկ վճարողը սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով չի ընտրել շահութահարկի կանխավճարների կատարման՝ նույն մասով սահմանված այլընտրանքային եղանակը:

2. Շահութահարկի կանխավճարների հաշվարկման նպատակով սույն հոդվածի 1-ին մասով սահմանված՝ նախորդ հարկային տարվա շահութահարկի գումարի մեջ չեն ներառվում (այդ գումարից նվազեցվում են)՝

1) Օրենսգրքի 13-րդ բաժնով սահմանված՝ հատուկ հարկային համակարգերի շրջանակներում հաշվարկվող շրջանառության հարկի գումարում առկա՝ շահութահարկի հաշվարկային մասնաբաժինները, ինչպես նաև հարկման հատուկ համակարգերի շրջանակներում հաշվարկվող շահութահարկի գումարները.

2) շահութահարկի այն գումարները, որոնց վճարումից շահութահարկ վճարողներն ազատված են Օրենսգրքի 126-րդ հոդվածով սահմանված դեպքերում.

3) շահութահարկի այն գումարները, որոնք նվազեցվում են Օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով սահմանված դեպքերում.

4) Օրենսգրքի 20-րդ հոդվածով սահմանված՝ օտարերկրյա պետություններում գանձված շահութահարկի կամ շահույթից հաշվարկվող այլ հարկի գումարները.

5) նախորդ հարկային տարվա ընթացքում հարկային մարմնի կողմից ստուգմամբ կամ վերստուգմամբ հայտնաբերված շահութահարկի գումարները (անկախ այն հանգամանքից, թե որ հարկային տարիներին են դրանք վերաբերում):

2.1 Նախորդ հարկային տարվա համար ներկայացված շահութահարկի (այդ թվում՝ ճշտված) հաշվարկը հիմք է հանդիսանում այդ հաշվարկը ներկայացնելու օրվան հաջորդող առաջիկա կանխավճարի մեծության հաշվարկման համար, եթե հաշվարկը ներկայացվել է մինչև տվյալ հարկային տարվա վերջին կանխավճարի կատարման վերջնաժամկետը:

3. Մինչև նախորդ հարկային տարվա շահութահարկի գումարի հաշվարկումը (մինչև նախորդ հարկային տարվա համար շահութահարկի հաշվարկը հարկային մարմին ներկայացնելը) սույն հոդվածի 1-ին մասում նշված հարկ վճարողները շահութահարկի կանխավճարները յուրաքանչյուր անգամ կատարում են նախորդ հարկային տարվա վերջին կանխավճարի գումարից ոչ պակաս չափով, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքերի: Նախորդ հարկային տարվա շահութահարկի գումարը հաշվարկելուց (շահութահարկի հաշվարկը հարկային մարմին ներկայացնելուց) հետո սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով առաջին անգամ կանխավճարի կատարման ժամանակ կատարվում է մինչև շահութահարկի հաշվարկի ներկայացումը՝ տվյալ հարկային տարվա ընթացքում, կատարված կանխավճարների գումարների ճշտում՝ հարկային տարվա սկզբից աճող հանրագումարով և սույն հոդվածի 1-ին մասում նշված չափերով:

4. Ռեզիդենտ շահութահարկ վճարողը և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողը ընթացիկ հարկային տարվա յուրաքանչյուր եռամսյակի համար շահութահարկի կանխավճարները կատարում են նախորդ եռամսյակի ընթացքում ապրանքների մատակարարումից, աշխատանքների կատարումից և (կամ) ծառայությունների մատուցումից ստացվող եկամուտների երկու տոկոսի չափով, եթե մինչև ընթացիկ հարկային տարվա մարտի 20-ը ներառյալ հարկային մարմին են ներկայացրել հարկային մարմնի սահմանած ձևի հայտարարություն՝ շահութահարկի կանխավճարների կատարման այլընտրանքային եղանակի ընտրության վերաբերյալ: Սույն հոդվածի կիրառության իմաստով՝ նախորդ եռամսյակի ընթացքում ապրանքների մատակարարումից, աշխատանքների կատարումից և (կամ) ծառայությունների մատուցումից ստացվող եկամուտների մեծությունը որոշվում է նախորդ եռամսյակում ներառված ամիսների համար հարկային մարմին ներկայացված՝ Օրենսգրքի 75-րդ հոդվածով սահմանված՝ ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկներում արտացոլված՝ ԱԱՀ-ով հարկվող և ԱԱՀ-ից ազատված գործարքների հարկման բազայի հանրագումարի չափով: Սույն մասի կիրառության իմաստով՝

1) եռամսյակի ընթացքում ապրանքների մատակարարումից, աշխատանքների կատարումից և (կամ) ծառայությունների մատուցումից ստացվող եկամուտների ավելացվող կամ պակասեցվող գումարները՝ պայմանավորված ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկներում արտացոլված՝ ԱԱՀ-ով հարկվող և ԱԱՀ-ից ազատված գործարքների հարկման բազայի հանրագումարի փոփոխությամբ (այդ թվում՝ եռամսյակի որևէ հաշվետու ամսվա համար ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի կամ ճշտված հաշվարկի ներկայացման դեպքում) հիմք են հանդիսանում այդ հաշվարկի ներկայացման կամ ճշտված հաշվարկի ներկայացման օրվան հաջորդող առաջիկա կանխավճարի մեծության հաշվարկման համար.

2) հարկային մարմնի իրականացրած ստուգման կամ վերստուգման արդյունքներով նախորդ եռամսյակում ներառված ամիսների համար հարկային մարմին ներկայացվող՝ ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական

հաշվարկներում արտացոլված՝ ԱԱՀ-ով հարկվող և ԱԱՀ-ից ազատված գործարքների հարկման բազայի վերահաշվարկներ չեն կատարվում:

5. Հարկային տարվա ընթացքում պետական գրանցում ստացած (օրենքով սահմանված դեպքերում՝ հաշվառված) կամ որպես նոտար նշանակված հարկ վճարողները՝ համապատասխանաբար, պետական գրանցման (օրենքով սահմանված դեպքերում՝ հաշվառման) կամ որպես նոտար նշանակման հարկային տարվա եռամսյակների համար, իսկ նախորդ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող չհամարված, ինչպես նաև ընթացիկ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարված հարկ վճարողները ընթացիկ հարկային տարվա եռամսյակների համար շահութահարկի կանխավճարներ չեն կատարում, եթե չեն ընտրել շահութահարկի կանխավճարների կատարման՝ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված այլընտրանքային եղանակը: Եթե սույն մասում նշված հարկ վճարողները ընտրել են շահութահարկի կանխավճարների կատարման՝ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված այլընտրանքային եղանակը, ապա շահութահարկի կանխավճարն առաջին անգամ կատարում են՝

1) հայտարարության ներկայացման օրն ընդգրկող եռամսյակի համար, եթե հայտարարությունը ներկայացվել է մինչև տվյալ եռամսյակի վերջին ամսվա 20-ը ներառյալ.

2) հայտարարության ներկայացման օրն ընդգրկող եռամսյակին հաջորդող եռամսյակի համար, եթե հայտարարությունը ներկայացվել է տվյալ եռամսյակի վերջին ամսվա 20-ից հետո:

6. Եթե հարկ վճարողը Օրենսգրքի 59-րդ հոդվածի պահանջների խախտմամբ իրեն չի համարել ԱԱՀ վճարող, սակայն հարկային մարմնի կողմից իրականացվող հսկողության արդյունքում տվյալ հարկ վճարողը համարվել է ԱԱՀ վճարող, ապա շահութահարկի կանխավճարն առաջին անգամ կատարվում է ստուգման ակտը կամ այլ փաստաթուղթը հարկ վճարողին ներկայացնելու օրն ընդգրկող հարկային տարվան հաջորդող հարկային տարվա առաջին եռամսյակի համար, եթե տվյալ հարկային տարում հարկ վճարողը, Օրենսգրքի 59-րդ հոդվածի համաձայն, համարվում է ԱԱՀ վճարող:

7. Այն հարկ վճարողը, որը հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով հայտարարություն՝

1) որևէ օրվանից սկսած՝ անորոշ ժամկետով գործունեությունը դադարեցնելու մասին, ապա հայտարարության մեջ նշված՝ գործունեությունը դադարեցնելու օրվանից (բայց ոչ շուտ, քան գործունեությունը դադարեցնելու մասին հայտարարության ներկայացման օրը) մինչև գործունեությունը վերսկսելու մասին հարկային մարմնի հաստատած ձևով ներկայացվող հայտարարության մեջ նշված՝ գործունեությունը վերսկսելու օրը (բայց ոչ շուտ, քան գործունեությունը վերսկսելու մասին հայտարարության ներկայացման օրը) ընկած ժամանակահատվածում ներառվող ամբողջական եռամսյակների համար շահութահարկի կանխավճարներ կարող է չկատարել.

2) որևէ օրվանից սկսած՝ որոշակի ժամկետով գործունեությունը դադարեցնելու մասին, ապա հայտարարության մեջ նշված՝ գործունեությունը դադարեցնելու օրվանից (բայց ոչ շուտ, քան գործունեությունը դադարեցնելու մասին հայտարարության ներկայացման օրը) մինչև հայտարարության մեջ նշված՝ գործունեությունը վերսկսելու օրը ընկած ժամանակահատվածում ներառվող ամբողջական եռամսյակների համար շահութահարկի կանխավճարներ կարող է չկատարել:

8. Հարկային տարվա ընթացքում՝

1) բաժանման ձևով կազմակերպության վերակազմակերպման դեպքում նոր ստեղծված կազմակերպություններից յուրաքանչյուրը վերակազմակերպման պետական գրանցման օրն ընդգրկող հարկային տարվա եռամսյակների համար շահութահարկի կանխավճարը կարող է կատարել սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգով.

2) առանձնացման ձևով կազմակերպության վերակազմակերպման դեպքում այն կազմակերպությունը, որից առանձնացել են այլ կազմակերպություն կամ կազմակերպություններ, շարունակում է սույն հոդվածով սահմանված կարգով կատարել շահութահարկի կանխավճարներ՝ առանց հաշվի առնելու վերակազմակերպման հանգամանքը, իսկ առանձնացված կազմակերպությունը կամ կազմակերպությունները վերակազմակերպման պետական գրանցման օրն ընդգրկող հարկային տարվա եռամսյակների համար շահութահարկի կանխավճարը կարող են կատարել սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգով.

3) միաձուլման ձևով կազմակերպությունների վերակազմակերպման դեպքում նոր ստեղծված կազմակերպությունը վերակազմակերպման պետական գրանցման օրն ընդգրկող հարկային տարվա եռամսյակների համար շահութահարկի կանխավճարը կարող է կատարել սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգով.

4) միացման ձևով կազմակերպությունների վերակազմակերպման դեպքում այն կազմակերպությունը, որին միացել են այլ կազմակերպություն կամ կազմակերպություններ, շարունակում է սույն հոդվածով սահմանված կարգով կատարել շահութահարկի կանխավճարներ՝ առանց հաշվի առնելու վերակազմակերպման հանգամանքը:

(135-րդ հոդվածը լրաց., փոփ. 21.12.17 ՀՕ-266-Ն, 21.06.18 ՀՕ-338-Ն, փոփ. 25.06.19 ՀՕ-68-Ն)

Հոդված 136. Շահութահարկի գումարի վճարումը

1. Ռեզիդենտ շահութահարկ վճարողները, Հայաստանի Հանրապետությունում հաշվառված, կանոնները գրանցած պայմանագրային ներդրումային ֆոնդերը (բացառությամբ կենսաթոշակային ֆոնդերի և երաշխիքային ֆոնդերի), ինչպես նաև մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ

ռեզիդենտ շահութահարկ վճարողները Օրենսգրքի 130-րդ հոդվածի համապատասխանաբար 1-3-րդ մասերով սահմանված կարգով հաշվարկված՝ պետական բյուջե վճարման ենթակա շահութահարկի գումարները պետական բյուջե են վճարում մինչև հարկային տարվան հաջորդող հարկային տարվա ապրիլի 20-ը ներառյալ:

2. Հարկային գործակալները Օրենսգրքի 132-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված և պահված շահութահարկի գումարները պետական բյուջե են վճարում մինչև ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողին եկամուտների վճարման եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

3. Հարկային գործակալի բացակայության դեպքում առանց մշտական հաստատության Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողները, ինչպես նաև մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողները՝ մշտական հաստատությանը չվերագրվող եկամուտների գծով ձևավորվող հարկման բազայի մասով Օրենսգրքի 130-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով սահմանված կարգով հաշվարկված՝ պետական բյուջե վճարման ենթակա շահութահարկի գումարները պետական բյուջե են վճարում մինչև հարկային տարվան հաջորդող հարկային տարվա ապրիլի 20-ը ներառյալ:

4. Հարկման հատուկ համակարգերում գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատերերը և նոտարները գործունեության այդ տեսակների մասով յուրաքանչյուր ամսվա համար Օրենսգրքի 125-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված շահութահարկը վճարում են մինչև տվյալ հարկային տարվան հաջորդող հարկային տարվա ապրիլի 20-ը ներառյալ:

Հոդված 137. Անվճարունակ ճանաչման և (կամ) լուծարման գործընթացում գտնվող ռեզիդենտ շահութահարկ վճարողների կողմից շահութահարկի գումարի վճարման առանձնահատկությունները

1. Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների և արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց անվճարունակությունը կարգավորող օրենսդրության համաձայն՝ բանկը, վարկային կազմակերպությունը, ապահովագրական ընկերությունը կամ արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձը կարող են լուծարման և լուծարային կառավարիչ նշանակելու մասին դատարանի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից կասեցնել շահութահարկի վճարումները (այդ թվում՝ Օրենսգրքի 135-րդ հոդվածով սահմանված՝ շահութահարկի կանխավճարները) մինչև պարտատերերի պահանջները բավարարելու՝ օրենքով սահմանված հերթականությանը համապատասխան, պետական բյուջեի պահանջները բավարարելու հերթը հասնելը:

2. Սույն հոդվածի 1-ին մասում չնշված ռեզիդենտ շահութահարկ վճարողների անվճարունակությունը կարգավորող օրենսդրության համաձայն՝ ռեզիդենտ շահութահարկ վճարողը (բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հարկ վճարողների) կարող է շահութահարկ վճարողին անվճարունակ ճանաչելու մասին դատարանի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից կասեցնել շահութահարկի վճարումները (այդ թվում՝ Օրենսգրքի 135-րդ հոդվածով սահմանված՝ շահութահարկի կանխավճարները) մինչև պարտատերերի պահանջները բավարարելու՝ օրենքով սահմանված հերթականությանը համապատասխան, պետական բյուջեի պահանջները բավարարելու հերթը հասնելը:

3. Առանց անվճարունակության ընթացակարգ անցնելու լուծարվող բանկը, վարկային կազմակերպությունը, ապահովագրական ընկերությունը կամ արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձը կարող են լուծարման գործընթացը կարգավորող օրենսդրության համաձայն, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի կողմից լուծարման թույլտվություն տալու օրվանից կասեցնել շահութահարկի վճարումները (այդ թվում՝ Օրենսգրքի 135-րդ հոդվածով սահմանված՝ շահութահարկի կանխավճարները) մինչև պարտատերերի պահանջները բավարարելու՝ օրենքով սահմանված հերթականությանը համապատասխան, պետական բյուջեի պահանջները բավարարելու հերթը հասնելը:

4. Առանց անվճարունակության ընթացակարգ անցնելու լուծարվող ռեզիդենտ շահութահարկ վճարողը (բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված հարկ վճարողների) կարող է լուծարման մասին որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից կասեցնել շահութահարկի վճարումները (այդ թվում՝ Օրենսգրքի 135-րդ հոդվածով սահմանված՝ շահութահարկի կանխավճարները) մինչև պարտատերերի պահանջները բավարարելու՝ օրենքով սահմանված հերթականությանը համապատասխան, պետական բյուջեի պահանջները բավարարելու հերթը հասնելը:

Հոդված 138. Շահութահարկի գումարի մուտքագրումը միասնական հաշվին

1. Օրենսգրքի 131-րդ հոդվածով սահմանված՝ պետական բյուջեից փոխհատուցման ենթակա շահութահարկի գումարները Օրենսգրքի՝ հարկային վարչարարության մասով սահմանված կարգով և ժամկետներում մուտքագրվում են միասնական հաշվին:

2. Օրենսգրքով սահմանված չափից ավելի վճարված շահութահարկի գումարները Օրենսգրքի՝ հարկային վարչարարության մասով սահմանված կարգով և ժամկետներում մուտքագրվում են միասնական հաշվին:

Բ Ա Ժ Ի Ն 7

ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԸ

Գ Լ Ո Ւ Խ 26

ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԸ ԵՎ ՎՃԱՐՈՂՆԵՐԸ

Հոդված 139. Եկամտային հարկը

1. Եկամտային հարկը Օրենսգրքի 141-րդ հոդվածով սահմանված հարկման օբյեկտի համար Օրենսգրքով սահմանված կարգով, չափով և ժամկետներում պետական բյուջե վճարվող պետական հարկ է:

Հոդված 140. Եկամտային հարկ վճարողները

1. Եկամտային հարկ վճարողներ են համարվում ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք:
2. Անհատ ձեռնարկատերերը և նոտարները՝ որպես ֆիզիկական անձինք, եկամտային հարկ վճարողներ են համարվում միայն անձնական եկամուտների մասով:

Գ Լ Ո Ւ Խ 27

ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏԸ, ՀԱՐԿՄԱՆ ԲԱԶԱՆ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Հոդված 141. Եկամտային հարկով հարկման օբյեկտը

1. Եկամտային հարկով հարկման օբյեկտ է համարվում՝
1) ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար՝ Հայաստանի Հանրապետության աղբյուրներից և (կամ) Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող աղբյուրներից ստացվող համախառն եկամուտը, բացառությամբ Հայաստանի Հանրապետությունում հաշվառված անհատ ձեռնարկատերերի և նոտարների ձեռնարկատիրական եկամուտների.
2) ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար՝ Հայաստանի Հանրապետության աղբյուրներից ստացվող համախառն եկամուտը, բացառությամբ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող և (կամ) մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետության աղբյուրներից եկամուտ ստացող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց մշտական հաստատությանը վերագրվող եկամուտների, ինչպես նաև արտաքին տնտեսական գործունեությունից ստացվող եկամուտների: Սույն կետի կիրառության իմաստով՝ արտաքին տնտեսական գործունեությունն ընդունվում է Օրենսգրքի 108-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված նշանակությամբ:

Հոդված 142. Եկամտային հարկով հարկման օբյեկտի հաշվառման մեթոդները

1. Սույն բաժնի կիրառության իմաստով՝ եկամտային հարկով հարկման օբյեկտի հաշվառումն իրականացվում է (հարկի հաշվարկը կատարվում է)՝
1) հաշվարկման ենթակա աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների, Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով նախատեսված՝ ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող ավտոմեքենայի օտարումից ստացվող եկամուտների մասով, ինչպես նաև Օրենսգրքի 149-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով սահմանված եկամուտների մասով՝ հաշվառման հաշվեգրման մեթոդով.
2) պասիվ եկամուտների մասով՝ հաշվառման դրամարկղային մեթոդով.
3) քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում կատարված աշխատանքների և (կամ) մատուցված ծառայությունների համար ստացվող եկամուտների մասով՝ հաշվառման դրամարկղային մեթոդով.
4) «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասով՝ հաշվառման դրամարկղային մեթոդով.
5) սույն մասի 1-4-րդ կետերում չնշված եկամուտների մասով՝ հաշվառման դրամարկղային մեթոդով:
(142-րդ հոդվածը լրաց. 21.06.18 ՀՕ-338-Ն, փոփ. 25.06.19 ՀՕ-68-Ն)
(142-րդ հոդվածը 25.06.19 ՀՕ-68-Ն օրենքի 71-րդ հոդվածի համաձայն կիրառվում է նաև 2018

թվականի հուլիսի 1-ից հետո կատարված՝ ավտոմեքենաների օտարման գործարքների նկատմամբ: 2018 թվականի հուլիսի 1-ից հետո մինչև 25.06.19 ՀՕ-68-Ն օրենքի 33-րդ հոդվածն ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով նախատեսված՝ ավտոմեքենայից տարբերվող գույքի օտարումից ստացվող եկամուտների մասով եկամտային հարկով հարկման օբյեկտների հաշվառումն իրականացվում է հաշվառման դրամարկղային մեթոդով:)

Հոդված 143. Եկամտային հարկով հարկման բազան

1. Եկամտային հարկով հարկման բազա է համարվում՝

1) ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար՝ հարկվող եկամուտը, որը որոշվում է որպես Օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված համախառն եկամտի և Օրենսգրքի 147-րդ հոդվածով սահմանված նվազեցվող եկամուտների դրական տարբերություն.

2) ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար՝ հարկվող եկամուտը, որը որոշվում է որպես Օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված համախառն եկամտի և Օրենսգրքի 147-րդ հոդվածով սահմանված նվազեցվող եկամուտների դրական տարբերություն:

Հոդված 144. Եկամուտների ստացման աղբյուրները

1. Հայաստանի Հանրապետության աղբյուրներից ստացվող եկամուտներ են համարվում՝

1) ռեզիդենտ հարկ վճարողների և (կամ) մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողների հետ կնքված աշխատանքային պայմանագրերի շրջանակներում ստացվող աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները.

2) ռեզիդենտ հարկ վճարողների և (կամ) մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողների հետ կնքված քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում ստացվող եկամուտները.

3) պասիվ եկամուտները՝ Օրենսգրքի 107-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերում.

4) այլ եկամուտները՝ Օրենսգրքի 107-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքերում:

2. Եթե հնարավոր չէ սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված այլ եկամուտը վերագրել Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող աղբյուրներին, ապա այդ եկամուտներն ամբողջությամբ համարվում են Հայաստանի Հանրապետության աղբյուրներից ստացվող եկամուտներ:

3. Այն եկամուտները, որոնք սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն չեն համարվում Հայաստանի Հանրապետության աղբյուրներից ստացվող եկամուտներ, համարվում են Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող աղբյուրներից ստացվող եկամուտներ:

Հոդված 145. Եկամտի առանձին տեսակների հաշվառման առանձնահատկությունները

1. Եկամտային հարկով հարկման բազայի որոշման նպատակով՝

1) բազմաբնակարան (այդ թվում՝ բազմաֆունկցիոնալ) շենքի, ստորաբաժանված շենքի, բնակելի թաղամասերում կամ համալիրներում անհատական բնակելի տան կառուցապատող համարվող ֆիզիկական անձի կողմից շենքի, դրա բնակարանների, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների՝ այլ ֆիզիկական անձին օտարման դեպքում օտարված շենքի կամ տարածքի (առանց ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող ոչ բնակելի տարածքների) օտարումից ստացվող եկամուտը հաշվարկվում է գործարքի փաստացի գնից ելնելով, իսկ գործարքի գնի բացակայության կամ գործարքի գնի՝ Օրենսգրքի 228-րդ հոդվածով սահմանված կարգով որոշվող՝ անշարժ գույքի հարկով հարկման բազայից պակաս լինելու դեպքում՝ դրանց համար Օրենսգրքի 228-րդ հոդվածով սահմանված կարգով որոշվող՝ անշարժ գույքի հարկով հարկման բազայի չափով.

2) բանկում կամ վարկային կազմակերպությունում գրավ դրված գույքի օտարումից ստացվող եկամուտը հաշվարկվում է Օրենսգրքի 146-րդ հոդվածով սահմանված կարգով:

Հոդված 146. Գրավ դրված գույքի օտարումից ստացվող եկամուտը

1. Ֆիզիկական անձի կողմից (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր կամ նոտար հանդիսացող ֆիզիկական անձի կողմից, եթե վերջիններս որպես գրավատու հանդես են գալիս որպես անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձ) գրավ դրված գույքը բռնագանձման արդյունքում (այդ թվում՝ հարկադիր կամ սնանկության աճուրդից

գնման կամ հանձնման դեպքում) սեփականության իրավունքով գրավառու բանկին կամ վարկային կազմակերպությանը անցնելու դեպքում գրավատու ֆիզիկական անձի՝ գույքն օտարելուց ստացվող եկամուտ է համարվում գրավ դրված գույքի օտարման գնի և վարկային պարտավորության դրական տարբերությունը, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի:

2. Բանկի կամ վարկային կազմակերպության սեփականությանն անցած (այդ թվում՝ պարտքի դիմաց ստացված)՝ գրավ դրված գույքը բանկի կամ վարկային կազմակերպության կողմից այդ գույքն ի սեփականություն վերցնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, այդ գույքի նախկին սեփականատիրոջը (որի գույքի վրա տարածվել էր բռնագանձումը) կամ նրա իրավահաջորդին օտարելու դեպքում համարվում է, որ գրավատուն գույքն օտարելուց եկամուտ չի ստացել:

3. Արտադատական կարգով բռնագանձման արդյունքում բանկի կամ վարկային կազմակերպության սեփականությանն անցած՝ գրավ դրված գույքի օտարումից ֆիզիկական անձին եկամուտների վճարման օր և օտարման գին են համարվում՝

1) բանկի կամ վարկային կազմակերպության կողմից այդ գույքի հետագա օտարման օրը և օտարման գինը, եթե այդ օտարումը տեղի է ունեցել գույքն ի սեփականություն վերցնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում: Ընդ որում, եթե գույքն օտարվել է օտարման օրվա դրությամբ այդ գույքի շուկայական գնից ողջամիտ չհամարվող ցածր գնով, ապա գույքի օտարման գին է համարվում օտարման օրվա դրությամբ այդ գույքի շուկայական գինը.

2) գույքն ի սեփականություն վերցնելուն հաջորդող վեցամսյա ժամկետի վերջին օրը և այդ օրվա դրությամբ գույքի շուկայական գինը, եթե այդ վեցամսյա ժամկետում գույքը չի օտարվել: Ընդ որում, բանկը կամ վարկային կազմակերպությունը պարտավոր է իր հաշվին ապահովել գույքի շուկայական գնի որոշումը անկախ գնահատողի կողմից:

4. Բռնագանձված գույքի նախկին սեփականատիրոջ կամ նրա իրավահաջորդի մասնակցությամբ քաղաքացիական, քրեական, սնանկության կամ վարչական գործի շրջանակներում բանկին կամ վարկային կազմակերպությանն ի սեփականություն անցած այդ գույքի վրա արգելանք դրվելու դեպքում սույն հոդվածով սահմանված վեցամսյա ժամկետի ընթացքը կասեցվում է արգելանքի տակ գտնվելու ամբողջ ժամկետով:

5. Բանկը կամ վարկային կազմակերպությունը և ֆիզիկական անձ գրավատուն կարող են համաձայնել, որ սույն հոդվածի 3-րդ մասի կիրառության իմաստով՝ գրավ դրված գույքի օտարման արդյունքում ֆիզիկական անձին եկամուտների վճարման օր և օտարման գին համարվեն այն բանկին կամ վարկային կազմակերպությանը ի սեփականություն անցնելու օրը և այդ օրվա դրությամբ անկախ գնահատողի որոշած շուկայական գինը: Սույն մասով սահմանված համաձայնությունը կնքվում է գրավոր:

6. Սույն հոդվածի կիրառության իմաստով՝ վարկային պարտավորություն է համարվում գրավ դրված գույքը բանկին կամ վարկային կազմակերպությանն ի սեփականություն անցնելու օրվա դրությամբ գրավով ապահովված պարտավորությունը (այդ թվում՝ տոկոսները, տուժանքը, կատարման ժամկետի կետանցով պատճառված վնասները), ինչպես նաև գրավ դրված գույքը պահելու, պահպանելու, դրա վրա բռնագանձում տարածելու և օտարելու համար գրավառուի կատարած կամ կատարվելիք և գրավ դրված գույքի օտարման գնի 15 տոկոսը չգերազանցող ծախսերը:

Հոդված 147. Նվազեցվող եկամուտները (նվազեցումները)

1. Հարկման բազան որոշելու նպատակով նվազեցվող եկամուտներ են համարվում՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն ստացվող նպաստների գումարները, բացառությամբ «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ ժամանակավոր անաշխատունակության նպաստների և վարձու աշխատողների ու ինքնուրույնաբար իրենց աշխատանքով ապահովված ֆիզիկական անձանց մայրության նպաստների գումարների.

2) բոլոր տեսակի կենսաթոշակները (այդ թվում՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կուտակային բաղադրիչի շրջանակներում ստացվող կուտակային կենսաթոշակները, այլ պետությունների օրենսդրության շրջանակներում ստացվող կենսաթոշակները և այլ պետությունների կենսաթոշակային ապահովության համակարգի շրջանակներում ստացվող համանման վճարները), բացառությամբ սահմանված կարգով կամավոր կենսաթոշակային բաղադրիչին մասնակցության շրջանակներում ստացվող կենսաթոշակների.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ կամավոր կենսաթոշակային բաղադրիչի շրջանակներում ֆիզիկական անձի կողմից իր համար և (կամ) ֆիզիկական անձի համար երրորդ անձի (այդ թվում՝ գործատուի) կողմից կատարվող կամավոր կենսաթոշակային վճարները՝ ֆիզիկական անձի հարկման բազայի հինգ տոկոսը չգերազանցող չափով.

4) ապահովագրական հատուցումները, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կամավոր կենսաթոշակային բաղադրիչի շրջանակներում ֆիզիկական անձի կողմից իր համար և (կամ) ֆիզիկական անձի համար երրորդ անձի (այդ թվում՝ գործատուի) կողմից կատարվող կամավոր կենսաթոշակային վճարների հաշվին սահմանված կարգով ստացվող հատուցումների (այդ թվում՝ կենսաթոշակների).

5) «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կուտակային կենսաթոշակային բաղադրիչի շրջանակներում ֆիզիկական անձի համար (օգտին) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացվող լրացուցիչ միջոցները.

6) «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կուտակային կենսաթոշակային բաղադրիչի շրջանակներում ֆիզիկական անձի համար (օգտին) կատարվող կուտակային հատկացումների հաշվին մինչև կուտակային կենսաթոշակ ստանալու իրավունքի ձեռքբերման՝ օրենքով սահմանված ժամկետը լրանալը ստացվող եկամուտները.

7) «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 64-66-րդ հոդվածների համաձայն՝ զինծառայողներին և նրանց հավասարեցված անձանց համար կատարվող աշխատանքները, նրանց մատուցվող ծառայությունները կամ նրանց՝ բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացվող եկամուտները, ինչպես նաև պարտադիր ժամկետային զինծառայողների (ռազմաուսումնական հաստատությունների կուրսանտների) ստացվող դրամական ապահովությունը.

8) զոհված զինծառայողների ընտանիքների անդամների և հաշմանդամ դարձած զինծառայողների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն ստացվող միանվագ վճարները.

9) Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ սոցիալական պաշտպանության համակարգի շրջանակներում ստացվող պատվովճարները, դրամական օգնություններն ու օժանդակությունները.

10) Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն ստացվող ալիմենտները (ապրուստավճարները).

11) արյուն ու կրծքի կաթ հանձնելու և դոնորության այլ տեսակների համար ստացվող եկամուտները.

12) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմաների (չափերի), Հայաստանի Հանրապետության տարածքում և Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործուղման դեպքում Օրենսգրքի 117-րդ հոդվածով սահմանված չափերը չգերազանցող գումարների սահմաններում աշխատանքային պայմանագրերի շրջանակներում աշխատանքների կատարման հետ կապված փոխհատուցման վճարները (այդ թվում՝ դիվանագիտական ծառայողների փոխհատուցման վճարները), բացառությամբ աշխատանքից ազատվելու դեպքում չօգտագործված արձակուրդի փոխհատուցման վճարների.

13) Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ ժառանգության և (կամ) նվիրատվության կարգով ֆիզիկական անձանցից ստացվող գույքը և (կամ) դրամական միջոցները: Սույն կետի կիրառության իմաստով՝ նվազեցվող եկամուտ չի համարվում Օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ կառուցապատող համարվող ֆիզիկական անձից նվիրատվության կարգով ստացվող գույքը.

14) ոչ առևտրային կազմակերպություններից անհատույց ստացվող ակտիվները, աշխատանքները, ծառայությունները.

15) Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, օրենքով ստեղծված մշտապես գործող մարմինների որոշումների հիման վրա, ինչպես նաև օտարերկրյա պետություններից և միջազգային, միջպետական (միջկառավարական) կազմակերպություններից անհատույց ստացվող ակտիվները, աշխատանքները, ծառայությունները, սույն կետում նշված մարմինների ու կազմակերպությունների կողմից ֆիզիկական անձանց համար (օգտին) կատարվող վճարումները.

16) սեփականության իրավունքով իրենց պատկանող գույքի (բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի) օտարումից անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանցից ստացվող եկամուտները: Սույն կետի կիրառության իմաստով՝

ա. ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի օտարում է համարվում ավտոմեքենայի օտարումը, եթե ավտոմեքենան օտարվում է ձեռք բերելուց հետո՝ 365 օրվա ընթացքում,

բ. նվազեցվող եկամուտներ չեն համարվում Օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ կառուցապատող համարվող ֆիզիկական անձին պատկանող գույքի օտարումից հարկային գործակալ չհանդիսացողներից ստացվող եկամուտները,

գ. գույք ձեռք բերել չի համարվում գույքի՝ ժառանգությամբ կամ նվիրատվությամբ ստացումը,

դ. եթե ավտոմեքենան օտարվել է օտարման օրվա դրությամբ այդ ավտոմեքենայի շուկայական գնից ողջամիտ չհամարվող ցածր գնով, ապա ավտոմեքենայի օտարման գին է համարվում օտարման օրվա դրությամբ դրա շուկայական գնի 80 տոկոսը.

17) բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների, ասպիրանտների, միջնակարգ-մասնագիտական ու պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնական հաստատությունների սովորողների, հոգևոր ուսումնական հաստատությունների ունկնդիրների՝ պետությունից ստացվող կրթաթոշակները, ինչպես նաև այն կրթաթոշակները, որոնք նրանց համար նշանակում են այդ ուսումնական հաստատությունները կամ սույն մասի 14-րդ և 15-րդ կետերում նշված կազմակերպությունները և մարմինները.

18) այն գումարները, որոնք օրենքով սահմանված կարգով ստացվում են որպես պատճառված վնասի փոխհատուցում, բացառությամբ բաց թողնված եկամտի փոխհատուցման գումարների.

19) ստացվող վարկերի և փոխառությունների գումարները, բացառությամբ պարտատիրոջ կողմից վարկի կամ փոխառության գումարների զիջման կամ որևէ այլ ձևով այդ գումարները չվերադարձնելու մասին պարտատիրոջ հետ համաձայնության դեպքերի (այդ թվում՝ օրենքով սահմանված հայցային վաղեմության ժամկետը լրանալու պահին).

20) աշխատողի կամ աշխատողի ընտանիքի որևէ անդամի մահվան դեպքում միանվագ կարգով ստացվող օգնության գումարները.

21) Հայաստանի Հանրապետության ազգային հավաքականի կազմում միջազգային մրցույթներում հաղթած մարզիկների և մարզիչների մրցանակները.

22) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և պայմաններով իրականացվող՝ գովազդային վիճակախաղերի մասնակիցների դրամական և իրային շահումները՝ յուրաքանչյուր շահման դեպքում 50 հազար դրամը չգերազանցող չափով, խաղարկությունով, ոչ խաղարկությունով և համակցված վիճակախաղերի, ինչպես նաև տոտալիզատորի մասնակիցների դրամական և իրային շահումները.

23) մրցույթներում ստացվող դրամական և իրային մրցանակների արժեքը՝ յուրաքանչյուր մրցանակի դեպքում 50 հազար դրամը չգերազանցող չափով.

24) բարձրագույն ուսումնական հաստատության ուսանողական համակազմի մինչև տասը տոկոսի՝ օրենսդրությամբ սահմանված դեպքերում ուսման վարձի փոխհատուցման գումարները.

25) պետական պարգևները (մրցանակները).

26) «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամից հատուցվող գումարները, բացառությամբ ավանդի գումարին հաշվեգրվող և հատուցվող տոկոսների.

27) ԽՍՀՄ խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրած դրամական ավանդների դիմաց փոխհատուցվող գումարները.

28) պետության կամ համայնքների կարիքների համար «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ֆիզիկական անձանց պատկանող անշարժ գույքը վերցնելու դիմաց այդ ֆիզիկական անձանց, ինչպես նաև այդ անշարժ գույքում հաշվառված (գրանցված) ֆիզիկական անձանց վճարվող գումարները.

29) գործատուների կողմից իրենց վարձու աշխատողների առողջության ապահովագրության համար կատարվող ապահովագրավճարները՝ յուրաքանչյուր վարձու աշխատողի համար եկամտի ստացման յուրաքանչյուր ամսվա հաշվով մինչև 10 հազար դրամի չափով.

30) միասնական հաշվին առկա գումարների վերադարձն Օրենսգրքի 327-րդ հոդվածով սահմանված ժամկետից 30 օրվանից ավելի ուշացնելու դեպքում այդ ժամկետին հաջորդող յուրաքանչյուր ուշացված օրվա համար ֆիզիկական անձի օգտին հաշվեգրվող տույժերը.

31) «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությամբ սահմանված ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով փոխադրումներ իրականացնելու գործունեությունից ստացվող եկամուտները.

32) Օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և (կամ) 2-րդ կետերով շահութահարկ վճարողների համար հաշվարկվող եկամտի և փաստացի հատուցման գումարի (առանց ԱԱՀ-ի) կամ վարձակալական վճարի (առանց ԱԱՀ-ի) դրական տարբերությունը.

33) Օրենսգրքի 116-րդ հոդվածով սահմանված ներկայացուցչական ծախսերի և Օրենսգրքի 120-րդ հոդվածով սահմանված՝ ֆիզիկական անձանց օգնության, սննդի կազմակերպման, նրանց համար սոցիալ-մշակութային միջոցառումների կազմակերպման և համանման այլ ծախսերի հաշվին ֆիզիկական անձանց կողմից ստացվող դրամական և բնամթերային (ոչ դրամական) ձևով եկամուտները՝ Օրենսգրքի համապատասխանաբար 116-րդ և 120-րդ հոդվածներով սահմանված չափերի սահմաններում: ***(նախադասությունը հանվել է 21.12.17 ՀՕ-266-Ն)***

34) վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար էներգաարտադրողի՝ էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձից ստացվող հատուցման գումարները, ինչպես նաև հավասար փոխհոսքերի դեպքում ինքնավար էներգաարտադրողի կողմից էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձին մատակարարված էլեկտրական էներգիայի դիմաց էլեկտրական էներգիայի տեսքով ստացվող փոխհատուցումները.

35) գյուղատնտեսական արտադրանք արտադրող ֆիզիկական անձանց՝ գյուղատնտեսական արտադրանքի մատակարարումից ստացվող եկամուտները՝ Օրենսգրքի 148-րդ հոդվածի համաձայն.

36) արժեթղթերից ստացվող եկամուտները՝ Օրենսգրքի 149-րդ հոդվածի համաձայն.

37) «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա շահառուներին վճարվող հատուցման գումարները.

38) հողամասի (անկախ հողամասի նպատակային նշանակությունից) օտարումից ստացվող եկամուտները.

39) առևտրի իրականացման վայրերում (ոսկու շուկաներում) վաճառասեղանների կամ վաճառակետերի միջոցով թանկարժեք մետաղների, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի կամ թանկարժեք քարերի առք ու վաճառքի գործունեություն իրականացնող հարկային գործակալին օտարվող ոսկու և թանկարժեք քարերի դիմաց ստացվող եկամուտները:

(147-րդ հոդվածը փոփ. 13.12.17 ՀՕ-264-Ն, խմբ., փոփ., լրաց. 21.12.17 ՀՕ-266-Ն, խմբ., փոփ. 21.06.18 ՀՕ-338-Ն, խմբ., լրաց. 25.06.19 ՀՕ-68-Ն)

(147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետը 25.06.19 ՀՕ-68-Ն օրենքի 71-րդ հոդվածի համաձայն տարածվում է նաև մինչև 25.06.19 ՀՕ-68-Ն օրենքն ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող՝ 2018 թվականի հուլիսի 1-ից հետո կատարված՝ ավտոմեքենաների օտարման գործարքների նկատմամբ:)

(147-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետը 25.06.19 ՀՕ-68-Ն օրենքի 71-րդ հոդվածի համաձայն ուժի

մեջ կմտնի 01.01.21-ից:)

(147-րդ հոդվածի 1-ին մասի 38, 39-րդ կետերը 25.06.19 ՀՕ-68-Ն օրենքի 71-րդ հոդվածի համաձայն կկիրառվեն 2020 թվականի հունվարի 1-ից հետո իրականացված օտարման գործարքների մասով ստացվող եկամուտների նկատմամբ:)

Հոդված 148. Գյուղատնտեսական արտադրանքի մատակարարումից ստացվող եկամուտները

1. Հարկման բազան որոշելու նպատակով նվազեցվող եկամուտներ են համարվում նաև գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղված ֆիզիկական անձանց՝ Օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացվող եկամուտները:

Հոդված 149. Արժեթղթերից ստացվող եկամուտները

1. Սույն հոդվածով այլ բան սահմանված չլինելու դեպքում հարկման բազան որոշելու նպատակով նվազեցվող եկամուտներ են համարվում նաև՝

1) գանձապետական պարտատոմսերի, պետական այլ արժեթղթերի և Համահայկական բանկի թողարկած պարտատոմսերի գծով ստացվող տոկոսը, մարման ժամանակ ստացվող գեղչը և (կամ) օտարումից, այլ արժեթղթերով փոխանակումից կամ նման այլ գործարքներից ստացվող եկամուտը.

2) կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում մասնակցության (բաժնետոմսի, բաժնեմասի, փայաբաժնի) կամ ներդրում վկայող այլ արժեթղթերի օտարումից, այլ արժեթղթերի հետ փոխանակումից կամ նման այլ գործարքներից ստացվող եկամուտը.

3) ներդրումային ֆոնդերում մասնակցությունը հավաստող արժեթղթերից ստացվող եկամուտը (այդ թվում՝ դրանց օտարումից, փոխանակումից, նման այլ գործարքներից, ինչպես նաև պայմանագրային ներդրումային ֆոնդի ակտիվների հաշվին կատարված գործարքներից):

2. Հարկման բազան որոշելու նպատակով սույն հոդվածի 1-ին մասով սահմանված եկամուտները չեն համարվում նվազեցվող եկամուտներ (չեն նվազեցվում համախառն եկամտից), եթե՝

1) ստացվում են որպես վճարման միջոց տրված մուրհակի, վճարագրի կամ վճարային այլ արժեթղթի օտարումից.

2) ստացվում են որպես ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման և (կամ) ծառայությունների մատուցման դիմաց հատուցում կամ փոխարինում են այդ հատուցմանը՝ անկախ արժեթղթի դիմաց իրական ներդրման կամ փոխատվության փաստի առկայությունից.

3) ստացվում են կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում շենքի, բնակարանի, առանձնատան կամ այլ շինության (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց) ձևով մասնակցության (բաժնետոմսի, բաժնեմասի, փայաբաժնի) կամ ներդրում վկայող այլ արժեթղթերի օտարումից, եթե այդ օտարումը կատարվում է կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում այդ մասնակցությունը (բաժնետոմսը, բաժնեմասը, փայաբաժինը) ձեռք բերելու օրը ներառող հարկային տարվա կամ դրան հաջորդող երեք հարկային տարիների ընթացքում.

4) ստացվում են որպես շահաբաժին:

(149-րդ հոդվածը փոփ. 21.06.18 ՀՕ-338-Ն)

Հոդված 150. Եկամտային հարկի դրույքաչափերը

1. Եթե սույն հոդվածի 2-15-րդ մասերով այլ բան սահմանված չէ, ապա հարկման բազայի նկատմամբ եկամտային հարկը հաշվարկվում է հետևյալ դրույքաչափերով.

Ժամանակահատված	Եկամտային հարկի դրույքաչափը
2020 թվականի հունվարի 1-ից	23 տոկոս
2021 թվականի հունվարի 1-ից	22 տոկոս
2022 թվականի հունվարի 1-ից	21 տոկոս

2023 թվականի հունվարի 1-ից	20 տոկոս

2. *(մասն ուժը կորցրել է 21.06.18 ՀՕ-338-Ն)*

3. Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ կամավոր կենսաթոշակային բաղադրիչի շրջանակում կուտակված գումարները օրենսդրությամբ սահմանված դեպքերում ֆիզիկական անձի կողմից միանվագ ստանալու դեպքում այդ գումարների մասով եկամտային հարկը հաշվարկվում է սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված դրույքաչափով՝ առանց հաշվի առնելու Օրենսգրքի 147-րդ հոդվածով սահմանված նվազեցումները:

4. Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ կամավոր կենսաթոշակային բաղադրիչի շրջանակում ֆիզիկական անձի կողմից իր համար և (կամ) ֆիզիկական անձի համար երրորդ անձի (այդ թվում՝ գործատուի) կողմից կատարվող կամավոր կենսաթոշակային վճարների հաշվին սահմանված կարգով ստացվող կենսաթոշակների մասով եկամտային հարկը հաշվարկվում է տասը տոկոս դրույքաչափով՝ առանց հաշվի առնելու Օրենսգրքի 147-րդ հոդվածով սահմանված նվազեցումները:

5. Տոկոսների մասով եկամտային հարկը հաշվարկվում է տասը տոկոս դրույքաչափով՝ հաշվի առնելով Օրենսգրքի 149-րդ հոդվածով սահմանված նվազեցումները:

6. Ռոյալթիների մասով եկամտային հարկը հաշվարկվում է տասը տոկոս դրույքաչափով:

7. Վարձակալական վճարների մասով եկամտային հարկը հաշվարկվում է տասը տոկոս դրույքաչափով, իսկ հարկային տարվա ընթացքում ստացված վարձակալական վճարների հանրագումարը 60 միլիոն դրամը գերազանցելու դեպքում, գերազանցող մասի համար ֆիզիկական անձը հաշվարկում է լրացուցիչ եկամտային հարկ՝ տասը տոկոս դրույքաչափով:

8. Շահաբաժինների մասով եկամտային հարկը հաշվարկվում է հինգ տոկոս դրույքաչափով:

9. Գույքի օտարումից հարկային գործակալներից ստացվող ամբողջ եկամուտների մասով (բացառությամբ սույն հոդվածի 11-րդ մասով սահմանված դեպքերի) եկամտային հարկը հաշվարկվում է տասը տոկոս դրույքաչափով:

10. Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի «ա» ենթակետով սահմանված դեպքում ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի օտարումից (այդ թվում՝ նաև այն դեպքում, երբ գույքն օտարվում է անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանցից տարբերվող և հարկային գործակալ չհանդիսացող անձի) ստացվող ամբողջ եկամուտների մասով եկամտային հարկը հաշվարկվում է 1 տոկոս դրույքաչափով, բայց ոչ պակաս, քան ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի շարժիչի յուրաքանչյուր ձիաուժ հզորության համար 150 դրամից: Շարժիչի հզորությունը կիլովատերով արտահայտված լինելու դեպքում համապատասխան հզորության նկատմամբ կիրառվում է 1.36 գործակից:

11. Կառուցապատողի կողմից շենքի, դրա բնակարանների կամ այլ տարածքների օտարումից ստացված եկամուտների մասով եկամտային հարկը հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով:

12. Սույն հոդվածի կիրառության իմաստով՝ գույքի օտարում չի համարվում կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում կամ պայմանագրային ներդրումային ֆոնդում գույքի ներդրումը:

13. Եթե հարկային գործակալի կողմից հարկ վճարողներին վճարվող եկամուտների մասով առկա չեն Օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 1-5-րդ կետերով սահմանված հաշվարկային փաստաթղթեր, ապա այդ եկամուտների մասով եկամտային հարկը հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով՝ առանց հաշվի առնելու Օրենսգրքի 147-րդ հոդվածով սահմանված նվազեցումները, բացառությամբ սույն մասի երկրորդ պարբերությամբ սահմանված դեպքերի: Սույն մասով սահմանված չափով եկամտային հարկ չի հաշվարկվում, եթե Օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 1-5-րդ կետերով սահմանված հաշվարկային փաստաթղթերի բացակայության պայմաններում վճարվող եկամուտների մասով առկա են հաշվարկային փաստաթուղթ չհամարվող՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմված՝ վճարվող եկամուտները հիմնավորող այլ փաստաթղթեր, որտեղ նշված են ապրանք մատակարարող, աշխատանք կատարող և (կամ) ծառայություն մատուցող ֆիզիկական անձի՝ հարկ վճարողի հաշվառման համարը (առկայության դեպքում), անունը, ազգանունը, բնակության վայրի հասցեն, անձնագրի (կամ անձը նույնականացնող այլ փաստաթղթի) սերիան և (կամ) համարը:

Օրենսգրքի 116-րդ հոդվածով սահմանված ներկայացուցչական ծախսերի և Օրենսգրքի 120-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված՝ ֆիզիկական անձանց օգնության, սննդի կազմակերպման, նրանց համար սոցիալ-մշակութային միջոցառումների կազմակերպման և համանման այլ ծախսերի հաշվին ֆիզիկական անձանց կողմից ստացվող դրամական և բնամթերային (ոչ դրամական) ձևով եկամուտների՝ Օրենսգրքի համապատասխանաբար 116-րդ հոդվածով և 120-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված չափերը գերազանցող գումարների նկատմամբ եկամտային հարկը հաշվարկվում է սույն մասով սահմանված դրույքաչափով և ներառվում է հարկային տարվան հաջորդող տարվա ապրիլ ամսվա համար հարկային մարմին ներկայացվող եկամտային հարկի հաշվարկում, իսկ հարկային գործակալի լուծարման (հաշվառումից հանվելու կամ նոտարի պաշտոնից ազատվելու) դեպքում՝ լուծարման (հաշվառումից հանվելու կամ նոտարի պաշտոնից ազատվելու) օրը ներառող ամսվա համար հարկային մարմին ներկայացվող եկամտային հարկի հաշվարկում:

14. Ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում

գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի՝ շահութահարկով հարկման բազան որոշելիս հարկային տարվա ընթացքում անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց վճարվող պասիվ եկամուտները համախառն եկամտից նվազեցնելու դեպքում նվազեցման կատարման հարկային տարվան հաջորդող 12 ամիսների ընթացքում այդ եկամուտները չվճարվելու դեպքում դրանց նկատմամբ եկամտային հարկը հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով և ներառվում է 12-րդ ամսվա համար հարկային մարմին ներկայացվող եկամտային հարկի հաշվարկում: Սույն մասի դրույթները չեն վերաբերում բանկերին և վարկային կազմակերպություններին՝ այլ հարկ վճարողներից ներգրավված վարկերի, փոխառությունների և ավանդների դիմաց վճարվող տոկոսների մասով, ինչպես նաև այլ կազմակերպությունների՝ վերջիններիս թողարկած և հրապարակային առաջարկի միջոցով հանրությանը առաջարկված կամ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված պարտքային արժեթղթերի դիմաց վճարվող գումարների մասով:

15. Օրենսգրքի 149-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով սահմանված դեպքերում կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում շենքի, բնակարանի, առանձնատան կամ այլ շինության (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց) ձևով մասնակցության (բաժնետոմսի, բաժնեմասի, փայաբաժնի) կամ ներդրում վկայող այլ արժեթղթերի օտարումից ստացվող եկամուտների մասով եկամտային հարկը հաշվարկվում է 10 տոկոս դրույքաչափով:

(150-րդ հոդվածը փոփ., լրաց., խմբ. 21.12.17 ՀՕ-266-Ն, 21.06.18 ՀՕ-338-Ն, փոփ., խմբ. 25.06.19 ՀՕ-68-Ն)

(21.06.18 ՀՕ-338-Ն օրենքի 86-րդ հոդվածի համաձայն՝ մինչև 2019 թվականի հունվարի 1-ը Կառավարության հավանությանն արժանացած՝ Օրենսգրքի 128-րդ հոդվածով սահմանված ծրագիր իրականացնող ռեզիդենտ շահութահարկ վճարողի և այդ ծրագրում ընդգրկված Հայաստանի Հանրապետության այլ ռեզիդենտ շահութահարկ վճարողների նկատմամբ Օրենսգրքի 150-րդ հոդվածի 2-րդ մասը շարունակում է կիրառվել մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:)

(150-րդ հոդվածի 8-րդ մասը 25.06.19 ՀՕ-68-Ն օրենքի 71-րդ հոդվածի համաձայն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից և կիրառվում է 2020 թվականի հունվարի 1-ից հետո ընկած ժամանակահատվածներին վերագրվող (այդ ժամանակահատվածների գործունեության արդյունքում ստացվող) շահույթներից՝ որպես շահույթի բաշխում, մասնակցի ստացած շահաբաժինների վրա:)

(150-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերը 25.06.19 ՀՕ-68-Ն օրենքի 71-րդ հոդվածի համաձայն ուժի մեջ են մտնում 25.06.19 ՀՕ-68-Ն օրենքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում են նաև մինչև 25.06.19 ՀՕ-68-Ն օրենքն ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող՝ 2018 թվականի հուլիսի 1-ից հետո կատարված՝ ավտոմեքենաների օտարման գործարքների նկատմամբ:)

Գ Լ Ո Ւ Խ 28

ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ

Հոդված 151. Հաշվետու ժամանակաշրջանը

1. Օրենսգրքի 152-րդ հոդվածով սահմանված՝ եկամտային հարկը հարկային գործակալի կողմից հաշվարկելու, պահելու և պետական բյուջե վճարելու դեպքերում եկամտային հարկի հաշվարկման և վճարման համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր հաշվետու ամիսը:

2. Հայաստանի Հանրապետության անունից կնքված և վավերացված պայմանագրերի դրույթների համաձայն՝ եկամուտ վճարողի՝ հարկային գործակալի պարտավորությունից ազատված լինելու դեպքերում աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների, ինչպես նաև քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում կատարված աշխատանքների և (կամ) մատուցված ծառայությունների համար ստացվող եկամուտների մասով եկամտային հարկի հաշվարկման և վճարման համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր հաշվետու ամիսը:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերում չնշված դեպքերում հաշվետու տարում ստացված հարկման բազայից եկամտային հարկի հաշվարկման և վճարման համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր հաշվետու տարին:

Հոդված 152. Եկամտային հարկը հաշվարկելը և պահելը հարկային գործակալի կողմից

1. Ֆիզիկական անձանց եկամուտների մասով եկամտային հարկը հաշվարկում և պահում է հարկային գործակալը՝ հիմք ընդունելով Օրենսգրքի 150-րդ հոդվածով սահմանված դրույքաչափերը, եթե Օրենսգրքի 153-րդ հոդվածով այլ բան սահմանված չէ:

2. Հարկային գործակալի կողմից ֆիզիկական անձանց եկամուտների մասով ժամանակին չպահված կամ պակաս

պահված եկամտային հարկի գումարները ֆիզիկական անձանցից, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, կարող են պահվել (գանձվել) ոչ ավելի, քան վերջին երեք ամսվա համար, իսկ եկամտային հարկի սահմանված չափից ավելի պահված (գանձված) գումարները հաշվանցվում են առաջիկա պահումների (գանձումների) հաշվին կամ վերադարձվում են այդ մասին հայտնի դառնալու օրվանից հետո՝ մեկ ամսվա ընթացքում՝ ոչ ավելի, քան վերջին երեք տարվա համար:

3. Կառավարության սահմանած դեպքերում օրենսդրությամբ սահմանված կարգով եկամտային հարկով հարկման բազայի վերահաշվարկ կատարվելու դեպքերում հարկային գործակալները կատարում են հաշվարկվող և պահվող եկամտային հարկի վերահաշվարկ:

(152-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Հոդված 153. Հարկային գործակալին եկամտային հարկը հաշվարկելու և պահելու պարտավորությունից ազատելու դեպքերը

1. Հարկային գործակալն ազատվում է, Օրենսգրքի 152-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, ֆիզիկական անձանց եկամուտների մասով եկամտային հարկը հաշվարկելու և պահելու պարտավորությունից, եթե՝

1) Հայաստանի Հանրապետության անունից կնքված և վավերացված պայմանագրերի դրույթների համաձայն՝ եկամուտ վճարողն ազատված է հարկային գործակալի պարտավորությունից.

2) ֆիզիկական անձանց վճարվող եկամուտները վերաբերում են մրցույթներում ստացվող իրային մրցանակներին, ինչպես նաև խաղատներում, շահումով խաղերում և (կամ) ինտերնետ շահումով խաղերում ստացված շահումներին.

3) ֆիզիկական անձանց վճարվում են Օրենսգրքի 149-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով սահմանված դեպքերում կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում շենքի, բնակարանի, առանձնատան կամ այլ շինության (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց) ձևով մասնակցության (բաժնետոմսի, բաժնեմասի, փայաբաժնի) կամ ներդրում վկայող այլ արժեթղթերի օտարումից ստացվող եկամուտներ:

(153-րդ հոդվածը 25.06.19 ՀՕ-68-Ն օրենքի 71-րդ հոդվածի համաձայն ուժի մեջ կմտնի 01.01.21-ից:)

Հոդված 154. Պետական բյուջե վճարման ենթակա եկամտային հարկի գումարի հաշվարկման կարգը

1. Հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով հարկային գործակալները պետական բյուջե են վճարում այդ ժամանակաշրջանին վերաբերող հարկման բազայի նկատմամբ Օրենսգրքի 150-րդ հոդվածով սահմանված դրույքաչափով հաշվարկված եկամտային հարկի գումարների և տվյալ հաշվետու ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին փաստացի վճարված՝ «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ ժամանակավոր անաշխատունակության նպաստների և մայրության նպաստների հանրագումարների դրական տարբերությունը: Սույն մասով սահմանված նպաստները հաշվետու ժամանակաշրջանին վերաբերող հարկման բազայի նկատմամբ հաշվարկված եկամտային հարկի գումարներից պակասեցված են համարվում պակասեցման հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ից: Սույն մասով սահմանված՝ հաշվետու ժամանակաշրջանին վերաբերող հարկման բազայի նկատմամբ հաշվարկված եկամտային հարկի գումարների մեջ ներառվում են նաև Օրենսգրքի 150-րդ հոդվածի 14-րդ մասով սահմանված դեպքերում հաշվարկվող եկամտային հարկի գումարները՝ որպես նվազեցում կատարելու հարկային տարվան հաջորդող 12-րդ ամսվա հարկման բազա:

2. Օրենսգրքի 153-րդ հոդվածով սահմանված դեպքերում ֆիզիկական անձինք (անչափահաս ֆիզիկական անձանց դեպքում՝ ծնողը կամ խնամակալը կամ հոգաբարձուն) Օրենսգրքի 151-րդ հոդվածի 2-րդ և (կամ) 3-րդ մասերով սահմանված համապատասխան հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով պետական բյուջե են վճարում այդ ժամանակաշրջանին վերաբերող հարկման բազայի նկատմամբ Օրենսգրքի 150-րդ հոդվածով սահմանված դրույքաչափով հաշվարկված եկամտային հարկի գումարները:

Հոդված 155. Պետական բյուջեից փոխհատուցման ենթակա եկամտային հարկի գումարի հաշվարկման կարգը

1. Հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով հարկային գործակալներին պետական բյուջեից փոխհատուցման ենթակա եկամտային հարկի գումարը հաշվարկվում է որպես այդ ժամանակաշրջանին վերաբերող հարկման բազայի նկատմամբ Օրենսգրքի 150-րդ հոդվածով սահմանված դրույքաչափով հաշվարկված եկամտային հարկի գումարների և տվյալ հաշվետու ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին փաստացի վճարված՝ «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ ժամանակավոր անաշխատունակության նպաստների և մայրության

նպաստների հանրագումարների բացասական տարբերություն:

Հոդված 156. Եկամտային հարկի հաշվարկները և այլ փաստաթղթերը ներկայացնելը

1. Հարկային գործակալները մինչև յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում եկամտային հարկի հաշվարկ, որտեղ ներառվում են տվյալ հարկային գործակալից եկամուտներ ստացող ֆիզիկական անձանց (բացառությամբ միայն պասիվ եկամուտներ ստացող, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք (կացության կարգավիճակ) չունեցող օտարերկրյա քաղաքացիների ու քաղաքացիություն չունեցող ֆիզիկական անձանց) եկամուտների, այդ եկամուտներից հաշվարկված և պահված եկամտային հարկի, իսկ սոցիալական վճարներ կատարող ֆիզիկական անձանց մասով՝ նաև հաշվարկված և պահված սոցիալական վճարների վերաբերյալ անհատական տեղեկություններ, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի: Եկամտային հարկի հաշվարկում ներառվում են նաև տվյալ հարկային գործակալից հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում բացառապես պասիվ եկամուտներ ստացող ֆիզիկական անձանց պասիվ եկամուտների և Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք (կացության կարգավիճակ) չունեցող օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող ֆիզիկական անձի եկամուտների, ինչպես նաև այդ եկամուտներից հաշվարկված և պահված եկամտային հարկի գումարների վերաբերյալ ամփոփ տվյալներ:

2. Հարկային գործակալները նոր աշխատողին (բացառությամբ Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք (կացության կարգավիճակ) չունեցող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող ֆիզիկական անձանց) աշխատանքի ընդունելուց հետո, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ աշխատողի կողմից աշխատանքը փաստացի սկսելու օրվան նախորդող օրվա ավարտը, իսկ աշխատանքի ընդունելու օրն աշխատանքը փաստացի սկսելու դեպքում՝ մինչև աշխատանքի ընդունելու օրվա ժամը 14:00-ն, Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում նոր աշխատողի գրանցման հայտ, որտեղ ներառվում են անհատական տեղեկություններ (անունը, ազգանունը, հայրանունը, բնակության (հաշվառման) վայրը, հանրային ծառայությունների համարանիշը (սոցիալական քարտի համարը), ինչպես նաև օրենքով սահմանված այլ տեղեկություններ), բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի:

3. Եթե նոր աշխատողի համար գրանցման հայտում և (կամ) եկամտային հարկի հաշվարկում ներառվելիք՝ անձին վերաբերող տեղեկատվությունը օրենսդրությամբ սահմանված է որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն, ապա տվյալ անձի համար գրանցման հայտը և (կամ) եկամտային հարկի հաշվարկը հարկային մարմին է ներկայացվում Կառավարության սահմանած կարգով:

4. Օրենսգրքի 153-րդ հոդվածով սահմանված դեպքերում ֆիզիկական անձինք (անչափահաս ֆիզիկական անձանց դեպքում՝ ծնողը կամ խնամակալը կամ հոգաբարձուն)՝

1) մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում Օրենսգրքի 151-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված եկամուտների մասով եկամտային հարկի պարզեցված հաշվարկներ.

2) մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հարկային տարվա ապրիլի 20-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում Օրենսգրքի 151-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված եկամուտների մասով եկամտային հարկի տարեկան հաշվարկներ:

5. Հարկային գործակալները մինչև յուրաքանչյուր հարկային տարվան հաջորդող հարկային տարվա ապրիլի 20-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում նախորդ հարկային տարվա ընթացքում միայն պասիվ եկամուտներ ստացած ֆիզիկական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք (կացության կարգավիճակ) չունեցող օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց, նրանց եկամուտների, այդ եկամուտներից հաշվարկված և պահված եկամտային հարկի վերաբերյալ անհատական տեղեկություններ, բացառությամբ բանկային կամ ապահովագրական գաղտնիք համարվող տեղեկությունների:

(156-րդ հոդվածը փոփ. 21.12.17 ՀՕ-266-Ն, 23.03.18 ՀՕ-261-Ն, լրաց. 21.06.18 ՀՕ-338-Ն)

Հոդված 157. Եկամտային հարկի վերաբերյալ տեղեկանքների տրամադրումը

1. Հարկային գործակալները պարտավոր են ֆիզիկական անձանց պահանջով կազմել և նրանց տրամադրել նրանց մասով հաշվարկված և վճարված եկամուտների, պահված եկամտային հարկի գումարների, ինչպես նաև գործատուի կողմից աշխատողի համար կատարված սոցիալական վճարների մասին տեղեկանքներ: Սույն մասով սահմանված տեղեկանքի ձևը, լրացման և տրամադրման կարգը սահմանում է հարկային մարմինը:

Գ Լ Ո Ւ Խ 29

ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԵՎ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՀԱՇՎԻՆ ՄՈՒՏՔԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Հոդված 158. Եկամտային հարկի գումարի վճարումը

1. Հարկային գործակալները Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հաշվարկված՝ պետական բյուջե վճարման ենթակա եկամտային հարկի գումարները պետական բյուջե են վճարում մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

2. Օրենսգրքի 153-րդ հոդվածով սահմանված դեպքերում ֆիզիկական անձինք (անչափահաս ֆիզիկական անձանց դեպքում՝ ծնողը կամ խնամակալը կամ հոգաբարձուն) Օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով հաշվարկված՝ պետական բյուջե վճարման ենթակա եկամտային հարկի գումարները պետական բյուջե են վճարում՝

1) Օրենսգրքի 151-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքում՝ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ.

2) Օրենսգրքի 151-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքում՝ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հարկային տարվա ապրիլի 20-ը ներառյալ:

Հոդված 159. Եկամտային հարկի գումարի վերադարձը և մուտքագրումը միասնական հաշվին

1. Օրենսգրքի 155-րդ հոդվածով սահմանված՝ պետական բյուջեից փոխհատուցման ենթակա եկամտային հարկի գումարի վերադարձն իրականացվում է «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

2. Օրենսգրքով սահմանված՝ չափից ավելի վճարված եկամտային հարկի գումարները Օրենսգրքի՝ հարկային վարչարարության մասով սահմանված կարգով և ժամկետներում մուտքագրվում են միասնական հաշվին:

3. Բնակարան ձեռք բերելու կամ անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով վարձու աշխատողի ստացած հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարները փոխհատուցվում են Օրենսգրքի 160-րդ հոդվածով սահմանված կարգով:

4. Շահաբաժինների տեսքով ստացվող եկամուտները դրանց ստացման հարկային տարվա ընթացքում շահաբաժին վճարող՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ նույն կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում օրենսդրությամբ սահմանված կարգով ներդնելու դեպքում ներդրված գումարը՝ ներդրման չափով, բայց ոչ ավելի, քան շահաբաժիններից պետական բյուջե վճարված հարկի գումարները, պետական բյուջեից փոխհատուցվում է Կառավարության սահմանած կարգով:

(159-րդ հոդվածը լրաց. 21.12.17 ՀՕ-266-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Հոդված 160. Վճարված եկամտային հարկի գումարներից բնակարան կամ անհատական բնակելի տուն ձեռք բերելու կամ անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի կողմից ստացված հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների վերադարձը

(վերնագիրը խմբ. 21.12.17 ՀՕ-266-Ն)

1. Վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձանց աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների մասով Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված (այդ թվում՝ հարկային գործակալի միջոցով) եկամտային հարկը վերադարձվում է Հայաստանի Հանրապետության տարածքում կառուցված կամ կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքում անմիջապես կառուցապատողից, ինչպես նաև պետության և (կամ) համայնքի կողմից իրականացվող բնակարանային ապահովության ծրագրի շրջանակներում պետությունից կամ համայնքից բնակարան ձեռք բերելու կամ Հայաստանի Հանրապետության տարածքում բնակելի թաղամասերում կամ համալիրներում անմիջապես կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող կառուցապատողից անհատական բնակելի տուն ձեռք բերելու կամ Հայաստանի Հանրապետության տարածքում անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի կողմից Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությունից 2018 թվականի հունվարի 1-ից հետո ստացված և փաստացի բնակարան կամ անհատական բնակելի տուն ձեռք բերելուն կամ անհատական բնակելի տուն կառուցելուն ուղղված հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների չափով՝ հաշվի առնելով սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված սահմանափակումները:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված՝

1) Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությունից 2018 թվականի հունվարի 1-ից հետո ստացված և կառուցապատողից, պետությունից կամ համայնքից փաստացի բնակարան ձեռք բերելուն կամ կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող կառուցապատողից անհատական բնակելի տուն ձեռք բերելուն ուղղված հիպոտեկային վարկի սպասարկման համար վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի

կողմից վճարված տոկոսների գումարների չափով վերադարձման ենթակա եկամտային հարկը վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձանց չի վերադարձվում, եթե բնակարան կամ անհատական բնակելի տուն ձեռք բերելու գործարքի պայմանագրային արժեքը գերազանցում է 55 միլիոն դրամը.

2) Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությունից 2018 թվականի հունվարի 1-ից հետո ստացված և կառուցապատողից, պետությունից կամ համայնքից փաստացի բնակարան ձեռք բերելուն կամ կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող կառուցապատողից անհատական բնակելի տուն ձեռք բերելուն կամ անհատական բնակելի տուն կառուցելուն փաստացի ուղղված հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների չափով հիպոտեկային վարկի վարկառուին և առկայության դեպքում համավարկառուներին վերադարձման ենթակա եկամտային հարկի ընդհանուր գումարը յուրաքանչյուր եռամսյակի համար չի կարող գերազանցել 1.5 միլիոն դրամը.

3) հիպոտեկային վարկի սպասարկման համար վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի կողմից վճարված տոկոսների գումարների չափով եկամտային հարկի վերադարձման հնարավորությունից 2018 թվականի հունվարի 1-ից հետո վարկառու և համավարկառու ֆիզիկական անձինք իրենց ընտրությամբ կարող են օգտվել միայն մեկ հիպոտեկային վարկի պայմանագրի մասով:

3. Սույն հոդվածով սահմանված գումարները՝

1) վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձանց ենթակա են վերադարձման եռամսյակային պարբերականությամբ.

2) հարկային գործակալի միջոցով հարկային պարտավորությունները կատարող վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձանց ենթակա են վերադարձման, եթե հարկային գործակալն ամբողջությամբ կատարել է տվյալ եռամսյակի բոլոր ամիսների համար հարկային մարմին ներկայացված՝ եկամտային հարկի հաշվարկով աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների մասով հայտարարագրված հարկային պարտավորությունը.

3) հարկային գործակալ չունեցող վարձու աշխատող ֆիզիկական անձանց ենթակա են վերադարձման, եթե վարձու աշխատողն ամբողջությամբ կատարել է տվյալ եռամսյակի բոլոր ամիսների համար հարկային մարմին ներկայացված՝ եկամտային հարկի պարզեցված հաշվարկով աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների մասով հայտարարագրված հարկային պարտավորությունը:

4. Սույն հոդվածով սահմանված գումարներից վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձանց վերադարձման ենթակա գումարների առավելագույն չափերը որոշելիս հարկային տարվա եռամսյակները դիտարկվում են առանձին-առանձին:

5. Եթե սույն հոդվածով սահմանված գումարները վերադարձնելուց հետո հարկային մարմին է ներկայացվում եկամտային հարկի ճշտված (պարզեցված) հաշվարկ, կամ ստուգման արդյունքում կամ դատարանի որոշման հիման վրա փոխվում է հարկային մարմին ներկայացված հաշվարկով տվյալ վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի մասով հայտարարագրված հարկային պարտավորությունը, որի արդյունքում՝

1) համապատասխան եռամսյակի ամիսների համար հարկային գործակալի կողմից՝ տվյալ վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի մասով կամ հարկային գործակալ չունեցող վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի կողմից հարկային մարմին ներկայացված եկամտային հարկի (պարզեցված) հաշվարկներով աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների մասով նախկինում հայտարարագրված եկամտային հարկի պարտավորությունը նվազում է ֆիզիկական անձին վերադարձված եկամտային հարկի գումարից, ապա փաստացի վերադարձված եկամտային հարկի գումարի և եկամտային հարկի գծով ճշտված հարկային պարտավորության տարբերության չափով եկամտային հարկի վերադարձման օրվա դրությամբ հարկային գործակալին կամ հարկային գործակալ չունեցող վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձին առաջադրվում է եկամտային հարկի գծով պարտավորություն.

2) համապատասխան եռամսյակի ամիսների համար հարկային գործակալի կողմից՝ տվյալ վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի մասով, կամ հարկային գործակալ չունեցող վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի կողմից հարկային մարմին ներկայացված եկամտային հարկի (պարզեցված) հաշվարկներով աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների մասով նախկինում հայտարարագրված եկամտային հարկի պարտավորությունն ավելանում է, ապա կատարվում է վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձին, սույն հոդվածի համաձայն, եկամտային հարկի վերադարձվող գումարի վերահաշվարկ:

6. Սույն հոդվածով սահմանված՝ վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձանց եկամտային հարկի գումարների վերադարձման կարգը սահմանում է Կառավարությունը:

7. Սույն հոդվածի կիրառության նպատակով Կառավարության լիազորած մարմինը վարում է կառուցված և կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքերի, անհատական բնակելի տների ռեեստրը և Կառավարության սահմանած կարգով տեղեկություններ է տրամադրում հարկային մարմնին:

(160-րդ հոդվածը խմբ. 21.12.17 ՀՕ-266-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Բ Ա Ժ Ի Ն 8

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԱՐԿԸ

Գ Լ Ո Ւ Խ 30

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԱՐԿԸ, ՎՃԱՐՈՂՆԵՐԸ ԵՎ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Հոդված 161. Բնապահպանական հարկը

1. Բնապահպանական հարկը բնապահպանական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով սույն բաժնին համապատասխան պետական բյուջե վճարվող հարկ է:

Հոդված 162. Բնապահպանական հարկ վճարողները

1. Բնապահպանական հարկ վճարողներ են համարվում Օրենսգրքի 164-րդ հոդվածով սահմանված հարկման օբյեկտ համարվող գործունեություն և (կամ) գործառույթ իրականացնող՝ սույն հոդվածում նշված կազմակերպությունները և ֆիզիկական անձինք:

2. Մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման համար բնապահպանական հարկ վճարողներ են համարվում՝

1) արտանետման անշարժ աղբյուրներից մթնոլորտային օդ վնասակար նյութեր արտանետողները.

2) արտանետման շարժական աղբյուրներից մթնոլորտային օդ վնասակար նյութեր արտանետող՝

ա. Հայաստանի Հանրապետությունում գրանցված (հաշվառված) և շահագործվող ավտոտրանսպորտային միջոցների, այլ ինքնագնաց մեքենաների և մեխանիզմների, ինչպես նաև լողամիջոցների սեփականատերերը կամ նրանց լիազորած անձինք (ներկայացուցիչները),

բ. Հայաստանի Հանրապետություն մուտք գործող՝ Հայաստանի Հանրապետությունում չգրանցված (չհաշվառված) ավտոտրանսպորտային միջոցների սեփականատերերը կամ նրանց լիազորած անձինք (ներկայացուցիչները):

3. Ջրային ռեսուրս վնասակար նյութերի և (կամ) միացությունների արտահոսքերի համար բնապահպանական հարկ վճարողներ են համարվում ջրային ռեսուրս անմիջապես և (կամ) կենտրոնացված ջրահեռացման ցանցեր և այլ ջրային համակարգեր արտահոսքեր (բացառությամբ կոմունալ-կենցաղային արտահոսքերի) իրականացնողները:

4. Հատուկ հատկացված տեղերում (թափոնների տեղաբաշխման տեղեր, պոլիգոններ, թափոնակուտակիչներ, աղբավայրեր, համալիրներ, շինություններ, արդյունաբերական հրապարակներ, պոչամբարներ, արտադրական լցակույտերի, մակաբացման ապարների տեղամասեր)՝

1) ընդերքօգտագործման թափոնների տեղադրման կամ պահման համար բնապահպանական հարկ վճարողներ են համարվում այդ թափոններն առաջացնողները.

2) արտադրության և (կամ) սպառման թափոնների պահման համար բնապահպանական հարկ վճարողներ են համարվում այդ թափոններն առաջացնողները.

3) արտադրության և (կամ) սպառման թափոնների տեղադրման համար բնապահպանական հարկ վճարողներ են համարվում այդ թափոններն առաջացնողները կամ տեղադրողները, բացառությամբ սույն մասի 4-րդ կետում նշված դեպքերի.

4) «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ աղբահանության իրականացման արդյունքում ֆիզիկական անձանց առաջացրած կենցաղային թափոնների տեղադրման համար բնապահպանական հարկ վճարողներ են համարվում, նույն օրենքի համաձայն, աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներ իրականացնող օպերատորները:

5. Շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար բնապահպանական հարկ վճարողներ են համարվում՝

1) շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքները Հայաստանի Հանրապետություն «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ներմուծողները, ինչպես նաև ԵՏՄ անդամ պետություններից ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքները Հայաստանի Հանրապետություն ներմուծողները (այսուհետ սույն բաժնում՝ ներմուծողներ).

2) սույն մասի 1-ին կետին համապատասխան՝ ներմուծող և շրջակա միջավայրին վնաս պատճառող ներմուծված ապրանքները Հայաստանի Հանրապետության տարածքում օտարողները (այսուհետ սույն բաժնում՝ ներմուծող-իրացնողներ).

3) Հայաստանի Հանրապետության տարածքում շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքներ արտադրողները՝ Հայաստանի Հանրապետության տարածքում օտարված ապրանքների մասով, իսկ պատվիրատուի տրամադրած հումքից Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրված՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար՝ պատվիրատուն Հայաստանի Հանրապետության տարածքում օտարված ապրանքների մասով (այսուհետ սույն բաժնում՝ արտադրող-իրացնողներ):

Հոդված 163. Կիրառվող հասկացությունները և լիազոր մարմինները

1. Հայաստանի Հանրապետության ջրային և ընդերքի մասին օրենսգրքերում, «Ջրի ազգային ծրագրի մասին», «Թափոնների մասին», «Մթնոլորտային օդի պահպանության մասին», «Ավտոմոբիլային ճանապարհների մասին», «Տրանսպորտի մասին», «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» և «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում և դրանց համապատասխան ընդունված իրավական ակտերում կիրառվող հասկացությունները սույն բաժնում կիրառվում են այդ իրավական ակտերում կիրառվող իմաստներով ու նշանակությամբ, եթե սույն բաժնով այլ բան սահմանված չէ:

2. Օրենսգրքի 4-րդ հոդվածով սահմանված «լիազոր մարմին» հասկացությունը Օրենսգրքի սույն բաժնի կիրառության իմաստով ունի հետևյալ նշանակությունը.

1) բնապահպանական մարմին՝ բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմին.

2) բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին՝ բնապահպանական օրենսդրության պահանջների պահպանման ու կատարման նկատմամբ օրենքով սահմանված կարգով վարչարարության և ստուգման իրավասություն ունեցող ստորաբաժանում:

(163-րդ հոդվածը փոփ. 21.12.17 ՀՕ-266-Ն)

Գ Լ ՈՒ Խ 31

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏԸ, ՀԱՐԿՄԱՆ ԲԱԶԱՆ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Հոդված 164. Բնապահպանական հարկով հարկման օբյեկտը

1. Բնապահպանական հարկով հարկման օբյեկտներ են համարվում՝

1) մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետումը.

2) ջրային ռեսուրս վնասակար նյութերի և (կամ) միացությունների արտահոսքը.

3) ընդերքօգտագործման, արտադրության և (կամ) սպառման թափոնները՝

ա. հատուկ հատկացված տեղերում տեղադրելը,

բ. հատուկ հատկացված տեղերում պահելը.

4) շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների՝

ա. Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծումը,

բ. ներմուծող-իրացնողների և (կամ) արտադրող-իրացնողների կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում օտարումը:

Հոդված 165. Բնապահպանական հարկով հարկման բազան

1. Բնապահպանական հարկով հարկման բազա է համարվում բնապահպանական հարկով հարկման օբյեկտի արժեքային կամ ֆիզիկական մեծությունը կամ այն բնութագրիչը, որի հիման վրա սույն բաժնով սահմանված դրույքաչափերով ու կարգով հաշվարկվում է բնապահպանական հարկի գումարը:

2. Արտանետման աղբյուրներից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման համար բնապահպանական հարկով հարկման բազա է համարվում՝

1) արտանետման անշարժ աղբյուրներից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման համար՝ մթնոլորտային օդ արտանետված վնասակար նյութերի փաստացի ծավալը.

2) արտանետման շարժական աղբյուրներից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման համար՝

ա. Հայաստանի Հանրապետությունում գրանցված (հաշվառված) և շահագործվող բեռնատար ավտոտրանսպորտային միջոցների տեսակը՝ ըստ խմբերի,

բ. Հայաստանի Հանրապետությունում գրանցված (հաշվառված) ավտոտրանսպորտային միջոցների (բացառությամբ բեռնատար ավտոտրանսպորտային միջոցների), այլ ինքնագնաց մեքենաների և մեխանիզմների, ինչպես նաև լողամիջոցների շարժիչի հզորությունը,

գ. Հայաստանի Հանրապետությունում չգրանցված (չհաշվառված)՝ Հայաստանի Հանրապետություն մուտք գործող ավտոտրանսպորտային միջոցների տեսակը և բեռնատարողությունը:

3. Ջրային ռեսուրս վնասակար նյութերի և միացությունների արտահոսքի համար բնապահպանական հարկով հարկման բազա է համարվում ջրային ռեսուրս անմիջապես և (կամ) կենտրոնացված ջրահեռացման ցանցեր և այլ ջրային համակարգեր վնասակար նյութերի և միացությունների արտահոսքի փաստացի ծավալը՝ տվյալ ջրահեռացման ցանցը սպասարկող մաքրման կայանով չմաքրվող վնասակար նյութեր և միացություններ պարունակող արտահոսքերի ծավալը, իսկ մաքրման կայանների բացակայության կամ դրանց չաշխատելու դեպքում՝ վնասակար նյութեր և միացություններ պարունակող արտահոսքերի ամբողջ ծավալը:

4. Ընդերքօգտագործման, արտադրության և (կամ) սպառման թափոնները՝

1) հատուկ հատկացված տեղերում տեղադրելու համար բնապահպանական հարկով հարկման բազա է համարվում տեղադրված թափոնների ծավալը՝ ըստ վտանգավորության դասերի.

2) հատուկ հատկացված տեղերում պահելու համար բնապահպանական հարկով հարկման բազա է համարվում պահվող թափոնների ծավալը՝ ըստ վտանգավորության դասերի:

5. Շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար բնապահպանական հարկով հարկման բազա է համարվում՝

1) Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար՝

ա. Հայաստանի Հանրապետություն «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ներմուծվող՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար՝ այդ ապրանքների մաքսային արժեքը,

բ. ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների համար՝ Օրենսգրքով սահմանված կարգով որոշվող՝ ԱԱՀ-ով հարկման բազան (առանց այդ ապրանքների համար Օրենսգրքի 5-րդ բաժնով սահմանված կարգով հաշվարկված ակցիզային հարկի գումարի).

2) ներմուծող-իրացնողների կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների օտարման համար՝ այդ ապրանքների արժեքը՝ դրամական արտահայտությամբ՝ առանց բնապահպանական հարկի, ակցիզային հարկի և ԱԱՀ-ի.

3) արտադրող-իրացնողների կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների օտարման համար՝ այդ ապրանքների արժեքը՝ դրամական արտահայտությամբ՝ առանց բնապահպանական հարկի, ակցիզային հարկի և ԱԱՀ-ի.

4) ներմուծող-իրացնողների և (կամ) արտադրող-իրացնողների կողմից շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների անհատույց կամ Օրենսգրքի 62-րդ հոդվածի 6-րդ մասի կիրառության իմաստով իրական արժեքից էականորեն ցածր արժեքով օտարման դեպքերում՝ Օրենսգրքով սահմանված կարգով որոշվող ԱԱՀ-ով հարկման բազան՝ առանց ակցիզային հարկի և բնապահպանական հարկի գումարների:

Հոդված 166. Բնապահպանական հարկով հարկման բազայի չափաքանակները

1. Բնապահպանական հարկի հաշվարկման և դրույքաչափերի կիրառության համար սահմանվում են հարկման բազայի հետևյալ չափաքանակները.

1) արտանետման անշարժ աղբյուրներից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման համար՝ «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով անշարժ աղբյուրներից մթնոլորտային օդն աղտոտող նյութերի արտանետումների թույլտվություններով սահմանված (տրամադրված) սահմանային թույլատրելի արտանետումների ծավալները, բացառությամբ սույն մասի 2-րդ կետով սահմանված դեպքերի.

2) բնապահպանական հարկ վճարողի ներկայացրած բնապահպանական միջոցառումների ծրագրի հիման վրա բնապահպանական մարմնի սահմանած՝ արտանետման անշարժ աղբյուրներից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետումների համար ժամանակավոր (մինչև հինգ տարի ժամկետով) չափաքանակներով սահմանված (տրամադրված) սահմանային թույլատրելի արտանետումների ծավալները.

3) Հայաստանի Հանրապետությունում չգրանցված (չհաշվառված)՝ Հայաստանի Հանրապետություն մուտք գործող ավտոտրանսպորտային միջոցներից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման համար՝ Հայաստանի Հանրապետության տարածքում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցների բանած գազերում վնասակար նյութերի (ածխածնի օքսիդի, ածխաջրածինների, ծխայնության) պարունակության սահմանային թույլատրելի նորմաները.

4) ջրային ռեսուրս անմիջապես և (կամ) կենտրոնացված ջրահեռացման ցանցեր և այլ ջրային համակարգեր վնասակար նյութերի և (կամ) միացությունների արտահոսքի դեպքում՝

ա. Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքին համապատասխան տրամադրված ջրօգտագործման թույլտվություններով նախատեսված՝ ջրային ռեսուրս կամ դրանց ջրհավաք ավազաններ թափվող կեղտաջրերի թույլատրելի ծավալները, կեղտաջրերում վնասակար նյութերի և (կամ) միացությունների սահմանային թույլատրելի արտահոսքի ծավալները,

բ. Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքին համապատասխան՝ ջրահեռացման համակարգերի օգտագործման և հեռացվող ջրերի մաքրման կանոններով նախատեսված՝ վնասակար նյութերի և (կամ) միացությունների սահմանային թույլատրելի արտահոսքի ծավալները.

5) թափոնների տեղադրման կամ պահման համար՝ «Թափոնների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն տրամադրված (հաստատված) թափոնների տեղադրման սահմանաքանակներով սահմանված տեղադրման ծավալները: Սույն կետի կիրառության իմաստով՝ արդյունաբերական հրապարակից թափոնների դուրսբերումն առանց սահմանված կարգով ձևակերպված փաստաթղթերի (թափոնի անձնագիր, թափոնների հեռացման օբյեկտների հետ կնքված պայմանագրի) դիտարկվում է որպես սահմանաքանակի գերազանցում:

2. Բնապահպանական հարկի հաշվարկման և դրույքաչափերի կիրառության համար հարկման բազայի չափաքանակները համարվում են զրոյական՝

1) արտանետման անշարժ աղբյուրներից մթնոլորտային օդն աղտոտող նյութերի արտանետումների թույլտվություն չունենալու կամ թույլտվություններում թույլատրելի արտանետումների ծավալները նշված չլինելու դեպքում.

2) ջրային ռեսուրս անմիջապես և (կամ) կենտրոնացված ջրահեռացման ցանցեր և այլ ջրային համակարգեր վնասակար նյութերի և (կամ) միացությունների արտահոսքի դեպքում՝

ա. Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքին համապատասխան ջրօգտագործման թույլտվություն չունենալու կամ տրամադրված ջրօգտագործման թույլտվություններում ջրօգտագործման ծավալները կամ ջրային ռեսուրս կամ դրանց ջրահավաք ավազաններ թափվող կեղտաջրերի թույլատրելի ծավալները կամ կեղտաջրերում վնասակար նյութերի և (կամ) միացությունների սահմանային թույլատրելի արտահոսքի ծավալների մասին տվյալները նշված չլինելու դեպքում,

բ. Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքին համապատասխան՝ ջրահեռացման համակարգերի օգտագործման և հեռացվող ջրերի մաքրման կանոններով նախատեսված սահմանային թույլատրելի արտահոսքերի ծավալները որոշված չլինելու դեպքում.

3) թափոնների տեղադրման կամ պահման դեպքում «Թափոնների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝

ա. թափոնների տեղադրման սահմանաքանակները տրամադրված (հաստատված) չլինելու դեպքում,

բ. օրենքով սահմանված՝ չարտոնագրված աղբավայրերում թափոններ տեղադրելու կամ թափոնների պահման համար չնախատեսված վայրերում թափոններ պահելու դեպքում,

գ. թափոններ առաջացնողների կազմած թափոնների անձնագրերը բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի հետ չհամաձայնեցնելու դեպքում,

դ. թափոնների տեղադրման, վնասազերծման և թաղման գործունեություն իրականացնողների կողմից թափոնների հեռացման վայրերի ռեեստրային գրանցման թերթիկը բնապահպանական մարմին սահմանված կարգով չներկայացվելու դեպքում,

ե. թափոններ առաջացնող, վերամշակող և օգտահանողների կողմից թափոնների գոյացման, վերամշակման և օգտահանման օբյեկտների ռեեստրային գրանցման հաշվետվություն բնապահպանական մարմին սահմանված կարգով չներկայացվելու դեպքում:

Հոդված 167. Արտանետման անշարժ աղբյուրներից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման համար բնապահպանական հարկի դրույքաչափերը

1. Արտանետման անշարժ աղբյուրներից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման համար բնապահպանական հարկը հաշվարկվում է հարկման բազայի նկատմամբ հետևյալ դրույքաչափերով (հաշվի առնելով սույն հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի դրույթները).

Մթնոլորտային օդն աղտոտող վնասակար նյութեր	Դրույքաչափը հաշվետու ժամանակաշրջանում արտանետված յուրաքանչյուր տոննայի համար (դրամ)
Փոշի	1800
Ածխածնի մոնօքսիդ	240
Ազոտի օքսիդներ (վերահաշված՝ ըստ ազոտի երկօքսիդի)	14800
Ծծմբային անհիդրիդ	1800
Քլոր	12000

Քլորոպրեն	90000
Մթնոլորտային օդն աղտոտող այլ (սույն աղյուսակում չնշված) նյութեր, որոնց մասով արտանետումների փաստացի ծավալները գերազանցում են օրենսդրությամբ սահմանված կարգով մթնոլորտային օդ վնասակար նյութեր արտանետելու թույլտվություններով նախատեսված սահմանային թույլատրելի արտանետումների ծավալը, կամ որոնց մասով բացակայում են մթնոլորտային օդ վնասակար նյութեր արտանետելու թույլտվությունները, կամ թույլտվություններում նշված չեն սահմանային թույլատրելի արտանետումները	$Դ_{օդ}$ = 900 դրամ/ՍԹԿ, որտեղ ՍԹԿ - ն օդում տվյալ նյութի միջին օրական սահմանային թույլատրելի խտությունն է (կոնցենտրացիա)

2. Երևան քաղաքում, ազգային պարկերի տարածքներում արտանետման անշարժ աղբյուրներից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման համար սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափերն ավելացվում են 1.5 անգամ:

3. Օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ հարկման բազայի չափաքանակները գերազանցելու դեպքում սույն հոդվածի 1-ին մասով սահմանված յուրաքանչյուր վնասակար նյութի չափաքանակները գերազանցող փաստացի արտանետված ծավալի համար, որպես դրույքաչափ, կիրառվում է սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափերի (հաշվի առնելով սույն հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի դրույթները)՝

1) հնգապատիկը՝ չափաքանակները մինչև 5 (ներառյալ) անգամ գերազանցող մասի համար.

2) տասնապատիկը՝ չափաքանակները 5-ից ավելի անգամ գերազանցող մասի համար.

3) անկախ սույն մասի 1-ին և 2-րդ կետերի դրույթներից, հնգապատիկը՝ բնապահպանական մարմնի սահմանած ժամանակավոր (մինչև 5 տարի ժամկետով) չափաքանակները գերազանցող մասի համար (ժամանակավոր չափաքանակների սահմանման ժամանակահատվածի հաշվետու ժամանակաշրջաններում): Սույն կետում նշված բնապահպանական միջոցառումների ծրագրի թերի կատարման կամ չկատարման դեպքում իրականացվում է ծրագրի չկատարված կամ թերի կատարված միջոցառումների կատարման ժամանակահատվածի համար արտանետման անշարժ աղբյուրներից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման համար հաշվարկված բնապահպանական հարկի գծով պարտավորությունների վերահաշվարկ՝ արտանետումների չափաքանակները գերազանցող մասի համար կիրառելով սույն մասի 1-ին և 2-րդ կետերում նշված դրույքաչափերը:

4. Օրենսգրքի 166-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ հարկման բազայի զրոյական չափաքանակների դեպքում սույն հոդվածի 1-ին մասով սահմանված յուրաքանչյուր վնասակար նյութի փաստացի արտանետված ծավալի համար, որպես դրույքաչափ, կիրառվում է սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափերի (հաշվի առնելով սույն հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի դրույթները)՝

1) տասնապատիկը, եթե հաշվետու ժամանակաշրջանում արտանետումների փաստացի ծավալները չեն գերազանցում հետևյալ չափաքանակները.

Փոշի	2.0 տոննա
Ածխածնի մոնօքսիդ	1.5 տոննա
Ազոտի օքսիդներ (վերահաշված ըստ ազոտի երկօքսիդի)	1.0 տոննա
Ծծմբային անհիդրիդ	0.5 տոննա
Քլոր	0.1 տոննա
Սույն հոդվածի 1-ին մասում նշված մյուս բոլոր նյութերի համար	0.05 տոննա

2) քսանհինգապատիկը, եթե հաշվետու ժամանակաշրջանում արտանետումների փաստացի ծավալները

գերազանցում են սույն մասի 1-ին կետում նշված չափաքանակները:

5. 2018 թվականի հունվարի 1-ից արտանետման անշարժ աղբյուրներից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման համար կիրառվող բնապահպանական հարկի դրույքաչափերը որոշվում են որպես սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափերի և 1.1 գործակցի արտադրյալ, 2019 թվականի հունվարի 1-ից՝ որպես սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափերի և 1.2 գործակցի արտադրյալ, իսկ 2020 թվականի հունվարի 1-ից՝ որպես սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափերի և 1.3 գործակցի արտադրյալ:

Հոդված 168. Արտանետման շարժական աղբյուրներից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման համար բնապահպանական հարկի դրույքաչափերը

1. Արտանետման շարժական աղբյուրներից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման համար բնապահպանական հարկը հաշվարկվում է հարկման բազայի նկատմամբ հետևյալ դրույքաչափերով (հաշվի առնելով սույն հոդվածի 2-րդ մասի դրույթները).

1) Հայաստանի Հանրապետությունում գրանցված (հաշվառված) և շահագործվող բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման համար՝ ըստ դրանց խմբերի.

Բեռնատար ավտոտրանսպորտային միջոցի խումբը	Տարեկան դրույքաչափը (դրամ)
Բեռների փոխադրման համար նախատեսված ավտոտրանսպորտային միջոցներ, որոնց առավելագույն զանգվածը չի գերազանցում 3.5 տոննան	5000
Բեռների փոխադրման համար նախատեսված՝ 3.5 տոննայից ավելի, բայց ոչ ավելի, քան 12 տոննա առավելագույն զանգված ունեցող ավտոտրանսպորտային միջոցներ	10000
Բեռների փոխադրման համար նախատեսված՝ 12 տոննայից ավելի առավելագույն զանգված ունեցող ավտոտրանսպորտային միջոցներ	15000

2) Հայաստանի Հանրապետությունում գրանցված (հաշվառված) և շահագործվող ավտոտրանսպորտային միջոցներից (բացառությամբ բեռնատար ավտոտրանսպորտային միջոցների), այլ ինքնագնաց մեքենաներից և մեխանիզմներից, ինչպես նաև լողամիջոցներից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման՝ ըստ շարժիչի հզորության.

	Ավտոտրանսպորտային միջոցի արտադրության տարին							
Շարժիչի հզորությունը	1-ին տարի՝ յուրաքանչյուր ձիաուժի մասով	2-րդ տարի՝ յուրա-քանչյուր ձիաուժի մասով	3-րդ տարի՝ յուրաքան-չյուր ձիաուժի մասով	4-րդ տարի՝ յուրաքան-չյուր ձիաուժի մասով	5-րդ տարի՝ յուրաքան-չյուր ձիաուժի մասով	6-րդ տարի՝ յուրաքան-չյուր ձիաուժի մասով	7-րդ տարի՝ յուրա-քան-չյուր ձիաուժի մասով	8-րդ և դրան հաջորդող յուրա-քանչյուր տարի՝ յուրա-քանչյուր ձիաուժի մասով
մինչև 50 ձիաուժ	2.5 դրամ	2.5 դրամ	2.5 դրամ	3 դրամ	3.5 դրամ	4 դրամ	4.5 դրամ	5 դրամ

51-80 ձիաուժ	5 դրամ	5 դրամ	5 դրամ	6 դրամ	7 դրամ	8 դրամ	9 դրամ	10 դրամ
81-100 ձիաուժ	7.5 դրամ	7.5 դրամ	7.5 դրամ	9 դրամ	10.5 դրամ	12 դրամ	13.5 դրամ	15 դրամ
101-150 ձիաուժ	10 դրամ	10 դրամ	10 դրամ	12 դրամ	14 դրամ	16 դրամ	18 դրամ	20 դրամ
151-200 ձիաուժ	12.5 դրամ	12.5 դրամ	12.5 դրամ	15 դրամ	17.5 դրամ	20 դրամ	22.5 դրամ	25 դրամ
201-250 ձիաուժ	15 դրամ	15 դրամ	15 դրամ	18 դրամ	21 դրամ	24 դրամ	27 դրամ	30 դրամ
251-300 ձիաուժ	17.5 դրամ	17.5 դրամ	17.5 դրամ	21 դրամ	24.5 դրամ	28 դրամ	31.5 դրամ	35 դրամ
301 և ավելի ձիաուժ	25 դրամ	25 դրամ	25 դրամ	30 դրամ	35 դրամ	40 դրամ	45 դրամ	50 դրամ

Շարժիչի հզորությունը կիլովատերով արտահայտված լինելու դեպքում համապատասխան հզորության նկատմամբ կիրառվում է 1.36 գործակից: Սույն կետի կիրառության իմաստով՝ այլ ինքնագնաց մեքենաների և մեխանիզմների, ինչպես նաև լողամիջոցների համար բնապահպանական հարկի դրույքաչափը սահմանվում է սույն կետի աղյուսակի վերջին սյունով սահմանված համապատասխան (ըստ շարժիչի հզորության) դրույքաչափի կրկնապատիկի չափով:

3) Հայաստանի Հանրապետությունում չգրանցված (չհաշվառված)՝ Հայաստանի Հանրապետություն մուտք գործող ավտոտրանսպորտային միջոցներից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման դիմաց՝ Հայաստանի Հանրապետություն յուրաքանչյուր մուտքի համար՝ ըստ դրանց տեսակի և բեռնատարողության.

Ծածկագիրը՝ ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի	Ավտոտրանսպորտային միջոցի նկարագիրը	Դրույքաչափը (դրամ)	
		Հայաստանի Հանրապետության տարածքում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցների բանած գազերում վնասակար նյութերի (ածխածնի օքսիդի, ածխաջրածինների, ծխայնության) պարունակության սահմանային թույլատրելի	
		նորմաների սահմաններում կատարվող արտանետումների դեպքում	նորմաների սահմաններից ավելի՝ վերոգրյալ նյութերից առնվազն մեկի գծով արտանետումների դեպքում

8703 21-8703 33	մարդատար ավտոմեքենաներ՝ նախատեսված մինչև տասը մարդ (ներառյալ՝ վարորդը) տեղափոխելու համար	3750	7500
8702	մարդատար ավտոմեքենաներ՝ նախատեսված տասը և ավելի մարդ (ներառյալ՝ վարորդը) տեղափոխելու համար, բացառությամբ 8702 90 90 ծածկագրով դասակարգվող տրանսպորտային միջոցների	10 000	20 000
8704 21 8704 31	բեռների փոխադրման համար՝ հինգ տոննայից ոչ ավելի առավելագույն զանգվածով շարժիչավոր տրանսպորտային միջոցներ	5 000	10 000
8704 22 8704 32	բեռների փոխադրման համար՝ հինգ տոննայից ավելի, բայց ոչ ավելի, քան 20 տոննա առավելագույն զանգվածով շարժիչավոր տրանսպորտային միջոցներ	10 000	20 000
8704 23	բեռների փոխադրման համար՝ 20 տոննայից ավելի առավելագույն զանգվածով շարժիչավոր տրանսպորտային միջոցներ	15 000	30 000

2. ***(մասն ուժը կորցրել է 25.06.19 ՀՕ-68-Ն)***
(168-րդ հոդվածը փոփ., խմբ. 21.06.18 ՀՕ-338-Ն, խմբ., լրաց., փոփ. 25.06.19 ՀՕ-68-Ն)

Հոդված 169. Ջրային ռեսուրս վնասակար նյութերի և (կամ) միացությունների արտահոսքի համար բնապահպանական հարկի դրույքաչափերը

1. Ջրային ռեսուրս անմիջապես և (կամ) կենտրոնացված ջրահեռացման ցանցեր և այլ ջրային համակարգեր վնասակար նյութերի և միացությունների արտահոսքի համար բնապահպանական հարկը հաշվարկվում է հարկման բազայի նկատմամբ հետևյալ դրույքաչափերով (հաշվի առնելով սույն հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի դրույթները).

Արտանետվող վնասակար նյութեր և միացություններ	Դրույքաչափը հաշվետու ժամանակաշրջանում արտահոսքի յուրաքանչյուր տոննայի համար (դրամ)
Կախված նյութեր	5300
Ազոտ ամոնիակային	5100

Թթվածնի կենսաբանական պահանջ	18400
Նավթամթերք	204600
Պղինձ	1023900
Ցինկ	1023900
Սուլֆատներ	100
Քլորիդներ	30
Նիտրիտներ	511500
Նիտրատներ	1100
Ընդհանուր ֆոսֆոր	40000
Դետերգենտ (լվացող քիմիական) նյութեր	102300
Ծանր մետաղների աղեր	511500
Ցիան և ցիանի միացություններ	511500
Այլ վնասակար նյութեր և միացություններ՝ սույն աղյուսակում չնշված այն վնասակար նյութերը և միացությունները, որոնց մասով արտահոսքի փաստացի ծավալները գերազանցում են ջրօգտագործման թույլտվություններով նախատեսված՝ կեղտաջրերում վնասակար նյութերի և միացությունների սահմանային թույլատրելի արտահոսքի ծավալները, կամ բացակայում են ջրօգտագործման թույլտվությունները, կամ ջրօգտագործման թույլտվություններում նշված չեն սահմանային թույլատրելի արտահոսքի ծավալները, կամ ջրահեռացման համակարգերի օգտագործման և հեռացվող ջրերի մաքրման կանոններով նախատեսված սահմանային թույլատրելի արտահոսքերի ծավալները որոշված չեն	$Դ_{ջուր}$ = 10000 դրամ/$ՍԹԿ_{ձկն}$ որտեղ՝ $ՍԹԿ_{ձկն}$-ն ձկնատնտեսական նպատակով օգտագործվող ջրում տվյալ նյութի կամ միացության սահմանային թույլատրելի կոնցենտրացիան է

2. Սևանա լճի ջրահավաք ավազան, Հրազդանի կիրճի տարածքում Հրազդան և Գետառ գետեր վնասակար նյութերի և միացությունների արտահոսք իրականացնողների (բացառությամբ ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցողների) համար սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափերը կրկնապատկվում են:

3. Օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հարկման բազայի չափաքանակները գերազանցելու դեպքում սույն հոդվածի 1-ին մասով սահմանված յուրաքանչյուր վնասակար նյութի կամ միացության չափաքանակները գերազանցող փաստացի արտահոսքի ծավալի համար որպես դրույքաչափ կիրառվում է սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափերի եռապատիկ մեծությունը (հաշվի առնելով նաև սույն հոդվածի 2-րդ մասի դրույթները):

4. Օրենսգրքի 166-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ հարկման բազայի զրոյական չափաքանակների դեպքում սույն հոդվածի 1-ին մասով սահմանված յուրաքանչյուր վնասակար նյութի կամ միացության փաստացի արտահոսքի ծավալի համար որպես դրույքաչափ կիրառվում է սույն հոդվածի 1-ին մասով սահմանված (հաշվի առնելով նաև սույն

հոդվածի 2-րդ մասի դրույթները) դրույքաչափերի՝

ա. տասնապատիկը՝ Հայաստանի Հանրապետության Արարատի և Արմավիրի մարզերում,

բ. հնգապատիկը՝ Հայաստանի Հանրապետության մյուս տարածքներում:

5. 2018 թվականի հունվարի 1-ից ջրային ռեսուրս վնասակար նյութերի և միացությունների արտահոսքի համար կիրառվող բնապահպանական հարկի դրույքաչափերը որոշվում են որպես սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափերի և 1.1 գործակցի արտադրյալ, 2019 թվականի հունվարի 1-ից՝ որպես սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափերի և 1.2 գործակցի արտադրյալ, իսկ 2020 թվականի հունվարի 1-ից՝ որպես սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափերի և 1.3 գործակցի արտադրյալ:

Հոդված 170. Ընդերքօգտագործման, արտադրության և (կամ) սպառման թափոնները հատուկ հատկացված տեղերում տեղադրելու կամ պահելու համար բնապահպանական հարկի դրույքաչափերը

1. Հատուկ հատկացված տեղերում՝ թափոնների տեղաբաշխման տեղերում, պոլիգոններում, թափոնակուտակիչներում, աղբավայրերում, համալիրներում և (կամ) շինություններում արտադրության և (կամ) սպառման թափոնները տեղադրելու համար բնապահպանական հարկը հաշվարկվում է հարկման բազայի նկատմամբ հետևյալ դրույքաչափերով (հաշվի առնելով սույն հոդվածի 6-րդ մասի դրույթները).

Արտադրության և (կամ) սպառման թափոններ՝ ըստ վտանգավորության դասի	Դրույքաչափը՝ հաշվետու ժամանակաշրջանում տեղադրված յուրաքանչյուր տոննայի համար (դրամ)
Առաջին դասի վտանգավորության թափոններ	48 000
Երկրորդ դասի վտանգավորության թափոններ	24 000
Երրորդ դասի վտանգավորության թափոններ	4 800
Չորրորդ դասի վտանգավորության թափոններ (բացառությամբ աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներ իրականացնող օպերատորների համար՝ ֆիզիկական անձանց առաջացրած չտեսակավորված սպառման թափոնների)	1 500
Ոչ վտանգավոր թափոններ (բացառությամբ ընդերքօգտագործման թափոնների և աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներ իրականացնող օպերատորների համար՝ ֆիզիկական անձանց կողմից առաջացրած տեսակավորված սպառման թափոնների)	600
Աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներ իրականացնող օպերատորների համար՝ ֆիզիկական անձանց կողմից առաջացրած տեսակավորված և չտեսակավորված սպառման թափոններ	60

2. Հատուկ հատկացված տեղերում՝ արդյունաբերական հրապարակներում արտադրության և (կամ) սպառման թափոնների (բացառությամբ ընդերքօգտագործման թափոնների) մեկանգամյա պահման համար բնապահպանական հարկը 2021 թվականի հունվարի 1-ից հաշվարկվում է հարկման բազայի նկատմամբ հետևյալ դրույքաչափերով.

Արտադրության և (կամ) սպառման թափոններ՝ ըստ վտանգավորության դասի	Դրույքաչափը՝ հաշվետու ժամանակաշրջանում պահված յուրաքանչյուր տոննայի համար (դրամ)
Առաջին դասի վտանգավորության թափոններ	62400
Երկրորդ դասի վտանգավորության թափոններ	31200
Երրորդ դասի վտանգավորության թափոններ	6240
Չորրորդ դասի վտանգավորության թափոններ	1950
Ոչ վտանգավոր թափոններ	780

3. Հատուկ հատկացված տեղերում՝ պոչամբարներում, արտադրական լցակույտերի, մակաբացման ապարների տեղամասերում և (կամ) համանման վայրերում ընդերքօգտագործման թափոնների մեկանգամյա տեղադրման կամ պահման համար բնապահպանական հարկը 2021 թվականի հունվարի 1-ից հաշվարկվում է հարկման բազայի նկատմամբ հետևյալ դրույքաչափերով.

1) ոչ մետաղական պինդ օգտակար հանածոների հանքավայրերի համար.

Ընդերքօգտագործման թափոններ՝ ըստ վտանգավորության դասի	Դրույքաչափը՝ հաշվետու ժամանակաշրջանում պահված յուրաքանչյուր տոննայի համար (դրամ)
Առաջին դասի վտանգավորության թափոններ	62400
Երկրորդ դասի վտանգավորության թափոններ	31200
Երրորդ դասի վտանգավորության թափոններ	6240
Չորրորդ դասի վտանգավորության թափոններ	1950
Ոչ վտանգավոր թափոններ (այդ թվում՝ մակաբացման ապարներ)	780

2) մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի համար.

Ընդերքօգտագործման թափոններ՝ ըստ վտանգավորության դասի	Դրույքաչափը՝ հաշվետու ժամանակաշրջանում պահված յուրաքանչյուր տոննայի համար (դրամ)
Առաջին դասի վտանգավորության թափոններ	250
Երկրորդ դասի վտանգավորության թափոններ	120
Երրորդ դասի վտանգավորության թափոններ	25
Չորրորդ դասի վտանգավորության թափոններ	8
Ոչ վտանգավոր թափոններ (այդ թվում՝ մակաբացման ապարներ)	3

4. Օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ հարկման բազայի չափաքանակները գերազանցելու դեպքում թափոնների՝ չափաքանակները գերազանցող փաստացի ծավալների համար որպես դրույքաչափ կիրառվում է սույն հոդվածի 1-3-րդ մասերով սահմանված դրույքաչափերի եռապատիկ մեծությունը:

5. Օրենսգրքի 166-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ հարկման բազայի զրոյական չափաքանակների դեպքում թափոնների փաստացի ծավալների համար որպես դրույքաչափ կիրառվում է սույն հոդվածի 1-3-րդ մասերով սահմանված դրույքաչափերի հնգապատիկ մեծությունը:

6. 2018 թվականի հունվարի 1-ից արտադրության և (կամ) սպառման թափոնները հատուկ հատկացված տեղերում տեղադրելու համար կիրառվող բնապահպանական հարկի դրույքաչափերը որոշվում են որպես սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափերի և 1.1 գործակցի արտադրյալ, 2019 թվականի հունվարի 1-ից՝ որպես սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափերի և 1.2 գործակցի արտադրյալ, իսկ 2020 թվականի հունվարի 1-ից՝ որպես սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափերի և 1.3 գործակցի արտադրյալ:

Հոդված 171. Շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար բնապահպանական հարկի դրույքաչափերը

1. Շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար բնապահպանական հարկը հաշվարկվում է հարկման բազայի նկատմամբ հետևյալ դրույքաչափերով.

Ծածկագիրը՝ ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի	Ապրանքի համառոտ անվանումը	Դրույքաչափը Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների համար (%)	Դրույքաչափը՝ Հայաստանի Հանրապետությունում արտադրվող և իրացվող, ինչպես նաև ներմուծող և իրացվող ապրանքների համար (%)

2707 2709 00 2710 2713 2714 90 000 2715 00 000	հանքային յուղեր, հում նավթ և հում նավթամթերք, նավթ և նավթամթերք, վառելիքաքսուքային նյութեր, մայթաձյութ և ասֆալտ (բացառությամբ 2710 11 410, 2710 11 450, 2710 11 490 ծածկագրերով դասակարգվող բենզինի, 2710 19 930 ծածկագրով դասակարգվող էլեկտրական մեկուսիչ յուղերի և 2710 91 000, 2710 99 000 ծածկագրերով դասակարգվող օգտագործված նավթամթերքի)	2.0	2.0
2710 19 930 2710 91 000 2710 99 000	էլեկտրական մեկուսիչ յուղեր, օգտագործված նավթամթերք	3.0	3.0
2903 41 000 2903 42 000 2903 43 000 2903 44 100 2903 44 900	ֆտորեռաքլորմեթան (ֆրեոն-11), [$CFCl_3$] երկֆտորերկքլորմեթան (ֆրեոն-12), [CF_2Cl_2] եռֆտորեռաքլորէթան (ֆրեոն-113), [$C_2F_3Cl_3$] քառաֆտորերկքլորէթան (ֆրեոն-114), [$C_2F_4Cl_2$] հինգֆտորքլորէթան (ֆրեոն-115) [C_2F_5Cl]	2.0	2.0
2903 46 100 2903 46 200 2903 46 900	երկֆտորբրոմքլորմեթան (հալոն-1211) [CF_2BrCl] եռֆտորբրոմմեթան (հալոն-1301) [CF_3Br] քառֆտորերկբրոմէթան (հալոն-2402) [$C_2F_4Br_2$]	2.0	2.0
3215 11 00 3215 19 000	տպագրական ներկ	3.0	3.0
3402	լվացող նյութեր	0.5	0.5
3701 3702 3704 00 100 3705 3706	կինո-ֆոտո ժապավեններ	0.8	0.8
3819 00 000	արգելակման հեղուկներ	2.0	2.0
3820 00 000	հակասառեցնող և հակասառցապատող հեղուկներ պատրաստի	2.0	2.0

3923 3925 10 000	պլաստմասսայից արտադրանք ապրանքների փաթեթավորման և տեղափոխման համար, 300լ ծավալից ավելի ցիստեռններ, բաքեր և համանման տարողություններ պլաստմասսայից	2.0	2.0
4011 4012	անվադողեր	1.0	1.0
4013	ռետինե օդախցիկներ	1.0	1.0
6811 6812 6813	արտադրանք ասբեստից, ֆրիկցիոն նյութեր (բացառությամբ 6813 10 100 և 6813 90 100 ծածկագրերով դասակարգվող ապրանքների)	3.0	3.0
7019	ապակյա մանրաթել	0.8	0.8
78	կապար և կապարից պատրաստված արտադրանք	3.0	3.0
8311 10	էլեկտրոդներ	1.5	1.5
8421 23	ներքին այրման շարժիչների յուղի կամ վառելիքի ֆիլտրեր (բացառությամբ 8421 23 100 ծածկագրով դասակարգվող ապրանքների)	1.0	1.0
8506 30	առաջնային մարտկոցներ սնդիկ-օքսիդային	1.5	1.5
8506 40	առաջնային մարտկոցներ արծաթ-օքսիդային	1.5	1.5
8506 80	առաջնային մարտկոցներ այլ	1.5	1.5
8507 10 8507 20	մարտկոցներ կապարային (բացառությամբ 8507 10 100 և 8507 20 100 ծածկագրերով դասակարգվող ապրանքների)	3.0	3.0
8507 30 8507 80	մարտկոցներ կադմիում-նիկելային, մարտկոցներ այլ (բացառությամբ 8507 30 100 և 8507 80 100 ծածկագրերով դասակարգվող ապրանքների)	2.0	2.0
8507 90	մարտկոցների մասեր (բացառությամբ 8507 90 100 ծածկագրով դասակարգվող ապրանքների)	1.5	1.5
8532 22 000	էլեկտրոլիտիկ կոնդենսատորներ	3.0	3.0

8539 31	լյումինեսցենտային լամպեր թերմակատոդով	3.0	3.0
8539 32 100	սնդիկային լամպեր	3.0	3.0
8702, 8703, 8704, 8705	հինգ տարուց ավելի մինչև տասը տարի, ներառյալ՝ թողարկման (արտադրության) տարեթիվ ունեցող ավտոմեքենաներ (բացառությամբ 8702 90 90 ծածկագրով դասակարգվող տրանսպորտային միջոցների)	2.0	x
8702, 8703, 8704, 8705	10 տարուց ավելի մինչև 15 տարի ներառյալ թողարկման (արտադրության) տարեթիվ ունեցող ավտոմեքենաներ (բացառությամբ 8702 90 90 ծածկագրով դասակարգվող տրանսպորտային միջոցների)	10.0	x
8702, 8703, 8704, 8705	15 տարուց ավելի թողարկման (արտադրության) տարեթիվ ունեցող ավտոմեքենաներ (բացառությամբ 8702 90 90 ծածկագրով դասակարգվող տրանսպորտային միջոցների)	20.0	x

Գ Լ Ո Ւ Խ 32

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 172. Բնապահպանական հարկի արտոնությունները

1. Հայաստանի Հանրապետությունում գրանցված (հաշվառված) ավտոտրանսպորտային միջոցներից մթնոլորտային օդ վնասակար նյութեր արտանետելու համար բնապահպանական հարկից ազատվում են՝

1) սոցիալական ապահովության մարմիններից արտոնյալ պայմաններով ավտոմեքենաներ ստացած հաշմանդամները՝ այդ ավտոմեքենաների համար.

2) հիբրիդային և էլեկտրականությամբ սնուցվող շարժիչներով աշխատող ավտոտրանսպորտային միջոցների համար բնապահպանական հարկ վճարողները՝ այդ ավտոտրանսպորտային միջոցների մասով.

3) հաշվառող լիազոր մարմնում հաշվառումից ժամանակավորապես հանված ավտոտրանսպորտային միջոցների համար բնապահպանական հարկ վճարողները՝ տարվա ամբողջ ընթացքում հաշվառումից հանված ավտոտրանսպորտային միջոցների մասով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված՝ բնապահպանական հարկի արտոնություններից օգտվելու իրավունքը հաստատող փաստաթղթերը և դրանց ներկայացման կարգը սահմանում է Կառավարությունը:

3. Հայաստանի Հանրապետությունում չգրանցված (չհաշվառված) ավտոտրանսպորտային միջոցներից մթնոլորտային օդ վնասակար նյութեր արտանետելու համար բնապահպանական հարկից ազատվում են՝

1) Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունները և հյուպատոսական հիմնարկները, դրանց հավասարեցված միջազգային կազմակերպությունները.

2) Հայաստանի Հանրապետություն մարդասիրական օգնության և բարեգործական ծրագրերի շրջանակներում փոխադրումներ իրականացնողները: Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով ուղղակիորեն նշված չլինելու դեպքում ծրագրի (գործունեության) տարբերակումը, ըստ մարդասիրական օգնության և բարեգործական բնույթի, որոշում է Կառավարության լիազոր մարմինը.

3) Ռուսաստանի Դաշնության զինված ուժերը:

4. Սույն հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությունում չգրանցված (չհաշվառված) ավտոտրանսպորտային միջոցներից մթնոլորտային օդ վնասակար նյութեր արտանետելու համար բնապահպանական հարկի արտոնություններից օգտվելու իրավունքը հավաստող փաստաթղթեր են համարվում՝

1) Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների, դրանց հավասարեցված միջազգային կազմակերպությունների անձնակազմի անդամների համար՝ դիվանագիտական վկայականը.

2) Հայաստանի Հանրապետության տարածք մարդասիրական և տեխնիկական օգնության, բարեգործական ծրագրերի շրջանակներում բեռներ փոխադրող բնապահպանական հարկ վճարողների համար՝ նշված ծրագրի իրականացման վերաբերյալ իրավական ակտը (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը), իսկ դրանց բացակայության դեպքում՝ լիազորված մարմնի որոշումը.

3) Ռուսաստանի Դաշնության ռազմակայանների տնօրինության տված տեղեկանքը:

5. Շրջակա միջավայրին վնաս պատճառող ներմուծվող ապրանքների համար բնապահպանական հարկից ազատվում են Հայաստանի Հանրապետության տարածքով այդ ապրանքները տարանցիկ տեղափոխողները:

6. Արտադրության և (կամ) սպառման թափոնները հատուկ հատկացված տեղերում տեղադրելու և (կամ) պահելու համար բնապահպանական հարկից ազատվում են ֆիզիկական անձինք՝ սպառման թափոնների համար:

(172-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն, 21.06.18 ՀՕ-343-Ն)

ԳԼՈՒԽ 33

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ

Հոդված 173. Հաշվետու ժամանակաշրջանը

1. Բնապահպանական հարկի հաշվարկման և վճարման համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր հաշվետու եռամսյակը, բացառությամբ սույն բաժնով սահմանված դեպքերի:

Հոդված 174. Պետական բյուջե վճարման ենթակա բնապահպանական հարկի հաշվարկման ընդհանուր կարգը

1. Պետական բյուջե վճարման ենթակա բնապահպանական հարկը հաշվարկվում է Օրենսգրքի 164-րդ հոդվածով սահմանված հարկման յուրաքանչյուր օբյեկտի համար՝ հարկման բազայի և դրույքաչափերի հիման վրա՝ հաշվի առնելով հարկման բազայի չափաքանակները:

Հոդված 175. Մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման համար պետական բյուջե վճարման ենթակա բնապահպանական հարկի հաշվարկման կարգը

1. Արտանետման անշարժ աղբյուրներից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման համար պետական բյուջե վճարման ենթակա բնապահպանական հարկը հաշվարկվում է հաշվետու ժամանակաշրջանում մթնոլորտային օդ արտանետված վնասակար նյութերի փաստացի ծավալների հիման վրա՝

1) հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվարկված սահմանային թույլատրելի արտանետումների ծավալների սահմաններում արտանետված վնասակար նյութերի փաստացի ծավալների և Օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված համապատասխան դրույքաչափերի (նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում՝ բազմապատիկ դրույքաչափերի) արտադրյալով՝ հաշվի առնելով նույն հոդվածի 5-րդ մասով սահմանված դրույթները.

2) հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվարկված սահմանային թույլատրելի արտանետումների ծավալները գերազանցող՝ արտանետված վնասակար նյութերի փաստացի ծավալների և Օրենսգրքի 167-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դրույքաչափերի արտադրյալով՝ հաշվի առնելով նույն հոդվածի 5-րդ մասով սահմանված դրույթները.

3) հարկման բազայի զրոյական չափաքանակների դեպքում հաշվետու ժամանակաշրջանում արտանետված վնասակար նյութերի փաստացի ամբողջ ծավալների և Օրենսգրքի 167-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դրույքաչափերի արտադրյալով՝ հաշվի առնելով նույն հոդվածի 5-րդ մասով սահմանված դրույթները.

4) այն դեպքերում, երբ սահմանային թույլատրելի արտանետումների ծավալները սահմանված կարգով հաստատվում են հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում, մինչև դրանց հաստատվելու օրն ընկած ժամանակահատվածում արտանետված վնասակար նյութերի փաստացի ծավալների մասով պետական բյուջե վճարման ենթակա բնապահպանական հարկը հաշվարկվում է սույն մասի 3-րդ կետով սահմանված կարգով, իսկ սահմանային թույլատրելի արտանետումների ծավալները հաստատվելու օրվանից մինչև հաշվետու ժամանակաշրջանի ավարտն ընկած ժամանակահատվածի համար հիմք են ընդունվում սահմանային թույլատրելի արտանետումների՝ այդ ժամանակահատվածը ներառող օրերի համար հաշվարկված ծավալները.

5) այն դեպքերում, երբ սահմանային թույլատրելի արտանետումների ծավալները սահմանված կարգով փոփոխվում են հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում, հաշվետու ժամանակաշրջանի՝ մինչև փոփոխվելու օրը և այդ օրվանից

մինչև հաշվետու ժամանակաշրջանի ավարտն ընկած ժամանակահատվածների համար հիմք են ընդունվում սահմանային թույլատրելի արտանետումների՝ համապատասխան ժամանակահատվածները ներառող օրերի համար հաշվարկված համապատասխան ծավալները:

2. Արտանետման շարժական աղբյուրներից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման համար պետական բյուջե վճարման ենթակա տարեկան բնապահպանական հարկը Հայաստանի Հանրապետությունում գրանցված (հաշվառված) և շահագործվող ավտոտրանսպորտային միջոցի, այլ ինքնագնաց մեքենայի և մեխանիզմի, ինչպես նաև լողամիջոցի համար հաշվարկվում է հարկման բազայի և Օրենսգրքի 168-րդ հոդվածով սահմանված համապատասխան տարեկան դրույքաչափերի արտադրյալով:

3. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հարկման օբյեկտների համար հաշվարկված բնապահպանական հարկի գումարները բնապահպանական հարկ վճարողներն արտացոլում են Օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված հարկային հաշվարկներում:

Հոդված 176. Հայաստանի Հանրապետությունում չգրանցված (չհաշվառված)՝ Հայաստանի Հանրապետություն մուտք գործող ավտոտրանսպորտային միջոցներից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման համար պետական բյուջե վճարման ենթակա բնապահպանական հարկի հաշվարկման կարգը

1. Հայաստանի Հանրապետությունում չգրանցված (չհաշվառված) ավտոտրանսպորտային միջոցներով Հայաստանի Հանրապետություն մուտք գործող ավտոտրանսպորտային միջոցներից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման համար բնապահպանական հարկը հաշվարկվում է Հայաստանի Հանրապետություն յուրաքանչյուր մուտքի համար՝ Օրենսգրքի 168-րդ հոդվածով սահմանված համապատասխան դրույքաչափերով:

Հոդված 177. Ջրային ռեսուրս վնասակար նյութերի և (կամ) միացությունների արտահոսքի համար պետական բյուջե վճարման ենթակա բնապահպանական հարկի հաշվարկման կարգը

1. Ջրային ռեսուրս վնասակար նյութերի և (կամ) միացությունների արտահոսքի համար պետական բյուջե վճարման ենթակա բնապահպանական հարկը հաշվարկվում է հաշվետու ժամանակաշրջանում ջրային ռեսուրս անմիջապես և (կամ) կենտրոնացված ջրահեռացման ցանցեր և այլ ջրային համակարգեր վնասակար նյութերի և (կամ) միացությունների փաստացի արտահոսքի ծավալների հիման վրա՝

1) հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվարկված սահմանային թույլատրելի արտահոսքի ծավալների սահմաններում արտանետված վնասակար նյութերի և (կամ) միացությունների փաստացի ծավալների և Օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված համապատասխան դրույքաչափերի (նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում՝ կրկնապատիկ դրույքաչափերի) արտադրյալով՝ հաշվի առնելով նույն հոդվածի 5-րդ մասով սահմանված դրույթները.

2) հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվարկված սահմանային թույլատրելի արտահոսքի ծավալները գերազանցող՝ վնասակար նյութերի և միացությունների փաստացի արտահոսքի ծավալների և Օրենսգրքի 169-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դրույքաչափերի արտադրյալով՝ հաշվի առնելով նույն հոդվածի 5-րդ մասով սահմանված դրույթները.

3) հարկման բազայի զրոյական չափաքանակների դեպքում հաշվետու ժամանակաշրջանում վնասակար նյութերի և միացությունների փաստացի արտահոսքի ամբողջ ծավալների և Օրենսգրքի 169-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դրույքաչափերի արտադրյալով՝ հաշվի առնելով նույն հոդվածի 5-րդ մասով սահմանված դրույթները.

4) այն դեպքերում, երբ սահմանային թույլատրելի արտահոսքի ծավալները սահմանված կարգով հաստատվում են հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում, մինչև դրանց հաստատվելու օրն ընկած ժամանակահատվածում վնասակար նյութերի և (կամ) միացությունների փաստացի արտահոսքի ծավալների մասով պետական բյուջե վճարման ենթակա բնապահպանական հարկը հաշվարկվում է սույն մասի 3-րդ կետով սահմանված կարգով, իսկ սահմանային թույլատրելի արտահոսքի ծավալները հաստատվելու օրվանից մինչև հաշվետու ժամանակաշրջանի ավարտն ընկած ժամանակահատվածի համար հիմք են ընդունվում սահմանային թույլատրելի արտահոսքի՝ այդ ժամանակահատվածը ներառող օրերի համար հաշվարկված ծավալները.

5) այն դեպքերում, երբ սահմանային թույլատրելի արտահոսքի ծավալները սահմանված կարգով փոփոխվում են հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում, հաշվետու ժամանակաշրջանի՝ մինչև փոփոխվելու օրը և այդ օրվանից մինչև հաշվետու ժամանակաշրջանի ավարտն ընկած ժամանակահատվածների համար հիմք են ընդունվում սահմանային թույլատրելի արտահոսքի՝ համապատասխան ժամանակահատվածները ներառող օրերի համար հաշվարկված համապատասխան ծավալները:

2. Անկախ սույն հոդվածի 1-ին մասի դրույթներից՝ ձկնաբուծության նպատակով ջրօգտագործման և ջրային ռեսուրս վնասակար նյութեր և (կամ) միացություններ արտահոսքի համար պետական բյուջե վճարման ենթակա բնապահպանական հարկը հաշվարկվում է ջրային ռեսուրս արտահոսվող կեղտաջրերում վնասակար նյութերի և (կամ)

միացությունների միջին կոնցենտրացիաների ու ջրային ռեսուրսի տվյալ հատվածի համար սահմանված ջրի որակի էկոլոգիական նորմերի 90 տոկոսի դրական տարբերության, ջրային ռեսուրս արտանետվող կեղտաջրերի փաստացի ծավալների և Օրենսգրքի 169-րդ հոդվածով սահմանված դրույքաչափերի արտադրյալի չափով: Ջրի որակի էկոլոգիական նորմերը սահմանում է Կառավարությունը:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված հարկման օբյեկտների համար հաշվարկված բնապահպանական հարկի գումարները բնապահպանական հարկ վճարողներն արտացոլում են Օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված հարկային հաշվարկներում:

(177-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Հոդված 178. Ընդերքօգտագործման, արտադրության և (կամ) սպառման թափոնները հատուկ հատկացված տեղերում տեղադրելու կամ պահելու համար պետական բյուջե վճարման ենթակա բնապահպանական հարկի հաշվարկման կարգը

1. Հատուկ հատկացված տեղերում ընդերքօգտագործման, արտադրության և (կամ) սպառման թափոնները տեղադրելու կամ պահելու համար պետական բյուջե վճարման ենթակա բնապահպանական հարկը հաշվարկվում է հաշվետու ժամանակաշրջանում հատուկ հատկացված տեղերում տեղադրված և (կամ) պահված թափոնների փաստացի ծավալների հիման վրա՝

1) հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվարկված թափոնների տեղադրման սահմանաքանակների սահմաններում հատուկ հատկացված տեղերում պահված և (կամ) տեղադրված՝ ընդերքօգտագործման, արտադրության և (կամ) սպառման թափոնների փաստացի ծավալների և Օրենսգրքի 170-րդ հոդվածի 1-3-րդ մասերով սահմանված համապատասխան դրույքաչափերի արտադրյալով՝ հաշվի առնելով նույն հոդվածի 6-րդ մասով սահմանված դրույթները.

2) հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվարկված թափոնների տեղադրման սահմանաքանակները գերազանցող՝ պահված և (կամ) տեղադրված ընդերքօգտագործման, արտադրության և (կամ) սպառման թափոնների փաստացի ծավալների և սույն բաժնի 170-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դրույքաչափերի արտադրյալով՝ հաշվի առնելով նույն հոդվածի 6-րդ մասով սահմանված դրույթները.

3) հարկման բազայի զրոյական չափաքանակների դեպքում հաշվետու ժամանակաշրջանում պահված և (կամ) տեղադրված ընդերքօգտագործման, արտադրության և (կամ) սպառման թափոնների փաստացի ծավալների և Օրենսգրքի 170-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված դրույքաչափերի արտադրյալով՝ հաշվի առնելով նույն հոդվածի 6-րդ մասով սահմանված դրույթները.

4) այն դեպքերում, երբ թափոնների տեղադրման սահմանաքանակները սահմանված կարգով հաստատվում են հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում, մինչև դրանց հաստատվելու օրն ընկած ժամանակահատվածում պահված թափոնների փաստացի ծավալների մասով պետական բյուջե վճարման ենթակա բնապահպանական հարկը հաշվարկվում է սույն մասի 3-րդ կետով սահմանված կարգով, իսկ սահմանաքանակները հաստատվելու օրվանից մինչև հաշվետու ժամանակաշրջանի ավարտն ընկած ժամանակահատվածի համար հիմք են ընդունվում սահմանաքանակների՝ այդ ժամանակահատվածը ներառող օրերի համար հաշվարկված ծավալները.

5) այն դեպքերում, երբ թափոնների տեղադրման սահմանաքանակները սահմանված կարգով փոփոխվում են հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում, հաշվետու ժամանակաշրջանի՝ մինչև փոփոխվելու օրը և այդ օրվանից մինչև հաշվետու ժամանակաշրջանի ավարտն ընկած ժամանակահատվածների համար հիմք են ընդունվում սահմանաքանակների՝ համապատասխան ժամանակահատվածները ներառող օրերի համար հաշվարկված համապատասխան ծավալները:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հարկման օբյեկտների համար հաշվարկված բնապահպանական հարկի գումարները բնապահպանական հարկ վճարողներն արտացոլում են Օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված հարկային հաշվարկներում:

3. 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածի հաշվետու ժամանակաշրջանների համար ընդերքօգտագործման, արտադրության և (կամ) սպառման թափոնները հատուկ հատկացված տեղերում պահելու համար բնապահպանական հարկի հաշվարկման՝ սույն հոդվածի դրույթները կիրառվում են՝ հաշվի առնելով Օրենսգրքի 21-րդ բաժնով սահմանված եզրափակիչ և անցումային դրույթները:

Հոդված 179. Շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար պետական բյուջե վճարման ենթակա բնապահպանական հարկի հաշվարկման կարգը

1. Հայաստանի Հանրապետություն «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ներմուծվող՝ Օրենսգրքի 171-րդ հոդվածում նշված՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար պետական բյուջե վճարման ենթակա բնապահպանական հարկը հաշվարկվում է այդ ապրանքների հարկման բազայի նկատմամբ՝ նույն հոդվածով Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների համար սահմանված համապատասխան դրույքաչափերով:

2. ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող՝ Օրենսգրքի 171-րդ հոդվածում նշված՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների համար պետական բյուջե վճարման ենթակա բնապահպանական հարկը հաշվարկվում է այդ ապրանքների հարկման բազայի նկատմամբ՝ նույն հոդվածով Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների համար սահմանված համապատասխան դրույքաչափերով: Ներմուծող հարկ վճարողները սույն մասում նշված բնապահպանական հարկը հաշվարկում են ինքնուրույն և հաշվարկված բնապահպանական հարկի գումարը ներառում են Օրենսգրքով սահմանված կարգով ու ժամկետներում հարկային մարմին ներկայացվող ներմուծման հարկային հայտարարագրում:

3. Ներմուծող-իրացնողների կողմից հաշվետու ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետության տարածքում օտարված՝ Օրենսգրքի 171-րդ հոդվածում նշված (բացառությամբ ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 8702, 8703, 8704 և 8705 ծածկագրերին դասվող ավտոմեքենաների) ապրանքների համար պետական բյուջե վճարման ենթակա բնապահպանական հարկը հաշվարկվում է այդ ապրանքների հարկման բազայի նկատմամբ՝ նույն հոդվածով Հայաստանի Հանրապետություն ներմուծվող և իրացվող ապրանքների համար սահմանված համապատասխան դրույքաչափերով:

4. Արտադրող-իրացնողների կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրված և հաշվետու ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետության տարածքում օտարված՝ Օրենսգրքի 171-րդ հոդվածում նշված ապրանքների համար պետական բյուջե վճարման ենթակա բնապահպանական հարկը հաշվարկվում է այդ ապրանքների հարկման բազայի նկատմամբ՝ նույն հոդվածով Հայաստանի Հանրապետությունում արտադրվող և իրացվող ապրանքների համար սահմանված համապատասխան դրույքաչափերով:

5. Ներմուծող-իրացնողների կողմից յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար պետական բյուջե վճարման ենթակա բնապահպանական հարկի հաշվարկման համար սույն հոդվածի 3-րդ մասին համապատասխան հաշվարկված բնապահպանական հարկի գումարից հաշվանցվում (պակասեցվում) են՝

1) ԵՏՄ անդամ չհամարվող պետություններից ներմուծված և օտարված՝ այդ ապրանքների ներմուծման մաքսային հայտարարագրերում առանձնացված և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարված բնապահպանական հարկի գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանում ապրանքների օտարմանը համամասնորեն, բայց ոչ ավելի, քան հաշվետու ժամանակաշրջանի համար այդ ապրանքների մասով սույն հոդվածի 3-րդ մասին համապատասխան հաշվարկված բնապահպանական հարկի գումարները.

2) ԵՏՄ անդամ պետություններից ներմուծված և օտարված՝ այդ ապրանքների ներմուծման հարկային հայտարարագրերում առանձնացված և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարված բնապահպանական հարկի գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանում ապրանքների օտարմանը համամասնորեն, բայց ոչ ավելի, քան հաշվետու ժամանակաշրջանի համար այդ ապրանքների մասով սույն հոդվածի 3-րդ մասին համապատասխան հաշվարկված բնապահպանական հարկի գումարները:

6. Արտադրող-իրացնողների կողմից յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար պետական բյուջե վճարման ենթակա բնապահպանական հարկի հաշվարկման համար սույն հոդվածի 4-րդ մասին համապատասխան հաշվարկված բնապահպանական հարկի գումարից հաշվանցվում (պակասեցվում) են՝

1) օտարված ապրանքների արտադրությունում անմիջականորեն օգտագործված՝ ԵՏՄ անդամ չհամարվող պետություններից ներմուծված ապրանքների ներմուծման մաքսային հայտարարագրերում առանձնացված և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարված բնապահպանական հարկի գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանում ապրանքների օտարմանը համամասնորեն, բայց ոչ ավելի, քան հաշվետու ժամանակաշրջանի համար այդ ապրանքների մասով սույն հոդվածի 4-րդ մասին համապատասխան հաշվարկված բնապահպանական հարկի գումարները.

2) օտարված ապրանքների արտադրությունում անմիջականորեն օգտագործված՝ ԵՏՄ անդամ պետություններից ներմուծված ապրանքների ներմուծման հարկային հայտարարագրերում առանձնացված և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարված բնապահպանական հարկի գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանում ապրանքների օտարմանը համամասնորեն, բայց ոչ ավելի, քան հաշվետու ժամանակաշրջանի համար այդ ապրանքների մասով սույն հոդվածի 4-րդ մասին համապատասխան հաշվարկված բնապահպանական հարկի գումարները.

3) օտարված ապրանքի արտադրությունում անմիջականորեն օգտագործված՝ Հայաստանի Հանրապետության մատակարարների հաշվարկային փաստաթղթերում առանձնացված և մատակարարներին վճարված բնապահպանական հարկի գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանում ապրանքների օտարմանը համամասնորեն, բայց ոչ ավելի, քան հաշվետու ժամանակաշրջանի համար այդ ապրանքների մասով սույն հոդվածի 4-րդ մասին համապատասխան հաշվարկված բնապահպանական հարկի գումարները:

7. Եթե սույն հոդվածի 5-րդ և 6-րդ մասերով սահմանված դեպքերում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե կամ մատակարարներին վճարումները կատարվում են սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների օտարման հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հաշվետու ժամանակաշրջաններում, ապա այդ գումարների մասով հաշվանցումները (պակասեցումները) կարող են կատարվել (Օրենսգրքով սահմանված կարգով ու դեպքերում ճշտված հարկային հաշվարկների ներկայացմամբ) միայն շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների օտարման հաշվետու ժամանակաշրջանում՝ սույն հոդվածով սահմանված կարգով: Սույն հոդվածի 5-րդ և 6-րդ մասերին համապատասխան՝ հաշվետու ժամանակաշրջանում օտարված

ապրանքների համար հաշվարկված բնապահպանական հարկից չհաշվանցված (չպակասեցված) գումարները բնապահպանական հարկ վճարողի՝ առաջիկա բնապահպանական հարկի վճարումների հաշվին հաշվանցման կամ վերադարձման ենթակա չեն:

8. Սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված հարկման օբյեկտների համար հաշվարկված բնապահպանական հարկի գումարները բնապահպանական հարկ վճարողներն արտացոլում են Օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված հարկային հաշվարկներում:

Հոդված 180. Բնապահպանական հարկի գծով հարկային հաշվարկների ներկայացումը

1. Բնապահպանական հարկ վճարողները մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ Օրենսգրքի 52-րդ և 53-րդ հոդվածներին համապատասխան կազմում և Կառավարության սահմանած կարգով բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին և հարկային մարմին են ներկայացնում բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների միասնական հարկային հաշվարկները:

2. Բնապահպանական հարկ վճարողները ներկայացված բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների միասնական հարկային հաշվարկներում սխալների ինքնուրույն հայտնաբերման դեպքում դրանց ճշտման արդյունքներով, Օրենսգրքի 52-54-րդ հոդվածներին համապատասխան, կարող են կազմել բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների ճշտված միասնական հարկային հաշվարկներ և Կառավարության սահմանած կարգով ներկայացնել բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին և հարկային մարմին:

(180-րդ հոդվածը փոփ. 21.12.17 ՀՕ-266-Ն, 23.03.18 ՀՕ-261-Ն)

Գ Լ Ո Ւ Խ 34

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԵՎ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՇՎԻՆ ՄՈՒՏՔԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Հոդված 181. Բնապահպանական հարկի գումարի վճարումը

1. Սույն բաժնով սահմանված կարգով հաշվարկված՝ պետական բյուջե վճարման ենթակա բնապահպանական հարկի գումարները պետական բյուջե են վճարվում մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ, բացառությամբ սույն հոդվածով սահմանված դեպքերի:

2. Արտանետման շարժական աղբյուրներից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման համար բնապահպանական հարկը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե է վճարվում հետևյալ ժամկետներում ու կարգով.

1) Հայաստանի Հանրապետությունում գրանցված (հաշվառված) և շահագործվող այն ավտոտրանսպորտային միջոցների, այլ ինքնագնաց մեքենաների և մեխանիզմների, ինչպես նաև լողամիջոցների համար, որոնց համար սահմանված է տեխնիկական զննության պահանջ, Օրենսգրքի 175-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված բնապահպանական հարկը յուրաքանչյուր հարկային տարվա համար վճարվում է մինչև դրանց տարեկան տեխնիկական զննությունը, բացառությամբ սույն մասի 2-րդ կետով սահմանված դեպքերի.

2) եթե սույն մասի 1-ին կետում նշված դեպքում տարեկան տեխնիկական զննության փոխարեն սահմանված է տեխնիկական զննության այլ պարբերականություն, ապա Օրենսգրքի 175-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված բնապահպանական հարկը վճարվում է՝

ա. հարկային տարվա ընթացքում երկու տեխնիկական զննություն անցնելու դեպքում՝ մինչև հարկային տարվա երկրորդ տեխնիկական զննությունը,

բ. երկու հարկային տարվա ընթացքում մեկ տեխնիկական զննություն անցնելու դեպքում՝ երկու հարկային տարիների տարեկան բնապահպանական հարկի գումարների հանրագումարի չափով՝ մինչև յուրաքանչյուր տեխնիկական զննությունը.

3) Հայաստանի Հանրապետությունում գրանցված (հաշվառված) և շահագործվող այն ավտոտրանսպորտային միջոցների, այլ ինքնագնաց մեքենաների և մեխանիզմների, ինչպես նաև լողամիջոցների համար, որոնց համար սահմանված չէ տեխնիկական զննության պահանջ, Օրենսգրքի 175-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված բնապահպանական հարկը յուրաքանչյուր հարկային տարվա համար վճարվում է մինչև տվյալ հարկային տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ.

4) Հայաստանի Հանրապետությունում չգրանցված (չհաշվառված) ավտոտրանսպորտային միջոցներով Հայաստանի Հանրապետություն մուտք գործող ավտոտրանսպորտային միջոցներից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման համար Օրենսգրքի 176-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված բնապահպանական հարկը պետական բյուջե է վճարվում Հայաստանի Հանրապետություն մուտք գործելիս: Կատարված վճարումների անդորրագրերը (կամ վճարումը հավաստող այլ փաստաթուղթը) բնապահպանական հարկ վճարողները պահպանում են՝

հետագայում բնապահպանական հարկի վճարման փաստը հավաստելու նպատակով: Հայաստանի Հանրապետությունում չգրանցված (չհաշվառված) ավտոտրանսպորտային միջոցներով Հայաստանի Հանրապետություն մուտք գործելիս մաքսային մարմինները ստուգում են հարկ վճարողի կատարած բնապահպանական հարկի հաշվարկը կամ բնապահպանական հարկի վճարման արտոնությունից օգտվելու իրավունքը, անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան ճշգրտումներից հետո ապահովելով բնապահպանական հարկի գումարի լրավճարումը: Սույն հոդվածի կիրառության իմաստով բնապահպանական հարկի վճարումը կամ բնապահպանական հարկի վճարումը հավաստող փաստաթղթեր են նաև՝

ա. ԵՏՄ անդամ չհամարվող պետություններից տրանսպորտային միջոցների մուտքի դեպքում ավտոտրանսպորտային միջոցների մաքսային հայտարարագիրը, որում արտացոլված է բնապահպանական հարկի վճարված գումարը,

բ. ԵՏՄ անդամ պետություններից ավտոտրանսպորտային միջոցների մուտքի դեպքում սույն բաժնով սահմանված կարգով ու չափերով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե բնապահպանական հարկի կատարված վճարումների անդորրագրերը կամ պետական վճարումների էլեկտրոնային համակարգի կողմից գեներացված անդորրագիրը:

Հայաստանի Հանրապետությունում չգրանցված (չհաշվառված) ավտոտրանսպորտային միջոցների՝ Հայաստանի Հանրապետության տարածքից ելքի դեպքում մաքսային մարմինները ստուգում են սույն բաժնին համապատասխան բնապահպանական հարկի հաշվարկված և վճարված լինելը կամ բնապահպանական հարկի վճարման արտոնությունից օգտվելու իրավունքը: Ավտոտրանսպորտային միջոցների ելքի ժամանակ բնապահպանական հարկի վճարումը հավաստող անդորրագրերի և (կամ) տրանսպորտային միջոցների մաքսային հայտարարագրի վրա դրվում է «բնապահպանական հարկը վճարված է մինչև ...» նշումով կնիք, որից հետո հայտարարագրերն ու անդորրագրերը Հայաստանի Հանրապետություն մուտք գործելիս, Հայաստանի Հանրապետությունում երթևեկելիս կամ Հայաստանի Հանրապետությունից ելքի դեպքում չեն կարող օգտագործվել որպես բնապահպանական հարկի վճարումը հավաստող փաստաթղթեր:

Հայաստանի Հանրապետությունում չգրանցված (չհաշվառված) ավտոտրանսպորտային միջոցներով Հայաստանի Հանրապետություն մուտք գործելիս և Հայաստանի Հանրապետությունից ելքի դեպքում մաքսային մարմիններին, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքում սահմանված կարգով պահանջի դեպքում ճանապարհային երթևեկության անվտանգության մարմնին բնապահպանական հարկ վճարողները ներկայացնում են բնապահպանական հարկի վճարումը հավաստող փաստաթղթերը կամ բնապահպանական հարկի արտոնություններից օգտվելու իրավունքը հավաստող՝ Օրենսգրքի 172-րդ հոդվածի 4-րդ մասում նշված համապատասխան փաստաթղթերը:

3. Շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների ներմուծման համար բնապահպանական հարկը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե է վճարվում հետևյալ ժամկետներում ու կարգով.

1) ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար բնապահպանական հարկը պետական բյուջե է վճարվում մինչև այդ ապրանքները Հայաստանի Հանրապետության տարածք փաստացի ներմուծելու (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու) օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ.

2) ԵՏՄ անդամ չհամարվող պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար բնապահպանական հարկը պետական բյուջե է վճարվում մինչև «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով մաքսային հայտարարագրի գրանցումը կամ գրանցման ժամանակ, բայց ոչ ուշ, քան ապրանքների բացթողնումը՝ որպես մաքսային մարմնին վճարվող գումարներ՝ վճարումը հավաստող փաստաթուղթը ներկայացնելով մաքսային մարմին:

Եթե նախապես հայտարարագրված մաքսային ընթացակարգը փոխարինվում է այլ մաքսային ընթացակարգով, անկախ ներմուծումից հետո այդ ապրանքների նկատմամբ կիրառվող մաքսային ընթացակարգի փոփոխությունից, ապա շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար բնապահպանական հարկը հաշվարկվում և գանձվում է Հայաստանի Հանրապետության սահմանով յուրաքանչյուր մուտքի համար մեկ անգամ:

(181-րդ հոդվածը փոփ. 25.06.19 ՀՕ-68-Ն)

Հոդված 182. Բնապահպանական հարկի գումարի մուտքագրումը միասնական հաշվին, հաշվանցումը և (կամ) վերադարձը

1. Բնապահպանական հարկի այն պարտավորություններից Օրենսգրքով սահմանված չափից ավելի վճարված գումարները, որոնց մասով սույն բաժնով սահմանված է հարկային հաշվարկ ներկայացնելու պահանջ, Օրենսգրքի՝ հարկային վարչարարության մասով սահմանված կարգով և ժամկետներում մուտքագրվում են միասնական հաշվին:

2. Բնապահպանական հարկի այն պարտավորություններից Օրենսգրքով սահմանված չափից ավելի վճարված գումարները, որոնց մասով սույն բաժնով սահմանված չէ հարկային հաշվարկ ներկայացնելու պահանջ, հաշվանցվում և (կամ) վերադարձվում են Կառավարության սահմանած կարգով:

(182-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Բ Ա Ժ Ի Ն 9

ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՀԱՐԿԸ

Գ Լ Ո Ւ Խ 35

ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՀԱՐԿԸ, ՎՃԱՐՈՂՆԵՐԸ ԵՎ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Հոդված 183. Ճանապարհային հարկը

1. Ճանապարհային հարկը Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհների ցանցի զարգացման, Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով սույն բաժնին համապատասխան պետական բյուջե վճարվող հարկ է:

Հոդված 184. Ճանապարհային հարկ վճարողները

1. Ճանապարհային հարկ վճարողներ են համարվում Օրենսգրքի 186-րդ հոդվածով սահմանված հարկման օբյեկտ համարվող գործունեություն և (կամ) գործառույթ իրականացնող՝ սույն բաժնով սահմանված ավտոտրանսպորտային միջոցների սեփականատեր կամ նրանց կողմից լիազորված անձ (ներկայացուցիչ) համարվող, ինչպես նաև նույն հոդվածով սահմանված գործունեություն և (կամ) գործառույթ իրականացնելու նպատակով ավտոմոբիլային ճանապարհներից օգտվող կազմակերպությունները և ֆիզիկական անձինք:

2. Հայաստանի Հանրապետությունում չգրանցված (չհաշվառված) ավտոտրանսպորտային միջոցներով Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար ճանապարհային հարկ վճարողներ են համարվում Հայաստանի Հանրապետությունում չգրանցված (չհաշվառված)՝ սույն բաժնով սահմանված ավտոտրանսպորտային միջոցներով (բացառությամբ «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ձևակերպված) Հայաստանի Հանրապետություն (այդ թվում՝ ԵՏՄ անդամ պետություններից) մուտք գործողները:

3. ***(մասն ուժը կորցրել է 25.06.19 ՀՕ-68-Ն)***

4. Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին գովազդ տեղադրելու համար ճանապարհային հարկ վճարողներ են համարվում Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին (այդ թվում՝ համայնքների վարչական սահմանների միջով անցնող տարանցիկ հատվածներում), ինչպես նաև այդ ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում գովազդ տեղադրողները (գովազդակիրները):

(184-րդ հոդվածը փոփ. 25.06.19 ՀՕ-68-Ն)

(25.06.19 ՀՕ-68-Ն օրենքի 71-րդ հոդվածի համաձայն՝ 184-րդ հոդվածի փոփոխությունը կիրառվում է նաև 2019 թվականի հաշվետու տարվա համար վճարման ենթակա ճանապարհային հարկի գծով հարկային պարտավորությունների նկատմամբ:)

Հոդված 185. Կիրառվող հասկացությունները և լիազոր մարմինները

1. «Ավտոմոբիլային ճանապարհների մասին», «Տրանսպորտի մասին», «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» և «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում և դրանց համապատասխան ընդունված իրավական ակտերում կիրառվող հասկացությունները սույն բաժնում կիրառվում են այդ իրավական ակտերում կիրառվող իմաստով ու նշանակությամբ, եթե սույն բաժնով այլ բան նախատեսված չէ:

2. ԵՏՄ մաքսային սահմանով տրանսպորտային միջոցների տեղափոխման մասով ճանապարհային հարկի հաշվարկման ու վճարման հետ կապված հարաբերությունների կարգավորման նպատակով սույն բաժնով կիրառվող այն հասկացությունները, որոնք սահմանված չեն սույն բաժնով, կիրառվում են 2014 թվականի մայիսի 29-ի «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի թիվ 24 հավելվածով (համակարգված (համաձայնեցված) տրանսպորտային քաղաքականության մասին արձանագրության), ԵՏՄ մաքսային օրենսդրությամբ կամ մաքսային հարաբերություններ կարգավորող՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված իմաստներով:

3. Օրենսգրքի 4-րդ հոդվածով սահմանված «լիազոր մարմին» հասկացությունը Օրենսգրքի սույն բաժնի կիրառության իմաստով ունի հետևյալ նշանակությունը.

1) ճանապարհային երթևեկության անվտանգության մարմին՝ ճանապարհային երթևեկության անվտանգության

ապահովման բնագավառում Կառավարության լիազոր պետական կառավարման մարմին.

2) պետական ճանապարհային մարմին՝ տրանսպորտի բնագավառում Կառավարության լիազոր պետական կառավարման մարմին:

(185-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Գ Լ Ո Ւ Խ 36

ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏԸ, ՀԱՐԿՄԱՆ ԲԱԶԱՆ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Հոդված 186. Ճանապարհային հարկով հարկման օբյեկտը

1. Ճանապարհային հարկով հարկման օբյեկտներ են համարվում՝

1) Հայաստանի Հանրապետությունում չգրանցված (չհաշվառված) բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելը.

2) *(կետն ուժը կորցրել է 25.06.19 ՀՕ-68-Ն)*

3) Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին գովազդ տեղադրելը:

(186-րդ հոդվածը փոփ. 25.06.19 ՀՕ-68-Ն)

(25.06.19 ՀՕ-68-Ն օրենքի 71-րդ հոդվածի համաձայն՝ 186-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի փոփոխությունը

կիրառվում է նաև 2019 թվականի հաշվետու տարվա համար վճարման ենթակա ճանապարհային հարկի գծով հարկային պարտավորությունների նկատմամբ:)

Հոդված 187. Ճանապարհային հարկով հարկման բազան

1. Ճանապարհային հարկով հարկման բազա է համարվում ճանապարհային հարկով հարկման օբյեկտի արժեքային կամ ֆիզիկական մեծությունը կամ այն բնութագրիչը, որի հիման վրա սույն բաժնով սահմանված դրույքաչափերով ու կարգով հաշվարկվում է ճանապարհային հարկի գումարը:

2. Հայաստանի Հանրապետությունում չգրանցված (չհաշվառված) բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար ճանապարհային հարկով հարկման բազա է համարվում բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով Հայաստանի Հանրապետություն մուտքի և Հայաստանի Հանրապետությունում գտնվելու տևողությունը՝ արտահայտված օրերով, ըստ բեռնատար ավտոտրանսպորտային միջոցների (այդ թվում՝ կցորդների և կիսակցորդների) թույլատրելի առավելագույն զանգվածի՝ արտահայտված տոննաներով:

3. *(մասն ուժը կորցրել է 25.06.19 ՀՕ-68-Ն)*

4. Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին գովազդ տեղադրելու համար հարկման բազա է համարվում Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին (այդ թվում՝ համայնքների վարչական սահմանների միջով անցնող տարանցիկ հատվածներում), ինչպես նաև այդ ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրված գովազդային վահանակի մակերեսը՝ արտահայտված քառակուսի մետրերով: Բազմակողմ (երկու և ավելի կողմ ունեցող) գովազդային վահանակի դեպքում հարկման բազա է համարվում գովազդային վահանակի բոլոր կողմերի մակերեսների հանրագումարը:

5. Սույն հոդվածի 2-րդ մասի կիրառության իմաստով, թամբային քարշակ թափքի տեսակ ունեցող ավտոմոբիլի և կիսակցորդի միակցված շարժակազմի (ավտոգնացքի) դեպքում հարկման բազայի որոշման նպատակով հիմք է ընդունվում ավտոգնացքի մեջ մտնող կիսակցորդի թույլատրելի առավելագույն զանգվածը՝ արտահայտված տոննաներով, իսկ կցորդով շարժվող միակցված շարժակազմի (ավտոգնացքի) դեպքում՝ շարժակազմի մեջ մտնող ավտոտրանսպորտային միջոցների (այդ թվում՝ կցորդների և կիսակցորդների) թույլատրելի առավելագույն զանգվածների հանրագումարը՝ արտահայտված տոննաներով:

(187-րդ հոդվածը փոփ. 21.06.18 ՀՕ-338-Ն, 25.06.19 ՀՕ-68-Ն)

(187-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերը 25.06.19 ՀՕ-68-Ն օրենքի 71-րդ հոդվածի համաձայն՝ կիրառվում են նաև 2019 թվականի հաշվետու տարվա համար վճարման ենթակա ճանապարհային հարկի գծով հարկային պարտավորությունների նկատմամբ:)

Հոդված 188. Հայաստանի Հանրապետությունում չգրանցված (չհաշվառված) բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար ճանապարհային հարկի դրույքաչափերը

1. Հայաստանի Հանրապետությունում չգրանցված (չհաշվառված) բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար ճանապարհային հարկը հաշվարկվում է Հայաստանի Հանրապետություն մուտքի յուրաքանչյուր 15 օրվա համար՝ ըստ ավտոտրանսպորտային միջոցի թույլատրելի առավելագույն զանգվածի.

Բեռնատար ավտոտրանսպորտային միջոցները՝ ըստ թույլատրելի առավելագույն զանգվածի	Հայաստանի Հանրապետություն յուրաքանչյուր մուտքի համար դրույքաչափը (դրամ)
մինչև 1,5 տոննա ներառյալ	15000
1,5-ից ավելի մինչև 3 տոննա ներառյալ	25000
3-ից ավելի մինչև 5 տոննա ներառյալ	40000
5-ից ավելի մինչև 10 տոննա ներառյալ	65000
10-ից ավելի մինչև 20 տոննա ներառյալ	80000
20-ից ավելի մինչև 30 տոննա ներառյալ	110000
30-ից ավելի մինչև 44 տոննա ներառյալ	152000
44-ից ավելի մինչև 60 տոննա ներառյալ	205000
60-ից ավելի մինչև 70 տոննա ներառյալ	233000
70-ից ավելի մինչև 80 տոննա ներառյալ	285000
80-ից ավելի մինչև 90 տոննա ներառյալ	318000
90-ից ավելի մինչև 100 տոննա ներառյալ	603000
100 տոննայից ավելի	753000

Հոդված 189. Հայաստանի Հանրապետությունում գրանցված (հաշվառված) բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար ճանապարհային հարկի դրույքաչափերը

(հոդվածն ուժը կորցրել է 25.06.19 ՀՕ-68-Ն)

(25.06.19 ՀՕ-68-Ն օրենքի 71-րդ հոդվածի համաձայն՝ 189-րդ հոդվածի փոփոխությունը կիրառվում է նաև 2019 թվականի հաշվետու տարվա համար վճարման ենթակա ճանապարհային հարկի գծով հարկային պարտավորությունների նկատմամբ:)

Հոդված 190. Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին զովազդ տեղադրելու համար ճանապարհային հարկի դրույքաչափերը

1. Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին գովազդ տեղադրելու համար ճանապարհային հարկը հաշվարկվում է հետևյալ տարեկան դրույքաչափերով.

1) միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներին (այդ թվում՝ համայնքների վարչական սահմանների միջով անցնող տարանցիկ հատվածներում), ինչպես նաև այդ ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդային վահանակի մակերեսի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար՝ 10000 դրամ.

2) հանրապետական և մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհներին (այդ թվում՝ համայնքների վարչական սահմանների միջով անցնող տարանցիկ հատվածներում), ինչպես նաև այդ ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդային վահանակի մակերեսի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար՝ 7500 դրամ:

Գ Լ Ո Ւ Խ 37

ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 191. Ճանապարհային հարկի արտոնությունները

1. Հայաստանի Հանրապետությունում չգրանցված (չհաշվառված) բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար ճանապարհային հարկի վճարումից ազատվում են՝

1) Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչությունները և հյուպատոսական հիմնարկները՝ իրենց պաշտոնական օգտագործման բեռնատար ավտոտրանսպորտային միջոցների համար.

2) բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով Հայաստանի Հանրապետության տարածք մարդասիրական և տեխնիկական օգնություններ, բարեգործական ծրագրերի շրջանակներում բեռներ փոխադրող ճանապարհային հարկ վճարողները՝ այդ փոխադրումների համար.

3) Հայաստանի Հանրապետությունում տեղակայված՝ Ռուսաստանի Դաշնության ռազմակայաններ բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով փոխադրումներ իրականացնող ճանապարհային հարկ վճարողները՝ այդ փոխադրումների համար.

4) Վրաստանի տարածքում գրանցված՝ Հայաստանի Հանրապետության տարածքում փոխադրումներ իրականացնող բեռնատար տրանսպորտային միջոցներով Հայաստանի Հանրապետություն մուտք գործող ճանապարհային հարկ վճարողները, բացառությամբ 44 տոննան գերազանցող թույլատրելի առավելագույն զանգված ունեցող ավտոտրանսպորտային միջոցների համար սույն բաժնով սահմանված ճանապարհային հարկի.5) միջազգային պայմանագրերին համապատասխան ճանապարհային հարկի արտոնություններից օգտվող ճանապարհային հարկ վճարողները:

6) Իրանի Իսլամական Հանրապետության տարածքում գրանցված բեռնատար տրանսպորտային միջոցներով Հայաստանի Հանրապետություն մուտք գործող ճանապարհային հարկ վճարողները, եթե նշյալ տրանսպորտային միջոցները Հայաստանի Հանրապետություն մուտքի ամբողջ ժամանակահատվածում գտնվելու են Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության սահմանից առավելագույնը մեկ կիլոմետր հեռավորության վրա՝ մաքսային հսկողության ներքո գտնվող տարածքներում:

2. Սույն հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությունում չգրանցված (չհաշվառված) բեռնատար տրանսպորտային միջոցներով Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար ճանապարհային հարկի արտոնություններից օգտվելու իրավունքը հավաստող փաստաթղթեր են համարվում՝

1) Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների անձնակազմի անդամների համար՝ դիվանագիտական վկայականը.

2) Հայաստանի Հանրապետության տարածք մարդասիրական և տեխնիկական օգնության, բարեգործական ծրագրերի շրջանակներում բեռներ փոխադրող ճանապարհային հարկ վճարողների համար՝ նշված ծրագրի իրականացման վերաբերյալ իրավական ակտը (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը), իսկ դրանց բացակայության դեպքում՝ լիազորված մարմնի որոշումը.

3) Հայաստանի Հանրապետությունում տեղակայված Ռուսաստանի Դաշնության ռազմակայաններ բեռներ և զինվորներ փոխադրող ճանապարհային հարկ վճարողների համար՝ Ռուսաստանի Դաշնության ռազմակայանների տնօրինության տված տեղեկանքը.

4) Վրաստանում գրանցված (հաշվառված) տրանսպորտային միջոցներով Հայաստանի Հանրապետություն մուտք գործող հարկ վճարողների համար՝ տրանսպորտային միջոցների գրանցման (հաշվառման) վկայագիրը.

5) Հայաստանի Հանրապետության անունից կնքված և սահմանված կարգով վավերացված միջազգային

պայմանագրերին համապատասխան ճանապարհային հարկի արտոնություններից օգտվող ճանապարհային հարկ վճարողների համար՝ պետական ճանապարհային մարմնի տված թույլտվությունը:

6) Իրանի Իսլամական Հանրապետությունում գրանցված (հաշվառված) տրանսպորտային միջոցներով Հայաստանի Հանրապետություն մուտք գործող հարկ վճարողների համար՝ տրանսպորտային միջոցների գրանցման (հաշվառման) վկայագիրը:

3. *(մասն ուժը կորցրել է 25.06.19 ՀՕ-68-Ն)*

4. *(մասն ուժը կորցրել է 25.06.19 ՀՕ-68-Ն)*

(191-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն, 21.06.18 ՀՕ-343-Ն, լրաց. 21.06.18 ՀՕ-338-Ն, փոփ. 25.06.19 ՀՕ-68-Ն)

(25.06.19 ՀՕ-68-Ն օրենքի 71-րդ հոդվածի համաձայն՝ 191-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի փոփոխությունը կիրառվում է նաև 2019 թվականի հաշվետու տարվա համար վճարման ենթակա ճանապարհային հարկի գծով հարկային պարտավորությունների նկատմամբ:)

Գ Լ Ո Ւ Խ 38

ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄԸ

Հոդված 192. Պետական բյուջե վճարման ենթակա ճանապարհային հարկի հաշվարկման ընդհանուր կարգը

1. Պետական բյուջե վճարման ենթակա ճանապարհային հարկը հաշվարկվում է Օրենսգրքի 186-րդ հոդվածով սահմանված հարկման յուրաքանչյուր օբյեկտի համար՝ հարկման բազայի և դրույքաչափերի հիման վրա:

Հոդված 193. Հայաստանի Հանրապետությունում չգրանցված (չհաշվառված) բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար պետական բյուջե վճարման ենթակա ճանապարհային հարկի հաշվարկման և վճարման կարգը

1. Հայաստանի Հանրապետությունում չգրանցված (չհաշվառված) բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար պետական բյուջե վճարման ենթակա ճանապարհային հարկը հաշվարկվում և վճարվում է հետևյալ կարգով.

1) Հայաստանի Հանրապետություն յուրաքանչյուր մուտքի համար ճանապարհային հարկը հաշվարկվում է Օրենսգրքի 188-րդ հոդվածով սահմանված տասնհինգօրյա դրույքաչափերով և պետական բյուջե է վճարվում Հայաստանի Հանրապետություն մուտք գործելիս.

2) Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու օրվան հաջորդող տասնհինգ օրվա ընթացքում նույն ավտոտրանսպորտային միջոցով Հայաստանի Հանրապետություն մեկից ավելի անգամ մուտք գործելու դեպքում ճանապարհային հարկը հաշվարկվում է յուրաքանչյուր մուտքի համար Օրենսգրքի 188-րդ հոդվածով սահմանված տասնհինգօրյա դրույքաչափերով և պետական բյուջե է վճարվում յուրաքանչյուր անգամ Հայաստանի Հանրապետություն մուտք գործելիս.

3) Հայաստանի Հանրապետության տարածքում տասնհինգ օրից ավելի գտնվելու դեպքում յուրաքանչյուր հաջորդ տասնհինգ օրվա կամ ավելի պակաս ժամկետի համար ճանապարհային հարկը հաշվարկվում է Օրենսգրքի 188-րդ հոդվածով սահմանված տասնհինգօրյա դրույքաչափերով և պետական բյուջե է վճարվում Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվելու (սույն մասի 2-րդ կետում նշված դեպքում՝ վերջին մուտքից հաշված) տասնհինգօրյա ժամկետը լրանալուց հետո՝ հինգ օրվա ընթացքում: Կատարված վճարումների անդորրագրերը (կամ վճարումը հավաստող այլ փաստաթղթերը) ճանապարհային հարկ վճարողները պահպանում են՝ հետագայում ճանապարհային հարկի վճարման փաստը հավաստելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետությունում չգրանցված (չհաշվառված) բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով Հայաստանի Հանրապետություն մուտք գործելիս մաքսային մարմինները ստուգում են ճանապարհային հարկ վճարողի կողմից ճանապարհային հարկի հաշվարկման ճշտությունը կամ ճանապարհային հարկի վճարման արտոնությունից օգտվելու իրավունքը, անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան ճշգրտումներից հետո ապահովելով ճանապարհային հարկի գումարի լրավճարումը: Սույն հոդվածի կիրառության իմաստով՝ ճանապարհային հարկի վճարումը հավաստող փաստաթղթեր են նաև՝

1) ԵՏՄ անդամ չհամարվող պետություններից տրանսպորտային միջոցների մուտքի դեպքում մաքսային հայտարարագիրը, որում արտացոլված է ճանապարհային հարկի վճարված գումարը.

2) ԵՏՄ անդամ պետություններից բեռնատար ավտոտրանսպորտային միջոցների մուտքի դեպքում սույն բաժնով սահմանված կարգով ու չափերով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ճանապարհային հարկի կատարված

վճարումների անդորրագրերը կամ պետական վճարումների էլեկտրոնային համակարգի կողմից գեներացված անդորրագիրը:

3. Հայաստանի Հանրապետությունում չգրանցված (չհաշվառված) բեռնատար ավտոտրանսպորտային միջոցների՝ Հայաստանի Հանրապետության տարածքից ելքի դեպքում մաքսային մարմինները ստուգում են սույն գլխին համապատասխան ճանապարհային հարկի հաշվարկված և վճարված լինելը կամ ճանապարհային հարկի վճարման արտոնությունից օգտվելու իրավունքը: Սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում նշված կարգով հաշվարկված ճանապարհային հարկի գումարից պակաս վճարումների դեպքում մաքսային մարմինները պակաս վճարված հարկի գումարը և հարկի վճարումն ուշացնելու համար Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված տույժերի գումարները գանձում են ավտոտրանսպորտային միջոցների ելքի ժամանակ՝ ճանապարհային հարկի վճարումը հավաստող անդորրագրերի և (կամ) տրանսպորտային միջոցների մաքսային հայտարարագրի վրա դնելով «ճանապարհային հարկը վճարված է մինչև.....» նշումով կնիք, որից հետո հայտարարագրերն ու անդորրագրերը Հայաստանի Հանրապետություն մուտք գործելիս, Հայաստանի Հանրապետության տարածքում կամ Հայաստանի Հանրապետությունից ելքի դեպքում չեն կարող օգտագործվել որպես ճանապարհային հարկի վճարումը հավաստող փաստաթուղթ:

4. Հայաստանի Հանրապետությունում չգրանցված (չհաշվառված) բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով Հայաստանի Հանրապետություն մուտք գործելիս և Հայաստանի Հանրապետությունից ելքի դեպքում մաքսային մարմիններին, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքում սահմանված կարգով պահանջի դեպքում ճանապարհային երթևեկության անվտանգության մարմնին ճանապարհային հարկ վճարողները ներկայացնում են ճանապարհային հարկի վճարումը հավաստող փաստաթղթերը կամ ճանապարհային հարկի արտոնություններից օգտվելու իրավունքը հավաստող՝ Օրենսգրքի 191-րդ հոդվածի 2-րդ մասում նշված համապատասխան փաստաթղթերը:

Հոդված 194. Հայաստանի Հանրապետությունում գրանցված (հաշվառված) բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար ճանապարհային հարկի հաշվարկման և վճարման կարգը

(հոդվածն ուժը կորցրել է 25.06.19 ՀՕ-68-Ն)

(25.06.19 ՀՕ-68-Ն օրենքի 71-րդ հոդվածի համաձայն՝ 194-րդ հոդվածի փոփոխությունը կիրառվում է նաև 2019 թվականի հաշվետու տարվա համար վճարման ենթակա ճանապարհային հարկի գծով հարկային պարտավորությունների նկատմամբ:)

Հոդված 195. Ավտոմոբիլային ճանապարհներին գովազդ տեղադրելու համար ճանապարհային հարկի հաշվարկման և վճարման կարգը

1. Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին գովազդ տեղադրելու համար ճանապարհային հարկը հաշվարկվում է ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին (այդ թվում՝ համայնքների վարչական սահմանների միջով անցնող տարանցիկ հատվածներում), ինչպես նաև այդ ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրված յուրաքանչյուր գովազդային վահանակի մակերեսի համար՝ Օրենսգրքի 190-րդ հոդվածով սահմանված տարեկան դրույքաչափերով, հետևյալ կարգով.

1) յուրաքանչյուր հաշվետու եռամսյակի համար ճանապարհային հարկը հաշվարկվում է գովազդային վահանակի ընդհանուր մակերեսի և Օրենսգրքի 190-րդ հոդվածով սահմանված համապատասխան տարեկան դրույքաչափի արտադրյալի մեկ քառորդի չափով, անկախ գովազդային վահանակի պաստառի առկայությունից (գովազդի տարածումը դադարեցնելու հանգամանքից) կամ դրա փոփոխությունից.

2) եթե գովազդային վահանակը տեղադրվում է հարկային տարվա ընթացքում, ապա ճանապարհային հարկի հաշվարկման պարտավորությունն առաջանում է գովազդային վահանակի տեղադրման շինմոնտաժային աշխատանքների արդյունքում սահմանված կարգով ճանապարհային մարմնի հետ տեխնիկական պայմանների համապատասխանության ակտը կազմելու օրվան հաջորդող օրվանից՝

ա. ակտը կազմելու օրն ընդգրկող հաշվետու եռամսյակի համար ճանապարհային հարկը հաշվարկվում է սույն մասի 1-ին կետում նշված կարգով՝ ակտը կազմելու օրվան հաջորդող օրվանից մինչև հաշվետու եռամսյակի ավարտն ընկած օրերի թվերին համամասնորեն,

բ. ակտը կազմելու օրն ընդգրկող հաշվետու եռամսյակին հաջորդող եռամսյակների համար, բացառությամբ սույն մասի 3-րդ կետով սահմանված դեպքերի, ճանապարհային հարկը հաշվարկվում է սույն մասի 1-ին կետով սահմանված կարգով.

3) եթե գովազդային վահանակը ապամոնտաժվում է հարկային տարվա ընթացքում, ապա՝

ա. ապամոնտաժման օրն ընդգրկող հաշվետու եռամսյակին նախորդող հաշվետու եռամսյակների համար ճանապարհային հարկը հաշվարկվում է սույն մասի 1-ին կետով սահմանված կարգով,

բ. ապամոնտաժման օրն ընդգրկող հաշվետու եռամսյակի համար ճանապարհային հարկը հաշվարկվում է սույն մասի 1-ին կետում նշված կարգով՝ եռամսյակի առաջին օրվանից մինչև ապամոնտաժման օրվան նախորդող օրն ընկած օրերի թվերին համամասնորեն,

գ. ապամոնտաժման օրն ընդգրկող հաշվետու եռամսյակին հաջորդող եռամսյակների համար ճանապարհային հարկ չի հաշվարկվում,

դ. տեխնիկական պայմանների համապատասխանության ակտը կազմելու հաշվետու եռամսյակի ընթացքում գովազդային վահանակի ապամոնտաժման դեպքում տվյալ հաշվետու եռամսյակի համար ճանապարհային հարկը հաշվարկվում է սույն մասի 1-ին կետով սահմանված կարգով՝ ակտը կազմելու օրվան հաջորդող օրվանից մինչև ապամոնտաժման օրվան նախորդող օրը ընկած օրերի թվին համամասնորեն:

2. Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին գովազդ տեղադրելու համար սույն հոդվածին համապատասխան յուրաքանչյուր հաշվետու եռամսյակի համար հաշվարկված ճանապարհային հարկի գումարները պետական բյուջե են վճարվում մինչև այդ հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ, որին հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պետական ճանապարհային մարմին են ներկայացվում վճարումը հավաստող անդորրագրի պատճենը կամ պետական վճարումների էլեկտրոնային համակարգի կողմից գեներացված անդորրագիրը, կամ պետական ճանապարհային մարմնի կողմից հաստատված կարգով ուղարկվող ծանուցման մեջ նշված գեներացված անդորրագրի 20-նիշանոց ծածկագիրը:

Գ Լ Ո Ւ Խ 39

ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՀԱՇՎԱՆՑՈՒՄԸ ԵՎ (ԿԱՄ) ՎԵՐԱԴԱՐՁԸ

Հոդված 196. Ճանապարհային հարկի գումարի հաշվանցումը և (կամ) վերադարձը

1. Օրենսգրքով սահմանված չափից ավելի վճարված ճանապարհային հարկի գումարների հաշվանցման և (կամ) վերադարձման կարգը սահմանում է Կառավարությունը:

(196-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Բ Ա Ժ Ի Ն 10

ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐԸ

Գ Լ Ո Ւ Խ 40

ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐԸ, ՎՃԱՐՈՂՆԵՐԸ ԵՎ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Հոդված 197. Բնօգտագործման վճարը

1. Բնօգտագործման վճարը պետական սեփականություն համարվող բնական պաշարների արդյունավետ և համալիր օգտագործման, ինչպես նաև բնական պաշարների օգտագործումը փոխհատուցելու նպատակով այդ պաշարների օգտագործման համար սույն բաժնին համապատասխան Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվող վճար է:

2. Սույն բաժնի կիրառության իմաստով՝ բնօգտագործման վճարի տեսակ է ռոյալթին, որը մետաղական օգտակար հանածոների օգտագործումը փոխհատուցելու նպատակով, ինչպես նաև մետաղական օգտակար հանածոների և դրանց կամ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի օտարումից ստացվող շահութաբերության համար, սույն բաժնին համապատասխան, Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվող վճար է:

(197-րդ հոդվածը լրաց. 21.12.17 ՀՕ-266-Ն)

Հոդված 198. Բնօգտագործման վճար վճարողները

1. Բնօգտագործման վճար վճարող են համարվում Օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ բնօգտագործման վճարի օբյեկտ համարվող գործունեություն և (կամ) գործառույթ իրականացնող՝ սույն հոդվածում նշված կազմակերպությունները և ֆիզիկական անձինք՝

1) մակերևութային ջրերի օգտագործման համար բնօգտագործման վճար վճարողներ են համարվում Հայաստանի Հանրապետության մակերևութային ջրային ռեսուրսների (գետեր, լճեր) ջրօգտագործողները.

2) ստորերկրյա քաղցրահամ և թերմալ ջրերի արդյունահանման համար բնօգտագործման վճար վճարողներ են համարվում Հայաստանի Հանրապետության ստորերկրյա (խորքային ոչ ճնշումային ու ճնշումային՝ արտեզյան և ամենամյա վերականգնվող) քաղցրահամ և թերմալ ջրային ռեսուրսներ արդյունահանողները.

3) ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման համար բնօգտագործման վճար վճարողներ են համարվում Հայաստանի Հանրապետության ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանում իրականացնող ընդերքօգտագործողները (այդ թվում՝ արտադրված ածխաթթու գազի համար).

4) աղի արդյունահանման համար բնօգտագործման վճար վճարողներ են համարվում Հայաստանի Հանրապետությունում աղի արդյունահանում իրականացնող ընդերքօգտագործողները.

5) պինդ ոչ մետաղական օգտակար հանածոների (բացառությամբ աղի) արդյունահանման համար բնօգտագործման վճար վճարողներ են համարվում Հայաստանի Հանրապետությունում պինդ ոչ մետաղական օգտակար հանածոների (բացառությամբ աղի) արդյունահանում իրականացնող ընդերքօգտագործողները.

6) կենսապաշարների օգտագործման համար բնօգտագործման վճար վճարողներ են համարվում Հայաստանի Հանրապետության բուսական և կենդանական աշխարհի օբյեկտ հանդիսացող կենսապաշարներն օգտագործողները.

7) սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ռոյալթի վճարողները:

2. Ռոյալթի վճարողներ են համարվում՝

1) Հայաստանի Հանրապետության մետաղական օգտակար հանածոների հանքավայրեր շահագործող և մետաղի խտանյութ (այսուհետ սույն բաժնում՝ խտանյութ) կամ ձուլվածք կամ հանքաքարի, խտանյութի, ձուլվածքի վերամշակման արդյունքում ցանկացած արտադրանք արտադրող հանդիսացող կազմակերպությունները.

2) Հայաստանի Հանրապետության մետաղական օգտակար հանածոների հանքավայրեր շահագործող և այդ հանքավայրերից արդյունահանված մետաղական օգտակար հանածոներից առանց խտանյութի ստացման ցանկացած արտադրանք արտադրող հանդիսացող կազմակերպությունները.

3) ընդերքօգտագործման թափոններից և (կամ) հանքաքարից մետաղի խտանյութ և (կամ) ձուլվածք կամ ընդերքօգտագործման թափոնների, հանքաքարի, խտանյութի, ձուլվածքի վերամշակման արդյունքում ցանկացած արտադրանք արտադրող հանդիսացող կազմակերպությունները՝ անկախ մետաղական օգտակար հանածոյի հանքավայր շահագործող հանդիսանալուց:

Հոդված 199. Կիրառվող հասկացությունները և լիազոր մարմինները

1. Հայաստանի Հանրապետության ջրային, ընդերքի մասին և անտառային օրենսգրքերում, «Ջրի ազգային ծրագրի մասին», «Բուսական աշխարհի մասին», «Կենդանական աշխարհի մասին», «Թափոնների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում և դրանց համապատասխան ընդունված իրավական ակտերում կիրառվող հասկացությունները սույն բաժնում կիրառվում են այդ իրավական ակտերում կիրառվող իմաստով ու նշանակությամբ, եթե սույն բաժնով այլ բան սահմանված չէ:

2. Օրենսգրքի 4-րդ հոդվածով սահմանված «լիազոր մարմին» հասկացությունը սույն բաժնի կիրառության իմաստով ունի հետևյալ նշանակությունը.

1) ընդերքօգտագործման լիազոր մարմին՝ ընդերքի օգտագործման և պահպանության պետական վերահսկողություն իրականացնող պետական կառավարման լիազոր մարմին.

2) բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին՝ ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառում, ինչպես նաև բնապահպանական օրենսդրության պահանջների պահպանման ու կատարման նկատմամբ օրենքներով սահմանված կարգով վարչարարության և ստուգման իրավասություն ունեցող ստորաբաժանում.

3) բնապահպանական մարմին՝ բնապահպանության, կենդանական և բուսական աշխարհի պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառներում պետական կառավարման լիազոր մարմին.

4) ***(կետն ուժը կորցրել է 21.12.17 ՀՕ-266-Ն)***

(199-րդ հոդվածը խմբ., փոփ. 21.12.17 ՀՕ-266-Ն)

Գ Լ ՈՒ Խ 41

ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐԻ ՕԲՅԵԿՏԸ, ԲԱԶԱՆ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Հոդված 200. Բնօգտագործման վճարի օբյեկտը

1. Բնօգտագործման վճարի օբյեկտներ են համարվում՝

1) մակերևութային ջրերի օգտագործումը.

2) ստորերկրյա քաղցրահամ և թերմալ ջրերի արդյունահանումը.

3) ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանումը (այդ թվում՝ ածխաթթու գազի արտադրությունը).

4) աղի արդյունահանումը.

5) պինդ ոչ մետաղական օգտակար հանածոների (բացառությամբ աղի) արդյունահանումը.

6) կենսապաշարների օգտագործումը.

7) ռոյալթիի օբյեկտը՝ արդյունահանված մետաղական օգտակար հանածոների կամ հանքաքարի կամ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման արդյունքում ստացված՝ Օրենսգրքի 202-րդ հոդվածով սահմանված արտադրանքի օտարումը:

Հոդված 201. Բնօգտագործման վճարի բազան

1. Բնօգտագործման վճարի բազա է համարվում բնօգտագործման վճարի օբյեկտի արժեքային կամ ֆիզիկական մեծությունը կամ այն բնութագրիչը, որի հիման վրա սույն բաժնով սահմանված դրույքաչափերով ու կարգով հաշվարկվում է բնօգտագործման վճարի գումարը: Մասնավորապես՝

1) մակերևութային ջրերի օգտագործման համար բնօգտագործման վճարի բազա է համարվում մակերևութային ջրային ռեսուրսներից ջրառի՝ բնական ջրաղբյուրներից օգտագործման նպատակով վերցրված ջրի փաստացի ծավալը.

2) ստորերկրյա քաղցրահամ և թերմալ ջրերի արդյունահանման համար բնօգտագործման վճարի բազա է համարվում ստորերկրյա (խորքային ոչ ճնշումային ու ճնշումային՝ արտեզյան և ամենամյա վերականգնվող) քաղցրահամ և թերմալ ջրային ռեսուրսներից օգտագործված (արդյունահանված) ջրի փաստացի ծավալը՝ հորատանցքից (աղբյուրից) երկրի մակերևույթ դուրս եկած (արտամղված) ջրի ծավալը.

3) ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման (այդ թվում՝ ածխաթթու գազի արտադրության) համար բնօգտագործման վճարի բազա է համարվում՝

ա. արդյունահանված հանքային ջրի փաստացի ծավալը՝ հորատանցքից (աղբյուրից) երկրի մակերևույթ դուրս եկած (արտամղված) ջրի ծավալը,

բ. եթե ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանմանը զուգահեռ իրականացվում է նաև ածխաթթու գազի արտադրություն, ապա ածխաթթու գազի արտադրության համար բնօգտագործման վճարի բազա է համարվում արտադրված ածխաթթու գազի փաստացի ծավալը.

4) աղի արդյունահանման համար բնօգտագործման վճարի բազա է համարվում արդյունահանված աղի փաստացի ծավալը.

5) պինդ ոչ մետաղական օգտակար հանածոների (բացառությամբ աղի) արդյունահանման համար բնօգտագործման վճարի բազա է համարվում օգտակար հանածոյի պաշարների մարված ծավալը (այսուհետ սույն բաժնում նաև՝ մարված պաշար)՝ օգտակար հանածոյի արդյունահանված և արդյունահանման ընթացքում ընդերքում կորսված պաշարների ծավալների հանրագումարը, բացառությամբ տեխնոլոգիական անխուսափելի կորուստների: Սույն կետի կիրառության իմաստով՝ տեխնոլոգիական անխուսափելի կորուստներ են համարվում պինդ ոչ մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման ընթացքում հանածոյի արդյունահանման նպատակով ընտրված տեխնոլոգիաների և համակարգերի կիրառման ժամանակ առաջացած օգտակար հանածոների կորուստները, որոնք ամրագրված են օգտակար հանածոների արդյունահանման նախագծում, և որոնց առավելագույն չափը չի կարող գերազանցել օգտակար հանածոների պաշարների գնահատման համար հիմք հանդիսացող երկրաբանատնտեսագիտական հիմնավորմամբ հաստատված տեխնոլոգիական կորուստների չափը.

6) կենսապաշարների օգտագործման համար բնօգտագործման վճարի բազա են համարվում բուսական և կենդանական աշխարհի օբյեկտ հանդիսացող՝ փաստացի օգտագործված կենսապաշարի ծավալը, քաշը կամ միավորը (հատը) կամ չափման այլ ֆիզիկական բնութագրիչը:

Հոդված 202. Ռոյալթիի բազան

1. Ռոյալթիի բազա է համարվում հաշվետու ժամանակաշրջանում մատակարարված խտանյութի, խտանյութի փոխարեն կամ առանց խտանյութի ստացման ձուլվածքի կամ ընդերքօգտագործման թափոնների, հանքաքարի, խտանյութի, ձուլվածքի վերամշակման արդյունքում ստացված ցանկացած վերջնական արտադրանքի (այսուհետ՝ սույն բաժնում խտանյութի հետ միասին՝ արտադրանք) իրացման շրջանառությունը:

2. Ռոյալթիի հաշվարկման համար իրացման շրջանառությունը որոշվում է հաշվեգրման եղանակով:

3. Ռոյալթի վճարողների կողմից խտանյութի իրացման շրջանառությունը հաշվարկվում է հետևյալ կարգով.

1) մատակարարված խտանյութի ֆիզիկական ծավալ է համարվում մատակարարի և գնորդի միջև կնքված՝ մատակարարման պայմանագրին համապատասխան որոշված (պայմանագրին համապատասխան կատարվող վերջնահաշվարկի արդյունքներով) մատակարարված խտանյութում մետաղների վերջնական պարունակությունը՝ արտահայտված կշռով (գրամներով կամ տոննաներով): Եթե մատակարարման պայմանագրին համապատասխան՝ խտանյութի մատակարարումը և վերջնահաշվարկը կատարվում են ռոյալթիի հաշվարկման տարբեր հաշվետու ժամանակաշրջաններում, ապա խտանյութի մատակարարման հաշվետու ժամանակաշրջանում իրացման

շրջանառության հաշվարկման համար որպես ֆիզիկական ծավալ հիմք է ընդունվում մատակարարման պահին պայմանագրով գործող պայմաններով (ըստ մատակարարի կողմից տրվող որակի նախնական հավաստագրերի և հաշվարկային փաստաթղթերի) մետաղների պարունակությունը՝ արտահայտված կշռով (գրամներով կամ տոննաներով).

2) որպես մատակարարված խտանյութի ֆիզիկական ծավալի գին՝ հիմք է ընդունվում մատակարարված խտանյութի համար մատակարարի և գնորդի միջև կնքված՝ խտանյութի մատակարարման պայմանագրին համապատասխան ըստ գնորոշման ժամանակահատվածի և գնանշումների (պայմանագրին համապատասխան կատարվող վերջնահաշվարկի արդյունքներով) որոշված պայմանագրի գինը: Եթե խտանյութի մատակարարման պայմանագրին համապատասխան՝ խտանյութի մատակարարումը և վերջնահաշվարկը կատարվում են ռոյալթիի հաշվարկման տարբեր հաշվետու ժամանակաշրջաններում, ապա խտանյութի մատակարարման հաշվետու ժամանակաշրջանում իրացման շրջանառության հաշվարկման համար, որպես ֆիզիկական ծավալի գին, հիմք է ընդունվում մատակարարման պահին պայմանագրով գործող պայմաններով որոշված պայմանագրի գինը՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) ռոյալթիի հաշվարկման հաշվետու ժամանակաշրջանում մատակարարված (անկախ մատակարարման պայմաններից) խտանյութի իրացման շրջանառություն է համարվում հաշվետու ժամանակաշրջանում մատակարարված ֆիզիկական ծավալի համար մատակարարի և գնորդի միջև կնքված արտադրանքի մատակարարման պայմանագրով որոշված (պայմանագրին համապատասխան կատարվող վերջնահաշվարկի արդյունքներով) պայմանագրի գինը՝ հիմք ընդունելով հետևյալը.

ա. ռոյալթիի հաշվարկման իմաստով խտանյութի մատակարարման պայմանագրի վերջնահաշվարկի արդյունքներով որոշված ֆիզիկական ծավալից մատակարարման պահին որոշված ծավալի բացասական շեղման առավելագույն չափ է համարվում մատակարարման պահին որոշված ծավալի երկու տոկոսը,

ա1. ռոյալթիի հաշվարկման իմաստով խտանյութի իրացման շրջանառությունը որոշելիս խտանյութի առանձին տեսակների համար վճարվող մետաղներ են համարվում՝

- պղնձի խտանյութերի դեպքում՝ պղինձը, ոսկին, արծաթը, ինչպես նաև խտանյութի վաճառքի պայմանագրի համաձայն վճարվող այլ մետաղներ,

- մոլիբդենի խտանյութի դեպքում՝ մոլիբդենը, ինչպես նաև խտանյութի վաճառքի պայմանագրի համաձայն վճարվող այլ մետաղներ,

- ցինկի խտանյութի դեպքում՝ ցինկը, ոսկին, արծաթը, ինչպես նաև խտանյութի վաճառքի պայմանագրի համաձայն վճարվող այլ մետաղներ,

- այլ խտանյութերի դեպքում՝ խտանյութի վաճառքի պայմանագրի համաձայն վճարվող մետաղները,

ա2. ռոյալթիի հաշվարկման իմաստով խտանյութի իրացման շրջանառությունը որոշելիս Կառավարությունը կարող է սահմանել՝

- վճարվող մետաղների համար գնորդի կողմից չվճարվող (նվազեցումների ենթակա) մասի առավելագույն սահմանաչափերը: Կառավարության կողմից սահմանված չլինելու դեպքում դրանք ընդունվում են պայմանագրով սահմանված չափով,

- մատակարարման պայմանագրով որոշված՝ վերամշակման, զտման կամ այլ համանման ծախսերի (ներառյալ՝ տրանսպորտային) առավելագույն սահմանաչափերը: Սահմանաչափերը հրապարակվում են՝ հիմնվելով մասնագիտացված միջազգային պարբերականների, այդ թվում՝ Վուդ Մակենզի (Wood Mackenzie), Մետալ Բյուլետին (Metal Bulletin) կամ համանման հեղինակությամբ միջազգային այլ պարբերականների կողմից մետաղական խտանյութերի վերամշակման և զտման ծախսերի վերաբերյալ հրապարակվող տվյալները՝ հղում կատարելով համապատասխան աղբյուրին: Կառավարության կողմից սահմանված չլինելու դեպքում դրանք ընդունվում են պայմանագրով սահմանված չափով,

բ. ռոյալթիի հաշվարկման իմաստով խտանյութի մատակարարման պահին կամ դրանից հետո արձանագրված՝ պայմանագրով նախատեսված ցուցանիշներից ավելի շեղումներով պայմանավորված իրացման շրջանառության նվազեցումները (այդ թվում՝ մատակարարված խտանյութում տեխնոլոգիական բարդություններ առաջացնող քիմիական տարրերի (տուգանային տարրերի) համար պայմանագրով նախատեսված չափից ավելի գների նվազեցումները, խոնավության համար պայմանագրով նախատեսված թույլատրելի ցուցանիշի խախտման դեպքում պայմանագրի գնի նվազեցումները) հաշվի չեն առնվում,

գ. եթե ռոյալթիի հաշվետու ժամանակաշրջանը ներառող յուրաքանչյուր ամսվա արդյունքներով ռոյալթիի իրացման շրջանառությունը 20 տոկոս կամ ավելի չափով ցածր է նույն ամսվա ընթացքում մատակարարված խտանյութում՝ սույն օրենսգրքով կամ մատակարարման պայմանագրով վճարվող հանդիսացող մետաղների վերջնական պարունակության և նույն մետաղների՝ տվյալ ամսվա միջազգային գների հիման վրա հաշվարկված իրացման շրջանառությունից, ապա այդ ամսվա համար իրացման շրջանառություն է համարվում մատակարարված խտանյութում՝ սույն օրենսգրքով կամ մատակարարման պայմանագրով վճարվող հանդիսացող մետաղների վերջնական պարունակության և նույն մետաղների՝ տվյալ ամսվա միջազգային միջին գների 80 տոկոսի արտադրյալը,

դ. խտանյութի մատակարարման պայմանագրերով նախատեսված՝ ռոյալթիի բազայի վերջնահաշվարկների արդյունքում ճշտումները կատարվում են, և դրանց արդյունքներն արտացոլվում են վերջնահաշվարկն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանում (արտացոլվում են այդ հաշվետու ժամանակաշրջանի ռոյալթիների հարկային հաշվարկներում):

4. Ռոյալթի վճարողի կողմից ձուլվածքի իրացման շրջանառությունը հաշվարկվում է հետևյալ կարգով.

1) ձուլվածքի ֆիզիկական ծավալ է համարվում մատակարարի և գնորդի միջև կնքված ձուլվածքի մատակարարման պայմանագրին համապատասխան, հաշվետու ժամանակաշրջանում մատակարարված ձուլվածքի կշիռը՝ արտահայտված գրամներով կամ տոննաներով.

2) հաշվետու ժամանակաշրջանում մատակարարված ձուլվածքի համար օգտագործված խտանյութի հաշվարկային մեծություն (խտանյութի ֆիզիկական ծավալ) է համարվում ձուլվածքի կշռի միավորի արտադրության համար փաստացի օգտագործված՝ տեխնոլոգիապես հիմնավորված խտանյութի ֆիզիկական ծավալը՝ խտանյութում մետաղների վերջնական պարունակությունն արտահայտված կշռով (գրամներով կամ տոննաներով).

3) ձուլվածքի իրացման շրջանառությունը հաշվարկվում է՝ ելնելով մատակարարված ձուլվածքին համապատասխան օգտագործված խտանյութի ֆիզիկական ծավալից, կիրառելով խտանյութում պարունակվող մետաղների միջազգային միջին գները:

5. Ռոյալթի վճարողի կողմից խտանյութի, ձուլվածքի վերամշակման արդյունքում ստացված ցանկացած վերջնական արտադրանքի իրացման շրջանառությունը հաշվարկվում է հետևյալ կարգով.

1) վերջնական արտադրանքի ֆիզիկական ծավալ է համարվում մատակարարի և գնորդի միջև կնքված՝ արտադրանքի մատակարարման պայմանագրին համապատասխան մատակարարված արտադրանքի արտադրության համար ծախսված բոլոր մետաղների կշիռը՝ արտահայտված գրամներով կամ տոննաներով.

2) վերջնական արտադրանքում յուրաքանչյուր մետաղի համար ռոյալթիի հաշվարկման իմաստով հիմք է ընդունվում տվյալ մետաղի խտանյութի ֆիզիկական ծավալի (խտանյութում մետաղների վերջնական պարունակությունն արտահայտված կշռով (գրամներով կամ տոննաներով) տեխնոլոգիապես հիմնավորված այն հաշվարկային մեծությունը, որը ծախսվել է հաշվետու ժամանակաշրջանում մատակարարված արտադրանքում պարունակվող տվյալ ծավալի մետաղի ստացման համար.

3) վերջնական արտադրանքի իրացման շրջանառությունը հաշվարկվում է՝ ելնելով մատակարարված վերջնական արտադրանքին համապատասխան օգտագործված խտանյութի ֆիզիկական ծավալից, կիրառելով խտանյութում պարունակվող մետաղների միջազգային միջին գները:

6. Իրացման շրջանառության որոշման նպատակով, առանց խտանյութի ստացման հանքաքարի վերամշակումից հետո ստացվող ցանկացած արտադրանքի ֆիզիկական ծավալ է համարվում դրանում պարունակվող մետաղի փաստացի քանակությունը՝ գրամներով կամ տոննաներով: Սույն մասով սահմանված արտադրանքի օտարման դեպքում իրացման շրջանառությունը հաշվարկվում է՝ ելնելով մետաղների վերջնական պարունակությունից (արտահայտված կշռով (գրամներով կամ տոննաներով), կիրառելով մետաղների միջազգային միջին գները:

7. Սույն օրենքի կիրառության իմաստով՝ մետաղի միջազգային միջին գին է համարվում ֆինանսների բնագավառում Կառավարության լիազոր մարմնի կողմից Լոնդոնի մետաղների բորսայի, իսկ նշված աղբյուրի կողմից որևէ մետաղի վերաբերյալ տվյալներ չհրապարակվելու դեպքում՝ համանման միջազգային այլ հեղինակավոր աղբյուրի տվյալների հիման վրա յուրաքանչյուր ամսվա համար հրապարակված գինը (հրապարակելով նաև աղբյուրի վերաբերյալ տեղեկությունները):

(202-րդ հոդվածը լրաց., խմբ. 01.03.17 ՀՕ-79-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Հոդված 203. Բնօգտագործման վճարի բազայի չափաքանակները

1. Բնօգտագործման վճարի հաշվարկման և դրույքաչափերի կիրառության համար սահմանվում են բնօգտագործման վճարի բազայի հետևյալ չափաքանակները.

1) մակերևութային ջրերի օգտագործման համար՝ Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի համաձայն տրամադրված ջրօգտագործման թույլտվություններով սահմանված ջրօգտագործման (մակերևութային ջրերի ջրառի) ծավալները.

2) ստորերկրյա քաղցրահամ և թերմալ ջրերի արդյունահանման համար՝ Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի համաձայն տրամադրված ջրօգտագործման թույլտվություններով սահմանված ստորերկրյա քաղցրահամ և թերմալ ջրերի արդյունահանման ծավալները.

3) ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանված (այդ թվում՝ ածխաթթու գազի արտադրված) պաշարների, ինչպես նաև աղի արդյունահանված պաշարների համար՝ Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի համաձայն, հանքարդյունահանման նպատակով կնքված ընդերքօգտագործման պայմանագրով նախատեսված օգտակար հանածոների արդյունահանման ծավալները.

4) պինդ ոչ մետաղական օգտակար հանածոների մարված պաշարների համար՝ Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի համաձայն ընդերքօգտագործողի և լիազոր մարմնի միջև կնքված ընդերքօգտագործման պայմանագրով նախատեսված օգտակար հանածոների մարման ընդհանուր ծավալների շրջանակներում համապատասխան հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված՝ բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարի միասնական հարկային հաշվարկներում արտացոլված՝ փաստացի մարված ծավալները: Ընդերքօգտագործման պայմանագրով նախատեսված օգտակար հանածոների մարման ընդհանուր ծավալները գերազանցելու հաշվետու ժամանակաշրջանից սկսած մինչև պայմանագրով օգտակար հանածոների մարման ընդհանուր ծավալների

փոփոխությունը՝ բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարի միասնական հարկային հաշվարկներում արտացոլված՝ պայմանագրով նախատեսված օգտակար հանածոների մարման ընդհանուր ծավալները գերազանցող փաստացի մարված ծավալները համարվում են չափաքանակները գերազանցող ծավալներ.

5) կենսապաշարների օգտագործման համար՝

ա. բնափայտի և երկրորդական անտառանյութի օգտագործման համար՝ Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքի համաձայն կնքված անտառօգտագործման պայմանագրերով (այդ թվում՝ անտառահատման, անտառային տոմսերով, արմատի վրա բնափայտի մանր բացթողնման օրդերներով) սահմանված բնափայտի և երկրորդական անտառանյութի օգտագործման (մթերման) ծավալները,

բ. բուսական աշխարհի օբյեկտ հանդիսացող կենսապաշարների (բացառությամբ բնափայտի և երկրորդական անտառանյութի) օգտագործման համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն լիազոր մարմնի կողմից տրված բուսական պաշարների օգտագործման թույլտվություններով կամ լիցենզիաներով սահմանված բուսական պաշարների օգտագործման (մթերման, հավաքի, անասունների արածեցման և այլ տեսակների) ծավալները,

գ. կենդանական աշխարհի օբյեկտ հանդիսացող կենսապաշարների օգտագործման համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն լիազոր մարմնի կողմից կնքված կենդանական պաշարների օգտագործման պայմանագրերով և լիցենզիայով սահմանված կենսապաշարների օգտագործման ծավալները:

2. Բնօգտագործման վճարի հաշվարկման և դրույքաչափերի կիրառության համար բնօգտագործման վճարի բազայի չափաքանակները համարվում են զրոյական հետևյալ դեպքերում.

1) մակերևութային ջրերի օգտագործման համար՝ Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքին համապատասխան ջրօգտագործման թույլտվություններ չունենալը կամ ջրօգտագործման թույլտվություններում մակերևութային ջրերի ջրառի ծավալները նշված չլինելը.

2) ստորերկրյա քաղցրահամ և թերմալ ջրերի արդյունահանման համար՝ Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքին համապատասխան ջրօգտագործման թույլտվություններ չունենալը կամ ջրօգտագործման թույլտվություններում ստորերկրյա քաղցրահամ և թերմալ ջրերի արդյունահանման ծավալները նշված չլինելը.

3) Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքին համապատասխան՝ պինդ ոչ մետաղական օգտակար հանածոների (այդ թվում՝ աղի) և ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման ընդերքօգտագործման պայմանագիր չունենալը կամ պայմանագրում մարման կամ արդյունահանման ենթակա ծավալները նշված չլինելը.

4) Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքի համաձայն՝ բնափայտի և երկրորդական անտառանյութի օգտագործման (մթերման) համար անտառօգտագործման պայմանագիր (այդ թվում՝ անտառահատման, անտառային տոմսեր, արմատի վրա բնափայտի մանր բացթողնման օրդեր) չունենալը.

5) Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ կենսապաշարների (բացառությամբ բնափայտի և երկրորդական անտառանյութի) օգտագործման պայմանագիր չունենալը կամ պայմանագրում օգտագործման ենթակա ծավալները նշված չլինելը:

Հոդված 204. Մակերևութային ջրերի օգտագործման համար բնօգտագործման վճարի դրույքաչափերը

1. Մակերևութային (բացառությամբ Սևանա լճի) ջրերի օգտագործման համար բնօգտագործման վճարը հաշվարկվում է բնօգտագործման վճարի բազայի նկատմամբ հետևյալ դրույքաչափերով (հաշվի առնելով սույն հոդվածի 5-րդ մասի դրույթները).

Մակերևութային ջրերի օգտագործման նպատակը (նշանակությունը)	Դրույքաչափը՝ հաշվետու ժամանակաշրջանում օգտագործված յուրաքանչյուր խորանարդ մետրի համար (դրամ)
Ձկնատնտեսական նպատակով	1
Արդյունաբերական նպատակներով	0.5
Խմելու-կենցաղային նպատակներով, բացառությամբ 4-րդ կետում նշված դեպքի	0.5

Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող կազմակերպությունների ու տեղական ինքնակառավարման մարմինների համար	0.025
Ոռոգման նպատակով	0

2. Սևանա լճից ջրօգտագործման համար բնօգտագործման վճարը հաշվարկվում է բնօգտագործման վճարի բազայի նկատմամբ հետևյալ դրույքաչափերով (հաշվի առնելով նաև սույն հոդվածի 5-րդ մասի դրույթները).

Մակերևութային ջրերի օգտագործման նպատակը	Դրույքաչափը՝ հաշվետու ժամանակաշրջանում օգտագործված յուրաքանչյուր խորանարդ մետրի համար (դրամ)
Ոռոգման նպատակով	0.2
Այլ նպատակներով	1.5

3. Օրենսգրքի 203-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ բնօգտագործման վճարի բազայի չափաքանակները գերազանցելու դեպքում սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված յուրաքանչյուր նպատակով ջրօգտագործման՝ չափաքանակները գերազանցող փաստացի օգտագործված ջրի ծավալների համար, որպես դրույքաչափ, կիրառվում է նույն մասերով սահմանված դրույքաչափերի եռապատիկ մեծությունը:

4. Օրենսգրքի 203-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ բնօգտագործման վճարի բազայի զրոյական չափաքանակների դեպքում սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված յուրաքանչյուր նպատակով փաստացի օգտագործված ջրի ծավալների համար, որպես դրույքաչափ, կիրառվում է նույն մասերով սահմանված դրույքաչափի՝

1) տասնապատիկը՝ Հայաստանի Հանրապետության Արարատի և Արմավիրի մարզերում.

2) հնգապատիկը՝ Հայաստանի Հանրապետության մյուս տարածքներում:

5. 2018 թվականի հունվարի 1-ից մակերևութային ջրերի օգտագործման համար կիրառվող բնօգտագործման վճարի դրույքաչափերը որոշվում են որպես սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված դրույքաչափերի և 1.1 գործակցի արտադրյալ, 2019 թվականի հունվարի 1-ից՝ որպես սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված դրույքաչափերի և 1.2 գործակցի արտադրյալ, իսկ 2020 թվականի հունվարի 1-ից՝ որպես սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված դրույքաչափերի և 1.3 գործակցի արտադրյալ:

Հոդված 205. Ստորերկրյա քաղցրահամ և թերմալ ջրերի արդյունահանման համար բնօգտագործման վճարի դրույքաչափերը

1. Խմելու համար պիտանի ստորերկրյա քաղցրահամ ջրերի արդյունահանման համար բնօգտագործման վճարը հաշվարկվում է բնօգտագործման վճարի բազայի նկատմամբ հետևյալ դրույքաչափերով (հաշվի առնելով սույն հոդվածի 6-րդ մասի դրույթները).

Խմելու համար պիտանի ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակը (նշանակությունը)	Դրույքաչափը՝ հաշվետու ժամանակաշրջանում արդյունահանված յուրաքանչյուր խորանարդ մետրի համար (դրամ)
Ցանկացած նպատակներով, բացառությամբ 2-րդ կետում նշված դեպքի	1.0

Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող կազմակերպությունների ու տեղական ինքնակառավարման մարմինների համար	0.05

2. Խմելու համար ոչ պիտանի ստորերկրյա քաղցրահամ ջրերի՝ ոռոգման նպատակից տարբերվող ցանկացած նպատակով հաշվետու ժամանակաշրջանում արդյունահանված յուրաքանչյուր խորանարդ մետրի համար բնօգտագործման վճարը հաշվարկվում է 1.0 դրամ դրույքաչափով (հաշվի առնելով նաև սույն հոդվածի 6-րդ մասի դրույթները):

3. Ռեկրեացիոն (այդ թվում՝ հանգստի նպատակով լողավազաններում օգտագործելու) նպատակով ստորերկրյա թերմալ ջրերի՝ հաշվետու ժամանակաշրջանում արդյունահանված յուրաքանչյուր խորանարդ մետրի համար բնօգտագործման վճարը հաշվարկվում է 50 դրամ դրույքաչափով (հաշվի առնելով նաև սույն հոդվածի 6-րդ մասի դրույթները):

4. Օրենսգրքի 203-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ բնօգտագործման վճարի բազայի չափաքանակները գերազանցելու դեպքում սույն հոդվածի 1-3-րդ մասերով սահմանված յուրաքանչյուր նպատակով արդյունահանման չափաքանակները գերազանցող փաստացի արդյունահանված ջրի ծավալների համար որպես դրույքաչափեր կիրառվում են նույն մասերով սահմանված դրույքաչափերի եռապատիկ մեծությունը:

5. Օրենսգրքի 203-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ բնօգտագործման վճարի բազայի զրոյական չափաքանակների դեպքում սույն հոդվածի 1-3-րդ մասերով սահմանված յուրաքանչյուր նպատակով փաստացի արդյունահանված ջրի ծավալների համար որպես դրույքաչափ կիրառվում է նույն մասերով սահմանված դրույքաչափերի՝

1) տասնապատիկը՝ Հայաստանի Հանրապետության Արարատի և Արմավիրի մարզերում.

2) հնգապատիկը՝ Հայաստանի Հանրապետության մյուս տարածքներում:

6. 2018 թվականի հունվարի 1-ից ստորերկրյա քաղցրահամ և թերմալ ջրերի օգտագործման համար կիրառվող բնօգտագործման վճարի դրույքաչափերը որոշվում են որպես սույն հոդվածի 1-3-րդ մասերով սահմանված դրույքաչափերի և 1.1 գործակցի արտադրյալ, 2019 թվականի հունվարի 1-ից՝ որպես սույն հոդվածի 1-3-րդ մասերով սահմանված դրույքաչափերի և 1.2 գործակցի արտադրյալ, իսկ 2020 թվականի հունվարի 1-ից՝ որպես սույն հոդվածի 1-3-րդ մասերով սահմանված դրույքաչափերի և 1.3 գործակցի արտադրյալ:

Հոդված 206. Ստորերկրյա հանքային ջրերի և աղի արդյունահանման համար բնօգտագործման վճարի դրույքաչափերը

1. Ստորերկրյա հանքային ջրի արդյունահանված պաշարների համար բնօգտագործման վճարը հաշվարկվում է բնօգտագործման վճարի բազայի նկատմամբ հետևյալ դրույքաչափերով (հաշվի առնելով սույն հոդվածի 6-րդ մասի դրույթները).

Հանքային ջրի արդյունահանման նպատակը (նշանակությունը)	Դրույքաչափը՝ հաշվետու ժամանակաշրջանում արդյունահանված յուրաքանչյուր խորանարդ մետրի համար (դրամ)
Արդյունաբերական նպատակով	5650
Բուժական նպատակով, այդ թվում՝	
ա. բալնեոբուժման (լոգանքներ, ցնցուղ, հիդրոմերսում, հոգնա, խմելու միջոցով և այլն) համար՝	300
բ. ըմպելասրահներում օգտագործման համար՝	0

Ածխաթթու գազ ստանալու նպատակով	230
Ռեկրեացիոն (այդ թվում՝ հանգստի նպատակով լողավազաններում օգտագործելու) նպատակով	75

2. Արտադրված ածխաթթու գազի համար բնօգտագործման վճարը հաշվարկվում է բնօգտագործման վճարի բազայի նկատմամբ հետևյալ դրույքաչափերով (հաշվի առնելով նաև սույն հոդվածի 6-րդ մասի դրույթները).

Հանքավայր	Դրույքաչափը՝ արտադրված ածխաթթու գազի յուրաքանչյուր խորանարդ մետրի համար (դրամ)
«Ջերմուկ» հանքավայր	60
«Արզնի» հանքավայր	70
«Հանքավան» հանքավայր	60
«Բջնի» հանքավայր	55
«Լիճք» հանքավայր	45
«Սոլակ» հանքավայր	45
«Քարաշամբ» հանքավայր	60
«Արզական» հանքավայր	115
«Սայաթ-Նովա» հանքավայր	115
Այլ հանքավայրեր	45

3. Աղի արդյունահանման համար բնօգտագործման վճարը հաշվարկվում է բնօգտագործման վճարի բազայի նկատմամբ հետևյալ դրույքաչափերով (հաշվի առնելով նաև սույն հոդվածի 6-րդ մասի դրույթները).

Արդյունահանման ձևը	Դրույքաչափը՝ արդյունահանված յուրաքանչյուր տոննայի համար (դրամ)
Քարաղի տեսքով	660
Աղաջրի տեսքով	70

4. Օրենսգրքի 203-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ բնօգտագործման վճարի բազայի չափաքանակները գերազանցելու դեպքում սույն հոդվածի 1-3-րդ մասերով սահմանված յուրաքանչյուր նպատակով արդյունահանման (արտադրության) չափաքանակները գերազանցող փաստացի արդյունահանված (արտադրված) ծավալների համար որպես դրույքաչափ կիրառվում է նույն մասերով սահմանված դրույքաչափերի եռապատիկ մեծությունը:

5. Օրենսգրքի 203-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ բնօգտագործման վճարի բազայի զրոյական չափաքանակների դեպքում սույն հոդվածի 1-3-րդ մասերով սահմանված յուրաքանչյուր նպատակով փաստացի արդյունահանված (արտադրված) ծավալների համար որպես դրույքաչափ կիրառվում է նույն մասերով սահմանված դրույքաչափերի հնգապատիկ մեծությունը:

6. 2018 թվականի հունվարի 1-ից ստորերկրյա հանքային ջրերի ու աղի արդյունահանման համար կիրառվող բնօգտագործման վճարի դրույքաչափերը որոշվում են որպես սույն հոդվածի 1-3-րդ մասերով սահմանված դրույքաչափերի և 1.1 գործակցի արտադրյալ, 2019 թվականի հունվարի 1-ից՝ որպես սույն հոդվածի 1-3-րդ մասերով սահմանված դրույքաչափերի և 1.2 գործակցի արտադրյալ, իսկ 2020 թվականի հունվարի 1-ից՝ որպես սույն հոդվածի 1-3-րդ մասերով սահմանված դրույքաչափերի և 1.3 գործակցի արտադրյալ:

Հոդված 207. Պինդ ոչ մետաղական օգտակար հանածոների (բացառությամբ աղի) արդյունահանման համար բնօգտագործման վճարի դրույքաչափերը

1. Պինդ ոչ մետաղական օգտակար հանածոների (բացառությամբ աղի) արդյունահանման համար բնօգտագործման վճարը հաշվարկվում է բնօգտագործման վճարի բազայի նկատմամբ հետևյալ դրույքաչափերով (հաշվի առնելով սույն հոդվածի 4-րդ մասի դրույթները).

1) վառելիքաէներգետիկ հումքի մարված պաշարների յուրաքանչյուր տոննայի համար՝

ա. բնօգտագործման վճարի դրույքաչափեր.

Օգտակար հանածոյի տեսակը	Դրույքաչափը (%)
Ածուխ	5
Տորֆ	3
Այրվող թերթաքարեր	3

բ. բնօգտագործման վճարի հաստատագրված դրույքաչափեր.

Օգտակար հանածոյի տեսակը	Դրույքաչափը (դրամ)
Ածուխ	1200
Տորֆ	600
Այրվող թերթաքարեր	450

2) շինանյութերի արտադրության հումքի մարված պաշարների յուրաքանչյուր խորանարդ մետրի համար՝

ա. բնօգտագործման վճարի դրույքաչափեր.

Օգտակար հանածոյի տեսակը	Դրույքաչափը (%)
Ցեմենտի հումք (կավեր, կրաքարեր, տրավերտիններ, կվարցիտներ, մագնեզիումասիլիկատային ապարներ, տրակտոլիտ-պերիդոտիտային ապարներ)	6
Կրաքար (կիր ստանալու համար)	3

Կավեր	4
Բնական հանքային ներկեր	4
Գիպսատար կավեր	4

բ. բնօգտագործման վճարի հաստատագրված դրույքաչափեր.

Օգտակար հանածոյի տեսակը	Դրույքաչափը (դրամ)
Ցեմենտի հումք՝ կավեր, կրաքարեր, տրավերտիններ, կվարցիտներ	360
Ցեմենտի հումք՝ մագնեզիումասիլիկատային ապարներ, տրակտոլիտ-պերիդոտիտային ապարներ	150
Կրաքար (կիր ստանալու համար)	112
Կավեր	90
Գիպսատար կավեր	900
Բնական հանքային ներկեր	4500

3) գունագեղ քարերի մարված պաշարների յուրաքանչյուր կիլոգրամի համար՝
ա. բնօգտագործման վճարի դրույքաչափեր.

Օգտակար հանածոյի տեսակը	Դրույքաչափը (%)
Ագաթ	6
Փիրուզ	6
Վանակատ (ծիածանվող օբսիդիան)	6
Հասպիս	6
Օնիքսանման մարմար	5
Լիստվենիտ	5
Վանակատ (օբսիդիան)	7

բ. բնօգտագործման վճարի հաստատագրված դրույքաչափեր.

Օգտակար հանածոյի տեսակը	Դրույքաչափը (դրամ)	
Վանակատ (օբսիդիան)	22	
Լիստվենիտ	2250	
Օնիքսանման մարմար	մենաքարը, երեսապատման քարը	լցանյութը, խճաքարը՝ որպես արհեստագործական քարերի հումք
	135	22

4) մետաղագործական, քիմիական, թեթև և արդյունաբերության այլ ճյուղերի հումքի մարված պաշարների յուրաքանչյուր միավորի համար՝

ա. բնօգտագործման վճարի դրույքաչափեր.

Օգտակար հանածոյի տեսակը (չափի միավորը)	Դրույքաչափը (%)
Յեռլիտ (խոր.մ)	5
Պեռլիտ (խոր.մ)	6
Դիատոմիտ (խոր.մ)	6
Բենտոնիտ (տոննա)	4
Դունիտ և պերիդոտիտ, մագնեզիումասիլիկատային ապարներ, տրակտոլիտ-պերիդոտիտային ապարներ (տոննա)	4
Հրակայուն կավեր (տոննա)	4
Անդեզիտ, անդեզիտաբազալտ (թթվակայուն հումք) (տոննա)	4
Ծծումբ (տոննա)	3
Կվարցիտ (ապակու հումք, ֆլյուս) (տոննա)	3
Դոլոմիտ (տոննա)	3.5
Բարիտ (տոննա)	5

բ. բնօգտագործման վճարի հաստատագրված դրույքաչափեր.

Օգտակար հանածոյի անվանումը	Չափի միավորը	Դրույքաչափը (դրամ)
Անդեզիտ, անդեզիտաբազալտ (թթվակայուն հումք), ռիոլիտ դացիտային տուֆ	տ	90
Բարիտ	տ	180
Բենտոնիտ	տ	1650
Դիատոմիտ	խոր. մ	1150
Դոլոմիտ	տ	180
Դունիտ և պերիդոտիտ	տ	450
Մագնեզիումասիլիկատային ապարներ	տ	150
Կվարցիտ (ապակու հումք, ֆլյուս)	տ	1600
Հրակայուն կավեր	տ	230
Պեռլիտ	խոր. մ	2050
Ցեոլիտ	խոր. մ	1800
Հղկանյութեր	կգ	23

5) երեսապատման քարերի մարված պաշարների յուրաքանչյուր խորանարդ մետրի համար բնօգտագործման վճարի դրույքաչափեր՝

Օգտակար հանածոյի տեսակը	Դրույքաչափը (%)
Տուֆ	5
Ֆելզիտային տուֆ (այդ թվում՝ դեկորատիվ)	6
Գրանիտ (գրանոդիորիտ, գրանոսիենիտ)	7
Մարմար, մարմարացված կրաքարեր	5
Դեկորատիվ մարմար	6

Կոնգլոմերատներ և կոնգլոբրեկչիաներ	7
Տրավերտին	6
Բազալտ	4.5
Հիալոբազալտ	6

6) շինարարական քարերի մարված պաշարների յուրաքանչյուր խորանարդ մետրի համար բնօգտագործման վճարի դրույքաչափեր՝

Օգտակար հանածոյի տեսակը	Դրույքաչափը (%)
Տուֆ	4
Տուֆաավազաքարեր	3.5
Բազալտ	3.5
Անդեզիտ, անդեզիտաբազալտ և այլն	3.5
Պրոֆիրիտ	3
Կրաքար	3.5

7) լցանյութերի և բալաստային հումքի մարված պաշարների յուրաքանչյուր խորանարդ մետրի համար բնօգտագործման վճարի դրույքաչափեր՝

Օգտակար հանածոյի տեսակը	Դրույքաչափը (%)
Հրաբխային խարամ	3
Պեմզա	4
Ավազախճաքարային խառնուրդ (ավազ, խիճ և այլն)	3
Բալաստային հումք (պորֆիրիտ, բազալտ, անդեզիտաբազալտ, լիպարիտ և այլն)	3

8) երեսապատման քարերի, շինարարական քարերի, լցանյութի և բալաստային հումքի մարված պաշարների յուրաքանչյուր խորանարդ մետրի համար բնօգտագործման վճարի հաստատագրված դրույքաչափեր՝

Օգտակար հանածոյի անվանումը	Մարված պաշարից երեսապատման քարի, շինաքարի ելքը (տոկոս)	Դրույքաչափը (դրամ)		
		երեսապատման քարը	շինաքարը	լցանյութը և բալաստային հումքը
Անդեզիտաբազալտ, անդեզիտ, բազալտ, հիալոբազալտ, դոլերիտային բազալտ, լիպարիտ և նմանատիպ այլ տարատեսակներ	մինչև 30	1125	450	135
	30-40	1350	630	
	40-50	1575	720	
	50-ից ավելի	1800	900	
Գաբբրոներ, գրանիտներ, տուֆաավազաքարեր, մոնցոնիտներ, գրանոդիորիտներ, գրանոսիենիտներ և նմանատիպ այլ տարատեսակներ	մինչև 30	3150	-	180
	30-40	4500	-	
	40-50	5850	-	
	50-ից ավելի	6750	-	
Կոնգլոմերատներ, կոնգլոբրեկչիաներ և նմանատիպ այլ տարատեսակներ	մինչև 20	3600	-	-
	20-30	4500	-	
	30-40	5400	-	
	40-ից ավելի	6300	-	
Մարմարներ, մարմարացված կրաքարեր, դիաբազային պորֆիրիտներ, դիաբազներ, պորֆիրիտներ և նմանատիպ այլ տարատեսակներ	մինչև 20	2700	-	1350
	20-30	3600	-	
	30-40	4500	-	
	40-ից ավելի	5400	-	
Տուֆեր, կրաքար և նմանատիպ այլ տարատեսակներ	մինչև 30	900	315	90
	30-40	1125	450	
	40-50	1350	585	

	50-ից ավելի	1575	675	
Ֆելզիտային տուֆեր, տրավերտիններ, տուֆաբրեկչիաներ, չհղկվող տուֆաավազաքարեր և նմանատիպ այլ տարատեսակներ	մինչև 30	2025	675	90
	30-40	2250	900	
	40-50	2475	1125	
	50-ից ավելի	2700	1350	
Հրաբխային խարամ և նմանատիպ այլ տարատեսակներ		-	-	135
Պեմզաներ, պեռլիտներ և նմանատիպ այլ տարատեսակներ		-	-	157
Ավազակոպճային, ավազակոպճագլաքարային խառնուրդներ և նմանատիպ այլ տարատեսակներ		-	-	157

2. Օրենսգրքի 203-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ բնօգտագործման վճարի բազայի չափաքանակները գերազանցելու դեպքում սույն հոդվածի 1-ին մասով սահմանված օգտակար հանածոյի յուրաքանչյուր տեսակի համար փաստացի մարված պաշարների՝ չափաքանակները գերազանցող ծավալների համար որպես դրույքաչափ կիրառվում է նույն մասերով սահմանված դրույքաչափերի ինգապատիկ մեծությունը:

3. Օրենսգրքի 203-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ բնօգտագործման վճարի բազայի զրոյական չափաքանակների դեպքում սույն հոդվածի 1-ին մասով սահմանված օգտակար հանածոյի յուրաքանչյուր տեսակի համար փաստացի մարված պաշարների ամբողջ ծավալների համար որպես դրույքաչափ կիրառվում է նույն մասերով սահմանված դրույքաչափերի ինգապատիկ մեծությունը:

4. 2018 թվականի հունվարի 1-ից պինդ ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման համար կիրառվող բնօգտագործման վճարի հաստատուն դրույքաչափերը որոշվում են որպես սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հաստատուն դրույքաչափերի և 1.1 գործակցի արտադրյալ, 2019 թվականի հունվարի 1-ից՝ որպես սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հաստատուն դրույքաչափերի և 1.2 գործակցի արտադրյալ, իսկ 2020 թվականի հունվարի 1-ից՝ որպես սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հաստատուն դրույքաչափերի և 1.3 գործակցի արտադրյալ:

(207-րդ հոդվածը լրաց. 25.10.17 ՀՕ-191-Ն, փոփ. 21.12.17 ՀՕ-266-Ն)

Հոդված 208. Կենսապաշարների օգտագործման համար բնօգտագործման վճարի դրույքաչափերը

1. Բուսական աշխարհի օբյեկտ հանդիսացող կենսապաշարների օգտագործման համար բնօգտագործման վճարը հաշվարկվում է բնօգտագործման վճարի բազայի նկատմամբ՝ հետևյալ դրույքաչափերով (հաշվի առնելով սույն հոդվածի 7-րդ մասի դրույթները).

1) բնափայտի և երկրորդական անտառանյութի օգտագործման (մթերման) դեպքում ծառի տեսակի յուրաքանչյուր խորանարդ մետրի օգտագործման համար՝

Անտառային ծառատեսակները	Հեռավո-ությունը (կմ)	Դրույքաչափը (դրամ)

		Շինափայտ առանց կեղևի՝ ըստ ծառաբնի կտրվածքի (սմ)			տեխնոլոգիական փայտ (1 մետր երկարությամբ՝ կեղևով)	վառելափայտ (1 մետր երկարությամբ՝ կեղևով)
		25-ից ավելի	13-25-ը ներառյալ	3-13-ը ներառյալ		
Կաղնի, հացենի, թխկի, թեղի	մինչև 10-ը ներառյալ	5700	5250	4380	2600	700
	10-25-ը ներառյալ	4390	4040	3370	2040	630
	25-40-ը ներառյալ	3990	3670	3070	1670	560
	40-ից ավելի	3420	3150	2630	1300	420
Սոճենի, լորենի	մինչև 10-ը ներառյալ	3300	3000	2540	1200	700
	10-25-ը ներառյալ	2540	2310	1950	1060	630
	25-40-ը ներառյալ	2310	2100	1780	930	560
	40-ից ավելի	1980	1800	1520	800	420
Հաճարենի	մինչև 10-ը ներառյալ	3000	2700	2310	1500	700
	10-25-ը ներառյալ	2310	2080	1780	1155	630
	25-40-ը ներառյալ	2100	1890	1620	1050	560
	40-ից ավելի	1800	1620	1390	900	420
Բոխի և այլ ծառատեսակներ	մինչև 10-ը ներառյալ	1250	1100	960	500	420
	10-25-ը ներառյալ	960	850	740	360	350

	25-40-ը ներառյալ	870	770	680	280	280
	40-ից ավելի	750	660	580	250	210

Սույն կետում կիրառվող՝ ստորև նշված հասկացություններն օգտագործվում են հետևյալ իմաստներով.

ա. ցցաչոր ծառ՝ բնական ծերացման, անտառաճման պայմանների խիստ վատթարացման, տարերային աղետների (հրդեհ), հիվանդությունների, վնասատուներով խիստ վարակվածության և այլ պատճառներով չորացած կանգուն ծառ,

բ. փայտանյութի օգտագործում՝ կանգուն ծառի և (կամ) ծառի առանձին ճյուղերի հատում, կոճղերի հանում և անտառից դուրսբերում, թափուկի հավաքում և անտառից դուրսբերում,

գ. հեռավորություն՝ անտառի սկզբից (որտեղից անտառային ճանապարհով դուրս է բերվելու փայտանյութը) մինչև ծառահատման վայրն ընկած տարածություն.

2) արդյունագործական նպատակով բույսերի յուրաքանչյուր միավորի օգտագործման համար՝

ա. լայն կիրառություն ունեցող դեղաբույսերի (անթառամ՝ ծալքավոր, կատվախոտ՝ դեղատու, զիվան՝ հսկայական, լերդախոտ՝ ալեհեր, սրոհունդ (արևքուրիկ)՝ խոցված, լոշտակ՝ սպիտակ, լոշտակ՝ երկտուն, առյուծագի՝ սովորական, խնկածաղիկ՝ սովորական, տատրակ՝ սովորական (խոճկորիկ), օշինդր՝ դառը, կտտկենի՝ սև, արոսենի՝ սովորական, հազարատերևուկ՝ սովորական, եղերդակ՝ սովորական, եզան լեզու՝ մեծ, ուրց՝ Կոչիի, լորենի՝ սրտաձև, կծոխուր՝ սովորական, ալոճ (սգնի) յուրաքանչյուր կիլոգրամի համար՝

Վերգետնյա մասեր	100 դրամ
Արմատներ	300 դրամ

բ. սույն կետի «ա» ենթակետում չնշված դեղաբույսերի յուրաքանչյուր կիլոգրամի համար՝

Վերգետնյա մասեր	50 դրամ
Արմատներ	200 դրամ

գ. լայն կիրառություն ունեցող սննդային բույսերի (շուշանբանջար՝ սոխուկավոր, սիբեխ՝ սովորական, սինդրիկ՝ հարթ, սինդրիկի բազմածաղիկ, շրեշ՝ փարթամ, ծնեբեկ՝ դեղատու, ձիասամիթ՝ մանրապտուղ (բոխի), ավելուկ՝ զանգուր) յուրաքանչյուր կիլոգրամի համար՝

Վերգետնյա մասեր	15 դրամ
Արմատներ	50 դրամ

դ. սույն կետի «գ» ենթակետում չնշված սննդային բույսերի յուրաքանչյուր կիլոգրամի համար՝

Վերգետնյա մասեր	10 դրամ
Արմատներ	30 դրամ

ե. տեխնիկական բույսերի յուրաքանչյուր կիլոգրամի համար՝

Վերգետնյա մասեր	50 դրամ
Արմատներ	150 դրամ

զ. գեղազարդային բույսերի յուրաքանչյուր միավորի (հատ) համար՝

Վերգետնյա մասեր	10 դրամ

է. բուսական խեժերի յուրաքանչյուր կիլոգրամի համար՝ 500 դրամ.

3) արդյունագործական նպատակով օգտագործվող պտուղների, հատապտուղների և ընկուզավորների յուրաքանչյուր կիլոգրամի համար՝

Պտուղներ, հատապտուղներ	30 դրամ
Տխիլ (տկողին), ընկույզ	60 դրամ

4) գյուղատնտեսական՝ խոտհնձի նպատակով անտառային ֆոնդի տարածքների յուրաքանչյուր հեկտարի միանվագ (միանգամյա) օգտագործման համար՝ 2000 դրամ.

5) գյուղատնտեսական՝ արածեցման նպատակով անտառային ֆոնդի տարածքների օգտագործման համար՝ անասունների յուրաքանչյուր գլխի համար՝ յուրաքանչյուր օրվա կտրվածքով (խոշոր և մանր եղջերավոր անասուններ, խոզեր, ձիեր)՝

Բարելավված արոտավայրերում	3 դրամ
Բնական արոտավայրերում	2 դրամ

2. Օրենսգրքի 203-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ բնօգտագործման վճարի բազայի չափաքանակները գերազանցելու դեպքում՝

1) բնափայտի և երկրորդական անտառանյութի օգտագործման (մթերման) համար չափաքանակները գերազանցող՝ ծառի յուրաքանչյուր տեսակի օգտագործման (մթերման) փաստացի ծավալների համար կիրառվում է սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված դրույքաչափերի տասնապատիկ մեծությունը.

2) սույն մասի 1-ին կետում չնշված կենսապաշարների օգտագործման համար չափաքանակները գերազանցող՝ կենսապաշարի օգտագործված յուրաքանչյուր տեսակի համար, որպես դրույքաչափեր, կիրառվում են սույն հոդվածի 1-ին մասի 2-5-րդ ենթակետերով սահմանված դրույքաչափերի եռապատիկ մեծությունը:

3. Օրենսգրքի 203-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ բնօգտագործման վճարի բազայի զրոյական չափաքանակների դեպքում՝

1) բնափայտի և երկրորդական անտառանյութի օգտագործման (մթերման) դեպքում ծառի յուրաքանչյուր տեսակի օգտագործման (մթերման) փաստացի ծավալների համար կիրառվում է սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված դրույքաչափերի տասնապատիկ մեծությունը.

2) սույն մասի 1-ին կետում չնշված կենսապաշարների օգտագործման դեպքում կենսապաշարի օգտագործված յուրաքանչյուր տեսակի համար որպես դրույքաչափ կիրառվում է սույն հոդվածի 1-ին մասի 2-5-րդ ենթակետերով սահմանված դրույքաչափերի եռապատիկ մեծությունը:

4. Կենդանական աշխարհի օբյեկտ հանդիսացող կենսապաշարների օգտագործման համար բնօգտագործման վճարը հաշվարկվում է բնօգտագործման վճարի բազայի նկատմամբ հետևյալ դրույքաչափերով (հաշվի առնելով նաև սույն հոդվածի 7-րդ մասի դրույթները).

1) կենդանիների տեսակների՝ գյուղատնտեսական, արդյունագործական և սոցիալական նպատակներով օգտագործման համար.

Կենդանիների տեսակները	Դրույքաչափը (դրամ)
ա) կաթնասունների յուրաքանչյուր միավորի (հատ) օգտագործման համար	
Վայրի խոզ	50000
Գորշուկ (փորսուղ)	2500
Աղվես	500
Քարակզաքիս	2000
Ճահճակուղբ	500
Մշկամուկ	500
Նապաստակ	800
Սկյուռ	300
Քնամոլ	200
Խլուրդ	20
Այծյամ	85000
Եղեգնակատու	50000
Լուսան	50000
Զրառնետ	10
բ) թռչունների յուրաքանչյուր միավորի (հատ) օգտագործման համար՝	
Սև ցին	10000
Ճահճային մկնաճուռակ	10000
Լորաճուռակ	5000
Մեծ ճուռակ	10000

Տափաստանային ճուռակ	10000
Թավշոտ ճուռակ	10000
Սովորական հողմավար բազե	5000
Արտուտաբազե	30000
Այլ (բացառությամբ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակների) բազեանմաններ	5000
Սագանմաններ (սուլող մրտիմն, կոնչան բադ, ճքճքան մրտիմն, կարմրագլուխ սուզաբադ, փումփուլավոր սուզաբադ)	500
Կաքավ	500
Լոր	100
Սև փարփար	300
Կռվակտցար, կարմրառոտ կտցար, մորակտցար	100
Աղավնանմաններ (սովորական տատրակ, Թխակապույտ աղավնի, անտառային աղավնի)	100
Կկվանմաններ	200
Սովորական այծկիթ	500
Սովորական կիվիվ	500
Մանգաղաթևեր	300
Ալկիոններ	300
Հոպոպ	100
Փայտփոր	300
Ճնճղուկանմաններ (տնային ճնճղուկ, սովորական սարյակ, սև կեռնեխ, սինակեռնեխ, դաշտային արտույտ, տափաստանային արտույտ)	100
Եղեգնահավ	500

Ոսկեգույն մեղվակեր	1500
գ) սողունների յուրաքանչյուր միավորի (հատ) օգտագործման համար՝	
Գյուրզա	3000
Այլ (բացառությամբ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակների) տեսակի օձեր	1000
Կասպիական կրիա	200
դ) երկկենցաղների յուրաքանչյուր միավորի օգտագործման համար	
Գորտեր (լճագորտ, փոքրասիական գորտ) (կգ)	70
Սովորական ծառագորտ (հատ)	200
Կանաչ դոդոշ (հատ)	10
ե) փափկամարմինների յուրաքանչյուր միավորի օգտագործման համար	
Անատամ (հատ)	20
Խաղողի խխունջ (կգ)	200
Այլ տեսակի փափկամարմիններ (կգ)	100
զ) հոդվածոտանիների յուրաքանչյուր միավորի օգտագործման համար	
Գետի խեցգետին (կգ)	50
Հաստապոչ կարիճ (հատ)	20
Այլ տեսակի հոդվածոտանիներ (հատ)	10
է) ձկների յուրաքանչյուր կիլոգրամի օգտագործման համար	
Սիգ	50
Լոքո	400
Սպիտակ ամուր, սև ամուր, հաստաճակատ	500

Կարմրախայտ	1000
Կարաս	20
Ծածան	100
Ցանկում չնշված այլ ձկնատեսակներ (բացառությամբ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակների)	30

ը. օձի թույնի օգտագործման դեպքում բնօգտագործման վճարի դրույքաչափը թույնի յուրաքանչյուր գրամի համար հաշվարկվում է՝ օձի համապատասխան տեսակի համար սույն կետի «գ» ենթակետով սահմանված դրույքաչափի նկատմամբ կիրառելով 3.0 գործակից,

թ. ձկնկիթի օգտագործման դեպքում բնօգտագործման վճարի դրույքաչափը ձկնկիթի յուրաքանչյուր կիլոգրամի համար հաշվարկվում է՝ սույն կետի «է» ենթակետով սահմանված համապատասխան դրույքաչափերի նկատմամբ կիրառելով 10.0 գործակիցը.

2) Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված վայրի կենդանիների տեսակների՝ արհեստական և բնական պայմաններում վերարտադրության (բացառությամբ գիտահետազոտական նպատակներով վերաբնակեցման) նպատակներով օգտագործման (հայթայթման) համար՝

Վայրի կենդանիների տեսակները	Դրույքաչափը (դրամ)
ա) կաթնասունների յուրաքանչյուր միավորի (հատ) համար՝	
Հարավային պայտաքիթ, Մեհելիի պայտաքիթ չղջիկ, Բլազիի պայտաքիթ, սովորական երկարաթև չղջիկ, արաքսյան գիշերաչղջիկ, հայկական գիշերաչղջիկ, Բեխշտեյնի գիշերաչղջիկ, ասիական լայնականջ չղջիկ, գորշ ականջեղ, ծալքաշուրթ լայնականջ չղջիկ	2500
Լայնականջ ոզնի	2500
Շելկովնիկովի կուտորա	2500
Պստիկ սպիտակաատամ	2500
Հնդկական վայրենակերպ կամ մացառախոզ	7000
Դալի ավազամուկ, հայկական մկնիկ, Շիդլովսկու դաշտամուկ, փոքր ճագարամուկ, փոքրասիական գետնասկյուռ	2500
Գորշ արջ	350000
Խայտաքիս	10000
Ջրասամույր	50000

Անտառակատու (ենթատեսակ՝ եվրոպական անտառակատու)	50000
Ընձառյուծ (ենթատեսակ՝ կովկասյան ընձառյուծ)	800000
Մանուլ	20000
Բեզոարյան այծ	500000
Հայկական մուֆլոն	600000
Բորենի	100000
Կովկասյան ազնվացեղ եղջերու, մարալ	300000
բ) թռչունների յուրաքանչյուր միավորի (հատ) համար՝	
Ցախաքլորառոս	50000
Գիշանգղ	50000
Կարմիր ցին, սպիտակապոչ արծիվ, տափաստանային արծիվ, բլրային արծիվ, քարարծիվ, գաճաճ արծիվ, ջրարծիվ	25000
Բալոբան, սապսան	75000
Սպիտակագլուխ անգղ, սև անգղ	25000
Գառնանգղ (մորուքավոր անգղ)	50000
Օձակեր արծիվ, տափաստանային հողմավար բազե	7500
Տափաստանային մկնաճուռակ, մարգագետնային մկնաճուռակ, եվրոպական ճնճղաճուռակ	7000
Կարմրառոտ բազե, աղավնաբազե, միջերկրածովային բազե	5000
Փոքր ենթարծիվ, մեծ ենթարծիվ	2500
Անդրկովկասյան փասիան	5000
Թուրաջ	5000

Կտցար-կաչաղակ, ծովային քարադր, հաստակտուց քարադր, ճախրուկ, սպիտակապոչ եղտյուրիկ, մեծ իլիկակտցար, մեծ արորիկ, կրկնակտցար, ոտնացուպիկ, բզակտուց, մարգագետնային ծիծառակտցար, տափաստանային ծիծառակտցար, հայկական որոր	2500
Որորակտուց ջրածիծառ, փոքր ջրածիծառ, սպիտակապայտ ջրածիծառ	2000
Բվեճ	5000
Թավշառոտ բու	2500
Սևափոր դռլոն	2000
Մոխրապայտ սուզակ	2500
Վարդագույն հավալուսն, գանգրափետուր հավալուսն	20000
Մեծ ձկնկուլ, փոքր ձկնկուլ	7500
Սև արագիլ	7000
Տարգալակտուց	10000
Քաջահավ	7500
Սովորական ֆլամինգո	20000
Սպիտակագլուխ բադ կամ սավկա, մոխրագույն սագ, կարմրախածի սագ, ծվվան սագ, սպիտակաճակատ սագ, կարմիր բադ, խայտաբադ, սպիտակաաչք սուզաբադ, լայնակտուց բադ	5000
Թշշան կարապ, ճչան կարապ, փոքր կարապ	20000
Մարմարյա մրտիմն	7000
Տուրպան	5000
Կովկասյան մարեհավ	5000
Անապատային կաքավ	5000
Վայրի հնդկահավ (ուլար)	12500
Մարգահավ, սուլթանական հավ	5000

Փոքր արոս, մեծ արոս	15000
Շիկապոչ քարաթռչնակ, սոխականման ճռիկահավ, հնդկական եղեգնաթռչնակ, կիսասպիտակավիզ ճանճորս, միջերկրածովային երաշտահավ	1500
Մեծ ժայռային սիտեղ	2000
Կարմրաթև մագլցող	2000
Ժայռային դրախտապան	2000
Խաչկտուց	1500
Իսպանական ճնճղուկ	1000
Մոխրագույն կռունկ, գեղանի կռունկ	15000
Կանաչ մեղվակեր	2500
Ներկարար	1500
Սև փայտփոր	2500
Դեղնագլուխ խաղտտնիկ	1500
Կարմրակատար շամփրուկ	1500
Ալպիական ճայ	2500
Սպիտակափող սոխակ	1500
Անապատային խածկտիկ	1500
գ) սողունների յուրաքանչյուր միավորի (հատ) համար՝	
Անդրկովկասյան սահնօձ, կովկասյան կատվաօձ, պարսկական պսևդոցիկլոֆիս, Սատունինի սևագլուխ ռինխոկալամուս, Դարևսկու իժ, հայկական լեռնատափաստանային իժ, հայկական իժ կամ Ռադդեի իժ	3000
Անդրկովկասյան տակիրային կլորագլուխ, Չեռնովի մերկաչք, առաջավորասիական մաբույա, երկարատ սցինկ, անդրկովկասյան բազմագույն մողեսիկ, անդրկովկասյան մողեսիկ, փոքրասիական մողես, մարգագետնային մողես, Դալի մողես, Ռոստոմբեկովի մողես, սպիտակափոր մողես	1500

Միջերկրածովային կրիա	2000
դ) երկկենցաղների յուրաքանչյուր միավորի (հատ) համար՝	
Փոքրասիական տրիտոն	1000
Սիրիական սխտորագորտ	1000
ե) ձկների յուրաքանչյուր միավորի (կիլոգրամի) համար՝	
Հաշամ	2000
Իշխան	8000
Սևանի բեղլու	2500
Սևանի կողակ	2000
Հայկական կարմրակն	1500
Քուռի քառթակ	1500
Առաջավորասիական ծական	1500

5. Օրենսգրքի 203-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ բնօգտագործման վճարի բազայի չափաքանակները գերազանցելու դեպքում կենդանական աշխարհի օբյեկտ համարվող կենսապաշարների օգտագործման չափաքանակները գերազանցող՝ յուրաքանչյուր տեսակի օգտագործման փաստացի ծավալների համար կիրառվում է սույն հոդվածի 4-րդ մասում նշված դրույքաչափերի եռապատիկ մեծությունը:

6. Օրենսգրքի 203-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ բնօգտագործման վճարի բազայի զրոյական չափաքանակների դեպքում կենդանական աշխարհի օբյեկտ համարվող կենսապաշարների յուրաքանչյուր տեսակի օգտագործման փաստացի ծավալների համար կիրառվում է սույն հոդվածի 4-րդ մասում նշված դրույքաչափերի եռապատիկ մեծությունը:

7. 2018 թվականի հունվարի 1-ից կենսապաշարների օգտագործման համար բնօգտագործման վճարի դրույքաչափերը որոշվում են որպես սույն հոդվածի 1-ին և 4-րդ մասերով սահմանված դրույքաչափերի և 1.1 գործակցի արտադրյալ, 2019 թվականի հունվարի 1-ից՝ որպես սույն հոդվածի 1-ին և 4-րդ մասերով սահմանված դրույքաչափերի և 1.2 գործակցի արտադրյալ, իսկ 2020 թվականի հունվարի 1-ից՝ որպես սույն հոդվածի 1-ին և 4-րդ մասերով սահմանված դրույքաչափերի և 1.3 գործակցի արտադրյալ:

Հոդված 209. Ռոյալթիի դրույքաչափը

1. Ռոյալթիի համար սահմանվում է ռոյալթիի բազայի նկատմամբ արժեքային (տոկոսային) դրույքաչափ, որի մեծությունը որոշվում է հետևյալ բանաձևով.

R = 4 + [Շ/(Հx8)]x100, որտեղ՝

R – ռոյալթիի դրույքաչափն է՝ տոկոսով.

Շ – շահույթն է նախքան հարկումը՝ դրամով, որը հաշվարկվում է որպես ռոյալթիի բազայի և Օրենսգրքի 6-րդ բաժնով սահմանված նվազեցումների (բացառությամբ ֆինանսական գործունեության գծով ծախսերի, սույն բաժնով սահմանված ռոյալթիի և նախորդ տարիների հարկային վնասների) դրական տարբերություն.

Հ – ռոյալթիի բազան է՝ դրամով:

Սույն հոդվածի կիրառության իմաստով՝

1) նախքան հարկումը շահույթի հաշվարկման ժամանակ իրացման շրջանառությունից ֆինանսական գործունեության գծով ծախսերի, սույն բաժնով սահմանված ռոյալթիի և նախորդ տարիների հարկային վնասների նվազեցումը չի կատարվում՝ անկախ այդ ծախսերն ու հարկային վնասները հանքավայրերի շահագործման և (կամ) մետաղի խտանյութի արտադրության հետ կապված լինելու հանգամանքից.

2) շահույթը նախքան հարկումը բաղադրիչի հաշվարկման ժամանակ բնօգտագործման վճար վճարողի վարչական ծախսերի, իրացման ծախսերի և ոչ արտադրական բնույթի այլ ծախսերի նվազեցումները հաշվի են առնվում համախառն եկամտի մեջ ռոյալթիի իրացման շրջանառությանը համապատասխանող տեսակարար կշռով:

Գ Լ Ո Ւ Խ 42

ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 210. Բնօգտագործման վճարի արտոնությունները

1. Բնօգտագործման վճարի գծով արտոնությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով:

Գ Լ Ո Ւ Խ 43

ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ

Հոդված 211. Հաշվետու ժամանակաշրջանը

1. Բնօգտագործման վճարի հաշվարկման և վճարման համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր հաշվետու եռամսյակը, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքի:

2. Ռոյալթիի հաշվարկման և վճարման համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր հաշվետու տարին:

Հոդված 212. Բնօգտագործման վճարի օբյեկտ համարվող փաստացի ծավալների հաշվառման կարգը

1. Բնօգտագործման վճար վճարողները ստորերկրյա քաղցրահամ և թերմալ ջրերի արդյունահանված պաշարների հաշվառման նպատակով Կառավարության սահմանած կարգով ու ժամկետներում տեղադրում և շահագործում են ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքեր, որոնք Կառավարության սահմանած կարգով ենթակա են կնքման՝ նույն կարգով սահմանված լիազոր պետական մարմինների կողմից: Արդյունահանված պաշարների ծավալների վերաբերյալ տվյալները Կառավարության սահմանած կարգով ու ժամկետներում արձանագրվում են համապատասխան լիազոր մարմինների և բնօգտագործման վճար վճարողի ներկայացուցիչների համատեղ ակտով:

2. Բնօգտագործման վճար վճարողները հանքային ջրերի արդյունահանված պաշարների հաշվառման նպատակով Կառավարության սահմանած կարգով՝

1) միայն մեկ նպատակով հանքային ջրի հորատանցքը (աղբյուրը) շահագործելիս անմիջապես հորատանցքի (աղբյուրի) վրա տեղադրված գազանջատիչից դուրս եկող ջրախողովակի (այսուհետ՝ առաջնային խողովակ) վրա տեղադրում են ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքեր.

2) միաժամանակ մեկից ավելի նպատակներով հանքային ջրի հորատանցքը (աղբյուրը) շահագործելիս առաջնային խողովակին միացված հանքային ջրի օգտագործման յուրաքանչյուր նպատակի համար առանձնացված յուրաքանչյուր խողովակի վրա տեղադրում են ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքեր.

3) ածխաթթու գազ ստանալու նպատակով գազանջատիչից դուրս եկող գազի խողովակի վրա ածխաթթու գազ ստանալու սարք (սարքեր) տեղադրված կամ միացված լինելու դեպքում մինչև ածխաթթու գազ ստանալու սարքն ընկած հատվածում տեղադրում են գազաչափ:

Սույն մասում նշված ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքերը և գազաչափերը Կառավարության սահմանած կարգով ենթակա են կնքման նույն կարգով սահմանված լիազոր պետական մարմինների կողմից: Արդյունահանված պաշարների ծավալների վերաբերյալ տվյալները Կառավարության սահմանած կարգով ու ժամկետներում արձանագրվում են հարկային մարմնի և բնօգտագործման վճար վճարողի ներկայացուցիչների համատեղ ակտով:

(212-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Հոդված 213. Պետական բյուջե վճարման ենթակա բնօգտագործման վճարի հաշվարկման ընդհանուր կարգը

1. Պետական բյուջե վճարման ենթակա բնօգտագործման վճարը (բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքի) հաշվարկվում է Օրենսգրքի 200-րդ հոդվածով սահմանված՝ բնօգտագործման վճարի յուրաքանչյուր օբյեկտի համար՝ բնօգտագործման վճարի բազայի և դրույքաչափերի հիման վրա՝ հաշվի առնելով վճարի բազայի չափաքանակները:

2. Պետական բյուջե վճարման ենթակա ռոյալթին հաշվարկվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար՝ ռոյալթիի բազայի և Օրենսգրքի 209-րդ հոդվածով սահմանված կարգով որոշվող դրույքաչափի հիման վրա:

Հոդված 214. Մակերևութային ջրերի օգտագործման համար պետական բյուջե վճարման ենթակա բնօգտագործման վճարի հաշվարկման կարգը

1. Մակերևութային ջրերի օգտագործման համար պետական բյուջե վճարման ենթակա բնօգտագործման վճարը հաշվարկվում է հաշվետու ժամանակաշրջանում բնական ջրաղբյուրներից օգտագործման նպատակով անմիջապես վերցրած ջրի ծավալի հիման վրա՝ հաշվի առնելով բնօգտագործման վճարի բազայի չափաքանակները, ինչպես նաև սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված առանձնահատկությունները:

2. Ձկնաբուծական և խեցգետնաբուծական գործունեություն իրականացնող բնօգտագործման վճար վճարողները ջրօգտագործման համար պետական բյուջե վճարման ենթակա բնօգտագործման վճարի հաշվարկն իրականացնում են՝

1) Հայաստանի Հանրապետության Արարատի և Արմավիրի մարզերում մակերևութային ջրերի օգտագործված ընդհանուր ծավալի 10 տոկոսի հիման վրա.

2) Հայաստանի Հանրապետության մյուս տարածքներում՝ մակերևութային ջրերի օգտագործված ընդհանուր ծավալի 5 տոկոսի հիման վրա:

3. Մակերևութային ջրերի օգտագործման համար պետական բյուջե վճարման ենթակա բնօգտագործման վճարը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով հաշվետու ժամանակաշրջանում բնական ջրաղբյուրներից օգտագործման նպատակով վերցրած ջրի ծավալը և Օրենսգրքի 204-րդ հոդվածով սահմանված դրույքաչափերը:

Հոդված 215. Ստորերկրյա քաղցրահամ և թերմալ ջրերի արդյունահանման համար պետական բյուջե վճարման ենթակա բնօգտագործման վճարի հաշվարկման կարգը

1. Ստորերկրյա քաղցրահամ և թերմալ ջրերի արդյունահանված պաշարների համար պետական բյուջե վճարման ենթակա բնօգտագործման վճարը հաշվարկվում է հաշվետու ժամանակաշրջանում արդյունահանված ջրի ծավալների հիման վրա՝ հաշվի առնելով բնօգտագործման վճարի բազայի չափաքանակները, ինչպես նաև սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված առանձնահատկությունները:

2. Ձկնաբուծական և խեցգետնաբուծական գործունեություն իրականացնող բնօգտագործման վճար վճարողները ջրօգտագործման համար պետական բյուջե վճարման ենթակա բնօգտագործման վճարի հաշվարկն իրականացնում են՝

1) Հայաստանի Հանրապետության Արարատի և Արմավիրի մարզերում՝ ստորերկրյա ջրերի արդյունահանված պաշարի ընդհանուր ծավալի 50 տոկոսի հիման վրա.

2) Հայաստանի Հանրապետության մյուս տարածքներում՝ ստորերկրյա ջրերի արդյունահանված պաշարի ընդհանուր ծավալի հինգ տոկոսի հիման վրա:

3. Ստորերկրյա քաղցրահամ և թերմալ ջրերի արդյունահանված պաշարների համար պետական բյուջե վճարման ենթակա բնօգտագործման վճարը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով հաշվետու ժամանակաշրջանում հորատանցքից (աղբյուրից) արդյունահանված ջրի ծավալը (հաշվետու ժամանակաշրջանում ջրօգտագործողների կողմից Կառավարության սահմանած կարգով տեղադրված հաշվիչ (չափիչ) սարքերով հաշվառված ջրի ծավալը) և Օրենսգրքի 205-րդ հոդվածով սահմանված դրույքաչափերը:

4. Սույն հոդվածի կիրառության իմաստով՝ ստորերկրյա քաղցրահամ և թերմալ ջրերի արդյունահանված պաշար է համարվում հաշվետու ժամանակահատվածում հորատանցքից (աղբյուրից) երկրի մակերևույթ դուրս եկած (արտամղված) ջրի ծավալը:

5. Բնօգտագործման վճար վճարողների կողմից ստորերկրյա քաղցրահամ և թերմալ ջրերի համար պետական բյուջե վճարման ենթակա բնօգտագործման վճարի օբյեկտ համարվող փաստացի ծավալների հաշվառում չվարելու կամ սահմանված կարգի խախտումներով հաշվառումը վարելու ժամանակահատվածի համար բնօգտագործման վճարները հաշվարկվում են (այդ թվում՝ հարկային մարմնի կողմից)՝ հիմք ընդունելով՝ ստորերկրյա քաղցրահամ կամ թերմալ ջրի հորատանցքը (աղբյուրը) շահագործելիս՝ Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի համաձայն տրամադրված ջրօգտագործման թույլտվություններով սահմանված ջրօգտագործման (ստորերկրյա (ստորգետնյա) քաղցրահամ և թերմալ ջրերի արդյունահանման) ծավալները և Օրենսգրքի 205-րդ հոդվածով սահմանված դրույքաչափերը:

(215-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Հոդված 216. Ստորերկրյա հանքային ջրերի և աղի արդյունահանված պաշարների համար պետական բյուջե վճարման ենթակա բնօգտագործման վճարի հաշվարկման կարգը

1. Ստորերկրյա հանքային ջրերի (ինչպես նաև արտադրված ածխաթթու գազի) արդյունահանված պաշարների համար պետական բյուջե վճարման ենթակա բնօգտագործման վճարը հաշվարկվում է հաշվետու ժամանակաշրջանում արդյունահանված ջրի, ինչպես նաև արտադրված ածխաթթու գազի ծավալների հիման վրա՝ հաշվի առնելով բնօգտագործման վճարի բազայի չափաքանակները:

2. Ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանված պաշարների համար պետական բյուջե վճարման ենթակա բնօգտագործման վճարը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով՝

1) միայն մեկ նպատակով հանքային ջրի հորատանցքը (աղբյուրը) շահագործելիս՝ ջրօգտագործողների կողմից Կառավարության սահմանած կարգով տեղադրված ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքով (առաջնային ջրահաշվիչով) հաշվետու ժամանակաշրջանում հաշվառված ջրի ծավալը և շահագործման տվյալ նպատակի համար Օրենսգրքի 206-րդ հոդվածով սահմանված համապատասխան դրույքաչափը.

2) միաժամանակ մեկից ավելի նպատակներով հանքային ջրի հորատանցքը (աղբյուրը) շահագործելիս ջրօգտագործողների կողմից Կառավարության սահմանած կարգով տեղադրված յուրաքանչյուր ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքով (առանձնացված ջրահաշվիչով) հաշվետու ժամանակաշրջանում հաշվառված ջրի ծավալը և Օրենսգրքի 206-րդ հոդվածով սահմանված համապատասխան դրույքաչափը՝ որպես շահագործման առանձին նպատակների համար հաշվարկված բնօգտագործման վճարների հանրագումար.

3) ածխաթթու գազ ստանալու նպատակով գազանջատիչից դուրս եկող գազի խողովակի վրա ածխաթթու գազ ստանալու սարք (սարքեր) տեղադրված (միացված) լինելու դեպքում ջրօգտագործողի կողմից արտադրված ածխաթթու գազի համար բնօգտագործման վճարը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով հաշվետու ժամանակաշրջանում գազանջատիչից դուրս եկող գազի խողովակի վրա Կառավարության սահմանած կարգով տեղադրված գազաչափով հաշվառված ածխաթթու գազի ծավալը և Օրենսգրքի 206-րդ հոդվածով ըստ հանքավայրի սահմանված համապատասխան դրույքաչափը:

3. Բնօգտագործման վճար վճարողների կողմից ստորերկրյա հանքային ջրերի և ածխաթթու գազի համար պետական բյուջե վճարման ենթակա բնօգտագործման վճարի օբյեկտ համարվող փաստացի ծավալների հաշվառում չվարելու կամ սահմանված կարգի խախտումներով հաշվառումը վարելու ժամանակահատվածի համար բնօգտագործման վճարները հաշվարկվում են (այդ թվում՝ հարկային մարմնի կողմից)՝ հիմք ընդունելով՝

1) միայն մեկ նպատակով հանքային ջրի հորատանցքը (աղբյուրը) շահագործելիս՝ արդյունահանված (այդ թվում՝ համապատասխան լիազոր մարմնի կողմից հաշվարկված և արձանագրված) ջրի ծավալը և շահագործման տվյալ նպատակի համար Օրենսգրքի 206-րդ հոդվածով սահմանված դրույքաչափը.

2) մեկից ավելի նպատակներով հանքային ջրի հորատանցքը (աղբյուրը) շահագործելիս՝ առաջնային ջրահաշվիչով հաշվառված, իսկ դրա բացակայության դեպքում՝ հանքային ջրի հորատանցքից (աղբյուրից) արդյունահանված (այդ թվում՝ համապատասխան լիազոր մարմնի կողմից հաշվարկված և արձանագրված) ջրի ծավալը և հանքային ջրի տվյալ հորատանցքի (աղբյուրի) փաստացի շահագործման նպատակների համար Օրենսգրքի 206-րդ հոդվածով սահմանված՝ բնօգտագործման վճարի դրույքաչափերից ամենաբարձր դրույքաչափը.

3) ածխաթթու գազ ստանալու նպատակով գազանջատիչից դուրս եկող գազի խողովակի վրա գազաչափ տեղադրված (միացված) չլինելու դեպքում տվյալ հորատանցքից (աղբյուրից) փաստացի արդյունահանված հանքային ջրի (այդ թվում՝ համապատասխան լիազոր մարմնի կողմից հաշվարկված և արձանագրված) ծավալը և ածխաթթու գազ ստանալու նպատակով հանքային ջրի արդյունահանման համար Օրենսգրքի 206-րդ հոդվածով սահմանված դրույքաչափը:

(216-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Հոդված 217. Աղի արդյունահանված պաշարների համար պետական բյուջե վճարման ենթակա բնօգտագործման վճարի հաշվարկման կարգը

1. Աղի արդյունահանված պաշարների համար պետական բյուջե վճարման ենթակա բնօգտագործման վճարը հաշվարկվում է հաշվետու ժամանակաշրջանում արդյունահանված աղի ծավալների և Օրենսգրքի 206-րդ հոդվածով սահմանված դրույքաչափերի հիման վրա՝ հաշվի առնելով բնօգտագործման վճարի բազայի չափաքանակները:

Հոդված 218. Պինդ ոչ մետաղական օգտակար հանածոների մարված պաշարների համար պետական բյուջե վճարման ենթակա բնօգտագործման վճարի հաշվարկման կարգը

1. Պինդ ոչ մետաղական օգտակար հանածոների (բացառությամբ աղի), ինչպես նաև գունագեղ քարերի տեսակներից՝ միայն օնիքսանման մարմարի, վանակատի (օբսիդիան) ու լիստվենիտի մարված պաշարների համար պետական բյուջե վճարման ենթակա բնօգտագործման վճարը հաշվարկվում է հաշվետու ժամանակաշրջանում հանածոյի մարված պաշարների ծավալների, այդ ժամանակաշրջանում օգտակար հանածոյի օտարման փաստացի գնի (առանց ԱԱՀ-ի) և Օրենսգրքի 207-րդ հոդվածով սահմանված դրույքաչափերի հիման վրա, եթե հաշվետու ժամանակաշրջանում տվյալ օգտակար հանածոյի օտարման փաստացի գնի (առանց ԱԱՀ-ի) և դրույքաչափի արտադրյալը գերազանցում է հաստատագրված դրույքաչափը՝ հաշվի առնելով բնօգտագործման վճարի բազայի չափաքանակները:

2. Պինդ ոչ մետաղական օգտակար հանածոների մարված պաշարների համար պետական բյուջե վճարման ենթակա բնօգտագործման վճարը հաշվարկվում է Օրենսգրքի 207-րդ հոդվածով սահմանված համապատասխան հաստատագրված դրույքաչափի և հաշվետու ժամանակաշրջանում օգտակար հանածոների մարված պաշարների ծավալների բազմապատկումով, եթե՝

1) հաշվետու ժամանակաշրջանում օգտակար հանածոյի օտարման փաստացի գնի (առանց ԱԱՀ-ի) և դրույքաչափի արտադրյալը չի գերազանցում հաստատագրված դրույքաչափը.

2) հաշվետու ժամանակաշրջանում մարված պաշարների օտարում չի կատարվել: Եթե հաշվետու ժամանակաշրջանում օտարվել է այդ ժամանակաշրջանում մարված պաշարների մի մասը, ապա մարված պաշարների օտարված մասի համար բնօգտագործման վճարը հաշվարկվում է սույն հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ հաշվի առնելով սույն մասի դրույթները, իսկ մարված պաշարների չօտարված մասի համար՝ բնօգտագործման վճարը հաշվարկվում է հաստատագրված դրույքաչափերով.

3) եթե օտարվել է ոչ թե օգտակար հանածոն, այլ տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչներին համապատասխան հանքագործական գործունեությունից տարբերվող գործունեության արդյունքում ստացված արտադրանքը, կամ եթե օգտակար հանածոն օգտագործվել է արդյունահանողի ներտնտեսական կարիքների համար.

4) բնօգտագործման վճարի օբյեկտ համարվող ծավալների չափաքանակների որոշման նպատակով սահմանված կարգով իրականացված ստուգումների արդյունքում արձանագրված բնօգտագործման փաստացի ծավալների և վճարողների կողմից հարկային և լիազոր մարմիններ ներկայացված՝ ստուգվող ժամանակահատվածում հարկային հաշվարկներում արտացոլված ծավալների դրական տարբերության համար օրենքով սահմանված պատասխանատվության միջոցների հաշվարկման ժամանակ:

3. Օրենսգրքի 207-րդ հոդվածով սահմանված դրույքաչափերը և հաստատագրված դրույքաչափերը կիրառվում են պինդ ոչ մետաղական օգտակար հանածոյի՝ սույն բաժնով սահմանված մարված պաշարների ամբողջ ծավալների նկատմամբ: Օրենսգրքի 207-րդ հոդվածով սահմանված հաստատագրված դրույքաչափերը կիրառվում են՝ հաշվի առնելով փորձաքննություն անցած և հաստատված հանքարդյունահանման աշխատանքների կատարման նախագծով հաստատված ելքի չափերը, եթե նույն հոդվածով հաստատագրված դրույքաչափերը սահմանված են ըստ օգտակար հանածոյի պաշարների օգտակար ելքի չափերի: Հանքարդյունահանման աշխատանքների կատարման նախագծի բացակայության դեպքում, ըստ օգտակար հանածոյի պաշարների օգտակար ելքի չափերի, ամենաբարձր հաստատագրված դրույքաչափը կիրառվում է պինդ օգտակար հանածոների համար սույն բաժնով սահմանված մարված պաշարների ամբողջ ծավալների նկատմամբ: Հանքարդյունահանման աշխատանքների կատարման նախագծով լցանյութերի և բալաստային հումքի ելք նախատեսված չլինելու դեպքում լցանյութերին և բալաստային հումքին համապատասխանող մարված պաշարների ծավալների նկատմամբ կիրառվում են Օրենսգրքի 207-րդ հոդվածով սահմանված՝ շինաքարի և (կամ) երեսապատման քարի օգտակար ելքի չափերին համապատասխանող հաստատագրված դրույքաչափերը՝ շինաքարի և (կամ) երեսապատման քարերի համար նախագծով հաստատված օգտակար ելքի չափերին համապատասխան: Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչներին համապատասխան՝ հանքագործական գործունեությունից տարբերվող գործունեության արդյունքում ստացված արտադրանքին համապատասխանող մարված պաշարների ծավալների համար կիրառվում է Օրենսգրքի 207-րդ հոդվածով սահմանված ամենաբարձր հաստատագրված դրույքաչափը, եթե նույն հոդվածով հաստատագրված դրույքաչափերը սահմանված են ըստ օգտակար հանածոյի պաշարների օգտակար ելքի չափերի:

4. Սույն հոդվածի 1-ին մասում չնշված գունագեղ քարերի տեսակների մարված պաշարների համար պետական բյուջե վճարման ենթակա բնօգտագործման վճարը հաշվարկվում է հաշվետու ժամանակաշրջանում մարված պաշարների ծավալների, դրույքաչափերի և հաշվետու ժամանակաշրջանում տվյալ քարի միջազգային շուկայական միջին գնի հիման վրա՝ հիմք ընդունելով ֆինանսների բնագավառում Կառավարության լիազոր մարմնի՝ հաշվետու ժամանակաշրջանի համար հրապարակած գինը:

(218-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Հոդված 219. Կենսապաշարների օգտագործման համար պետական բյուջե վճարման ենթակա բնօգտագործման վճարի հաշվարկման կարգը

1. Անտառանյութի օգտագործման համար պետական բյուջե վճարման ենթակա բնօգտագործման վճարը հաշվարկվում է հաշվետու ժամանակաշրջանում օգտագործված պաշարների ծավալների հիման վրա:

Կենսապաշարների մնացած տեսակների համար պետական բյուջե վճարման ենթակա բնօգտագործման վճարը հաշվարկվում է օգտագործված պաշարների ծավալների հիման վրա և պետական բյուջե է վճարվում յուրաքանչյուր անգամ՝ մինչև կենսապաշարների տեղափոխումը:

2. Կենսապաշարների օգտագործման համար պետական բյուջե վճարման ենթակա բնօգտագործման վճարը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով հաշվետու ժամանակաշրջանում սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ծավալները և Օրենսգրքի 208-րդ հոդվածով սահմանված դրույքաչափերը:

3. Բնօգտագործման վճար վճարող՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք մինչև օրենքով սահմանված կենսապաշարների օգտագործումը հայտ են ներկայացնում համապատասխան բնապահպանական մարմին և վերջինիս կողմից այն բավարարվելու դեպքում իրականացնում են համապատասխան գործառույթ: Բնապահպանական մարմինը պատասխանատու է հետագայում հայտում նշված պայմանների և վճարման փաստը հաստատող անդորրագրի իսկության համար: Բնական պաշարների օտարման ու սպառման վայրում վճարի հաշվարկման և վճարման նկատմամբ վերահսկողությունն ընտրանքային կարգով իրականացնում է հարկային մարմինը:

4. Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինն օրենքով սահմանված կարգով ստուգում է կենսապաշարների օգտագործման համար վճարի՝ սույն բաժնին համապատասխան հաշվարկված լինելը:

(219-րդ հոդվածը փոփ. 21.12.17 ՀՕ-266-Ն, 23.03.18 ՀՕ-261-Ն)

Հոդված 220. Բնօգտագործման վճարի գծով հարկային հաշվարկների ներկայացումը

1. Բնօգտագործման վճար վճարողները մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ, Օրենսգրքի 52-րդ և 53-րդ հոդվածներին համապատասխան, կազմում և Կառավարության սահմանած կարգով բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին և հարկային մարմին են ներկայացնում բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարի միասնական հարկային հաշվարկները:

2. Բնօգտագործման վճար վճարողները ներկայացված բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների միասնական հարկային հաշվարկներում սխալների ինքնուրույն հայտնաբերման դեպքում դրանց ճշտման արդյունքներով, Օրենսգրքի 52-54-րդ հոդվածներին համապատասխան, կարող են կազմել և բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների ճշտված միասնական հարկային հաշվարկները Կառավարության սահմանած կարգով ներկայացնել բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին և հարկային մարմին:

3. Սույն հոդվածին համապատասխան՝ հարկային հաշվարկներ ներկայացնելը պարտադիր չէ ֆիզիկական անձանց համար (բացառությամբ անհատ ձեռնարկատերերի), որոնք ունեն բնօգտագործման համար համապատասխան պայմանագրեր՝ մինչև մեկ տարի ժամկետով:

(220-րդ հոդվածը խմբ., փոփ. 21.12.17 ՀՕ-266-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Հոդված 221. Ռոյալթիի գծով հարկային հաշվարկների ներկայացումը

1. Ռոյալթի վճարողները մինչև հաշվետու տարվան հաջորդող հարկային տարվա ապրիլի 20-ը ներառյալ Օրենսգրքի 52-54-րդ հոդվածներով սահմանված կարգով կազմում և հարկային մարմին են ներկայացնում ռոյալթիի հարկային հաշվարկներ:

Գ Լ Ո Ւ Խ 44

ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐԻ ԳՈՒՄԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԵՎ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՇՎԻՆ ՄՈՒՏՔԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Հոդված 222. Բնօգտագործման վճարի գումարի վճարումը

1. Օրենսգրքի 213-219-րդ հոդվածներով սահմանված կարգով հաշվարկված՝ պետական բյուջե վճարման ենթակա բնօգտագործման վճարի գումարները պետական բյուջե են վճարվում մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ, բացառությամբ սույն հոդվածով սահմանված դեպքերի:

2. Օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով հաշվարկված՝ պետական բյուջե վճարման ենթակա ռոյալթիի գումարները պետական բյուջե են վճարվում մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հարկային տարվա ապրիլի 20-ը ներառյալ:

3. Ռոյալթի վճարողները պարտավոր են ընթացիկ հաշվետու տարվա յուրաքանչյուր եռամսյակի համար, մինչև

տվյալ եռամսյակի երրորդ ամսվա 20-ը ներառյալ, կատարել ռոյալթիի կանխավճարներ՝ նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվարկված ռոյալթիի գումարի մեկ քառորդի չափով: Տվյալ հաշվետու տարվա ընթացքում՝ մինչև նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համար ռոյալթիի հարկային հաշվարկի ներկայացումը, ռոյալթի վճարողները ռոյալթիի կանխավճարները յուրաքանչյուր եռամսյակի համար կատարում են նախորդ հաշվետու տարվա վերջին կանխավճարի գումարից ոչ պակաս: Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի ռոյալթիի հարկային հաշվարկը ներկայացնելուց հետո հարկային հաշվարկի ներկայացմանը անմիջապես հաջորդող առաջին կանխավճարային մուծման ժամանակ կատարվում է մինչև հարկային հաշվարկի ներկայացումը տվյալ հարկային տարվա ընթացքում կատարված կանխավճարների գումարների ճշտում՝ հարկային տարվա սկզբից աճողական հանրագումարով՝ ելնելով սույն մասով սահմանված չափից:

4. Այն ռոյալթի վճարողը, որը հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով հայտարարություն՝

1) որևէ օրվանից սկսած՝ անորոշ ժամկետով գործունեությունը դադարեցնելու մասին, ապա հայտարարության մեջ նշված՝ գործունեությունը դադարեցնելու օրվանից (բայց ոչ շուտ, քան գործունեությունը դադարեցնելու մասին հայտարարության ներկայացման օրը) մինչև գործունեությունը վերսկսելու մասին հարկային մարմնի հաստատած ձևով ներկայացվող հայտարարության մեջ նշված՝ գործունեությունը վերսկսելու օրը (բայց ոչ շուտ, քան գործունեությունը վերսկսելու մասին հայտարարության ներկայացման օրը) ընկած ժամանակահատվածում ներառվող ամբողջական եռամսյակների համար ռոյալթիի կանխավճարներ կարող է չկատարել.

2) որևէ օրվանից սկսած՝ որոշակի ժամկետով գործունեությունը դադարեցնելու մասին, ապա հայտարարության մեջ նշված՝ գործունեությունը դադարեցնելու օրվանից (բայց ոչ շուտ, քան գործունեությունը դադարեցնելու մասին հայտարարության ներկայացման օրը) մինչև հայտարարության մեջ նշված՝ գործունեությունը վերսկսելու օրը ընկած ժամանակահատվածում ներառվող ամբողջական եռամսյակների համար ռոյալթիի կանխավճարներ կարող է չկատարել:

5. Օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով հաշվարկված՝ պետական բյուջե վճարման ենթակա ռոյալթիի գումարի և հարկային տարվա ընթացքում վճարված ռոյալթիի կանխավճարների հանրագումարի դրական տարբերությունը պետական բյուջե է վճարվում մինչև տվյալ հաշվետու տարվան հաջորդող հարկային տարվա ապրիլի 20-ը ներառյալ:

Հոդված 223. Բնօգտագործման վճարի գումարի մուտքագրումը միասնական հաշվին, հաշվանցումը և (կամ) վերադարձը

1. Բնօգտագործման վճարի այն պարտավորություններից Օրենսգրքով սահմանված չափից ավելի վճարված գումարները, որոնց մասով սույն բաժնով սահմանված է հարկային հաշվարկ ներկայացնելու պահանջ, այդ թվում՝ սույն բաժնով սահմանված կարգով հաշվարկված՝ պետական բյուջե վճարման ենթակա ռոյալթիի գումարի և հարկային տարվա ընթացքում վճարված ռոյալթիի կանխավճարների հանրագումարի բացասական տարբերությունը, Օրենսգրքի՝ հարկային վարչարարության մասով սահմանված կարգով և ժամկետներում մուտքագրվում են միասնական հաշվին:

2. Բնօգտագործման վճարի այն պարտավորություններից Օրենսգրքով սահմանված չափից ավելի վճարված գումարները, որոնց մասով սույն բաժնով սահմանված չէ հարկային հաշվարկ ներկայացնելու պահանջ, հաշվանցվում և (կամ) վերադարձվում են Կառավարության սահմանած կարգով:

(223-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Բ Ա Ժ Ի Ն 11

(համաձայն սույն օրենսգրքի 444-րդ հոդվածի 9-րդ մասի՝ սույն օրենսգրքի 11-րդ (բացառությամբ Օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասի) բաժինը ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից: Օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ անշարժ գույքի հարկի հաշվարկման նպատակով անշարժ գույքի կադաստր վարող մարմնի կողմից՝ ըստ անշարժ գույքի սեփականատերերի՝ Օրենսգրքի 227-րդ հոդվածով սահմանված անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի (ըստ հողամասերի և (կամ) դրանց համապատասխան բարելավումների) ու դրանց համապատասխան կադաստրային արժեքների ու հաշվարկային զուտ եկամուտների վերաբերյալ տեղեկությունները հարկ վճարողներին հաշվառող մարմիններ ներկայացնելուն վերաբերող դրույթն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:)

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԸ

Գ Լ Ո Ւ Խ 45

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԸ ԵՎ ՎՃԱՐՈՂՆԵՐԸ

Հոդված 224. Անշարժ գույքի հարկը

1. Անշարժ գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար սույն բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

2. Անկախ սույն հոդվածի 1-ին մասում նշված սեփականության իրավունքի առկայությունից՝ սույն բաժնով սահմանված դեպքերում ու կարգով անշարժ գույքի հարկ վճարվում է նաև մշտական օգտագործման տրամադրված՝ պետական սեփականություն հանդիսացող հողերի, ինչպես նաև Օրենսգրքի 227-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետում նշված հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար:

Հոդված 225. Անշարժ գույքի հարկ վճարողները

1. Անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք, բացառությամբ պետական մարմինների, համայնքային կառավարչական հիմնարկների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, ինչպես նաև բազմաբնակարան շենքի բնակարանների և (կամ) ոչ բնակելի տարածքների սեփականատերերի՝ բազմաբնակարան շենքի սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ (այդ թվում՝ շենքի տակ գտնվող)՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով այդ սեփականատերերին պատկանող հողամասի մասով:

2. Մշտական օգտագործման տրամադրված պետական սեփականություն հանդիսացող հողի համար անշարժ գույքի հարկը վճարում է պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողը:

3. Եթե հարկման օբյեկտն ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է մեկից ավելի հարկ վճարողների, ապա անշարժ գույքի հարկի գծով սույն բաժնով սահմանված պարտավորությունների համար նրանք կրում են համապարտ պատասխանատվություն, բացառությամբ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող այն հողամասերի, որոնցում առկա են տարբեր հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի միավորներ՝ շենքեր և (կամ) շինություններ: Տարբեր հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի միավորներով ծանրաբեռնված՝ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող հողամասերի մասով անշարժ գույքի հարկի գծով սույն բաժնով սահմանված պարտավորությունների համար նրանք պատասխանատվություն են կրում հավասար չափով:

4. Եթե հարկման օբյեկտն ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանում է մեկից ավելի հարկ վճարողների, ապա անշարժ գույքի հարկի գծով սույն բաժնով սահմանված պարտավորությունների համար նրանք պատասխանատվություն են կրում յուրաքանչյուրն իր բաժնի չափով:

(225-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Հոդված 226. Լիազոր մարմինները

1. Օրենսգրքի 4-րդ հոդվածով սահմանված՝ «լիազոր մարմին» հասկացությունը, սույն բաժնի կիրառության իմաստով, ունի հետևյալ նշանակությունը.

1) անշարժ գույքի կադաստր վարող մարմին՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցում իրականացնող՝ Կառավարության լիազոր պետական կառավարման մարմին.

2) հաշվառող մարմիններ՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմիններ, որոնք՝

ա. իրականացնում են հարկ վճարողների և անշարժ գույքի հարկի հաշվառումը՝ Կառավարության սահմանած կարգով,

բ. իրականացնում են անշարժ գույքի հարկի վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների հավաքումը), վճարման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև հարկային վարչարարությունը:

(226-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Գ Լ Ո Ւ Խ 46

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏԸ, ՀԱՐԿՄԱՆ ԲԱԶԱՆ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Հոդված 227. Անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտը

1. Անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ է համարվում անշարժ գույքը՝ հողամասերը և (կամ) դրանց բարելավումները:

2. Սույն բաժնի կիրառության իմաստով, հողամասերը՝ ըստ նպատակային և գործառնական նշանակության, սահմանվում են Հայաստանի Հանրապետության հողային օրենսդրությամբ, իսկ հողամասերի բարելավումներ են համարվում հողամասերում կառուցված հետևյալ ստորգետնյա և վերգետնյա շենքերը, շինությունները կամ կառույցները (այսուհետ սույն բաժնում՝ շինություններ).

1) բնակելի նշանակության շինությունները, այդ թվում՝

ա. անհատական բնակելի տունը՝ հողամասի վրա կառուցված, իր տնտեսական շինություններով կառույցը,

բ. բազմաբնակարան բնակելի շենքի բնակարանը՝ բազմաբնակարան բնակելի շենքում ֆիզիկական անձանց բնակության համար նախատեսված, իրավունքների պետական գրանցումն իրականացնող լիազոր մարմնում առանձին ծածկագրով գրանցված և համարակալված տարածքը,

գ. այգետնակը (ամառանոցը)՝ այգեգործական զանգվածում առանձին հողամասի վրա կառուցված իր տնտեսական շինություններով կառույցը.

2) բազմաբնակարան բնակելի շենքը՝ մեկից ավելի բնակարաններ, ոչ բնակելի և ընդհանուր օգտագործման տարածքներ ունեցող կառույցը.

3) բազմաբնակարան շենքի ոչ բնակելի տարածքը՝ բազմաբնակարան շենքում բնակարան, հասարակական, արտադրական նշանակության շինություն չհամարվող, իրավունքների պետական գրանցումն իրականացնող լիազորված մարմնում առանձին ծածկագրով գրանցված և համարակալված տարածքը.

4) ավտոտնակը՝ տրանսպորտային միջոցների կայանման համար նախատեսված կառույցը.

5) հասարակական նշանակության շինությունը՝ բնակչության սոցիալական սպասարկման, վարչական նպատակներով օգտագործման կամ հասարակական կազմակերպությունների տեղակայման համար նախատեսված շենքերը և շինությունները.

6) արտադրական նշանակության շինությունը՝ արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրությունների տեղակայման և դրանց մեջ տեխնոլոգիական սարքավորումների շահագործման համար անհրաժեշտ պայմաններ ապահովող շենքերը և շինությունները.

7) Կառավարության սահմանած կարգով բնութագրվող՝ սույն մասում նշված համապատասխան անավարտ կիսակառույց շինությունները.

8) Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ նոր կառուցված և (կամ) փոփոխություններ կրած և անշարժ գույքի կադաստր վարող մարմնի կողմից հաշվառված ու գնահատված՝ սույն մասում նշված համապատասխան հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքը, որը դեռևս չի ստացել իրավունքների պետական գրանցում, ինչպես նաև հողամասի սեփականության իրավունք ունեցող հարկ վճարողների կողմից այդ հողամասի վրա ինքնակամ կառուցված շենքերը և շինությունները, այդ թվում՝ բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից ինքնակամ կառույցները:

(227-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Հոդված 228. Անշարժ գույքի հարկով հարկման բազան

1. Անշարժ գույքի հարկով հարկման բազա են համարվում Օրենսգրքի բաղկացուցիչ մասը կազմող հավելված 1-ով սահմանված կարգով գնահատված հողամասի և շինությունների կադաստրային արժեքները, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքի:

2. Գյուղատնտեսական նշանակության հողերի համար անշարժ գույքի հարկով հարկման բազա է համարվում Օրենսգրքի բաղկացուցիչ մասը կազմող հավելված 2-ով սահմանված՝ կադաստրային գնահատման կարգով հաշվարկված հաշվարկային զուտ եկամուտը:

3. Անշարժ գույքի գնահատումը կամ վերագնահատումը (այսուհետ սույն բաժնում նաև՝ կադաստրային գնահատում) կատարում է անշարժ գույքի կադաստր վարող մարմինը երեք տարին մեկ անգամ՝ կադաստրային գնահատման հարկային տարվա հուլիսի 1-ի դրությամբ հաշվառված տվյալներով: Գնահատված կամ վերագնահատված կադաստրային արժեքը (հաշվարկային զուտ եկամուտը) հիմք է ընդունվում գնահատման կամ վերագնահատման հարկային տարվան հաջորդող երեք հարկային տարիների համար հարկման բազան որոշելու համար, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքերի:

4. Կադաստրային գնահատման հարկային տարվա հուլիսի 1-ից հետո Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով սեփականության իրավունքով ձեռք բերված, ինչպես նաև կադաստրային գնահատման հարկային տարվա հուլիսի 1-ի դրությամբ անշարժ գույքի կադաստր վարող մարմնում առկա հաշվառման (այդ թվում՝ ընթացիկ հաշվառում իրականացնող իրավասու մարմնից ստացված) տվյալների համեմատությամբ մինչև անշարժ գույքի հաջորդ կադաստրային գնահատման հարկային տարին ներառյալ ընկած ժամանակաշրջանում նոր առաջացած և (կամ) փոփոխություններ կրած հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի հարկման բազան հաշվարկվում է Օրենսգրքի բաղկացուցիչ մասը կազմող 1-ին կամ 2-րդ հավելվածներով սահմանված կադաստրային գնահատման կարգերով, որը հիմք է ընդունվում գնահատման ամսվան հաջորդող ամսվանից մինչև սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված հաջորդ կադաստրային գնահատման հարկային տարին ներառյալ հարկման բազան որոշելու համար:

5. Սույն բաժնի կիրառության իմաստով՝ նոր առաջացած և (կամ) փոփոխություններ կրած է համարվում

կադաստրային գնահատման հարկային տարվա հուլիսի 1-ի դրությամբ անշարժ գույքի կադաստր վարող մարմնում գրանցված տեղեկությունների համեմատությամբ մինչև հաջորդ կադաստրային գնահատման հարկային տարվա ավարտը նոր կառուցված կամ նպատակային կամ գործառնական նշանակության (հողատեսքի), ավարտվածության աստիճանի, հարկայնության փոփոխություններ կրած հարկման օբյեկտ համարվող (այդ թվում՝ Օրենսգրքի 227-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետում նշված) անշարժ գույքը:

6. Սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված անշարժ գույքի վերաբերյալ ընթացիկ հաշվառման տեղեկությունները հաշվառող մարմիններն անշարժ գույքի կադաստր վարող մարմին են ներկայացնում Օրենսգրքի 235-րդ հոդվածով սահմանված կարգով:

7. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված կադաստրային արժեքները և հաշվարկային զուտ եկամուտները համարվում են անշարժ գույքի հարկով հարկման բազա մինչև անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական գնահատման կարգը սահմանող օրենքի ուժի մեջ մտնելը, որի ուժի մեջ մտնելուց հետո անշարժ գույքի հարկով հարկման բազա է համարվում անշարժ գույքի հարկման օբյեկտի շուկայական արժեքը:

Հոդված 229. Անշարժ գույքի հարկի դրույքաչափերը

1. Անշարժ գույքի հարկը հաշվարկվում է հետևյալ տարեկան դրույքաչափերով.

1) գյուղատնտեսական նշանակության հող հանդիսացող անշարժ գույքի համար՝ 15 տոկոս.

2) ոչ գյուղատնտեսական նշանակության հող հանդիսացող անշարժ գույքի համար՝

ա. արդյունաբերության (ներառյալ՝ հանքավայրերը և արտադրական գործունեությունից խախտված տարածքները), տրանսպորտի, կապի, ռադիոհեռարձակման, հեռուստատեսության, պաշտպանության նպատակներով օգտագործվող, գազատար խողովակաշարերով զբաղեցված հողատարածքների, ինչպես նաև ջրային ֆոնդի հողերի համար հետևյալ չափերով.

Բնակավայրերի ներսում	1 տոկոս
Բնակավայրերից դուրս	0.5 տոկոս

բ. գյուղական համայնքների վարչական սահմաններում ընդգրկված բնակելի կառուցապատման հող հանդիսացող անշարժ գույքի համար՝ 0.6 տոկոս,

գ. անտառային ֆոնդի հողերի (բացառությամբ դրանցում գտնվող գյուղատնտեսական հողատեսքերի) համար՝ մեկ տոկոս,

դ. ոչ գյուղատնտեսական նշանակության մյուս հողերի համար՝ մեկ տոկոս.

3) Օրենսգրքի 227-րդ հոդվածի 2-րդ մասի 1-3-րդ, 7-րդ և 8-րդ կետերով սահմանված հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար (բացառությամբ սույն մասի 4-րդ և 5-րդ կետերով սահմանված դեպքերի)՝

Հարկման բազան	Հարկի դրույքաչափը
մինչև 3 միլիոն դրամը ներառյալ	0 տոկոս
3 միլիոն դրամից ավելի՝ մինչև 10 միլիոն դրամը ներառյալ	100 դրամ՝ գումարած հարկման բազայի 3 միլիոն դրամը գերազանցող մասի 0.1 տոկոսը
10 միլիոն դրամից ավելի՝ մինչև 20 միլիոն դրամը ներառյալ	7100 դրամ՝ գումարած հարկման բազայի 10 միլիոն դրամը գերազանցող մասի 0.2 տոկոսը

20 միլիոն դրամից ավելի՝ մինչև 30 միլիոն դրամը ներառյալ	27100 դրամ՝ գումարած հարկման բազայի 20 միլիոն դրամը գերազանցող մասի 0.4 տոկոսը
30 միլիոն դրամից ավելի՝ մինչև 40 միլիոն դրամը ներառյալ	67100 դրամ՝ գումարած հարկման բազայի 30 միլիոն դրամը գերազանցող մասի 0.6 տոկոսը
40 միլիոն դրամից ավելի	127100 դրամ՝ գումարած հարկման բազայի 40 միլիոն դրամը գերազանցող մասի մեկ տոկոսը

4) Օրենսգրքի 227-րդ հոդվածի 2-րդ մասի 5-8-րդ կետերով սահմանված՝ հարկման օբյեկտ համարվող հասարակական և արտադրական նշանակության շինություն հանդիսացող անշարժ գույքի համար՝ 0.3 տոկոս.

5) Օրենսգրքի 227-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ, 7-րդ և 8-րդ կետերով սահմանված՝ հարկման օբյեկտ համարվող ավտոտնակ հանդիսացող անշարժ գույքի համար՝ 0.2 տոկոս:

2. Համայնքի ավագանին համայնքի ղեկավարի առաջարկությամբ կարող է մինչև տասը տոկոսով բարձրացնել տվյալ համայնքի բյուջե վճարվող անշարժ գույքի հարկի հաշվարկման՝ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափերը:

Գ Լ Ո Ւ Խ 47

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 230. Անշարժ գույքի հարկի արտոնությունները

1. Անշարժ գույքի հարկից ազատվում են՝

1) պետական արգելանոցները և արգելավայրերը, ազգային և ծառաբանական զբոսայգիները, բուսաբանական այգիները և պատմամշակութային նշանակության հողերը, բացառությամբ վարձակալության և ծառայողական օգտագործման տրված հողերի.

2) բնակավայրերում պետական սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման հողերը (մասնավորապես՝ հրապարակներ, փողոցներ, անցումներ, ճանապարհներ, զբոսայգիներ, պուրակներ, ջրամբարներ).

3) հանրակրթական, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին կից ուսումնաարտադրական և փորձարարական հողամասերը.

4) գյուղատնտեսական նշանակության հողերի՝ բազմամյա տնկարկների (խաղող, կորիզավոր պտուղ կամ հնդավոր պտուղ) հողատեսքերի վրա նոր հիմնված և երիտասարդ խաղողի ու պտղատու այգիները, մինչև տնկարկների յուրաքանչյուր տեսակի համար՝ ըստ ագրոտեխնիկական ցուցումների լրիվ պտղաբերության հասնելու տարին ներառյալ՝ դրանց տարածքը 0.1 հեկտար և ավելի լինելու դեպքում.

5) պետական անտառային ֆոնդի հողերը, բացառությամբ գյուղատնտեսական նշանակության վարձակալության տրված հողերի.

6) օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների դիվանագիտական և ներկայացուցչական նպատակների համար օգտագործվող հողերը՝ փոխադարձության սկզբունքով, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի բնագավառում լիազորված պետական կառավարման մարմնի միջնորդության հիման վրա.

7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պետական սեփականություն համարվող պատմամշակութային նշանակության հարկման օբյեկտ համարվող շինությունները՝ Կառավարության սահմանած ցանկին համապատասխան, ինչպես նաև կրոնական կազմակերպություններին սեփականության իրավունքով պատկանող՝ մինչև 1991 թվականը կառուցված Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դասակարգմանը համապատասխան՝ կրոնական, պաշտամունքային շինությունները.

8) Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին)՝

ա. սեփականության իրավունքով պատկանող հուշարձանի կարգավիճակ չունեցող եկեղեցիները, հոգևոր-մշակութային, կրթադաստիարակչական, եկեղեցական և ծիսական պարագաների արտադրության և իրացման համար օգտագործվող շինությունները, որոնց ցանկը սահմանում է Կառավարությունը,

բ. սեփականության և անհատույց մշտական օգտագործման իրավունքով պատկանող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դասակարգմանը համապատասխան՝ կրոնական, պաշտամունքային շինությունների, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին) պատկանող՝ հուշարձանի կարգավիճակ չունեցող եկեղեցիների, հոգևոր-մշակութային, կրթադաստիարակչական, եկեղեցական և ծիսական պարագաների արտադրության և իրացման համար օգտագործվող կառույցների, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի) ներքին սպասարկումն իրականացնող արհեստանոցների զբաղեցրած, ինչպես նաև դրանց սպասարկման և օգտագործման համար անհրաժեշտ հողամասերը: Սույն ենթակետում նշված շինությունների, ինչպես նաև դրանց սպասարկման և օգտագործման համար անհրաժեշտ հողամասերի ցանկը սահմանում է Կառավարությունը.

9) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասից կամովին հրաժարվելու դեպքում՝ համայնքային կամ պետական սեփականություն ճանաչված հողամասերի սեփականատեր հանդիսացած ֆիզիկական անձինք՝ այդ հողամասերի համար.

10) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ գծային ինժեներատրանսպորտային շինությունները, որոնցից օգտվելու համար վճար չի գանձվում: Համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքում գործող հանրապետական և միջպետական շինարարական նորմերի՝ գծային ինժեներատրանսպորտային շինություններ են համարվում ավտոմոբիլային ճանապարհները, երկաթուղիները, կամուրջները և խողովակները, ավտոմոբիլային և երկաթուղային թունելները, հիդրոտեխնիկական թունելները, արդյունաբերական տրանսպորտը (մոնոռելս, կոնվեյերային տրանսպորտ, խողովակաշարային-կոնտեյներային), ճոպանուղիները, վերելակները, քաղաքային էլեկտրատրանսպորտային ուղիները, գազամատակարարման, նավթամատակարարման, ջրամատակարարման, ջերմամատակարարման ցանցերը, կոյուղու կոլեկտորները, մելիորատիվ ցանցերը, մայրուղային խողովակաշարերը.

11) ջրամբարները.

12) Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների ընթացքում զոհված կամ ծառայողական պարտականությունները կատարելիս անհայտ կորած կամ անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված անձանց (կամ նրանց ընտանիքի անդամներին) սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքը՝ մինչև այդ անձանց զավակներից մեկի 18 տարին լրանալը, իսկ եթե անձն ամուսնացած չի եղել կամ չունի (չի ունեցել) զավակներ՝ մինչև հարկման օբյեկտի նկատմամբ ընտանիքի անդամի սեփականության իրավունքի դադարելը.

13) փոստային կապի ազգային օպերատորը.

14) ազատ տնտեսական գոտու տարածքում գտնվող ազատ տնտեսական գոտու շահագործողներին պատկանող կամ նրանց կողմից օգտագործվող հասարակական և արտադրական նշանակության շինությունները.

15) ծառայության ընթացքում՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով դաշնակից երկրների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության զինված ուժերում և այլ զորքերում պարտադիր ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվող անձինք՝

ա. սեփականության իրավունքով իրենց պատկանող՝ հասարակական և (կամ) արտադրական նշանակության շինություններ չհանդիսացող շինությունների մասով,

բ. ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով իրենց պատկանող՝ սույն կետի «ա» ենթակետում նշված՝ անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտի դեպքում հարկման օբյեկտի՝ իրենց բաժնի մասով,

գ. ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող՝ սույն կետի «ա» ենթակետում նշված անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտի մասով, եթե մյուս համասեփականատերերն անչափահաս կամ անաշխատունակ անձինք են:

Սույն կետով սահմանված արտոնությունը չի կիրառվում, եթե հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքը ծառայության ընթացքում հանձնվել է վարձակալության կամ հավատարմագրային կառավարման.

16) պարտադիր ժամկետային ծառայության ժամկետի ավարտից հետո, սույն մասի 15-րդ կետի «ա», «բ» կամ «գ» ենթակետերին համապատասխան, անշարժ գույքի հարկից ազատվում են նաև նույն կետում նշված՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերում և այլ զորքերում ծառայություն անցած՝ ռազմաուսումնական հաստատություններն ավարտած անձինք՝ մեկ անշարժ գույքի 40 միլիոն դրամը չգերազանցող մասով:

Սույն կետում նշված հարկ վճարողին սեփականության իրավունքով մեկից ավելի անշարժ գույք պատկանելու դեպքում արտոնությունը կիրառվում է հարկ վճարողի դիմումի մեջ նշված անշարժ գույքի մասով, իսկ արտոնության կիրառության համար հիմք է ընդունվում անշարժ գույքի կադաստր վարող մարմնի կողմից տրված տեղեկանքը՝ հարկ վճարողին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի թվաքանակի և գտնվելու վայրերի վերաբերյալ, ինչպես նաև անշարժ գույքի գտնվելու վայրի (վայրերի) հաշվառող մարմնի (մարմինների) կողմից տրված տեղեկանքը (տեղեկանքները)՝ այլ անշարժ գույքի մասով արտոնություն կիրառված չլինելու վերաբերյալ:

Սույն կետով սահմանված արտոնությունները չեն կիրառվում, եթե հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքը ծառայության ավարտից հետո հանձնվել է վարձակալության կամ հավատարմագրային կառավարման, ինչպես նաև այն դեպքում, երբ հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքը ձեռք է բերվել ծառայության ժամկետի ավարտից հետո:

2. Անշարժ գույքի հարկից 50 տոկոսի չափով ազատվում են գյուղատնտեսական և անտառատնտեսական գիտական կազմակերպությունները, գիտահետազոտական հիմնարկների և ուսումնական հաստատությունների փորձնական, փորձարարական, սերմնաբուծական, տնկարանային, տոհմային և սորտափորձարկման կազմակերպությունները, կայանները և հենակետերը՝ Կառավարության հաստատած ցանկով, այն հողերի համար, որոնք օգտագործվում են բացառապես գիտական և ուսումնական, ինչպես նաև գյուղատնտեսական, անտառաբուծական մշակաբույսերի սորտափորձարկման նպատակներով:

3. Համայնքի ավագանին համայնքի ղեկավարի ներկայացմամբ և համայնքի ավագանու սահմանած կարգով կարող է սահմանել անշարժ գույքի հարկի գծով արտոնություններ և դրանց մասով կայացնել անշարժ գույքի հարկ վճարողի փոխարեն համայնքի բյուջեից վճարում կատարելու որոշումներ: Սույն մասին համապատասխան՝ համայնքի ավագանու սահմանած արտոնության գումարը չի կարող գերազանցել տվյալ հարկային տարվա համար անշարժ գույքի հարկի գծով համայնքի բյուջեի հաստատված եկամուտների տասը տոկոսը: Համայնքի ավագանու կողմից անշարժ գույքի հարկի գծով սահմանված արտոնությունների գումարների դիմաց Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքի բյուջեին լրացուցիչ դոտացիաներ չեն տրամադրվում:

4. Հարկային տարվա ընթացքում անշարժ գույքի հարկի արտոնություն ունեցող անշարժ գույքի հարկ վճարողը անշարժ գույքի հարկից ազատվում է այն ամսվա 1-ից, երբ առաջացել է արտոնության իրավունքը:

5. Հարկային տարվա ընթացքում անշարժ գույքի հարկի արտոնությունը դադարելու դեպքում անշարժ գույքի հարկը հաշվարկվում է արտոնության իրավունքը դադարելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

6. Անշարժ գույքի հարկի արտոնություններից օգտվելու իրավունքը հաստատող փաստաթղթերը և դրանց ներկայացման կարգը սահմանում է Կառավարությունը:

(230-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Գ Լ Ո Ւ Խ 48

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ

Հոդված 231. Անշարժ գույքի հարկի պարտավորության առաջանալու և դադարելու կարգը

1. Անշարժ գույքի հարկի պարտավորությունն առաջանում է անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտի կամ դրա մի մասի նկատմամբ սեփականության կամ մշտական օգտագործման իրավունքի պետական գրանցման ամսվան հաջորդող ամսվա 1-ից: Անշարժ գույքի հարկի հաշվարկման (հարկային պարտավորությունների առաջացման) համար հիմք են համարվում անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտի կամ դրա մի մասի նկատմամբ սեփականության կամ մշտական օգտագործման իրավունքը հիմնավորող փաստաթղթերը:

2. Անշարժ գույքի հարկի հաշվարկումը դադարում է անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտի կամ դրա մի մասի նկատմամբ սեփականության կամ մշտական օգտագործման իրավունքը դադարելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

3. Անկախ սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթներից՝

1) Օրենսգրքի 227-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետում նշված՝ սեփականության իրավունքով պետական գրանցում չստացած հարկման օբյեկտների համար անշարժ գույքի հարկի գծով հարկային պարտավորությունն առաջանում է անշարժ գույքի կադաստր վարող մարմնի կողմից դրանց հաշվառման և գնահատման վերաբերյալ տեղեկությունները հաշվառող մարմիններին տրամադրելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից: Սեփականության իրավունքով չգրանցվելու դեպքում նշված հարկման օբյեկտների համար անշարժ գույքի հարկի հաշվարկումը դադարում է անշարժ գույքի կադաստր վարող մարմնում այդ օբյեկտները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվառումից հանելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից.

2) հարկման օբյեկտի սեփականատեր համարվող ֆիզիկական անձի մահվան կամ դատարանի վճռով մահացած ճանաչելու դեպքերում Օրենսգրքով սահմանված կարգով նոր սեփականատիրոջն են անցնում մահացած կամ դատարանի վճռով մահացած ճանաչված ֆիզիկական անձի կողմից տվյալ հարկման օբյեկտի համար չկատարված հարկային պարտավորությունները, ինչպես նաև մահվան օրվանից մինչև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով սեփականության (ժառանգության) իրավունքի պետական գրանցման ամիսը ներառյալ տվյալ հարկման օբյեկտի համար անշարժ գույքի հարկի գծով հաշվարկված պարտավորությունները: Սույն կետով սահմանված դեպքերում անշարժ գույքի հարկի պարտավորությունն առաջանում է սեփականության (ժառանգության) իրավունքի ձևակերպման ամսվան հաջորդող ամսվա 1-ից.

3) եթե հարկման օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքը պետական գրանցում է ստանում դատավճռի, վճռի կամ իրավական ակտի հիման վրա, ապա նոր սեփականատիրոջն են անցնում դատավճռի, վճռի կամ իրավական ակտի ընդունման ամսվան հաջորդող ամսվա 1-ից մինչև սեփականության իրավունքի պետական գրանցման ամիսը ներառյալ տվյալ հարկման օբյեկտի համար անշարժ գույքի հարկի գծով հաշվարկված պարտավորությունները: Սույն կետով սահմանված դեպքերում անշարժ գույքի հարկի պարտավորությունն առաջանում է դատավճռի, վճռի կամ իրավական ակտի ուժի մեջ մտնելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից.

4) եթե հարկման օբյեկտի նկատմամբ ֆիզիկական անձի սեփականության իրավունքը ծագում է, կամ սույն մասի 1-

3-րդ կետերով սահմանված դեպքում հարկային պարտավորությունն առաջանում է անշարժ գույքի հարկի վճարման համար Օրենսգրքի 236-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետին նախորդող ամսվա ընթացքում, ապա տվյալ հարկման օբյեկտի գծով այդ հարկային տարվա հարկային պարտավորությունն ավելանում է հաջորդ հարկային տարվա հարկային պարտավորությանը:

4. Հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառված որևէ արգելանքի առկայությունը հիմք չի համարվում անշարժ գույքի հարկը չհաշվարկելու համար:

Հոդված 232. Հաշվետու ժամանակաշրջանը

1. Անշարժ գույքի հարկի հաշվարկման և վճարման համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր հաշվետու տարին:

Հոդված 233. Տեղական բյուջե վճարման ենթակա անշարժ գույքի հարկի գումարի հաշվարկման կարգը

1. Անշարժ գույքի հարկը հաշվարկվում է որպես հողամասի կադաստրային արժեքի (հաշվարկային զուտ եկամտի) և դրա բարելավում հանդիսացող շինության (շինությունների) կադաստրային արժեքի (արժեքների) նկատմամբ Օրենսգրքի 229-րդ հոդվածով սահմանված համապատասխան դրույքաչափերով հաշվարկված մեծությունների հանրագումար՝ հաշվի առնելով Օրենսգրքի 230-րդ հոդվածով սահմանված արտոնությունները և Օրենսգրքի 234-րդ հոդվածի դրույթները:

2. Օրենսգրքի 231-րդ հոդվածով սահմանված կարգով անշարժ գույքի հարկի պարտավորության առաջացման կամ անշարժ գույքի հարկի հաշվարկման դադարման դեպքերում սույն հոդվածի 1-ին մասին համապատասխան հաշվարկված՝ անշարժ գույքի հարկի տարեկան գումարները ճշգրտվում են տվյալ հարկային տարվա ընթացքում անշարժ գույքի հարկի վճարման պարտավորությունների առաջացման կամ անշարժ գույքի հարկի հաշվարկման դադարման ամիսներին համամասնորեն:

3. Հաշվառող մարմինները, հիմք ընդունելով անշարժ գույքի կադաստր վարող մարմնից Օրենսգրքի 235-րդ հոդվածով սահմանված կարգով ստացված տեղեկությունները, սույն բաժնով սահմանված կարգով հաշվարկում են անշարժ գույքի հարկ վճարողների անշարժ գույքի հարկի գումարները, և հաշվարկված անշարժ գույքի հարկի գումարների վերաբերյալ տեղեկությունները մինչև ընթացիկ հարկային տարվա նոյեմբերի 1-ը փակցնում են համայնքի վարչական շենքի տեսանելի տեղում և (կամ) տեղադրում են իրենց էլեկտրոնային կայքերում: Հաշվառող մարմինները կարող են նաև սույն մասում նշված ժամկետում անշարժ գույքի հարկ վճարողներին ներկայացնել անշարժ գույքի հարկի վճարման ծանուցագրեր (այդ թվում՝ ուղարկել փոստով կամ հանձնել առձեռն):

4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետում տեղեկություն չփակցնելը կամ ծանուցագիր չներկայացնելը անշարժ գույքի հարկ վճարողին չի ազատում հարկային պարտավորություններն ամբողջությամբ կատարելու պարտականությունից:

5. Անշարժ գույքի հարկ վճարողներն անշարժ գույքի հարկի գծով իրենց պարտավորությունների վերաբերյալ տեղեկանք կամ տեղեկություններ ստանալու նպատակով կարող են դիմել հաշվառող մարմիններին: Հաշվառող մարմինները նշված տեղեկանքները կամ տեղեկությունները տրամադրում են դիմումները ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

6. Անշարժ գույքի հարկի հաշվարկի հետ չհամաձայնելու դեպքում անշարժ գույքի հարկ վճարողները հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի մասով անշարժ գույքի հարկի հաշվարկի ճշգրտման նպատակով կարող են դիմել համապատասխան հաշվառող մարմիններին, իսկ հարկման բազայի ճշգրտման նպատակով անհրաժեշտ տեղեկություններ ու տվյալներ ստանալու նպատակով կարող են դիմել անշարժ գույքի կադաստր վարող մարմին: Հաշվառող կամ լիազոր մարմինները նշված տեղեկությունները տրամադրում են դիմումները ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Հոդված 234. Ընդհանուր սեփականության անշարժ գույքի հարկի գումարի հաշվարկման կարգը

1. Ընդհանուր սեփականություն հանդիսացող՝ անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտի համար անշարժ գույքի հարկը հաշվարկվում է անշարժ գույքի ամբողջ հարկման բազայից հաշվառող մարմինների կողմից:

2. Հաշվառող մարմինները, հիմք ընդունելով անշարժ գույքի կադաստր վարող մարմնից Օրենսգրքի 235-րդ հոդվածով սահմանված կարգով ստացված տեղեկությունները, համասեփականատեր անշարժ գույքի հարկ վճարողների անշարժ գույքի հարկը հաշվարկում են՝

1) ընդհանուր համատեղ սեփականության դեպքում՝ անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտի ամբողջ հարկման բազայի համար Օրենսգրքի 233-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված ամբողջ հարկային պարտավորությունը՝ համասեփականատերերից որևէ մեկի համար.

2) ընդհանուր բաժնային սեփականության դեպքում՝ անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտի ամբողջ հարկման բազայի համար Օրենսգրքի 233-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված հարկային պարտավորությունը համասեփականատերերից յուրաքանչյուրի համար՝ իր բաժնի չափով:

Հոդված 235. Տեղեկությունների տրամադրումը

1. Կառավարության սահմանած կարգով՝

1) անշարժ գույքի կադաստր վարող մարմինը գնահատման կամ վերագնահատման հարկային տարվա հուլիսի 1-ի դրությամբ հաշվառված ու գնահատված (վերագնահատված)՝ անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի ու դրանց գնահատումների (վերագնահատումների) վերաբերյալ ամփոփ տեղեկությունները մինչև գնահատման (վերագնահատման) հարկային տարվա սեպտեմբերի 1-ը ներառյալ ներկայացնում է հաշվառող մարմիններին.

2) անշարժ գույքի կադաստր վարող մարմինը մինչև յուրաքանչյուր ամսվա 15-ը ներառյալ նախորդ ամսվա ընթացքում անշարժ գույքի սեփականատերերի, ինչպես նաև անշարժ գույքի հաշվառման ու գնահատման տվյալների փոփոխությունների վերաբերյալ տեղեկությունները ներկայացնում է հաշվառող մարմիններին.

3) հարկային մարմինն իր գործառույթների իրականացման ընթացքում կարող է համապատասխան հաշվառող մարմիններից տեղեկատվություն ստանալ անշարժ գույքի հարկի հաշվարկված գումարների վերաբերյալ.

4) հաշվառող մարմինները մինչև յուրաքանչյուր ամսվա 15-ը ներառյալ Օրենսգրքի 228-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված նախորդ գնահատման տարվա հուլիսի 1-ի դրությամբ գրանցված տվյալների համեմատությամբ՝ նախորդ ամսվա ընթացքում նոր առաջացած և (կամ) փոփոխություններ կրած հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի ընթացիկ հաշվառման վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունները ներկայացնում են անշարժ գույքի կադաստր վարող մարմին:

2. Անշարժ գույքի հարկ վճարողները անշարժ գույքի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ կարող են ստանալ Օրենսգրքի 226-րդ հոդվածով սահմանված լիազոր մարմիններից:

(235-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Գ Լ Ո Ւ Խ 49

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ, ՀԱՇՎԱՆՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԿԱՐԳԸ

Հոդված 236. Անշարժ գույքի հարկի գումարի վճարումը

1. Կազմակերպությունները և ֆիզիկական անձինք անշարժ գույքի հարկի տարեկան գումարները (այդ թվում՝ Օրենսգրքի 231-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերում ու կարգով հաշվարկված անշարժ գույքի հարկի պարտավորության գումարները) անշարժ գույքի գտնվելու վայրի համայնքի բյուջե են վճարում մինչև հարկային տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ՝ հաշվի առնելով սույն հոդվածով սահմանված առանձնահատկությունները:

2. Անշարժ գույքի օտարման դեպքում անշարժ գույքի հարկ վճարող ֆիզիկական անձինք մինչև սեփականության իրավունքի փոխանցման պետական գրանցման օրն ընդգրկող ամիսը ներառող ժամանակահատվածի համար անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ հանդիսացող տվյալ անշարժ գույքի մասով անշարժ գույքի հարկի պարտավորություններն ամբողջությամբ կատարում են մինչև օտարման պայմանագրից ծագող սեփականության իրավունքի պետական գրանցումը, բացառությամբ, երբ օտարումը կատարվում է դատական ակտերի հարկադիր կատարողի, սնանկության կառավարչի կողմից կամ գրավառուի կողմից:

3. Անշարժ գույքի օտարման դեպքում անշարժ գույքի հարկ վճարող կազմակերպությունները մինչև սեփականության իրավունքի փոխանցման պետական գրանցման օրն ընդգրկող ամիսը ներառող ժամանակահատվածի համար տվյալ համայնքում գտնվող անշարժ գույքի հարկով հարկման բոլոր օբյեկտների մասով անշարժ գույքի հարկի պարտավորություններն ամբողջությամբ կատարում են մինչև օտարման պայմանագրից ծագող սեփականության իրավունքի պետական գրանցումը, բացառությամբ, երբ օտարումը կատարվում է դատական ակտերի հարկադիր կատարողի, սնանկության կառավարչի կողմից կամ գրավառուի կողմից:

4. Բացառությամբ այն դեպքերի, երբ օտարումը կատարվում է դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության, սնանկության կառավարչի կողմից կամ գրավառուի կողմից, անշարժ գույքի կադաստր վարող մարմինը անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքների պետական գրանցումն իրականացնում է հաշվառող մարմինների կողմից տրված՝ անշարժ գույքի գծով հարկային պարտավորություններ չունենալու վերաբերյալ տեղեկանքի հիման վրա, որում նշվում է նաև տեղեկանքը տրամադրելու հարկային տարվա այն ժամանակահատվածը, որի համար տվյալ անշարժ գույքի մասով կատարված են անշարժ գույքի հարկի (կազմակերպությունների համար՝ տվյալ հաշվառող մարմնում հաշվառված բոլոր օբյեկտների մասով անշարժ գույքի հարկի) վճարումները:

(236-րդ հոդվածը լրաց. 21.12.17 ՀՕ-266-Ն)

Հոդված 237. Անշարժ գույքի հարկի գումարի՝ այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցումը և (կամ) վերադարձը

1. Օրենսգրքով սահմանված չափից ավելի վճարված անշարժ գույքի հարկի գումարների հաշվանցումը և (կամ) վերադարձն իրականացվում են Կառավարության սահմանած կարգով:

(237-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Հոդված 238. Անշարժ գույքի կադաստրային գնահատումը

1. Անշարժ գույքի կադաստր վարող մարմինը, Օրենսգրքի բաղկացուցիչ մասը կազմող 1-ին և 2-րդ հավելվածներին համապատասխան, տվյալ հարկային տարվա հուլիսի 1-ի դրությամբ առկա (այդ թվում՝ համայնքների ղեկավարների՝ հողամասերի և շինությունների ընթացիկ հաշվառման վերաբերյալ տրամադրած) տվյալների հիման վրա՝

1) առաջին կադաստրային գնահատությունն իրականացնում է 2019 թվականին, որի տվյալները հիմք են ընդունվում հետագա հարկային երեք տարիների հարկման բազան որոշելու համար.

2) հետագա կադաստրային գնահատություններն իրականացնում է Օրենսգրքի 228-րդ հոդվածի 3-րդ մասում նշված պարբերականությամբ:

2. Անկախ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետներից՝ Օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով սեփականության իրավունքով ձեռք բերված (բացառությամբ ֆիզիկական անձանց համապարփակ իրավահաջորդության կարգով անցած), ինչպես նաև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց առաջ նախորդ (վերջին) գնահատման հարկային տարվա հուլիսի 1-ի դրությամբ գրանցված տվյալների համեմատությամբ Օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո նոր առաջացած և (կամ) փոփոխություններ կրած հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի կադաստրային գնահատումն իրականացվում է Օրենսգրքի բաղկացուցիչ մասը կազմող 1-ին և 2-րդ հավելվածներով սահմանված՝ կադաստրային գնահատման կարգերով, և Օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված կարգով ու ժամկետներում տեղեկությունները ներկայացվում են հաշվառող մարմին:

3. 2018 և 2019 թվականների ընթացքում անշարժ գույքի հարկի հաշվարկման համար հիմք են ընդունվում հողամասերի և շինությունների 2016 թվականի կադաստրային գնահատման, իսկ մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը գործող կարգով մինչև Օրենսգրքի ուժի մեջ մտնելը անշարժ գույքի գնահատման (վերագնահատման) դեպքում՝ վերջին գնահատման տվյալները՝ հաշվի առնելով սույն հոդվածի 2-րդ մասի դրույթները: 2018 և 2019 թվականների անշարժ գույքի հարկի հաշվարկման նպատակով անշարժ գույքի կադաստր վարող մարմինը, ըստ անշարժ գույքի սեփականատերերի, Օրենսգրքի 227-րդ հոդվածով սահմանված անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի (ըստ հողամասերի և (կամ) դրանց համապատասխան բարելավումների) ու դրանց համապատասխան կադաստրային արժեքների ու հաշվարկային զուտ եկամուտների վերաբերյալ տեղեկությունները, դրանց ներկայացման համար Օրենսգրքի 235-րդ հոդվածով սահմանված կարգով, մինչև 2017 թվականի հոկտեմբերի 1-ը ներկայացնում է հարկ վճարողներին հաշվառող մարմիններ:

Հավելված 1

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ

1. ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

1.1. Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների կադաստրային արժեքը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$Ա = Ա_մ \times Մ \times Գ_գ \times Գ_ծ \times Գ_բ \times Գ_հ \times Գ_վ \times Գ_մ \times Գ_ա$$

որտեղ՝

$Ա_մ$-ն բնակարանի մեկ քառակուսի մետրի արժեքն է՝ ըստ աղյուսակ 1-ի,

Մ-ն բնակարանի ընդհանուր մակերեսն է (ներքին չափերով)՝ արտահայտված քառակուսի մետրերով,

$Գ_գ$-ն բնակարանի տեղադրության (տարածագնահատման գոտիականության) գործակիցն է,

$Գ_ծ$-ն բնակարանի ծածկի տեսակի հետ կապված գործակիցն է,

$Գ_բ$-ն բնակարանի բարձրության (ներքին չափերով) հետ կապված գործակիցն է,

$Գ_հ$-ն բնակարանի հարկայնության հետ կապված գործակիցն է,

$Գ_վ$-ն շինության վնասվածության աստիճանը բնութագրող գործակիցն է,

$Գ_մ$-ն շինության մաշվածությունը (շահագործման տևողությունը) բնութագրող գործակիցն է,

$Գ_ա$-ն շինության ավարտվածության աստիճանը բնութագրող գործակիցն է:

1.2. Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների կադաստրային արժեքի հաշվարկման նպատակով՝

ա. բնակարանի մեկ քառակուսի մետրի արժեքը ($Ա_մ$) սահմանվում է՝

Աղյուսակ 1

երկաթբետոնյա շինության համար	230000 դրամ
քարե շինության համար	255000 դրամ

բ. բնակարանի տեղադրության (տարածագնահատման գոտիականության) գործակիցները ($Գ_գ$) սահմանում է Կառավարությունը՝ հետևյալ չափերի շրջանակներում.

Մարզ (Երևան քաղաք)	Նվազագույնը	Առավելագույնը
Երևան քաղաք	0.17	1
Կոտայք	0.055	0.26
Արմավիր և Արարատ	0.044	0.32
Արագածոտն	0.035	0.32
Շիրակ	0.035	0.21
Լոռի	0.035	0.26
Տավուշ	0.035	0.17
Սյունիք, Վայոց ձոր և Գեղարքունիք	0.035	0.13

գ. բնակարանի ծածկի տեսակի հետ կապված գործակիցը ($Գ_ծ$) սահմանվում է՝

երկաթբետոնից ծածկի համար	1
փայտից ծածկի համար	0.9

դ. բնակարանի բարձրության (ներքին չափերով) հետ կապված գործակիցը ($Գ_բ$) սահմանվում է՝

մինչև 2.7 մետր բարձրություն ունեցող հարկերի համար	0.9
2.7 մետրից մինչև 3.0 մետր բարձրություն ունեցող հարկերի համար	1
3.0 մետր և ավելի բարձրություն ունեցող հարկերի համար	1.1

ե. բնակարանի հարկայնության հետ կապված գործակիցը ($Գ_հ$) սահմանվում է՝

առաջին հարկի համար	0.95
երկրորդից հինգերորդ հարկերի համար	1
վեցերորդից իններորդ հարկերի համար	0.9
տասներորդ և ավելի բարձր հարկերի համար	0.8
վերջին հարկի համար՝ լրացուցիչ	0.95
նկուղային հարկի համար	0.5
կիսանկուղային հարկի համար	0.65
ձեղնահարկի (տանիքային հարկի) համար	0.7

զ. շինության վնասվածության աստիճանը բնութագրող գործակիցը ($Գ_վ$) սահմանվում է՝

0 աստիճանի վնասվածություն ունեցող շինության համար	1
1-ին և 2-րդ աստիճանի վնասվածություն ունեցող շինության համար	0.95
3-րդ աստիճանի վնասվածություն ունեցող շինության համար	0.5
4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող շինության համար	0

է. շինության մաշվածությունը (շահագործման տևողությունը) բնութագրող գործակիցը ($Գ_մ$) սահմանվում է՝

մինչև 6 տարի (ներառյալ)՝ շահագործման տևողություն ունեցող շինության համար	1
7-ից 9 տարի (ներառյալ)՝ շահագործման տևողություն ունեցող շինության համար	0.94
10-ից 12 տարի (ներառյալ)՝ շահագործման տևողություն ունեցող շինության համար	0.91
13-ից 15 տարի (ներառյալ)՝ շահագործման տևողություն ունեցող շինության համար	0.88
16-ից 18 տարի (ներառյալ)՝ շահագործման տևողություն ունեցող շինության համար	0.85
19-ից 21 տարի (ներառյալ)՝ շահագործման տևողություն ունեցող շինության համար	0.82
22-ից 24 տարի (ներառյալ)՝ շահագործման տևողություն ունեցող շինության համար	0.79
25-ից 27 տարի (ներառյալ)՝ շահագործման տևողություն ունեցող շինության համար	0.76
28-ից 30 տարի (ներառյալ)՝ շահագործման տևողություն ունեցող շինության համար	0.73
31-ից 40 տարի (ներառյալ)՝ շահագործման տևողություն ունեցող շինության համար	0.7
41 տարի և ավելի շահագործման տևողություն ունեցող շինության համար	0.6

ը. շինության ավարտվածության աստիճանը բնութագրող գործակիցը ($Գ_ա$) սահմանվում է՝

մինչև 50 տոկոս (ներառյալ)՝ ավարտվածության աստիճան ունեցող շինության համար	0.5
51-ից 80 տոկոս (ներառյալ)՝ ավարտվածության աստիճան ունեցող շինության համար	0.7
81 տոկոս և ավելի ավարտվածության աստիճան ունեցող շինության համար	1

2. ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ, ԱՅԳԵՏՆԱԿՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՑ ՕԺԱՆԴԱԿ

ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՎՏՈՏՆԱԿՆԵՐԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1. Անհատական բնակելի տների, այգետնակների և դրանց կից օժանդակ շինությունների կադաստրային արժեքը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$Ա = [(Ա_1 + Ա_2 + ... + Ա_n) + (Ա_բ \times Մ_բ \times Գ_մ) + (Ա_պ \times Ծ_պ \times Գ_մ)] \times Գ_գ$$

որտեղ՝

$Ա_1$, $Ա_2$, ... $Ա_n$-ն՝ առաջին, երկրորդ և հաջորդ հարկերի (այդ թվում՝ նկուղի, կիսանկուղի, ձեղնահարկի) կադաստրային արժեքներն են, որոնք հաշվարկվում են հետևյալ բանաձևով.

$$Ա_n = Ա_2 \times Ծ_2 \times Գ_հ \times Գ_ծ \times Գ_մ \times Գ_տ \times Գ_ն \times Գ_ահ \times Գ_վ \times Գ_ա$$

որտեղ՝

$Ա_2$-ն՝ անհատական բնակելի տների, այգետնակների և դրանց կից օժանդակ շինությունների (բացառությամբ պարիսպների և բաց պատշգամբների) ծավալի (ներքին չափերով) մեկ խորանարդ մետրի արժեքն է՝ ըստ աղյուսակ 2-ի,

$Ծ_2$-ն՝ անհատական բնակելի տների, այգետնակների և դրանց կից օժանդակ շինությունների (բացառությամբ պարիսպների և բաց պատշգամբների) ծավալն է (ներքին չափերով)՝ արտահայտված խորանարդ մետրերով,

$Ա_բ$-ն՝ անհատական բնակելի տների, այգետնակների և դրանց կից օժանդակ շինությունների բաց պատշգամբների մակերեսի (ներքին չափերով) մեկ քառակուսի մետրի արժեքն է,

$Մ_բ$-ն՝ անհատական բնակելի տների, այգետնակների և դրանց կից օժանդակ շինությունների բաց պատշգամբների մակերեսն է (ներքին չափերով)՝ արտահայտված քառակուսի մետրերով,

$Ա_պ$-ն՝ անհատական բնակելի տների, այգետնակների և դրանց կից օժանդակ շինությունների պարիսպների ծավալի մեկ խորանարդ մետրի արժեքն է,

$Ծ_պ$-ն՝ անհատական բնակելի տների, այգետնակների և դրանց կից օժանդակ շինությունների պարիսպների ծավալն է՝ արտահայտված խորանարդ մետրերով,

$Գ_գ$-ն՝ շինության տեղադրության (տարածագնահատման գոտիականության) գործակիցն է,

$Գ_հ$-ն՝ շինության հարկայնության հետ կապված գործակիցն է,

$Գ_ծ$-ն՝ շինության ծածկի տեսակի հետ կապված գործակիցն է,

$Գ_մ$-ն՝ շինության մաշվածությունը (շահագործման տևողությունը) բնութագրող գործակիցն է,

$Գ_տ$-ն՝ շինության տանիքի նյութի հետ կապված գործակիցն է,

$Գ_ն$-ն՝ շինության օգտագործման նպատակային նշանակության հետ կապված գործակիցն է,

$Գ_ահ$-ն՝ շինության արտաքին հարդարման հետ կապված գործակիցն է,

$Գ_վ$-ն՝ շինության վնասվածության աստիճանը բնութագրող գործակիցն է,

$Գ_ա$-ն՝ շինության ավարտվածության աստիճանը բնութագրող գործակիցն է:

2.2. Անհատական բնակելի տների, այգետնակների և դրանց կից օժանդակ շինությունների կադաստրային արժեքի հաշվարկման նպատակով՝

ա. շինության (բացառությամբ պարիսպների և բաց պատշգամբների) ծավալի (ներքին չափերով) մեկ խորանարդ մետրի արժեքը ($Ա_2$) սահմանվում է՝

Աղյուսակ 2

բազալտից շինության համար	95000 դրամ
տուֆից շինության համար	85000 դրամ
երկաթբետոնից շինության համար	65000 դրամ
աղյուսից կամ սնամեջ մանր բլոկներից շինության համար	45000 դրամ

փայտից շինության համար	50000 դրամ
խամ քարից, կոպտատաշ քարից (այլ տեսակի քարից) շինության համար	40000 դրամ

բ. անհատական բնակելի տների և այգետնակների բաց պատշգամբների մակերեսի (ներքին չափերով) մեկ քառակուսի մետրի արժեքը ($Ա_բ$) սահմանվում է 5000 դրամ.

գ. անհատական բնակելի տների, այգետնակների և դրանց կից օժանդակ շինությունների պարիսպների ծավալի մեկ խորանարդ մետրի արժեքը ($Ա_պ$) սահմանվում է՝

բազալտից պարսպի համար	20000 դրամ
տուֆից պարսպի համար	18000 դրամ
երկաթբետոնից պարսպի համար	15000 դրամ

դ. շինության տեղադրության (տարածագնահատման գոտիականության) գործակիցը ($Գ_գ$) սահմանում է Կառավարությունը՝ հետևյալ չափերի շրջանակներում.

Մարզ (Երևան քաղաք)	նվազագույնը	առավելագույնը
Երևան քաղաք	0.17	1
Կոտայք	0.055	0.26
Արմավիր և Արարատ	0.044	0.32
Արագածոտն	0.035	0.32
Շիրակ	0.035	0.21
Լոռի	0.035	0.26
Տավուշ	0.035	0.17
Սյունիք, Վայոց ձոր և Գեղարքունիք	0.035	0.13

ե. շինության հարկայնության հետ կապված գործակիցը ($Գ_հ$) սահմանվում է՝

առաջին և հաջորդ հարկերի համար	1

կիսանկուղային հարկի համար	0.65
նկուղային հարկի համար	0.5
ձեղնահարկի (տանիքային հարկի) համար	0.7

զ. շինության ծածկի տեսակի հետ կապված գործակիցը ($Գ_ծ$) սահմանվում է՝

երկաթբետոնից ծածկի համար	1
փայտից ծածկի համար	0.9

է. շինության մաշվածության (շահագործման տևողությունը) բնութագրող գործակիցը ($Գ_մ$) սահմանվում է՝

մինչև 6 տարի (ներառյալ)՝ շահագործման տևողություն ունեցող շինության համար	1
7-ից 9 տարի (ներառյալ)՝ շահագործման տևողություն ունեցող շինության համար	0.94
10-ից 12 տարի (ներառյալ)՝ շահագործման տևողություն ունեցող շինության համար	0.91
13-ից 15 տարի (ներառյալ)՝ շահագործման տևողություն ունեցող շինության համար	0.88
16-ից 18 տարի (ներառյալ)՝ շահագործման տևողություն ունեցող շինության համար	0.85
19-ից 21 տարի (ներառյալ)՝ շահագործման տևողություն ունեցող շինության համար	0.82
22-ից 24 տարի (ներառյալ)՝ շահագործման տևողություն ունեցող շինության համար	0.79
25-ից 27 տարի (ներառյալ)՝ շահագործման տևողություն ունեցող շինության համար	0.76
28-ից 30 տարի (ներառյալ)՝ շահագործման տևողություն ունեցող շինության համար	0.73

31-ից 40 տարի (ներառյալ)՝ շահագործման տևողություն ունեցող շինության համար	0.7
41 տարի և ավելի շահագործման տևողություն ունեցող շինության համար	0.6

ը. շինության տանիքի նյութի հետ կապված գործակիցը ($Գ_{տ}$) սահմանվում է՝

կղմինդրից տանիքի համար	1.05
թիթեղից տանիքի համար	1
թերթաքարից (շիֆերից) տանիքի համար	0.9
այլ նյութից տանիքի համար	0.85

թ. շինության օգտագործման նպատակային նշանակության հետ կապված գործակիցը ($Գ_{ն}$) սահմանվում է՝

անհատական բնակելի տան և այգետնակի համար	1
անհատական բնակելի տանը և այգետնակին կից օժանդակ շինության համար	0.5

ժ. շինության արտաքին հարդարման հետ կապված գործակիցը ($Գ_{ահ}$) սահմանվում է՝

արտաքին հարդարում չունեցող շինության համար	1
արտաքին հարդարում ունեցող շինության յուրաքանչյուր սրբատաշ ճակատի համար	1.05
արտաքին հարդարում ունեցող շինության յուրաքանչյուր երեսպատված ճակատի համար	1.025
արտաքին հարդարում ունեցող շինության յուրաքանչյուր սվաղված ճակատի համար	1.01

ժա. շինության վնասվածության աստիճանը բնութագրող գործակիցը ($Գ_{վ}$) սահմանվում է՝

0 աստիճանի վնասվածություն ունեցող շինության համար	1
1-ին և 2-րդ աստիճանի վնասվածություն ունեցող շինության համար	0.95

3-րդ աստիճանի վնասվածություն ունեցող շինության համար	0.5
4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող շինության համար	0

ժբ. շինության ավարտվածության աստիճանը բնութագրող գործակիցը ($Գ_ա$) սահմանվում է՝

մինչև 50 տոկոս (ներառյալ)՝ ավարտվածության աստիճան ունեցող շինության համար	0.5
51-ից 80 տոկոս (ներառյալ)՝ ավարտվածության աստիճան ունեցող շինության համար	0.7
81 տոկոս և ավելի ավարտվածության աստիճան ունեցող շինության համար	1

2.3. Ավտոտնակների կադաստրային արժեքը հաշվարկվում է անհատական բնակելի տներին կից օժանդակ շինությունների կադաստրային արժեքների հաշվարկման կարգով:

3. ԱՌԱՆՁԻՆ ԿԱՆԳՆԱԾ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Առանձին կանգնած հասարակական նշանակության շինությունների կադաստրային արժեքը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$Ա = [(Ա_1 + Ա_2 + ... + Ա_n) \times Գ_{շծ} + (Ա_{պ} \times Ծ_{պ} \times Գ_{մ})] \times Գ_{գ}$$

որտեղ՝

$Ա_1$, $Ա_2$, ... $Ա_n$-ն՝ առաջին, երկրորդ և հաջորդ հարկերի (այդ թվում՝ նկուղի, կիսանկուղի, տեխնիկական հարկի և ձեղնահարկի) կադաստրային արժեքներն են, որոնք հաշվարկվում են հետևյալ բանաձևով.

$$Ա_n = Ա_2 \times Ծ_2 \times Գ_h \times Գ_{մ} \times Գ_{վ} \times Գ_{տ} \times Գ_{ծ} \times Գ_{ա} \times Գ_{ահ} \times Գ_{ն}$$

որտեղ՝

$Ա_2$-ն՝ շինության ծավալի (ներքին չափերով) մեկ խորանարդ մետրի արժեքն է՝ ըստ աղյուսակ 3-ի,

$Ծ_2$-ն՝ շինության ծավալն է (ներքին չափերով)՝ արտահայտված խորանարդ մետրերով,

$Ա_{պ}$-ն՝ շինությանը կից պարիսպների ծավալի մեկ խորանարդ մետրի արժեքն է,

$Ծ_{պ}$-ն՝ շինությանը կից պարիսպների ծավալն է՝ արտահայտված խորանարդ մետրերով,

$Գ_{գ}$-ն՝ շինության տեղադրության (տարածագնահատման գոտիականության) գործակիցն է,

$Գ_h$-ն՝ շինության հարկայնության հետ կապված գործակիցն է,

$Գ_{մ}$-ն՝ շինության մաշվածությունը (շահագործման տևողությունը) բնութագրող գործակիցն է,

$Գ_{վ}$-ն՝ շինության վնասվածության աստիճանը բնութագրող գործակիցն է,

$Գ_{տ}$-ն՝ շինության տանիքի նյութի հետ կապված գործակիցն է,

$Գ_{ծ}$-ն՝ շինության ծածկի տեսակի հետ կապված գործակիցն է,

$Գ_{ա}$-ն՝ շինության ավարտվածության աստիճանը բնութագրող գործակիցն է,

$Գ_{ահ}$-ն՝ շինության արտաքին հարդարման հետ կապված գործակիցն է,

$Գ_{ն}$-ն՝ շինության օգտագործման նպատակային նշանակության հետ կապված գործակիցն է,

$Գ_{շծ}$-ն՝ շինության ծավալի (ներքին չափերով) մեծության հետ կապված լրացուցիչ գործակիցն է:

3.2. Առանձին կանգնած հասարակական նշանակության շինությունների կադաստրային արժեքի հաշվարկման նպատակով՝

ա. շինության (բացառությամբ պարիսպների) ծավալի (ներքին չափերով) մեկ խորանարդ մետրի արժեքը ($Ա_2$) սահմանվում է՝

բազալտից շինության համար	147000 դրամ
տուֆից շինության համար	127000 դրամ
երկաթբետոնից շինության համար	100000 դրամ
փայտից շինության համար	84000 դրամ
խամ քարից, կոպտատաշ քարից (անկախ քարի տեսակից) շինության համար	67000 դրամ
աղյուսից կամ սնամեջ մանր բլոկներից շինության համար	71000 դրամ
մետաղյա շինության համար	100000 դրամ

բ. շինության պարսպի ծավալի մեկ խորանարդ մետրի արժեքը ($Ա_{պ}$) սահմանվում է՝

բազալտից պարսպի համար	25000 դրամ
տուֆից պարսպի համար	22000 դրամ
երկաթբետոնից պարսպի համար	18000 դրամ

գ. շինության տեղադրության (տարածագնահատման գոտիականության) գործակիցը ($Գ_{գ}$) սահմանում է Կառավարությունը հետևյալ չափերի շրջանակներում.

Մարզ (Երևան քաղաք)	նվազագույնը	առավելագույնը
Երևան քաղաք	0.17	1
Կոտայք	0.055	0.26
Արմավիր և Արարատ	0.044	0.32
Արագածոտն	0.035	0.32
Շիրակ	0.035	0.21
Լոռի	0.035	0.26
Տավուշ	0.035	0.17
Սյունիք, Վայոց ձոր և Գեղարքունիք	0.035	0.13

դ. շինության հարկայնության հետ կապված գործակիցը ($Գ_հ$) սահմանվում է՝

առաջին հարկի համար	1
երկրորդ և հաջորդ հարկերի համար	0.9
կիսանկուղային հարկի համար	0.65
նկուղային հարկի համար	0.5
ձեղնահարկի և տեխնիկական հարկերի համար	0.7

ե. շինության մաշվածությունը (շահագործման տևողությունը) բնութագրող գործակիցը ($Գ_մ$) սահմանվում է՝

մինչև 6 տարի (ներառյալ)՝ շահագործման տևողություն ունեցող շինության համար	1
7-ից 9 տարի (ներառյալ)՝ շահագործման տևողություն ունեցող շինության համար	0.94
10-ից 12 տարի (ներառյալ)՝ շահագործման տևողություն ունեցող շինության համար	0.91
13-ից 15 տարի (ներառյալ)՝ շահագործման տևողություն ունեցող շինության համար	0.88
16-ից 18 տարի (ներառյալ)՝ շահագործման տևողություն ունեցող շինության համար	0.85
19-ից 21 տարի (ներառյալ)՝ շահագործման տևողություն ունեցող շինության համար	0.82
22-ից 24 տարի (ներառյալ)՝ շահագործման տևողություն ունեցող շինության համար	0.79
25-ից 27 տարի (ներառյալ)՝ շահագործման տևողություն ունեցող շինության համար	0.76
28-ից 30 տարի (ներառյալ)՝ շահագործման տևողություն ունեցող շինության համար	0.73
31-ից 40 տարի (ներառյալ)՝ շահագործման տևողություն ունեցող շինության համար	0.7

41 տարի և ավելի շահագործման տևողություն ունեցող շինության համար	0.6

զ. շինության վնասվածության աստիճանը բնութագրող գործակիցը ($Գ_վ$) սահմանվում է՝

0 աստիճանի վնասվածություն ունեցող շինության համար	1
1-ին և 2-րդ աստիճանի վնասվածություն ունեցող շինության համար	0.95
3-րդ աստիճանի վնասվածություն ունեցող շինության համար	0.5
4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող շինության համար	0

է. շինության տանիքի նյութի հետ կապված գործակիցը ($Գ_տ$) սահմանվում է՝

կղմինդրից տանիքի համար	1.05
թիթեղից տանիքի համար	1
թերթաքարից (շիֆերից) տանիքի համար	0.9
այլ նյութից տանիքի համար	0.85

ը. շինության ծածկի տեսակի հետ կապված գործակիցը ($Գ_ծ$) սահմանվում է՝

երկաթբետոնից ծածկի համար	1
փայտից ծածկի համար	0.9

թ. շինության ավարտվածության աստիճանը բնութագրող գործակիցը ($Գ_ա$) սահմանվում է՝

մինչև 50 տոկոս (ներառյալ)՝ ավարտվածության աստիճան ունեցող շինության համար	0.5
51-ից 80 տոկոս (ներառյալ)՝ ավարտվածության աստիճան ունեցող շինության համար	0.7
81 տոկոս և ավելի ավարտվածության աստիճան ունեցող շինության համար	1

ժ. շինության արտաքին հարդարման հետ կապված գործակիցը ($Գ_ահ$) սահմանվում է՝

արտաքին հարդարում չունեցող շինության համար	1

արտաքին հարդարում ունեցող շինության յուրաքանչյուր սրբատաշ ճակատի համար	1.05
արտաքին հարդարում ունեցող շինության յուրաքանչյուր երեսպատված ճակատի համար	1.025
արտաքին հարդարում ունեցող շինության յուրաքանչյուր ապակյա ճակատի համար	1.05
արտաքին հարդարում ունեցող շինության յուրաքանչյուր սվաղված ճակատի համար	1.01

Շինության ճակատը համարվում է ապակյա, եթե շինության ճակատամասի ընդհանուր մակերեսի 50 տոկոսից ավելին ապակյա է:

ժա. շինության օգտագործման նպատակային նշանակության հետ կապված գործակիցը (Գն) սահմանվում է՝

գիտական, կրթական և ուսումնական նշանակության շինության համար	0.7
հասարակական նշանակության այլ շինության համար	1

Գիտական, կրթական և ուսումնական նպատակային նշանակության շինությունների ցանկը սահմանում է Կառավարությունը:

ժբ. շինության ծավալի (ներքին չափերով) մեծության հետ կապված լրացուցիչ գործակիցը ($Գ_{շծ}$) սահմանվում է՝

մինչև 3000 խմ (ներառյալ)՝ ծավալի դեպքում	1
3001-ից 6000 խմ (ներառյալ)՝ ծավալի դեպքում	0.95
6001-ից 9000 խմ (ներառյալ)՝ ծավալի դեպքում	0.9
9001-ից 12000 խմ (ներառյալ)՝ ծավալի դեպքում	0.85
12001 խմ և ավելի ծավալի դեպքում	0.8

Ծավալի (ներքին չափերով) մեծության հետ կապված լրացուցիչ գործակիցը ($Գ_{շծ}$) կիրառվում է բոլոր հարկերում առկա ծավալների (ներքին չափերով) գումարային մեծության նկատմամբ:

4. ԱՌԱՆՁԻՆ ԿԱՆԳՆԱԾ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Առանձին կանգնած արտադրական նշանակության շինությունների կադաստրային արժեքը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$Ա = [(Ա_1 + Ա_2 + ... + Ա_n) \times Գ_{շծ} + (Ա_{պ} \times Ծ_{պ} \times Գ_{մ})] \times Գ_{գ}$$

որտեղ՝

$Ա_1$, $Ա_2$, ... $Ա_n$-ն՝ արտադրական նշանակության (արտադրական, վարչական, պահեստային և այլ արտադրական և

ոչ արտադրական նշանակություն ունեցող) շինությունների կադաստրային արժեքներն են, որոնք հաշվարկվում են հետևյալ բանաձևով.

$$Ա_n = Ա_շ \times Ծ_շ \times Գ_մ \times Գ_վ \times Գ_տ \times Գ_ծ \times Գ_հ \times Գ_ա \times Գ_ն$$

որտեղ՝

$Ա_շ$-ն՝ արտադրական նշանակության շինության ծավալի (ներքին չափերով) մեկ խորանարդ մետրի արժեքն է՝ ըստ աղյուսակ 4-ի,

$Ծ_շ$-ն՝ արտադրական նշանակության շինության ծավալն է (ներքին չափերով)՝ արտահայտված խորանարդ մետրերով,

$Ա_պ$-ն՝ արտադրական նշանակության շինությանը կից պարիսպների ծավալի մեկ խորանարդ մետրի արժեքն է,

$Ծ_պ$-ն՝ արտադրական նշանակության շինությանը կից պարիսպների ծավալն է՝ արտահայտված խորանարդ մետրերով,

$Գ_գ$-ն՝ շինության տեղադրության (տարածագնահատման գոտիականության) գործակիցն է,

$Գ_մ$-ն՝ շինության մաշվածությունը (շահագործման տևողությունը) բնութագրող գործակիցն է,

$Գ_վ$-ն՝ շինության վնասվածության աստիճանը բնութագրող գործակիցն է,

$Գ_տ$-ն՝ շինության տանիքի նյութի հետ կապված գործակիցն է,

$Գ_ծ$-ն՝ շինության ծածկի տեսակի հետ կապված գործակիցն է,

$Գ_հ$-ն՝ շինության հարկայնության հետ կապված գործակիցն է,

$Գ_ա$-ն՝ շինության ավարտվածության աստիճանը բնութագրող գործակիցն է,

$Գ_ն$-ն՝ շինության օգտագործման նպատակային նշանակության հետ կապված գործակիցն է,

$Գ_{շծ}$-ն՝ շինության ծավալի (ներքին չափերով) մեծության հետ կապված լրացուցիչ գործակիցն է:

4.2. Առանձին կանգնած արտադրական նշանակության շինությունների կադաստրային արժեքի հաշվարկման նպատակով՝

ա. շինության (բացառությամբ պարիսպների) ծավալի (ներքին չափերով) մեկ խորանարդ մետրի արժեքը ($Ա_շ$) սահմանվում է՝

Աղյուսակ 4

քարից, երկաթբետոնից շինության համար	22000 դրամ
փայտից շինության համար	15000 դրամ
մետաղյա շինության համար	19000 դրամ

բ. շինության պարսպի ծավալի մեկ խորանարդ մետրի արժեքը ($Ա_պ$) սահմանվում է՝

բազալտից պարսպի համար	10000 դրամ
տուֆից պարսպի համար	9000 դրամ
երկաթբետոնից պարսպի համար	7500 դրամ

գ. շինության տեղադրության (տարածագնահատման գոտիականության) գործակիցը ($Գ_գ$) սահմանում է Կառավարությունը հետևյալ չափերի շրջանակներում.

Մարզ (Երևան քաղաք)	նվազագույնը	առավելագույնը

Երևան քաղաք	0.17	1
Կոտայք	0.055	0.26
Արմավիր և Արարատ	0.044	0.32
Արագածոտն	0.035	0.32
Շիրակ	0.035	0.21
Լոռի	0.035	0.26
Տավուշ	0.035	0.17
Սյունիք, Վայոց ձոր և Գեղարքունիք	0.035	0.13

դ. շինության մաշվածությունը (շահագործման տևողությունը) բնութագրող գործակիցը ($Գ_մ$) սահմանվում է՝

մինչև 6 տարի (ներառյալ)՝ շահագործման տևողություն ունեցող շինության համար	1
7-ից 9 տարի (ներառյալ)՝ շահագործման տևողություն ունեցող շինության համար	0.94
10-ից 12 տարի (ներառյալ)՝ շահագործման տևողություն ունեցող շինության համար	0.91
13-ից 15 տարի (ներառյալ)՝ շահագործման տևողություն ունեցող շինության համար	0.88
16-ից 18 տարի (ներառյալ)՝ շահագործման տևողություն ունեցող շինության համար	0.85
19-ից 21 տարի (ներառյալ)՝ շահագործման տևողություն ունեցող շինության համար	0.82
22-ից 24 տարի (ներառյալ)՝ շահագործման տևողություն ունեցող շինության համար	0.79
25-ից 27 տարի (ներառյալ)՝ շահագործման տևողություն ունեցող շինության համար	0.76
28-ից 30 տարի (ներառյալ)՝ շահագործման տևողություն ունեցող շինության համար	0.73

31-ից 40 տարի (ներառյալ)՝ շահագործման տևողություն ունեցող շինության համար	0.7
41 տարի և ավելի շահագործման տևողություն ունեցող շինության համար	0.6

ե. շինության վնասվածության աստիճանը բնութագրող գործակիցը ($Գ_վ$) սահմանվում է՝

0 աստիճանի վնասվածություն ունեցող շինության համար	1
1-ին և 2-րդ աստիճանի վնասվածություն ունեցող շինության համար	0.95
3-րդ աստիճանի վնասվածություն ունեցող շինության համար	0.5
4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող շինության համար	0

զ. շինության տանիքի նյութի հետ կապված գործակիցը ($Գ_տ$) սահմանվում է՝

կղմինդրից տանիքի համար	1.05
թիթեղից տանիքի համար	1
թերթաքարից (շիֆեր) տանիքի համար	0.9
այլ նյութից տանիքի համար	0.85

է. շինության ծածկի տեսակի հետ կապված գործակիցը ($Գ_ծ$) սահմանվում է՝

երկաթբետոնից ծածկի համար	1
փայտից ծածկի համար	0.9

ը. շինության հարկայնության հետ կապված գործակիցը ($Գ_հ$) սահմանվում է՝

առաջին հարկի համար	1
երկրորդ և հաջորդ հարկերի համար	0.9
կիսանկուղային հարկի համար	0.65
նկուղային հարկի համար	0.5
ձեղնահարկի և տեխնիկական հարկերի համար	0.7

թ. շինության ավարտվածության աստիճանը բնութագրող գործակիցը ($Գ_ա$) սահմանվում է՝

մինչև 50 տոկոս (ներառյալ)՝ ավարտվածության աստիճան ունեցող շինության համար	0.5
51-ից 80 տոկոս (ներառյալ)՝ ավարտվածության աստիճան ունեցող շինության համար	0.7
81 տոկոս և ավելի ավարտվածության աստիճան ունեցող շինության համար	1

ժ. շինության օգտագործման նպատակային նշանակության հետ կապված գործակիցը ($Գ_ն$) սահմանվում է՝

արդյունաբերական նշանակության շինության համար	1
գյուղատնտեսական նշանակության շինության համար	0.6

Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանում է Կառավարությունը:

ժա. շինության ծավալի (ներքին չափերով) մեծության հետ կապված լրացուցիչ գործակիցը ($Գ_{շծ}$) սահմանվում է՝

մինչև 3000 խմ (ներառյալ) ծավալի դեպքում	1
3001-ից 6000 խմ (ներառյալ) ծավալի դեպքում	0.95
6001-ից 9000 խմ (ներառյալ) ծավալի դեպքում	0.9
9001-ից 12000 խմ (ներառյալ) ծավալի դեպքում	0.85
12001 խմ և ավելի ծավալի դեպքում	0.8

Ծավալի (ներքին չափերով) մեծության հետ կապված լրացուցիչ գործակիցը ($Գ_{շծ}$) կիրառվում է բոլոր հարկերում առկա ծավալների (ներքին չափերով) գումարային մեծության նկատմամբ:

5. ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐՈՒՄ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Բազմաբնակարան բնակելի շենքերում տեղակայված հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների կադաստրային արժեքը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$Ա = (Ա_1 + Ա_2 + ... + Ա_n) \times Գ_գ$$

որտեղ՝

$Ա_1$, $Ա_2$, ... $Ա_n$-ն՝ առաջին, երկրորդ և հաջորդ հարկերի (այդ թվում՝ նկուղի, կիսանկուղի, տեխնիկական հարկի և ձեղնահարկի) կադաստրային արժեքներն են, որոնք հաշվարկվում են հետևյալ բանաձևով.

$$Ա_n = Ա_2 \times Ծ_2 \times Գ_հ \times Գ_վ \times Գ_մ \times Գ_ա \times Գ_ծ \times Գ_{ահ} \times Գ_ն$$

որտեղ՝

$Ա_2$-ն՝ շինության ծավալի (ներքին չափերով) մեկ խորանարդ մետրի արժեքն է՝ ըստ աղյուսակ 5-ի,

$Ծ_2$-ն՝ օբյեկտի ծավալն է (ներքին չափերով)՝ արտահայտված խորանարդ մետրերով,

$Գ_գ$-ն՝ շինության տեղադրության (տարածագնահատման գոտիականության) գործակիցն է,

$Գ_հ$-ն՝ օբյեկտի հարկայնության հետ կապված գործակիցն է,

$Գ_վ$-ն՝ շինության վնասվածության աստիճանը բնութագրող գործակիցն է,

$Գ_մ$-ն՝ շինության մաշվածությունը (շահագործման տևողությունը) բնութագրող գործակիցն է,

$Գ_ա$-ն՝ շինության ավարտվածության աստիճանը բնութագրող գործակիցն է,

$Գ_ծ$-ն՝ շինության ծածկի տեսակի հետ կապված գործակիցն է,

$Գ_{ահ}$-ն՝ շինության արտաքին հարդարման հետ կապված գործակիցն է,

$Գ_ն$-ն՝ շինության օգտագործման նպատակային նշանակության հետ կապված գործակիցն է:

5.2. Բազմաբնակարան բնակելի շենքում տեղակայված հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների գնահատման նպատակով՝

ա. շինության ծավալի (ներքին չափերով) մեկ խորանարդ մետրի արժեքը ($Ա_2$) սահմանվում է՝

Աղյուսակ 5

քարե շինություններում տեղակայված օբյեկտների համար	127000 դրամ
երկաթբետոնյա շինություններում տեղակայված օբյեկտների համար	100000 դրամ

բ. շինության տեղադրության (տարածագնահատման գոտիականության) գործակիցը ($Գ_գ$) սահմանում է Կառավարությունը՝ հետևյալ չափերի շրջանակներում.

Մարզ (Երևան քաղաք)	նվազագույնը	առավելագույնը
Երևան քաղաք	0.17	1
Կոտայք	0.055	0.26
Արմավիր և Արարատ	0.044	0.32
Արագածոտն	0.035	0.32
Շիրակ	0.035	0.21
Լոռի	0.035	0.26
Տավուշ	0.035	0.17
Սյունիք, Վայոց ձոր և Գեղարքունիք	0.035	0.13

գ. օբյեկտի հարկայնության հետ կապված գործակիցը ($Գ_հ$) սահմանվում է՝

առաջին հարկի համար	1
երկրորդ և հաջորդ հարկերի համար	0.9
կիսանկուղային հարկի համար	0.65
նկուղային հարկի համար	0.5
ձեղնահարկի և տեխնիկական հարկերի համար	0.7

դ. շինության վնասվածության աստիճանը բնութագրող գործակիցը (Գվ) սահմանվում է՝

0 աստիճանի վնասվածություն ունեցող շինության համար	1
1-ին և 2-րդ աստիճանի վնասվածություն ունեցող շինության համար	0.95
3-րդ աստիճանի վնասվածություն ունեցող շինության համար	0.5
4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող շինության համար	0

ե. շինության մաշվածությունը (շահագործման տևողությունը) բնութագրող գործակիցը (Գմ) սահմանվում է՝

մինչև 6 տարի (ներառյալ)՝ շահագործման տևողություն ունեցող շինության համար	1
7-ից 9 տարի (ներառյալ)՝ շահագործման տևողություն ունեցող շինության համար	0.94
10-ից 12 տարի (ներառյալ)՝ շահագործման տևողություն ունեցող շինության համար	0.91
13-ից 15 տարի (ներառյալ)՝ շահագործման տևողություն ունեցող շինության համար	0.88
16-ից 18 տարի (ներառյալ)՝ շահագործման տևողություն ունեցող շինության համար	0.85
19-ից 21 տարի (ներառյալ)՝ շահագործման տևողություն ունեցող շինության համար	0.82
22-ից 24 տարի (ներառյալ)՝ շահագործման տևողություն ունեցող շինության համար	0.79

25-ից 27 տարի (ներառյալ)՝ շահագործման տևողություն ունեցող շինության համար	0.76
28-ից 30 տարի (ներառյալ)՝ շահագործման տևողություն ունեցող շինության համար	0.73
31-ից 40 տարի (ներառյալ)՝ շահագործման տևողություն ունեցող շինության համար	0.7
41 տարի և ավելի շահագործման տևողություն ունեցող շինության համար	0.6

զ. շինության ավարտվածության աստիճանը բնութագրող գործակիցը ($Գ_ա$) սահմանվում է՝

մինչև 50 տոկոս (ներառյալ)՝ ավարտվածության աստիճան ունեցող շինության համար	0.5
51-ից 80 տոկոս (ներառյալ)՝ ավարտվածության աստիճան ունեցող շինության համար	0.7
81 տոկոս և ավելի ավարտվածության աստիճան ունեցող շինության համար	1

է. շինության ծածկի տեսակի հետ կապված գործակիցը ($Գ_ծ$) սահմանվում է՝

երկաթբետոնից ծածկի համար	1
փայտից ծածկի համար	0.9

ը. շինության արտաքին հարդարման հետ կապված գործակիցը ($Գ_ահ$) սահմանվում է՝

արտաքին հարդարում չունեցող շինության համար	1
արտաքին հարդարում ունեցող շինության յուրաքանչյուր սրբատաշ ճակատի համար	1.05
արտաքին հարդարում ունեցող շինության յուրաքանչյուր երեսպատված ճակատի համար	1.025
արտաքին հարդարում ունեցող շինության յուրաքանչյուր ապակյա ճակատի համար	1.05
արտաքին հարդարում ունեցող շինության յուրաքանչյուր սվաղված ճակատի համար	1.01

Շինության ճակատը համարվում է ապակյա, եթե շինության ճակատամասի ընդհանուր մակերեսի 50 տոկոսից ավելին ապակյա է:

թ. շինության օգտագործման նպատակային նշանակության հետ կապված գործակիցը ($Գ_ն$) սահմանվում է՝

գիտական, կրթական և ուսումնական նշանակության շինության համար	0.7
հասարակական և արտադրական նշանակության այլ շինության համար	1

Գիտական, կրթական և ուսումնական նշանակության շինությունների ցանկը սահմանում է Կառավարությունը:

6. ՀՈՂԱՄԱՍԵՐԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ) ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

1) Յուրաքանչյուր հողամասի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի) կադաստրային արժեքը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$ԿԱ_h = Ա_h \times Մ_h$$

որտեղ՝

$Ա_h$-ն՝ հողամասերի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի) մեկ հեկտարի կադաստրային արժեքն է,

$Մ_h$-ն՝ գնահատվող հողամասի մակերեսն է՝ արտահայտված հեկտարներով:

Հողամասերի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի) կադաստրային արժեքները սահմանում է Կառավարությունը:

(հավելվածը 19.11.19 ՀՕ-225-Ն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ուժը կկորցնի 01.01.2021 թվականին:)

Հավելված 2

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

1. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԶՈՒՏ ԵԿԱՄՈՒՏԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

2) Գյուղատնտեսական նշանակության հողերի հաշվարկային զուտ եկամուտը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$ԶԵ_h = Մ_{զh} \times Գ_{զե}$$

որտեղ՝

$Մ_{զh}$-ն՝ գյուղատնտեսական նշանակության հողի մակերեսն է՝ արտահայտված հեկտարներով,

$Գ_{զե}$-ն՝ գյուղատնտեսական նշանակության համապատասխան հողատեսքի, համապատասխան հողագնահատման շրջանի, համապատասխան գնահատման խմբի հաշվարկային զուտ եկամուտն է՝ մեկ հեկտարի հաշվարկով:

Գյուղատնտեսական նշանակության համապատասխան հողատեսքի, համապատասխան հողագնահատման շրջանի, համապատասխան գնահատման խմբի հաշվարկային զուտ եկամուտը սահմանում է Կառավարությունը:

(238-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Բ Ա Ժ Ի Ն 12

(սույն օրենսգրքի 12-րդ բաժինը ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից՝ համաձայն սույն օրենսգրքի 444-րդ հոդվածի 9-րդ մասի:)

Գ Լ Ո Ւ Խ 50

ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԸ ԵՎ ՎՃԱՐՈՂՆԵՐԸ

Հոդված 239. Փոխադրամիջոցների գույքահարկը

1. Փոխադրամիջոցների գույքահարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող փոխադրամիջոցների համար սույն բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Հոդված 240. Փոխադրամիջոցների գույքահարկ վճարողները

1. Փոխադրամիջոցների գույքահարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք, բացառությամբ պետական մարմինների, համայնքային կառավարչական հիմնարկների և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի:
2. Եթե հարկման օբյեկտն ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է մեկից ավելի հարկ վճարողների, ապա փոխադրամիջոցների գույքահարկի գծով սույն բաժնով սահմանված պարտավորությունների համար նրանք կրում են համապարտ պատասխանատվություն:
3. Եթե հարկման օբյեկտն ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանում է մեկից ավելի հարկ վճարողների, ապա փոխադրամիջոցների գույքահարկի գծով սույն բաժնով սահմանված պարտավորությունների համար նրանք պատասխանատվություն են կրում յուրաքանչյուրն իր բաժնի չափով:
(240-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Հոդված 241. Լիազոր մարմինները

1. Օրենսգրքի 4-րդ հոդվածով սահմանված՝ «լիազոր մարմին» հասկացությունը սույն բաժնի կիրառության իմաստով ունի հետևյալ նշանակությունը.
1) շարժական գույքի կադաստր վարող մարմին՝ Օրենսգրքի 242-րդ հոդվածով սահմանված փոխադրամիջոցների նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցում իրականացնող, այդ փոխադրամիջոցների պետական գրանցում (հաշվառում) վարող՝ Կառավարության լիազոր պետական կառավարման համապատասխան մարմին.
2) հաշվառող մարմիններ՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմիններ, որոնք՝
ա. իրականացնում են հարկ վճարողների և փոխադրամիջոցների գույքահարկի հաշվառումը՝ Կառավարության սահմանած կարգով,
բ. իրականացնում են փոխադրամիջոցների գույքահարկի վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների հավաքագրումը), վճարման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև հարկային վարչարարությունը:
(241-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Գ Լ Ո Ւ Խ 51

ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏԸ, ՀԱՐԿՄԱՆ ԲԱԶԱՆ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Հոդված 242. Փոխադրամիջոցների գույքահարկով հարկման օբյեկտը

1. Փոխադրամիջոցների գույքահարկով հարկման օբյեկտ են համարվում հետևյալ փոխադրամիջոցները.
1) ավտոմոբիլային տրանսպորտի միջոցը.
2) ջրային փոխադրամիջոցը (շարժիչով աշխատող).

3) մոտոցիկլետը.
4) ձյունագնացը.
5) մոտոամենագնացը (քվադրոցիկլը):

Հոդված 243. Փոխադրամիջոցների գույքահարկով հարկման բազան

1. Փոխադրամիջոցների գույքահարկով հարկման բազա է համարվում հարկման օբյեկտ համարվող փոխադրամիջոցի քաշող շարժիչի հզորությունը (ձիաուժ կամ կիլովատ): Փոխադրամիջոցի վրա մեկից ավելի քաշող շարժիչների առկայության դեպքում փոխադրամիջոցների գույքահարկով հարկման բազա է համարվում բոլոր քաշող շարժիչների գումարային հզորությունը:

Հոդված 244. Փոխադրամիջոցների գույքահարկի դրույքաչափերը

1. Ավտոմոբիլային տրանսպորտի միջոցների համար փոխադրամիջոցների գույքահարկի տարեկան գումարը հաշվարկվում է հետևյալ դրույքաչափերով.
1) մինչև 10 նստատեղ ունեցող մարդատար ավտոմեքենաների համար, եթե հարկման բազան՝
ա. 1-ից 120 (ներառյալ) ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի համար՝ 200 դրամ,
բ. 121-ից 250 (ներառյալ) ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի համար՝ 300 դրամ, ինչպես նաև 150 ձիաուժը գերազանցող յուրաքանչյուր ձիաուժի համար՝ լրացուցիչ 1000 դրամ,
գ. 251 և ավելի ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի համար՝ 500 դրամ, ինչպես նաև 150 ձիաուժը գերազանցող յուրաքանչյուր ձիաուժի համար՝ լրացուցիչ 1000 դրամ.
2) 10 և ավելի նստատեղ ունեցող մարդատար ավտոմեքենաների և բեռնատար (բեռնաուղևորատար) ավտոմեքենաների համար, եթե հարկման բազան՝
ա. 1-ից 200 (ներառյալ) ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի համար՝ 100 դրամ,
բ. 201 և ավելի ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի համար՝ 200 դրամ:
2. Մոտոցիկլետների համար փոխադրամիջոցների գույքահարկի տարեկան գումարը հաշվարկվում է հարկման բազայի յուրաքանչյուր ձիաուժի համար 40 դրամ դրույքաչափով:
3. Ջրային փոխադրամիջոցների, ձյունագնացների և մոտոամենագնացների (քվադրոցիկլերի) համար փոխադրամիջոցների գույքահարկի տարեկան գումարը հաշվարկվում է հարկման բազայի յուրաքանչյուր ձիաուժի համար 150 դրամ դրույքաչափով:
4. Ավտոմոբիլային տրանսպորտային միջոցի թողարկման ամսաթիվը ներառող հարկային տարվա և դրան հաջորդող երկու հարկային տարիներից յուրաքանչյուր հարկային տարվա համար գույքահարկը հաշվարկվում է 100 տոկոսով:
5. Ավտոմոբիլային տրանսպորտային միջոցի թողարկման ամսաթիվը ներառող հարկային տարվան հաջորդող երրորդ և հետագա յուրաքանչյուր հարկային տարվա համար գույքահարկի գումարը պակասեցվում է հարկի գումարի տասը տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան գույքահարկի գումարի 50 տոկոսը:
6. Անկախ սույն հոդվածի 5-րդ մասի դրույթներից, բեռնատար կամ բեռնաուղևորատար ավտոմոբիլային տրանսպորտի միջոցի թողարկման ամսաթիվը ներառող հարկային տարվան հաջորդող 20-րդ հարկային տարվանից սկսած՝ տվյալ ավտոմոբիլային տրանսպորտի միջոցի համար փոխադրամիջոցների գույքահարկ չի հաշվարկվում և չի վճարվում:
7. Փոխադրամիջոցների հարկման բազան կիլովատերով արտահայտված լինելու դեպքում փոխադրամիջոցների գույքահարկի տարեկան գումարը հաշվարկվում է՝ համապատասխան հզորության նկատմամբ կիրառելով 1.36 գործակից:
8. Համայնքի ավագանին համայնքի ղեկավարի առաջարկությամբ կարող է մինչև տասը տոկոսով բարձրացնել տվյալ համայնքի բյուջե վճարվող փոխադրամիջոցների գույքահարկի հաշվարկման՝ սույն հոդվածի 1-3-րդ մասերով սահմանված դրույքաչափերը:

Գ Լ Ո Ւ Խ 52

ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 245. Փոխադրամիջոցների գույքահարկի արտոնությունները

1. Փոխադրամիջոցների գույքահարկից ազատվում են՝
1) պետական սոցիալական ապահովության մարմիններից արտոնյալ պայմաններով ավտոմեքենաներ ստացած

հաշմանդամները՝ այդ ավտոմեքենաների մասով.

2) փոստային կապի ազգային օպերատորը.

3) Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների ընթացքում զոհված կամ ծառայողական պարտականությունները կատարելիս անհայտ կորած կամ անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված անձանց (կամ նրանց ընտանիքի անդամներին) սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող փոխադրամիջոցը՝ մինչև այդ անձանց զավակներից մեկի 18 տարին լրանալը, իսկ եթե անձն ամուսնացած չի եղել կամ չունի (չի ունեցել) զավակներ՝ մինչև հարկման օբյեկտի նկատմամբ ընտանիքի անդամի սեփականության իրավունքի դադարելը.

4) ծառայության ընթացքում՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով դաշնակից երկրների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության զինված ուժերում և այլ զորքերում պարտադիր ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվող անձինք՝ սեփականության իրավունքով իրենց պատկանող հարկման օբյեկտ համարվող փոխադրամիջոցների մասով: Սույն կետով սահմանված արտոնությունը չի կիրառվում, եթե հարկման օբյեկտ համարվող փոխադրամիջոցը ծառայության ընթացքում հանձնվել է վարձակալության կամ հավատարմագրային կառավարման.

5) պարտադիր ժամկետային ծառայության ժամկետի ավարտից հետո փոխադրամիջոցների գույքահարկից ազատվում են նաև սույն մասի 4-րդ կետում նշված՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերում և այլ զորքերում ծառայություն անցած՝ ռազմաուսումնական հաստատություններն ավարտած անձինք՝ մեկ փոխադրամիջոցի 150 ձիաուժը չգերազանցող մասով:

Սույն կետում նշված հարկ վճարողին սեփականության իրավունքով մեկից ավելի փոխադրամիջոց պատկանելու դեպքում արտոնությունը կիրառվում է հարկ վճարողի դիմումի մեջ նշված փոխադրամիջոցի մասով, իսկ արտոնության կիրառության համար հիմք է ընդունվում շարժական գույքի կադաստր վարող մարմնի կողմից տրված տեղեկանքը՝ հարկ վճարողին սեփականության իրավունքով պատկանող փոխադրամիջոցի քանակի վերաբերյալ, ինչպես նաև փոխադրամիջոցի գրանցման վայրի (վայրերի) հաշվառող մարմնի (մարմինների) կողմից տրամադրված տեղեկանքը (տեղեկանքները)՝ այլ փոխադրամիջոցների մասով արտոնություն կիրառված չլինելու վերաբերյալ:

Սույն կետով սահմանված արտոնությունները չեն կիրառվում, եթե հարկման օբյեկտ համարվող փոխադրամիջոցը ծառայության ավարտից հետո հանձնվել է վարձակալության կամ հավատարմագրային կառավարման, ինչպես նաև այն դեպքում, երբ հարկման օբյեկտ համարվող փոխադրամիջոցը ձեռք է բերվել ծառայության ժամկետի ավարտից հետո:

2. Համայնքի ավագանին համայնքի ղեկավարի ներկայացմամբ և համայնքի ավագանու սահմանած կարգով կարող է սահմանել փոխադրամիջոցների գույքահարկի գծով արտոնություններ և դրանց մասով կայացնել փոխադրամիջոցների գույքահարկ վճարողի փոխարեն համայնքի բյուջեից վճարում կատարելու որոշումներ: Սույն մասին համապատասխան՝ համայնքի ավագանու սահմանած արտոնության գումարը չի կարող գերազանցել տվյալ հարկային տարվա համար փոխադրամիջոցների գույքահարկի գծով համայնքի բյուջեի հաստատված եկամուտների տասը տոկոսը: Համայնքի ավագանու կողմից փոխադրամիջոցների գույքահարկի գծով սահմանված արտոնությունների գումարների դիմաց Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքի բյուջեին լրացուցիչ դոտացիաներ չեն տրամադրվում:

3. Հարկային տարվա ընթացքում փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություն ունեցող փոխադրամիջոցների գույքահարկ վճարողը փոխադրամիջոցների գույքահարկից ազատվում է այն ամսվա 1-ից, երբ առաջացել է արտոնության իրավունքը:

4. Հարկային տարվա ընթացքում փոխադրամիջոցների գույքահարկի արտոնությունը դադարելու դեպքում փոխադրամիջոցների գույքահարկը հաշվարկվում է արտոնության իրավունքը դադարելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

5. Փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություններից օգտվելու իրավունքը հաստատող փաստաթղթերը և դրանց ներկայացման կարգը սահմանում է Կառավարությունը:

(245-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Գ Լ Ո Ւ Խ 53

ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ

Հոդված 246. Փոխադրամիջոցների գույքահարկի պարտավորության առաջացման և դադարման կարգը

1. Փոխադրամիջոցների գույքահարկի պարտավորությունն առաջանում է փոխադրամիջոցների գույքահարկով հարկման օբյեկտի կամ դրա մի մասի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման ամսվան հաջորդող ամսվա 1-ից: Փոխադրամիջոցների գույքահարկի հաշվարկման (հարկային պարտավորությունների առաջացման) համար հիմք են համարվում փոխադրամիջոցների գույքահարկով հարկման օբյեկտի կամ դրա մի մասի նկատմամբ սեփականության իրավունքը հիմնավորող փաստաթղթերը:

2. Փոխադրամիջոցների գույքահարկի հաշվարկումը դադարում է փոխադրամիջոցների գույքահարկով հարկման օբյեկտի կամ դրա մի մասի նկատմամբ սեփականության իրավունքը դադարելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

3. Անկախ սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթներից՝

1) հարկման օբյեկտի սեփականատեր համարվող ֆիզիկական անձի մահվան կամ դատարանի վճռով մահացած ճանաչելու դեպքերում Օրենսգրքով սահմանված կարգով նոր սեփականատիրոջն են անցնում մահացած կամ դատարանի վճռով մահացած ճանաչված ֆիզիկական անձի կողմից տվյալ հարկման օբյեկտի համար չկատարված հարկային պարտավորությունները, ինչպես նաև մահվան օրվանից մինչև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով սեփականության (ժառանգության) իրավունքի ձևակերպման ամիսը ներառյալ տվյալ հարկման օբյեկտի համար փոխադրամիջոցների գույքահարկի գծով հաշվարկված հարկային պարտավորությունները: Սույն կետով սահմանված դեպքերում փոխադրամիջոցների գույքահարկի պարտավորությունն առաջանում է սեփականության (ժառանգության) իրավունքի ձևակերպման ամսվան հաջորդող ամսվա 1-ից.

2) եթե հարկման օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքը պետական գրանցում է ստանում դատավճռի, վճռի կամ իրավական ակտի հիման վրա, նոր սեփականատիրոջն են անցնում դատավճռի, վճռի կամ իրավական ակտի ընդունման ամսվան հաջորդող ամսվա 1-ից մինչև սեփականության իրավունքի պետական գրանցման ամիսը ներառյալ տվյալ հարկման օբյեկտի համար փոխադրամիջոցի գույքահարկի գծով հաշվարկված պարտավորությունները: Սույն կետով սահմանված դեպքերում փոխադրամիջոցների գույքահարկի պարտավորությունն առաջանում է դատավճռի, վճռի կամ իրավական ակտի ուժի մեջ մտնելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից.

3) եթե հարկման օբյեկտի նկատմամբ ֆիզիկական անձի սեփականության իրավունքը ծագում է կամ սույն մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված դեպքում հարկային պարտավորությունն առաջանում է փոխադրամիջոցների գույքահարկի վճարման համար Օրենսգրքի 251-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետին նախորդող ամսվա ընթացքում, ապա տվյալ հարկման օբյեկտի գծով այդ հարկային տարվա հարկային պարտավորությունն ավելանում է հաջորդ հարկային տարվա հարկային պարտավորությանը.

4) ֆիզիկական անձանց պատկանող հարկման օբյեկտ համարվող փոխադրամիջոցը մինչև 2010 թվականի դեկտեմբերի 31-ը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով խոտանված լինելու կամ հին նմուշի պետական համարանիշերը նորերով չփոխանակված և չշահագործվող փոխադրամիջոցները դրանք հաշվառող (գրանցող) լիազոր մարմնում հաշվառումից ժամանակավորապես հանելու դեպքում փոխադրամիջոցների գույքահարկի պարտավորությունը դադարում է այդ փոխադրամիջոցի վերջին տարեկան տեխնիկական զննության հարկային տարվան հաջորդող հարկային տարվա հունվարի 1-ից: Ֆիզիկական անձի դիմումի համաձայն՝ փոխադրամիջոցը լիազոր մարմնում վերահաշվառելու դեպքում այդ փոխադրամիջոցի համար դադարած փոխադրամիջոցների գույքահարկի պարտավորությունները հակադարձվում են և ենթակա են կատարման սույն բաժնով սահմանված կարգով և չափով:

4. Հարկման օբյեկտ համարվող փոխադրամիջոցի նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառված որևէ արգելանքի առկայությունը հիմք չի համարվում փոխադրամիջոցների գույքահարկը չհաշվարկելու համար:

Հոդված 247. Հաշվետու ժամանակաշրջանը

1. Փոխադրամիջոցների գույքահարկի հաշվարկման և վճարման համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր հաշվետու տարին:

Հոդված 248. Տեղական բյուջե վճարման ենթակա փոխադրամիջոցների գույքահարկի գումարի հաշվարկման կարգը

1. Փոխադրամիջոցի գույքահարկը հաշվարկվում է Օրենսգրքի 243-րդ հոդվածով սահմանված հարկման բազայի և Օրենսգրքի 244-րդ հոդվածով սահմանված համապատասխան դրույքաչափերի բազմապատկումով՝ հաշվի առնելով Օրենսգրքի 245-րդ հոդվածով սահմանված արտոնությունները և Օրենսգրքի 249-րդ հոդվածի դրույթները:

2. Օրենսգրքի 246-րդ հոդվածով սահմանված կարգով փոխադրամիջոցների գույքահարկի պարտավորության առաջացման կամ փոխադրամիջոցների գույքահարկի հաշվարկման դադարման դեպքերում սույն հոդվածի 1-ին մասին համապատասխան հաշվարկված՝ փոխադրամիջոցների գույքահարկի տարեկան գումարները ճշգրտվում են տվյալ հարկային տարվա ընթացքում փոխադրամիջոցների գույքահարկի պարտավորությունների առաջացման կամ փոխադրամիջոցների գույքահարկի հաշվարկման դադարման ամիսներին համամասնորեն:

3. Հաշվառող մարմինները, հիմք ընդունելով շարժական գույքի կադաստր վարող մարմնից Օրենսգրքի 250-րդ հոդվածով սահմանված կարգով ստացված տեղեկությունները, սույն բաժնով սահմանված կարգով հաշվարկում են փոխադրամիջոցների գույքահարկ վճարողների փոխադրամիջոցների գույքահարկի գումարները և մինչև ընթացիկ հարկային տարվա նոյեմբերի 1-ը փոխադրամիջոցների գույքահարկ վճարողներին ներկայացնում են փոխադրամիջոցների գույքահարկի վճարման ծանուցագրեր (այդ թվում՝ ուղարկում են փոստով կամ հանձնում են առձեռն):

4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետում ծանուցագիր չներկայացնելը փոխադրամիջոցի գույքահարկ վճարողին չի ազատում հարկային պարտավորություններն ամբողջությամբ կատարելու պարտականությունից:

5. Փոխադրամիջոցի գույքահարկ վճարողները փոխադրամիջոցի գույքահարկի գծով իրենց պարտավորությունների

վերաբերյալ տեղեկանք կամ տեղեկություններ ստանալու նպատակով կարող են դիմել հաշվառող մարմիններ: Հաշվառող մարմինները նշված տեղեկանքները կամ տեղեկությունները տրամադրում են դիմումները ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

6. Փոխադրամիջոցների գույքահարկի հաշվարկի հետ չհամաձայնելու դեպքում փոխադրամիջոցների գույքահարկ վճարողները հարկման օբյեկտ համարվող փոխադրամիջոցի մասով փոխադրամիջոցների գույքահարկի հաշվարկի ճշգրտման նպատակով կարող են դիմել համապատասխան հաշվառող մարմիններ, իսկ հարկման բազայի ճշգրտման նպատակով անհրաժեշտ տեղեկություններ ու տվյալներ ստանալու նպատակով կարող են դիմել շարժական գույքի կադաստր վարող մարմին: Հաշվառող կամ լիազոր մարմինները նշված տեղեկությունները տրամադրում են դիմումները ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Հոդված 249. Ընդհանուր սեփականության փոխադրամիջոցների գույքահարկի գումարի հաշվարկման կարգը

1. Ընդհանուր սեփականություն հանդիսացող՝ փոխադրամիջոցների գույքահարկով հարկման օբյեկտի համար փոխադրամիջոցների գույքահարկը հաշվարկվում է փոխադրամիջոցի ամբողջ հարկման բազայից՝ հաշվառող մարմինների կողմից:

2. Հաշվառող մարմինները, հիմք ընդունելով շարժական գույքի կադաստր վարող մարմնից Օրենսգրքի 250-րդ հոդվածով սահմանված կարգով ստացված տեղեկությունները, համասեփականատեր փոխադրամիջոցների գույքահարկ վճարողների փոխադրամիջոցների գույքահարկը հաշվարկում են՝

1) ընդհանուր համատեղ սեփականության դեպքում՝ փոխադրամիջոցների գույքահարկով հարկման օբյեկտի ամբողջ հարկման բազայի համար Օրենսգրքի 248-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված ամբողջ հարկային պարտավորությունը՝ համասեփականատերերից որևէ մեկի համար.

2) ընդհանուր բաժնային սեփականության դեպքում՝ փոխադրամիջոցների գույքահարկով հարկման օբյեկտի ամբողջ հարկման բազայի համար Օրենսգրքի 248-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված հարկային պարտավորությունը՝ համասեփականատերերից յուրաքանչյուրի համար՝ իր բաժնի չափով:

Հոդված 250. Տեղեկությունների տրամադրումը

1. Կառավարության սահմանած կարգով՝

1) հարկային տարվա հուլիսի 1-ի դրությամբ գրանցված (հաշվառված) և փոխադրամիջոցների գույքահարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող փոխադրամիջոցների վերաբերյալ տեղեկությունները շարժական գույքի կադաստր վարող համապատասխան լիազոր մարմինը մինչև տվյալ հարկային տարվա օգոստոսի 1-ը ներառյալ ներկայացնում է հաշվառող մարմիններին.

2) շարժական գույքի կադաստր վարող համապատասխան լիազոր մարմինը մինչև յուրաքանչյուր ամսվա 15-ը ներառյալ նախորդ ամսվա ընթացքում փոխադրամիջոցների սեփականատերերի, ինչպես նաև փոխադրամիջոցների գրանցման (հաշվառման) տվյալների փոփոխությունների վերաբերյալ տեղեկությունները ներկայացնում է հաշվառող մարմիններ.

3) հարկային մարմինն իր գործառույթների իրականացման ընթացքում կարող է համապատասխան հաշվառող մարմիններից տեղեկատվություն ստանալ փոխադրամիջոցների գույքահարկի հաշվարկված գումարների վերաբերյալ:

2. Փոխադրամիջոցների գույքահարկ վճարողները փոխադրամիջոցների գույքահարկի հաշվարկման նպատակով կարող են անհրաժեշտ տեղեկություններ ստանալ Օրենսգրքի 241-րդ հոդվածով սահմանված համապատասխան լիազոր մարմիններից:

(250-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Գ Լ Ո Ւ Խ 54

ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ, ՀԱՇՎԱՆՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԿԱՐԳԸ

Հոդված 251. Փոխադրամիջոցների գույքահարկի գումարի վճարումը

1. Կազմակերպությունները և ֆիզիկական անձինք փոխադրամիջոցների գույքահարկի տարեկան գումարները (այդ թվում՝ Օրենսգրքի 246-րդ հոդվածի 3-րդ մասի 1-3-րդ կետերով սահմանված դեպքերում և կարգով հաշվարկված գույքահարկի պարտավորության գումարները) իրենց պետական գրանցման (հաշվառման) վայրի համայնքի բյուջե են

վճարում մինչև հարկային տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ՝ հաշվի առնելով սույն հոդվածով սահմանված առանձնահատկությունները: Հաշվառման (գրանցման) վայրի բացակայության դեպքում ֆիզիկական անձինք փոխադրամիջոցների գույքահարկի՝ սույն մասում նշված գումարները վճարում են իրենց հիմնական բնակության վայրի համայնքի բյուջե: Եթե ֆիզիկական անձի հիմնական բնակության վայրը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս է, ապա փոխադրամիջոցների գույքահարկի՝ սույն հոդվածում նշված գումարները վճարվում է փոխադրամիջոցի հիմնական գտնվելու վայրի համայնքի բյուջե:

2. Ֆիզիկական անձինք տարեկան տեխնիկական զննության ենթակա փոխադրամիջոցների համար փոխադրամիջոցների գույքահարկի գծով հարկային պարտավորություններն ամբողջությամբ կատարում են մինչև փոխադրամիջոցները տվյալ հարկային տարվա տեխնիկական զննության ներկայացնելը:

3. Փոխադրամիջոցների տեխնիկական զննությունն իրականացվում է հաշվառող մարմնի կողմից տրված՝ տվյալ փոխադրամիջոցի գծով հարկային պարտավորություններ չունենալու վերաբերյալ տեղեկանքի հիման վրա, որում նշվում է նաև տեղեկանքը տրամադրելու հարկային տարվա այն ժամանակահատվածը, որի համար տվյալ փոխադրամիջոցի մասով կատարված են փոխադրամիջոցների գույքահարկի վճարումներ:

4. Փոխադրամիջոցի օտարման դեպքում փոխադրամիջոցների գույքահարկ վճարող ֆիզիկական անձինք մինչև սեփականության իրավունքի փոխանցման պետական գրանցման օրն ընդգրկող ամիսը ներառող ժամանակահատվածի համար փոխադրամիջոցների գույքահարկով հարկման օբյեկտ հանդիսացող տվյալ փոխադրամիջոցի մասով փոխադրամիջոցների գույքահարկի պարտավորություններն ամբողջությամբ կատարում են մինչև օտարման պայմանագրից ծագող սեփականության իրավունքի պետական գրանցումը, բացառությամբ երբ օտարումը կատարվել է հարկադիր կատարողի, սնանկության կառավարչի կամ գրավառուի կողմից:

5. Փոխադրամիջոցի օտարման դեպքում փոխադրամիջոցների գույքահարկ վճարող կազմակերպությունները մինչև սեփականության իրավունքի փոխանցման պետական գրանցման օրն ընդգրկող ամիսը ներառող ժամանակահատվածի համար փոխադրամիջոցների գույքահարկով հարկման օբյեկտ հանդիսացող տվյալ փոխադրամիջոցի մասով փոխադրամիջոցների գույքահարկի պարտավորություններն ամբողջությամբ կատարում են մինչև օտարման պայմանագրից ծագող սեփականության իրավունքի պետական գրանցումը, բացառությամբ այն դեպքերի, երբ օտարումը կատարվել է հարկադիր կատարողի, սնանկության կառավարչի կամ գրավառուի կողմից:

6. Բացառությամբ հարկադիր կատարողի, սնանկության կառավարչի կամ գրավառուի կողմից կատարված օտարման դեպքերի, շարժական գույքի կադաստր վարող մարմինը փոխադրամիջոցի պետական գրանցումն իրականացնում է հաշվառող մարմինների կողմից տրված՝ փոխադրամիջոցի գծով հարկային պարտավորություններ չունենալու վերաբերյալ տեղեկանքի հիման վրա, որում նշվում է նաև տեղեկանքը տրամադրելու հարկային տարվա այն ժամանակահատվածը, որի համար տվյալ փոխադրամիջոցի մասով կատարված են փոխադրամիջոցների գույքահարկի (կազմակերպությունների համար՝ տվյալ հաշվառող մարմնում հաշվառված փոխադրամիջոցների գույքահարկի) պարտավորությունները:

7. Ֆիզիկական անձանց պատկանող հարկման օբյեկտ համարվող փոխադրամիջոցը մինչև 2010 թվականի դեկտեմբերի 31-ը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով խոտանված լինելու կամ հին նմուշի պետական համարանիշերը նորերով չփոխանակված և չշահագործվող փոխադրամիջոցները շարժական գույքի կադաստր վարող մարմնում հաշվառումից ժամանակավորապես հանելու դեպքում փոխադրամիջոցի գույքահարկի պարտավորության դադարեցման (հաշվառող մարմինների կողմից փոխադրամիջոցների գույքահարկի պարտավորությունների վերահաշվարկման) համար հիմք են հանդիսանում շարժական գույքի կադաստր վարող մարմնի կողմից Օրենսգրքի 250-րդ հոդվածով սահմանված կարգով ներկայացված տեղեկությունները կամ փոխադրամիջոցների գույքահարկ վճարողին տրված՝ խոտանումը կամ հաշվառումից ժամանակավորապես հանելը հիմնավորող փաստաթուղթը (որում պարտադիր նշվում է տվյալ փոխադրամիջոցի վերջին տարեկան տեխնիկական զննության տարեթիվը): Ֆիզիկական անձի դիմումի համաձայն՝ փոխադրամիջոցները շարժական գույքի կադաստր վարող մարմնում վերահաշվառվում են փոխադրամիջոցների գույքահարկ վճարողին հաշվառող մարմինների կողմից տրված՝ տվյալ փոխադրամիջոցի գծով փոխադրամիջոցների գույքահարկի պարտավորություններ չունենալու տեղեկանքի հիման վրա:

(251-րդ հոդվածը լրաց., փոփ. 21.12.17 ՀՕ-266-Ն)

Հոդված 252. Փոխադրամիջոցների գույքահարկի գումարի՝ այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցումը և (կամ) վերադարձը

1. Օրենսգրքով սահմանված չափից ավելի վճարված փոխադրամիջոցների գույքահարկի գումարների հաշվանցումը և (կամ) վերադարձն իրականացվում են Կառավարության սահմանած կարգով:

(252-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

ՀԱՐԿՄԱՆ ՀԱՏՈՒԿ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ

Գ Լ Ո Ւ Խ 55

ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հոդված 253. Շրջանառության հարկը

1. Շրջանառության հարկը Օրենսգրքի 256-րդ հոդվածով սահմանված՝ հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակների իրականացման համար Օրենսգրքով սահմանված կարգով, չափով և ժամկետներում պետական բյուջե վճարվող՝ ԱԱՀ-ին և (կամ) շահութահարկին փոխարինող պետական հարկ է:

2. Ռեզիդենտ առևտրային կազմակերպությունների համար շրջանառության հարկը փոխարինում է ԱԱՀ-ին և (կամ) շահութահարկին: Շրջանառության հարկի մեջ շահութահարկի հաշվարկային մեծությունն ընդունվում է 40 տոկոս, իսկ ԱԱՀ-ի հաշվարկային մեծությունը՝ 60 տոկոս:

3. Անհատ ձեռնարկատերերի և նոտարների համար շրջանառության հարկը փոխարինում է ԱԱՀ-ին:

Հոդված 254. Շրջանառության հարկ վճարողները

1. Շրջանառության հարկ վճարողներ են համարվում սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանը բավարարող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները (բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի) հետևյալ դեպքերում և ժամկետներում.

1) տվյալ հարկային տարվա հունվարի 1-ից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքի), եթե հարկ վճարողը մինչև տվյալ հարկային տարվա փետրվարի 20-ը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն.

2) հարկային տարվա ընթացքում պետական գրանցում ստացած առևտրային կազմակերպությունը կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված կամ որպես նոտար նշանակված ֆիզիկական անձը՝ համապատասխանաբար, որպես կազմակերպություն պետական գրանցման կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման կամ որպես նոտար նշանակման օրվանից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքի), եթե հարկ վճարողը մինչև համապատասխանաբար՝ որպես կազմակերպություն պետական գրանցման կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման կամ որպես նոտար նշանակման օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով հայտարարություն՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ: Սույն կետի կիրառության իմաստով՝ վերակազմակերպման արդյունքում նոր ստեղծվող կազմակերպության կամ կազմակերպությունների (բացառությամբ միացման ձևով վերակազմակերպման դեպքում այն կազմակերպության, որին միանում են այլ կազմակերպություն կամ կազմակերպություններ և առանձնացման ձևով վերակազմակերպման դեպքում այն կազմակերպության, որից առանձնանում են այլ կազմակերպություն կամ կազմակերպություններ) համար պետական գրանցում է համարվում նաև կազմակերպությունների վերակազմակերպման պետական գրանցումը.

3) հարկային տարվա ընթացքում որպես միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարած առևտրային կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը՝ որպես միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարելու օրվանից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքի), եթե հարկ վճարողը որպես միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարելու օրվանից մինչև այդ օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով հայտարարություն՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ.

4) հարկային մարմնի հաստատած ձևով՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունում նշված օրվանից (բայց այդ հայտարարությունը ներկայացնելու օրվան նախորդող 20-րդ օրվանից ոչ շուտ) մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքի), եթե միկրոձեռնարկատիրության սուբյեկտը հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով հայտարարություն՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ: Եթե միկրոձեռնարկատիրության սուբյեկտը, Օրենսգրքի 268-րդ հոդվածի համաձայն, դադարում է համարվել միկրոձեռնարկատիրության սուբյեկտ մինչև հարկային մարմնի հաստատած ձևով՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունում նշված օրը, ապա միկրոձեռնարկատիրության սուբյեկտը շրջանառության հարկ վճարող է համարվում սույն մասի 3-րդ կետով սահմանված կարգով՝ որպես միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարելու օրվանից՝ մինչև այդ օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ՝ հարկային մարմին ներկայացնելով հարկային մարմնի հաստատած ձևով նոր հայտարարություն՝

շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ (հարկային մարմնի հաստատած ձևով՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ նախկինում ներկայացված հայտարարությունը հաշվի չի առնվում), իսկ այդ կետով սահմանված կարգով շրջանառության հարկ վճարող չհամարվելու դեպքում, Օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն, համարվում է ԱԱՀ վճարող.

5) մինչև հարկային տարվա փետրվարի 20-ը ներառյալ գործունեություն չիրականացրած (գործունեությունը դադարեցրած) առևտրային կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը կամ նոտարը գործունեությունը վերսկսելու օրվանից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքի), եթե հարկ վճարողը մինչև գործունեությունը վերսկսելու օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով հայտարարություն՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ.

6) մինչև տվյալ հարկային տարին սկսվելը պետական հաշվառումից դուրս եկած անհատ ձեռնարկատերը կամ պաշտոնից ազատված նոտարը տվյալ հարկային տարում կրկին որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվելու կամ կրկին որպես նոտար նշանակվելու օրվանից մինչև հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքի), եթե հարկ վճարողը մինչև կրկին որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվելու կամ կրկին որպես նոտար նշանակվելու օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով հայտարարություն՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ.

7) հարկային տարվա ընթացքում պետական հաշվառումից դուրս եկած անհատ ձեռնարկատերը կամ պաշտոնից ազատված նոտարը տվյալ հարկային տարում կրկին որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվելու կամ կրկին որպես նոտար նշանակվելու օրվանից մինչև հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքի), եթե հարկ վճարողը մինչև կրկին որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվելու կամ կրկին որպես նոտար նշանակվելու օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով հայտարարություն՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ, բացառությամբ այն դեպքերի, երբ անհատ ձեռնարկատերը տվյալ հարկային տարվա ընթացքում՝ մինչև պետական հաշվառումից դուրս գալը, կամ երբ նոտարը տվյալ հարկային տարվա ընթացքում՝ մինչև պաշտոնից ազատվելը, Օրենսգրքի 59-րդ հոդվածի համաձայն, համարվել են ԱԱՀ վճարող:

2. Շրջանառության հարկ վճարող կարող են համարվել այն ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը և նոտարը, որոնց նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը չի գերազանցել 115 միլիոն դրամը: Սույն մասի կիրառության իմաստով՝

1) իրացման շրջանառությունը ներառում է նաև ընտանեկան ձեռնարկատիրության հարկման հատուկ համակարգերի շրջանակներում իրականացվող գործունեության տեսակներին վերագրվող իրացման շրջանառությունը.

2) առևտրային կազմակերպությունների վերակազմակերպման դեպքում հաշվի են առնվում հետևյալ առանձնահատկությունները.

ա. բաժանման ձևով կազմակերպության վերակազմակերպման դեպքում նոր ստեղծված կազմակերպություններից յուրաքանչյուրի համար նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառություն է համարվում բաժանման ձևով վերակազմակերպված կազմակերպության նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը,

բ. առանձնացման ձևով կազմակերպության վերակազմակերպման դեպքում ինչպես այն կազմակերպության համար, որից առանձնացել են այլ կազմակերպություն կամ կազմակերպություններ, այնպես էլ առանձնացված կազմակերպության կամ կազմակերպություններից յուրաքանչյուրի համար նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառություն է համարվում վերակազմակերպված կազմակերպության նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը,

գ. միաձուլման ձևով կազմակերպությունների վերակազմակերպման դեպքում նոր ստեղծված կազմակերպության համար նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառություն է համարվում միաձուլված կազմակերպությունների նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունների հանրագումարը,

դ. միացման ձևով կազմակերպությունների վերակազմակերպման դեպքում այն կազմակերպության համար, որին միացել են այլ կազմակերպություն կամ կազմակերպություններ, նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառություն է համարվում տվյալ կազմակերպության նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության և միացած կազմակերպության կամ կազմակերպությունների նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունների հանրագումարը:

3. Շրջանառության հարկ վճարողներ չեն կարող համարվել՝

1) ***(կետն ուժը կորցրել է 25.06.19 ՀՕ-68-Ն)***

2) ***(կետն ուժը կորցրել է 25.06.19 ՀՕ-68-Ն)***

3) բանկերը, վարկային կազմակերպությունները, ապահովագրական ընկերությունները, ներդրումային ընկերությունները, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցները, գրավատները, արտարժույթի առք ու

վաճառքի, արտարժույթի դիլերային-բրոկերային առք ու վաճառքի գործունեություն իրականացնողները, ներդրումային ֆոնդերը, ֆոնդերի կառավարիչները, վճարահաշվարկային կազմակերպությունները, խաղատների, շահումով խաղերի, տոտալիզատորի և ինտերնետ տոտալիզատորի կազմակերպման գործունեություն իրականացնողները, աուդիտորական կազմակերպությունները.

4) հարկային տարվա ընթացքում հսկիչ դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների երրորդ խախտումը կատարած կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները՝ խախտումն արձանագրելու օրվանից մինչև այդ օրը ներառող հարկային տարվան հաջորդող հարկային տարվա ավարտը.

5) Օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխկապակցված համարվող կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները, բացառությամբ այն դեպքերի, երբ, Օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, նրանց փոխկապակցված կազմակերպությունները և (կամ) ֆիզիկական անձինք հարկային մարմին են ներկայացրել գործունեությունը դադարեցնելու մասին հայտարարություն և հայտարարությունը ներկայացնելու օրվանից հետո, իսկ հայտարարությունում գործունեությունը դադարեցնելու այլ օր նշելու դեպքում՝ այդ օրվանից հետո փաստացի գործունեություն չեն իրականացրել.

6) Օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փոխկապակցված համարվող կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները, եթե հարկային մարմնի ղեկավարի որոշմամբ փոխկապակցված ճանաչված առևտրային կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների նախորդ հարկային տարվա կամ ընթացիկ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունների հանրագումարը գերազանցում է 115 միլիոն դրամը.

7) Օրենսգրքի 31-րդ հոդվածով սահմանված՝ համատեղ գործունեության պայմանագրի, ինչպես նաև ապրանքների մատակարարման՝ կոմիսիայի կամ ապրանքների մատակարարման՝ գործակալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրի կողմ հանդիսացող կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները:

4. Առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները համարվում են շրջանառության հարկ վճարող գործունեության բոլոր տեսակների մասով:

5. Խաղարկությունով, ոչ խաղարկությունով և (կամ) համակցված վիճակախաղի (այսուհետ՝ վիճակախաղ) կազմակերպիչ համարվող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը համարվում է և չի դադարում համարվել շրջանառության հարկ վճարող՝ անկախ սույն գլխով սահմանված սահմանափակումներից:

6. Սույն գլխով սահմանված պայմանները չբավարարող (բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով սահմանված դեպքերի)՝ հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերում և ժամկետներում (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու դեպքի) կարող են համարվել շրջանառության հարկ վճարող սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետներում հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնելու համար շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հարկային մարմնի հաստատած ձևով հայտարարություն հարկային մարմին ներկայացնելու դեպքում՝ անկախ սույն գլխով սահմանված սահմանափակումներից:

7. Հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարող այն ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը (բացառությամբ սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված դեպքերի), որոնց տվյալ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը գերազանցել է 115 միլիոն դրամը, կամ տվյալ հարկային տարվա ընթացքում տեղի է ունեցել Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 4-7-րդ կետերում նշված փաստերից որևէ մեկը, իրացման շրջանառության՝ սույն մասով սահմանված չափը գերազանցելու կամ Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 4-7-րդ կետերում նշված փաստերից որևէ մեկը տեղի ունենալու օրվանից մինչև այդ օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնելու համար շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հարկային մարմնի հաստատած ձևով հայտարարություն հարկային մարմին ներկայացնելու դեպքում կարող են այդ օրվանից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու դեպքի) շարունակել համարվել շրջանառության հարկ վճարող՝ անկախ սույն գլխով սահմանված սահմանափակումներից (բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով սահմանված դեպքերի):

8. Սույն բաժնի կիրառության իմաստով՝ հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեություն է համարվում խոհարարական արտադրանքի օտարումը (այդ թվում՝ առաքմամբ) և (կամ) սպառման կազմակերպումը: Այդ գործունեությունը ներառում է նաև խոհարարական արտադրանքի սպառման կազմակերպման հետ անմիջականորեն կապված ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը, ծառայությունների մատուցումը, մասնավորապես սպասարկումը, մուտքի թույլտվությունը:

(254-րդ հոդվածը փոփ., լրաց. 21.12.17 ՀՕ-266-Ն, փոփ., լրաց., խմբ. 25.06.19 ՀՕ-68-Ն)

(254-րդ հոդվածը փոփոխվել է 25.06.19 ՀՕ-68-Ն և օրենքի 71-րդ հոդվածի համաձայն՝ մինչև 25.06.19 ՀՕ-68-Ն օրենքի պաշտոնական հրապարակման օրը ներառյալ ընթացիկ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության 58.35 միլիոն դրամի շեմը

գերազանցած հարկ վճարողները 2019 թվականի ընթացքում շարունակում են համարվել ԱԱՀ վճարողներ:)

Հոդված 255. Շրջանառության հարկ վճարող համարվելուց դադարելը

1. Շրջանառության հարկ վճարողը դադարում է (բացառությամբ Օրենսգրքի 254-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով սահմանված դեպքերի) այդպիսին համարվելուց, եթե՝

1) հարկային մարմին է ներկայացրել հայտարարություն՝ նշում կատարելով ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու մասին՝ հայտարարությունում նշված օրվանից (բայց հայտարարությունը ներկայացնելու օրվան նախորդող 20-րդ օրվանից ոչ շուտ) մինչև հայտարարությունում նշված հարկային տարվա ավարտը.

2) ընթացիկ հարկային տարում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը գերազանցել է 115 միլիոն դրամը՝ գերազանցելու պահից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը.

3) տեղի է ունեցել Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ, 3-րդ, 5-րդ կամ 7-րդ կետերում նշված փաստերից որևէ մեկը՝ այդ փաստը տեղի ունենալու օրվանից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը.

4) տեղի է ունեցել Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետում նշված փաստը՝ այդ փաստը տեղի ունենալու օրվանից մինչև այդ օրը ներառող հարկային տարվան հաջորդող հարկային տարվա ավարտը.

5) տեղի է ունեցել Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետում նշված փաստը՝ այդ փաստը տեղի ունենալու օրը ներառող հարկային տարվա սկզբից, իսկ եթե հարկ վճարողը պետական գրանցում է ստացել կամ հաշվառվել է կամ որպես նոտար նշանակվել է ավելի ուշ, ապա պետական գրանցման կամ հաշվառման կամ որպես նոտար նշանակման օրվանից: Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետում նշված որոշումը դատական կարգով բողոքարկվելու դեպքում առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները շարունակում են համարվել շրջանառության հարկ վճարողներ, իսկ Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետում նշված որոշումն անվավեր չճանաչելու վերաբերյալ դատարանի վճիռն ուժի մեջ մտնելու դեպքում փոխկապակցված ճանաչված առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները դադարում են համարվել շրջանառության հարկ վճարողներ սույն կետով սահմանված ժամկետից:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ և 5-րդ կետերով սահմանված փաստերից որևէ մեկը տեղի ունենալու օրվանից մինչև այդ օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ առևտրային կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը հարկային մարմին է ներկայացնում հայտարարություն՝ նշելով շրջանառության հարկ վճարող համարվելուց դադարելու համապատասխան հիմքը և օրը:

(255-րդ հոդվածը փոփ., լրաց. 21.06.18 ՀՕ-338-Ն, փոփ., լրաց., խմբ. 25.06.19 ՀՕ-68-Ն)

(255-րդ հոդվածը փոփոխվել է 25.06.19 ՀՕ-68-Ն և օրենքի 71-րդ հոդվածի համաձայն՝ մինչև 25.06.19 ՀՕ-68-Ն օրենքի պաշտոնական հրապարակման օրը ներառյալ ընթացիկ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության 58.35 միլիոն դրամի շեմը գերազանցած հարկ վճարողները 2019 թվականի ընթացքում շարունակում են համարվել ԱԱՀ վճարողներ:)

(255-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը՝ «այդ փաստը տեղի ունենալու օրը ներառող հարկային տարվա սկզբից» բառակապակցության Օրենքն ուժի մեջ մտնելուց առաջ ծագած իրավահարաբերությունների վրա տարածելու մասով, ճանաչվել է Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր 14.12.18 ՍԴՈ-1437 որոշմամբ:)

Հոդված 256. Շրջանառության հարկով հարկման օբյեկտը

1. Շրջանառության հարկով հարկման օբյեկտ են համարվում ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը և (կամ) ծառայությունների մատուցումը, բացառությամբ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19.7-րդ և 19.8-րդ հոդվածներով սահմանված գործունեության տեսակների շրջանակներում ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը և (կամ) ծառայությունների մատուցումը: Սույն մասի կիրառության իմաստով՝ ծառայությունների մատուցում են համարվում նաև ոչ նյութական ակտիվների օտարման գործարքները, ինչպես նաև այն գործարքները, որոնց դիմաց ստացվում են վարձակալական կամ օգտագործման վճար, տոկոս և (կամ) ռոյալթի:

(256-րդ հոդվածը լրաց. 25.06.19 ՀՕ-68-Ն)

Հոդված 257. Շրջանառության հարկով հարկման բազան

1. Շրջանառության հարկով հարկման բազա է համարվում Օրենսգրքի 256-րդ հոդվածով սահմանված հարկման օբյեկտ համարվող գործարքների իրացման շրջանառությունը:

2. Սույն հոդվածի կիրառության իմաստով՝ եկամուտների հաշվառումն իրականացվում է Օրենսգրքի 6-րդ բաժնով սահմանված կարգով:

3. Վիճակախաղերի կազմակերպման գործունեությունից ստացվող եկամուտների հաշվառման ու դրա նկատմամբ հսկողության իրականացման կարգը սահմանում է Կառավարությունը:

(257-րդ հոդվածը լրաց. 25.06.19 ՀՕ-68-Ն)

Հոդված 258. Շրջանառության հարկի դրույքաչափերը

1. Շրջանառության հարկով հարկման օբյեկտ համարվող գործարքների հարկման բազայի նկատմամբ շրջանառության հարկը հաշվարկվում է հետևյալ դրույքաչափերով՝ հաշվի առնելով սույն հոդվածի 2-4-րդ մասերով սահմանված դրույթները.

Եկամտի տեսակը	Դրույքաչափը (տոկոս)
Առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից ստացվող եկամուտներ, բացառությամբ Կառավարության սահմանած ցանկում ներառված երկրորդային հումքի առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից, անշարժ գույքի օտարումից ստացվող եկամուտների	5
Կառավարության սահմանած ցանկում ներառված երկրորդային հումքի առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից ստացվող եկամուտներ	1.5
Խմբագրությունների կողմից թերթերի օտարումից եկամուտներ	1.5
Արտադրական գործունեությունից ստացվող եկամուտներ	3.5
Վարձակալական վճար, տոկոս, ռոյալթի, անշարժ գույքի օտարումից ստացվող եկամուտներ	10
Նոտարական գործունեությունից ստացվող եկամուտներ	10
Վիճակախաղերի կազմակերպման գործունեությունից ստացվող եկամուտներ	25
Հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից ստացվող եկամուտներ	6
Հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնելու համար շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հարկային մարմնի հաստատած ձևով հայտարարություն ներկայացրած շրջանառության հարկ վճարողների կողմից Հայաստանի Հանրապետությունում կիրառվող՝ տնտեսական գործունեության դասակարգչի «Հանրային սննդի կազմակերպում» հատվածում չներառվող՝ այլ ակտիվների օտարումից, ինչպես նաև այլ գործունեությունից ստացվող եկամուտներ	20
Այլ գործունեությունից կամ այլ ակտիվների օտարումից ստացվող եկամուտներ	5

2. Հաշվետու ժամանակաշրջանի համար առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից ձևավորվող հարկման բազայի մասով (բացառությամբ Կառավարության սահմանած ցանկում ներառված երկրորդային հումքի առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից ձևավորվող հարկման բազայի) սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափով հաշվարկված շրջանառության հարկի գումարը նվազեցվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում անմիջական վաճառքի նպատակով ձեռք բերված ապրանքների գծով կատարված՝ Օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 1-5-րդ կետերով, ինչպես նաև նույն հոդվածի 11-րդ և 13-րդ մասերով սահմանված փաստաթղթերով հիմնավորված ծախսերի (ներառյալ՝ ԱԱՀ-ի, ակցիզային հարկի և (կամ) բնապահպանական հարկի գումարները), ինչպես նաև Հայաստանի Հանրապետություն ներմուծված ապրանքների մասով ներմուծման մաքսային հայտարարագրերում արտացոլված մաքսային արժեքի, հաշվարկված մաքսատուրքի, ԱԱՀ-ի, ակցիզային հարկի և (կամ) բնապահպանական հարկերի հանրագումարի կամ ներմուծման հարկային հայտարարագրերում արտացոլված՝ ԱԱՀ-ով հարկման բազայի, հաշվարկված ԱԱՀ-ի, ակցիզային հարկի և (կամ) բնապահպանական հարկի հանրագումարի (այսուհետ սույն գլխում՝ ապրանքներ ձեռք բերելու ծախսեր) չորս տոկոսը կազմող գումարի չափով: Եթե սույն մասով սահմանված նվազեցումներից հետո շրջանառության հարկի գումարը կազմում է առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից ձևավորվող հարկման բազայի 1.5 տոկոսից պակաս գումար, ապա ապրանքներ ձեռք բերելու ծախսերի գծով նվազեցումը կատարվում է այն չափով, որ շրջանառության հարկի գումարը կազմի առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից ձևավորվող հարկման բազայի 1.5 տոկոսը: Սույն մասին համապատասխան՝ շրջանառության հարկի գումարից ապրանքներ ձեռք բերելու ծախսերի գծով չնվազեցված մասը (այդ թվում՝ հաշվետու ժամանակաշրջանի համար առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից ձևավորվող հարկման բազայի բացակայության դեպքում)՝ սույն մասի պահանջների պահպանմամբ, նվազեցվում է հետագա հաշվետու ժամանակաշրջանների համար առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից ձևավորվող հարկման բազայի նկատմամբ հաշվարկվող շրջանառության հարկի գումարից:

3. Հաշվետու ժամանակաշրջանի համար հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից ձևավորվող հարկման բազայի մասով սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափերով հաշվարկված շրջանառության հարկի գումարը նվազեցվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության հետ կապված՝ Օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 1-5-րդ կետերով, ինչպես նաև նույն հոդվածի 11-13-րդ մասերով սահմանված փաստաթղթերով հիմնավորված ծախսերի (բացառությամբ հիմնական միջոցներ ձեռք բերելու կամ կառուցելու ծախսերի, հիմնական միջոցների վրա կատարվող կապիտալ և ընթացիկ ծախսերի ու հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումների, ինչպես նաև խոհարարական արտադրանք չհանդիսացող այլ ակտիվների օտարման դեպքում՝ դրանք ձեռք բերելու ծախսերի) հանրագումարի երեք տոկոսը կազմող գումարի չափով: Եթե սույն մասով սահմանված նվազեցումներից հետո շրջանառության հարկի գումարը կազմում է հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից ձևավորվող հարկման բազայի չորս տոկոսից պակաս գումար, ապա ծախսերի գծով նվազեցումը կատարվում է այն չափով, որ շրջանառության հարկի գումարը կազմի հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից ձևավորվող հարկման բազայի չորս տոկոսը: Սույն մասի կիրառության իմաստով՝ ծախսերի մեջ ներառվում են նաև ձեռք բերվող կամ ներմուծվող ապրանքների համար վճարվող մաքսատուրքի, ԱԱՀ-ի, ակցիզային հարկի և (կամ) բնապահպանական հարկի գումարները:

4. Հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնելու համար շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հարկային մարմնի հաստատած ձևով հայտարարություն ներկայացրած շրջանառության հարկ վճարողները շրջանառության հարկը հաշվարկում են միայն սույն հոդվածի 1-ին մասի 8-րդ և 9-րդ տողերով սահմանված համապատասխան դրույքաչափերով:

(258-րդ հոդվածը փոփ., լրաց., խմբ. 21.12.17 ՀՕ-266-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն, 21.06.18 ՀՕ-338-Ն, փոփ., լրաց. 25.06.19 ՀՕ-68-Ն)

(258-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը 25.06.19 ՀՕ-68-Ն օրենքի 71-րդ հոդվածի համաձայն ուժի մեջ են մտնում 25.06.19 ՀՕ-68-Ն օրենքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և կիրառվում են 2019 թվականի հունվարի 1-ից հետո ընկած ժամանակահատվածում ներառվող հաշվետու ժամանակաշրջանների համար հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից ստացվող եկամուտների մասով շրջանառության հարկի հաշվարկման նպատակով:)

Հոդված 259. Հաշվետու ժամանակաշրջանը

1. Շրջանառության հարկի հաշվարկման և վճարման համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր հաշվետու եռամսյակը:

Հոդված 260. Պետական բյուջե վճարման ենթակա շրջանառության հարկի գումարի հաշվարկման կարգը

1. Շրջանառության հարկ վճարողները հաշվետու ժամանակաշրջանի գործունեության (բացառությամբ

առևտրական (առք ու վաճառքի) և հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության) արդյունքներով պետական բյուջե են վճարում այդ ժամանակաշրջանում ձևավորվող հարկման բազայի նկատմամբ Օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված համապատասխան դրույքաչափերի կիրառությամբ հաշվարկված շրջանառության հարկի գումարը:

2. Շրջանառության հարկ վճարողները հաշվետու ժամանակաշրջանի՝ առևտրական (առք ու վաճառքի) գործունեության (բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ներառված երկրորդային հումքի առևտրական (առք ու վաճառքի) գործունեության) արդյունքներով պետական բյուջե են վճարում այդ ժամանակաշրջանում ձևավորվող հարկման բազայի նկատմամբ Օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափի կիրառությամբ հաշվարկված շրջանառության հարկի գումարի և Օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով հաշվարկված՝ շրջանառության հարկի գումարից նվազեցվող գումարի տարբերությունը:

3. Շրջանառության հարկ վճարողները հաշվետու ժամանակաշրջանի՝ հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության արդյունքներով պետական բյուջե են վճարում այդ ժամանակաշրջանում ձևավորվող հարկման բազայի նկատմամբ Օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափի կիրառությամբ հաշվարկված շրջանառության հարկի գումարի և Օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով հաշվարկված՝ շրջանառության հարկի գումարից նվազեցվող գումարի տարբերությունը:

4. Առևտրական (առք ու վաճառքի) կամ հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության մասով շրջանառության հարկի հաշվարկման նպատակով իրականացվում է ապրանքների առանձնացված հաշվառում:

(260-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն, խմբ. 21.12.17 ՀՕ-266-Ն)

Հոդված 261. Շրջանառության հարկի հաշվարկների ներկայացումը

1. Շրջանառության հարկ վճարողները մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում շրջանառության հարկի հաշվարկներ: Օրենսգրքով 84-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և (կամ) 4-րդ կետերով սահմանված հարկման օբյեկտների մասով ակցիզային հարկ վճարող համարվելու դեպքում շրջանառության հարկ վճարողները մինչև յուրաքանչյուր հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ՝ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկ:

(261-րդ հոդվածը լրաց. 25.06.19 ՀՕ-68-Ն)

Հոդված 262. Շրջանառության հարկի գումարի վճարումը

1. Շրջանառության հարկ վճարողները Օրենսգրքի 260-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված՝ պետական բյուջե վճարման ենթակա շրջանառության հարկի գումարները պետական բյուջե են վճարում մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

Հոդված 263. Շրջանառության հարկ վճարողների կողմից այլ հարկերի և վճարների հաշվարկումը և վճարումը

1. Շրջանառության հարկ վճարողի համար պահպանվում են Օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով այլ հարկերի (որոնց շրջանառության հարկը չի փոխարինում) և վճարների հաշվարկման ու վճարման կարգերը, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի:

2. Շրջանառության հարկ վճարողները, սույն գլխով կարգավորվող հարաբերությունների մասով, ազատվում են՝

1) Օրենսգրքի 135-րդ հոդվածով սահմանված՝ շահութահարկի կանխավճարների կատարումից.

2) Օրենսգրքի 150-րդ հոդվածի 13-րդ մասով հարկային գործակալի համար սահմանված պարտավորությունների կատարումից:

Հոդված 264. Շրջանառության հարկի համակարգից հարկման ընդհանուր համակարգին անցումը

1. Հարկ վճարողները շրջանառության հարկ վճարող համարվելուց դադարելու պահից (շրջանառության հարկի համակարգից հարկման ընդհանուր համակարգ անցնելու պահից) տվյալ հարկային տարվա մնացած ժամանակահատվածում հարկային պարտավորությունները հաշվարկում և կատարում են Օրենսգրքով սահմանված կարգով՝ շրջանառության հարկ վճարող համարվելուց դադարելու պահից հետո ձևավորվող հարկման բազաների մասով:

2. Շրջանառության հարկի համակարգից հարկման ընդհանուր համակարգ անցնելու դեպքում հարկ վճարողի համախառն եկամտից նվազեցվում են մինչև շրջանառության հարկ վճարող համարվելը և (կամ) շրջանառության հարկ վճարող համարվելու ժամանակահատվածում կատարված՝ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերման ծախսերը՝ Օրենսգրքով սահմանված կարգով: Սույն մասի կիրառության իմաստով՝ շրջանառության հարկի համակարգից հարկման ընդհանուր համակարգ անցնելու դեպքում՝

1) հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը որոշելու համար հաշվի են առնվում շրջանառության հարկի համակարգում հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մասով Օրենսգրքի 121-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկվող ամորտիզացիոն մասհանումները.

2) հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մասով Օրենսգրքի 121-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկվող ամորտիզացիոն մասհանումների գծով ծախսերը համախառն եկամտից նվազեցվում են շրջանառության հարկի համակարգից հարկման ընդհանուր համակարգ անցնելու օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 1-ից.

3) Օրենսգրքի 121-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված և շրջանառության հարկի համակարգից հարկման ընդհանուր համակարգ անցնելու օրն ընդգրկող ամսվան վերաբերող՝ վարչական, իրացման, ոչ արտադրական բնույթի այլ, ինչպես նաև ֆինանսական ծախսերը (այն մասով, որը, նույն մասի համաձայն, նվազեցվում է այն հարկային տարվա ընթացքում, որին այն վերաբերում է) համախառն եկամտից նվազեցվում են շրջանառության հարկի համակարգից հարկման ընդհանուր համակարգ անցնելու օրվանից մինչև այդ օրն ընդգրկող ամսվա վերջը եղած օրերի՝ տվյալ ամսվա բոլոր օրերի կառուցվածքում ունեցած տեսակարար կշռին համապատասխանող չափով:

3. Շրջանառության հարկի համակարգից հարկման ընդհանուր համակարգ անցնելու դեպքում հարկ վճարողի համախառն եկամտից նվազեցվում են մինչև շրջանառության հարկ վճարող համարվելը և (կամ) շրջանառության հարկ վճարող համարվելու ժամանակահատվածում կատարված՝ սույն հոդվածի 2-րդ մասում չնշված ակտիվների (բացառությամբ Օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ապրանքների) սկզբնական արժեքները՝ Օրենսգրքով սահմանված կարգով:

4. Շրջանառության հարկի համակարգից հարկման ընդհանուր համակարգ անցնելու դեպքում, Օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, ապրանքներ ձեռք բերելու ծախսերի գծով չնվազեցված մասի 25-ապատիկը նվազեցվում է շրջանառության հարկի համակարգից հարկման ընդհանուր համակարգ անցնելու օրը ներառող հաշվետու ժամանակաշրջանի համախառն եկամտից:

(264-րդ հոդվածը լրաց. 21.12.17 ՀՕ-266-Ն)

Հոդված 265. Շրջանառության հարկի գումարի մուտքագրումը միասնական հաշվին

1. Օրենսգրքով սահմանված չափից ավելի վճարված շրջանառության հարկի գումարները Օրենսգրքի՝ հարկային վարչարարության մասով սահմանված կարգով և ժամկետներում մուտքագրվում են միասնական հաշվին:

Գ Լ Ո Ւ Խ 56
(գլուխը խմբ. 25.06.19 ՀՕ-68-Ն)

ՄԻԿՐՈՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հոդված 266. Միկրոձեռնարկատիրությունը

1. Միկրոձեռնարկատիրություն է համարվում սույն գլխով սահմանված չափանիշները բավարարող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունների և ֆիզիկական անձանց կողմից ձեռնարկատիրական եկամուտ ստանալու նպատակով իրականացվող գործունեությունը:

Հոդված 267. Միկրոձեռնարկատիրության սուբյեկտները

1. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված պայմանը բավարարող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը (բացառությամբ սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքերի) միկրոձեռնարկատիրության սուբյեկտներ են համարվում հետևյալ դեպքերում և ժամկետներում.

1) տվյալ հարկային տարվա հունվարի 1-ից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 254-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու կամ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքերի), եթե հարկ վճարողը մինչև տվյալ հարկային տարվա փետրվարի 20-ը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն.

2) հարկային տարվա ընթացքում պետական գրանցում ստացած առևտրային կազմակերպությունը կամ որպես

անհատ ձեռնարկատեր հաշվառված ֆիզիկական անձը՝ համապատասխանաբար, որպես կազմակերպություն պետական գրանցման կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման օրվանից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 254-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու կամ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքերի), եթե հարկ վճարողը մինչև համապատասխանաբար՝ որպես կազմակերպություն պետական գրանցման կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն: Սույն կետի կիրառության իմաստով՝ վերակազմակերպման արդյունքում նոր ստեղծվող կազմակերպության կամ կազմակերպությունների (բացառությամբ միացման ձևով վերակազմակերպման դեպքում այն կազմակերպության, որին միանում են այլ կազմակերպություն կամ կազմակերպություններ, և առանձնացման ձևով վերակազմակերպման դեպքում այն կազմակերպության, որից առանձնանում են այլ կազմակերպություն կամ կազմակերպություններ) համար պետական գրանցում է համարվում նաև կազմակերպությունների վերակազմակերպման պետական գրանցումը.

3) մինչև հարկային տարվա փետրվարի 20-ը ներառյալ գործունեություն չիրականացրած (գործունեությունը դադարեցրած) առևտրային կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը գործունեությունը վերսկսելու օրվանից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 254-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու կամ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքերի), եթե հարկ վճարողը մինչև գործունեությունը վերսկսելու օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն.

4) մինչև տվյալ հարկային տարին սկսվելը պետական հաշվառումից դուրս եկած անհատ ձեռնարկատերը տվյալ հարկային տարում կրկին որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվելու օրվանից մինչև հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 254-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու կամ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքերի), եթե հարկ վճարողը մինչև կրկին որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվելու օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն.

5) հարկային տարվա ընթացքում պետական հաշվառումից դուրս եկած անհատ ձեռնարկատերը տվյալ հարկային տարում կրկին որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվելու օրվանից մինչև հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 254-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու կամ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքերի), եթե հարկ վճարողը մինչև կրկին որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվելու օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն, բացառությամբ այն դեպքերի, երբ անհատ ձեռնարկատերը տվյալ հարկային տարվա ընթացքում՝ մինչև պետական հաշվառումից դուրս գալը, Օրենսգրքի 254-րդ հոդվածի համաձայն, համարվել է շրջանառության հարկ վճարող կամ, Օրենսգրքի 59-րդ հոդվածի համաձայն, համարվել է ԱԱՀ վճարող:

2. Սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված պայմանները բավարարող անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը միկրոձեռնարկատիրության սուբյեկտ է համարվում, եթե հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն: Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարությունը ներկայացնում է գործունեության իրականացման որևէ ժամանակահատվածի (հարկային տարվա ընթացքում ընտրված ցանկացած հաշվետու ամսվա կամ մեկից ավելի հաշվետու ամիսների կամ հարկային տարվա կամ հարկային տարիների) համար մինչև տվյալ գործունեության տեսակն իրականացնելը կամ տվյալ գործունեության տեսակը շարունակելը: Հարկային մարմինը միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացրած անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձին միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարությունը ներկայացնելու օրվան հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է իր կողմից սահմանված ձևով միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ արտոնագիր:

3. Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ կարող են համարվել այն ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը և անհատ ձեռնարկատերը, որոնց՝ նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը չի գերազանցել 24 միլիոն դրամը, ինչպես նաև անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այն ֆիզիկական անձը, որի՝ նախորդ հարկային տարվա ընթացքում Օրենսգրքի բաղկացուցիչ մասը կազմող հավելված 3-ով սահմանված գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը չի գերազանցել է 24 միլիոն դրամը: Սույն մասի կիրառության առումով՝

1) իրացման շրջանառությունը ներառում է նաև շրջանառության հարկով հարկման համակարգի շրջանակներում իրականացվող գործունեության տեսակներին վերագրվող իրացման շրջանառությունը.

2) առևտրային կազմակերպությունների վերակազմակերպման դեպքում հաշվի են առնվում հետևյալ առանձնահատկությունները.

ա. բաժանման ձևով կազմակերպության վերակազմակերպման դեպքում նոր ստեղծված կազմակերպություններից յուրաքանչյուրի համար նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառություն է համարվում բաժանման ձևով վերակազմակերպված կազմակերպության նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը,

բ. առանձնացման ձևով կազմակերպության վերակազմակերպման դեպքում ինչպես այն կազմակերպության համար, որից առանձնացել են այլ կազմակերպություն կամ կազմակերպություններ, այնպես էլ առանձնացված կազմակերպության կամ կազմակերպություններից յուրաքանչյուրի համար նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառություն է համարվում վերակազմակերպված կազմակերպության նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը,

գ. միաձուլման ձևով կազմակերպությունների վերակազմակերպման դեպքում նոր ստեղծված կազմակերպության համար նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառություն է համարվում միաձուլված կազմակերպությունների նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունների ամբողջությունը,

դ. միացման ձևով կազմակերպությունների վերակազմակերպման դեպքում այն կազմակերպության համար, որին միացել են այլ կազմակերպություն կամ կազմակերպություններ, նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառություն է համարվում տվյալ կազմակերպության նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության և միացած կազմակերպության կամ կազմակերպությունների նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունների ամբողջությունը:

4. Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը կարող է համարվել միկրոձեռնարկատիրության սուբյեկտ, եթե զբաղվում է բացառապես Օրենսգրքի բաղկացուցիչ մասը կազմող հավելված 3-ով սահմանված գործունեության տեսակներով:

5. Միկրոձեռնարկատիրության սուբյեկտներ չեն կարող համարվել՝

1) բանկերը, վարկային կազմակերպությունները, ապահովագրական ընկերությունները, ներդրումային ընկերությունները, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցները, գրավատները, արտարժույթի առք ու վաճառքի, արտարժույթի դիլերային-բրոկերային առք ու վաճառքի գործունեություն իրականացնողները, ներդրումային ֆոնդերը, ֆոնդերի կառավարիչները, վճարահաշվարկային կազմակերպությունները, նոտարները, խաղատների, շահումով խաղերի կամ վիճակախաղերի կազմակերպման գործունեություն իրականացնողները.

2) խորհրդատվական, իրավաբանական, հաշվապահական, աուդիտորական, ինժեներական, գովազդային, դիզայներական, մարկետինգային, թարգմանչական, փորձագիտական, բժշկական, ատամնատեխնիկական ծառայություններ, տեղեկատվության մշակման (այդ թվում՝ տեղեկատվության հավաքման ու ընդհանրացման) և փոխանցման (հաղորդման), գիտահետազոտական, փորձարարական-կոնստրուկտորական և փորձարարական-տեխնոլոգիական (տեխնոլոգիական) աշխատանքներ կատարողները, Երևան քաղաքի վարչական սահմաններում հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնողները (բացառությամբ Օրենսգրքի հավելված 3-ով նախատեսված՝ զբոսաշրջային տների միջոցով մատուցվող՝ հյուրանոցային ծառայությունների հետ անմիջականորեն կապված՝ հանրային սննդի (նախաճաշ, ճաշ, ընթրիք) ոլորտի գործունեության), ինչպես նաև սույն ենթակետում նշված աշխատանքներին կամ ծառայություններին համանման այլ աշխատանքներ կատարողները կամ ծառայություններ մատուցողները.

3) Երևան քաղաքի վարչական սահմաններում առևտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ զբաղվող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը, Երևան քաղաքի վարչական սահմաններից դուրս՝ առևտրի իրականացման վայրերում, առևտրի կենտրոններում և տոնավաճառներում առևտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ զբաղվող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը, ինչպես նաև անձնական օգտագործման ավտոմեքենաների առևտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ կամ էլեկտրոնային առևտրի շրջանակներում առևտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ զբաղվող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը.

4) «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19.7-րդ և 19.8-րդ հոդվածներով սահմանված գործունեության տեսակներով զբաղվող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը՝ այդ գործունեության տեսակների մասով.

5) հարկային տարվա ընթացքում հսկիչ դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների երրորդ խախտումը կատարած կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը՝ խախտումն արձանագրելու օրվանից մինչև այդ օրը ներառող հարկային տարվան հաջորդող հարկային տարվա ավարտը.

6) Օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխկապակցված համարվող կազմակերպությունները և ֆիզիկական անձինք, բացառությամբ այն դեպքերի, երբ, Օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, նրանց փոխկապակցված կազմակերպությունները և (կամ) ֆիզիկական անձինք հարկային մարմին են ներկայացրել գործունեությունը դադարեցնելու մասին հայտարարություն և հայտարարությունը ներկայացնելու օրվանից հետո, իսկ հայտարարությունում գործունեությունը դադարեցնելու այլ օր նշելու դեպքում՝ այդ օրվանից հետո փաստացի գործունեություն չեն իրականացրել.

7) Օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փոխկապակցված համարվող կազմակերպությունները և ֆիզիկական անձինք, եթե հարկային մարմնի ղեկավարի որոշմամբ փոխկապակցված ճանաչված առևտրային կազմակերպությունների և ֆիզիկական անձանց նախորդ հարկային տարվա կամ ընթացիկ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունների հանրագումարը գերազանցում է 24 միլիոն դրամը.

8) Օրենսգրքի 31-րդ հոդվածով սահմանված՝ համատեղ գործունեության պայմանագրի, ինչպես նաև ապրանքների մատակարարման՝ կոմիսիայի կամ ապրանքների մատակարարման՝ գործակալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրի կողմ հանդիսացող կազմակերպությունները և ֆիզիկական անձինք.

9) իրենց գործունեության ընթացքում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այլ ֆիզիկական անձանց աշխատանքն օգտագործող՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք.

10) կազմակերպություններին կամ անհատ ձեռնարկատերերին ապրանքների մատակարարման գործարքներ իրականացրած՝ առևտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ զբաղվող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը:

Հոդված 268. Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարելը

1. Միկրոձեռնարկատիրության սուբյեկտը դադարում է այդպիսին համարվելուց, եթե՝

1) կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը հարկային մարմին է ներկայացրել հայտարարություն՝ նշում կատարելով ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու մասին՝ հայտարարությունում նշված օրվանից (բայց հայտարարությունը ներկայացնելու օրվան նախորդող 20-րդ օրվանից ոչ շուտ) մինչև հայտարարությունում նշված հարկային տարվա ավարտը կամ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն՝ այդ հայտարարությունում նշված օրվանից (բայց հայտարարությունը ներկայացնելու օրվան նախորդող 20-րդ օրվանից ոչ շուտ) մինչև տվյալ հարկային տարվա ավարտը.

2) ընթացիկ հարկային տարում կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ գործունեության բոլոր տեսակների, իսկ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի դեպքում՝ Օրենսգրքի բաղկացուցիչ մասը կազմող հավելված 3-ով սահմանված գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը գերազանցել է 24 միլիոն դրամը՝ գերազանցելու պահից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը.

3) տեղի է ունեցել Օրենսգրքի 267-րդ հոդվածի 5-րդ մասի 1-3-րդ, 6-րդ, 8-րդ կամ 9-րդ կետերում նշված փաստերից որևէ մեկը՝ այդ փաստը տեղի ունենալու օրվանից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը.

4) տեղի է ունեցել Օրենսգրքի 267-րդ հոդվածի 5-րդ մասի 5-րդ և 10-րդ կետերում նշված փաստերից որևէ մեկը՝ տեղի ունենալու օրվանից մինչև այդ օրը ներառող հարկային տարվան հաջորդող հարկային տարվա ավարտը.

5) տեղի է ունեցել Օրենսգրքի 267-րդ հոդվածի 5-րդ մասի 7-րդ կետում նշված փաստը՝ այդ փաստը տեղի ունենալու օրը ներառող հարկային տարվա սկզբից, իսկ եթե հարկ վճարողը պետական գրանցում է ստացել կամ հաշվառվել է ավելի ուշ, ապա պետական գրանցման կամ հաշվառման օրվանից: Օրենսգրքի 267-րդ հոդվածի 5-րդ մասի 7-րդ կետում նշված որոշումը դատական կարգով բողոքարկվելու դեպքում առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք շարունակում են համարվել միկրոձեռնարկատիրության սուբյեկտներ, իսկ Օրենսգրքի 267-րդ հոդվածի 5-րդ մասի 7-րդ կետում նշված որոշումն անվավեր չճանաչելու վերաբերյալ դատարանի վճիռն ուժի մեջ մտնելու դեպքում փոխկապակցված ճանաչված առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք դադարում են համարվել միկրոձեռնարկատիրության սուբյեկտներ սույն կետով սահմանված ժամկետից:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերով միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարած անհատ ձեռնարկատերը և անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը նույն մասով նախատեսված՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարելու համապատասխան ժամկետներում զրկվում է համապատասխանաբար՝ որպես անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ կամ որպես անհատ ձեռնարկատեր միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու իրավունքից:

Հոդված 269. Միկրոձեռնարկատիրության սուբյեկտների կողմից հարկերի և վճարների հաշվարկումը և վճարումը

1. Միկրոձեռնարկատիրության սուբյեկտներն ազատվում են միկրոձեռնարկատիրության մասով առաջացող բոլոր պետական հարկերի հաշվարկման և պետական բյուջե վճարման պարտավորությունից (այդ թվում՝ որպես հարկային գործակալ՝ հարկը հաշվարկելու, պահելու և պետական բյուջե փոխանցելու պարտավորությունից, ինչպես նաև Օրենսգրքի 135-րդ հոդվածով սահմանված՝ շահութահարկի կանխավճարների կատարման պարտավորությունից), բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի:

2. Միկրոձեռնարկատիրության սուբյեկտները չեն ազատվում՝

1) Հայաստանի Հանրապետություն ներմուծվող (այդ թվում՝ ԵՏՄ անդամ պետություններից) ապրանքների մասով

Օրենսգրքով սահմանված կարգով հարկերի հաշվարկման և պետական բյուջե վճարման պարտավորությունից.

2) միկրոձեռնարկատիրության մեջ ներգրավված վարձու աշխատողներին հարկային գործակալի կողմից վճարվող (հաշվարկվող) հարկվող եկամուտներից յուրաքանչյուր վարձու աշխատողի համար ամսական հինգ հազար դրամի չափով եկամտային հարկ հաշվարկելու և վճարելու պարտավորությունից (այդ թվում՝ ոչ ամբողջական ամսվա համար), որը այդ եկամուտների մասով համարվում է եկամտային հարկի գծով վերջնական հարկային պարտավորություն.

3) Օրենսգրքով սահմանված կարգով ակցիզային հարկի, բնապահպանական հարկի և (կամ) ճանապարհային հարկի հաշվարկման և պետական բյուջե վճարման պարտավորությունից:

Հոդված 270. Միկրոձեռնարկատիրության սուբյեկտների կողմից հարկային հաշվարկներ ներկայացնելը

1. Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը (բացառությամբ բացառապես Օրենսգրքի բաղկացուցիչ մասը կազմող հավելված 3-ով սահմանված գործունեության տեսակների մասով միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվող անհատ ձեռնարկատերերի) մինչև հարկային տարվան հաջորդող հարկային տարվա փետրվարի 1-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում հաշվետվություն՝ նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության վերաբերյալ:

2. Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը մինչև յուրաքանչյուր հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում Օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ եկամտային հարկի հաշվարկ՝ միկրոձեռնարկատիրությունում ներգրավված վարձու աշխատողների համար:

3. Միկրոձեռնարկատիրության սուբյեկտներն ազատվում են հարկային մարմին Օրենսգրքով սահմանված այլ հարկային հաշվարկներ ներկայացնելուց, բացառությամբ՝

1) Օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված փաստաթղթերի.

2) Օրենսգրքի 67-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներից որևէ մեկի խախտմամբ դուրս գրված հարկային հաշվում առանձնացված ԱԱՀ-ի գումարն արտացոլող՝ ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի.

3) Օրենսգրքով 84-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և (կամ) 4-րդ կետերով սահմանված հարկման օբյեկտների մասով Օրենսգրքով սահմանված կարգով ակցիզային հարկ վճարող համարվելու դեպքում՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ հարկային մարմին ներկայացվող՝ ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի.

4) Օրենսգրքի 180-րդ հոդվածով սահմանված՝ բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների միասնական հարկային հաշվարկի:

Հոդված 271. Միկրոձեռնարկատիրության սուբյեկտների կողմից հարկերի և վճարների վճարումը

1. Օրենսգրքի 269-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված՝ միկրոձեռնարկատիրության մեջ ներգրավված վարձու աշխատողներին հարկային գործակալի կողմից վճարվող (հաշվարկվող) հարկվող եկամուտներից յուրաքանչյուր վարձու աշխատողի համար ամսական հինգ հազար դրամի չափով եկամտային հարկի գումարները հաշվարկվում և պետական բյուջե են վճարվում մինչև եկամուտների վճարման (հաշվարկման) ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

Հոդված 272. Միկրոձեռնարկատիրության համակարգից շրջանառության հարկի համակարգին կամ հարկման ընդհանուր համակարգին անցումը

1. Ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը և անհատ ձեռնարկատերը միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարելու պահից՝

1) շրջանառության հարկի համակարգ անցնելու դեպքում տվյալ հարկային տարվա մնացած ժամանակահատվածում (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքերի) հարկային պարտավորությունները հաշվարկում և կատարում են Օրենսգրքի 55-րդ գլխով սահմանված կարգով՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարելու պահից հետո ձևավորվող հարկման բազաների մասով.

2) հարկման ընդհանուր համակարգ անցնելու դեպքում տվյալ հարկային տարվա մնացած ժամանակահատվածում հարկային պարտավորությունները հաշվարկում և կատարում են Օրենսգրքով սահմանված կարգով՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարելու պահից հետո ձևավորվող հարկման բազաների մասով:

2. Միկրոձեռնարկատիրության համակարգից հարկման ընդհանուր համակարգ անցնելու դեպքում հարկ վճարողի համախառն եկամտից նվազեցվում են մինչև միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելը և (կամ)

միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու ժամանակահատվածում կատարված՝ հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ ձեռք բերելու ծախսերը՝ Օրենսգրքով սահմանված կարգով: Սույն մասի կիրառության իմաստով՝ միկրոձեռնարկատիրության համակարգից հարկման ընդհանուր համակարգ անցնելու դեպքում՝

1) հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը որոշելու համար հաշվի են առնվում միկրոձեռնարկատիրության համակարգում հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մասով Օրենսգրքի 121-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկվող ամորտիզացիոն մասհանումները.

2) հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մասով Օրենսգրքի 121-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկվող ամորտիզացիոն մասհանումների գծով ծախսերը համախառն եկամտից նվազեցվում են միկրոձեռնարկատիրության համակարգից հարկման ընդհանուր համակարգ անցնելու օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 1-ից.

3) Օրենսգրքի 121-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված և միկրոձեռնարկատիրության համակարգից հարկման ընդհանուր համակարգ անցնելու օրն ընդգրկող ամսվան վերաբերող՝ վարչական, իրացման, ոչ արտադրական բնույթի այլ, ինչպես նաև ֆինանսական ծախսերը (այն մասով, որը, նույն մասի համաձայն, նվազեցվում է այն հարկային տարվա ընթացքում, որին այն վերաբերում է) համախառն եկամտից նվազեցվում են միկրոձեռնարկատիրության համակարգից հարկման ընդհանուր համակարգ անցնելու օրվանից մինչև այդ օրն ընդգրկող ամսվա վերջը եղած օրերի՝ տվյալ ամսվա բոլոր օրերի կառուցվածքում ունեցած տեսակարար կշռին համապատասխանող չափով:

3. Միկրոձեռնարկատիրության համակարգից հարկման ընդհանուր համակարգ անցնելու դեպքում հարկ վճարողի համախառն եկամտից նվազեցվում են մինչև միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելը և (կամ) միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու ժամանակահատվածում կատարված՝ սույն հոդվածի 2-րդ մասում չնշված ակտիվների սկզբնական արժեքները՝ Օրենսգրքով սահմանված կարգով:

Հավելված 3

Ցանկ

գործունեության տեսակների, որոնք կարող են իրականացվել միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվող՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից

	Գործունեության տեսակները
1.	Բնակչության պատվերով կատարվող՝
1)	կոշիկի և կաշվե գալանտերեայի և համանման այլ արտադրատեսակների արտադրություն, կոշիկի և կաշվե գալանտերեայի պարագաների արտադրություն, կոշիկի և կաշվե արտադրատեսակների նորոգում
2)	հագուստի արտադրություն և նորոգում
3)	գլխարկների արտադրություն և նորոգում
4)	գորգերի և գորգագործական արտադրատեսակների արտադրություն և նորոգում
5)	փայտյա իրերի պատրաստում, կահույքի և տան կահավորանքի նորոգում
6)	ոչ թանկարժեք զարդերի արտադրություն և նորոգում

7)	համակարգչային տեխնիկայի, հեռուստացույցների, լվացքի մեքենաների, օդորակիչների և այլ կենցաղային տեխնիկայի նորոգում, ծրագրային սպասարկում
8)	հեծանիվների և հաշմանդամների սայլակների արտադրություն, անձնական օգտագործման և կենցաղային այլ արտադրատեսակների նորոգում
9)	տնտեսական և գեղազարդ խեցեգործական արտադրատեսակների արտադրություն
10)	այլ ճենապակե և խեցեգործական արտադրատեսակների արտադրություն
11)	թիթեղագործական գործունեություն
2.	Ժամացույցների, ժամանակաչափ սարքերի նորոգում, երաժշտական գործիքների նորոգում
3.	Նեղ մասնագիտական գիտելիքների ձեռքբերման այլ դասընթացներ
4.	Լեզուների ուսուցման դասընթացներ
5.	Բարձրագույն և այլ հաստատություններ ընդունվելու համար նախապատրաստական դասընթացներ
6.	Պարեր, երգեցողություն դասավանդողների գործունեություն
7.	Կատարողական արվեստի բնագավառում գործունեություն, կատարողական արվեստի բնագավառում օժանդակ գործունեություն
8.	Ստեղծագործական գործունեություն
9.	Խնջույքավարների գործունեություն
10.	Կրթական գործունեություն և արտադպրոցական դաստիարակություն մարմնամարզության և սպորտի բնագավառում
11.	Մասնավոր տնային տնտեսություններում ծառայությունների մատուցում (առանց տարբերակման) սեփական սպառման համար
12.	Դարբնոցային գործունեություն
13.	Զբոսաշրջային տների միջոցով հյուրանոցային ծառայությունների մատուցում (այդ թվում՝ այդ ծառայությունների հետ անմիջականորեն կապված՝ հանրային սննդի (նախաճաշ, ճաշ, ընթրիք) ոլորտի գործունեությունը)

Գ Լ Ո Ւ Խ 57

ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՀԱՐԿԸ
(գլուխն ուժը կորցրել է 25.06.19 ՀՕ-68-Ն)

Մ Ա Ս 3

ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍ

Բ Ա Ժ Ի Ն 14

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

Գ Լ Ո Ւ Խ 58

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հոդված 285. Հարկային մարմնում հարկ վճարողների հաշվառումը

1. Հարկային մարմնի կողմից հարկային վարչարարության իրականացման նպատակով հարկային մարմինն իրականացնում է կազմակերպությունների և ֆիզիկական անձանց հաշվառում:
2. Օրենսգրքի 11-րդ և 12-րդ բաժիններով սահմանված՝ հաշվառող մարմինների կողմից անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի մասով հարկային վարչարարության իրականացման նպատակով հարկ վճարողների հաշվառումն իրականացվում է Կառավարության սահմանած կարգով:
(285-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Հոդված 286. Հարկ վճարողների հաշվառման համակարգը

1. Հարկային մարմնում գործում է հարկ վճարողների հաշվառման միասնական համակարգ:
2. Հարկ վճարողների հաշվառումն իրականացվում է հարկ վճարողի հաշվառման համարների միջոցով:
3. ԱԱՀ վճարողների հաշվառումն իրականացվում է Օրենսգրքի 59-րդ գլխով սահմանված պահանջներին համապատասխան:
4. Հարկ վճարողների հաշվառման տվյալները գրառվում են հարկային մարմնում վարվող միասնական էլեկտրոնային գրանցամատյանում:

Հոդված 287. Հարկ վճարողի հաշվառման համարը

1. Հարկային մարմնում հաշվառվող հարկ վճարողին տրամադրվում է հարկ վճարողի հաշվառման համար (այսուհետ՝ ՀՎՀՀ), որը հանդիսանում է նրա նույնականացման կոդը:
2. ՀՎՀՀ-ն միակն է և ենթակա չէ փոփոխման: ՀՎՀՀ-ն չի կարող տրամադրվել այլ հարկ վճարողի:
3. Ֆիզիկական անձին տրամադրված ՀՎՀՀ-ն որպես անհատ ձեռնարկատեր կամ որպես նոտար հաշվառվելու դեպքում մնում է անփոփոխ: Անհատ ձեռնարկատիրոջը պետական հաշվառումից հանելուց կամ նոտարի գործունեության դադարեցումից հետո կրկին որպես անհատ ձեռնարկատեր կամ որպես նոտար հաշվառվելու դեպքում նրան տրամադրվում է իր նախորդ ՀՎՀՀ-ն, որը չի փոխվում նաև այն ժամանակ, երբ անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի գործունեության դադարեցումից հետո հարկ վճարողը, որպես անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձ, հարկային մարմին է ներկայացնում հարկային հաշվարկներ:
4. ՀՎՀՀ-ն կազմված է ութանիշ թվից: ՀՎՀՀ-ի առաջին յոթ նիշը հանդիսանում է հերթական համար, ութերորդ նիշը ստուգիչ է և հաշվարկվում է նախորդ յոթ նիշերի հիման վրա: ՀՎՀՀ-ի ստուգիչ նիշի հաշվարկման բանաձևը սահմանում է հարկային մարմինը:
5. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի կողմից կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների համար բանկային հաշիվները բացվում են միայն ՀՎՀՀ-ի առկայության դեպքում:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի կողմից կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների համար բանկային հաշիվների բացման վերաբերյալ հարկային մարմին տեղեկությունների տրամադրման կարգը սահմանում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը և հարկային մարմինը՝ համատեղ հրամանով:

Հոդված 288. Հարկային մարմնում հաշվառման կանգնելը

1. Պետական ռեգիստրի գործակալությունում պետական գրանցում (հաշվառում) ստացող կազմակերպությունները և պետական հաշվառում ստացող անհատ ձեռնարկատերը ՀՎՀՀ-ն ստանում են պետական ռեգիստրի գործակալության միջոցով:

2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից պետական գրանցում (հաշվառում) ստացող կազմակերպությունները ՀՎՀՀ-ն ստանում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի միջոցով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և հարկային մարմնի համատեղ հրամանով սահմանված կարգով:

3. Նոտարները, անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք, Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունները և հյուպատոսական հիմնարկները, դրանց հավասարեցված միջազգային կազմակերպությունները, մշտական հաստատությունները (բացառությամբ ոչ ռեզիդենտ կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, որոնք հաշվառվում են պետական ռեգիստրի գործակալությունում) ՀՎՀՀ ստանալու համար դիմում են հարկային մարմնին: Սույն մասում նշված հարկ վճարողների՝ հարկային մարմնում հաշվառման կանգնելու կարգը սահմանում է Կառավարությունը:

4. Պետական ռեգիստրի գործակալությունում նոր գրանցված կազմակերպությունը հաշվառվում է իր պետական գրանցման (օրենքով սահմանված դեպքերում՝ պետական հաշվառման) վայրի հասցեն սպասարկող հարկային մարմնում:

5. Պետական ռեգիստրի գործակալությունում նոր հաշվառված անհատ ձեռնարկատերը հաշվառվում է իր բնակության կամ հաշվառման հասցեն սպասարկող հարկային մարմնում:

6. Նոտարը հաշվառվում է իր նոտարական տարածքը սպասարկող հարկային մարմնում: Նոտարական տարածքը և հարկային մարմնի սպասարկման տարածքները չհամընկնելու դեպքում նոտարը հաշվառվում է իր գործունեության իրականացման հասցեն սպասարկող հարկային մարմնում:

7. Անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձը հաշվառվում է իր բնակության կամ հաշվառման հասցեն սպասարկող հարկային մարմնում:

8. Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունները և հյուպատոսական հիմնարկները, դրանց հավասարեցված միջազգային կազմակերպությունները հաշվառվում են իրենց մշտական ներկայացուցչության (մասնավորապես՝ նստավայր, գրասենյակ) գտնվելու տարածքը սպասարկող հարկային մարմնում:

9. Եթե ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի կողմից Հայաստանի Հանրապետությունում իրականացվող գործունեությունը բնութագրվում է մշտական հաստատության՝ Օրենսգրքի 27-րդ հոդվածով սահմանված հատկանիշներով, ապա տվյալ ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի մշտական հաստատությունը (բացառությամբ ոչ ռեզիդենտ կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, որոնք հաշվառվում են պետական ռեգիստրի գործակալությունում) հաշվառվում է Օրենսգրքի 27-րդ հոդվածով սահմանված՝ Հայաստանի Հանրապետությունում գործունեության վայրերից որևէ մեկի հասցեն սպասարկող հարկային մարմնում: Եթե ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի կողմից Հայաստանի Հանրապետությունում իրականացվող գործունեությունը դեռևս չի բնութագրվում մշտական հաստատության՝ Օրենսգրքի 27-րդ հոդվածով սահմանված հատկանիշներով, ապա տվյալ ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի մշտական հաստատությունը (բացառությամբ ոչ ռեզիդենտ կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, որոնք հաշվառվում են պետական ռեգիստրի գործակալությունում) կարող է հաշվառվել Օրենսգրքի 27-րդ հոդվածով սահմանված՝ Հայաստանի Հանրապետությունում գործունեության վայրերից որևէ մեկի հասցեն սպասարկող հարկային մարմնում:

10. Հարկ վճարողը համարվում է հաշվառված հարկային մարմնում միասնական էլեկտրոնային գրանցամատյանում համապատասխան գրառում կատարելու պահից:

(288-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Հոդված 289. Հարկային մարմնում հաշվառվելու համար անհրաժեշտ փաստաթղթերը

1. Պետական ռեգիստրի գործակալության կողմից կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի պետական գրանցման (հաշվառման) փաստաթղթերը և տեղեկությունները հարկային մարմին են ներկայացվում Կառավարության սահմանած կարգով:

2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում գրանցված կազմակերպությունների պետական

գրանցման (հաշվառման) փաստաթղթերը և տեղեկությունները Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հարկային մարմին են ներկայացվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և հարկային մարմնի համատեղ հրամանով սահմանված կարգով:

3. Նոտարները հարկային մարմնում հաշվառման կանգնելու համար ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը.

1) ՀՎՀՀ-ի տրամադրման՝ հարկային մարմնի հաստատած ձևով և կարգով լրացված դիմումը.

2) նոտարի պաշտոնի նշանակման մասին հրամանի կամ որոշման պատճենը.

3) անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

4) հանրային ծառայությունների համարանիշը, իսկ դրա բացակայության դեպքում՝ հանրային ծառայությունների համարանիշի բացակայության վերաբերյալ լիազոր մարմնի տրամադրած տեղեկանքի պատճենը:

4. Անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձինք հարկային մարմնում հաշվառման կանգնելու համար ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը.

1) ֆիզիկական անձի կողմից լրացված՝ ՀՎՀՀ-ի տրամադրման՝ հարկային մարմնի հաստատած ձևով և կարգով լրացված դիմումը.

2) անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հանրային ծառայությունների համարանիշը, իսկ դրա բացակայության դեպքում՝ հանրային ծառայությունների համարանիշի բացակայության վերաբերյալ լիազոր մարմնի տրամադրած տեղեկանքի պատճենը:

Օրենսգրքով սահմանված դեպքերում անհատ ձեռնարկատեր և նոտար չհամարվող ֆիզիկական անձանց կողմից Օրենսգրքով սահմանված կարգով և չափով հարկ հաշվարկելու և վճարելու պարտավորություն առաջանալու դեպքում անհատ ձեռնարկատեր և նոտար չհամարվող ֆիզիկական անձանց հաշվառումն իրականացնում է հարկային մարմինը՝ անկախ սույն մասով սահմանված փաստաթղթերի ներկայացումից:

5. Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունները և հյուպատոսական հիմնարկները, դրանց հավասարեցված միջազգային կազմակերպությունները հարկային մարմնում հաշվառման կանգնելու համար ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը.

1) լիազորված պաշտոնատար անձի կողմից լրացված՝ ՀՎՀՀ-ի տրամադրման՝ հարկային մարմնի հաստատած ձևով և կարգով լրացված դիմումը.

2) կարգավիճակը հաստատող փաստաթղթի պատճենը:

6. Օրենսգրքի 288-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված դեպքերում՝

1) ոչ ռեզիդենտ կազմակերպությունը հարկային մարմնում հաշվառման կանգնելու համար ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը.

ա. լիազորված պաշտոնատար անձի կողմից լրացված՝ ՀՎՀՀ-ի տրամադրման՝ հարկային մարմնի հաստատած ձևով և կարգով լրացված դիմումը,

բ. ռեզիդենտության երկրում գրանցումը հավաստող հիմնադիր փաստաթղթի պատճենը.

2) ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձը հարկային մարմնում հաշվառման կանգնելու համար ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը.

ա. ֆիզիկական անձի կողմից լրացված՝ ՀՎՀՀ-ի տրամադրման՝ հարկային մարմնի հաստատած ձևով և կարգով լրացված դիմումը,

բ. անձնագրի պատճենը:

(289-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Հոդված 290. Հարկային մարմնում հաշվառման ձևակերպումը և կասեցումը

1. Օրենսգրքի 289-րդ հոդվածի 3-6-րդ մասերում նշված հարկ վճարողների ներկայացրած՝ հաշվառման կանգնելու մասին դիմումի ընթացքը կարող է կասեցվել հետևյալ հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում.

1) եթե ներկայացված փաստաթղթերն ամբողջական չեն, լրացված են թերի կամ խախտումներով կամ չեն համապատասխանում Օրենսգրքի 289-րդ հոդվածով սահմանված փաստաթղթերի ցանկին.

2) ներկայացված տեղեկություններում առկա են անճշտություններ կամ ներառված են հարկ վճարողի վերաբերյալ սխալ տվյալներ:

2. Սույն հոդվածի 1-ին մասում բերված հիմքերով հաշվառման կանգնելու մասին հարկ վճարողի ներկայացրած դիմումի ընթացքի կասեցման վերաբերյալ հարկ վճարողին գրավոր տեղեկացվում է դիմումը ստանալուց հետո՝ մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը՝ նշելով կասեցման հիմքը: Դիմումի ընթացքի կասեցման հիմքերի վերացումից հետո հարկային մարմինը սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով և ժամկետում հաշվառում է հարկ վճարողին:

3. Հաշվառման կանգնելու մասին հարկ վճարողի դիմումի ընթացքի կասեցման հիմքերի վերաբերյալ դիմողին տեղեկացնելուց հետո սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետի ընթացքը կասեցվում է մինչև դիմումի կասեցման հիմքերի վերացումը:

4. Կասեցման հիմքեր չհայտնաբերելու դեպքում տեղեկությունները գրանցվում են միասնական գրանցամատյանում և փաստաթղթերի ստացումից հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, դիմողին տրամադրվում են ՀՎՀՀ-ն և հարկ վճարողի հաշվառման վկայականը:

5. Հաշվառման կանգնելու մասին դիմումի և հարկ վճարողի հաշվառման վկայականի ձևերը սահմանում է հարկային մարմինը:

Հոդված 291. Հարկային մարմնում էլեկտրոնային եղանակով հաշվառման կանգնելը

1. Հարկային մարմնում հաշվառվելու համար Օրենսգրքի 288-րդ հոդվածի 3-րդ մասում նշված հարկ վճարողները Օրենսգրքի 289-րդ հոդվածի 3-6-րդ մասերով սահմանված փաստաթղթերը կարող են ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով:

2. Հարկային մարմնում հաշվառման կանգնելու համար ներկայացված տվյալների ինքնաշխատ ստուգման ժամանակ անճշտություններ կամ մերժելու հիմքեր չհայտնաբերվելու դեպքում ներկայացված տեղեկությունները հարկային մարմնի տեղեկատվական համակարգի կողմից լրացվում են միասնական գրանցամատյանում:

3. Գրառման ավարտից հետո տեղեկատվական համակարգը դիմողին շնորհում է ՀՎՀՀ և հարկ վճարողի տրամադրած էլեկտրոնային փոստի հասցեով մեկ աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է հարկ վճարողի հաշվառման վկայականի էլեկտրոնային տարբերակը:

Գ Լ Ո Ւ Խ 59

ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

Հոդված 292. Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման առանձնահատկությունները

1. Հարկային մարմնում ԱԱՀ վճարողների հաշվառումն իրականացվում է ԱԱՀ վճարողի հաշվառման համարների հիման վրա:

2. ԱԱՀ վճարողի հաշվառման համարը ՀՎՀՀ-ն է, որի վերջում ավելացված է թեք գիծ և «1» թվային նիշը:

3. Հարկային մարմինը հարկային ծառայության պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրում է որպես ԱԱՀ վճարող հաշվառված անձանց ցանկը՝ փնտրման հնարավորությամբ:

Հոդված 293. Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման կանգնելը

1. Օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, ինչպես նաև 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով սահմանված դեպքերում Օրենսգրքի 292-րդ հոդվածին համապատասխան՝ որպես ԱԱՀ վճարող, հաշվառումն իրականացնում է հարկային մարմինը՝ սույն մասում նշված կետերով սահմանված օրը:

2. Օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-5-րդ կետերով, ինչպես նաև 2-րդ մասի 2-րդ կետով և 2.1-ին մասով սահմանված դեպքերում Օրենսգրքի 292-րդ հոդվածին համապատասխան՝ որպես ԱԱՀ վճարող, հաշվառումն իրականացվում է հարկ վճարողի ներկայացրած հայտարարության հիման վրա՝ սույն մասում նշված կետերով սահմանված օրը:

(293-րդ հոդվածը փոփ. 21.06.18 ՀՕ-338-Ն)

Գ Լ Ո Ւ Խ 60

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԵՎ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 294. Հարկ վճարողների հաշվառումը վերակազմակերպման դեպքում

1. Կազմակերպության վերակազմավորման դեպքում ՀՎՀՀ-ն փոխանցվում է կազմակերպության իրավահաջորդին, իսկ վերակազմակերպման մյուս ձևերի դեպքում՝

1) կազմակերպությունների միացման ձևով վերակազմակերպման դեպքում շարունակում է գործել այն կազմակերպության ՀՎՀՀ-ն, որին միանում են մեկ այլ կազմակերպություն կամ կազմակերպություններ, իսկ միացող կազմակերպության կամ կազմակերպությունների ՀՎՀՀ-ն հանվում է հաշվառումից.

2) կազմակերպությունների միաձուլման ձևով վերակազմակերպման դեպքում նոր ստեղծված կազմակերպությանը տրամադրվում է նոր ՀՎՀՀ, իսկ միաձուլվող կազմակերպությունների ՀՎՀՀ-ները հանվում են հաշվառումից.

3) կազմակերպությունների առանձնացման ձևով վերակազմակերպման դեպքում նոր առանձնացված կազմակերպությանը կամ կազմակերպություններին տրամադրվում է նոր ՀՎՀՀ, իսկ այն կազմակերպությունը, որից

կատարվել է առանձնացումը, շարունակում է հաշվառվել իր ՀՎՀՀ-ով.

4) կազմակերպությունների բաժանման ձևով վերակազմակերպման դեպքում ստեղծված նոր կազմակերպություններից յուրաքանչյուրին տրամադրվում է նոր ՀՎՀՀ, իսկ նախկին կազմակերպության ՀՎՀՀ-ն հանվում է հաշվառումից:

2. Կազմակերպությունների վերակազմակերպմամբ պայմանավորված՝ պետական գրանցման (հաշվառման) մասին տեղեկությունները և փաստաթղթերը պետական ռեգիստրի գործակալությունը ներկայացնում է հարկային մարմին՝ Կառավարության սահմանած կարգով:

3. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից պետական գրանցում ստացած կազմակերպությունների վերակազմակերպմամբ պայմանավորված՝ պետական գրանցման մասին տեղեկությունները և փաստաթղթերը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը ներկայացնում է հարկային մարմին՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և հարկային մարմնի համատեղ հրամանով սահմանած կարգով:

(294-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Հոդված 295. Հարկ վճարողի հաշվառման հարկային մարմինը փոփոխելը

1. Հարկ վճարողի հաշվառման հարկային մարմինը կարող է փոփոխվել հարկային մարմնի ղեկավարի որոշմամբ՝ սույն հոդվածի 2-րդ մասում նշված հիմքերից մեկի առկայության դեպքում, եթե՝

1) կազմակերպության գտնվելու (ֆիզիկական անձի դեպքում՝ հաշվառման կամ բնակության) և գործունեության փաստացի իրականացման վայրերը (փոստային հասցեները) չեն համապատասխանում միմյանց.

2) հարկ վճարողը գործունեություն է իրականացնում մեկից ավելի հասցեներում:

2. Հարկային մարմնի ղեկավարի որոշմամբ կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ հաշվառումը մեկ հարկային մարմնից մեկ այլ հարկային մարմին տեղափոխելու հիմքերն են՝

1) գործունեության հիմնական վայրի փոփոխությունը.

2) համախառն եկամտի կառուցվածքում որևէ մեկ վայրից ստացվող եկամտի տեսակարար կշռի գերակայությունը.

3) գործարար շահերի կենտրոնի, կազմակերպության ղեկավար մարմնի գտնվելու վայրի փոփոխությունը.

4) գործունեության ոլորտային, սեզոնային, տարածքային կամ նմանատիպ այլ առանձնահատկությունները:

Հոդված 296. Հարկ վճարողի տվյալների փոփոխման մասին տեղեկություններ ներկայացնելը

1. Պետական ռեգիստրի գործակալությունում պետական գրանցում (հաշվառում) ստացած կազմակերպությունների և որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված ֆիզիկական անձանց՝ հարկային մարմնում հաշվառվելու ժամանակ ներկայացված տվյալների փոփոխման մասին տեղեկությունները և փաստաթղթերը պետական ռեգիստրի գործակալությունը տրամադրում է հարկային մարմնին՝ Կառավարության սահմանած կարգով:

2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից պետական գրանցում ստացած կազմակերպությունների՝ հարկային մարմնում հաշվառվելու ժամանակ ներկայացված տվյալների փոփոխության մասին տեղեկությունները և փաստաթղթերը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը տրամադրում է հարկային մարմնին՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և հարկային մարմնի համատեղ հրամանով սահմանված կարգով:

3. Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց և նոտարների անձնագրային տվյալների փոփոխության մասին տեղեկությունները բնակչության պետական ռեգիստր վարող լիազոր մարմինը տրամադրում է հարկային մարմնին՝ Կառավարության սահմանած կարգով:

(296-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Գ Լ Ո Ւ Խ 61

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԱՌՈՒՄԻՑ ՀԱՆՈՒՄԸ

Հոդված 297. Պետական ռեգիստրի գործակալության կողմից պետական գրանցում (հաշվառում) ստացած կազմակերպությունների՝ հարկային մարմնում հաշվառումից հանումը

1. Պետական ռեգիստրի գործակալությունն օրենքով սահմանված դեպքերում կազմակերպության լուծարման գործընթաց սկսելու մասին գրառում կատարելու օրը հարկային մարմնին առցանց ռեժիմով տրամադրում է կազմակերպության անվանումը, ՀՎՀՀ-ն և լուծարային գործընթացում գտնվելու մասին տեղեկությունը (դատարանի վճռով լուծարման դեպքում՝ դատարանի վճռի կամ որոշման վերաբերյալ տեղեկությունը):

2. Կազմակերպության՝ լուծարային գործընթացում գտնվելու մասին տեղեկությունները ստանալուց հետո հարկային

մարմինը լուծարվող կազմակերպությունում իրականացնում է համալիր հարկային ստուգում:

3. Հարկային մարմինը պետական ռեգիստրի գործակալությունից պետական բյուջեի գծով կազմակերպության հարկային պարտավորությունների բացակայությունը հավաստելու վերաբերյալ հարցում ստանալու դեպքում հարցումը ստանալու օրվանից հետո՝ 20 օրվա ընթացքում, տրամադրում է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տեղեկանք՝ հարկային մարմնի սահմանած ձևով:

4. Պետական ռեգիստրի գործակալությունը լուծարման մասին տեղեկությունների գրառում կատարելու օրը հարկային մարմնին տրամադրում է տեղեկություն կազմակերպության լուծարման պետական գրանցման տարվա, ամսվա և ամսաթվի վերաբերյալ: Նշված տեղեկություններն ինքնաշխատ ձևով արդիականանում են միասնական գրանցամատյանում, և այդ պահից կազմակերպությունը համարվում է հաշվառումից հանված:

Հոդված 298. Պետական ռեգիստրի գործակալության կողմից պետական հաշվառում ստացած անհատ ձեռնարկատերերի՝ հարկային մարմնում հաշվառումից հանումը (գործունեությունը դադարեցնելը)

1. Պետական ռեգիստրի գործակալությունը անհատ ձեռնարկատիրոջը պետական հաշվառումից հանելու գործընթաց սկսելու մասին գրառում կատարելու օրը հարկային մարմնին առցանց ռեժիմով տրամադրում է անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, հայրանունը, ՀՎՀՀ-ն, պետական հաշվառումից հանելու համար հիմք հանդիսացող դիմումի տարին, ամիսը, ամսաթիվը, սնանկության հետևանքով հաշվառումից հանելու դեպքում՝ դատարանի որոշման վերաբերյալ տեղեկություններ, մահվան դեպքում՝ մահվան տարին, ամիսը, ամսաթիվը:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տեղեկություններն ստանալուց հետո հարկային մարմինը առցանց ռեժիմով պետական ռեգիստրի գործակալությանը տրամադրում է տեղեկություններ անհատ ձեռնարկատիրոջ՝ տվյալ օրվա դրությամբ հարկային մարմնում հաշվառված հարկային պարտավորությունների վերաբերյալ:

3. Պետական ռեգիստրի գործակալությունը անհատ ձեռնարկատիրոջը պետական հաշվառումից հանելու (գործունեությունը դադարեցնելու) մասին տեղեկությունների գրառում կատարելու օրը հարկային մարմնին տրամադրում է տեղեկություն անհատ ձեռնարկատիրոջը պետական հաշվառումից հանելու տարվա, ամսվա և ամսաթվի վերաբերյալ: Նշված տեղեկություններն ինքնաշխատ ձևով արդիականանում են միասնական գրանցամատյանում, և այդ պահից անհատ ձեռնարկատերը համարվում է հաշվառումից հանված:

4. Անհատ ձեռնարկատիրոջը պետական հաշվառումից հանելուց հետո անհատ ձեռնարկատեր հանդիսանալու ժամանակաշրջանի համար ֆիզիկական անձի ներկայացրած հարկային հաշվարկները, հարկերի և վճարների մասով կատարված վճարումների տվյալները գրառվում են հարկային մարմնի տեղեկատվական համակարգում:

Հոդված 299. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից պետական գրանցում ստացած կազմակերպությունների հաշվառումից հանումը

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկն օրենքով սահմանված դեպքերում կազմակերպության լուծարման որոշում կայացնելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում առցանց ռեժիմով հարկային մարմնին տրամադրում է կազմակերպության անվանումը, ՀՎՀՀ-ն, պաշտոնական ինտերնետային կայքի հասցեն և լուծարման թույլտվություն տալու վերաբերյալ տեղեկատվությունը:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տվյալներն ստանալուց հետո հարկային մարմինը լուծարվող կազմակերպությունում իրականացնում է համալիր հարկային ստուգում:

3. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը կազմակերպությանը գրանցումից հանելու մասին գրառում կատարելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում առցանց ռեժիմով հարկային մարմնին տրամադրում է տեղեկատվություն կազմակերպությանը գրանցումից հանելու մասին գրառում կատարելու տարվա, ամսվա և ամսաթվի վերաբերյալ: Նշված տեղեկություններն ինքնաշխատ ձևով արդիականանում են միասնական գրանցամատյանում, և այդ պահից կազմակերպությունը համարվում է հաշվառումից հանված:

Հոդված 300. Անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց հաշվառումից հանումը

1. Անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձին հաշվառումից հանելու համար հիմք է հանդիսանում նրա մահվան փաստը հավաստող՝ երրորդ անձի ներկայացրած փաստաթղթի պատճենը:

2. Սույն հոդվածում նշված տեղեկության ստացումից կամ փաստաթղթի պատճենի ներկայացումից հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, միասնական գրանցամատյանում ֆիզիկական անձի վերաբերյալ կատարվում են համապատասխան գրառումներ: Մահվան օրվանից ֆիզիկական անձը համարվում է հաշվառումից հանված:

3. Բնակչության ռեգիստր վարող մարմինը Կառավարության սահմանած կարգով հարկային մարմնին

տեղեկություններ է տրամադրում մահացած ֆիզիկական անձանց մասին:
(300-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Հոդված 301. Նոտարների հաշվառումից հանումը

1. Հաշվառումից դուրս գալու համար նոտարը հարկային մարմին է ներկայացնում դիմում և հետևյալ փաստաթղթերից որևէ մեկը.
1) նոտարական գործունեության կասեցման մասին Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի որոշման պատճենը.
2) նոտարի պաշտոնից ազատման մասին դատարանի որոշման պատճենը.
3) նոտարի պաշտոնից ազատման մասին Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի հրամանի պատճենը:
2. Նոտարին հաշվառումից հանելու համար կարող է հիմք հանդիսանալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի ներկայացրած՝ նոտարի գործունեության կասեցման կամ պաշտոնից ազատման մասին հրամանի կամ որոշման պատճենը կամ նրա մահվան փաստը հավաստող՝ երրորդ անձի ներկայացրած փաստաթղթի պատճենը:
3. Սույն հոդվածով սահմանված փաստաթղթերից որևէ մեկի ստացման դեպքում մեկ աշխատանքային օրվա ընթացքում տվյալ նոտարի գործունեության դադարեցման վերաբերյալ տեղեկությունները գրառվում են միասնական գրանցամատյանում: Նոտարը գործունեության կասեցման կամ պաշտոնից ազատման կամ մահվան օրվանից համարվում է հաշվառումից հանված:

Հոդված 302. Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների, դրանց հավասարեցված միջազգային կազմակերպությունների հաշվառումից հանումը

1. Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների, դրանց հավասարեցված միջազգային կազմակերպությունների գործունեության դադարեցման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունից ստացված տվյալների հիման վրա մեկ աշխատանքային օրվա ընթացքում տվյալ կազմակերպության գործունեության դադարեցման վերաբերյալ տեղեկությունները գրառվում են միասնական գրանցամատյանում: Սույն մասում նշված կազմակերպությունների գործունեության դադարեցման պահից կազմակերպությունը համարվում է հաշվառումից հանված:

Հոդված 303. Ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի մշտական հաստատության (բացառությամբ ոչ ռեզիդենտ կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, որոնք հաշվառվում են պետական ռեգիստրի գործակալությունում) հաշվառումից հանումը

1. Ոչ ռեզիդենտ կազմակերպության մշտական հաստատությունը (բացառությամբ ոչ ռեզիդենտ կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, որոնք հաշվառվում են պետական ռեգիստրի գործակալությունում) հաշվառումից դուրս գալու համար հարկային մարմին է ներկայացնում դիմում: Դիմումի հիման վրա մեկ աշխատանքային օրվա ընթացքում ոչ ռեզիդենտ կազմակերպության մշտական հաստատության գործունեության դադարեցման վերաբերյալ տեղեկությունները գրառվում են միասնական գրանցամատյանում: Դիմումում նշված օրվանից ոչ ռեզիդենտ կազմակերպության մշտական հաստատությունը համարվում է հաշվառումից հանված:
2. Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի մշտական հաստատությանը հաշվառումից հանելու համար հիմք է հանդիսանում նրա մահվան փաստը հավաստող՝ երրորդ անձի ներկայացրած փաստաթղթի պատճենը: Սույն հոդվածում նշված փաստաթղթի պատճենի ներկայացումից հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, միասնական գրանցամատյանում մշտական հաստատության վերաբերյալ կատարվում են համապատասխան գրառումներ: Ֆիզիկական անձի մահվան օրվանից մշտական հաստատությունը համարվում է հաշվառումից հանված:

Բ Ա Ժ Ի Ն 15

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ

Գ Լ Ո Ւ Խ 62

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ

Հոդված 304. Հարկ վճարողների սպասարկման՝ հարկային մարմնի գործառույթները

1. Հարկ վճարողների սպասարկումը հարկային մարմնի կողմից Օրենսգրքով սահմանված ծառայությունների մատուցումն է, որն ուղղված է հարկ վճարողների կամ հարկային գործակալների՝ Օրենսգրքով նախատեսված պարտականությունների ընկալմանը և կամավոր կատարման ապահովմանը: Հարկ վճարողների սպասարկումն իրականացվում է հարկ վճարողների իրազեկման, հարկային հաշվարկների և Օրենսգրքով սահմանված այլ փաստաթղթերի ընդունման և (կամ) տրամադրման, ինչպես նաև հարկ վճարողների համար գրանցումների, հաշվառումների, հաստատումների, վավերացումների և այլ գործընթացների ձևով:

2. Հարկային մարմինը հարկ վճարողների սպասարկման նպատակով իրականացնում է հետևյալ գործառույթները.

1) հարկային հարաբերություններ կարգավորող իրավական ակտերի մասին հանրային իրազեկում.

2) ***(կետն ուժը կորցրել է 21.06.18 ՀՕ-338-Ն)***

3) հարկ վճարողների իրազեկում.

4) հարկ վճարողների ցանկերի հրապարակում.

5) հարկ վճարողների իրազեկման այլ գործառույթների իրականացում.

6) էլեկտրոնային եղանակով հարկային հաշվարկների ներկայացման մասին պայմանագրի կնքում, էլեկտրոնային ծածկագրի և գաղտնաբառի տրամադրում.

7) հարկային հաշվարկների ընդունում.

8) Օրենսգրքով սահմանված դիմումների, հայտարարությունների, այլ փաստաթղթերի ընդունում և հետագա ընթացքի ապահովում.

9) իրական ժամանակում առցանց եղանակով հարկ վճարողի անձնական հաշվի քարտի (այդ թվում՝ հարկային պարտավորությունների և դրանց մարումների) դիտման հնարավորության ապահովում.

10) Հայաստանի Հանրապետության ռեզիդենտի կարգավիճակի հաստատում կամ ռեզիդենտությունը հաստատող տեղեկանքի տրամադրում.

11) Հայաստանի Հանրապետությունում ոչ ռեզիդենտի վճարած հարկերի մասին տեղեկանք ստանալու համար դիմումի ընդունում և տեղեկանքի տրամադրում.

12) Հայաստանի Հանրապետությունում գտնվող աղբյուրներից ստացված եկամուտներից Օրենսգրքով սահմանված կարգով գանձված հարկերը վերադարձնելու մասին սերտիֆիկատ-դիմումի ընդունում և հաստատում.

13) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ ծառայություններ:

3. Հարկային մարմինը սույն հոդվածի 2-րդ մասում նշված գործառույթներն իրականացնում է անվճար, բացառությամբ այն ծառայությունների կամ գործողությունների, որոնց համար օրենքով սահմանված է պետական տուրքի գանձում:

(304-րդ հոդվածը փոփ. 21.06.18 ՀՕ-338-Ն)

Գ Լ Ո Ւ Խ 63

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Հոդված 305. Հարկային հարաբերություններ կարգավորող իրավական ակտերի մասին հանրային իրազեկումը

1. Հարկային մարմինը հարկ վճարողներին իրազեկում է հարկային հարաբերություններ կարգավորող իրավական ակտերի մասին:

2. Հարկ վճարողներին հարկային հարաբերություններ կարգավորող իրավական ակտերի մասին իրազեկումն իրականացվում է հարկային ծառայության պաշտոնական ինտերնետային կայքում պաշտոնական հաղորդագրություն հրապարակելու, զանգվածային լրատվության միջոցների հետ ասուլիսներ և հանդիպումներ կազմակերպելու, հարցազրույցներ, հոդվածներ կամ տեղեկատվություն հրապարակելու կամ հեռուստատեսությամբ ու ռադիոյով ելույթներ ունենալու միջոցով:

3. Հարկային մարմինը պարտավոր է հարկային հարաբերություններ կարգավորող իրավական ակտերի մասին հարկ վճարողների իրազեկումն ապահովել ոչ ուշ, քան այդ իրավական ակտերի պաշտոնական հրապարակման օրվանից մեկ ամսվա ընթացքում:

Հոդված 306. Պաշտոնական պարզաբանումների տրամադրումը

1. Կառավարության կողմից լիազորված՝ ֆինանսական բնագավառում պետական կարգավորում իրականացնող պետական մարմինը (այսուհետ՝ սույն հոդվածում՝ լիազորված մարմին) «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում և ժամկետներում իր սահմանած կարգով տրամադրում է պաշտոնական պարզաբանումներ, եթե սույն հոդվածով այլ բան սահմանված չէ:

2. Լիազորված մարմինը պաշտոնական պարզաբանումը տրամադրում է դիմումն ստանալուն հաջորդող ոչ ուշ, քան 15 աշխատանքային օրվա ընթացքում: Պաշտոնական պարզաբանումը կարող է երկարաձգվել ևս 15 աշխատանքային օրով՝ այդ մասին իրազեկելով պաշտոնական պարզաբանում պահանջող անձին:

3. Պաշտոնական պարզաբանումները հրապարակվում են լիազորված մարմնի և հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքերում: Եթե պաշտոնական պարզաբանում ստանալու համար ներկայացված դիմումը վերաբերում է իրավական ակտին կամ դրա դրույթին, որի համար լիազորված մարմինը նախկինում տվել է պաշտոնական պարզաբանում, ապա նոր պաշտոնական պարզաբանում չի տրվում, և դիմումի հիման վրա լիազորված մարմինը կամ հարկային մարմինը իրականացնում է հարկ վճարողի անհատական իրազեկման գործընթաց՝ հղում կատարելով այն տեղեկագրին կամ պաշտոնական ինտերնետային կայքին, որտեղ հրապարակված է նախկինում տրված պաշտոնական պարզաբանումը:

(306-րդ հոդվածը լրաց. 21.12.17 ՀՕ-266-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն, խմբ. 21.06.18 ՀՕ-338-Ն)

Հոդված 307. Հարկ վճարողների իրազեկումը

1. Հարկային մարմինը հարկ վճարողի հարցադիմումի հիման վրա Կառավարության լիազորած՝ ֆինանսական բնագավառում պետական կարգավորում իրականացնող պետական մարմնի սահմանած շրջանակներում իրականացնում է իրազեկում:

2. Հարկ վճարողի իրազեկումը հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի պահանջների կիրառության, ինչպես նաև հարկային մարմնի և հարկային մարմնի պաշտոնատար անձանց պարտականությունների, լիազորությունների և գործողությունների մասին տեղեկության տրամադրումն է:

3. Իրազեկման նպատակով հարկ վճարողը բանավոր և (կամ) գրավոր դիմում է հարկային մարմին: Բանավոր դիմումի դեպքում հարկային մարմինը դիմողի իրազեկումն իրականացնում է դիմումն ստանալուց անմիջապես հետո, իսկ գրավոր դիմումի դեպքում՝ դիմումն ստանալուց հետո՝ 15 օրվա ընթացքում: Գրավոր դիմումի կապակցությամբ իրավասու այլ մարմին հարցում կատարելու անհրաժեշտության դեպքում դիմումի կատարման ժամկետը կարող է հետաձգվել ևս 15 օրով:

4. Հարկային մարմինը դիմումի կամ դրա որևէ հարցի վերաբերյալ իրազեկում չի իրականացնում, եթե՝

1) հարցը չի առնչվում հարկային մարմնի լիազորությանը.

2) հարցը ենթադրում է պետական, ծառայողական, հարկային կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք կազմող տեղեկատվության հրապարակում.

3) բացակայում են՝

ա. բանավոր դիմումի դեպքում՝ դիմողի անունը, ազգանունը, իսկ կազմակերպության ներկայացուցչի դեպքում՝ նաև կազմակերպության անվանումը կամ ՀՎՀՀ-ն,

բ. գրավոր դիմումի դեպքում՝ դիմողի անունը, ազգանունը, բնակության վայրը և ստորագրությունը, իսկ կազմակերպության ներկայացուցչի դեպքում՝ նաև կազմակերպության անվանումը, ՀՎՀՀ-ն կամ գտնվելու վայրը.

4) դիմումը հետապնդում է հարկերի հաշվարկման կամ վճարման կոնկրետ դեպքերի սխալ կամ ճիշտ կատարման հավաստում ստանալու կամ հարկ վճարողի գործունեության և (կամ) փաստաթղթերի փորձաքննության անցկացման նպատակ:

5. Եթե դիմումի կամ դրա որևէ հարցի վերաբերյալ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքերում իրազեկում չի իրականացվում, ապա հարկային մարմինը հինգ օրվա ընթացքում այդ մասին տեղեկացնում է դիմողին՝ նշելով իրազեկում չիրականացվելու պատճառը և հիմքը:

6. Եթե մեկից ավելի հարց պարունակող դիմումի որևէ հարցի վերաբերյալ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքերում իրազեկում չի իրականացվում, ապա հարկային մարմինն իրազեկումն իրականացնում է դիմումի մնացած հարցերի վերաբերյալ:

7. Եթե բանավոր հարցի հիման վրա իրազեկում իրականացնելու համար անհրաժեշտ է իրավական ակտից մեջբերում կամ հարկային մարմնի պարզաբանում, ապա հարկային մարմինը դիմողին առաջարկում է ներկայացնել գրավոր դիմում:

8. Հարկային մարմինը հարկ վճարողների իրազեկման աշխատանքների շրջանակներում առավել հաճախ հանդիպող հարցերն ու դրանց վերաբերյալ տրված իրազեկումները (պատասխանները)՝ առանց հարկ վճարողներին վերաբերող տվյալների, տեղադրում է հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում, իսկ հետագայում նույն հարցերով

տրվող դիմումների հիման վրա իրազեկումներ կատարելու նպատակով հղում է կատարում պաշտոնական ինտերնետային կայքում տրված համապատասխան իրազեկումներին:

(307-րդ հոդվածը լրաց. 21.06.18 ՀՕ-338-Ն)

Հոդված 308. Հարկ վճարողների ցանկերի հրապարակումը

1. Հարկային մարմինը հարկ վճարողների իրազեկման նպատակով Կառավարության սահմանած ձևով և կարգով հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակում է՝

1) մինչև հարկային տարվան հաջորդող հարկային տարվա հուլիսի 1-ը ներառյալ՝

ա. հարկային տարվա արդյունքներով հարկային վնասներ հայտարարագրած և ապառքներ կուտակած հարկ վճարողների ցանկերը,

բ. աշխատողի աշխատանքի ընդունումն օրենսդրությամբ սահմանված կարգով չգրանցած հարկ վճարողների ցանկերը,

գ. հարկային տարվա արդյունքներով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 50 միլիոն դրամ և ավելի շահութահարկ վճարած հարկ վճարողների ցանկերը,

դ. հարկային տարվա արդյունքներով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 10 միլիոն դրամ և ավելի եկամտային հարկ վճարած հարկային գործակալների ցանկերը,

ե. Օրենսգրքի 384-րդ հոդվածի համաձայն՝ գործունեությունը կասեցված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ցանկը,

ե.1. մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ստացած ընդերքօգտագործող հարկ վճարողների՝ տարվա արդյունքներով վճարած հարկերի և վճարների ցանկերը, արտահանած ապրանքների ցանկերը՝ արժեքային, բնաիրային և քանակական չափերով,

զ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ տեղեկություններ.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը ներառյալ՝ առաջին 1000 խոշոր հարկ վճարողների ցանկերը և հարկային տարվա սկզբից նրանց վճարած հարկերի մեծությունները՝ հաշվարկված աճողական կարգով:

(308-րդ հոդվածը լրաց. 21.03.18 ՀՕ-193-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Հոդված 309. Հարկ վճարողների իրազեկման այլ գործառույթները

1. Հարկային մարմինը հարկ վճարողներին իրազեկման նպատակով իրականացնում է ծանուցման, հիշեցման, տեղեկատվական նյութերի տրամադրման, տեղեկատվական և ուսումնական միջոցառումների անցկացման գործառույթներ:

2. Սույն հոդվածում նշված իրազեկման գործառույթների իրականացման կարգը սահմանում է հարկային մարմինը:

Գ Լ Ո Ւ Խ 64

ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Հոդված 310. Էլեկտրոնային եղանակով հարկային հաշվարկների ներկայացման մասին պայմանագրի կնքումը, էլեկտրոնային ծածկագրի և գաղտնաբառի տրամադրումը

1. Հարկ վճարողի կամ հարկային գործակալի կողմից Օրենսգրքով սահմանված հարկային հաշվարկների՝ էլեկտրոնային եղանակով ներկայացումն իրականացվում է հարկային մարմնի հետ կնքված՝ էլեկտրոնային եղանակով հարկային հաշվարկների ներկայացման մասին պայմանագրի (այսուհետ՝ ԷՆՊ) հիման վրա և էլեկտրոնային թվային ստորագրության, էլեկտրոնային ծածկագրի ու գաղտնաբառի կիրառության միջոցով:

2. ԷՆՊ-ն ծառայությունների մատուցման պայմանագիր է, որում նշվում են պայմանագրի առարկան և ծառայությունների մատուցման պայմանները, հարկ վճարողի կամ հարկային գործակալի կողմից էլեկտրոնային եղանակով հարկային հաշվարկներ ներկայացնող լիազորված անձի անձնագրի կամ նույնականացման քարտի տվյալները, հանրային ծառայությունների համարանիշը (դրա բացակայության դեպքում՝ լիազորված մարմնի տրամադրած՝ հանրային ծառայությունների համարանիշի բացակայության վերաբերյալ տեղեկանքի համարը), հարկ վճարողի կամ հարկային գործակալի և հարկային մարմնի լիազորություններն ու պարտականությունները, համակարգի տեխնիկական խափանումների դեպքում հարկ վճարողի կամ հարկային գործակալի կողմից հարկային հաշվարկները պատշաճ ձևով և ժամկետներում ներկայացված լինելու հավաստման ընթացակարգը, վեճերի քննարկման կարգը, կողմերի պատասխանատվությունը, պայմանագրի գործողության ժամկետը և այլ պայմաններ: ԷՆՊ-ի օրինակելի ձևը

սահմանում է հարկային մարմինը:

3. Էլեկտրոնային թվային ստորագրության սահմանումը և կիրառությունը կարգավորվում է «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով: Էլեկտրոնային ծածկագիրը և գաղտնաբառը էլեկտրոնային թվային պայմանանշանների եզակի հաջորդականությամբ ներկայացված մուտքի անվան, ինչպես նաև գաղտնաբառի համակցությունն է, որը հնարավորություն է տալիս մուտք գործելու հարկային մարմնի տեղեկատվական համակարգ, նույնականացնել էլեկտրոնային փաստաթուղթը ներկայացնողին, ինչպես նաև ապահովում է էլեկտրոնային համակարգ մուտք գործող անձին վերաբերող տեղեկությունների գաղտնիությունն ու պաշտպանվածությունն այլ անձանց կողմից կատարվող գործողություններից:

4. ԷՆՊ կնքելու և էլեկտրոնային ծածկագիր ու գաղտնաբառ ստանալու համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը հարկային մարմին է ներկայացնում՝

1) անձնագիրը կամ նույնականացման քարտը.

2) հանրային ծառայությունների համարանիշը (դրա բացակայության դեպքում՝ լիազոր մարմնի տրամադրած՝ հանրային ծառայությունների համարանիշի բացակայության վերաբերյալ տեղեկանքի համարը):

5. Հարկային մարմինը ԷՆՊ-ն լրացնում և կնքում է մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

6. ԷՆՊ կնքելուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, հարկային մարմինը հարկ վճարողի կամ հարկային գործակալի իրավասու անձին առձեռն հանձնում է համապատասխան էլեկտրոնային գաղտնաբառը և ծածկագիրը՝ ապահովելով դրանց գաղտնիությունը: Հարկ վճարողը կամ հարկային գործակալը պատասխանատու է էլեկտրոնային գաղտնաբառի և ծածկագրի գաղտնիության պահպանման և չտարածման համար: Գաղտնաբառի կորստի, վնասի կամ այն օգտագործող իրավասու անձի փոփոխման դեպքերում հարկ վճարողը կամ հարկային գործակալը նոր գաղտնաբառ ստանալու համար դիմում է հարկային մարմին: Գաղտնաբառի վերականգնումը կամ նոր գաղտնաբառի տրամադրումը կատարվում է հարկային մարմնի հաստատած պարզեցված ընթացակարգով:

Հոդված 311. Հարկային հաշվարկների ընդունումը

1. Հարկային մարմինը Օրենսգրքով սահմանված դեպքերում ընդունում է հարկ վճարողի կամ հարկային գործակալի ներկայացրած՝ Օրենսգրքով սահմանված հարկային հաշվարկները:

2. Հարկային հաշվարկները հարկային մարմին ներկայացնելու նպատակով հարկ վճարողը կամ հարկային գործակալը Օրենսգրքի 310-րդ հոդվածի պահանջներին համապատասխան հարկային մարմնի հետ կնքում է ԷՆՊ, ստանում է էլեկտրոնային ծածկագիր և գաղտնաբառ:

3. Հարկային հաշվարկը հարկային մարմնի կողմից ընդունվելու դեպքում էլեկտրոնային համակարգը օգտվողին ներկայացնում է ծանուցում, որով հավաստվում է հարկային հաշվարկն ընդունելու փաստը, ամսաթիվը և տեղեկատվական բազայում գրանցման համարը: Ծանուցման մեջ նշված ամսաթիվը հանդիսանում է հարկային հաշվարկը հարկային մարմին ներկայացնելու օր:

4. Հարկ վճարողի կատարած գործողությունների պատմությունը պահպանվում է կայքի համապատասխան դարանում, որտեղից հարկ վճարողը կարող է արտածել և տպել հարկային հաշվարկը:

5. Հարկային մարմինը օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է էլեկտրոնային եղանակով ընդունված հարկային հաշվարկի տվյալների պաշտպանվածությունը և պահպանումը հարկային մարմնի տեղեկատվական համակարգում:

Հոդված 312. Այլ փաստաթղթերի, ինչպես նաև Օրենսգրքով սահմանված դեպքերում՝ թղթային եղանակով հարկային հաշվարկների ընդունումը

1. Հարկային հաշվարկ չհամարվող փաստաթղթերը (այսուհետ՝ այլ փաստաթղթեր) հարկային մարմին են ներկայացվում էլեկտրոնային եղանակով, բացառությամբ այն փաստաթղթերի, որոնց համար էլեկտրոնային եղանակով ներկայացման հնարավորություն հարկային մարմնի՝ էլեկտրոնային եղանակով փաստաթղթերի ընդունման համակարգում ստեղծված չէ:

2. Օրենսգրքի 53-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքերում հարկային հաշվարկները կարող են հարկային մարմին ներկայացվել նաև թղթային եղանակով:

3. Հարկ վճարողը թղթային կրիչով այլ փաստաթղթերը և հարկային հաշվարկները ներկայացնում է իր հաշվառման վայրի հարկային մարմին:

4. Թղթային կրիչով այլ փաստաթղթերը և հարկային հաշվարկները հարկային մարմին են ներկայացվում՝

1) փոստային կապի միջոցով՝ միայն պատվիրված նամակով.

2) առձեռն՝ հանձնելով հարկային մարմնի իրավասու պաշտոնատար անձին:

5. Այլ փաստաթղթերը և հարկային հաշվարկները պատվիրված նամակով հարկային մարմին ներկայացնելու հետ կապված բոլոր ծախսերը կատարում է հարկ վճարողը:

6. Պատվիրված նամակը հարկ վճարողի կողմից իր հաշվառման վայրի հարկային մարմնի փոխարեն այլ հարկային

մարմին ներկայացնելու դեպքում պատվիրված նամակը ստացած հարկային մարմինը այն ստանալուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, հարկային մարմնի իրավասու պաշտոնատար անձի գրությամբ փոստային կապի միջոցով կամ առձեռն՝ հետ ստացման մասին ստորագրությամբ, վերադարձնում է հարկ վճարողին:

7. Այլ փաստաթղթերը և հարկային հաշվարկները պատվիրված նամակով հարկային մարմին ներկայացնելու դեպքում այլ փաստաթուղթը և հարկային հաշվարկները հարկային մարմին ներկայացնելու օր է համարվում փոստային բաժանմունքի կողմից նամակի ծրարի վրա դրված՝ ընդունման ամսաթիվը հավաստող օրացուցային կնիքի արտատիպը: Եթե պատվիրված նամակի ծրարի վրա բացակայում է փոստային բաժանմունքի օրացուցային կնիքի արտատիպը կամ այն վնասված կամ բացահայտ անընթեռնելի է, ապա պատվիրված նամակը հարկային մարմինը չի ընդունում:

8. Այլ փաստաթղթերը և հարկային հաշվարկները պատվիրված նամակով հարկային մարմին ներկայացնելու դեպքում հարկ վճարողը նամակի ծրարի վրա նշում է իր հաշվառման կամ գտնվելու վայրի հետադարձ հասցեն: Ծրարները, որոնց վրա բացակայում է հարկ վճարողի հետադարձ հասցեն, հարկային մարմինը չի ընդունում: Նամակում պարունակության նկարագրության թերթիկի (այսուհետ սույն հոդվածում՝ թերթիկ) առկայությունը պարտադիր է, որում ցանկի տեսքով նշվում են նամակում պարունակվող բոլոր այլ փաստաթղթերի և հարկային հաշվարկների անվանումները և դրանց էջերի քանակը: Հարկ վճարողը թերթիկը ստորագրում և ամրակցում է ներկայացվող այլ փաստաթղթերին և հարկային հաշվարկներին: Թերթիկի բացակայության դեպքում պատվիրված նամակով ներկայացված բոլոր այլ փաստաթղթերը և հարկային հաշվարկները դրանք ստանալուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, հարկային մարմինը, իրավասու պաշտոնատար անձի գրությամբ և համապատասխան հիմնավորմամբ, փոստային կապի միջոցով կամ առձեռն՝ հետ ստանալու մասին ստորագրությամբ, վերադարձնում է հարկ վճարողին:

9. Հարկային մարմնի կողմից այլ փաստաթուղթը և հարկային հաշվարկները հարկ վճարողին վերադարձնելու դեպքում վերադարձման օր է համարվում այլ փաստաթղթով և հարկային հաշվարկներով պատվիրված նամակը փոստային (սուրհանդակային) ծառայության կողմից ընդունելու օրը: Եթե պատվիրված նամակի ծրարի վրա բացակայում է փոստային բաժանմունքի օրացուցային կնիքի արտատիպը կամ այն վնասված կամ բացահայտ անընթեռնելի է, ապա այլ փաստաթուղթը կամ հարկային հաշվարկը չի համարվում վերադարձված հարկ վճարողին:

10. Պատվիրված նամակով ներկայացված այլ փաստաթղթի և հարկային հաշվարկի ընդունման ժամանակ հարկային մարմնի իրավասու պաշտոնատար անձը ստուգում է այլ փաստաթղթում և հարկային հաշվարկում պարտադիր լրացման ենթակա տվյալների առկայությունը:

11. Այլ փաստաթուղթը կամ հարկային հաշվարկը հարկային մարմնի (այդ թվում՝ այլ գերատեսչությունների հետ համատեղ) սահմանած ձևով չներկայացնելու կամ այլ փաստաթղթում կամ հարկային հաշվարկում պարտադիր լրացման ենթակա որևէ տվյալի բացակայության կամ թերթիկում նշված որևէ այլ փաստաթղթի կամ դրա անբաժանելի մաս կազմող փաստաթղթի բացակայության դեպքում այլ փաստաթուղթը կամ հարկային հաշվարկը համարվում է չներկայացված, ինչի մասին հարկային մարմնի իրավասու պաշտոնատար անձը այլ փաստաթուղթը կամ հարկային հաշվարկն ստանալուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում, գրավոր տեղեկացնում է հարկ վճարողին:

12. Թղթային կրիչով ներկայացված այլ փաստաթղթերը և հարկային հաշվարկները կարվում են հարկ վճարողի հարկային գործում:

Հոդված 313. Առցանց եղանակով հարկ վճարողի անձնական հաշվի քարտի (այդ թվում՝ հարկային պարտավորությունների և դրանց մարումների) դիտման հնարավորության ապահովումը

1. Հարկ վճարողը հնարավորություն ունի իրական ժամանակում առցանց եղանակով դիտելու իր անձնական հաշվի քարտը (այդ թվում՝ հարկային պարտավորությունները և դրանց մարումները):

2. Հարկ վճարողը հնարավորություն ունի արտատպելու իր անձնական հաշվի քաղվածքը, որտեղ նշված տեղեկատվությունը համարվում է հարկային մարմնի կողմից հաստատված տեղեկատվություն և, ըստ անհրաժեշտության, ընդունվում է այլ կազմակերպությունների և ֆիզիկական անձանց կողմից:

Հոդված 313.1. Էլեկտրոնային եղանակով հարկային պարտավորությունների կատարումը

1. Հարկային մարմինն իր համապատասխան տեխնիկածրագրային համակարգում հարկ վճարողին հնարավորություն է ընձեռում (առցանց) նախաձեռնելու էլեկտրոնային հաղորդագրության ուղարկումն սպասարկող բանկին՝ հարկային պարտավորությունների վճարման կատարումն ապահովելու նպատակով՝ ըստ իր անձնական քարտի տվյալների: Սույն մասում նշված էլեկտրոնային հաղորդագրությունը հարկային մարմինն սպասարկող բանկին է ուղարկում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հատուկ կապուղու միջոցով: Ընդ որում, սույն մասով սահմանված եղանակով կարող է կատարվել բացառապես համապատասխան հարկ վճարողի հարկային պարտավորությունների վճարումը:

2. Սույն հոդվածով սահմանված էլեկտրոնային հաղորդագրությունն ուղարկվում է հարկ վճարողի բանկին այնպիսի տեխնիկական միջոցների կամ կառուցակարգերի կիրառմամբ, որոնք ապահովում են էլեկտրոնային հաղորդագրություն

ներկայացնելը բանկ՝ բացառապես հարկ վճարողի (բանկի հաճախորդի) նախաձեռնությամբ (կողմից), և որոնք ապահովում են էլեկտրոնային հաղորդագրությամբ նշված հարկ վճարողի նույնականացումը:

3. Սույն հոդվածով սահմանված էլեկտրոնային հաղորդագրությունների ձևը, դրանում ներառվող տեղեկատվության կազմը, էլեկտրոնային հաղորդագրությունների ձևավորման, լրացման և մշակման կարգը, ինչպես նաև դրանց փոխանցման համար տրամադրվող տեխնիկածրագրային համակարգի օգտագործման կարգն ու պայմանները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի նորմատիվ իրավական ակտով՝ համաձայնեցնելով հարկային մարմնի հետ:

4. Սույն հոդվածով և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտով սահմանված կարգով և բովանդակությամբ բանկ ներկայացված էլեկտրոնային հաղորդագրությունը հիմք է բանկի կողմից հաճախորդի (հարկ վճարողի) հարկային պարտավորությունների վճարումը կատարելու համար, եթե այլ բան նախատեսված չէ հաճախորդի (հարկ վճարողի) և սպասարկող բանկի միջև կնքված համապատասխան պայմանագրով:

(313.1-ին հոդվածը լրաց. 21.06.18 ՀՕ-338-Ն)

Հոդված 314. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտի կարգավիճակի հաստատումը կամ կարգավիճակը հաստատող տեղեկանքի տրամադրումը

1. Հարկային մարմինը հաստատում է կազմակերպությունների և ֆիզիկական անձանց Հայաստանի Հանրապետության ռեզիդենտի կարգավիճակը Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների միջև գործող՝ վավերացված միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի, կոնվենցիաների) կիրառումն ապահովելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտի կարգավիճակի հաստատումը իրականացվում է հարկային մարմնի սահմանած՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտի կարգավիճակը հաստատող տեղեկանքի տրամադրման կամ օտարերկրյա պետության օրենսդրությամբ սահմանված՝ օտարերկրյա ռեզիդենտության փաստը հաստատող ձևի հաստատման միջոցով: Օտարերկրյա պետության օրենսդրությամբ սահմանված ձևը համարվում է ռեզիդենտության փաստը հաստատող ձև, եթե այն բովանդակային առումով համապատասխանում է հարկային մարմնի սահմանած՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտի կարգավիճակը հաստատող տեղեկանքի բովանդակությանը:

3. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտի կարգավիճակի հաստատման նպատակով հարկ վճարողը հարկային մարմին է ներկայացնում սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված փաստաթղթերը: Հարկային մարմինը երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտի կարգավիճակը հաստատող տեղեկանքը կամ գրավոր մերժում է դրա տրամադրումը՝ նշելով պատճառը:

4. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտի կարգավիճակի հաստատման տեղեկանք ստանալու համար հարկ վճարողը ներկայացնում է՝

1) կազմակերպության (բացառությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի) դեպքում՝ տեղեկություն օտարերկրյա պետությունում ստացված եկամտի տեսակի և մեծության վերաբերյալ, ինչպես նաև օտարերկրյա պետությունում եկամուտների ստացումը հիմնավորող փաստաթղթերի պատճենը՝ եկամուտների առկայության դեպքում.

1.1) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի դեպքում՝ դիմում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտի կարգավիճակի հաստատման տեղեկանք ստանալու վերաբերյալ.

2) ֆիզիկական անձի դեպքում՝

ա. տեղեկություն օտարերկրյա պետությունում ստացված եկամտի տեսակի և մեծության վերաբերյալ, ինչպես նաև օտարերկրյա պետությունում եկամուտների ստացումը հիմնավորող փաստաթղթերի պատճենը՝ եկամուտների առկայության դեպքում,

բ. քաղաքացու անձնագրի բոլոր էջերի պատճենները,

գ. Հայաստանի Հանրապետության տարածքում անձի գտնվելու ժամանակահատվածի հաշվարկման աղյուսակը կամ Հայաստանի Հանրապետության տարածքում կենսական շահերի կենտրոնի գտնվելու մասին ազատ ոճով շարադրած հիմնավորումը՝ կցելով հաստատող փաստաթղթերի պատճենները:

5. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտի կարգավիճակի հաստատումը կարող է իրականացվել ինչպես ընթացիկ, այնպես էլ նախորդ հարկային տարիների համար, եթե առկա են նախորդ հարկային տարիներին վերաբերող և ռեզիդենտության փաստը հաստատող անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը:

(314-րդ հոդվածը լրաց., փոփ. 25.06.19 ՀՕ-68-Ն)

Հոդված 315. Հայաստանի Հանրապետությունում ոչ ռեզիդենտի վճարած հարկերի մասին տեղեկանքն ստանալու համար դիմումի ընդունումը և տեղեկանքի տրամադրումը

1. Հարկային մարմինը Օրենսգրքի 22-րդ հոդվածով սահմանված ոչ ռեզիդենտ կազմակերպություններին և Օրենսգրքի 25-րդ հոդվածով սահմանված ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց տրամադրում է Հայաստանի Հանրապետությունում ոչ ռեզիդենտի վճարած շահութահարկի կամ եկամտային հարկի մասին տեղեկանք՝ օտարերկրյա

հարկային մարմին ներկայացնելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետությունում ոչ ռեզիդենտի վճարած շահութահարկի կամ եկամտային հարկի մասին տեղեկանքը (այսուհետ սույն հոդվածում՝ տեղեկանք) ստանալու համար հարկերը վճարած ոչ ռեզիդենտը կամ նրա լիազորած անձը գրավոր դիմում է ներկայացնում Հայաստանի Հանրապետությունում հարկը պահած հարկային գործակալի հաշվառման վայրի հարկային մարմին: Եթե ոչ ռեզիդենտը Հայաստանի Հանրապետությունում շահութահարկը կամ եկամտային հարկը վճարել է առանց հարկային գործակալի, ապա դիմումը ներկայացվում է հարկային մարմնի՝ Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանն սպասարկող ստորաբաժանում:

3. Դիմումում նշվում են դիմող ոչ ռեզիդենտի լրիվ անվանումը (ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը), ռեզիդենտության պետությունը, ռեզիդենտության պետությունում նույնականացման համարը (առկայության դեպքում), եկամտի ստացման հայաստանյան աղբյուրը՝ նշելով եկամուտ վճարողի անվանումը (ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը) և հաշվառման (գտնվելու) հասցեն, ժամանակահատվածը, որի համար պահանջվում է տեղեկանքը: Դիմումը ստորագրվում է դիմողի կամ նրա պաշտոնատար անձի կողմից՝ նշելով դիմումի լրացման վայրն ու ամսաթիվը: Դիմումին կցվում են ոչ ռեզիդենտին եկամուտ հաշվարկելը և վճարելը, ոչ ռեզիդենտի եկամտից հարկը պահելը և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարելը հավաստող փաստաթղթերի պատճենները, մասնավորապես՝

1) ոչ ռեզիդենտի ստացած եկամուտների հաշվարկման համար հիմք հանդիսացող փաստաթղթերը.

2) ոչ ռեզիդենտի եկամուտների ստացումը հավաստող փաստաթղթերը.

3) ոչ ռեզիդենտի եկամուտներից Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված հարկի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարումը հավաստող փաստաթղթերը.

4) հարկային գործակալի կողմից ոչ ռեզիդենտի եկամտից պահված հարկի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարումը հավաստող փաստաթղթերը:

4. Հարկային մարմինը, ուսումնասիրելով ներկայացված փաստաթղթերը, դիմումն ստանալուց հետո՝ տասը աշխատանքային օրվա ընթացքում, դիմողին տրամադրում է տեղեկանքը կամ գրավոր մերժում է դիմումը՝ նշելով պատճառը: Դիմումը կարող է մերժվել, եթե ոչ ռեզիդենտի ներկայացրած փաստաթղթերից հնարավոր չէ եզրակացնել, որ ոչ ռեզիդենտի ստացած եկամուտների դիմաց հարկը պահվել է հարկային գործակալի կողմից կամ վճարվել է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ոչ ռեզիդենտի կամ հարկային գործակալի կողմից:

5. Հայաստանի Հանրապետությունում ոչ ռեզիդենտի վճարած շահութահարկի կամ եկամտային հարկի մասին տեղեկանքի ձևը սահմանում է հարկային մարմինը:

(315-րդ հոդվածը փոփ. 21.12.17 ՀՕ-266-Ն, 24.10.18 ՀՕ-400-Ն)

Գ Լ Ո Ւ Խ 65

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հոդված 316. Հորիզոնական մոնիտորինգի համակարգը

1. Հարկային մարմինը Օրենսգրքով սահմանված կարգով կազմակերպության հետ կնքված համաձայնագրի հիման վրա իրականացնում է կազմակերպության հորիզոնական մոնիտորինգ:

2. Հորիզոնական մոնիտորինգի համակարգը հարկային մարմնի և «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան խոշոր համարվող կազմակերպության միջև կամավորության սկզբունքով կնքված փոխհամագործակցության համաձայնագրի հիման վրա հարկային մարմնի կողմից իրականացվող սպասարկման և ընթացիկ հսկողության համակարգ է, որն ապահովում է՝

1) կազմակերպության էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությանը (այդ թվում՝ գործարքների փաստաթղթավորմանը) և հաշվապահական հաշվառման ծրագրին իրական ժամանակում Կառավարության սահմանած կարգով հարկային մարմնի տեղեկատվական համակարգի համար լրիվ հասանելիություն.

2) կազմակերպության կողմից էլեկտրոնային եղանակով ներկայացված դիմումի հիման վրա հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթների վերաբերյալ պարզաբանումների էլեկտրոնային եղանակով տրամադրում (այդ թվում՝ կատարված կամ նախատեսվող գործարքների մասով ծագած հարցերով).

3) կազմակերպության կողմից իրականացվող գործարքների և հաշվառման տվյալների նկատմամբ հարկային մարմնի կողմից մոնիտորինգի իրականացում.

4) կազմակերպության և հարկային մարմնի միջև իրական ժամանակում տեղեկատվության էլեկտրոնային եղանակով փոխանակում:

3. Հորիզոնական մոնիտորինգի համակարգը ներդրվում և կիրառվում է անվճար հիմունքներով:

4. Հորիզոնական մոնիտորինգի անցկացման վերաբերյալ դիմումի ձևը և լրացման կարգը, ներկայացման կարգը և ժամկետները, համաձայնագրի ձևը, կնքման համար անհրաժեշտ փաստաթղթերը, կնքման, մերժման հիմքերը և մոնիտորինգի անցկացման կարգերը սահմանում է Կառավարությունը:

5. Գործունեության ոլորտները, որտեղ գործող կազմակերպությունները կարող են օգտվել հորիզոնական մոնիտորինգի համակարգից, սահմանում է Կառավարությունը:

6. Սույն հոդվածին համապատասխան հարկային մարմնի հետ հորիզոնական մոնիտորինգի համաձայնագիր կնքած կազմակերպությունների ցանկը և դրանում կատարվող փոփոխությունները հրապարակվում են հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում համաձայնագրի կնքումից կամ համաձայնագիր կնքած կազմակերպությունների ցանկում փոփոխությունների կատարումից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

(316-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Հոդված 317. Հորիզոնական մոնիտորինգի համակարգի վաղաժամկետ դադարեցումը

1. Հորիզոնական մոնիտորինգի համակարգի կիրառությունը հարկային մարմնի կողմից կարող է վաղաժամկետ դադարեցվել, եթե՝

1) կազմակերպությունը չի կատարել հորիզոնական մոնիտորինգի համաձայնագրով նախատեսված պարտականությունները, որի հետևանքով հնարավոր չի եղել իրականացնել հորիզոնական մոնիտորինգ,

2) հարկային մարմնում առկա են փաստեր կազմակերպության կողմից հորիզոնական մոնիտորինգի գործողության ժամանակահատվածում ոչ հավաստի տեղեկություններ ներկայացնելու վերաբերյալ,

3) հորիզոնական մոնիտորինգի գործողության ժամանակահատվածում հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների հաշվարկման և վճարման ճշտության վերաբերյալ տեղեկությունների, կազմակերպության ներկայացրած տվյալների և հարկային մարմնում առկա տվյալների միջև հայտնաբերվող շեղումների վերաբերյալ պարզաբանումներ ներկայացնելու՝ հարկային մարմնի պահանջի դեպքում կազմակերպության կողմից երկու և ավելի անգամ համապատասխան պարզաբանումներ չեն ներկայացվել:

2. Հորիզոնական մոնիտորինգի համակարգը կարող է վաղաժամկետ դադարեցվել կազմակերպության նախաձեռնությամբ:

3. Հարկային մարմնի կամ կազմակերպության կողմից հորիզոնական մոնիտորինգի համակարգի կիրառությունը վաղաժամկետ դադարեցնելու դեպքում դադարեցնող կողմը այդ մասին պարտավոր է մյուս կողմին գրավոր ծանուցել ոչ ուշ, քան դադարեցումից առնվազն մեկ ամիս առաջ:

Բ Ա Ժ Ի Ն 16

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴԵԲԵՏԱՅԻՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ

Գ Լ Ո Ւ Խ 66

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴԵԲԵՏԱՅԻՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ

Հոդված 318. Հարկ վճարողների հարկային պարտավորությունների և դեբետային գումարների հաշվառման չափման միավորը

1. Հարկային հաշվարկներում, ինչպես նաև հարկային մարմնի կողմից կազմվող և հարկ վճարողին տրվող ծանուցագրերում, տեղեկանքներում, արձանագրություններում, ստուգման ակտերում և այլ փաստաթղթերում հարկ վճարողի հարկային պարտավորությունների գումարների, դեբետային գումարների և փոխհատուցման ենթակա գումարների հաշվառման համար, որպես չափման միավոր, ընդունվում է դրամը (լումաներն անտեսվում են):

Հոդված 319. Հարկային պարտավորությունների և դեբետային գումարների հաշվառումը

1. Հարկային հաշվարկով առաջացած հարկային պարտավորությունները և դեբետային գումարները հարկային մարմնում հաշվառվում են հարկային հաշվարկի ներկայացման ամսաթվով:

2. Նույն հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված ճշտված հարկային հաշվարկով առաջացող հարկային պարտավորությունը հաշվառվում է ժամանակագրական կարգով՝ ճշտված և նախորդ հարկային հաշվարկում ներառված տվյալների տարբերության չափով: Դրական տարբերությունը հաշվառվում է որպես հարկային պարտավորություն, իսկ բացասական տարբերությունը՝ որպես դեբետային գումար (հարկային պարտավորությունից նվազեցվող գումար):

3. Նույն հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված ճշտված հարկային հաշվարկով առաջացող դեբետային գումարը հաշվառվում է ժամանակագրական կարգով՝ ճշտված և նախորդ հարկային հաշվարկում ներառված տվյալների տարբերության չափով: Դեբետային գումարի դրական տարբերությունը հաշվառվում է որպես

դեբետային գումար (հարկային պարտավորությունից նվազեցվող գումար), իսկ բացասական տարբերությունը՝ որպես հարկային պարտավորություն:

4. Օրենսգրքով սահմանված կանխավճարները հաշվառվում են դրանց վճարման վերջնաժամկետներով:

5. Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում հարկային պարտավորությունների (այդ թվում՝ կանխավճարների) կամ դեբետային գումարների փոփոխության դեպքում վերահաշվարկ կատարվում է միայն այն հարկի գծով, որին վերաբերում է փոփոխությունը: Սույն մասում նշված փոփոխության արդյունքում առաջացած՝ միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարները հարկային մարմինը մուտքագրում է հարկ վճարողի միասնական հաշվին (բացառությամբ ԱԱՀ-ի կամ ակցիզային հարկի գծով հարկային պարտավորությունների կամ դեբետային գումարների փոփոխության դեպքում առաջացող փոխհատուցման գումարների, որոնք համարվում են դեբետային գումարներ), իսկ հարկային պարտավորության առաջացման դեպքում՝ սկզբնական հարկի վճարման վերջնաժամկետից սկսած՝ հաշվարկվում են տույժեր: Սույն մասում նշված սկզբունքը կիրառվում է նաև Օրենսգրքի 321-րդ հոդվածի 3-րդ մասում նշված դեպքում:

(319-րդ հոդվածը փոփ. 21.12.17 ՀՕ-266-Ն)

Հոդված 320. Ստուգման ակտերով (ուսումնասիրության արձանագրություններով, վարչական ակտերով) առաջացող հարկային պարտավորությունների, դեբետային գումարների հաշվառումը

1. Հարկային մարմնի կողմից հարկ վճարողի մոտ իրականացված ստուգման (ուսումնասիրության, օպերատիվ-հետախուզական միջոցառումների) արդյունքներով արձանագրված՝ պետական բյուջեի նկատմամբ հարկ վճարողի հարկային պարտավորությունները և դեբետային գումարները հաշվառվում են համապատասխանաբար ստուգման ակտը (ուսումնասիրության արձանագրությունը, վարչական ակտը) կազմելու ամսաթվով, բայց ոչ ուշ, քան ստուգման (ուսումնասիրության, օպերատիվ-հետախուզական միջոցառումների) անցկացման համար հիմք հանդիսացող հանձնարարագրի (որոշման) փակման օրը առանց այդ օրվա դրությամբ առկա մնացորդների փոփոխության:

2. Ստուգման ակտով (ուսումնասիրության արձանագրությամբ) հարկային պարտավորությունների նկատմամբ տույժերը և տուգանքները հաշվարկվում են մինչև ստուգման ակտը կազմելու օրը՝ առանց հաշվի առնելու դեբետային գումարները (այդ թվում՝ նույն ստուգմամբ (ուսումնասիրությամբ) արձանագրված լրացուցիչ դեբետային գումարները):

3. Հարկի կանխավճարների լրացուցիչ գումարների նկատմամբ տույժեր չեն հաշվարկվում:

4. Ստուգման ակտով (ուսումնասիրության արձանագրությամբ) առաջադրված գումարների նկատմամբ դրանց անբողոքարկելի դառնալու երկամյա և վճարման 10-օրյա ժամկետների համար տույժեր չեն հաշվարկվում:

(320-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն, խմբ. 21.06.18 ՀՕ-338-Ն)

Հոդված 321. Վերստուգման ակտերով, բողոքարկման հանձնաժողովի և դատարանի որոշումների հիման վրա վերահաշվարկվող գումարների հաշվառումը

(վերնագիրը փոփ. 21.06.18 ՀՕ-338-Ն)

1. Վերստուգման և նախորդ ստուգման (կամ վերստուգման) արդյունքների գումարային տարբերությունները հաշվառվում են վերստուգման ակտը կազմելու օրով՝ Օրենսգրքի 320-րդ հոդվածի համաձայն (անկախ խախտման տեսակների փոփոխությունը հաշվի առնելու):

2. Հարկային մարմնի կամ հարկային ծառայողի գործողությունները (կամ անգործությունը) հարկ վճարողի կողմից բողոքարկման հանձնաժողովին բողոքարկելու դեպքում դիմում-բողոքի ներկայացումը չի կասեցնում տույժերի հաշվարկումը:

3. Բողոքարկման հանձնաժողովի կամ դատարանի որոշմամբ ստուգման (վերստուգման) ակտը, ուսումնասիրության արձանագրությունը կամ վարչական ակտը չեղյալ համարվելու դեպքում, ինչպես նաև Օրենսգրքի 44-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դեպքերով պայմանավորված, անձնական հաշվի քարտերում (հատուկ անձնական հաշվի քարտերում) կատարված գրանցումները ենթակա են փոփոխման, իսկ մասնակի փոփոխման դեպքում գրանցվում են տվյալ և նախորդ որոշման և ստուգման (վերստուգման, ուսումնասիրության, օպերատիվ-հետախուզական միջոցառումների) արդյունքների գումարային տարբերությունները՝ օրենսգրքի 320-րդ հոդվածին համապատասխան:

(321-րդ հոդվածը փոփ. 21.06.18 ՀՕ-338-Ն)

Հոդված 322. Հարկ վճարողի վերակազմակերպման դեպքում պարտավորությունների և դեբետային գումարների հաշվառման առանձնահատկությունները

1. Կազմակերպության վերակազմակերպման (միացում, միաձուլում, բաժանում, առանձնացում,

վերակազմավորում) դեպքում հարկային պարտավորությունները շարունակվում են հաշվառվել՝ հիմք ընդունելով իրավահաջորդության սկզբունքը (այդ թվում՝ տույժերի, տուգանքների կամ ժամկետների հաշվառման մասով):

2. Հարկային պարտավորությունների և դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված հարկի գումարների, ինչպես նաև միասնական հաշվի գումարների մնացորդների տեղափոխումը կատարվում է օրենքով սահմանված կարգով վերակազմակերպման (բացառությամբ՝ վերակազմավորման) գրանցման օրվա դրությամբ (անկախ փոխանցման ակտը կամ բաժանիչ հաշվեկշիռը կազմելու ամսաթվից)՝ հիմք ընդունելով հարկային մարմնի իրականացրած համալիր հարկային ստուգման արդյունքում կազմված ակտի տվյալները: Սույն մասով սահմանված դեպքերում իրավահաջորդ կազմակերպությունները մինչև վերակազմակերպման օրը ներառող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ հարկային մարմին են ներկայացնում հարկային մարմնի հաստատած ձևով տեղեկանք՝ իրենց փոխանցված հարկային պարտավորությունների և դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված հարկի գումարների, ինչպես նաև միասնական հաշվի գումարների մնացորդների մասին:

3. Կազմակերպությունը վերակազմակերպելու (բացառությամբ վերակազմավորելու) մասին որոշման ընդունումից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին տեղեկացնում է իր հաշվառման վայրի հարկային մարմնին: Վերակազմակերպվող (բացառությամբ վերակազմավորվող) կազմակերպությունը փոխանցման ակտը կամ բաժանիչ հաշվեկշիռը հաստատելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, իր հաշվառման վայրի հարկային մարմին միաժամանակ ներկայացնում է դիմում՝ համալիր հարկային ստուգում իրականացնելու մասին, և հարկային հաշվարկները: Համալիր հարկային ստուգումը պետք է սկսվի դիմումն ստանալուց հետո՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում:

(322-րդ հոդվածը լրաց. 21.06.18 ՀՕ-338-Ն)

Հոդված 323. Առանց իրավահաջորդության կազմակերպության լուծարման դեպքում հարկային պարտավորությունների հաշվառման առանձնահատկությունները

1. Առանց իրավահաջորդության լուծարվող կազմակերպությունների հարկային պարտավորությունները մարվում են մինչև Օրենսգրքով սահմանված վերջնաժամկետը, բայց ոչ ուշ, քան կազմակերպության լուծարման օրը:

Հոդված 324. Հարկ վճարողի սնանկությունը

1. Պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից մինչև սնանկության գործի ավարտն ընկած ժամանակահատվածում գործում է մորատորիում (պարտատերերի պահանջների բավարարման սառեցում), որի դեպքում պահանջները բավարարվում են ըստ օրենքով սահմանված հերթականության, իսկ ֆինանսական առողջացման ծրագրի հաստատումից հետո պետական բյուջեի նկատմամբ հարկային պարտավորությունների կատարումն իրականացվում է այդ ծրագրով սահմանված կարգով:

2. Պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից մինչև սնանկության գործի ավարտն ընկած ժամանակահատվածում, ինչպես նաև սնանկության վտանգի դիմումը բավարարելու և ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց մինչև ծրագրի ավարտի օրը ընկած ժամանակահատվածներում կանխավճարներ, տույժեր և տուգանքներ չեն հաշվարկվում (այդ թվում՝ օրենքով սահմանված հերթականությամբ ժամկետները խախտելու դեպքում): Ընդ որում, պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից մինչև սնանկության գործի ավարտն ընկած ժամանակահատվածում, ինչպես նաև սնանկության վտանգի դիմումը բավարարելու և ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց մինչև ծրագրի ավարտի օրը ընկած ժամանակահատվածներում մինչև վճռի ուժի մեջ մտնելը հաշվետու ժամանակաշրջաններին (ժամանակահատվածներին) վերաբերող ստուգումներով (կամ վերստուգումներով) այդ ժամանակաշրջանների (ժամանակահատվածների) համար լրացուցիչ հայտնաբերված գումարների նկատմամբ տույժեր և տուգանքներ չեն հաշվարկվում, իսկ սնանկության վտանգի դիմումը բավարարելու և ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո հաշվետու ժամանակաշրջաններին (ժամանակահատվածներին) վերաբերող ստուգումներով (կամ վերստուգումներով) տույժերը և տուգանքները հաշվարկվում են Օրենսգրքով սահմանված կարգով:

3. Պարտապանի գործունեության կասեցման ժամանակահատվածները ներառող հաշվետու ժամանակաշրջանների համար հարկ վճարողի անունից կառավարչի կողմից ներկայացված՝ սնանկության վարույթի ընթացքում լրացուցիչ առաջացած հարկային պարտավորությունները գրանցվում են այդ տեղեկատվության ընդունման ամսաթվով (որպես ապառք, որի նկատմամբ տույժեր չեն հաշվարկվում):

Հոդված 325. Հարկային պարտավորությունների մարումները

1. Միասնական հաշվին վճարված գումարների հաշվառման օր է համարվում դրանց՝ միասնական հաշվին մուտքագրման օրը:

2. Միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարները մուտքագրվում են միասնական հաշվին՝ դրանց առաջացման օրով:

3. Հարկային պարտավորությունները մարվում են նախ միասնական հաշվում առկա գումարների հաշվին, այնուհետև՝ գանձապետարանի կողմից վարվող պետական բյուջեի միջոցների առանձին ենթահաշվում առկա՝ մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելն առաջացած գերավճարների հաշվին: Մարումներն իրականացվում են սույն մասում նշված գումարների առկայության օրով:

4. ԱԱՀ-ի և ակցիզային հարկի պարտավորությունները նախ մարվում են համապատասխանաբար՝ տվյալ հարկատեսակի դեբետային գումարների հաշվին, ինչպես նաև մինչև 2018 թվականի հունվարի 1-ն ավարտված հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացված՝ ԱԱՀ-ի կամ ակցիզային հարկի հաշվարկներով (այդ թվում՝ ճշտված) առաջացած՝ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի կամ ակցիզային հարկի գումարների հաշվին, ապա՝ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով:

5. Միասնական հաշվում առկա գումարների հաշվին առաջնահերթ մարվում են արտոնագրային հարկի, սոցիալական վճարի, Օրենսգրքի 416-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված՝ հարկ վճարողի գործունեության կասեցման փոխարեն հաշվարկված տուգանքի հարկային պարտավորությունները՝ նշված հերթականությամբ: Սույն մասում նշված հարկային պարտավորությունները մարվում են՝ անկախ հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների առկայությունից և դրանց առաջացման ժամկետներից:

6. Սույն հոդվածի 5-րդ մասում նշված հարկային պարտավորությունների բացակայության կամ դրանք մարվելուց հետո հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունները մարվում են ըստ ավելի վաղ առաջացած հարկային պարտավորության հերթականության: Ընդ որում, այլ հարկային պարտավորությունների գումարներից սկզբում մարվում են բոլոր հարկերի, վճարների գումարները, այնուհետև՝ տույժերի, որից հետո տուգանքների, վնասի հատուցման գումարները, իսկ հարկերի մարումները կատարելիս առաջնահերթորեն մարվում են նույն օրը ներկայացված հարկային հաշվարկներով ձևավորված այն հարկերի գծով պարտավորությունները, որոնց կատարման՝ Օրենսգրքով սահմանված վերջնաժամկետն ավելի շուտ է լրանում:

7. Մարված հարկային պարտավորությունների գումարներն արտացոլվում են գանձապետական եկամտային հաշիվներին դրանց մարման օրով՝ սույն հոդվածի համաձայն:

8. Միասնական հաշվին կատարված վճարումները չեն համարվում պետական բյուջեի հարկային եկամուտներ և վճարներ, քանի դեռ դրանց հաշվին պարտավորություններ չեն մարվել:

9. ***(մասն ուժը կորցրել է 14.11.19 ՀՕ-228-Ն)***

(325-րդ հոդվածը լրաց. 21.06.18 ՀՕ-338-Ն, 23.09.19 ՀՕ-172-Ն, փոփ. 14.11.19 ՀՕ-228-Ն)

Հոդված 326. Միասնական հաշվին գումարների մուտքագրման օրը

1. Միասնական հաշվին գումարների մուտքագրման օր է համարվում՝

1) ճշտված հարկային հաշվարկների ներկայացման արդյունքում առաջացած գումարների մասով՝ ճշտված հարկային հաշվարկի ներկայացման ամսաթիվը.

2) դատարանի վճռի կատարման կամ բողոքարկման հանձնաժողովի ընդունած որոշման արդյունքում հարկային պարտավորության պակասեցումից կամ Օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասում նշված՝ միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարների ավելացումից առաջացած գումարների մասով՝ դատարանի վճռի կամ բողոքարկման հանձնաժողովի որոշման ընդունման ամսաթիվը.

3) համալիր հարկային ստուգման կամ ուսումնասիրության արդյունքներով հարկային պարտավորության պակասեցումից կամ Օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասում նշված՝ միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարների ավելացումից առաջացած գումարների մասով՝ համալիր հարկային ստուգման ակտը կամ ուսումնասիրության արձանագրությունը կազմելու ամսաթիվը:

Հոդված 327. Միասնական հաշվին գումարների մուտքագրումը և միասնական հաշվից գումարների վերադարձը

1. Ուսումնասիրության արդյունքներով հիմնավորված գումարները ենթակա են մուտքագրման միասնական հաշվին՝ հարկային մարմնի սահմանած ձևի եզրակացության հիման վրա: Եզրակացությունը հարկային մարմինը կազմում և ներկայացնում է գանձապետարան՝ գումարների հիմնավորվածությունը հիմնավորող փաստաթղթերը՝ համալիր հարկային ստուգման ակտը կամ ուսումնասիրության արձանագրությունը ուժի մեջ մտնելու, իսկ դատարանի վճիռը, բողոքարկման հանձնաժողովի որոշումը, ճշտված հարկային հաշվարկը հարկային մարմին ստացվելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

2. Միասնական հաշվում առկա գումարները ենթակա են վերադարձման հարկ վճարողին նրա կողմից հարկային

մարմին ներկայացված՝ հարկային մարմնի սահմանած ձևով և կարգով լրացված դիմումի հիման վրա՝ այն ստանալուց հետո՝ 20 օրվա ընթացքում: Վերադարձը կատարվում է դիմումում նշված գումարի չափով, սակայն ոչ ավելի, քան վերադարձման օրվա դրությամբ միասնական հաշվում առկա գումարի չափից: Միասնական հաշվից գումարների վերադարձն իրականացնում է գանձապետարանը՝ գումարը փոխանցելով վճարողի բանկային հաշվին, իսկ դրա բացակայության դեպքում՝ վճարողի առաջարկած առևտրային բանկ՝ ֆիզիկական անձի անձնագրային տվյալներով: Գումարի վերադարձը սույն մասով սահմանված ժամկետից 30 օրից ավելի ուշացնելու դեպքում այդ ժամկետին հաջորդող յուրաքանչյուր ուշացած օրվա համար հարկ վճարողին վճարվում է տույժ՝ վերադարձման ենթակա գումարի 0.03 տոկոսի չափով:

(327-րդ հոդվածը փոփ. 13.12.17 ՀՕ-264-Ն)

Բ Ա Ժ Ի Ն 17

ՀԱՐԿԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Գ Լ Ո Ւ Խ 67

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 328. Հարկային հսկողությունը

1. Հարկային հսկողությունը հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ պետական հսկողությունն է՝ հարկային մարմնին վերապահված լիազորությունների շրջանակներում հարկային մարմնի (պաշտոնատար անձանց)՝ Օրենսգրքով նախատեսված գործողությունների ամբողջությունը: Օրենսգրքի կիրառության իմաստով՝ հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտեր են համարվում Օրենսգրքի 2-րդ հոդվածով սահմանված՝ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերը, ինչպես նաև այն իրավական ակտերը, որոնց պահանջների կատարման նկատմամբ հսկողության լիազորություններն այդ իրավական ակտերով վերապահված են հարկային մարմնին:

2. Հարկային հսկողության նպատակն է հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջներին դրանց կատարման համապատասխանությունը պարզելը, այդ պահանջների խախտումների կանխելն ու խափանելը, դրանց հայտնաբերելը, հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերով սահմանված դեպքերում ու կարգով հարկային պարտավորությունները ճշգրտելը, այդ թվում՝ ինքնուրույն հաշվարկելն ու վերահաշվարկելը, ինչպես նաև հայտնաբերված խախտումների համար պատասխանատվություն կիրառելը:

Հոդված 329. Լիազոր մարմինների հսկողությունը

1. Հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերով սահմանված դեպքերում և սահմաններում այդ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ հսկողությունը (այսուհետ՝ լիազոր մարմինների հսկողություն) իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում իրականացնում են համապատասխան լիազոր մարմինները (պաշտոնատար անձինք):

2. Հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերով սահմանված պահանջների կատարման նկատմամբ հսկողության ապահովման նպատակով Կառավարության սահմանած կարգով հարկային և լիազոր մարմինները փոխանակում են տեղեկություններ:

(329-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Հոդված 330. Հարկային և լիազոր մարմինների հսկողության վարչական վարույթը

1. Հարկային և լիազոր մարմինների հսկողության շրջանակներում իրականացվող վարչական վարույթի նկատմամբ կիրառվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները, եթե հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերով սահմանված չեն վարչական վարույթի առանձնահատկություններ:

Հոդված 331. Օպերատիվ-հետախուզական միջոցառումները

1. Հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջների խախտումների նախազգուշացման, կանխման, խափանման և բացահայտման նպատակով հարկային մարմնի օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

2. Օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջների խախտումների հայտնաբերման դեպքում վարչական վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

3. Օպերատիվ-հետախուզական միջոցառումների ընթացքում հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջների կատարման խախտումների վերաբերյալ տեղեկությունները հարկային հսկողության ընթացքում օգտագործվում են Օրենսգրքով սահմանված դեպքերում ու կարգով:

Հոդված 332. Հարկային հսկողության ընտրողականությունը և ռիսկերի կառավարման համակարգը

1. Օրենսգրքով սահմանված դեպքերում հարկային մարմինը հարկային հսկողությունն իրականացնում է ընտրողականության սկզբունքով՝ կիրառելով ռիսկերի կառավարման համակարգը:

2. Հարկային հսկողության շրջանակներում հարկային մարմնի կողմից գնահատվող ռիսկը հարկ վճարողի կողմից հարկի գումարը կամ հարկման բազան թաքցնելուն կամ դրանք պակաս ցույց տալուն կամ հարկերը ճիշտ չհաշվարկելուն կամ դրանք չվճարելուն կամ հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի այլ պահանջներ չկատարելուն ուղղված գործողության կամ անգործության և դրանց արդյունքում պետությանը վնաս հասցնելու հավանականությունն է՝ հաշվի առնելով հասցված կամ ակնկալվող վնասների մեծությունն ու ծանրության աստիճանը:

3. Հարկային հսկողության շրջանակներում հարկային մարմնի կողմից ռիսկերի գնահատումը ռիսկայնության աստիճանը բնորոշող չափորոշիչների հիման վրա իրականացվող՝ հարկ վճարողի (վճարողների) գործունեությունից, գործողությունից կամ անգործությունից և հարկային մարմին ներկայացվող հարկային հաշվարկների ու հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերով սահմանված կարգով հարկային մարմին ներկայացվող տեղեկությունների վերլուծության արդյունքներից բխող ռիսկերի բնորոշումն է, ըստ ռիսկայնության աստիճանների հարկ վճարողի (վճարողների) ու նրա (նրանց) գործունեության գնահատումն ու դասակարգումը:

4. Հարկային հսկողության շրջանակներում ռիսկերի կառավարման համակարգը հիմնվում է ռիսկերի գնահատման վրա և ներառում է ռիսկերի հայտնաբերմանը, հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջների խախտումների կանխարգելմանն ու դրանց հակազդմանն ուղղված միջոցառումների ամբողջությունը՝ նպատակ ունենալով ապահովել հարկային մարմնի ռեսուրսների արդյունավետ օգտագործումն ու պետության համար ակնկալվող վնասները նվազագույնի հասցնելը:

(332-րդ հոդվածը փոփ. 21.06.18 ՀՕ-338-Ն)

Հոդված 333. Հարկային հսկողության իրականացման եղանակները

1. Հարկային հսկողությունն իրականացվում է հետևյալ եղանակներով՝

1) հարկային ստուգումներ.

2) հարկային ուսումնասիրություններ.

3) հարկային վարչարարության շրջանակներում իրականացվող՝ Օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված այլ գործողություններ:

Հոդված 334. Հարկային հսկողության արդյունքների հրապարակայնությունը

1. Հարկային հսկողության արդյունքների հրապարակայնությունն ապահովելու նպատակով մինչև յուրաքանչյուր հարկային տարվա փետրվարի 1-ը ներառյալ հարկային մարմինն իր պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրում է նախորդ հարկային տարվա ընթացքում ավարտված հարկային ստուգումների և ուսումնասիրությունների վերաբերյալ հաշվետվությունը, որը ներառում է՝

1) նախորդ հարկային տարում ստուգված և (կամ) ուսումնասիրված յուրաքանչյուր հարկ վճարողի լրիվ անվանումը, ՀՎՀՀ-ն.

2) տեղեկություններ ստուգումների և (կամ) ուսումնասիրությունների քանակի, ինչպես նաև դրանց տեսակների և անցկացման հիմքերի վերաբերյալ՝ ըստ Օրենսգրքի համապատասխան հոդվածներով սահմանված տեսակների և հիմքերի.

3) տեղեկություններ ստուգումների և (կամ) ուսումնասիրությունների անցկացման ժամկետների մասին.

4) նշումներ հաշվետվության հրապարակման օրվան նախորդող հինգերորդ օրվա դրությամբ ստուգումների և (կամ) ուսումնասիրությունների արդյունքները բողոքարկված լինելու մասին:

2. Նախորդ հարկային տարվա ընթացքում անցկացված ստուգումների և ուսումնասիրությունների վերաբերյալ հաշվետվության ձևը հաստատում է Կառավարությունը:

(334-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Գ Լ ՈՒ Խ 68

ՀԱՐԿԱՅԻՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ

Հոդված 335. Հարկային ստուգումները

1. Հարկային ստուգումը հարկային մարմնի լիազորությունների շրջանակներում հարկ վճարողների (համալիր հարկային ստուգմամբ ստուգվող ժամանակաշրջաններում կազմակերպությունների վերակազմակերպման դեպքերում՝ իրավահաջորդի (իրավահաջորդների) մոտ նաև իրավանախորդների մասով), բացառությամբ անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց, իսկ Օրենսգրքով սահմանված դեպքերում՝ հաշվառումից հանված անհատ ձեռնարկատիրոջ մոտ սույն գլխով սահմանված կարգով իրականացվող ընթացակարգ է, որի նպատակն է հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջներին դրանց կատարման համապատասխանությունը պարզելը, այդ պահանջների խախտումները կանխելն ու խափանելը, դրանց հայտնաբերելը, հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերով սահմանված դեպքերում և կարգով հարկային պարտավորությունները ճշգրտելը, այդ թվում՝ ինքնուրույն հաշվարկելն ու վերահաշվարկելը, հայտնաբերված խախտումների համար պատասխանատվություն կիրառելը:

2. Հարկային հսկողության շրջանակներում հարկային մարմինն իրավունք ունի իրականացնելու հետևյալ տեսակների հարկային ստուգումները.

1) համալիր հարկային ստուգում՝ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի, ինչպես նաև հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի այլ պահանջների կատարման ստուգում.

2) թեմատիկ հարկային ստուգում՝ հարկ վճարողի գործունեությանն առնչվող՝ հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի՝ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված առանձին պահանջի (պահանջների) կատարման ստուգում:

3. Թեմատիկ հարկային ստուգումների տեսակներն են՝

1) հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում.

2) Օրենսգրքով սահմանված ելակետային տվյալների և գործակիցների ճշտության ստուգում.

3) ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների կիրառման ճշտության ստուգում.

4) աշխատողի աշխատանքի ընդունումն օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու և (կամ) աշխատողի համար գրանցման հայտ ներկայացնելու ճշտության ստուգում:

4. Հարկային և լիազոր մարմինների հսկողության շրջանակներում լիազոր մարմինների մասնակցությամբ կարող են անցկացվել նաև համատեղ համալիր հարկային ստուգումներ: Համատեղ համալիր հարկային ստուգումներին լիազոր մարմինների (պաշտոնատար անձանց) մասնակցության կարգը սահմանում է Կառավարությունը:

(335-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Հոդված 336. Համալիր հարկային ստուգումների պլանավորումը

1. Հարկային հսկողության շրջանակներում համալիր հարկային ստուգումների պլանավորումն իրականացվում է ռիսկերի վրա հիմնված հարկային ստուգումների համակարգի միջոցով: Ռիսկի վրա հիմնված հարկային ստուգումների միջոցով հարկային մարմինն այդ ստուգումները նպատակաուղղում է դեպի այն ոլորտները և այն հարկ վճարողները, որոնք առավել ռիսկային են:

2. Համալիր հարկային ստուգումները պլանավորելու նպատակով՝

1) հարկային մարմինը մշակում է հարկ վճարողների և նրանց գործունեության ռիսկայնության աստիճանը բնորոշող չափանիշները: Ռիսկի վրա հիմնված համալիր հարկային ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատում է Կառավարությունը, իսկ դրանց հաշվարկման և գնահատման կարգը հաստատում է հարկային մարմինը.

2) հարկային մարմինը հարկ վճարողների գործունեությունից, գործողություններից կամ անգործությունից և հարկային մարմին ներկայացվող հարկային հաշվարկների ու հարկային մարմնին հսկողության լիազորություններ

վերապահող իրավական ակտերով սահմանված կարգով հարկային մարմին ներկայացվող տեղեկությունների վերլուծության արդյունքներից բխող ռիսկերի բնորոշման հիման վրա, ըստ ռիսկայնության աստիճանի, գնահատում ու դասակարգում է հարկ վճարողին (վճարողներին): Ըստ ռիսկայնության աստիճանը որոշող չափանիշների գնահատման՝ հարկ վճարողները դասակարգվում են հետևյալ երեք խմբերից որևէ մեկում.

ա. բարձր ռիսկայնության (ընդգրկվում են հարկ վճարողների մինչև 20 տոկոսը՝ ըստ ռիսկայնության աստիճանի նվազման): Սույն ենթակետի կիրառության իմաստով՝ համարվում է, որ հարկ վճարողը Օրենսգրքի 65-րդ գլխով սահմանված կարգով հորիզոնական մոնիտորինգի համաձայնագրի գործողության ժամանակահատվածում ներառված չէ բարձր ռիսկայնության խմբում,

բ. միջին ռիսկայնության,

գ. ցածր ռիսկայնության.

3) հարկային մարմինը վարում է հարկ վճարողների և նրանց ռիսկայնության աստիճանը որոշող չափանիշներով վերջիններիս տրված գնահատականի վերաբերյալ տեղեկատվական համակարգ:

3. Հաշվի առնելով հարկ վճարողների ռիսկայնությունը՝ կազմվում է համալիր հարկային ստուգումների տարեկան ծրագիրը, որը ներառում է հետևյալ տեղեկությունները.

1) ստուգման ենթակա հարկ վճարողի լրիվ անվանումը, ՀՎՀՀ-ն.

2) հարկ վճարողի մոտ անցկացված վերջին համալիր հարկային ստուգման ակտը կազմելու ամսաթիվը.

3) հարկ վճարողի ռիսկայնությունը.

4) համալիր հարկային ստուգում անցկացնելու ժամանակահատվածը:

4. Համալիր հարկային ստուգումների տարեկան ծրագիրը կազմվում է՝ հաշվի առնելով հետևյալ պարտադիր պահանջները.

1) բարձր ռիսկայնության խմբում ընդգրկված հարկ վճարողները պետք է կազմեն ծրագրով ստուգման ենթակա հարկ վճարողների առնվազն 70 տոկոսը.

2) ցածր ռիսկայնության խմբում ընդգրկված հարկ վճարողները պետք է կազմեն ծրագրով ստուգման ենթակա հարկ վճարողների առավելագույնը հինգ տոկոսը:

5. Հարկային մարմնի ղեկավարը համալիր հարկային ստուգումների տարեկան ծրագիրը հաստատում է մինչև յուրաքանչյուր հարկային տարվա հունիսի 1-ը ներառյալ՝ ծրագրի հաստատման հարկային տարվա հուլիսի 1-ից մինչև ծրագրի հաստատմանը հաջորդող հարկային տարվա հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածի համար:

6. Համալիր հարկային ստուգումների տարեկան ծրագրում կարող են վարչապետի համաձայնությամբ կատարվել փոփոխություններ, որոնք հաստատում է հարկային մարմնի ղեկավարը:

7. Համալիր հարկային ստուգումների ծրագիրը և ծրագրի փոփոխություններն ուժի մեջ են մտնում հարկային մարմնի ղեկավարի կողմից հաստատվելուց մեկ ամիս հետո:

8. Համալիր հարկային ստուգումների տարեկան ծրագիրը հաստատելիս և դրանում փոփոխություններ կատարելիս հարկային մարմինն ապահովում է ծրագրի հաստատմանը կամ փոփոխությունների կատարմանը հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում դրանց տեղադրումը հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում, որը պարունակում է հետևյալ տեղեկությունները.

1) ստուգման ենթակա հարկ վճարողի լրիվ անվանումը, ՀՎՀՀ-ն.

2) հարկ վճարողի մոտ անցկացված վերջին համալիր հարկային ստուգման ակտը կազմելու ամսաթիվը:

(336-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Հոդված 337. Համալիր հարկային ստուգումների հաճախականությունը

1. Համալիր հարկային ստուգումները նույն հարկ վճարողի մոտ, կախված ռիսկայնության աստիճանից, իրականացվում են հետևյալ հաճախականությամբ.

1) բարձր ռիսկայնության դեպքում՝ ոչ ավելի հաճախ, քան հարկային տարվա ընթացքում մեկ անգամ.

2) միջին ռիսկայնության դեպքում՝ ոչ ավելի հաճախ, քան երեք հաջորդական հարկային տարիների ընթացքում մեկ անգամ.

3) ցածր ռիսկայնության դեպքում՝ ոչ ավելի հաճախ, քան հինգ հաջորդական հարկային տարիների ընթացքում մեկ անգամ:

2. Օրենսգրքի 336-րդ հոդվածին համապատասխան համալիր հարկային ստուգումների տարեկան ծրագիրը հաստատելիս և (կամ) փոփոխություններ կատարելիս սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ստուգումների հաճախականությունը կիրառվում է՝ ելնելով ծրագրի հաստատման համար հիմք հանդիսացած հարկային տարվա արդյունքներով հարկ վճարողների ռիսկայնության աստիճանից:

3. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված սահմանափակումները չեն տարածվում թեմատիկ հարկային ստուգումների վրա:

4. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված սահմանափակումները չեն տարածվում համալիր հարկային ստուգումների անցկացման այն դեպքերի վրա, երբ՝

1) ***(կետն ուժը կորցրել է 21.12.17 ՀՕ-266-Ն)***

2) պետության օրինական շահերին վնաս հասցնելու կամ դրա վտանգի, այդ թվում՝ հարկի գումար, հարկման բազա թաքցնելու կամ դրանք պակաս ցույց տալու կամ հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջները խախտելու մասին պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ կազմակերպությունների կամ ֆիզիկական անձանց գրավոր տեղեկության հիման վրա վարչապետից ստացվել է գրավոր հանձնարարական.

3) հարկ վճարողը ծրագիրը կազմելու կամ դրան նախորդող հարկային տարվա ընթացքում չի ներկայացրել առնվազն երկու հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող հարկային հաշվարկներ, բացառությամբ այն դեպքերի, երբ Օրենսգրքով սահմանված կարգով հարկ վճարողը չի կրում հարկային հաշվարկ ներկայացնելու պարտավորություն.

4) համալիր հարկային ստուգումը վերաբերում է համալիր հարկային ստուգմամբ ստուգվող իրավահաջորդ կազմակերպության իրավանախորդին (իրավանախորդներին) կամ համալիր հարկային ստուգումների տարեկան ծրագրում ներառված կազմակերպությունների իրավահաջորդներին.

5) համալիր հարկային ստուգումն իրականացվում է լուծարային գործընթաց սկսելու մասին դիմում ներկայացրած կազմակերպությունում կամ Օրենսգրքով սահմանված դեպքերում անհատ ձեռնարկատիրոջը պետական հաշվառումից հանման հիմքով ներկայացված դիմումի հիման վրա կամ հաշվառումից հանված անհատ ձեռնարկատիրոջ մոտ.

6) հարկ վճարողը (գործադիր մարմնի ղեկավարը) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը դիմում է ներկայացրել համալիր հարկային ստուգում իրականացնելու վերաբերյալ.

7) հարկային տարվա ընթացքում հարկ վճարողի մոտ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում արձանագրվել են ապրանքների մատակարարման կամ տեղափոխության գործարքների փաստաթղթավորման համար Օրենսգրքով սահմանված պահանջների մեկից ավելի խախտումներ: Սույն կետում նշված դեպքում համալիր հարկային ստուգումների հանձնարարագրեր կարող են տրվել միայն տվյալ հարկային տարվա ընթացքում.

8) իրականացվում են համալիր հարկային կամ բնապահպանական հարկով հարկման բազայի չափաքանակների (սահմանափակումների) կամ բնօգտագործման վճարի բազայի չափաքանակների (սահմանափակումների) ստուգումներ այն հարկ վճարողների մոտ, որոնք ընդգրկված են հարկային և համապատասխան լիազոր մարմիններից որևէ մեկի ստուգումների տարեկան ծրագրում.

9) հարկ վճարողի կատարած՝ հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջների խախտումներն արձանագրվել են նույն հարկ վճարողի մոտ հանդիպակաց հարկային ուսումնասիրության արդյունքում.

10) համալիր հարկային ստուգումը նշանակվել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան: Սույն կետում նշված համալիր հարկային ստուգումներն իրականացվում են հետաքննության մարմնի կամ քննիչի պատճառաբանված որոշման հիման վրա՝ որոշմամբ նշված հարցերի և ժամանակաշրջանի շրջանակներում: Հետաքննության մարմնի կամ քննիչի պատճառաբանված որոշման պատճենը ստուգման հանձնարարագրի հետ միասին տրամադրվում է հարկ վճարողին (գործադիր մարմնի ղեկավարին) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին.

11) համալիր հարկային ստուգումն իրականացվում է պետական գույքի մասնավորեցման համար լիազոր պետական մարմնի պահանջով, եթե ստուգման անհրաժեշտությունը պայմանավորված է 51 տոկոսից ավելի պետական մասնակցությամբ հարկ վճարողի մասնավորեցման նախապատրաստական աշխատանքների իրականացմամբ:

(337-րդ հոդվածը փոփ., լրաց. 21.12.17 ՀՕ-266-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն, խմբ. 21.06.18 ՀՕ-338-Ն)

Հոդված 338. Վերստուգումները

1. Վերստուգումը հարկային հսկողության շրջանակներում հարկային մարմնի կողմից հարկ վճարողի մոտ (համալիր հարկային ստուգմամբ ստուգված ժամանակաշրջաններում կազմակերպության վերակազմակերպման դեպքերում՝ իրավահաջորդի (իրավահաջորդների) մոտ նաև իրավանախորդների մասով) համալիր հարկային ստուգմամբ ստուգված հաշվետու ժամանակաշրջանի և ստուգված հարցերի երկրորդ և ավելի անգամ համալիր հարկային ստուգումն է, որը կարող է իրականացվել հետևյալ հիմքերով.

1) հարկ վճարողի (գործադիր մարմնի ղեկավարի) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի դիմումի հիման վրա.

2) վարչապետի գրավոր հանձնարարությամբ.

3) եթե հարկային մարմնի ծառայողական քննության արդյունքներով կամ սահմանված կարգով օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատվել են նախորդ համալիր հարկային ստուգում իրականացրած պաշտոնատար անձի (անձանց) անօրինական գործողությունները.

4) եթե հարկ վճարողի մոտ հանդիպակաց հարկային ուսումնասիրությամբ արձանագրվել են համալիր հարկային ստուգմամբ ստուգված հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող՝ հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջների խախտումներ, որոնք համալիր հարկային ստուգմամբ չեն արձանագրվել.

5) համալիր հարկային ստուգում իրականացրած պաշտոնատար անձանց գործողությունները վերադասության կարգով բողոքարկվելու դեպքում, եթե հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովը կայացրել է վերստուգում

անցկացնելու մասին որոշում:

Ընդ որում, հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովը վերստուգում անցկացնելու որոշում կարող է կայացնել միայն այն դեպքում, երբ հարկային ստուգում իրականացրած անձանց գործողությունների դեմ բերված բողոքը հնարավոր է բավարարել միայն վերստուգման դեպքում, և եթե վերստուգում իրականացնելու մասին հարկ վճարողը հայտնել է իր գրավոր համաձայնությունը: Վերստուգում իրականացնելու մասին հարկ վճարողի կողմից գրավոր համաձայնություն չհայտնվելու դեպքում հարկային ստուգում իրականացրած անձանց գործողությունների դեմ բերված բողոքն այդ մասով մերժվում է.

6) եթե համալիր հարկային ստուգման ընթացքում օտարերկրյա պետություններ կատարված հարցումների պատասխաններն ստացվել են Օրենսգրքի 341-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով ստուգման ընթացքի կասեցման համար սահմանված առավելագույն ժամկետն ավարտվելուց հետո՝ ստացված պատասխանի հիման վրա վերստուգում անցկացնելու անհրաժեշտության դեպքում.

7) Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան վերստուգում նշանակվելու դեպքում: Սույն կետում նշված վերստուգումներն իրականացվում են հետաքննության մարմնի կամ քննիչի պատճառաբանված որոշման հիման վրա՝ որոշմամբ նշված հարցերի և ժամանակաշրջանի շրջանակներում: Հետաքննության մարմնի կամ քննիչի պատճառաբանված որոշման պատճենը ստուգման հանձնարարագրի հետ միասին տրամադրվում է հարկ վճարողին կամ նրա պաշտոնատար անձին:

(338-րդ հոդվածը լրաց. 21.12.17 ՀՕ-266-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն

Հոդված 339. Հարկային ստուգման հանձնարարագիրը

1. Հարկային ստուգումն իրականացվում է հարկային մարմնի ղեկավարի տված գրավոր հանձնարարագրի հիման վրա, որտեղ նշվում են՝

1) հանձնարարագրի ամսաթիվը, ամիսը, տարեթիվը և համարը.

2) հարկ վճարողի (համալիր հարկային ստուգմամբ ստուգվող ժամանակաշրջաններում կազմակերպությունների վերակազմակերպման դեպքերում իրավանախորդի (իրավանախորդների) լրիվ անվանումը, ՀՎՀՀ-ն (ՀՎՀՀ-ները), գտնվելու վայրը, ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, անձնագրային տվյալները կամ հանրային ծառայության համարանիշը, ՀՎՀՀ-ն, հաշվառման վայրը.

3) ստուգումն իրականացնող պաշտոնատար անձի (անձանց) պաշտոնը, անունը, ազգանունը, ինչպես նաև Օրենսգրքով սահմանված դեպքերում ստուգմանը մասնակցող այլ անձի (անձանց) անունը, ազգանունը, անձնագրային տվյալները կամ հանրային ծառայությունների համարանիշը.

4) ստուգման տեսակը և իրավական հիմքերը.

5) ստուգման հարցերը.

6) ստուգվող ժամանակաշրջանը՝ ըստ ստուգման տեսակների ու հարցերի.

7) ստուգման ժամկետը.

8) տեղեկություններ հարկ վճարողի իրավունքների ու պարտականությունների մասին.

9) ստուգման անցկացման մասին ծանուցված լինելու և ստուգումը փաստացի սկսելու օրվա վերաբերյալ համապատասխան գրառումներ կատարելու դաշտերը:

2. Թեմատիկ հարկային ստուգումների իրականացման համար հարկային մարմնի ղեկավարի հրամանով հանձնարարագրի տրման լիազորությունը կարող է փոխանցվել հարկային տեսչության պետին: Սույն մասում նշված՝ հանձնարարագրի տրման լիազորության փոխանցման վերաբերյալ հարկային մարմնի ղեկավարի հրամանը տեղադրվում է հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում:

3. Համալիր հարկային ստուգումների հանձնարարագիրը կազմվում է երկու օրինակից և ստուգումն սկսելուց առնվազն երեք աշխատանքային օր առաջ (որը չի ներառում ստուգման անցկացման մասին ծանուցման օրը) ներկայացվում է հարկ վճարողին (գործադիր մարմնի ղեկավարին) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին՝ ծանոթացման: Ընդ որում՝

1) առձեռն ներկայացվելու դեպքում հարկ վճարողը (գործադիր մարմնի ղեկավարը) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը պարտավոր է ստորագրել հանձնարարագրի երկու օրինակների վրա՝ հաստատելով, որ ծանուցված է ստուգման անցկացման մասին, որոնցից մեկը (հարկային մարմնի օրինակը) վերադարձվում է հարկային մարմնի պաշտոնատար անձանց: Հանձնարարագիրն ստորագրելուց և ստանալուց հրաժարվելու դեպքում այդ մասին ստուգումն իրականացնող պաշտոնատար անձը (անձինք) համապատասխան գրառում է կատարում հանձնարարագրի օրինակների վրա.

2) եթե հարկ վճարողը հարկային մարմնի սահմանած կարգով նախապես դիմել է հարկային մարմնին՝ առաջարկելով ստուգումների և ուսումնասիրությունների հանձնարարագրերը, ակտերն ու արձանագրություններն իրեն ներկայացնել էլեկտրոնային եղանակով, ապա հանձնարարագիրը ծանոթացման կարող է ներկայացվել էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային եղանակով ուղարկված հանձնարարագրով հարկ վճարողն ստուգման անցկացման մասին ծանուցված է համարվում հանձնարարագիրն ստանալու մասին էլեկտրոնային հավաստման օրը: Եթե էլեկտրոնային եղանակով հանձնարարագիրն ուղարկելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում հարկ վճարողն էլեկտրոնային

եղանակով չի հավաստում ստուգման անցկացման մասին ծանուցված լինելը, հանձնարարագիրը ծանոթացման է ներկայացվում սույն մասի 1-ին կամ 3-րդ կետով սահմանված կարգով.

3) սույն մասի 1-ին կամ 2-րդ կետով սահմանված կարգով հանձնարարագիրը ծանոթացման ներկայացնելու անհնարինության (այդ թվում՝ հանձնարարագիրն ստորագրելուց ու ստանալուց հրաժարվելու) դեպքում հանձնարարագրի՝ հարկային մարմնի կնքած պատճենը հարկ վճարողին է ուղարկվում փոստային կապի միջոցով՝ հանձնման մասին ծանուցմամբ, հարկ վճարողի վերաբերյալ հարկային մարմնում առկա տեղեկություններում ժամանակագրական կարգով վերջին հասցեով: Հարկային մարմնին նամականու առաքման վերաբերյալ փոստի տված փաստաթուղթը կցվում է հանձնարարագրին և պահվում է հարկային մարմնում: Փոստային կապի միջոցով հանձնարարագրի կնքված պատճենը հարկ վճարողին ուղարկելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, հանձնման մասին հետադարձ ծանուցում չստանալու դեպքում հարկային մարմինը հանձնարարագրի կնքված պատճենն ուղարկում է հարկ վճարողի (գործադիր մարմնի ղեկավարի) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի հաշվառման հասցեով: Փոստի միջոցով ուղարկված հանձնարարագրով հարկ վճարողը ստուգման անցկացման մասին ծանուցված է համարվում հանձնարարագրի կնքված պատճենը ստանալու օրը:

4. Թեմատիկ ստուգումների հանձնարարագիրը կազմվում է երկու օրինակից և ներկայացվում է հարկ վճարողին (գործադիր մարմնի ղեկավարին) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին ծանոթացման հետևյալ կարգով.

1) հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգումների դեպքում հանձնարարագրի երկու օրինակն առձեռն ծանոթացման են ներկայացվում ստուգման ընթացքում՝ մինչև ստուգման հանձնարարագրում նշված ստուգման ժամկետի վերջին օրը ներառյալ, բայց ոչ ուշ, քան խախտում հայտնաբերելուց անմիջապես հետո: Հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգումների դեպքում ստուգումը փաստացի սկսելու օրվա վերաբերյալ գրառումը հանձնարարագրում կատարում են ստուգումն իրականացնող պաշտոնատար անձինք.

2) Օրենսգրքով սահմանված ելակետային տվյալների և գործակիցների ճշտության, ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների կիրառման ճշտության, ինչպես նաև աշխատողի աշխատանքի ընդունումն օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու և (կամ) աշխատողի համար գրանցման հայտ ներկայացնելու ճշտության ստուգումների դեպքում հանձնարարագրի երկու օրինակն առձեռն ծանոթացման են ներկայացվում անմիջապես ստուգումը սկսելիս.

3) հարկ վճարողը (գործադիր մարմնի ղեկավարը) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը պարտավոր է ստորագրել հանձնարարագրի երկու օրինակի վրա՝ հաստատելով, որ ծանուցված է թեմատիկ հարկային ստուգման անցկացման մասին, որոնցից մեկը (հարկային մարմնի օրինակը) վերադարձվում է հարկային մարմնի պաշտոնատար անձանց.

4) հանձնարարագիրն ստորագրելուց կամ ստանալուց հրաժարվելու կամ հարկ վճարողի (գործադիր մարմնի ղեկավարի) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի բացակայության դեպքում այդ մասին, ինչպես նաև հանձնարարագիրը ծանոթացման ներկայացնելու օրվա մասին համապատասխան գրառում է կատարվում հանձնարարագրի օրինակների վրա, և երկու աշխատանքային օրվա ընթացքում հանձնարարագրի՝ հարկային մարմնի կնքած պատճենը հարկ վճարողին է ուղարկվում սույն հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով սահմանված կարգով: Փոստի միջոցով ուղարկված հանձնարարագրի՝ հարկային մարմնի կնքած պատճենը հարկ վճարողին (գործադիր մարմնի ղեկավարին) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին է ուղարկվում նաև Օրենսգրքի 342-րդ հոդվածով սահմանված կարգով ներկայացվող ակտի նախագծի հետ:

5. Հարկ վճարողի (գործադիր մարմնի ղեկավարի) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի բացակայությունը կամ ստուգման հանձնարարագիրը չստորագրելը կամ հանձնարարագիրն ստանալուց հրաժարվելը հիմք չի հանդիսանում թեմատիկ հարկային ստուգումներ չանցկացնելու համար:

6. Հանձնարարագրում չնշված անձինք չեն կարող մասնակցել ստուգմանը: Ստուգումն իրականացնող անձանց կազմի փոփոխությունները և լրացումները կատարվում են հանձնարարագիրը տվող պաշտոնատար անձի հրամանով: Փոփոխման կամ լրացման մասին գրավոր տեղեկացվում է հարկ վճարողին (գործադիր մարմնի ղեկավարին) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին՝ ներկայացնելով հրամանի պատճենը մինչև ստուգումն իրականացնող անձանց ստուգմանը մասնակցելը, բացառությամբ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգումների, երբ գործում են սույն հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով այդ ստուգումների համար սահմանված առանձնահատկությունները:

7. Եթե ստուգման անցկացման մասին հարկ վճարողի ծանուցված համարվելու օրվան հաջորդող 30 օրվա ընթացքում սույն հոդվածին համապատասխան տրված ստուգման հանձնարարագրի հիման վրա ստուգում չի սկսվում, ապա այդ ժամկետին հաջորդող օրն այդ հանձնարարագիրը համարվում է անվավեր:

Հոդված 340. Հարկային ստուգումների հարցերը և ստուգվող ժամանակաշրջանները

1. Համալիր հարկային ստուգման հարցերը ներառում են հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի, ինչպես նաև հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի այլ պահանջների կատարման ճշտության ստուգման հարցերը:

2. Համալիր հարկային ստուգմամբ ստուգվող ժամանակաշրջանը ներառում է՝

1) հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո հարկային հաշվարկներ ներկայացնելու պարտավորություն

նախատեսող բոլոր հարցերի գծով՝ ստուգման հանձնարարագրի տրման օրվա դրությամբ հարկային հաշվարկների ներկայացման ժամկետները լրացած և համալիր հարկային ստուգմամբ չստուգված բոլոր հաշվետու ժամանակաշրջանները.

2) հարկային հաշվարկներ ներկայացնելու պարտավորություն չնախատեսող կամ մինչև հաշվետու ժամանակաշրջանն սկսելը հարկային հաշվարկներ ներկայացնելու պարտավորություն նախատեսող հարցերի գծով՝ հարկային ստուգմամբ չստուգված բոլոր ժամանակաշրջանները մինչև ստուգման ավարտը:

3. Սույն բաժնի կիրառության իմաստով՝

1) համալիր հարկային ստուգմամբ ստուգվող ժամանակաշրջանի սկիզբ է համարվում տվյալ հարցով ստուգված ժամանակաշրջանի ավարտի օրվան հաջորդող օրը.

2) եթե համալիր հարկային ստուգմամբ չստուգված ժամանակաշրջանում հարկ վճարողի մոտ իրականացվել են թեմատիկ հարկային ստուգումներ, ապա թեմատիկ հարկային ստուգմամբ ստուգված հարցով ստուգվող ժամանակաշրջանի սկիզբ է համարվում տվյալ հարցով ստուգված ժամանակաշրջանի ավարտի օրվան հաջորդող օրը.

3) եթե հարկ վճարողի մոտ համալիր հարկային ստուգում չի անցկացվել, ապա ստուգվող ժամանակաշրջանի սկիզբ է համարվում կազմակերպության պետական գրանցման կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման կամ որպես նոտար նշանակման օրը.

4) հարկային մարմնին լիազորություններ վերապահող օրենսդրության նոր պահանջներ ուժի մեջ մտնելու դեպքում ստուգվող ժամանակաշրջանի սկիզբ է համարվում համապատասխան իրավական ակտի ուժի մեջ մտնելու օրը.

5) համալիր հարկային ստուգմամբ ստուգվող ժամանակաշրջանի ավարտ է համարվում սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված հարցերով ստուգվող վերջին հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրը, իսկ սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հարցերով՝ ստուգման ավարտի օրը:

4. Վերստուգման դեպքում համալիր հարկային ստուգման հարցերը ներառում են նախկինում համալիր հարկային ստուգմամբ (ստուգումներով) ստուգված ժամանակաշրջանների հարցերը:

5. Թեմատիկ հարկային ստուգման հարցերը ներառում են Օրենսգրքի 335-րդ հոդվածի 3-րդ մասով՝ ըստ թեմատիկ ստուգումների տեսակների՝ հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող օրենսդրության պահանջներին դրանց կատարման համապատասխանության հարցերը: Թեմատիկ հարկային ստուգումների հարցերի համար ստուգվող ժամանակաշրջանի սկիզբ է համարվում նույն հարցով նախորդ համալիր հարկային կամ թեմատիկ հարկային ստուգմամբ ստուգված ժամանակաշրջանին հաջորդող օրը: Թեմատիկ հարկային ստուգումների հարցերի համար ստուգվող ժամանակաշրջանի ավարտ է համարվում ստուգման ավարտի օրը:

6. Ստուգման ընթացքում նոր հանգամանքներ և (կամ) անհրաժեշտություն առաջանալու դեպքում ստուգումն իրականացնող պաշտոնատար անձի (անձանց) գրավոր զեկուցագրի հիման վրա կամ հարկ վճարողի առաջարկությամբ ստուգման հարցերը կարող են փոփոխվել կամ լրացվել նոր հարցերով կամ ստուգվող ժամանակաշրջանները կարող են լրացվել նոր ստուգվող ժամանակաշրջաններով՝ հանձնարարագիրը տվող պաշտոնատար անձի հրամանով: Փոփոխման մասին գրավոր տեղեկացվում է հարկ վճարողին (գործադիր մարմնի ղեկավարին) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին՝ ներկայացնելով հրամանի պատճենը: Համալիր հարկային ստուգման դեպքում նոր լրացված հարցի կամ ստուգվող ժամանակաշրջանի ստուգման սկիզբ է համարվում հրամանի պատճենը հանձնելու օրվան հաջորդող չորրորդ աշխատանքային օրը, իսկ թեմատիկ հարկային ստուգումների դեպքում՝ հրամանի պատճենը հանձնելու օրը, բացառությամբ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգումների, երբ գործում են Օրենսգրքի 339-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով այդ ստուգումների համար սահմանված առանձնահատկությունները:

Հոդված 341. Հարկային ստուգումների ժամկետները

1. Հարկ վճարողի մոտ յուրաքանչյուր հարկային ստուգման ժամկետը ստուգման հանձնարարագրով կարող է սահմանվել ոչ ավելի, քան 15 անընդմեջ աշխատանքային օր: Ստուգման առաջին օր է համարվում ստուգումը փաստացի սկսելու օրը, ինչի մասին հարկ վճարողը (գործադիր մարմնի ղեկավարը) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը (Օրենսգրքի 339-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով սահմանված դեպքում՝ ստուգումն իրականացնող պաշտոնատար անձը) համապատասխան գրառում է կատարում ստուգման հանձնարարագրի՝ հարկային մարմնի օրինակի վրա: Թեմատիկ հարկային ստուգումների անցկացման ժամանակ (այդ թվում՝ հանձնարարագրին ծանոթանալուց և ստանալուց հրաժարվելու դեպքում) ստուգումը փաստացի սկսելու օր է համարվում հանձնարարագիրը ծանոթացման ներկայացնելու օրը, բացառությամբ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգումների, երբ գործում են Օրենսգրքի 339-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով այդ ստուգումների համար սահմանված առանձնահատկությունները:

2. Հարկային ստուգումն իրականացնող պաշտոնատար անձի (անձանց) գրավոր զեկուցագրի հիման վրա հանձնարարագիրը տվող պաշտոնատար անձի հրամանով սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետը կարող է երկարաձգվել մինչև տասը անընդմեջ աշխատանքային օրով, իսկ համալիր հարկային ստուգումների դեպքում՝ ստուգվող ժամանակաշրջանի որևէ հարկային տարվա արդյունքով երեք միլիարդ դրամ և ավելի իրացման շրջանառություն կամ համախառն եկամուտ հայտարարագրած հարկ վճարողի մոտ՝ մինչև 75 անընդմեջ աշխատանքային օրով: Ստուգման

ժամկետի երկարաձգման մասին գրավոր տեղեկացվում է հարկ վճարողին (գործադիր մարմնի ղեկավարին) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին՝ ներկայացնելով հրամանի պատճենը՝ ոչ ուշ, քան հանձնարարագրում նշված ստուգման ժամկետի կամ հրամանով ստուգման երկարաձգված ժամկետի ավարտի օրը ներառյալ, բացառությամբ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգումների, երբ գործում են Օրենսգրքի 339-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով այդ ստուգումների համար սահմանված առանձնահատկությունները:

3. Ստուգման ընթացքում առանձին տեղեկությունների ճշտման անհրաժեշտություն առաջանալու կամ տարերային աղետի պատճառով կամ ստուգման իրականացումն անհնարին դարձնող այլ անկանխատեսելի հանգամանքի բերմամբ ստուգում իրականացնող պաշտոնատար անձի (անձանց) գրավոր զեկուցագրի հիման վրա հանձնարարագիրը տվող պաշտոնատար անձի հրամանով ստուգման ընթացքը կարող է կասեցվել մինչև կասեցման հիմքի վերացումը, բայց ոչ ավելի, քան 90 աշխատանքային օրով, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքերի:

4. Սույն հոդվածի 3-րդ մասում նշված ժամկետներից բացառություն են կազմում՝

1) օտարերկրյա պետություններ հարցումներ կատարելու դեպքերը, երբ ստուգման ընթացքը կասեցվում է մինչև հարցման պատասխանը ստանալու օրվան հաջորդող տասներորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ոչ ավելի, քան 180 օրով.

2) քրեական վարույթ իրականացնող մարմիններ հարցումներ կատարելու դեպքերը, երբ ստուգման ընթացքը կասեցվում է մինչև հարցման պատասխանն ստանալը, բայց ոչ ուշ, քան հարցման պատասխանն ստանալու օրվան հաջորդող տասներորդ աշխատանքային օրը ներառյալ.

3) ստուգմանն առնչվող փաստաթղթերը հետաքննության, նախաքննության մարմնի որոշման կամ դատարանի վճռի հիման վրա առգրավված լինելու դեպքերը, երբ ստուգման ընթացքը կասեցվում է մինչև դրանք վերադարձնելը, բայց ոչ ուշ, քան փաստաթղթերը վերադարձնելու օրվան հաջորդող տասներորդ աշխատանքային օրը ներառյալ:

5. Ստուգման (բացառությամբ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգումների) ընթացքի կասեցման մասին գրավոր տեղեկացվում է հարկ վճարողին (գործադիր մարմնի ղեկավարին) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին՝ ներկայացնելով հրամանի պատճենը մինչև հրամանում նշված կասեցման օրվան նախորդող աշխատանքային օրը ներառյալ, բայց ոչ ուշ, քան հանձնարարագրում նշված ստուգման ժամկետի կամ ստուգման երկարաձգված ժամկետի ավարտին նախորդող աշխատանքային օրը ներառյալ: Ստուգման ընթացքի կասեցման ժամկետի երկարաձգման մասին գրավոր տեղեկացվում է հարկ վճարողին (գործադիր մարմնի ղեկավարին) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին՝ ներկայացնելով հրամանի պատճենը ոչ ուշ, քան ստուգման կասեցման վերջին աշխատանքային օրը ներառյալ: Կասեցված ստուգումը վերսկսելու մասին գրավոր տեղեկացվում է հարկ վճարողին (գործադիր մարմնի ղեկավարին) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին՝ ներկայացնելով հրամանի պատճենը ոչ ուշ, քան ստուգման վերսկսմանը նախորդող աշխատանքային օրը ներառյալ: Ստուգման ընթացքը կասեցնող հրամանում պարտադիր նշվում են ստուգման ընթացքի կասեցման՝ սույն հոդվածով սահմանված համապատասխան հիմքերը:

6. Ստուգման փաստացի ժամկետի ընդհանուր տևողությունը (որը չի ներառում ստուգման ընթացքի կասեցման ժամանակահատվածը) չի կարող գերազանցել 25 անընդմեջ աշխատանքային օրը, իսկ համալիր հարկային ստուգումների դեպքում՝ ստուգվող ժամանակաշրջանի որևէ հարկային տարվա արդյունքով երեք միլիարդ դրամ և ավելի իրացման շրջանառություն կամ համախառն եկամուտ հայտարարագրած հարկ վճարողների մոտ՝ 90 անընդմեջ աշխատանքային օրը:

7. Ստուգման ժամկետը երկարաձգող կամ ստուգման ընթացքը կասեցնող կամ կասեցման ժամկետը երկարաձգող կամ կասեցված ստուգումը վերսկսելու հրամանը տալիս է հանձնարարագիր տվող պաշտոնատար անձը, որն ուժի մեջ է մտնում դրա պատճենը հարկ վճարողին (գործադիր մարմնի ղեկավարին) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին հանձնելու օրվան հաջորդող օրվանից: Սույն մասում նշված՝ հրամաններն ստանալուց հրաժարվելու դեպքերում այդ մասին համապատասխան գրառում է կատարվում համապատասխան հրամանի պատճենի վրա, որը հարկ վճարողին է ուղարկվում Օրենսգրքի 339-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով սահմանված կարգով, և համարվում է հարկ վճարողին (գործադիր մարմնի ղեկավարին) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին հանձնված առաջին անգամ փոստով ուղարկելու օրը:

8. Ստուգման ընթացքի կասեցման համար սույն հոդվածով սահմանված վերջնաժամկետները լրանալու օրվան հաջորդող օրվանից ստուգումը համարվում է վերսկսված:

Հոդված 342. Հարկային ստուգման արդյունքների ամփոփումը

1. Հարկային ստուգումն ավարտվելուց հետո՝ տասը աշխատանքային օրվա ընթացքում, ստուգման արդյունքների ամփոփման հիման վրա, հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի, ինչպես նաև հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի այլ պահանջների կատարման խախտումներ հայտնաբերված լինելու դեպքում, ստուգումն իրականացնող պաշտոնատար անձը (անձինք) երկու օրինակից կազմում է հարկային մարմնի սահմանած ձևով ստուգման ակտի նախագիծ, որը ստորագրում է ստուգումն իրականացնող պաշտոնատար անձը (անձինք) և այն կազմելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում սույն հոդվածի 8-րդ մասով սահմանված կարգով ներկայացնում է հարկ վճարողին (գործադիր մարմնի ղեկավարին) կամ նրան

փոխարինող պաշտոնատար անձին: Ստուգման արդյունքում խախտումներ հայտնաբերված չլինելու դեպքում սույն մասով սահմանված ժամկետում ստուգումն իրականացնող պաշտոնատար անձը (անձինք) երկու օրինակից կազմում է ստուգման ակտ (առանց ակտի նախագիծ կազմելու), որը ստորագրում է ստուգումն իրականացնող պաշտոնատար անձը (անձինք) և այն կազմելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում սույն հոդվածի 8-րդ մասով սահմանված կարգով ներկայացնում է հարկ վճարողին (գործադիր մարմնի ղեկավարին) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին:

2. Հարկ վճարողը (գործադիր մարմնի ղեկավարը) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը ակտի նախագիծն ստանալու օրվան հաջորդող տասը աշխատանքային օրվա ընթացքում կարող է ներկայացնել առարկություններ ակտի նախագծի վերաբերյալ կամ գրավոր տեղեկացնել (այդ թվում՝ գրառում կատարելով ակտի նախագծի վրա) առարկությունների բացակայության մասին: Առարկությունները ներկայացվում են գրավոր՝ հանձնելով ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց առձեռն կամ Օրենսգրքի 339-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով սահմանված դեպքում՝ էլեկտրոնային եղանակով կամ փոստային կապի միջոցով: Մինչև սույն մասում նշված ժամկետին հաջորդող երրորդ աշխատանքային օրը ներառյալ ակտի նախագծի վերաբերյալ առարկություններ (այդ թվում՝ փոստային կապի միջոցով) չստանալու դեպքում՝ այդ օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա, իսկ առարկություններ ստանալու կամ առարկությունների բացակայության մասին գրավոր տեղեկացվելու կամ փոստի միջոցով ուղարկված ակտի նախագիծը երկրորդ անգամ հարկային մարմին վերադարձվելու դեպքերում՝ ստացվելու կամ տեղեկացվելու կամ վերադարձվելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում ստուգումն իրականացնող պաշտոնատար անձը (անձինք) երկու օրինակից կազմում է հարկային մարմնի սահմանած ձևով ստուգման ակտ, որը ստորագրում է ստուգումն իրականացնող պաշտոնատար անձը (անձինք) և սույն հոդվածի 8-րդ մասով սահմանված կարգով ներկայացնում է հարկ վճարողին (գործադիր մարմնի ղեկավարին) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին: Եթե հարկ վճարողը նաև պետական բաժնեմաս ունեցող կազմակերպություն է, ապա ակտի պատճենն ուղարկվում է համապատասխան պետական կառավարման մարմին:

3. Ակտը (նախագիծը) հարկ վճարողին ներկայացնելու համար սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված ժամկետները կարող են երկարաձգվել՝ հաշվի առնելով սույն հոդվածի 8-րդ մասով սահմանված ժամկետները:

4. Ստուգման արդյունքում կազմված ակտում (նախագծում) նշվում են՝

1) ակտի համարը, կազմելու ամսաթիվը, ամիսը, տարեթիվը.

2) ստուգման հանձնարարագրի ամսաթիվը, ամիսը, տարեթիվն ու համարը.

3) ստուգում իրականացնող պաշտոնատար անձի (անձանց) պաշտոնը, անունը, ազգանունը.

4) հարկ վճարողի (համալիր հարկային ստուգմամբ ստուգվող ժամանակաշրջաններում կազմակերպությունների վերակազմակերպման դեպքերում իրավանախորդի (իրավանախորդների) լրիվ անվանումը, ՀՎՀՀ-ն (ՀՎՀՀ-ները), գտնվելու վայրը, ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, անձնագրային տվյալները կամ հանրային ծառայության համարանիշը, ՀՎՀՀ-ն, հաշվառման վայրը.

5) ստուգման փաստացի ժամանակահատվածը (սկիզբը և ավարտը).

6) ստուգմամբ ընդգրկված հարցերը, դրանց մասով ստուգվող ժամանակաշրջանները (սկիզբը և ավարտը).

7) ստուգմամբ ընդգրկված և խախտում հայտնաբերված յուրաքանչյուր հարցի մասով՝

ա. խախտումների նկարագրությունը, ժամանակահատվածը, ինչպես նաև այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն կատարվել (նկարագրական մաս),

բ. պատասխանատվության կիրառման և հարկային պարտավորությունների առաջադրման իրավական հիմքերը (պատճառաբանական մաս),

գ. պատասխանատվության կիրառման շարադրանքը, հարկային պարտավորությունների ճշգրտումը, վճարման առաջադրվող հարկային պարտավորությունների հաշվարկը, Օրենսգրքով սահմանված դեպքերում ու կարգով անուղղակի եղանակներով հարկային պարտավորությունների հաշվարկն ու վերահաշվարկը (եզրափակիչ մաս).

8) ստուգման հարցով խախտումներ հայտնաբերված չլինելու դեպքում այդ մասին համապատասխան գրառումներ կատարելու դաշտերը.

9) հարկ վճարողին հանձնելու օրվա վերաբերյալ համապատասխան գրառումներ կատարելու դաշտերը.

10) նախագծում՝ առարկություններ չունենալու մասին գրառում կատարելու համապատասխան դաշտերը.

11) ստուգման ակտում՝ դրա բողոքարկման ժամկետը և մարմինը, որին կարող է այն բողոքարկվել, ներառյալ՝ դատարանը.

12) ստուգման ակտում՝ նախագծի վերաբերյալ հարկ վճարողի (գործադիր մարմնի ղեկավարի) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի ներկայացրած առարկությունների (որոնք կցվում են ակտին) ընդունման կամ չընդունման վերաբերյալ նշումները:

5. Ստուգման ակտի նախագծի՝ հարկ վճարողի օրինակին կցվում են՝

1) փորձագիտական եզրակացության՝ հարկային մարմնի կնքած պատճենը՝ ստուգման ընթացքում փորձաքննություն անցկացնելու դեպքում.

2) ուսումնասիրությունների և վերլուծությունների վերաբերյալ տեղեկանքի՝ հարկային մարմնի կնքած պատճենը, եթե հարկային պարտավորություններն առաջադրվում են անուղղակի եղանակներով հարկ վճարողի հարկման բազաների և հարկային պարտավորությունների գնահատման (վերագնահատման) հիման վրա.

3) խախտումներին ու դրանց արձանագրմանն առնչվող այն փաստաթղթերի պատճենները, որոնք պիտանի և

անհրաժեշտ են ստուգմամբ հայտնաբերված խախտումների փաստական հանգամանքների բացահայտման և գնահատման համար:

6. Սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված փաստաթղթերը համարվում են ստուգման ակտի անբաժանելի մաս:

7. Հարկային ստուգմամբ հայտնաբերված խախտումների մասով հարկային պարտավորություններ ակտում (նախագծում) կարող են առաջադրվել, եթե նախագիծը կազմելու ամսաթվին Օրենսգրքով հարկային պարտավորությունների առաջադրման համար սահմանված վաղեմության ժամկետը չի լրացել: Վերստուգումների դեպքում կազմվող ստուգման ակտում (նախագծում) նախկին ստուգման ընթացքում ըստ ստուգման հարցերի արձանագրված խախտումների կամ հարկային պարտավորությունների փոփոխության բացակայության դեպքում դրանք շարադրվում են նույնությամբ, իսկ փոփոխությունների դեպքում ստուգման հարցերով հայտնաբերված խախտումները շարադրվում են նոր խմբագրությամբ՝ հաշվի առնելով Օրենսգրքով հարկային պարտավորությունների առաջադրման վաղեմության ժամկետները: Վերստուգվող ժամանակաշրջաններում վերստուգմամբ հայտնաբերված նոր խախտումների մասով հարկային պարտավորություններ ակտում (նախագծում) կարող են առաջադրվել, եթե վերստուգման ակտի նախագիծը կազմելու ամսաթվին Օրենսգրքով հարկային պարտավորությունների առաջադրման համար սահմանված վաղեմության ժամկետը չի լրացել:

8. Հարկային ստուգումների դեպքում՝

1) ստուգման ակտը (նախագիծը) առձեռն ներկայացվելու դեպքում հարկ վճարողը (գործադիր մարմնի ղեկավարը) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը պարտավոր է ստորագրել ակտի (նախագծի) երկու օրինակների վրա, հաստատելով, որ ստացել է ակտը (նախագիծը), որոնցից մեկը (հարկային մարմնի օրինակը) վերադարձվում է հարկային մարմնի պաշտոնատար անձանց: Առձեռն հանձնման դեպքում ակտը (նախագիծը) համարվում է հարկ վճարողին հանձնված ակտը (նախագիծը) ստանալու օրը, ինչի մասին հարկ վճարողը (գործադիր մարմնի ղեկավարը) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը գրառում է կատարում ակտի (նախագծի) վրա: Առձեռն հանձնման դեպքում ակտն ուժի մեջ է մտնում հարկ վճարողի (գործադիր մարմնի ղեկավարի) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի կողմից այն ստանալու օրվան հաջորդող օրվանից: Ակտը (նախագիծը) ստորագրելուց և ստանալուց հրաժարվելու դեպքում այդ մասին համապատասխան գրառում է կատարվում ակտի (նախագծի) օրինակների վրա.

2) Օրենսգրքի 339-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետում նշված դեպքում հարկ վճարողին էլեկտրոնային եղանակով ուղարկված ակտը (նախագիծը) համարվում է հարկ վճարողին հանձնված այն ստանալու մասին էլեկտրոնային հավաստման օրը: Էլեկտրոնային եղանակով ակտը (նախագիծը) ուղարկելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում հարկ վճարողի կողմից ակտը (նախագիծը) ստանալու մասին էլեկտրոնային եղանակով չհավաստվելու դեպքում ակտը (նախագիծը) հարկ վճարողին է ներկայացվում սույն մասի 1-ին կամ 3-րդ կետով սահմանված կարգով: Հարկ վճարողը կարող է սույն հոդվածով սահմանված ժամկետներում ակտի նախագծի վերաբերյալ իր առարկությունները ներկայացնել էլեկտրոնային եղանակով: Ակտի նախագծի վերաբերյալ առարկությունները հարկային մարմին ներկայացնելու օր է համարվում դրանց էլեկտրոնային եղանակով ստացման օրը: Էլեկտրոնային եղանակով ուղարկված ակտն ուժի մեջ է մտնում այն ստանալու մասին էլեկտրոնային հավաստմանը հաջորդող օրվանից.

3) սույն մասի 1-ին կամ 2-րդ կետով սահմանված կարգով ակտը (նախագիծը) ներկայացնելու անհնարինության (այդ թվում՝ հարկ վճարողի (գործադիր մարմնի ղեկավարի) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի կողմից այն ստորագրելուց ու ստանալուց հրաժարվելու կամ նրանց բացակայելու) դեպքում ակտը (նախագիծը) հարկ վճարողին է ուղարկվում փոստային կապի միջոցով՝ հանձնման մասին ծանուցմամբ: Հարկային մարմինն ակտը (նախագիծը) ուղարկում է հարկ վճարողի վերաբերյալ հարկային մարմնում առկա տեղեկություններով ժամանակագրական կարգով վերջին հասցեով: Հարկային մարմնին նամականու առաքման վերաբերյալ փոստի տված փաստաթուղթը կցվում է ակտի (նախագծի)՝ հարկային մարմնի օրինակին և պահվում է հարկային մարմնում: Փոստային կապի միջոցով ակտը (նախագիծը) հարկ վճարողին ուղարկելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, հանձնման մասին հետադարձ ծանուցում չստանալու դեպքում հարկային մարմինն ակտի՝ հարկային մարմնի կնքած պատճենը (նախագիծը) ուղարկում է հարկ վճարողի (գործադիր մարմնի ղեկավարի) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի հաշվառման հասցեով: Փոստի միջոցով ուղարկված ակտը (նախագիծը) համարվում է հարկ վճարողին հանձնված հարկ վճարողի (գործադիր մարմնի ղեկավարի) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի ստանալու օրը: Փոստի միջոցով ուղարկված ակտն ուժի մեջ է մտնում այն հարկ վճարողի (գործադիր մարմնի ղեկավարի) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի ստանալու օրվան հաջորդող օրվանից: Սույն մասով սահմանված կարգով փոստի միջոցով ուղարկված ակտը (նախագիծը) հարկ վճարողի (գործադիր մարմնի ղեկավարի) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի կողմից չստանալու դեպքում փոստի կողմից ակտը (նախագիծը) երկրորդ անգամ հարկային մարմին վերադարձվելու օրը համարվում է հարկ վճարողի (գործադիր մարմնի ղեկավարի) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի կողմից ակտը (նախագիծը) ստանալու օր:

Գ Լ ՈՒ Խ 69

ՀԱՐԿԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 343. Հարկային ուսումնասիրությունները

1. Հարկային ուսումնասիրությունը հարկային մարմնի լիազորությունների շրջանակներում սույն գլխով սահմանված կարգով իրականացվող ընթացակարգ է, որի նպատակն է հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջներին դրանց կատարման համապատասխանությունը պարզելը, այդ պահանջների խախտումները կանխելն ու խափանելը, դրանց հայտնաբերելը, սույն բաժնով սահմանված դեպքերում հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերով սահմանված կարգով հարկային պարտավորությունների առաջադրումն ու հայտնաբերված խախտումների համար պատասխանատվություն կիրառելը:

2. Հարկային հսկողության շրջանակներում հարկային ուսումնասիրություններն իրականացվում են հետևյալ եղանակներով.

1) կամերալ (ներքին)՝ հարկային մարմնի լիազորությունների շրջանակներում հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջների կատարման ճշտությունը պարզելու նպատակով բացառապես հարկային մարմնում սույն գլխով սահմանված կարգով իրականացվող ուսումնասիրություն.

2) արտագնա՝ հարկային մարմնի լիազորությունների շրջանակներում հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջների կատարման ճշտությունը պարզելու նպատակով սույն գլխով սահմանված կարգով հարկ վճարողի մոտ իրականացվող ուսումնասիրություն:

3. Հարկային հսկողության շրջանակներում արտագնա հարկային ուսումնասիրությունների տեսակներն են.

1) հսկիչ գնումը.

2) չափագրումը.

3) հանդիպակաց ուսումնասիրությունը.

4) միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարների հիմնավորվածության ուսումնասիրությունը.

5) Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտների՝ Հայաստանի Հանրապետության աղբյուրներից ստացած եկամուտներից վճարված հարկի գումարի վերադարձի կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի դրույթներին համապատասխան օտարերկրյա պետության լիազորված մարմնի հարցումներին պատասխանելու նպատակով իրականացվող ուսումնասիրությունը:

4. Արտագնա հարկային ուսումնասիրություններ անցկացնելիս ուսումնասիրություն իրականացնող պաշտոնատար անձինք հարկ վճարողին գրավոր ներկայացնում են ուսումնասիրության շրջանակներին առնչվող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը, որից դուրս փաստաթղթեր ու տեղեկություններ ուսումնասիրության ընթացքում հարկ վճարողից չեն կարող պահանջվել:

5. Հարկային ուսումնասիրությունների արդյունքում հարկային պարտավորություններ չեն առաջանում, բացառությամբ հետևյալ դեպքերի.

1) կամերալ (ներքին) ուսումնասիրության արդյունքում հարկային մարմնի հայտնաբերած խախտումները հարկ վճարողի կողմից ընդունվելու և ճշտված հարկային հաշվարկներ ներկայացվելու դեպքում.

2) կամերալ (ներքին) ուսումնասիրության արդյունքում շրջանառության հարկ վճարողի կողմից առևտրական (առք ու վաճառքի) գործունեության մասով ստացվող եկամուտների գծով հաշվարկված շրջանառության հարկի գումարից ապրանքներ ձեռք բերելու ծախսերի, ինչպես նաև շրջանառության հարկի գումարից չնվազեցվող և փոխանցվող գումարների մասով ավելի նվազեցումներ կատարելու հետևանքով Օրենսգրքի 403-րդ հոդվածով սահմանված խախտումներ հայտնաբերելու դեպքում.

3) հսկիչ գնման արդյունքում արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների գրանցման կարգի՝ Օրենսգրքի 414-րդ հոդվածով սահմանված խախտումներ կամ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության և (կամ) հսկիչ դրամարկղային մեքենաների միջոցով դրամական հաշվարկների կանոնների՝ Օրենսգրքի 416-րդ հոդվածով սահմանված խախտումներ հայտնաբերելու դեպքում.

4) հսկիչ գնման արդյունքում ակցիզային դրոշմանիշերով և (կամ) դրոշմապիտակներով դրոշմավորման կանոնների՝ Օրենսգրքի 424-րդ հոդվածով սահմանված խախտումներ հայտնաբերելու դեպքում.

5) չափագրման արդյունքում ապրանքների մնացորդի պակասորդ հայտնաբերելու դեպքում.

6) միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարների հիմնավորվածության ուսումնասիրության արդյունքում Օրենսգրքով սահմանված խախտումներ հայտնաբերելու դեպքում.

7) կենտրոնացված մատակարարի կողմից անմաքս առևտրի խանութի կազմակերպչին ապրանքների մատակարարման ժամկետի խախտում հայտնաբերելու դեպքում:

6. Արտագնա հարկային ուսումնասիրություններն իրականացվում են հարկային մարմնի ղեկավարի տված գրավոր հանձնարարագրի հիման վրա, որտեղ նշվում են՝

1) հանձնարարագրի ամսաթիվը, ամիսը, տարեթիվը և համարը.

2) հարկ վճարողի լրիվ անվանումը և ՀՎՀՀ-ն, գտնվելու վայրը.

3) ուսումնասիրություն իրականացնող պաշտոնատար անձի (անձանց) պաշտոնը, անունը, ազգանունը.

4) ուսումնասիրության տեսակը, նպատակը և իրավական հիմքերը.

5) ուսումնասիրվող ժամանակաշրջանը.

6) ուսումնասիրության անցկացման ժամկետը.

7) ուսումնասիրության իրականացման վայրը (վայրերը), ուսումնասիրության տեսակից կախված՝ ըստ անհրաժեշտության.

8) տեղեկություններ հարկ վճարողի իրավունքների ու պարտականությունների մասին.

9) ուսումնասիրության անցկացման մասին ծանուցված լինելու օրվա և փաստացի սկսելու օրվա վերաբերյալ համապատասխան գրառումներ կատարելու դաշտերը:

7. Հարկային մարմնի ղեկավարի հրամանով արտագնա հարկային ուսումնասիրության հանձնարարագրի տրման լիազորությունը կարող է փոխանցվել հարկային տեսչության պետին: Սույն մասում նշված՝ հանձնարարագրի տրման լիազորության փոխանցման վերաբերյալ հարկային մարմնի ղեկավարի հրամանը տեղադրվում է հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում:

8. Արտագնա հարկային ուսումնասիրության հանձնարարագրում չնշված անձինք չեն կարող մասնակցել ուսումնասիրությանը: Ուսումնասիրություն իրականացնող անձանց կազմի փոփոխությունները և լրացումները կատարվում են հանձնարարագիրը տվող պաշտոնատար անձի հրամանով: Փոփոխման կամ լրացման մասին գրավոր տեղեկացվում է հարկ վճարողին (գործադիր մարմնի ղեկավարին) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին՝ ներկայացնելով հրամանի պատճենը մինչև ուսումնասիրություն իրականացնող պաշտոնատար անձանց ուսումնասիրությանը մասնակցելը, բացառությամբ հսկիչ գնումների, երբ գործում են Օրենսգրքի 345-րդ հոդվածի 5-րդ մասով այդ ուսումնասիրությունների համար սահմանված առանձնահատկությունները:

9. Հարկ վճարողի (գործադիր մարմնի ղեկավարի) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի բացակայությունը կամ հանձնարարագիրը չստորագրելը կամ հանձնարարագիր ստանալուց հրաժարվելը հիմք չի հանդիսանում սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված ուսումնասիրություններ չանցկացնելու համար:

10. Արտագնա հարկային ուսումնասիրությունն ավարտվելուց հետո՝ տասը աշխատանքային օրվա ընթացքում, ուսումնասիրության արդյունքների ամփոփման հիման վրա, ըստ ուսումնասիրության տեսակի ու նպատակների, հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի, ինչպես նաև հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի այլ պահանջների կատարման խախտումներ հայտնաբերված լինելու դեպքում, ուսումնասիրություն իրականացնող պաշտոնատար անձը (անձինք) երկու օրինակից կազմում է հարկային մարմնի սահմանած ձևով ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ արձանագրության նախագիծ, որը ստորագրում է ուսումնասիրություն իրականացնող պաշտոնատար անձը (անձինք) և այն կազմելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում Օրենսգրքի 342-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված կարգով ներկայացնում է հարկ վճարողին (գործադիր մարմնի ղեկավարին) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին: Ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ արձանագրության նախագիծը համարվում է հանձնված Օրենսգրքի 342-րդ հոդվածի 8-րդ մասով ստուգման ակտի նախագծի համար սահմանված համապատասխան ժամկետներում: Արտագնա հարկային ուսումնասիրության արդյունքներով խախտումներ հայտնաբերված չլինելու, ինչպես նաև հանդիպակաց հարկային ուսումնասիրությունների դեպքում սույն մասով սահմանված ժամկետում ուսումնասիրություն իրականացնող պաշտոնատար անձը (անձինք) երկու օրինակից կազմում է ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ արձանագրություն (առանց նախագիծ կազմելու), որը ստորագրում է ուսումնասիրություն իրականացնող պաշտոնատար անձը (անձինք) և այն կազմելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում Օրենսգրքի 342-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված կարգով ներկայացնում է հարկ վճարողին (գործադիր մարմնի ղեկավարին) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին: Ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը համարվում է հանձնված և ուժի մեջ մտած Օրենսգրքի 342-րդ հոդվածի 8-րդ մասով ստուգման ակտի համար սահմանված համապատասխան ժամկետներում:

11. Հարկ վճարողը (գործադիր մարմնի ղեկավարը) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն արտագնա հարկային ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ արձանագրության նախագիծը ստանալու օրվան հաջորդող տասը աշխատանքային օրվա ընթացքում կարող է ներկայացնել առարկություններ արձանագրության նախագծի վերաբերյալ կամ գրավոր տեղեկացնել (այդ թվում՝ գրառում կատարելով արձանագրության նախագծի վրա) առարկությունների բացակայության մասին: Առարկությունները ներկայացվում են գրավոր՝ հանձնելով ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց առձեռն կամ Օրենսգրքի 339-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով սահմանված դեպքում՝ էլեկտրոնային եղանակով կամ փոստային կապի միջոցով: Մինչև սույն մասում նշված ժամկետին հաջորդող երրորդ աշխատանքային օրը ներառյալ արձանագրության նախագծի վերաբերյալ առարկություններ (այդ թվում՝ փոստային կապի միջոցով) չստանալու դեպքում՝ այդ օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա, իսկ առարկություններ ստանալու կամ առարկությունների բացակայության մասին գրավոր տեղեկացվելու կամ փոստի միջոցով ուղարկված արձանագրության նախագիծը երկրորդ անգամ հարկային մարմին վերադարձվելու դեպքերում՝ ստացվելու կամ տեղեկացվելու կամ վերադարձվելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրություն իրականացնող պաշտոնատար անձը (անձինք) երկու օրինակից կազմում է հարկային մարմնի սահմանած ձևով ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ արձանագրություն, որը ստորագրում է ուսումնասիրություն իրականացնող պաշտոնատար անձը (անձինք) և Օրենսգրքի 342-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված կարգով ներկայացնում է հարկ վճարողին (գործադիր մարմնի ղեկավարին) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին: Ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը համարվում է հանձնված և ուժի մեջ մտած Օրենսգրքի 342-րդ հոդվածի 8-րդ մասով ստուգման ակտի համար սահմանված համապատասխան ժամկետներում:

12. Սույն հոդվածի 10-րդ և 11-րդ մասերով արձանագրությունը (նախագիծը) հարկ վճարողին ներկայացնելու համար սահմանված ժամկետները կարող են երկարաձգվել՝ հաշվի առնելով Օրենսգրքի 342-րդ հոդվածի 8-րդ մասով

սահմանված ժամկետները:

13. Սույն հոդվածի 5-րդ մասի 2-6-րդ կետերով սահմանված դեպքերում ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ արձանագրություններով առաջադրվում են հարկային պարտավորություններ, և կիրառվում է Օրենսգրքով ու օրենքներով սահմանված պատասխանատվություն: Սույն մասով սահմանված դեպքերում հայտնաբերված խախտումների մասով հարկային պարտավորություններ արձանագրությունում (նախագծում) կարող են առաջադրվել, եթե արձանագրության նախագիծը կազմելու ամսաթվին Օրենսգրքով հարկային պարտավորությունների առաջադրման համար սահմանված վաղեմության ժամկետը չի լրացել:

14. Ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ՝ ըստ ուսումնասիրությունների տեսակների, հարկային մարմնի սահմանած ձևով արձանագրությունում (նախագծում) նշվում են.

1) արձանագրության համարը, կազմելու ամսաթիվը, ամիսը, տարեթիվը.

2) ուսումնասիրության հանձնարարագրի ամսաթիվը, ամիսը, տարեթիվն ու համարը.

3) հարկ վճարողի լրիվ անվանումը և ՀՎՀՀ-ն, գտնվելու վայրը.

4) ուսումնասիրություն իրականացրած պաշտոնատար անձի (անձանց) պաշտոնը, անունը, ազգանունը.

5) ուսումնասիրության տեսակը.

6) ուսումնասիրվող ժամանակաշրջանը.

7) ուսումնասիրության անցկացման փաստացի ժամանակահատվածը (սկիզբը և ավարտը).

8) ուսումնասիրության իրականացման վայրը (վայրերը), ուսումնասիրության տեսակից կախված՝ ըստ անհրաժեշտության.

9) ուսումնասիրության արդյունքները.

10) ուսումնասիրության արդյունքում հայտնաբերված խախտումների մասով՝

ա. խախտումների նկարագրությունը, ժամանակահատվածը, ինչպես նաև այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն կատարվել (նկարագրական մաս),

բ. պատասխանատվության կիրառման և հարկային պարտավորությունների առաջադրման իրավական հիմքերը (պատճառաբանական մաս),

գ. պատասխանատվության կիրառման շարադրանքը, հարկային պարտավորությունների ճշգրտումը, վճարման առաջադրվող հարկային պարտավորությունների հաշվարկը (եզրափակիչ մաս).

11) ուսումնասիրության արդյունքում խախտումներ հայտնաբերված չլինելու դեպքում այդ մասին համապատասխան գրառում կատարելու դաշտերը.

12) հարկ վճարողին հանձնելու օրվա վերաբերյալ համապատասխան գրառումներ կատարելու դաշտերը.

13) նախագծում՝ առարկություններ չունենալու մասին գրառում կատարելու համապատասխան դաշտերը.

14) արձանագրությունում՝ դրա բողոքարկման ժամկետը և մարմինը, որին կարող է այն բողոքարկվել՝ ներառյալ դատարանը.

15) արձանագրությունում՝ նախագծի վերաբերյալ հարկ վճարողի (գործադիր մարմնի ղեկավարի) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի ներկայացրած առարկությունների (որոնք կցվում են արձանագրությանը) ընդունման կամ չընդունման վերաբերյալ նշումները:

15. Ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ արձանագրության նախագծի՝ հարկ վճարողին տրվող օրինակին կցվում են խախտումներին ու դրանց արձանագրմանն առնչվող այն փաստաթղթերի պատճենները, որոնք պիտանի և անհրաժեշտ են ուսումնասիրության արդյունքում հայտնաբերված խախտումների փաստական հանգամանքների բացահայտման և գնահատման համար:

16. Սույն հոդվածի 15-րդ մասով սահմանված փաստաթղթերը համարվում են ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ արձանագրության անբաժանելի մաս:

(343-րդ հոդվածը լրաց. 25.06.19 ՀՕ-68-Ն)

Հոդված 344. Կամերալ (ներքին) հարկային ուսումնասիրությունները

1. Կամերալ (ներքին) ուսումնասիրության նպատակն է հարկային մարմին ներկայացված հարկային հաշվարկների և հարկային մարմին ներկայացված տեղեկությունների ուսումնասիրության և վերլուծության միջոցով պարզել՝

1) հարկերի հաշվարկման ճշտությունը.

2) միևնույն հարկային հաշվարկում առկա համադրելի ցուցանիշների և տվյալների համապատասխանությունը.

3) նույն հարկ վճարողի կողմից հարկային մարմին ներկայացված՝ տարբեր հարկային հաշվարկների համադրելի ցուցանիշների ու տվյալների համապատասխանությունը.

4) հարկային հաշվարկներով և հարկային մարմին ներկայացված տեղեկությունների համեմատությամբ համադրելի ցուցանիշների ու տվյալների համապատասխանությունը.

5) հարկ վճարողի կողմից հարկման համակարգերի (այդ թվում՝ հատուկ) ընտրության համապատասխանությունը հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջներին.

6) հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջների հնարավոր խախտումները:

2. Կամերալ (ներքին) ուսումնասիրություններն անցկացվում են բացառապես հարկային մարմնում՝ հարկային մարմնի սահմանած կարգով: Կամերալ (ներքին) ուսումնասիրություններն անցկացվում են առանց հարկ վճարողին և հարկ վճարողների այցելության ու լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու պահանջի:

3. Կամերալ (ներքին) ուսումնասիրության արդյունքում անճշտություններ, անհամապատասխանություններ և (կամ) խախտումներ հայտնաբերելու դեպքում, բացառությամբ սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված դեպքի, կազմվում է հարկային մարմնի սահմանած ձևով ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ արձանագրություն, որտեղ նշվում են՝

1) արձանագրության համարը, կազմելու ամիսը, ամսաթիվը, տարին.

2) ուսումնասիրություն իրականացրած պաշտոնատար անձի (անձանց) պաշտոնը, անունը, ազգանունը.

3) հարկ վճարողի լրիվ անվանումը և ՀՎՀՀ-ն.

4) հարկերը և համապատասխան հաշվետու ժամանակաշրջանը (ժամանակաշրջանները), որի (որոնց) ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել է անճշտություն, անհամապատասխանություն և (կամ) խախտում.

5) հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջների խախտումները (կամ հնարավոր խախտումները), դրանց նկարագիրը:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքում կամերալ (ներքին) ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ ուսումնասիրություն իրականացրած պաշտոնատար անձի (անձանց) ստորագրած արձանագրությունը՝ դրա կազմելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում, Օրենսգրքի 342-րդ հոդվածի 8-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված կարգով ներկայացվում է հարկ վճարողին (գործադիր մարմնի ղեկավարին) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին և համարվում է հանձնված նույն կետերով ստուգման ակտի համար սահմանված համապատասխան ժամկետներում:

5. Հարկ վճարողը (գործադիր մարմնի ղեկավարը) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը սույն հոդվածի 4-րդ մասում նշված արձանագրության ստացման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում՝

1) արձանագրված անճշտությունների, անհամապատասխանությունների և (կամ) խախտումների հետ համաձայնելու դեպքում սահմանված կարգով ներկայացնում է ճշտված հարկային հաշվարկներ.

2) արձանագրված անճշտությունների, անհամապատասխանությունների և (կամ) խախտումների հետ չհամաձայնելու դեպքում հարկային մարմին է ներկայացնում իր գրավոր առարկությունները, որոնք հարկային մարմինն օգտագործում է հարկային հսկողության ընթացքում:

6. Կամերալ (ներքին) ուսումնասիրության արդյունքում շրջանառության հարկ վճարողի կողմից առևտրական (առք ու վաճառքի) գործունեության մասով ստացվող եկամուտների գծով հաշվարկված շրջանառության հարկի գումարից ապրանքներ ձեռք բերելու ծախսերի, ինչպես նաև շրջանառության հարկի գումարից չնվազեցվող և փոխանցվող գումարների մասով ավելի նվազեցումներ կատարելու հետևանքով շրջանառության հարկի՝ Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկվող չափից պակաս ցույց տալը հայտնաբերվելու դեպքում Օրենսգրքի 343-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված ժամկետներում նույն հոդվածի 14-րդ մասով սահմանված ձևով կազմվում է ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ արձանագրության նախագիծ, որը չի ներառում նույն մասի 2-րդ, 7-րդ, 8-րդ, 11-13-րդ կետերով սահմանված տեղեկատվությունը: Ուսումնասիրություն իրականացրած պաշտոնատար անձի (անձանց) ստորագրած արձանագրության նախագիծը Օրենսգրքի 342-րդ հոդվածի 8-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված կարգով ներկայացվում է հարկ վճարողին (գործադիր մարմնի ղեկավարին) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին և համարվում է հանձնված նույն կետերով ստուգման ակտի նախագծի համար սահմանված համապատասխան ժամկետներում:

7. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված դեպքում ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ արձանագրության նախագիծն ստանալու օրվան հաջորդող տասը աշխատանքային օրվա ընթացքում հարկ վճարողը (գործադիր մարմնի ղեկավարը) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը կարող է ներկայացնել առարկություններ արձանագրության նախագծի վերաբերյալ: Առարկությունները ներկայացվում են գրավոր՝ հանձնելով ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց առձեռն կամ Օրենսգրքի 339-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով սահմանված դեպքում՝ էլեկտրոնային եղանակով կամ փոստային կապի միջոցով: Մինչև սույն մասում նշված ժամկետին հաջորդող երրորդ աշխատանքային օրը ներառյալ նախագծի վերաբերյալ առարկություններ (այդ թվում՝ փոստային կապի միջոցով) չստանալու դեպքում այդ օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա, իսկ առարկություններ ստանալու կամ առարկությունների բացակայության մասին գրավոր տեղեկացվելու կամ փոստի միջոցով ուղարկված արձանագրության նախագիծը երկրորդ անգամ հարկային մարմին վերադարձվելու դեպքերում ստացվելու կամ տեղեկացվելու կամ վերադարձվելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում կազմվում է ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ Օրենսգրքի 343-րդ հոդվածի 14-րդ մասով սահմանված ձևով արձանագրություն, որը չի ներառում նույն մասի 2-րդ, 7-րդ, 8-րդ, 11-րդ և 12-րդ կետերով սահմանված տեղեկատվությունը: Ուսումնասիրություն իրականացրած պաշտոնատար անձի (անձանց) ստորագրած ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը Օրենսգրքի 342-րդ հոդվածի 8-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված կարգով ներկայացվում է հարկ վճարողին (գործադիր մարմնի ղեկավարին) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին և համարվում է հանձնված ու ուժի մեջ մտած նույն կետերով ստուգման ակտի համար սահմանված համապատասխան ժամկետներում:

Հոդված 345. Հսկիչ գնումները

1. Հարկ վճարողի հարկման օբյեկտների, հարկման բազաների և հարկային պարտավորությունների հաշվարկման (գնահատման), հաշվարկային փաստաթղթերի դուրս գրման, հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության և (կամ) հսկիչ դրամարկղային մեքենաների միջոցով դրամական հաշվարկների, արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների գրանցման, ակցիզային դրոշմանիշերով և (կամ) դրոշմապիտակներով դրոշմավորման, ինչպես նաև արժութային գործարքների իրականացման համար սահմանված կարգերի ու կանոնների պահանջների պահպանման նկատմամբ ուսումնասիրության նպատակով հարկային մարմինը կարող է իրականացնել հսկիչ գնում (գնումներ):

2. Հսկիչ գնման իրականացման համար հիմք կարող են հանդիսանալ՝

1) հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերով սահմանված կարգով հարկման օբյեկտներին, հարկման բազաներին և հարկային պարտավորություններին առնչվող և (կամ) հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերով սահմանված հաշվառման բացակայությունը կամ այդ հաշվառմանն առնչվող տեղեկությունների չներկայացումը.

2) Կառավարության սահմանած ցանկում ընդգրկված առանձին ապրանքների արտադրության և շրջանառության ֆիզիկական ծավալների, իրացման փաստացի գների (այդ թվում՝ միջին), ինչպես նաև կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների ծավալների և դրանց փաստացի գների (այդ թվում՝ միջին) վերաբերյալ հաշվետվությունների, հսկիչ դրամարկղային մեքենաներով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարների, գործարքների և գործողությունների փաստաթղթավորման նպատակով կիրառվող հաշվարկային փաստաթղթերի տվյալների, հարկային մարմին ներկայացված հարկային հաշվարկների և հարկային մարմին ներկայացված (այդ թվում՝ երրորդ անձից ստացված) տեղեկությունների անհամապատասխանությունները.

3) հարկային մարմնի կողմից իրականացվող կամերալ (ներքին) հարկային ուսումնասիրության արդյունքները.

4) հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջների հնարավոր խախտումների վերաբերյալ հարկային մարմին ներկայացվող (այդ թվում՝ երրորդ անձից ստացված) տեղեկությունները.

5) հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջների հնարավոր խախտումների վերաբերյալ հարկային մարմնի օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հայտնի դարձած տեղեկությունները.

6) հարկային մարմնի մոնիտորինգային համակարգի միջոցով իրականացվող վերլուծության արդյունքները:

3. Հսկիչ գնումներն իրականացվում են Օրենսգրքի 343-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան տրված հանձնարարագրի հիման վրա: Եթե հսկիչ գնումն իրականացվում է այլ անձի միջոցով (անձի գրավոր համաձայնությամբ), ապա հսկիչ գնման հանձնարարագրում պարտադիր նշվում են այդ անձի տվյալները (ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, անձնագրային տվյալները կամ հանրային ծառայության համարանիշը, կազմակերպության և անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ ՀՎՀՀ-ն, կազմակերպության լրիվ անվանումը, գտնվելու վայրը): Նույն հանձնարարագրով հսկիչ գնման (գնումների) անցկացման համար ժամկետը չի կարող գերազանցել տասը անընդմեջ աշխատանքային օրը:

4. Հսկիչ գնման համար տրված հանձնարարագրի շրջանակներում և հանձնարարագրում նշված՝ հսկիչ գնումների իրականացման ժամկետներում կարող են կատարվել մեկից ավելի հսկիչ գնումներ:

5. Հսկիչ գնման հանձնարարագիրը հարկ վճարողին (գործադիր մարմնի ղեկավարին) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին ծանոթացման է ներկայացվում հսկիչ գնման արդյունքում խախտումներ հայտնաբերելու պահին, իսկ խախտումներ չհայտնաբերելու դեպքում՝ հսկիչ գնումից (գնումներից) հետո, բայց ոչ ուշ, քան հանձնարարագրում նշված ժամկետի վերջին օրը: Հսկիչ գնումը փաստացի սկսելու օրվա վերաբերյալ գրառումը հանձնարարագրում կատարվում է հսկիչ գնում իրականացնող պաշտոնատար անձանց կողմից: Հարկ վճարողի (գործադիր մարմնի ղեկավարի) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի կողմից հանձնարարագիրը ստորագրելուց ու ստանալուց հրաժարվելու դեպքում հանձնարարագրի՝ հարկային մարմնի կնքած պատճենը հարկ վճարողին է ուղարկվում Օրենսգրքի 339-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով սահմանված կարգով:

6. Հսկիչ գնման (գնումների) արդյունքում սույն հոդվածի 1-ին մասում նշված կարգերի ու կանոնների պահանջների խախտումներ հայտնաբերելու դեպքում հանձնարարագրի ներկայացման օրը երկու օրինակից կազմվում է հարկային մարմնի սահմանած ձևով արձանագրություն հսկիչ գնման ընթացքում կատարված խախտումների վերաբերյալ, որտեղ նշվում են՝

1) արձանագրությունը կազմելու ամսաթիվը, ամիսը, տարեթիվը և համարը.

2) հանձնարարագրի ամսաթիվը, ամիսը, տարեթիվն ու համարը.

3) հարկ վճարողի լրիվ անվանումը և ՀՎՀՀ-ն.

4) հսկիչ գնում իրականացրած հարկային մարմնի պաշտոնատար անձի (անձանց) պաշտոնը, անունը և ազգանունը.

5) հսկիչ գնումն այլ անձի միջոցով (անձի գրավոր համաձայնությամբ) իրականացնելու դեպքում՝ այդ անձի տվյալները (ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, անձնագրային տվյալները կամ հանրային ծառայության համարանիշը, կազմակերպության և անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ ՀՎՀՀ-ն, կազմակերպության լրիվ անվանումը, գտնվելու վայրը).

6) խախտումն արձանագրող հսկիչ գնման իրականացման փաստացի ժամկետը (պահը).

7) հարկ վճարողի անունից ապրանքներ մատակարարող (վաճառող), աշխատանքներ կատարող, ծառայություններ մատուցող և (կամ) դրամական հաշվարկ կատարող աշխատողի պաշտոնը, անունը, ազգանունը.

8) հսկիչ գնման արդյունքները (այդ թվում՝ սույն հոդվածի 1-ին մասում նշված կարգերի ու կանոնների պահանջների խախտումները).

9) հարկ վճարողին հանձնելու օրվա վերաբերյալ համապատասխան գրառումներ կատարելու դաշտերը.

10) առարկությունների վերաբերյալ գրառում կատարելու համապատասխան դաշտերը:

7. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված՝ խախտումների վերաբերյալ արձանագրության երկու օրինակներն արձանագրությունը կազմելու օրը ներկայացվում են հարկ վճարողին (գործադիր մարմնի ղեկավարին) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին: Արձանագրությունը ստորագրում են հսկիչ գնում կատարող անձը (անձինք) և հարկ վճարողը (գործադիր մարմնի ղեկավարը) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը, ինչպես նաև հարկ վճարողի անունից ապրանքներ մատակարարող (վաճառող), աշխատանքներ կատարող, ծառայություններ մատուցող և (կամ) դրամական հաշվարկ կատարող աշխատողը (աշխատողները): Հարկ վճարողը (գործադիր մարմնի ղեկավարը) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն արձանագրության հարկային մարմնի օրինակի վրա կատարում է գրառում այն ստանալու մասին և հանձնում է հարկային մարմնի պաշտոնատար անձին, իսկ արձանագրության վերաբերյալ առարկություններ ունենալու դեպքում դրա մասին նշում է կատարում արձանագրությունում: Խախտումների վերաբերյալ արձանագրությունն ստորագրելուց և ստանալուց հրաժարվելու դեպքում այդ մասին հսկիչ գնում իրականացնող պաշտոնատար անձը (անձինք) համապատասխան գրառում է կատարում արձանագրության օրինակների վրա, և հարկային մարմնի կնքած արձանագրության պատճենը հարկ վճարողին է ուղարկվում ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ արձանագրության նախագծի հետ:

8. Հսկիչ գնման արդյունքում սույն հոդվածի 1-ին մասում նշված կարգերի ու կանոնների պահանջների խախտումներ հայտնաբերելու դեպքում Օրենսգրքի 343-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված ժամկետներում ու կարգով կազմվում և հարկ վճարողին կամ նրա պաշտոնատար անձին է ներկայացվում նույն հոդվածի 14-րդ մասով սահմանված ձևով ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ արձանագրության նախագիծ, որում նշվում են նաև տեղեկություններ հսկիչ գնման հանձնարարագրի շրջանակներում կատարված նախորդ բոլոր գնումների վերաբերյալ: Ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ արձանագրության նախագծին կցվում է նաև խախտումների վերաբերյալ արձանագրության պատճենը: Օրենսգրքի 343-րդ հոդվածի 11-րդ մասով սահմանված կարգով ու ժամկետներում հարկ վճարողին (գործադիր մարմնի ղեկավարին) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին է ներկայացվում ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը: Ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ արձանագրությունում (նախագծում) Օրենսգրքի 343-րդ հոդվածի 14-րդ մասի 10-րդ կետի «բ» և «գ» ենթակետերով սահմանված՝ հայտնաբերված խախտումների մասով պատասխանատվության կիրառման և հարկային պարտավորությունների առաջադրման դրույթները ներառվում են միայն նույն հոդվածի 5-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերով սահմանված դեպքերում:

9. Հսկիչ գնման արդյունքում խախտումներ հայտնաբերված չլինելու դեպքում Օրենսգրքի 343-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված ժամկետներում ու կարգով կազմվում և հարկ վճարողին (գործադիր մարմնի ղեկավարին) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին է ներկայացվում նույն հոդվածի 14-րդ մասով սահմանված ձևով ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ արձանագրություն, որում նշվում են նաև տեղեկություններ հսկիչ գնման հանձնարարագրի շրջանակներում կատարված բոլոր գնումների վերաբերյալ: Սույն հոդվածի 10-րդ մասով սահմանված դեպքերում ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ արձանագրությանը կցվում է նաև ապրանքների հետ ընդունման ակտի պատճենը:

10. Հսկիչ գնման (գնումների) արդյունքում, հսկիչ գնում իրականացրած հարկային մարմնի պաշտոնատար անձի կողմից հանձնարարագիրը ներկայացվելուց հետո, բայց ոչ ուշ, քան հսկիչ գնմամբ ձեռք բերված ապրանքների վերադարձման համար սույն հոդվածի 13-րդ մասում նշված ժամկետները, հարկ վճարողին (գործադիր մարմնի ղեկավարին) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին կամ ապրանքներ մատակարարող (վաճառող), աշխատանքներ կատարող և (կամ) դրամական հաշվարկ կատարող աշխատողին են վերադարձվում հսկիչ գնմամբ (գնումներով) ձեռք բերված ապրանքը (ապրանքները), պայմանով, որ գնումից հետո չեն փոփոխվել դրանց ապրանքային տեսքը և սպառողական հատկանիշները՝ երկու օրինակից կազմելով հարկային մարմնի ղեկավարի սահմանած ձևով ապրանքների հետ ընդունման ակտ:

11. Հարկ վճարողը (գործադիր մարմնի ղեկավարը) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը կամ ապրանքներ մատակարարող (վաճառող), աշխատանքներ կատարող և (կամ) դրամական հաշվարկ կատարող աշխատողն ընդունում է ապրանքները, վերադարձնում է ստացված գումարը՝ կատարված գործարքի փաստացի պայմաններով՝ անկախ սահմանված կարգով հաշվարկային փաստաթուղթ դուրս գրելու (այդ թվում՝ հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոն տրամադրելու) հանգամանքից կամ հաշվարկային փաստաթղթում նշված գումարից և՝

1) եթե հսկիչ գնման ժամանակ տրամադրվել է հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոն, ապա ապրանքի վերադարձը կատարվում է կտրոնի հետ միասին, ընդունվում է վերադարձման ենթակա ապրանքը (ապրանքները), վերադարձվում է ստացված գումարը և հսկիչ դրամարկղային մեքենայի միջոցով սահմանված կարգով ձևակերպվում է ապրանքի վերադարձը.

2) եթե հսկիչ գնման ժամանակ սահմանված կարգով դուրս է գրվել հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնից տարբերվող այլ հաշվարկային փաստաթուղթ, ապա ապրանքի վերադարձը կատարվում է հաշվարկային փաստաթղթի

հիման վրա, ընդունվում է վերադարձման ենթակա ապրանքը (ապրանքները), վերադարձվում է ստացված գումարը, ապրանքի հետ ընդունման ակտում նշվում է հաշվարկային փաստաթղթի սերիան, համարը և վերադարձման ենթակա գումարը, և հարկ վճարողը սահմանված կարգով չեղարկում է հաշվարկային փաստաթուղթը.

3) եթե վերադարձվում է վաճառված ապրանքների մի մասը, ապա կատարվում է վերադարձված ապրանքներին համարժեք գումարի վերադարձ, հսկիչ դրամարկղային մեքենայի միջոցով սահմանված կարգով ձևակերպվում է ամբողջ ապրանքի վերադարձ կամ հարկ վճարողը սահմանված կարգով դուրս է գրում ճշգրտող հաշվարկային փաստաթուղթ, իսկ հետ ընդունման ոչ ենթակա ապրանքների համար հսկիչ գնում կատարողի կողմից կատարված վճարման (չվերադարձված ապրանքների մասով) հսկիչ դրամարկղային մեքենայի միջոցով տպվում և տրամադրվում է նոր կտրոն:

12. Վաճառված ապրանքի հետ ընդունման համար կազմվող ապրանքների հետ ընդունման ակտը ստորագրում են հարկ վճարողը (գործադիր մարմնի ղեկավարը) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը, հսկիչ գնում կատարած անձը (անձինք) և հարկ վճարողի անունից ապրանքներ մատակարարող (վաճառող) և (կամ) դրամական հաշվարկ կատարող աշխատողը և (հարկ) վճարողը (գործադիր մարմնի ղեկավարը) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը: Ապրանքների հետ ընդունման ակտի վերաբերյալ առարկությունները ներկայացվում են գրավոր, իսկ ակտի օրինակը ստանալուց կամ այն ստորագրելուց հրաժարվելու դեպքում ուսումնասիրություն իրականացրած պաշտոնատար անձը (անձինք) այդ մասին համապատասխան նշում է կատարում ակտում:

13. Հսկիչ գնմամբ (գնումներով) ձեռք բերված ապրանքների վերադարձը կատարվում է հետևյալ ժամկետներում.

1) դեղերի, անասնաբուժական դեղամիջոցների, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սանիտարական կանոններին և հիգիենիկ նորմերին համապատասխան՝ հատկապես արագ փչացող սննդամթերքի, կենդանիների, կենդանական ծագում ունեցող մթերքի, կենդանական ծագում ունեցող հումքի, կերերի, լցակերերի, բույսերի և բուսական արտադրանքի վերադարձը կատարվում է անմիջապես հսկիչ գնման ժամանակ՝ հանձնարարագիրը ներկայացնելու պահին.

2) սույն մասի 1-ին կետում չնշված՝ պիտանիության ժամկետ ունեցող ապրանքների վերադարձը կատարվում է մինչև հսկիչ գնման հանձնարարագրում նշված՝ հսկիչ գնումների իրականացման ժամանակահատվածի ավարտը, բայց ոչ ուշ, քան ապրանքների պիտանիության համար սահմանված վերջնաժամկետից տասը օր առաջ կամ անմիջապես, եթե ապրանքների պիտանիության ժամկետը պակաս է տասը օրից.

3) հսկիչ գնում կատարելու պահին սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող նյութերի և սննդային հավելումների ներմուծման, արտահանման, արտադրության, մշակման, վերամշակման, փաթեթավորման, մակնշման, փոխադրման, պահման, իրացման փուլերում անվտանգության համար օրենքով սահմանված պահանջները չբավարարող ապրանքների, ինչպես նաև սույն մասի 1-ին և 2-րդ կետերում չնշված ապրանքների վերադարձը կատարվում է մինչև հսկիչ գնման հանձնարարագրում նշված՝ հսկիչ գնումների իրականացման ժամանակահատվածի ավարտը:

14. Հսկիչ գնումների ֆինանսական աղբյուրների և ձեռք բերված ու չվերադարձված ապրանքների տնօրինման կարգը հաստատում է Կառավարությունը:

15. Սույն հոդվածով սահմանված՝ հսկիչ գնումների իրականացման կարգն ու պայմանները կիրառվում են նաև հարկային մարմնի կողմից հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության թեմատիկ ստուգման ընթացքում:

(345-րդ հոդվածը խմբ. 21.12.17 ՀՕ-266-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Հոդված 346. Չափագրումները

1. Հարկ վճարողի հարկման օբյեկտների, հարկման բազաների և հարկային պարտավորությունների հաշվարկման (գնահատման), ինչպես նաև հարկ վճարողի մոտ արտադրանքի արտադրության, օգտակար հանածոների արդյունահանման, իրացման, ապրանքների շրջանառության, աշխատանքների կատարման և (կամ) ծառայությունների մատուցման փաստացի ծավալները, ապրանքների մատակարարման կամ պահպանման վայրերում ապրանքների (բացառությամբ հումքի, նյութերի, հիմնական միջոցների և արտարժույթի) մնացորդի պակասորդը, ինչպես նաև իրացման փաստացի գները (այդ թվում՝ միջին) պարզելու նպատակով հարկային մարմինը կարող է իրականացնել չափագրումներ: Չափագրումների իրականացման համար հիմք կարող են հանդիսանալ՝

1) հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերով սահմանված կարգով հարկման օբյեկտներին, հարկման բազաներին և հարկային պարտավորություններին առնչվող և (կամ) հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերով սահմանված հաշվառման բացակայությունը կամ այդ հաշվառմանն առնչվող տեղեկությունների չներկայացումը.

2) Կառավարության սահմանած ցանկում ընդգրկված առանձին ապրանքների արտադրության և շրջանառության ֆիզիկական ծավալների, իրացման փաստացի գների (այդ թվում՝ միջին), ինչպես նաև կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների ծավալների և դրանց փաստացի գների (այդ թվում՝ միջին) վերաբերյալ հաշվետվությունների, հսկիչ դրամարկղային մեքենաներով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարների, գործարքների և գործողությունների փաստաթղթավորման նպատակով կիրառվող հաշվարկային փաստաթղթերի տվյալների, հարկային մարմին ներկայացված հարկային հաշվարկների և հարկային մարմին ներկայացված (այդ թվում՝ երրորդ անձից ստացված) տեղեկությունների անհամապատասխանությունները.

3) հարկային մարմնի կողմից իրականացվող կամերալ (ներքին) հարկային ուսումնասիրության արդյունքները.

4) հարկային մարմնի իրականացրած՝ հարկ վճարողների հարկման օբյեկտների, հարկման բազաների և հարկային պարտավորությունների վերլուծության արդյունքները, որոնց մասին հարկ վճարողը չափագրումն իրականացնելուց առաջ ծանուցվել է.

5) հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջների հնարավոր խախտումների վերաբերյալ հարկային մարմնի օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հայտնի դարձած տեղեկությունները.

6) հարկային մարմնի մոնիտորինգային համակարգի միջոցով իրականացվող վերլուծության արդյունքները:

2. Չափագրումը հարկային մարմնի կողմից հարկ վճարողի կամ նրա պաշտոնատար անձի կամ նրա ներկայացուցչի անմիջական մասնակցությամբ (անհրաժեշտության դեպքում ներգրավելով նաև լիազոր համապատասխան մարմնի ներկայացուցչի կամ անկախ փորձագետի) իրականացվող ուսումնասիրություն է, որի նպատակն է պարզել՝

1) բացառապես չափագրման անցկացման ժամանակահատվածում արտադրանքի արտադրության, օգտակար հանածոների արդյունահանման և իրացման, ապրանքների շրջանառության, աշխատանքների կատարման և (կամ) ծառայությունների մատուցման իրական ծավալները, ինչպես նաև իրացման փաստացի գները (սակագները).

2) հարկային տարվա որևէ ամսում իրացման շրջանառության կամ ԵՏՄ անդամ չհամարվող պետություններից «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ներմուծված ապրանքների մաքսային արժեքի, իսկ ԵՏՄ անդամ պետություններից ներմուծված ապրանքների մասով՝ սահմանված կարգով որոշվող ԱԱՀ-ով հարկման բազայի (առանց ակցիզային հարկի) 100 միլիոն դրամի շեմը գերազանցած հարկ վճարողի մոտ ապրանքների մնացորդի փաստացի պակասորդը:

3. Հարկ վճարողի մոտ տվյալ հարկային տարում իրականացվող բոլոր չափագրումների ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել 30, իսկ ընդերքօգտագործողների մոտ՝ 60 աշխատանքային օրը: Մեկ չափագրման տևողությունը չի կարող գերազանցել տասը անընդմեջ աշխատանքային օրը, իսկ հարկային տարվա որևէ ամսում իրացման շրջանառության կամ ԵՏՄ անդամ չհամարվող պետություններից «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ներմուծված ապրանքների մաքսային արժեքի, իսկ ԵՏՄ անդամ պետություններից ներմուծված ապրանքների մասով՝ սահմանված կարգով որոշվող ԱԱՀ-ով հարկման բազայի (առանց ակցիզային հարկի) 100 միլիոն դրամի շեմը գերազանցած հարկ վճարողի մոտ՝ 15 անընդմեջ աշխատանքային օրը, բացառությամբ սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված դեպքերի:

4. Չափագրումն իրականացվում է Օրենսգրքի 343-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան տրված հանձնարարագրի հիման վրա, որտեղ չափագրմանը համապատասխան լիազոր մարմնի ներկայացուցչի կամ անկախ փորձագետի ներգրավված լինելու դեպքում նշվում է նաև համապատասխան լիազոր մարմնի ղեկավարի հրապարակած հրամանի կամ հանձնարարագրի հիման վրա չափագրմանը ներգրավված ներկայացուցչի կամ հարկային մարմնի ղեկավարի հրամանով սահմանված կարգով չափագրմանը ներգրավված անկախ փորձագետի տվյալները (անունը, ազգանունը, պաշտոնը):

5. Չափագրման հանձնարարագրի երկու օրինակները չափագրումը փաստացի սկսելու օրը ծանոթացման է ներկայացվում հարկ վճարողին (գործադիր մարմնի ղեկավարին) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին, որը պարտավոր է ստորագրել հանձնարարագրի հարկային մարմնի օրինակի վրա՝ հաստատելով, որ ծանուցված է չափագրում իրականացնելու մասին: Ստորագրված օրինակը վերադարձվում է այն ներկայացնող պաշտոնատար անձանց: Չափագրման ընթացքում լիազոր պետական կառավարման համապատասխան մարմնի ներկայացուցչին կամ անկախ փորձագետին ներգրավելու դեպքում նրանք չափագրմանը կարող են մասնակցել միայն լիազոր պետական կառավարման համապատասխան մարմնի ղեկավարի հրամանին կամ հարկային մարմնի ղեկավարի հրամանի կամ հանձնարարագրի համապատասխան լրացմանը հարկ վճարողին կամ նրա պաշտոնատար անձին ծանոթացնելուց անմիջապես հետո: Հանձնարարագիրն ստորագրելուց ու ստանալուց հրաժարվելու դեպքում հանձնարարագրի՝ հարկային մարմնի կողմից կնքված պատճենը հարկ վճարողին է ուղարկվում Օրենսգրքի 339-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով սահմանված կարգով:

6. Սկսված չափագրումն ավարտելու անհնարինության դեպքում (գործունեության ժամանակավոր դադարեցման, տեխնիկական պատճառներով առաջացած պարապուրդների ու չափագրման (գույքագրման) անցկացման անհնարինության, գործադուլների, բնակլիմայական անբարենպաստ պայմանների և համանման այլ հանգամանքների հետևանքով) չափագրումն իրականացնող պաշտոնատար անձինք կազմում են հարկային մարմնի սահմանած ձևով արձանագրություն, որը ստորագրում են չափագրում իրականացնող պաշտոնատար անձինք և հարկ վճարողը (գործադիր մարմնի ղեկավարը) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը: Սույն մասով սահմանված կարգով կազմված արձանագրության հիման վրա հանձնարարագիրը տվող պաշտոնատար անձի հրամանով չափագրման ընթացքը կասեցվում է մինչև կասեցման հիմքի վերացումը: Հարկ վճարողի բնականոն գործունեությունը վերսկսվելու մասին հարկ վճարողը (գործադիր մարմնի ղեկավարը) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը պարտավոր է հայտնել հարկային մարմնին, որի հիման վրա հանձնարարագիրը տվող պաշտոնատար անձի հրամանով չափագրումը փաստացի սկսվում կամ շարունակվում է: Սույն մասում նշված հիմքերով չափագրման ժամանակավոր դադարեցման ժամանակահատվածը չի ներառվում հանձնարարագրով չափագրման իրականացման համար սահմանված ժամանակահատվածի մեջ:

7. Հարկ վճարողի (գործադիր մարմնի ղեկավարի) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի կողմից սույն հոդվածին համապատասխան իրականացվող չափագրման աշխատանքներին խոչընդոտելու, հարկային մարմնի

պաշտոնատար անձանց պահանջով գույքագրումներ իրականացնելուց կամ չափագրման նպատակներին առնչվող անհրաժեշտ փաստաթղթերը տրամադրելուց հրաժարվելու դեպքերում չափագրումն իրականացնող պաշտոնատար անձինք կազմում են արձանագրություն, որը հիմք է հարկ վճարողի (գործադիր մարմնի ղեկավարի) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի նկատմամբ օրենքով սահմանված պատասխանատվություն կիրառելու համար:

8. Օգտակար հանածոների արդյունահանման ֆիզիկական ծավալների չափագրումների իրականացման նպատակով բնօգտագործման վճարի հաշվարկման բազայի չափաքանակների (սահմանափակումների) ստուգում իրականացնող լիազոր մարմինները Կառավարության սահմանած կարգով հարկային մարմնին են տրամադրում վերջին (նախորդ) ստուգման արդյունքում արձանագրված ելակետային տվյալները (համապատասխան կոորդինատային նիշերով): Սույն հոդվածով իրականացված չափագրումների արդյունքներով արձանագրված ելակետային տվյալները (համապատասխան կոորդինատային նիշերով) հարկային մարմինը Կառավարության սահմանած կարգով տրամադրում է բնօգտագործման վճարի հաշվարկման բազայի չափաքանակների (սահմանափակումների) ստուգում իրականացնող լիազոր մարմիններին՝ ստուգումների իրականացման ժամանակ կիրառելու նպատակով:

9. Չափագրման արդյունքում Օրենսգրքի 343-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված ժամկետներում ու կարգով կազմվում և հարկ վճարողին (գործադիր մարմնի ղեկավարին) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին է ներկայացվում նույն հոդվածի 14-րդ մասով սահմանված ձևով ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ արձանագրության նախագիծ, որտեղ չափագրմանը համապատասխան լիազոր մարմնի ներկայացուցչի կամ անկախ փորձագետի ներգրավված լինելու դեպքում նշվում են նաև համապատասխան լիազոր մարմնի ղեկավարի հրապարակած հրամանի կամ հանձնարարագրի հիման վրա չափագրմանը ներգրավված ներկայացուցչի կամ հարկային մարմնի ղեկավարի հրամանով սահմանված կարգով չափագրմանը ներգրավված անկախ փորձագետի տվյալները (անունը, ազգանունը, պաշտոնը): Արձանագրության նախագիծը պարտավոր են ստորագրել նաև չափագրմանը ներգրավված լիազոր պետական կառավարման համապատասխան մարմնի պաշտոնատար անձինք կամ անկախ փորձագետները (չափագրմանը ներգրավված լինելու դեպքում): Օրենսգրքի 343-րդ հոդվածի 11-րդ մասով սահմանված կարգով ու ժամկետներում հարկ վճարողին (գործադիր մարմնի ղեկավարին) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին է ներկայացվում ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը (սույն մասով սահմանված պահանջների պահպանմամբ): Օրենսգրքի 343-րդ հոդվածի 14-րդ մասի 10-րդ կետով սահմանված դրույթներն արձանագրությունում (նախագծում) ներառվում են միայն սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում նշված հարկ վճարողների մոտ չափագրման արդյունքում ապրանքների մնացորդի պակասորդ հայտնաբերելու դեպքում:

10. Ապրանքների մատակարարման և (կամ) պահպանման վայրերում ապրանքների (բացառությամբ հումքի, նյութերի, հիմնական միջոցների և արտարժույթի) մնացորդի պակասորդ (այսուհետ՝ պակասորդ) հայտնաբերելու նպատակով չափագրումը կատարվում է հետևյալ կարգով.

1) պակասորդը որոշվում է քայլերի հետևյալ հաջորդականությամբ.

ա. գույքագրմամբ ապրանքների փաստացի մնացորդի (քանակագումարային) արձանագրում,

բ. ապրանքների փաստաթղթային մնացորդի (քանակագումարային) որոշում,

գ. պակասորդի մեծության որոշում, որն իրենից ներկայացնում է ապրանքների փաստաթղթային և փաստացի մնացորդների դրական տարբերությունը: Սույն կետի կիրառության իմաստով՝ պակասորդի մեծությունը որոշվում է ըստ յուրաքանչյուր ապրանքի՝ հաշվի առնելով նույն ապրանքի տեսակավորման արդյունքում տարբեր տեսակների ապրանքային պակասորդների և ավելցուկների տարբերությունները.

2) հարկային մարմնի պաշտոնատար անձը չափագրումը փաստացի սկսելու օրը հարկ վճարողից (գործադիր մարմնի ղեկավարից) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձից պահանջում է ապրանքի մատակարարման և պահպանման բոլոր վայրերում չափագրում իրականացնող պաշտոնատար անձանց մասնակցությամբ իրականացնել ապրանքների փաստացի մնացորդների գույքագրումներ՝ կազմելով հարկային մարմնի սահմանած ձևով գույքագրմամբ ապրանքների փաստացի մնացորդների վերաբերյալ արձանագրություններ, որոնցում արձանագրվում են գույքագրմամբ ապրանքների փաստացի մնացորդները՝ ըստ մատակարարման և պահպանման առանձին վայրերի, նյութական պատասխանատուների՝ արտացոլված վաճառքի չափման միավորներով.

3) գույքագրմամբ ապրանքների փաստացի մնացորդների վերաբերյալ արձանագրությունները կազմվում են չափագրումը փաստացի սկսելու օրվա դրությամբ՝ երկու օրինակից, որոնք ստորագրում են հարկ վճարողը (գործադիր մարմնի ղեկավարը) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը, նյութական պատասխանատուները և գույքագրմանը մասնակցած՝ չափագրում իրականացնող պաշտոնատար անձինք: Այդ օրվան հաջորդող ժամանակահատվածում՝ մինչև գույքագրման արդյունքների վերաբերյալ արձանագրության կազմումը, ապրանքային մնացորդների փոփոխությունները հաշվառվում են առանձին և չեն մասնակցում ապրանքային մնացորդի պակասորդի հաշվարկմանը.

4) ապրանքների փաստաթղթային մնացորդը որոշվում է քայլերի հետևյալ հաջորդականությամբ.

ա. սկզբնական մնացորդի որոշում: Սկզբնական մնացորդի որոշման համար հիմք են ընդունվում Օրենսգրքով սահմանված կարգով հաշվառված ապրանքների փաստացի մնացորդների վերաբերյալ տվյալները, իսկ դրա բացակայության դեպքում՝ հարկային մարմնի կողմից նախորդ համալիր հարկային ստուգման կամ չափագրման ժամանակ կազմված ապրանքների փաստացի մնացորդների վերաբերյալ արձանագրությունները.

բ. ապրանքների ձեռքբերման կամ արտադրության քանակային մեծությունների որոշում: Հարկ վճարողի ձեռքբերած կամ արտադրած ապրանքների քանակային մեծությունների որոշման համար հիմք են հանդիսանում մատակարարների կամ այլ անձանց դուրս գրած հաշվարկային փաստաթղթերը, հարկ վճարողի դուրս գրած հաշվարկային և վճարային

փաստաթղթերը, մաքսային հայտարարագրերը, տարանցման հայտարարագրերը, ներմուծման հարկային հայտարարագրերը, հսկիչ դրամարկղային մեքենաների կտրոնները, միակողմանի գնման ակտերը (անկախ Օրենսգրքին համապատասխան ծախսը հիմնավորող փաստաթուղթ հանդիսանալու հանգամանքից), երրորդ անձից ստացված տեղեկությունները, հաշվապահական, արտադրատեխնոլոգիական փաստաթղթերը և այլ ներքին հաշվառման տվյալները, ինչպես նաև ձեռք բերած կամ արտադրած, սակայն չփաստաթղթավորված ապրանքների քանակային մեծությունները,

գ. մատակարարված կամ տեղափոխված ապրանքների քանակային մեծությունների որոշում: Հարկ վճարողի մատակարարած կամ տեղափոխած ապրանքների քանակների որոշման նպատակով հիմք են հանդիսանում հարկ վճարողի մատակարարման կամ տեղափոխության ուղեկցող փաստաթղթերը, մաքսային հայտարարագրերը, տարանցման հայտարարագրերը, արտահանման հարկային հայտարարագրերը, հսկիչ դրամարկղային մեքենաներով արձանագրված ֆիսկալային հաստոցները (այդ թվում՝ դրանցում արտացոլված՝ ապրանքների անվանումներին և ապրանքային դիրքերին համապատասխան քանակային ցուցանիշները),

դ. Օրենսգրքի 6-րդ բաժնով սահմանված կորուստների չափերի որոշում,

ե. ապրանքների փաստաթղթային մնացորդը որոշվում է սկզբնական մնացորդին գումարելով սկզբնական մնացորդի արձանագրությունը կազմելու օրվանից մինչև սույն մասին համապատասխան գույքագրման փաստացի մնացորդների արձանագրման օրն ապրանքների ձեռքբերման և արտադրության քանակային մեծությունները՝ հանելով այդ ժամանակաշրջանում մատակարարված (տեղափոխված) ապրանքների քանակային մեծությունները և Օրենսգրքի 6-րդ բաժնով սահմանված չափերին համապատասխան որոշվող ու փաստաթղթերով հիմնավորված կորուստների քանակային մեծությունները.

5) սույն մասով սահմանված կարգով որոշված պակասորդի մեծության (քանակային) կազմում ներառված ապրանքի գնի (ներառյալ՝ անուղղակի հարկերը) որոշման անհնարինության դեպքում ապրանքի գին (արժեք) է համարվում պակասորդը հայտնաբերելու եռամսյակում հարկ վճարողի մոտ երկկողմանի հաշվարկային փաստաթղթերով հիմնավորված նույն ապրանքի վաճառքի (իրացման) միջին կշռված գինը, իսկ դրա բացակայության դեպքում՝ Օրենսգրքով սահմանված անուղղակի եղանակներով որոշված գինը.

6) սույն մասով սահմանված ապրանքների մնացորդի պակասորդի հայտնաբերման կարգը կիրառվում է նաև համալիր հարկային ստուգումների ընթացքում: Սույն կարգի կիրառման իմաստով ապրանքների փաստացի մնացորդի ու փաստաթղթային մնացորդի հաշվարկն ու պակասորդի մեծության որոշումն իրականացվում է միայն հարկ վճարողի կողմից ձեռք բերված կամ արտադրված պատրաստի արտադրանքի և ապրանքների մասով.

7) հարկային մարմնի կողմից իրականացվող համալիր հարկային ստուգումների և ուսումնասիրությունների ընթացքում ապրանքների փաստաթղթային մնացորդը կարող է որոշվել նաև հիմք ընդունելով հարկ վճարողի տրամադրած հաշվապահական հաշվառման համակարգչային ծրագրի միջոցով ստեղծված ֆայլում ներառված տեղեկատվությունը:

(346-րդ հոդվածը խմբ. 21.12.17 ՀՕ-266-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն, լրաց. 21.06.18 ՀՕ-338-Ն)

Հոդված 347. Հանդիպակաց ուսումնասիրությունը

1. Հարկ վճարողների համալիր հարկային ստուգման ընթացքում նրանց հետ գործարքի (գործարքների) կողմ հանդիսացած այլ հարկ վճարողի (վճարողների) մոտ միայն այդ գործարքի (գործարքների) մասով հարկային մարմինը կարող է իրականացնել հանդիպակաց ուսումնասիրություններ՝ գործարքի (գործարքների) կատարման պայմանները, փաստաթղթերը, դրանց տվյալներն ու տեղեկությունները ճշտելու անհրաժեշտության դեպքում:

2. Հարկ վճարողի հանդիպակաց ուսումնասիրության ժամկետը չի կարող գերազանցել տասը անընդմեջ աշխատանքային օրը:

3. Ուսումնասիրությունն իրականացվում է Օրենսգրքի 343-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան տրված հանձնարարագրի հիման վրա, որտեղ նշվում է նաև այն հարկ վճարողի լրիվ անվանումը և ՀՎՀՀ-ն, որի մոտ համալիր հարկային ստուգման ընթացքում անհրաժեշտություն է առաջացել իրականացնելու հանդիպակաց ուսումնասիրություն:

4. Ուսումնասիրության հանձնարարագրի երկու օրինակներն Օրենսգրքի 339-րդ հոդվածի 3-րդ մասով համալիր հարկային ստուգումների համար սահմանված կարգով՝ ուսումնասիրությունը սկսելուց առնվազն մեկ աշխատանքային օր առաջ ներկայացվում է հարկ վճարողին (գործադիր մարմնի ղեկավարին) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին՝ ծանոթացման: Հարկ վճարողն ուսումնասիրության անցկացման մասին ծանուցված է համարվում Օրենսգրքի 339-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված համապատասխան ժամկետներում: Հանձնարարագիրն ստորագրելուց ու ստանալուց հրաժարվելու դեպքում հանձնարարագրի՝ հարկային մարմնի կնքած պատճենը հարկ վճարողին է ուղարկվում Օրենսգրքի 339-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով սահմանված կարգով:

5. Ուսումնասիրության արդյունքում Օրենսգրքի 343-րդ հոդվածի 11-րդ մասով սահմանված ժամկետներում ու կարգով կազմվում և հարկ վճարողին (գործադիր մարմնի ղեկավարին) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին է ներկայացվում ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը (առանց նախագիծ կազմելու), որտեղ չեն ներառվում Օրենսգրքի 343-րդ հոդվածի 14-րդ մասի 10-րդ կետի դրույթները:

6. Հանդիպակաց ուսումնասիրությունն իրականացվում է՝ անկախ հարկ վճարողի մոտ սույն հոդվածի 1-ին մասում

նշված գործարքը (գործարքները) ներառող հաշվետու ժամանակաշրջանները համալիր հարկային ստուգմամբ ստուգված կամ վերստուգված լինելու հանգամանքից:

Հոդված 348. Միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարների հիմնավորվածության ուսումնասիրությունը

1. Միասնական հաշվին մուտքագրման ենթակա՝ ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի, յուրաքանչյուր հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի, Օրենսգրքի 457-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված՝ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումարի, Օրենսգրքի 89-րդ հոդվածի 2-րդ մասի 1-3-րդ կետերով սահմանված գործարքների իրականացման դեպքում ակցիզային հարկի փոխհատուցվող գումարի հիմնավորվածության նպատակով հարկային մարմինը հարկ վճարողի դիմումի հիման վրա իրականացնում է միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարների հիմնավորվածության ուսումնասիրություն:

2. Հարկ վճարողի մոտ սույն հոդվածով սահմանված յուրաքանչյուր ուսումնասիրության ժամկետը ուսումնասիրության հանձնարարագրով կարող է սահմանվել ոչ ավելի, քան 15 անընդմեջ աշխատանքային օր՝ սկսած հարկ վճարողի դիմումը հարկային մարմնի կողմից ստանալու օրվանից: Անհրաժեշտության դեպքում ուսումնասիրություն իրականացնող պաշտոնատար անձի (անձանց) գրավոր զեկուցագրի հիման վրա հանձնարարագիր տվող պաշտոնատար անձի հրամանով սույն մասում նշված ժամկետը կարող է երկարաձգվել մինչև տասը անընդմեջ աշխատանքային օրով: Միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարների հիմնավորվածության ուսումնասիրության ժամկետի երկարաձգման մասին գրավոր տեղեկացվում է հարկ վճարողին (գործադիր մարմնի ղեկավարին) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին՝ ներկայացնելով հրամանի պատճենը ոչ ուշ, քան հանձնարարագրում նշված ուսումնասիրության ժամկետի ավարտի օրը:

3. Միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարների հիմնավորվածության ուսումնասիրությունն իրականացվում է Օրենսգրքի 343-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան տրված հանձնարարագրի հիման վրա: Ուսումնասիրության հանձնարարագրի երկու օրինակներն Օրենսգրքի 339-րդ հոդվածի 3-րդ մասով համալիր հարկային ստուգումների համար սահմանված կարգով ու եղանակներով ուսումնասիրությունն սկսելու օրը ներկայացվում է հարկ վճարողին (գործադիր մարմնի ղեկավարին) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին՝ ծանոթացման: Հարկ վճարողը ուսումնասիրության անցկացման մասին ծանուցված է համարվում Օրենսգրքի 339-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված համապատասխան ժամկետներում: Հանձնարարագիրն ստորագրելուց ու ստանալուց հրաժարվելու դեպքում հանձնարարագրի՝ հարկային մարմնի կնքած պատճենը հարկ վճարողին է ուղարկվում Օրենսգրքի 339-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով սահմանված կարգով:

4. Միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարների հիմնավորվածության ուսումնասիրության ընթացքը, Օրենսգրքի 341-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված հիմքերի առկայության դեպքում, հանձնարարագիր տվող պաշտոնատար անձի հրամանով կարող է կասեցվել նույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված ժամկետներով: Միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարների հիմնավորվածության ուսումնասիրության ընթացքի կասեցումը, կասեցման ժամկետի երկարաձգումը, կասեցված ուսումնասիրության վերսկսելը կատարվում են Օրենսգրքի 341-րդ հոդվածով հարկային ստուգումների համար սահմանված կարգով ու ժամկետներում:

5. Ուսումնասիրության ընթացքում ճշտվում են՝

1) նախորդ ուսումնասիրությունների արդյունքներով չհիմնավորված գումարները, ինչպես նաև այն գումարները, որոնց վերաբերող գործարքների մասով ուսումնասիրության ժամկետը կասեցվել է.

2) հարկ վճարողի ներկայացրած՝ ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկներում ներառված տվյալների արժանահավատությունը.

3) ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների իրացման շրջանառությունը.

4) ձեռքբերումների գծով հարկային հաշիվների համապատասխանությունը Օրենսգրքի պահանջներին.

5) Օրենսգրքի 89-րդ հոդվածի 2-րդ մասի 1-3-րդ կետերով սահմանված գործարքների իրականացման դեպքում ակցիզային հարկի փոխհատուցվող գումարի հիմնավորվածությունը:

6. Ուսումնասիրության արդյունքներով միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարները համարվում են չհիմնավորված, եթե դրանք վերագրվում են Օրենսգրքի 72-րդ և 93-րդ հոդվածներով սահմանված՝ հաշվանցումների (պակասեցումների) կատարման սահմանափակումներին: Սույն մասում նշված գումարների հաշվանցումը համարվում է չհիմնավորված միայն այդ մասով:

7. Սույն հոդվածի 1-ին մասում նշված՝ ԱԱՀ-ի և (կամ) ակցիզային հարկի փոխհատուցվող գումարի, ինչպես նաև Օրենսգրքի 457-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված՝ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումարի մեծության որոշման ժամանակ ուսումնասիրությամբ չհիմնավորված գումարները, ինչպես նաև այն գումարները, որոնց հիմնավորվածության վերաբերյալ ուսումնասիրությունները կամ ստուգումները սահմանված կարգով կասեցվել են, հաշվի չեն առնվում:

8. Միասնական հաշվին մուտքագրման ենթակա՝ ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի, ինչպես նաև Օրենսգրքի 89-րդ հոդվածի 2-րդ մասի 1-3-րդ կետերով սահմանված

գործարքների իրականացման դեպքում ակցիզային հարկի փոխհատուցվող գումարի հաշվարկն իրականացվում է ըստ հաշվետու ժամանակաշրջանների, իսկ յուրաքանչյուր հաշվետու եռամսյակին կամ Օրենսգրքի 457-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված՝ յուրաքանչյուր կիսամյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի կամ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումարի հաշվարկը՝ այդ ժամկետի դրությամբ:

9. Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով միասնական հաշվին մուտքագրման ենթակա է ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի այն մասը, որը չի գերազանցում այդ հաշվետու ժամանակաշրջանում իրականացված՝ ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների հարկման բազայի 20 տոկոսը:

10. Կառավարության սահմանած չափանիշները բավարարող հարկ վճարողների ներկայացրած՝ ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով, ինչպես նաև յուրաքանչյուր հաշվետու եռամսյակին կամ Օրենսգրքի 457-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված դեպքերում յուրաքանչյուր հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի կամ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումարի մինչև 40 միլիոն դրամի հայտերի հիման վրա ԱԱՀ-ի գումարների մուտքագրումը միասնական հաշվին կատարվում է Կառավարության սահմանած պարզեցված ընթացակարգով և ժամկետներում:

11. Ուսումնասիրության արդյունքում Օրենսգրքի 343-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված ժամկետներում ու կարգով կազմվում և հարկ վճարողին (գործադիր մարմնի ղեկավարին) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին է ներկայացվում նույն հոդվածի 14-րդ մասով սահմանված ձևով ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ արձանագրության նախագիծը: Օրենսգրքի 343-րդ հոդվածի 11-րդ մասով սահմանված կարգով ու ժամկետներում կազմվում և հարկ վճարողին (գործադիր մարմնի ղեկավարին) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին է ներկայացվում ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը: Օրենսգրքի 343-րդ հոդվածի 14-րդ մասի 10-րդ կետով սահմանված դրույթներն արձանագրությունում (նախագծում) ներառվում են միայն նույն հոդվածի 5-րդ մասի 6-րդ կետով սահմանված դեպքում:

12. Միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարները կարող են հիմնավորվել նաև համալիր հարկային ստուգումների ընթացքում:

(348-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն, 21.06.18 ՀՕ-338-Ն, 25.06.19 ՀՕ-68-Ն, լրաց., փոփ., խմբ. 23.09.19 ՀՕ-172-Ն)

(348-րդ հոդվածի 1-ին և 8-րդ մասերը 25.06.19 ՀՕ-68-Ն օրենքի 71-րդ հոդվածի համաձայն վերաբերում են 2019 թվականի հուլիսի 1-ից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկներով առաջացող փոխհատուցվող գումարներին:)

Հոդված 349. Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտների կողմից Հայաստանի Հանրապետության աղբյուրներից ստացված եկամուտներից գանձված հարկի գումարը վերադարձնելու և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի դրույթներին համապատասխան օտարերկրյա պետության լիազորված մարմնի հարցումներին պատասխանելու նպատակով իրականացվող ուսումնասիրությունը

1. Հայաստանի Հանրապետության կամ Կառավարության անունից կնքված միջազգային համաձայնագրերի դրույթներին համապատասխան՝ հարկային մարմինը հարկ վճարողների մոտ կարող է իրականացնել ուսումնասիրություն՝

1) օտարերկրյա պետության լիազորված մարմնի հարցումներին պատասխանելու համար՝ օտարերկրյա անձի հետ իրականացված գործարքի կողմ հանդիսացող հարկ վճարողի հաշվառման և տնտեսական գործունեության, նրա հարկային պարտավորությունների, առանձին գործարքների փաստի, իսկության, ծավալների, արժեքի և գների վերաբերյալ տեղեկություններ ճշտելու նպատակով.

2) Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտների կողմից Հայաստանի Հանրապետության աղբյուրներից ստացված եկամուտներից գանձված հարկի գումարը վերադարձնելու նպատակով:

2. Ուսումնասիրություն կատարելու համար հիմք են հանդիսանում՝

1) Հայաստանի Հանրապետության միջազգային համաձայնագրերի պահանջների շրջանակներում և նախատեսված կարգով օտարերկրյա պետության լիազոր մարմնի՝ հարկային մարմնին կատարած պաշտոնական հարցումը.

2) Հայաստանի Հանրապետության կամ Կառավարության անունից կնքված՝ կրկնակի հարկումը բացառելու մասին միջազգային համաձայնագրերի դրույթների հիման վրա Հայաստանի Հանրապետությունում գտնվող աղբյուրներից ստացված եկամուտներից գանձված հարկի գումարը հարկ վճարողին վերադարձնելու անհրաժեշտությունը:

3. Հարկ վճարողի մոտ սույն հոդվածով սահմանված յուրաքանչյուր ուսումնասիրության ժամկետն ուսումնասիրության հանձնարարագրով կարող է սահմանվել ոչ ավելի, քան 15 անընդմեջ աշխատանքային օր:

4. Ուսումնասիրությունն իրականացվում է Օրենսգրքի 343-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան տրված հանձնարարագրի հիման վրա: Ուսումնասիրության հանձնարարագրի երկու օրինակներն Օրենսգրքի 339-րդ հոդվածի 3-րդ մասով համալիր հարկային ստուգումների համար սահմանված կարգով ու եղանակներով, ուսումնասիրությունն

սկսելուց առնվազն մեկ աշխատանքային օր առաջ ներկայացվում է հարկ վճարողին (գործադիր մարմնի ղեկավարին) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին՝ ծանոթացման: Հարկ վճարողը (գործադիր մարմնի ղեկավարը) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն ուսումնասիրության անցկացման մասին ծանուցված է համարվում Օրենսգրքի 339-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված համապատասխան ժամկետներում: Հանձնարարագիրն ստորագրելուց ու ստանալուց հրաժարվելու դեպքում հանձնարարագրի՝ հարկային մարմնի կնքած պատճենը հարկ վճարողին է ուղարկվում Օրենսգրքի 339-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով սահմանված կարգով:

5. Սույն հոդվածով սահմանված ուսումնասիրության ընթացքը, Օրենսգրքի 341-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված հիմքերի առկայության դեպքում, հանձնարարագիր տվող պաշտոնատար անձի հրամանով կարող է կասեցվել նույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված ժամկետներով: Ուսումնասիրության ընթացքի կասեցումը, կասեցման ժամկետի երկարաձգումը, կասեցված ուսումնասիրության վերսկսելը կատարվում են Օրենսգրքի 341-րդ հոդվածով հարկային ստուգումների համար սահմանված կարգով ու ժամկետներում:

6. Ուսումնասիրության ընթացքում ճշտվում են՝

1) գործարքի կողմ հանդիսացող հարկ վճարողի հաշվառման և տնտեսական գործունեության, նրա հարկային պարտավորությունների, առանձին գործարքների փաստի, իսկության, ծավալների, արժեքի և գների վերաբերյալ տեղեկությունները.

2) Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտների կողմից Հայաստանի Հանրապետության աղբյուրներից ստացված եկամուտներից գանձված հարկի գումարը վերադարձնելու հիմնավորվածությունը:

7. Ուսումնասիրության արդյունքում Օրենսգրքի 343-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված ժամկետներում ու կարգով կազմվում և հարկ վճարողին (գործադիր մարմնի ղեկավարին) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին է ներկայացվում նույն հոդվածի 14-րդ մասով սահմանված ձևով ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ արձանագրության նախագիծը: Օրենսգրքի 343-րդ հոդվածի 11-րդ մասով սահմանված կարգով ու ժամկետներում հարկ վճարողին (գործադիր մարմնի ղեկավարին) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին է ներկայացվում ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը: Սույն մասում նշված արձանագրությունում (նախագծում) չեն ներառվում Օրենսգրքի 343-րդ հոդվածի 14-րդ մասի 10-րդ կետի «բ» և «գ» ենթակետերով սահմանված՝ հայտնաբերված խախտումների մասով պատասխանատվության կիրառման և հարկային պարտավորությունների առաջադրման դրույթները:

(349-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Գ Լ ՈՒ Խ 70

ՀԱՐԿԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 350. Հարկային հսկողության ընթացքում օգտագործվող տեղեկությունները

1. Հարկային մարմինը հարկային հսկողություն իրականացնելիս օգտագործում է հետևյալ տեղեկությունները.

1) հարկ վճարողների կողմից իրենց, ինչպես նաև այլ հարկ վճարողների վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով իրենց մոտ առկա կամ պահվող՝ բացառապես հարկերի հաշվարկմանն առնչվող գործարքների, ապրանքների ֆիզիկական ծավալների, դրանց տեղաշարժի, իրացման փաստացի գների, իրենց կողմից և իրենց հաշվին վճարված եկամուտների, պահված հարկերի, գույքի կամ եկամուտների, հարկման նպատակով անհրաժեշտ այլ տվյալների վերաբերյալ տեղեկությունները, որոնք հարկային մարմին են ներկայացվում հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջներին համապատասխան.

2) հարկ վճարողների ներկայացրած հարկային հաշվարկները և հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական այլ ակտերի պահանջներին համապատասխան հարկ վճարողների կողմից հարկային մարմին ներկայացվող տեղեկությունները.

3) Կառավարության սահմանած ցանկում ընդգրկված առանձին ապրանքների արտադրության և շրջանառության ֆիզիկական ծավալների, իրացման փաստացի գների (այդ թվում՝ միջին), ինչպես նաև կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների ծավալների և դրանց փաստացի գների (այդ թվում՝ միջին) վերաբերյալ հաշվետվությունների տվյալները, որոնք Կառավարության սահմանած կարգով հարկ վճարողները պարտավոր են ներկայացնել հարկային մարմին.

4) երրորդ անձի կողմից ներկայացվող տեղեկությունները: Երրորդ անձ է համարվում պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինը, հարկ վճարողը, որը սույն կետով այլ բան սահմանված չլինելու դեպքում՝ Կառավարության սահմանած կարգով, հարկային մարմին է ներկայացնում այլ հարկ վճարողի գործարքի կամ գործառնության կամ գործունեության վերաբերյալ տեղեկություններ: Երրորդ անձի կողմից հարկային մարմին պարտադիր ներկայացվող տեղեկություններն են՝

ա. օրենքով սահմանված կարգով կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի պետական գրանցում (հաշվառում) իրականացնող մարմնի կողմից ներկայացվող տեղեկությունները՝ կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի պետական գրանցման (հաշվառման) վերաբերյալ,

բ. բնակչության պետական ռեգիստր վարող լիազոր մարմնի կողմից ներկայացվող տեղեկությունները՝ տրված անձնագրերի և նույնականացման քարտերի վերաբերյալ,

գ. օրենքով սահմանված կարգով գործունեության տեսակով զբաղվելու թույլտվություն կամ լիցենզիա տվող կամ ծանուցումներ հաշվառող լիազորված մարմնի կողմից ներկայացվող տեղեկությունները՝ տրված թույլտվությունների և (կամ) լիցենզիաների ու հաշվառված ծանուցումների վերաբերյալ,

դ. ստուգումներ իրականացնելու լիազորություն ունեցող մարմինների կողմից հարկ վճարողների մոտ իրականացված այն ստուգումների արդյունքների վերաբերյալ տեղեկությունները, որոնք առնչվում են հարկ վճարողի ֆինանսական կամ տնտեսական գործունեությանը,

ե. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, ինչպես նաև առևտրային բանկերի կողմից ներկայացվող տեղեկատվությունը՝ հաճախորդի բացած բանկային հաշիվների վերաբերյալ: Տեղեկությունները հարկային մարմին ներկայացվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և հարկային մարմնի համատեղ սահմանած կարգով,

զ. գույքի գրանցում (հաշվառում վարող և (կամ) գույքի նկատմամբ իրավունքներն ու սահմանափակումները գրանցող (հաշվառող) համապատասխան լիազոր մարմինների կողմից ներկայացվող տեղեկությունները գույքի, դրանց սեփականատերերի, գույքի նկատմամբ գրանցված իրավունքների, սահմանափակումների ու դրանց փոփոխությունների մասին,

է. «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում և կարգով նոտարի կողմից ներկայացվող տեղեկությունները,

ը. կենտրոնական դեպոզիտարիայի և արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարման իրավունք ունեցող այլ անձանց կողմից հաճախորդի բացած արժեթղթերի հաշիվների և բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի սեփականատերերի վերաբերյալ տեղեկությունները, որոնք տրամադրվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և հարկային մարմնի համատեղ սահմանած կարգով և բովանդակությամբ: Արժեթղթերի հետ կատարված գործարքների վերաբերյալ տեղեկությունները տրամադրվում են «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում և կարգով,

թ. մաքսային մարմնի տրամադրած տեղեկությունները Հայաստանի Հանրապետություն կատարված ներմուծումների, այդ թվում՝ վճարված մաքսային վճարների մասին,

5) ԵՏՄ անդամ պետությունների հարկային մարմինների կողմից ԵՏՄ օրենսդրությանը համապատասխան Հայաստանի Հանրապետության հարկային մարմին ներկայացվող տեղեկությունները.

6) սույն մասի 4-րդ կետում չնշված՝ Հայաստանի Հանրապետության պետական մարմիններից ստացվող տեղեկությունները, որոնք հարկային մարմինը Կառավարության սահմանած դեպքերում և կարգով կարող է ստանալ նաև այդ մարմինների ինքնաշխատ տեղեկատվական բազաներից.

7) քրեական վարույթ իրականացնող մարմինների տրամադրած՝ հարկման համար հիմք հանդիսացող տվյալները.

8) հարկ վճարողների մոտ հաշվառված ապրանքային մնացորդների վերաբերյալ տվյալները.

9) «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան հաշվապահական հաշվառումը համակարգչային ծրագրերով վարելու պարտավորություն ունեցող կազմակերպությունների կողմից վարվող համակարգչային ծրագրի միջոցով ստեղծված ֆայլի պատճենի տվյալները.

10) կամավորության սկզբունքով հարկային մարմնին տրամադրվող տեղեկությունները, որոնք կարող են օգտագործվել բացառապես անուղղակի եղանակներով հարկային պարտավորությունների հաշվարկման ժամանակ.

11) հարկային մարմնի օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հայտնի դարձած տեղեկությունները.

12) օրենքով սահմանված կարգով ստացված այլ տեղեկություններ:

2. Հարկային մարմինն ստացված տեղեկության վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն ստանալու նպատակով կարող է գրավոր հարցում կատարել տեղեկություն ներկայացնողին: Երրորդ անձի կողմից պարտադիր ներկայացվող տեղեկությունների և հարկային մարմնի գրավոր հարցման կապակցությամբ տրամադրվող լրացուցիչ տեղեկատվության ներկայացման կարգերը սահմանում է Կառավարությունը:

3. Հարկ վճարողների ինքնաշխատ տեղեկատվական բազայից հարկային մարմինը սույն հոդվածով սահմանված տեղեկությունները կարող է ստանալ այդ հարկ վճարողների և հարկային մարմնի միջև կնքված համաձայնագրի հիման վրա:

4. Բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները հարկային մարմնին տրամադրվում են օրենքով սահմանված կարգով: Բանկային, առևտրային և հարկային կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք կազմող տեղեկությունները հարկային մարմինը պահպանում է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

(350-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

ԳԼՈՒԽ 71

ԱՆՈՒՂՂԱԿԻ ԵՂԱՆԱԿՆԵՐՈՎ ՀԱՐԿՄԱՆ ԲԱԶԱՆԵՐԻ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Հոդված 351. Անուղղակի եղանակներով հարկման բազաների և հարկային պարտավորությունների գնահատումը

1. Համալիր հարկային ստուգումների ընթացքում հարկային մարմինն անուղղակի եղանակներով իրականացնում է հարկ վճարողի հարկման բազաների և հարկային պարտավորությունների գնահատում (վերագնահատում)՝ հետևյալ հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում.

1) օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվապահական հաշվառման կամ հարկային պարտավորություններին առնչվող հաշվառման բացակայությունը.

2) հարկային պարտավորությունների հաշվարկման համար սահմանված տեղեկությունների կամ փաստաթղթերի չներկայացումը.

3) հաշվապահական հաշվառման համակարգչային ծրագրի միջոցով ստեղծված ֆայլի պատճենն օրենսդրությամբ սահմանված դեպքերում ստուգում իրականացնող պաշտոնատար անձանց էլեկտրոնային կրիչով չտրամադրումը.

4) հարկային մարմին ներկայացրած հարկային հաշվարկներում ոչ հավաստի տվյալների ներառումը:

2. Սույն հոդվածի կիրառության իմաստով՝ հարկային մարմին ներկայացված հարկային հաշվարկներում ներառված տվյալները համարվում են ոչ հավաստի, եթե՝

1) հարկ վճարողի մոտ որևէ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում իրականացված չափագրումների արդյունքներով և հարկ վճարողի կողմից նույն հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացված հարկային հաշվարկների տվյալներով հարկման բազաների հաշվարկված մեծությունների միջև առկա է 20 և ավելի տոկոսի չափով դրական տարբերություն.

2) հարկ վճարողի մոտ որևէ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում իրականացված հսկիչ գնման արդյունքներով և հարկ վճարողի կողմից նույն հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացված հարկային հաշվարկները կազմելու համար հիմք հանդիսացած (այդ թվում՝ հաշվապահական հաշվառման) տվյալներով գների միջև առկա է 20 և ավելի տոկոսի չափով դրական տարբերություն.

3) հարկային հսկողության իրականացման համար հարկային մարմին ներկայացված տեղեկությունների և հարկ վճարողի կողմից նույն ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացված հարկային հաշվարկների հարկման բազաների տվյալների միջև առկա է 20 և ավելի տոկոսի չափով դրական տարբերություն.

4) կախյալ հարկ վճարողների միջև իրականացված՝ հարկման համար հիմք հանդիսացած գործարքների մասով առկա է համեմատելի հանգամանքներում այդ գործարքների համադրելի գներից 20 և ավելի տոկոսի չափով դրական տարբերություն:

3. Սույն հոդվածով սահմանված հասկացությունները կիրառվում են հետևյալ իմաստներով.

1) կախյալ հարկ վճարող՝ հարկ վճարող, որի որոշումները օրենքով չարգելված ձևով կանխորոշվում են մեկ այլ հարկ վճարողի կողմից (այդ թվում՝ Օրենսգրքին համապատասխան փոխկապակցված անձինք).

2) շուկայական գին՝ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գին, որն առաջացել է շուկայում նույն, իսկ դրանց բացակայության դեպքում համանման ապրանքների, նույն աշխատանքների կամ նույն ծառայությունների առաջարկի և պահանջարկի փոխհարաբերության արդյունքում:

4. Հարկային մարմնի կողմից անուղղակի եղանակով հարկման բազաների գնահատման (վերագնահատման) ու հարկային պարտավորությունների հաշվարկման ժամանակ կիրառվում են հետևյալ մեթոդները.

1) համադրելի գների մեթոդ՝ հարկման օբյեկտները և հարկման բազաները գնահատվում (վերագնահատվում) են նույն ապրանքների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ համանման ապրանքների, նույն աշխատանքների կամ նույն ծառայությունների համար համեմատելի հանգամանքներում շուկայական գների հետ համադրելու միջոցով: Համադրելի գների մեթոդի կիրառման հիմնական պայման է հանդիսանում նույն ապրանքների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ համանման ապրանքների, նույն աշխատանքների կամ նույն ծառայությունների համար համեմատելի հանգամանքներում համադրելի շուկայական գների վերաբերյալ սույն հոդվածին համապատասխան ելակետային տվյալների (դրանցից որևէ մեկի) առկայությունը: Համադրելի գների մեթոդի կիրառման ժամանակ դիտարկվող գործարքի շուկայական գնի որոշման նպատակով կարող են կատարվել համադրելի շուկայական գնի ճշգրտումներ՝ հաշվի առնելով դիտարկվող գործարքի և համադրվող գործարքների պայմանները, գործունեության իրականացման վայրը, աշխատողների թիվը, մասնագիտացումը, շրջանառության ծավալները, ծախսերը, եկամուտները, շահութաբերությունը, սակայն ճշգրտման արդյունքում համադրելի շուկայական գինը կարող է նվազեցվել ոչ ավելի, քան 10 տոկոսի չափով.

2) ծախսային մեթոդ՝ հարկման օբյեկտների գնահատման (վերագնահատման) համար ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների շուկայական գինը որոշվում է որպես տվյալ ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գծով ծախս ճանաչվող՝ ձեռք բերելու, վերամշակելու (առկայության դեպքում) և այլ ծախսերի ու հավելագնի հանրագումար: Ծախսային մեթոդի կիրառման հիմնական պայման է հանդիսանում համեմատելի հանգամանքներում նույն ապրանքների, իսկ դրա բացակայության դեպքում՝ համանման ապրանքների, նույն աշխատանքների կամ նույն ծառայությունների մասով մեկ կամ ավելի գործարքների ընթացքում կատարված ծախսերի և հավելագնի վերաբերյալ սույն հոդվածին համապատասխան ելակետային տվյալների (դրանցից որևէ մեկի) առկայությունը: Ծախսային մեթոդի կիրառման ժամանակ դիտարկվող գործարքի շուկայական գնի որոշման նպատակով

կարող են կատարվել համադրելի հավելագնի հիման վրա որոշված շուկայական գնի ճշգրտումներ՝ հաշվի առնելով դիտարկվող գործարքի և համադրվող գործարքների պայմանները, գործունեության իրականացման վայրը, աշխատողների թիվը, մասնագիտացումը, շրջանառության ծավալները, ծախսերը, եկամուտները, շահութաբերությունը, սակայն ճշգրտման արդյունքում համադրելի հավելագնի հիման վրա որոշված շուկայական գինը կարող է նվազեցվել ոչ ավելի, քան 10 տոկոսի չափով.

3) վերավաճառքի գնի մեթոդ՝ հարկման օբյեկտների գնահատման (վերագնահատման) համար ապրանքների շուկայական գինը որոշվում է որպես նույն ապրանքի հետագա վաճառքի (վերավաճառքի) գնի և վերավաճառողի կողմից տվյալ ապրանքի իրացման ծախսերի ու վերավաճառքի հավելագնի տարբերություն՝ առանց հաշվի առնելու վերավաճառողի կողմից տվյալ ապրանքը ձեռք բերելու գինը: Վերավաճառքի գնի մեթոդի կիրառման ժամանակ համադրելի վերավաճառողի հավելագինը հաշվի է առնվում պայմանով, որ ապահովվի նույն, իսկ դրա բացակայության դեպքում՝ համանման մեկ կամ ավելի համադրելի ապրանքների մասով գործարքների դեպքում տվյալ ոլորտի համար սովորաբար կիրառելի շահութաբերությունը: Վերավաճառքի գնի մեթոդի կիրառման հիմնական պայմաններն են տվյալ ապրանքի վաճառքի գնի վերաբերյալ տեղեկատվության բացակայությունը կամ ոչ հավաստի տվյալը, տվյալ ապրանքի վերավաճառքի գնի և վերավաճառողի իրացման ծախսերի առկայությունը.

4) շահույթի բաշխման մեթոդ՝ կախյալ հարկ վճարողների հարկման օբյեկտների գնահատման (վերագնահատման) համար որոշվում է շահույթի այն չափը, որը պետք է բաշխվեր գործարքի մասնակիցների միջև, եթե չլինեին կախյալ: Գործարքից ստացված շահույթի բաշխման մեթոդը նախատեսում է, որ գործարքին մասնակցող կախյալ հարկ վճարողներից յուրաքանչյուրին հատկացվում է տվյալ գործարքից ստացած ընդհանուր շահույթի (եկամտի կամ կրած վնասի) այնպիսի մաս, որը կախյալ չհամարվող անձը կարող էր ակնկալել համադրելի անկախ գործարքին մասնակցելիս: Շահույթի բաշխման մեթոդը կիրառվում է այն դեպքում, երբ գործարքների փոխկապակցվածությամբ պայմանավորված՝ հնարավոր չէ դրանք գնահատել առանձին.

5) զուտ շահույթի մեթոդ՝ կախյալ հարկ վճարողների հարկման օբյեկտների գնահատման (վերագնահատման) համար որոշվում է այն զուտ շահույթը, որը պետք է ստանային գործարքի անկախ մասնակիցները՝ համեմատելի հանգամանքներում: Կախյալ հարկ վճարողների միջև կատարված գործարքների դեպքում ստացվող զուտ շահույթը համադրվում է համեմատելի հանգամանքներում անկախ և նույն, դրա բացակայության դեպքում՝ համանման ապրանքների, նույն աշխատանքների կամ նույն ծառայությունների մասով մեկ կամ մի քանի գործարքներից ստացվող զուտ շահույթի (եկամտի) հետ: Սույն կետի կիրառության իմաստով՝ գործարքներից ստացվող զուտ շահույթ է համարվում այդ գործարքների գծով ստացվող եկամտի և դրանց գծով ծախսերի դրական տարբերությունը.

6) վարձու աշխատողների թվաքանակի մեթոդ՝ հարկման օբյեկտների գնահատման (վերագնահատման) համար որոշվում է տարբեր գործունեության տեսակի աշխատողների թվաքանակի տեսակարար կշիռը (տոկոսային արտահայտությամբ) աշխատողների ընդհանուր թվաքանակի կազմում և այն բազմապատկվում է իրականացված գործունեության ընդհանուր արդյունքում ձևավորված համախառն եկամտի գումարով: Վարձու աշխատողների թվաքանակի մեթոդը կիրառվում է այն ժամանակ, երբ հարկ վճարողի կողմից տարբեր գործունեության տեսակների իրականացման արդյունքում ձևավորված համախառն եկամտի կազմում հստակ չէ, թե կոնկրետ գործունեության տեսակի արդյունքում ստացված եկամուտն ինչ տեսակարար կշիռ է կազմում.

7) չափագրման արդյունքների կիրառման մեթոդ՝ կիրառվում է հարկման բազաների գնահատման (վերագնահատման) համար հարկ վճարողի մոտ որևէ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում իրականացված չափագրումների արդյունքներով և հարկ վճարողի կողմից նույն հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված հարկային հաշվարկների տվյալներով հարկման բազաների հաշվարկված մեծությունների միջև 20 և ավելի տոկոսի չափով դրական տարբերության դեպքում՝

ա. չափագրումների արդյունքների հիման վրա դրական տարբերության չափով ճշգրտվում են այն ամսական կամ եռամսյակային հաշվետու ժամանակաշրջանների հարկային պարտավորությունները, որոնց ընթացքում կատարվել են չափագրումներ, իսկ տարեկան հաշվետու ժամանակաշրջաններ ունեցող հարկային պարտավորությունների վերահաշվարկման համար հաշվի են առնվում միայն սույն ենթակետում նշված ամսական կամ եռամսյակային հաշվետու ժամանակաշրջանների ճշգրտումները,

բ. չափագրման արդյունքների հիման վրա ճշգրտվում են նաև հարկային տարվա այն ամսական կամ եռամսյակային հաշվետու ժամանակաշրջանների հարկային պարտավորությունները, որոնց ընթացքում չեն կատարվել չափագրումներ, եթե հարկային տարվա ընթացքում հարկ վճարողի մոտ առնվազն չորս անգամ կատարվել են միևնույն հաշվետու ամսվան կամ միևնույն հաշվետու եռամսյակին չվերաբերող չափագրումներ ու դրանց միջինացված (միջին թվաբանականով) արդյունքների և հարկ վճարողի կողմից նույն ժամանակաշրջանների համար ներկայացված հարկային հաշվարկներով հաշվարկված հարկման բազաների միջինացված (միջին թվաբանականով) մեծությունների միջև առկա է 20 և ավելի տոկոսի չափով դրական տարբերություն: Տարեկան հաշվետու ժամանակաշրջաններ ունեցող հարկային պարտավորությունների վերահաշվարկման համար չափագրումներ չկատարված ամսական կամ եռամսյակային հաշվետու ժամանակաշրջանների ճշգրտումները կատարվում են սույն ենթակետում նշված տարբերությունների չափով,

գ. ամսական կամ եռամսյակային հաշվետու ժամանակաշրջանների ընթացքում կատարված չափագրումների արդյունքները միջինացվում են չափագրման իրականացման մեկ ժամվա (րոպեները հաշվի չեն առնվում) միջին թվաբանականով և հաշվարկվում են համապատասխանաբար ամսական կամ եռամսյակային հաշվետու ժամանակաշրջանների բոլոր աշխատանքային օրերի համար՝ հաշվի առնելով հարկ վճարողի աշխատանքային ռեժիմը:

Սույն կետի «բ» ենթակետում նշված դեպքում չափագրումների միջինացված արդյունքները հաշվարկվում են համապատասխան ամսական կամ եռամսյակային հաշվետու ժամանակաշրջանների համար սույն ենթակետով սահմանված կարգով հաշվարկված մեծությունների միջին թվաբանականով: Հաշվետու ժամանակաշրջանների հարկային պարտավորությունների ճշգրտման նպատակով տոնական օրերին կատարված չափագրման արդյունքները, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանում հարկ վճարողի գործունեության սահմանված կարգով դադարեցման ժամանակահատվածները հաշվի չեն առնվում.

8) հսկիչ գնումների արդյունքների կիրառման մեթոդ՝ կիրառվում է հարկման օբյեկտների գնահատման (վերագնահատման) համար հարկ վճարողի մոտ որևէ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում օրենքով սահմանված կարգով իրականացված հսկիչ գնման արդյունքների և հարկ վճարողի կողմից նույն հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված հաշվետվությունները կազմելու համար հիմք հանդիսացած (այդ թվում՝ հաշվապահական հաշվառման) տվյալներով գների միջև 20 և ավելի տոկոսի չափով դրական տարբերության դեպքում: Հսկիչ գնման արդյունքների հիման վրա դրական տարբերության չափով ճշգրտվում են այն ամսական կամ եռամսյակային հաշվետու ժամանակաշրջանների հարկային պարտավորությունները, որոնց ընթացքում կատարվել են հսկիչ գնումներ, իսկ տարեկան հաշվետու ժամանակաշրջանների հարկային պարտավորությունների վերահաշվարկման մասով հիմք են ընդունվում միայն սույն կետում նշված ամսական կամ եռամսյակային հաշվետու ժամանակաշրջանների ճշգրտումները: Հսկիչ գնման արդյունքների հիման վրա սույն կետում նշված ճշգրտումները կատարվում են միայն այն ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գծով, որոնց մասով կատարվել են հսկիչ գնումներ:

5. Անուղղակի եղանակով հարկ վճարողի հարկման օբյեկտների գնահատման (վերագնահատման) և հարկային պարտավորությունների հաշվարկման մեթոդների կիրառման համար հիմք են ընդունվում հետևյալ ելակետային տվյալները.

1) հարկային և մաքսային մարմինների տեղեկատվական բազայում, ինչպես նաև հարկ վճարողի հարկային (մաքսային) գործում առկա տեղեկատվությունը, մասնավորապես՝

ա. հարկ վճարողի ներկայացրած հարկային հաշվարկներում արտացոլված տվյալները,

բ. Կառավարության սահմանած ցանկում ընդգրկված օգտակար հանածոների և դրանց արտադրատեսակների, ապրանքների արտադրության և շրջանառության ֆիզիկական ծավալները, ինչպես նաև իրացման փաստացի գները (այդ թվում՝ միջին),

գ. հսկիչ դրամարկղային մեքենաներով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարը,

դ. գործարքների և գործողությունների փաստաթղթավորման նպատակով կիրառվող հաշվարկային փաստաթղթերի (հարկային հաշիվ, ճշգրտող հարկային հաշիվ, հաշիվ վավերագիր, ճշգրտող հաշիվ վավերագիր, հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոն (միայն եկամուտները հիմնավորելու մասով) տվյալները,

ե. ստուգումների և (կամ) ուսումնասիրությունների (այդ թվում՝ հսկիչ գնման արդյունքները), գույքագրման և չափագրման տվյալները,

զ. ԵՏՄ անդամ չհամարվող պետություններից Հայաստանի Հանրապետություն ապրանքների ներմուծման կամ Հայաստանի Հանրապետության սահմանով ԵՏՄ անդամ չհամարվող պետություններ ապրանքների արտահանման դեպքում սահմանված կարգով որոշվող մաքսային արժեքը.

2) Օրենսգրքով սահմանված կարգով հարկային մարմին ներկայացվող (այդ թվում՝ երրորդ անձից ստացված) տեղեկությունները.

3) նույն ապրանքների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ համանման ապրանքների, նույն աշխատանքների կամ նույն ծառայությունների համար համեմատելի հանգամանքներում համադրելի շուկայական գների որոշման համար անհրաժեշտ տեղեկատվությունը, մասնավորապես՝

ա. գույքի գնահատման գործունեություն իրականացնող սուբյեկտների, այլ մասնագիտական (փորձագիտական) կազմակերպությունների (բրոկերների, բորսաների) կողմից ծառայությունների կամ գույքի գնահատված արժեքը,

բ. պետական գնումների և բյուջետային ծախսերի նախահաշիվ կազմելու ժամանակ հիմք ընդունված գները, շինարարական պատվերների (այդ թվում՝ մրցույթների) շրջանակներում նախատեսված շահույթը,

գ. գնացուցակային (կատալոգային) գները, ինտերնետային կայքում տեղադրված, հեռահաղորդակցության, մամուլի և զանգվածային լրատվության միջոցների հրապարակած, ինչպես նաև գովազդային տեղեկությունները,

դ. նույն ապրանքների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ համանման ապրանքների աճուրդային կարգով ձևավորված իրացման գինը,

ե. Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի տեղեկությունները՝ տնտեսության տարբեր ճյուղերում գերիշխող դիրք գրավող կազմակերպությունների կողմից ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների իրացման գների վերաբերյալ,

զ. Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից սահմանված կարգով տրամադրված՝ ապրանքների իրացման միջին գները.

4) քրեական վարույթ իրականացնող մարմինների տրամադրած՝ հարկման համար հիմք հանդիսացող տվյալները.

5) համեմատելի հանգամանքներում գործող հարկ վճարողների կողմից կամ նրանց միջև համապատասխան ժամանակաշրջանում կիրառված գների ու հարկման համար հիմք հանդիսացող այլ ցուցանիշների (այդ թվում՝ ծախսերի, եկամուտների հավելագների, վերադիրների) մասին տվյալները, նույն ապրանքների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ համանման ապրանքների, նույն աշխատանքների կամ նույն ծառայությունների գները.

6) օրենքով սահմանված կարգով ստացված այլ տեղեկություններ:

6. Սույն հոդվածի 4-րդ մասի 7-րդ և 8-րդ կետերով սահմանված մեթոդները կիրառվում են միայն սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված դեպքերում:

7. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված մեթոդների կիրառության իմաստով՝

1) վաճառքի գծով որպես ծախս ճանաչվող՝ ձեռքբերման, վերամշակման և այլ փաստաթղթավորված ծախսերի բացակայության դեպքում հիմք է ընդունվում ձեռնարկատիրական եկամտի մեջ 25 տոկոս շահութահարկով հարկման բազայի հաշվարկային ցուցանիշը.

2) վաճառքի գծով եկամուտների բացակայության դեպքում հիմք է ընդունվում ձեռքբերման, վերամշակման և այլ ծախսերի հանրագումարի նկատմամբ 33.3 տոկոս վերադիրի հաշվարկային ցուցանիշը:

8. Այն դեպքում, երբ բացակայում են հարկ վճարողի կողմից ապրանքների՝ այլ հաշվետու ժամանակաշրջաններում ձեռքբերումը (ստեղծումը) հիմնավորող փաստաթղթերը (տեղեկությունները, տվյալները), այդ ապրանքները համարվում են ձեռք բերված (ստեղծված) ստուգվող ժամանակաշրջանի վերջին հաշվետու (ամիս կամ եռամսյակ) ժամանակաշրջանում, բայց ոչ ուշ, քան այդ ապրանքների օտարման (օգտագործման, ծախսման) հաշվետու ժամանակաշրջանը՝ հաշվի առնելով նաև դրանց ստեղծման առանձնահատկությունները: Այն դեպքում, երբ բացակայում են հարկ վճարողի կողմից ապրանքների՝ ստուգվող ժամանակաշրջանում օտարումը հիմնավորող փաստաթղթերը (տեղեկությունները, տվյալները), այդ ապրանքները համարվում են օտարված ստուգվող ժամանակաշրջանի վերջին հաշվետու (ամիս կամ եռամսյակ) ժամանակաշրջանում, բայց ոչ շուտ, քան այդ ապրանքները ձեռք բերելու հաշվետու ժամանակաշրջանը:

9. Սույն հոդվածով սահմանված ելակետային տվյալների հիման վրա կիրառված որևէ մեթոդի արդյունքը հանդիսանում է հարկային մարմնի կողմից գնահատված (վերագնահատված) հարկման բազա: Հարկային մարմնի կողմից տարբեր մեթոդների կամ միևնույն մեթոդով տարբեր ելակետային տվյալների կիրառմամբ իրարից տարբերվող արդյունքներ (գնահատված (վերագնահատված) հարկման բազա) ստանալու դեպքում, հարկային մարմինը դրանցից ընտրում է նվազագույնը, բացառությամբ այն դեպքերի, երբ անուղղակի եղանակներով հարկային պարտավորությունների հաշվարկը կատարվում է օրենքով սահմանված կարգով քրեական վարույթ իրականացնող և ստուգման իրավասություն ունեցող այլ մարմինների կողմից հարկային մարմին ներկայացվող՝ հարկման համար հիմք հանդիսացող հարկման օբյեկտի (օբյեկտների) և հարկման բազայի (բազաների) հիման վրա, երբ հիմք են ընդունվում միայն այդ տվյալները:

10. Սույն հոդվածի 9-րդ մասին համապատասխան՝ հարկ վճարողի հարկման բազաների գնահատման (վերագնահատման) արդյունքների կիրառման վերաբերյալ որոշումը (եզրակացությունը) ընդունում է հարկային մարմնի՝ ստուգումն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը: Այդ որոշումը կարող է ընդունվել ստուգումը փաստացի սկսվելու օրվանից մինչև ստուգման ավարտի օրն ընկած ժամանակահատվածում:

11. Սույն հոդվածին համապատասխան գնահատված (վերագնահատված) հարկման բազայի (բազաների) հիման վրա հարկ վճարողի հարկային պարտավորությունները հաշվարկվում են Օրենսգրքով սահմանված կարգով: Եթե հարկ վճարողի կողմից հարկային մարմին ներկայացրած հարկային հաշվարկներում արտացոլված հարկման բազաները գերազանցում են սույն հոդվածին համապատասխան որոշված հարկման բազայի չափը, ապա հիմք են ընդունվում հարկ վճարողի հարկային հաշվարկներով ներկայացված տվյալները:

(351-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Գ Լ Ո Ւ Խ 72

ՀԱՐԿԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

Հոդված 352. Տարածքներ կամ շինություններ մուտք գործելը

1. Հարկային հսկողության իրականացման հանձնարարագրում նշված հարցերի շրջանակներում ու նպատակներով հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձինք կարող են հարկ վճարողի ներկայացուցչի մասնակցությամբ անարգել մուտք գործել հարկ վճարողի գործունեության իրականացման համար օգտագործվող տարածքներ կամ շինություններ, կատարել այդ տարածքների կամ շինությունների կամ հարկման օբյեկտների ուսումնասիրություն:

2. Հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձանց նշված տարածքներ կամ շինություններ (բացի բնակելի) մուտք գործելը խոչընդոտելու դեպքում կազմվում է հարկային մարմնի սահմանած ձևով արձանագրություն, որը ստորագրում է հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձը (անձինք) և հարկ վճարողի (գործադիր մարմնի ղեկավարի) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը կամ հարկ վճարողի ներկայացուցիչը: Արձանագրությունն ստորագրելուց հրաժարվելու դեպքում այդ մասին նշում է կատարվում արձանագրությունում:

3. Հարկային հսկողություն իրականացնող մարմնի պաշտոնատար անձանց մուտքը այնպիսի շինություններ, որտեղ բնակվում են ֆիզիկական անձինք՝ առանց դրանցում բնակվող ֆիզիկական անձանց գրավոր թույլտվության, արգելվում է, բացառությամբ այն դեպքերի, երբ այն օգտագործվում է հարկ վճարողի գործունեության համար (միայն այդ

տարածքի մասով):

Հոդված 353. Իրեր, փորձանմուշներ և փաստաթղթեր վերցնելը

1. Հարկային հսկողության շրջանակներում հարկային ստուգում իրականացնող պաշտոնատար անձինք հարկ վճարողի համապատասխան պաշտոնատար անձանց ներկայությամբ կարող են Կառավարության սահմանած կարգով վերցնել հարկային հսկողությանն առնչվող անհրաժեշտ փաստաթղթերի կրկնօրինակներ և իրեր (նյութական կրիչով տվյալ հարկային ստուգմանն առնչվող տեղեկատվություն պարունակող փաստաթղթերի կրկնօրինակ), փորձանմուշներ, իսկ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերում՝ նաև փաստաթղթերի բնօրինակներ՝ չխոչընդոտելով հարկ վճարողի բնականոն աշխատանքին, որոնք մինչև ստուգման կամ ուսումնասիրության ժամկետի ավարտը վերադարձվում են հարկ վճարողին:

2. Իրեր, փորձանմուշներ և փաստաթղթեր վերցնելու վերաբերյալ կազմվում է հարկային մարմնի սահմանած ձևով արձանագրություն, որում նշվում են վերցված իրերի, փորձանմուշների և փաստաթղթերի անվանումները, քանակը, հնարավորության դեպքում՝ նաև դրանց արժեքային մեծությունը: Արձանագրությունն ստորագրում են հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձն ու հարկ վճարողը (գործադիր մարմնի ղեկավարը) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը կամ հարկ վճարողի համապատասխան պաշտոնատար անձը:

3. Այն դեպքերում, երբ առգրավված փաստաթղթերի կրկնօրինակները բավարար չեն հարկային հսկողության միջոցառումների իրականացման համար կամ հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձանց մոտ առկա են բավարար հիմքեր հարկ վճարողի կողմից փաստաթղթերի բնօրինակները ոչնչացնելու, թաքցնելու, փոփոխելու կամ փոխարինելու մտադրությունների մասին, հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձն իրավունք ունի առգրավելու փաստաթղթերի բնօրինակները՝ սույն հոդվածով սահմանված կարգով: Փաստաթղթերի բնօրինակների առգրավման ժամանակ դրանցից պատրաստվում են կրկնօրինակներ, որոնք հաստատվում են հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձի ստորագրությամբ և փոխանցվում են հարկ վճարողին (գործադիր մարմնի ղեկավարին) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին կամ հարկ վճարողի համապատասխան պաշտոնատար անձին:

(353-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն, 21.06.18 ՀՕ-338-Ն)

Հոդված 354. Զննումը

1. Հարկային հսկողության իրականացման շրջանակներում հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձը հարկային հսկողության համար նշանակություն ունեցող հանգամանքների բացահայտման նպատակով իրավունք ունի իրականացնելու հարկ վճարողի տարածքների, շինությունների, փոխադրամիջոցների, փաստաթղթերի և առարկաների զննում: Անհրաժեշտության դեպքում զննման ժամանակ կարող են իրականացվել լուսանկարում, տեսագրում՝ այդ մասին նախապես գրավոր ծանուցելով հարկ վճարողին, փաստաթղթերի պատճենահանում:

(354-րդ հոդվածը լրաց. 21.06.18 ՀՕ-338-Ն)

Հոդված 355. Փորձաքննության ուղարկելը

1. Հարկային հսկողության ընթացքում հարկային հսկողության համար անհրաժեշտ բնագավառների հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով հարկային մարմնի ղեկավարի որոշմամբ նշանակվում է փորձաքննություն:

2. Փորձաքննության արդյունքում փորձագետը տալիս է եզրակացություն: Փորձագետի առջև դրված հարցերը և նրա եզրակացությունը չեն կարող դուրս գալ փորձագետի հատուկ իմացությունների շրջանակներից:

3. Փորձագետն իրավունք ունի ծանոթանալու փորձաքննության առարկային վերաբերող նյութերին, միջնորդություններ ներկայացնելու լրացուցիչ նյութերի տրամադրման համար: Փորձագետը կարող է հրաժարվել եզրակացություն տալուց, եթե նրան տրամադրված նյութերը բավարար չեն, կամ նա չի տիրապետում փորձաքննությունն իրականացնելու համար բավարար գիտելիքների:

4. Կառավարության սահմանած կարգով նախատեսված դեպքերում հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձը փորձաքննության նշանակման մասին տեղեկացնում է հարկ վճարողին (գործադիր մարմնի ղեկավարին) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին (այդ թվում՝ սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված իրավունքների մասին), որի վերաբերյալ կազմվում է հարկային մարմնի սահմանած ձևով արձանագրություն:

5. Փորձաքննության նշանակման և իրականացման դեպքում հարկ վճարողը (գործադիր մարմնի ղեկավարը) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի՝

1) ներկա լինելու փորձաքննությանը և փորձագետին տալու բացատրություններ.

2) լրացուցիչ հարցեր ներկայացնելու՝ դրանց գծով փորձագետի եզրակացությունը ստանալու համար.

3) փորձագետին բացարկ հայտարարելու և դիմելու իր նշած անձանց փորձագետ նշանակելու համար.

4) ծանոթանալու փորձագետի եզրակացությանը:

6. Փորձագետը եզրակացությունը ներկայացնում է իր անունից՝ գրավոր: Փորձագետի եզրակացությունում շարադրվում են նրա կողմից կատարված հետազոտությունները, դրանց արդյունքում կատարված եզրակացությունները և առաջադրված հարցերի հիմնավոր պատասխանները: Եթե փորձագետը փորձաքննության ժամանակ հայտնաբերում է գործին վերաբերող պարագաներ, որոնց վերաբերյալ նրան հարցեր առաջադրված չեն եղել, ապա նա իրավունք ունի դրանց վերաբերյալ եզրակացությունները ևս ներառելու իր եզրակացության մեջ:

7. Փորձագետի եզրակացությունը կամ նրա կողմից եզրակացություն տալու անհնարինության մասին տեղեկանքը ներկայացվում է հարկային հսկողություն իրականացնող անձին, որն իրավունք ունի տալու իր բացատրությունները և առարկությունները, ինչպես նաև փորձագետի համար առաջադրելու նոր հարցադրումներ և դիմելու լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննություն նշանակելու համար:

8. Լրացուցիչ փորձաքննությունը նշանակվում է եզրակացության ոչ բավարար հստակ լինելու կամ ամբողջական չլինելու դեպքում և այն վերապահվում է նույն կամ այլ փորձագետի:

9. Կրկնակի փորձաքննություն նշանակվում է փորձագետի եզրակացության անհիմն լինելու կամ եզրակացության ճիշտ լինելու կասկածների առկայության դեպքում և այն հանձնարարվում է այլ փորձագետի:

10. Սույն հոդվածին համապատասխան փորձաքննության նշանակման, անցկացման և փորձագետի վարձատրության կարգը սահմանում է Կառավարությունը:

(355-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Հոդված 356. Մասնագետի ներգրավումը

1. Հարկային հսկողության իրականացման ընթացքում հարկային մարմինը կարող է ներգրավել մասնագետի:

2. Մասնագետը հարկային հսկողության արդյունքներով չշահագրգռված անձն է, որին հարկային մարմինը ներգրավում է իր նախաձեռնությամբ կամ հարկ վճարողի (գործադիր մարմնի ղեկավարի) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի միջնորդությամբ՝ գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի բնագավառներում նրա մասնագիտական հմտությունները և գիտելիքներն օգտագործելով հարկային հսկողության միջոցառումների իրականացմանն աջակցելու նպատակով:

3. Մասնագետը պետք է տիրապետի բավարար մասնագիտական հմտությունների, գիտելիքների և ներկայացնի գրավոր մասնագիտական կարծիք, որը, սակայն, չի փոխարինում փորձագետի եզրակացությանը:

4. Մասնագետի ներգրավման և վարձատրության կարգը սահմանում է Կառավարությունը:

(356-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Հոդված 357. Թարգմանչի ներգրավումը

1. Հարկային հսկողության գործընթացին մասնակցելու նպատակով հարկային մարմինը կարող է ներգրավել թարգմանչի:

2. Թարգմանիչ է հանդիսանում հարկային հսկողության իրականացման գործընթացում շահագրգռվածություն չունեցող այն անձը, որը տիրապետում է թարգմանության համար անհրաժեշտ լեզվին:

3. Թարգմանիչը նախազգուշացվում է իր պարտականությունների և կեղծ թարգմանության համար պատասխանատվության մասին, որի մասին նշվում է հարկային մարմնի սահմանած ձևով արձանագրությունում, և որը հաստատվում է թարգմանչի ստորագրությամբ:

4. Թարգմանչի ներգրավման և վարձատրության կարգը սահմանում է Կառավարությունը:

(357-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Հոդված 358. Կապարակնքումը

1. Հարկային հսկողության շրջանակներում անհրաժեշտության դեպքում հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձը կարող է կապարակնքել հարկ վճարողի գրասենյակային, առևտրային, արտադրական, պահեստային տարածքները, շինությունները, դրամարկղերը:

2. Սույն հոդվածով սահմանված կապարակնքումն իրականացվում է Կառավարության սահմանած կարգով:

(358-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Հոդված 358.1. Ապրանքների հետագծելիությունն ապահովող էլեկտրոնային սարքերի կիրառումը

1. ԵՏՄ անդամ պետություններից ցամաքային տրանսպորտով Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված ապրանքների՝ մինչև նշանակման վայր (բեռնաթափման վայր) տեղաշարժի նկատմամբ հսկողության իրականացման նպատակով Կառավարության սահմանած կարգով և Կառավարության սահմանած հարկ վճարողների շրջանակի համար կիրառվում են ապրանքների հետագծելիությունն ապահովող էլեկտրոնային սարքեր, որոնք հարկ վճարողներին տրամադրվում են անվճար՝ վերադարձման պայմանով:

(358.1-ին հոդվածը լրաց. 21.12.17 ՀՕ-266-Ն)

Հոդված 359. Հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձանց ապօրինի գործողությունների հետևանքով հարկ վճարողին պատճառված վնասի հատուցումը

1. Հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձանց ապօրինի գործողությունների հետևանքով հարկ վճարողին պատճառված վնասները ենթակա են հատուցման օրենքով սահմանված կարգով՝ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետում:

Գ Լ ՈՒ Խ 73

ՏՐԱՆՍՖԵՐԱՅԻՆ ԳՆԱԳՈՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Հոդված 360. Տրանսֆերային գնագոյացման ընդհանուր դրույթները

1. Սույն գլխի դրույթները սահմանում են տրանսֆերային գնագոյացման հասկացությունը, մեթոդները, համադրելիության գործոնները, փաստաթղթավորման ընթացակարգերը, չվերահսկվող և վերահսկվող գործարքների մասին տեղեկատվության աղբյուրները, ինչպես նաև կարգավորում են տրանսֆերային գնագոյացման հետ կապված մյուս ընթացակարգերը:

2. Հարկային մարմինը սույն գլխով սահմանված հարկային հսկողություն իրականացնելիս պարզում է Օրենսգրքով սահմանված հետևյալ հարկերի և վճարի հաշվարկման ու վճարման ամբողջականությունը, ինչպես նաև պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին համապատասխանությունը.

1) շահութահարկ.

2) ԱԱՀ.

3) Օրենսգրքի 197-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ռոյալթի:

3. Եթե Օրենսգրքով սահմանված հարկերի և (կամ) վճարների հաշվարկման և վճարման համար Օրենսգրքով սահմանված են ապրանքների մատակարարման, ոչ նյութական ակտիվների օտարման, աշխատանքների կատարման և (կամ) ծառայությունների մատուցման հարկման բազաների որոշման այլ կարգավորումներ, ապա վերահսկվող գործարքների հարկման բազաները որոշելիս սույն գլխով սահմանված տրանսֆերային գնագոյացման կարգավորումների փոխարեն կիրառվում են այդ կարգավորումները:

Հոդված 361. Կիրառվող հասկացությունները

1. Սույն գլխում հիմնական հասկացություններն ունեն հետևյալ իմաստը.

1) **բաժնային արժեթղթեր**՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված արժեթուղթ.

2) **ֆինանսական ցուցանիշ**՝ մասնավորապես գին, հավելագին, համախառն, գործառնական կամ զուտ շահույթի գործակից, որը վերլուծվում է Օրենսգրքի 368-րդ հոդվածով սահմանված՝ տրանսֆերային գնագոյացման մեթոդները կիրառելիս.

3) **տրանսֆերային գնագոյացում**՝ Օրենսգրքի 363-րդ հոդվածով սահմանված վերահսկվող գործարքներում սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված ֆինանսական ցուցանիշների որոշման ընթացակարգ.

4) **պարզած ձեռքի հեռավորության տիրույթ**՝ Օրենսգրքի 371-րդ հոդվածի համաձայն որոշված ֆինանսական ցուցանիշների տիրույթ.

5) **հարկման հատուկ ազատական համակարգեր ունեցող երկիր (աշխարհագրական տարածք)**՝ Կառավարության սահմանած հարկման հատուկ ազատական համակարգեր ունեցող երկիր (աշխարհագրական տարածք).

6) **պարզած ձեռքի հեռավորության սկզբունք**՝ ապրանքների մատակարարման, ոչ նյութական ակտիվների օտարման, աշխատանքների կատարման և (կամ) ծառայությունների մատուցման գործարքների գնահատման սկզբունք, համաձայն որի Օրենսգրքի 363-րդ հոդվածով սահմանված վերահսկվող գործարքներում կիրառված՝ սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված ֆինանսական ցուցանիշները չեն տարբերվում սույն հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով սահմանված համադրելի չվերահսկվող գործարքներում կիրառված ֆինանսական ցուցանիշներից.

7) **վերլուծության ենթակա կողմ**՝ վերահսկվող գործարքի կողմ, որի համար ֆինանսական ցուցանիշը վերլուծվում

է վերավաճառքի գնի, ծախսումներ գումարած և զուտ շահույթի մեթոդները կիրառելիս.

8) **վերլուծության ենթակա օտարերկրյա կողմ**՝ վերլուծության ենթակա կողմ, որը չի համարվում ռեզիդենտ կազմակերպություն կամ ֆիզիկական անձ կամ մշտական հաստատություն.

9) **համադրելի չվերահսկվող գործարք**՝ Օրենսգրքի 363-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ չվերահսկվող գործարք, որը Օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, համադրելի է վերահսկվող գործարքին.

10) **համադրելիության ճշգրտում**՝ համապատասխան ֆինանսական ցուցանիշի ճշգրտում՝ Օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասի և 366-րդ հոդվածի համաձայն.

11) **ներքին չվերահսկվող գործարք**՝ Օրենսգրքի 363-րդ հոդվածի համաձայն՝ վերահսկվող համարվող գործարքի կողմերից մեկի և Օրենսգրքի 362-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ փոխկապակցված չհամարվող հարկ վճարողների միջև իրականացված գործարք.

12) **արտաքին չվերահսկվող գործարք**՝ Օրենսգրքի 362-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ փոխկապակցված չհամարվող հարկ վճարողների միջև իրականացված գործարք, որի կողմերից ոչ մեկը չի հանդիսանում վերահսկվող գործարքի կողմ:

(361-րդ հոդվածը խմբ. 21.12.17 ՀՕ-266-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Հոդված 362. Փոխկապակցված հարկ վճարողները

1. Սույն գլխի կիրառության իմաստով՝ երկու և ավելի հարկ վճարողներ համարվում են փոխկապակցված, եթե՝

1) հարկ վճարողներից մեկը ուղղակի կամ անուղղակի կերպով մասնակցում է մյուս հարկ վճարողի կառավարմանը, վերահսկմանը կամ մասնակցություն (բաժնետոմս, բաժնեմաս, փայաբաժին) ունի մյուսի կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում.

2) միևնույն հարկ վճարողն ուղղակի կամ անուղղակի կերպով մասնակցում է երկու և ավելի հարկ վճարողների կառավարմանը, վերահսկմանը կամ մասնակցություն (բաժնետոմս, բաժնեմաս, փայաբաժին) ունի դրանց կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում:

2. Սույն հոդվածի 1-ին մասի կիրառության իմաստով՝ համարվում է, որ հարկ վճարողը ուղղակի կամ անուղղակի կերպով մասնակցում է մյուս հարկ վճարողի կառավարմանը, վերահսկմանը կամ մասնակցություն (բաժնետոմս, բաժնեմաս, փայաբաժին) ունի մյուս հարկ վճարողի կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում, եթե՝

1) հարկ վճարողին ուղղակի կամ անուղղակի կերպով պատկանում են մյուս հարկ վճարողի կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի 20 տոկոս և ավելի բաժնետոմսերը, բաժնեմասը, փայաբաժինը.

2) հարկ վճարողը գործնականում վերահսկում է մյուս հարկ վճարողի գործարար որոշումները:

3. Սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի կիրառության իմաստով՝ հարկ վճարողը գործնականում վերահսկում է մյուս հարկ վճարողի գործարար որոշումները՝ անկախ տվյալ հարկ վճարողի կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում մասնակցությունից, եթե հետևյալ պայմաններից որևէ մեկը բավարարվում է.

1) հարկ վճարողը ուղղակի կամ անուղղակի կերպով տիրապետում կամ վերահսկում է մյուս հարկ վճարողի ձայնի իրավունք տվող բաժնային արժեթղթերի 20 և ավելի տոկոսը.

2) հարկ վճարողն ուղղակի կամ անուղղակի կերպով վերահսկում է մյուս հարկ վճարողի գործադիր խորհրդի կամ տնօրենների խորհրդի ձևավորման (ընտրման) գործընթացը.

3) հարկ վճարողի կողմից մյուս հարկ վճարողին ուղղակի կամ անուղղակի կերպով տրամադրված և (կամ) երաշխավորված փոխառությունների գումարի հանրագումարը գերազանցում է վերջինիս ընդհանուր ակտիվների հաշվեկշռային արժեքի 51 տոկոսը.

4) հարկային տարում հարկ վճարողի ձեռնարկատիրական եկամուտների 80 տոկոսից ավելին ստացվել է մյուս հարկ վճարողին ապրանքների մատակարարման, նրա համար աշխատանքների կատարման և (կամ) նրան ծառայությունների մատուցման գործարքներից, բացառությամբ գույքի վարձակալության և (կամ) անհատույց օգտագործման, ոչ նյութական ակտիվների օտարման գործարքներից ստացվող եկամուտների և տոկոսների.

5) հարկային տարում հարկ վճարողի ծախսերի 80 տոկոսից ավելին կատարվել է մյուս հարկ վճարողից ապրանքների ձեռքբերման, աշխատանքների ընդունման և (կամ) ծառայությունների ստացման գործարքներից, բացառությամբ գույքի վարձակալության և (կամ) անհատույց օգտագործման, ոչ նյութական ակտիվների ձեռքբերման և տոկոսների վճարման գործարքներից առաջացող ծախսերի.

6) հարկ վճարողները կնքել են Օրենսգրքի 31-րդ հոդվածով սահմանված համատեղ գործունեության պայմանագիր, որով տվյալ հարկ վճարողն իր ակտիվների 50 տոկոսից ավելին ներդրել է համատեղ գործունեության մեջ.

7) հարկ վճարողները կնքել են գույքի անհատույց օգտագործման պայմանագիր, որով հարկ վճարողը (փոխառուն) մեկ տարուց ավելի ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով օգտագործում է մյուս հարկ վճարողի (փոխատուի) գույքը, և այդ գույքի արժեքը գերազանցում է փոխառուի ընդհանուր ակտիվների հաշվեկշռային արժեքի 51 տոկոսը: Սույն կետը կիրառվում է նաև գույքի վարձակալության և ֆինանսական վարձակալության (լիզինգ) պայմանագրերի դեպքում:

4. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով սահմանված փոխկապակցվածության չափորոշիչներին չբավարարող հարկ վճարողները համարվում են չփոխկապակցված:

Հոդված 363. Վերահսկվող գործարքներ

1. Սույն գլխի կիրառության իմաստով՝ ապրանքների մատակարարման, ոչ նյութական ակտիվների օտարման, աշխատանքների կատարման և (կամ) ծառայությունների մատուցման գործարքը համարվում է վերահսկվող, եթե գործարքը կատարվում է Օրենսգրքի 362-րդ հոդվածով սահմանված փոխկապակցված հարկ վճարողների միջև, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված դեպքերի:

2. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ համարվող փոխկապակցված հարկ վճարողների միջև իրականացված՝ ապրանքների մատակարարման, ոչ նյութական ակտիվների օտարման, աշխատանքների կատարման և (կամ) ծառայությունների մատուցման գործարքը համարվում է վերահսկվող՝ հետևյալ դեպքերում.

1) գործարքի կողմերից մեկը, Օրենսգրքի 198-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, համարվում է ռոյալթի վճարող.

2) գործարքի կողմերից մեկը օգտվում է Օրենսգրքով՝ շահութահարկի, ԱԱՀ-ի և (կամ) ռոյալթիի գծով սահմանված հարկային արտոնություններից.

3) գործարքի կողմերից մեկը համարվում է «Ազատ տնտեսական գոտիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված՝ ազատ տնտեսական գոտու շահագործող:

3. Ռեզիդենտ հարկ վճարողի և հարկման հատուկ ազատական համակարգեր ունեցող երկրներում (աշխարհագրական տարածքներում) գրանցված հարկ վճարողների միջև իրականացվող գործարքը, անկախ այդ հարկ վճարողների փոխկապակցվածության հանգամանքից, համարվում է վերահսկվող:

4. Սույն գլխի կիրառության իմաստով՝ ապրանքների մատակարարման, ոչ նյութական ակտիվների օտարման, աշխատանքների կատարման և (կամ) ծառայությունների մատուցման գործարքը համարվում է չվերահսկվող, եթե այն իրականացվել է Օրենսգրքի 362-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, փոխկապակցված չհամարվող հարկ վճարողների միջև, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված գործարքների:

5. Սույն հոդվածի դրույթների համաձայն՝ վերահսկվող համարվող գործարքների նկատմամբ սույն գլխով սահմանված տրանսֆերային գնագոյացման կարգավորումները կիրառվում են, եթե հարկ վճարողի՝ հարկային տարվա ընթացքում իրականացրած բոլոր վերահսկվող գործարքների հանրագումարը գերազանցում է 200 միլիոն դրամը:

(363-րդ հոդվածը խմբ. 21.12.17 ՀՕ-266-Ն)

Հոդված 364. Պարզած ձեռքի հեռավորության սկզբունքը

1. Եթե հարկ վճարողն իրականացնում է Օրենսգրքի 363-րդ հոդվածով սահմանված վերահսկվող գործարք, ապա հարկ վճարողի՝ շահութահարկով հարկման բազան, ԱԱՀ-ով հարկման բազան և (կամ) ռոյալթիի բազան որոշվում են պարզած ձեռքի հեռավորության սկզբունքի համաձայն որոշված գների կամ այլ ֆինանսական ցուցանիշների հիման վրա:

2. Մեկ կամ ավելի վերահսկվող գործարքներում ներգրավված հարկ վճարողի՝ շահութահարկով հարկման բազան, ԱԱՀ-ով հարկման բազան և (կամ) ռոյալթիի բազան համապատասխանում է պարզած ձեռքի հեռավորության սկզբունքի համաձայն որոշված գներին կամ այլ ֆինանսական ցուցանիշներին, եթե այդ գործարքների պայմանները չեն տարբերվում այն պայմաններից, որոնք կկիրառվեին համադրելի չվերահսկվող գործարքներում:

3. Եթե վերահսկվող գործարքում ստեղծվում կամ առաջանում է այնպիսի պայման, որը չի համապատասխանում պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին, ապա՝

1) շահութահարկով հարկման բազայի ցանկացած լրացուցիչ գումար կամ հարկային վնասի ցանկացած նվազեցում (այսուհետ սույն գլխում՝ շահութահարկի հարկման բազա), որը կարող էր առաջանալ հարկ վճարողի մոտ, եթե վերահսկվող գործարքի պայմանները համապատասխանեին պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին, սակայն չի առաջացել վերահսկվող գործարքի պայմանների՝ պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին անհամապատասխանության պատճառով, հարկային մարմնի կողմից ներառվում է հարկ վճարողի շահութահարկով հարկման բազայի մեջ.

2) ԱԱՀ-ով հարկման բազայի ցանկացած լրացուցիչ գումար, որը կարող էր առաջանալ հարկ վճարողի մոտ, եթե վերահսկվող գործարքի պայմանները համապատասխանեին պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին, սակայն չի առաջացել վերահսկվող գործարքի պայմանների՝ պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին անհամապատասխանության պատճառով, հարկային մարմնի կողմից ներառվում է հարկ վճարողի ԱԱՀ-ով հարկման բազայի մեջ՝ Օրենսգրքի 61-րդ և 62-րդ հոդվածների դրույթներին համապատասխան.

3) ռոյալթիի բազայի ցանկացած լրացուցիչ գումար, որը կարող էր առաջանալ հարկ վճարողի մոտ, եթե վերահսկվող գործարքի պայմանները համապատասխանեին պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին, սակայն չի առաջացել վերահսկվող գործարքի պայմանների՝ պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին անհամապատասխանության պատճառով, հարկային մարմնի կողմից ներառվում է հարկ վճարողի ռոյալթիի բազայի մեջ:

4. Գործարքի պայմանները, մասնավորապես ներառում են այն ֆինանսական ցուցանիշը, որը վերլուծվում է համապատասխան տրանսֆերային գնագոյացման մեթոդը կիրառելիս:

Հոդված 365. Գործարքների համադրելիությունը

1. Չվերահսկվող գործարքը համադրելի է վերահսկվող գործարքի հետ, եթե՝

1) դրանց միջև սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված համադրելիության գործոնների մասով չկան այնպիսի էական տարբերություններ, որոնք կարող են էապես ազդել տրանսֆերային գնագոյացման համապատասխան մեթոդով քննության ենթակա ֆինանսական ցուցանիշների վրա, կամ

2) առկա են սույն մասի 1-ին կետով սահմանված տարբերությունները, և չվերահսկվող գործարքի համապատասխան ֆինանսական ցուցանիշը ենթարկվել է ճշգրտման՝ համադրելիության վրա դրանց ազդեցությունը վերացնելու նպատակով:

2. Երկու կամ ավելի գործարքների համադրելիությունը պարզելու նպատակով հաշվի են առնվում, մասնավորապես, հետևյալ գործոններն այնքանով, որքանով դրանք տնտեսական առումով վերաբերում են գործարքների փաստերին ու հանգամանքներին.

1) գործարքի առարկայի բնութագիրը, մասնավորապես՝

ա. ապրանքների դեպքում կարող է ներառել ֆիզիկական հատկանիշները, որակը, հուսալիությունը, մատակարարման հասանելիությունը (առկայությունը շուկայում) և ծավալը,

բ. աշխատանքների և ծառայությունների դեպքում կարող է ներառել աշխատանքի և ծառայության բնույթն ու ծավալը, օգտագործված տեխնիկական գիտելիքներն ու հմտությունները, ոչ նյութական ակտիվների ներգրավումը,

գ. ֆինանսական գործարքների դեպքում կարող է ներառել գործարքի տևողությունը, վարկերի տրամադրման և դադարեցման ամսաթիվը, մայր գումարի չափը, արժույթը, երաշխիքները, վարկառուի վճարունակությունը, տոկոսադրույքը,

դ. ոչ նյութական ակտիվների դեպքում կարող է ներառել գործարքի տեսակը (լիցենզավորում կամ վաճառք), ոչ նյութական ակտիվի տեսակը (արտոնագիր, ապրանքային նշան կամ նոու-հաու), տևողությունը, պաշտպանության աստիճանը, ապագա ակնկալվող օգուտները.

2) գործարքի կողմերի իրականացրած գործառույթները, օգտագործված ակտիվներն ու կրած ռիսկերը, մասնավորապես՝

ա. գործառույթները, մասնավորապես, նախագծում, արտադրություն, տեղակայում, հետազոտություն և զարգացում, սպասարկում, կոմպլեկտավորում, ձեռքբերում, կառավարում, փորձարկում և որակի հսկողություն, իրացում, մարկետինգ, գովազդ, պահեստավորում, մանրածախ և (կամ) մեծածախ վաճառք կամ ներքին օգտագործում, փոխադրում, ֆինանսավորում, կառավարում, երաշխիքային սպասարկում, ապահովագրություն,

բ. ակտիվները, մասնավորապես, օգտագործված արտադրական սարքավորումները, ոչ նյութական ակտիվները, ֆինանսական ակտիվները, ինչպես նաև հաշվի են առնվում օգտագործված ակտիվների տարիքը, շուկայական արժեքը, գտնվելու վայրը,

գ. ռիսկերը, մասնավորապես, արտադրական ռիսկերը, շուկայական ռիսկերը, ռիսկերը՝ կապված ներդրումների կորստի հետ, հետազոտության և զարգացման ոլորտում ներդրման հաջողությանը կամ ձախողմանն առնչվող ռիսկերը, ֆինանսական ռիսկերը՝ կապված տարադրամի փոխարժեքային տատանումների հետ, պաշարների արժեզրկման ռիսկերը, բնապահպանական ռիսկերը, վարկային ռիսկերը.

3) գործարքների պայմանագրային պայմանները, մասնավորապես, գործարքի ծավալները, փոխհատուցման ձևը և ժամկետները, տրամադրված երաշխիքների շրջանակը և պայմանները, համապատասխան լիցենզիաների, պայմանագրերի կամ այլ համաձայնագրերի առկայությունը և տևողությունը.

4) տնտեսական հանգամանքները, որոնց պայմաններում գործարքներն իրականացվել են, մասնավորապես, աշխարհագրական շուկաների նմանությունը, յուրաքանչյուր շուկայի չափը և վերջինիս տնտեսական զարգացման մակարդակը, շուկայի մակարդակը (մանրածախ կամ մեծածախ), գտնվելու վայրով պայմանավորված արտադրության և իրացման ծախսերը, համապատասխան ապրանքների կամ ծառայությունների շուկաներում առկա մրցակցության մակարդակը, արտադրության տվյալ ճյուղի տնտեսական վիճակը, արտադրական և տրանսպորտային ենթակառուցվածքների զարգացման մակարդակը, գնագոյացման գործընթացներին պետական միջամտության մակարդակը, սպառողի անգնողունակությունը, այլ հանգամանքներ, որոնք կարող են ազդել գործարքի պայմանների վրա.

5) գործարքների մասով փոխկապակցված հարկ վճարողների որդեգրած գործարար ռազմավարությունները, մասնավորապես, նոր շուկաներ ներթափանցելուն առնչվող ռազմավարությունները, գործունեության ոլորտների բազմազանեցումը (տարբերակումը), նորարարությունների ներմուծումը, ռիսկերի կանխումը, քաղաքական փոփոխությունները:

Հոդված 366. Համադրելիության ճշգրտումներ

1. Օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված ճշգրտումը պետք է նախատեսվի միայն այն դեպքում, եթե ակնկալվում է, որ այն կբարձրացնի չվերահսկվող գործարքների ֆինանսական ցուցանիշների հուսալիությունը՝ հաշվի առնելով հետևյալ գործոնները.

1) տարբերությունների էականությունը, որի համար նախատեսվում է իրականացնել համադրելիության ճշգրտում.

2) այն տեղեկատվության որակը, որոնց հիման վրա նախատեսվում է իրականացնել համադրելիության ճշգրտում.

3) համադրելիության ճշգրտման նպատակը.

4) համադրելիության ճշգրտում իրականացնելու մոտեցման հուսալիությունը:

2. Համադրելիության ճշգրտումը մասնավորապես կարող է ներառել հետևյալը.

1) ճշգրտումներ, որոնք նախատեսված են վերացնել վերահսկվող և չվերահսկվող գործարքների միջև տարբերությունները, որոնք առաջացել են հաշվապահական տարբեր քաղաքականությունների կիրառության հետևանքով.

2) ճշգրտումներ, որոնք նախատեսված են վերացնել տարբերությունները՝ պայմանավորված գործարկված կապիտալով, իրականացված գործառույթներով, օգտագործված ակտիվներով և կրած ռիսկերով.

3) ճշգրտումներ, որոնք նախատեսված են վերացնել տարբեր աշխարհագրական շուկաներով պայմանավորված տարբերությունները:

Հոդված 367. Չվերահսկվող գործարքների մասին տեղեկատվության աղբյուրները

1. Չվերահսկվող գործարքների մասին տեղեկատվության աղբյուրները կարող են ներառել Օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 12-րդ կետերով սահմանված ներքին և արտաքին չվերահսկվող գործարքները, ինչպես նաև սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված տեղեկատվության այլ աղբյուրները:

2. Եթե չվերահսկվող գործարքի մասին, որպես տեղեկատվության աղբյուր, հավասար արժանահավատությամբ կարող են օգտագործվել Օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 12-րդ կետերով սահմանված ներքին և արտաքին չվերահսկվող գործարքները, ապա, որպես տեղեկատվության աղբյուր, պետք է օգտագործել ներքին չվերահսկվող գործարքները:

3. Չվերահսկվող գործարքների մասին, որպես տեղեկատվության այլ աղբյուրներ, կարող են օգտագործվել, մասնավորապես՝

1) հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերով սահմանված կարգով հարկային մարմին ներկայացվող տեղեկատվությունը, եթե այն չի համարվում հարկային գաղտնիք.

2) Կառավարության հաստատած՝ տեղեկատվական բազաների ցանկում ընդգրկված՝ ֆինանսական և այլ տեղեկատվություն պարունակող տեղեկատվական բազաները.

3) արտաքին առևտրի վերաբերյալ հրապարակված մաքսային վիճակագրությունը.

4) պետական կառավարման մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնական տեղեկատվության աղբյուրներում հրապարակված տեղեկատվությունը.

5) Կառավարության սահմանած ցանկում ընդգրկված օգտակար հանածոների և դրանց արտադրատեսակների, ապրանքների արտադրության և շրջանառության ֆիզիկական ծավալները, ինչպես նաև իրացման փաստացի գները (այդ թվում՝ միջին).

6) Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակված տեղեկատվությունը.

7) օրենքով սահմանված կարգով որոշված՝ անշարժ գույքի արժեքը:

4. Հարկային մարմինը չի կարող հիմնվել չվերահսկվող գործարքի վրա՝ Օրենսգրքի 364-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթների համաձայն ճշգրտումներ կատարելու նպատակով, եթե գործարքի պայմանները համարվում են հարկային գաղտնիք:

5. Հայաստանյան կողմի ներգրավվածությամբ չվերահսկվող գործարքների վերաբերյալ տեղեկությունների բացակայության դեպքում օտարերկրյա համադրելիների օգտագործումը ընդունելի է, եթե տրանսֆերային գնագոյացման համապատասխան մեթոդով քննության ենթակա ֆինանսական ցուցանիշի վրա տնտեսական հանգամանքների և (կամ) այլ համադրելիության գործոնների ազդեցությունը վերլուծվել է, և անհրաժեշտության դեպքում, Օրենսգրքի 365-րդ հոդվածի համաձայն, իրականացվել է համադրելիության ճշգրտում:

(367-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Հոդված 368. Տրանսֆերային գնագոյացման մեթոդները

1. Տրանսֆերային գնագոյացման մեթոդներն են՝

1) համադրելի չվերահսկվող գնի մեթոդը, որի դեպքում վերահսկվող գործարքի առարկայի գինը համեմատվում է համադրելի չվերահսկվող գործարքի առարկայի գնի հետ.

2) վերավաճառքի գնի մեթոդը, որի դեպքում վերահսկվող գործարքի առարկայի վերավաճառքից ստացված հավելագինը համեմատվում է համադրելի չվերահսկվող գործարքի առարկայի վերավաճառքից ստացված հավելագնի հետ.

3) «ծախսումներ գումարած» մեթոդը, որի դեպքում վերահսկվող գործարքի առարկայի մատակարարման ընթացքում կատարված ուղղակի և անուղղակի ծախսերի նկատմամբ կիրառված հավելագինը համեմատվում է համադրելի չվերահսկվող գործարքի առարկայի մատակարարման ընթացքում կատարված ուղղակի և անուղղակի ծախսերի նկատմամբ կիրառված հավելագնի հետ.

4) զուտ շահույթի մեթոդ, որի դեպքում վերահսկվող գործարքի արդյունքում համապատասխան բազայի,

մասնավորապես, ծախսումների, իրացումների, ակտիվների նկատմամբ ստացված զուտ շահույթը համեմատվում է համադրելի չվերահսկվող գործարքի արդյունքում միևնույն բազայի նկատմամբ ստացված զուտ շահույթի հետ.

5) շահույթի բաշխման մեթոդ, որի դեպքում վերահսկվող գործարքին մասնակցող փոխկապակցված հարկ վճարողներից յուրաքանչյուրին հատկացվում է տվյալ գործարքից ստացված շահույթի կամ վնասի այն մասնաբաժինը, որը փոխկապակցված չհամարվող անձը կարող էր ակնկալել համադրելի չվերահսկվող գործարքին մասնակցելիս: Սույն կետի կիրառության իմաստով՝ գործարքից ստացվող շահույթ է համարվում այդ գործարքի գծով ստացվող եկամտի և դրա գծով ծախսերի դրական տարբերությունը:

2. Տրանսֆերային գնագոյացման մեթոդների կիրառման առանձնահատկություններն են՝

1) սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ համադրելի չվերահսկվող գնի մեթոդը կարող է կիրառվել, մասնավորապես, երբ վերահսկվող գործարքը իրենից ներկայացնում է ապրանքի մատակարարում, ոչ նյութական ակտիվի օտարում կամ ֆինանսական գործարք.

2) սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված՝ վերավաճառքի գնի մեթոդը կարող է կիրառվել, մասնավորապես, երբ վերավաճառողը վերահսկվող գործարքում ձեռք բերված ապրանքների վերավաճառքի ընթացքում որևէ էական հավելյալ արժեք չի ավելացրել վերավաճառվող ապրանքի վրա.

3) սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ «ծախսումներ գումարած» մեթոդը կարող է կիրառվել, մասնավորապես, երբ մատակարարը վերահսկվող գործարքում մատակարարած ապրանքի կամ մատուցած ծառայության դեպքում չի օգտագործել արժեքավոր նյութական ակտիվներ կամ կրել էական ռիսկեր.

4) սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված՝ զուտ շահույթի մեթոդը կիրառելիս անհրաժեշտ է հաշվարկել վերահսկվող գործարքի բնութագրին առավել համապատասխան ֆինանսական ցուցանիշը, մասնավորապես՝

ա. ծախսումների նկատմամբ զուտ շահույթի գործակիցը հաշվարկվում է, մասնավորապես, երբ վերահսկվող գործարքը արտադրություն կամ ծառայության մատուցում է,

բ. իրացումների նկատմամբ զուտ շահույթի գործակիցը հաշվարկվում է, մասնավորապես, երբ վերահսկվող գործարքը ապրանքի մատակարարում է,

գ. ակտիվների նկատմամբ զուտ շահույթի գործակիցը հաշվարկվում է, մասնավորապես, երբ վերահսկվող գործարքն ակտիվների մեծ ներգրավում է պահանջում:

Զուտ շահույթի մեթոդը կիրառելիս պետք է դիտարկել միայն այն եկամուտները և ծախսերը, որոնք առնչվում են վերահսկվող գործարքներին՝ բացառելով վերահսկվող գործարքներին չվերաբերող եկամուտները և ծախսերը.

5) սույն հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ շահույթի բաշխման մեթոդը կարող է կիրառվել, մասնավորապես, երբ վերահսկվող գործարքները մեծապես ինտեգրված են, և հնարավոր չէ դրանք առանձին վերլուծել և (կամ) վերահսկվող գործարքի երկու կողմերն էլ արժեքավոր ոչ նյութական ակտիվներ են օգտագործել գործարքի իրականացման համար:

Շահույթի բաշխման մեթոդը կիրառելիս անհրաժեշտ է հստակեցնել այն համատեղ շահույթը, որն առաջացել է վերահսկվող գործարքներում, մասնավորապես՝

ա. համատեղ շահույթը, որոշ դեպքերում իրենից կարող է ներկայացնել վերահսկվող գործարքների իրականացման արդյունքում ստացված ընդհանուր շահույթը, կամ

բ. ընդհանուր շահույթի այն մնացորդային մասը, որը որևէ խելամիտ հիմքով հնարավոր չէ վերագրել վերահսկվող գործարքի կողմերից յուրաքանչյուրին:

3. Վերահսկվող գործարքի պայմանների համապատասխանությունը պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին որոշվում է տվյալ հանգամանքներում առավել համապատասխան տրանսֆերային գնագոյացման մեթոդը կիրառելով: Տրանսֆերային գնագոյացման առավել համապատասխան մեթոդը ընտրվում է սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տրանսֆերային գնագոյացման մեթոդներից՝ հաշվի առնելով հետևյալ չափանիշները.

1) համապատասխան տրանսֆերային գնագոյացման մեթոդի ուժեղ և թույլ կողմերը.

2) մեթոդի համապատասխանությունը՝ հաշվի առնելով վերահսկվող գործարքի բնութագիրը.

3) տրանսֆերային գնագոյացման համապատասխան մեթոդը կիրառելու համար անհրաժեշտ հավաստի տեղեկատվության առկայությունը՝ Օրենսգրքի 367-րդ և 370-րդ հոդվածների դրույթներին համապատասխան.

4) վերահսկվող և չվերահսկվող գործարքների համադրելիության աստիճանը, ներառյալ՝ Օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն իրականացված համադրելիության ճշգրտման հուսալիությունը:

4. Եթե հաշվի առնելով սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված չափանիշները, կարելի է հավասար արժանահավատությամբ կիրառել սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված՝ համադրելի չվերահսկվող գնի մեթոդը և սույն հոդվածի 1-ին մասի 2-5-րդ կետերով սահմանված տրանսֆերային գնագոյացման մեթոդները, ապա պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին համապատասխանությունը որոշելիս օգտագործվում է համադրելի չվերահսկվող գնի մեթոդը:

5. Վերահսկվող գործարքի՝ պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին համապատասխանությունը որոշելու համար հարկ վճարողի կողմից տրանսֆերային գնագոյացման մեկից ավելի մեթոդների կիրառությունը պարտադիր չէ:

6. Եթե հարկ վճարողը վերահսկվող գործարքի՝ պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին համապատասխանությունը որոշելու նպատակով կիրառել է սույն հոդվածով սահմանված տրանսֆերային գնագոյացման մեթոդ, ապա հարկային մարմնի կողմից հարկ վճարողի վերահսկվող գործարքի՝ պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին համապատասխանության որոշումը հիմնվում է հարկ վճարողի կիրառած տրանսֆերային գնագոյացման

մեթոդի վրա, եթե հարկ վճարողի կիրառած տրանսֆերային գնագոյացման մեթոդի ընտրությունը կատարվել է սույն հոդվածի դրույթներին համապատասխան:

7. Սույն հոդվածով նշված տրանսֆերային գնագոյացման մեթոդների կիրառության կարգը սահմանում է Կառավարությունը:

(368-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Հոդված 369. Վերլուծության ենթակա կողմի ընտրությունը

1. Օրենսգրքի 368-րդ հոդվածի 2-րդ մասի 2-4-րդ կետերում նշված տրանսֆերային գնագոյացման մեթոդներից որևէ մեկը կիրառելիս անհրաժեշտ է ընտրել վերլուծության ենթակա կողմ:

2. Վերլուծության ենթակա կողմի ընտրությունը պետք է համահունչ լինի վերահսկվող գործարքի գործառնական վերլուծությանը: Վերահսկվող գործարքի այն կողմը պետք է ընտրվի որպես վերլուծության ենթակա կողմ, որն իրականացնում է առավել պարզ գործառույթներ և (կամ) որի համար հնարավոր է գտնել առավել արժանահավատ համադրելի չվերահսկվող գործարքներ:

3. Վերլուծության ենթակա օտարերկրյա կողմի ընտրությունը ընդունելի է, եթե կիրառված տրանսֆերային գնագոյացման մեթոդը համապատասխանում է Օրենսգրքի 368-րդ հոդվածի դրույթներին, և վերլուծության ենթակա կողմը ընտրվել է սույն հոդվածի դրույթների համաձայն:

Հոդված 370. Բազմամյա տվյալների գնահատումը

1. Օրենսգրքի 365-րդ հոդվածի դրույթների համաձայն, չվերահսկվող գործարքի համադրելիությունը վերահսկվող գործարքի հետ գնահատելիս օգտագործվող տեղեկատվությունը պետք է առնչվի այն հարկային տարվան, որում տեղի է ունեցել վերահսկվող գործարքը, բացառությամբ այն դեպքերի՝

1) երբ վերահսկվող գործարքի իրականացման հարկային տարվա վերաբերյալ տեղեկատվությունը հայտնի չէ այն ժամանակ, երբ գնահատվում է չվերահսկվող գործարքի համադրելիությունը վերահսկվող գործարքի հետ: Այս դեպքում կարող է օգտագործվել նախորդ հարկային տարվա տեղեկատվությունը՝ Օրենսգրքի 365-րդ հոդվածով սահմանված համադրելիության պահանջները բավարարելու դեպքում.

2) երբ տվյալները, որոնք վերաբերում են վերահսկվող գործարքի կատարմանը նախորդող ոչ ավելի, քան 3 հարկային տարիներին, բացահայտում են այնպիսի փաստեր, որոնք կարող են ազդել համեմատվող գործարքների համադրելիությունը որոշելու վրա:

Հոդված 371. Պարզած ձեռքի հեռավորության տիրույթը

1. Պարզած ձեռքի հեռավորության տիրույթը համապատասխան ֆինանսական ցուցանիշների տիրույթն է, որը ձևավորվում է համադրելի չվերահսկվող գործարքների նկատմամբ Օրենսգրքի 368-րդ հոդվածով սահմանված՝ առավել համապատասխան տրանսֆերային գնագոյացման մեթոդը կիրառելիս:

2. Վերահսկվող գործարքը կամ Օրենսգրքի 372-րդ հոդվածի համաձայն՝ համակցված գործարքը ենթակա չէ ճշգրտումների Օրենսգրքի 364-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, եթե վերահսկվող գործարքի ֆինանսական ցուցանիշը, որը ստացվել է տրանսֆերային գնագոյացման համապատասխան մեթոդի կիրառմամբ, գտնվում է պարզած ձեռքի հեռավորության տիրույթում:

3. Եթե վերահսկվող գործարքից կամ Օրենսգրքի 372-րդ հոդվածի համաձայն՝ համակցված գործարքից ստացված ֆինանսական ցուցանիշը գտնվում է պարզած ձեռքի հեռավորության տիրույթից դուրս, ապա հարկային մարմինը կարող է ճշգրտել այն՝ Օրենսգրքի 364-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, և ցանկացած նման ճշգրտում կլինի պարզած ձեռքի հեռավորության տիրույթի միջին կետ, եթե փաստերը և հանգամանքները այլ բան չեն վկայում:

4. Այլ փաստերի և հանգամանքների ապացուցման բեռը, որոնք վկայում են պարզած ձեռքի հեռավորության տիրույթի ցուցանիշների միջին կետից տարբեր ցուցանիշի օգտագործումը՝ ճշգրտման նպատակով, կրում է՝

1) հարկ վճարողը, եթե նա հայտարարում է, որ փաստերը և հանգամանքները այլ բան են վկայում.

2) հարկային մարմինը, եթե նա հայտարարում է, որ փաստերը և հանգամանքները այլ բան են վկայում:

5. Պարզած ձեռքի հեռավորության տիրույթի հաշվարկման կանոնները սահմանում է Կառավարությունը:

(371-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Հոդված 372. Հարկ վճարողի համակցված վերահսկվող գործարքների գնահատումը

1. Եթե հարկ վճարողը նույն կամ համանման հանգամանքներում իրականացնում է երկու կամ ավելի վերահսկվող

գործարքներ, որոնք տնտեսապես սերտորեն առնչվում են միմյանց հետ կամ հանդիսանում են մեկը մյուսի շարունակությունն այնպես, որ արժանահավատորեն չեն կարող առանձին վերլուծվել, ապա այդ վերահսկվող գործարքները կարող են միավորվել Օրենսգրքի 365-րդ հոդվածում նշված համադրելիության վերլուծություն իրականացնելու և Օրենսգրքի 368-րդ հոդվածում նշված՝ տրանսֆերային գնագոյացման առավել համապատասխան մեթոդը կիրառելու նպատակով:

Հոդված 373. Փաստացի տեղի ունեցած գործարքների ճանաչումը

1. Վերահսկվող գործարքի՝ Օրենսգրքի 364-րդ հոդվածին համապատասխանությունը պարզելը հարկային մարմնի կողմից պետք է հիմնված լինի փաստացի տեղի ունեցած գործարքի վրա, որի շուրջ կողմերը ձեռք են բերել պայմանավորվածություն, բացառությամբ այն դեպքերի, երբ վերահսկվող գործարքի բովանդակությունը տարբերվում է դրա իրավական ձևից:

Հոդված 374. Հարկ վճարողի կողմից ինքնուրույն իրականացվող ճշգրտումները

1. Եթե հարկ վճարողն իրականացնում է այնպիսի վերահսկվող գործարքներ, որոնց պայմանները չեն համապատասխանում Օրենսգրքի 364-րդ հոդվածի դրույթներին, և եթե այդ պայմանների՝ Օրենսգրքի 364-րդ հոդվածի դրույթներին համապատասխանության դեպքում կարող էր ձևավորվել շահութահարկով հարկման լրացուցիչ բազա, ԱԱՀ-ով հարկման լրացուցիչ բազա և (կամ) ռոյալթիի լրացուցիչ բազա, ապա հարկ վճարողը կարող է ինքնուրույն վերահաշվարկել շահութահարկով հարկման բազան, ԱԱՀ-ով հարկման բազան և (կամ) ռոյալթիի բազան և Օրենսգրքի 54-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին ներկայացնել ճշտված հարկային հաշվարկներ:
2. Սույն հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկման լրացուցիչ բազաների հիման վրա հաշվարկված հարկերը վճարվում են Օրենսգրքով սահմանված կարգով, չափերով և ժամկետներում:

Հոդված 375. Վերահսկվող գործարքների մասին ծանուցումը

1. Եթե հարկ վճարողի բոլոր վերահսկվող գործարքների հանրագումարը հարկային տարվա ընթացքում գերազանցում է Օրենսգրքի 363-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված 200 միլիոն դրամի շեմը (առանց ԱԱՀ-ի և ակցիզային հարկի), ապա հարկ վճարողը պարտավոր է վերահսկվող գործարքների մասին ծանուցում ներկայացնել հարկային մարմին՝ ծանուցման մեջ ներառելով, մասնավորապես, հետևյալ տեղեկությունները.
1) հարկ վճարողի անվանումը, ՀՎՀՀ-ն.
2) հարկ վճարողի գործունեության հիմնական ոլորտները.
3) վերահսկվող գործարքների ընդհանուր արժեքը՝ ըստ հարկային տարվա ընթացքում իրականացված գործարքների տեսակների.
4) հարկային տարվա ընթացքում իրականացված վերահսկող գործարքների կողմերի ռեզիդենտության երկրները.
5) հարկային տարվա ընթացքում իրականացված վերահսկվող գործարքների պայմանների՝ Օրենսգրքի 364-րդ հոդվածի դրույթներին համապատասխանությունը որոշելու նպատակով կիրառված տրանսֆերային գնագոյացման մեթոդների մասին տեղեկատվություն, այդ թվում՝ կիրառված տրանսֆերային գնագոյացման մեթոդների տեսակարար կշիռը վերահսկվող գործարքներում:
2. Վերահսկվող գործարքների մասին ծանուցման ձևը և լրացման կարգը սահմանում է հարկային մարմինը:
3. Հարկ վճարողը վերահսկվող գործարքների մասին ծանուցումը լրացնում և հարկային մարմին է ներկայացնում մինչև յուրաքանչյուր հարկային տարվան հաջորդող հարկային տարվա ապրիլի 20-ը ներառյալ:

Հոդված 376. Տրանսֆերային գնագոյացման փաստաթղթավորումը

1. Տրանսֆերային գնագոյացման փաստաթղթավորումն այն փաստաթուղթը կամ փաստաթղթերն են, որոնք ցույց են տալիս հարկ վճարողի վերահսկվող գործարքների համապատասխանությունը Օրենսգրքի 364-րդ հոդվածի դրույթներին և, մասնավորապես, ներառում են հետևյալը.
1) հարկ վճարողի գործարար գործառույթների մանրամասն նկարագրությունը, այդ թվում՝ ապրանքների, ոչ նյութական ակտիվների, աշխատանքների և (կամ) ծառայությունների գնագոյացման գործընթացների վրա տնտեսական գործոնների ազդեցության վերլուծությունը.
2) հարկ վճարողի կազմակերպական կառուցվածքի մանրամասն նկարագիրը.
3) վերահսկվող գործարքների նկարագրությունը, այդ թվում՝ Օրենսգրքի 365-րդ հոդվածով սահմանված համադրելիության գործոնների վերլուծությունը, ինչպես նաև վերահսկվող գործարքի կողմերի իրականացրած գործառույթները, օգտագործված ակտիվները և կրած ռիսկերը.
4) կիրառած տրանսֆերային գնագոյացման մեթոդների նկարագրությունը և հիմնավորում այն մասին, թե ինչու է ընտրվել գնագոյացման այդ մեթոդը Օրենսգրքի 368-րդ հոդվածի համաձայն.

5) վերահսկվող գործարքների կողմերի ցանկը, այդ թվում՝ տեղեկատվություն հարկման նպատակով կողմի ռեզիդենտության վերաբերյալ.

6) համադրելի չվերահսկվող գործարքների մասին տեղեկատվության աղբյուրների նկարագրությունը.

7) պարզած ձեռքի հեռավորության տիրույթի հաշվարկը (այն դեպքում, երբ կիրառելի է).

8) վերլուծության ենթակա կողմի վերաբերյալ ֆինանսական և այլ անհրաժեշտ տեղեկատվությունը.

9) Օրենսգրքի 374-րդ հոդվածի համաձայն՝ հարկ վճարողի կողմից ինքնուրույն իրականացվող ճշգրտումների վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը.

10) ցանկացած այլ տեղեկատվություն, որը հարկ վճարողը համարում է կարևոր վերահսկվող գործարքների իրականացման պայմանների՝ Օրենսգրքի 364-րդ հոդվածի դրույթներին համապատասխանությունը ցույց տալու համար:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված փաստաթղթերը հարկ վճարողը հարկային մարմին է ներկայացնում վերջինիս ուղարկած գրավոր ծանուցման ստացման ամսաթվից հետո՝ 30 աշխատանքային օրվա ընթացքում:

3. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված փաստաթղթերը հարկ վճարողը հարկային մարմին է ներկայացնում թղթային կամ էլեկտրոնային տարբերակով՝ հայերեն, անգլերեն կամ ռուսերեն լեզուներով՝ պայմանով, որ անգլերեն կամ ռուսերեն լեզվով փաստաթղթերը հարկային մարմնի պահանջով թարգմանվեն հայերեն և ներկայացվեն հարկային մարմին՝ այդ մասին գրավոր ծանուցումն ստանալուց հետո՝ տասը աշխատանքային օրվա ընթացքում:

Հոդված 377. Համապատասխանության ճշգրտումները

1. Համապատասխանության ճշգրտումները կատարվում են, երբ՝

1) վերահսկվող գործարքի պայմանների ճշգրտումը, որի կողմերից մեկը հանդիսանում է ռեզիդենտ հարկ վճարող, կատարվել է կամ առաջարկվում է մեկ այլ երկրի հարկային մարմնի կողմից.

2) ճշգրտումը հանգեցնում է այնպիսի եկամտի հարկման մեկ այլ երկրում, որի համար ռեզիդենտ հարկ վճարողը արդեն իսկ հարկ է վճարել Հայաստանի Հանրապետությունում.

3) ճշգրտումը կատարող կամ առաջարկող երկրի հետ Հայաստանի Հանրապետությունն ունի կրկնակի հարկումը բացառելու մասին վավերացված միջազգային պայմանագիր:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերում հարկային մարմինը ռեզիդենտ հարկ վճարողի դիմումի հիման վրա վերլուծում է տվյալ ճշգրտման համապատասխանությունը Օրենսգրքի 364-րդ հոդվածով սահմանված պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին՝ անհրաժեշտության դեպքում խորհրդակցելով մյուս երկրի հարկային մարմնի հետ: Եթե մյուս երկրի կատարած կամ առաջարկած ճշգրտումը համապատասխանում է պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին, ապա հարկային մարմինը ճշգրտման է ենթարկում ռեզիդենտ հարկ վճարողի համապատասխան հարկման բազան՝ կրկնակի հարկումը բացառելու նպատակով:

3. Հարկ վճարողը համապատասխանության ճշգրտում կատարելու վերաբերյալ դիմումը ներկայացնում է կրկնակի հարկումը բացառելու մասին վավերացված միջազգային պայմանագրի՝ փոխհամաձայնեցման ընթացակարգի միջոցով գործը լուծելու համար դիմումը ներկայացնելու սահմանված ժամկետում:

4. Հարկ վճարողը համապատասխանության ճշգրտում կատարելու վերաբերյալ դիմումն էլեկտրոնային կամ գրավոր եղանակով ներկայացնում է հարկային մարմին՝ դիմումում ներառելով հետևյալ տեղեկատվությունը.

1) փոխկապակցված հարկ վճարողների անվանումները, գրանցման հասցեները, իսկ առկայության դեպքում՝ նաև ապրանքանշանները.

2) ճշգրտված վերահսկվող գործարքների իրականացման տարին (տարիները).

3) պահանջվող համապատասխան ճշգրտման գումարը՝ դրամով և կրկնակի հարկումը բացառելու մասին վավերացված միջազգային պայմանագրի կողմ հանդիսացող պետության հարկային մարմնի կատարած ճշգրտման գումարը՝ այդ պետությունում կիրառված արժույթով.

4) ապացույց փոխկապակցված կողմի՝ այլ երկրում ռեզիդենտ լինելու վերաբերյալ.

5) ապացույց կրկնակի հարկումը բացառելու մասին վավերացված միջազգային պայմանագրի կողմ հանդիսացող մյուս պետության հարկային մարմնի կատարած ճշգրտման մասին և ճշգրտման հիմքերի մանրամասները.

6) ձեռնարկված ցանկացած վարչական բողոք կամ դատական վարույթ, եթե այդպիսիք կան կամ դեռևս առկա են.

7) տեղեկատվություն համադրելիության վերլուծության և տրանսֆերային գնագոյացման կիրառված մեթոդների վերաբերյալ.

8) ցանկացած այլ տեղեկատվություն, որը կարող է էական լինել հարկային մարմնի կողմից պարզված ձեռքի հեռավորության սկզբունքի համաձայն ճշգրտման համապատասխանությունը վերլուծելու համար:

5. Հարկային մարմինը համապատասխանության ճշգրտում կատարելու վերաբերյալ դիմումը վերլուծելու նպատակով հարկ վճարողից կարող է պահանջել վերահսկվող գործարքներին վերաբերող լրացուցիչ տեղեկատվություն՝ ի լրումն սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված տեղեկատվության:

6. Հարկային մարմինը սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետներում ներկայացված դիմումն ստանալու օրվանից հետո՝ 6 ամսվա ընթացքում, տվյալ հարկ վճարողին տեղեկացնում է կայացված որոշման մասին: Եթե հարկային մարմինը մասնակիորեն կամ ամբողջովին մերժում է տվյալ հարկ վճարողի՝ համապատասխան ճշգրտում

կատարելու մասին դիմումը, ապա տվյալ հարկ վճարողին տրամադրվող որոշման ծանուցման մեջ գրավոր նշվում են մերժման պատճառները:

(377-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Հոդված 378. Փոխհամաձայնեցման ընթացակարգը

1. Այն դեպքում, երբ կրկնակի հարկումը բացառելու մասին վավերացված միջազգային պայմանագրի համաձայն, ռեզիդենտ կազմակերպությունը կամ ռեզիդենտ ֆիզիկական անձը տեղեկանում է, որ հարկային մարմնի կամ կրկնակի հարկումը բացառելու մասին միջազգային պայմանագրի կողմ համարվող երկրի ռեզիդենտ գործընկերոջ գործողությունների արդյունքում վերահսկվող գործարքի հարկումը կարող է չհամապատասխանել համապատասխան կրկնակի հարկումը բացառելու մասին վավերացված միջազգային պայմանագրի դրույթներին, ապա ռեզիդենտ կազմակերպությունը կամ ռեզիդենտ ֆիզիկական անձը կարող է դիմում ներկայացնել հարկային մարմին և խնդրել, որ գործը լուծվի փոխհամաձայնեցման ընթացակարգի միջոցով:

2. Փոխհամաձայնեցման ընթացակարգի միջոցով գործի լուծման կարգը սահմանում է Կառավարությունը:

(378-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Գ Լ Ո Ւ Խ 74

ՀՍԿԻՉ ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 379. Հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառությունը, կանխիկ դրամով վճարումների կատարման և ընդունման նկատմամբ սահմանափակումները

1. Օրենսգրքի 380-րդ հոդվածով այլ բան սահմանված չլինելու դեպքում կազմակերպությունները անհատ ձեռնարկատերերը և նոտարները պարտավոր են կիրառել հսկիչ դրամարկղային մեքենա: Սույն մասի դրույթները չեն տարածվում Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների, դրանց հավասարեցված միջազգային կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, առևտրային բանկերի, դրանց մասնաճյուղերի, ներկայացուցչությունների, գործառնական գրասենյակների (կետերի), ինչպես նաև վարկային կազմակերպությունների, ապահովագրական և վերաապահովագրական ընկերությունների, ապահովագրական միջնորդային գործունեություն իրականացնող անձանց, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների, գրավատների, վճարահաշվարկային կազմակերպությունների վրա՝ այդ գործունեության տեսակների մասով:

2. Կազմակերպությունները և ԱԱՀ վճարող համարվող անհատ ձեռնարկատերերը պարտավոր են պահպանել կանխիկ դրամով վճարումների կատարման և ընդունման նկատմամբ Օրենսգրքի 386-րդ հոդվածով սահմանված սահմանափակումները: Սույն մասի դրույթները չեն տարածվում Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների, դրանց հավասարեցված միջազգային կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, առևտրային բանկերի, դրանց մասնաճյուղերի, ներկայացուցչությունների, գործառնական գրասենյակների (կետերի), ինչպես նաև վարկային կազմակերպությունների, արտարժույթի առք ու վաճառքի գործունեություն իրականացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի վրա (այդ գործունեության տեսակների մասով):

2.1. Հսկիչ-դրամարկղային մեքենաների իրացման առավելագույն գները սահմանում է հարկային մարմնի ղեկավարը:

(379-րդ հոդվածը լրաց. 21.06.18 ՀՕ-338-Ն)

Հոդված 380. Հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության ոլորտները

1. Կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների կողմից կանխիկ դրամով կամ վճարային քարտերի կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքների միջոցով իրականացվող դրամական հաշվարկների դեպքում (ներառյալ՝ կանխավճարները, մասնակի վճարումները) հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառությունը պարտադիր է առևտրի օբյեկտների, առևտրի իրականացման վայրերում վաճառատեղերի միջոցով մանրածախ վաճառք իրականացնելիս, բնակչության համար աշխատանքներ կատարելիս կամ բնակչությանը ծառայություններ մատուցելիս, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի:

2. Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից տրանսպորտային միջոցով վաճառք իրականացնելիս, բնակչության համար աշխատանքներ կատարելիս կամ բնակչությանը ծառայություններ մատուցելիս հսկիչ դրամարկղային մեքենա կարող է կիրառվել Օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 1-4-րդ կետերով սահմանված հաշվարկային փաստաթղթեր էլեկտրոնային եղանակով դուրս գրելու համար:

3. Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից կանխիկ դրամով կամ վճարային քարտերի կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքների միջոցով իրականացվող դրամական հաշվարկների դեպքում (ներառյալ՝ կանխավճարները, մասնակի վճարումները) հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառությունը պարտադիր չէ գործունեության հետևյալ տեսակների համար.

1) բնակչությանը կոմունալ ծառայությունների մատուցում՝ պայմանով, որ այդ ծառայությունների մասով կանխիկ դրամով կամ վճարային քարտերի կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքների միջոցով դրամական հաշվարկներ իրականացնելիս վճարողին տրամադրվում է օրենսդրությամբ սահմանված կարգով վճարումը հավաստող փաստաթուղթ.

2) վիճակախաղի տոմսերի վաճառք.

3) ավտոմոբիլային, ջրային, երկաթուղային, օդային տրանսպորտով կատարվող ուղևորափոխադրումների, բեռնափոխադրումների իրականացման և երթևեկության տոմսերի վաճառք.

4) առևտրի իրականացման վայրերում գտնվող վաճառասեղաններից Օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված գյուղատնտեսական արտադրանքի և քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող գործածության մեջ եղած անձնական օգտագործման իրերի վաճառք.

5) տրանսպորտային միջոցներով իրականացվող Օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված գյուղատնտեսական արտադրանքի վաճառք.

6) ավտոտրանսպորտային միջոցը տաքսամետրով (սակաչափիչով) ապահովված լինելու դեպքում՝ մարդատար տաքսի ավտոմոբիլներով փոխադրումների իրականացում.

7) խաղատների և (կամ) շահումով խաղերի կազմակերպում.

8) օրենքով սահմանված կարգով գրանցված կրոնական կազմակերպությունների կողմից կրոնական պարագաների իրացում և (կամ) կրոնական ծիսակատարությունների ծառայությունների մատուցում.

9) փոստային ծառայությունների դիմաց վճարումը հավաստող փոստային վճարման պետական նշանների (փոստային նամականիշերի և այլ նշանների)՝ անվանական արժեքով իրացում.

10) փոստային և տուրիստական գործունեության իրականացում.

11) հեռակա՝ էլեկտրոնային հաղորդակցություն ապահովող կապի կամ հեռուստատեսային խանութների միջոցով վաճառքի իրականացում.

12) կրպակներում թերթերի և ամսագրերի իրացումը, եթե թերթերի և ամսագրերի իրացման շրջանառության տեսակարար կշիռը գերազանցում է ամբողջ իրացման շրջանառության 50 տոկոսը: Թերթերի և ամսագրերի իրացման շրջանառության հաշվառումն իրականացվում է առանձնացված կարգով.

13) հանրակրթական ուսումնական հաստատությունների աշխատանքային օրվա ընթացքում հանրակրթական ուսումնական հաստատությունների տարածքում այդ հաստատությունների սովորողներին և աշխատակիցներին սննդով ապահովում:

(380-րդ հոդվածը լրաց. 21.12.17 ՀՕ-266-Ն, փոփ. 25.06.19 ՀՕ-68-Ն, լրաց. 10.09.19 ՀՕ-146-Ն)

Հոդված 381. Հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառության կանոնները

1. Կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները պարտավոր են կանխիկ դրամով կամ վճարային քարտերի կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքների միջոցով դրամական հաշվարկներն իրականացնել Կառավարության սահմանած կարգով հարկային մարմնում գրանցված և Կառավարության սահմանած՝ հսկիչ դրամարկղային մեքենային ներկայացվող տեխնիկական պահանջները բավարարող հսկիչ դրամարկղային մեքենայով:

2. Հսկիչ դրամարկղային մեքենան տեղադրվում է առևտրի օբյեկտի, առևտրի իրականացման վայրի վաճառատեղի, աշխատանքի կատարման վայրի կամ ծառայության մատուցման վայրի այն հատվածում, որտեղ կատարվում է վճարումը:

3. Հսկիչ դրամարկղային մեքենա կիրառող կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները կանխիկ դրամով կամ վճարային քարտերի կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքների միջոցով դրամական հաշվարկներ իրականացնելիս պարտավոր են ապրանքներ ձեռքբերողին, աշխատանքներ ընդունողին կամ ծառայություններ ստացողին տրամադրել հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոն:

Հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնի վրա պետք է տպագրված լինի հետևյալ տեղեկատվությունը (տվյալները).

1) կտրոնի հերթական համարը (ԿՀ)՝ 8 նիշ.

2) հսկիչ դրամարկղային մեքենա կիրառողի անվանումը (կազմակերպության անվանումը և կազմակերպաիրավական տեսակի հապավումը, անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի անունը, ազգանունը).

3) հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառության վայրի հասցեն.

4) հսկիչ դրամարկղային մեքենա կիրառողի հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ), իսկ հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնը կազմակերպության ներկայացուցչին, անհատ ձեռնարկատիրոջը կամ նրա ներկայացուցչին, նոտարին կամ նրա ներկայացուցչին տրամադրելու դեպքում՝ նաև համապատասխանաբար ապրանք ձեռք բերող, աշխատանք ընդունող և (կամ) ծառայություն ստացող կազմակերպության, անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի հարկ վճարողի

հաշվառման համարը (ՀՎՀՀ).

5) հսկիչ դրամարկղային մեքենայի գրանցման համարը (ԳՀ).

6) կտրոնի տրամադրման րոպեն, ժամը, օրը, ամիսը, տարին.

7) սպասարկող բաժնի համարը, բացառությամբ «կանխավճար» գրառում ունեցող կտրոնների.

8) ապրանքի անվանումը և ապրանքային դիրքը, աշխատանքի կամ ծառայության անվանումը և կոդը, բացառությամբ «կանխավճար» գրառում ունեցող կտրոնների՝ Կառավարության սահմանած կարգին և ժամկետներին համապատասխան.

9) գնվող ապրանքի քանակը, դրա չափման միավորը, բացառությամբ «կանխավճար» գրառում ունեցող կտրոնների՝ Կառավարության սահմանած կարգին և ժամկետներին համապատասխան.

10) կիրառված զեղչի չափը (կիրառվելու դեպքում).

11) վճարման ենթակա գումարները՝ ըստ բաժինների.

12) ընդհանուր գումարը, ներառյալ՝ ԱԱՀ-ն, եթե գործարքն իրականացնողը ԱԱՀ վճարող է և գործարքը ենթակա է ԱԱՀ-ով հարկման, բացառությամբ «կանխավճար» գրառում ունեցող կտրոնների.

13) ԱԱՀ-ի գումարը, եթե գործարքն իրականացնողը ԱԱՀ վճարող է և գործարքը ենթակա է ԱԱՀ-ով հարկման, բացառությամբ «կանխավճար» գրառում ունեցող կտրոնների.

14) պատասխանատու անձի (գանձապահի) համարը.

15) ֆիսկալավորման ռեժիմի նշանը (Ֆ).

16) «կանխավճար» գրառումը՝ կանխավճարների ստացման, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարզ չէ, թե վերցված գումարների դիմաց հետագայում ինչ ապրանքներ կիրացվեն, ինչ աշխատանքներ կկատարվեն կամ ինչ ծառայություններ կմատուցվեն:

4. Այն դեպքում, երբ նոտարական և (կամ) փաստաբանական գործունեություն իրականացնողները բնակչությանը ծառայություններ են մատուցում գործունեության (հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառության) վայրից դուրս, պարտավոր են գործունեության վայր վերադառնալով՝ ոչ ուշ, քան երեք ժամվա ընթացքում, հսկիչ դրամարկղային մեքենա մուտքագրել մատուցված ծառայության դիմաց ստացված գումարը, իսկ մեկ օրվա ընթացքում հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնը տրամադրել կամ փոստով առաքել ծառայություն ստացողին:

5. Արտարժույթի կամ արտարժույթի դիլերային-բրոկերային առք ու վաճառքի գործունեություն իրականացնողները դրամական հաշվարկներն իրականացնում են սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները բավարարող հսկիչ դրամարկղային մեքենայով կամ դրան փոխարինող և նույն պահանջները բավարարող՝ համապատասխան ծրագիր պարունակող համակարգչային սարքավորումներով:

6. Կանխիկ դրամով կամ վճարային քարտերի կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքների միջոցով իրականացվող դրամական հաշվարկների համար սույն գլխին համապատասխան հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառությունը պարտադիր չլինելու դեպքում տեղադրված և կիրառվող հսկիչ դրամարկղային մեքենայի միջոցով արձանագրված շրջանառությունը հիմք չէ հարկերի հաշվարկման համար, իսկ այդ հսկիչ դրամարկղային մեքենան հարկային մարմնում գրանցումից հանվում է (գրանցված լինելու դեպքում) Կառավարության սահմանած կարգով:

7. Հսկիչ դրամարկղային մեքենային և ցանցային կապի միջոցներին ներկայացվող տեխնիկական պահանջները, հսկիչ դրամարկղային մեքենան հարկային մարմնում գրանցման և գրանցումից հանման կարգը, հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառության կանոնները հաստատում է Կառավարությունը:

8. Արտարժույթի կամ արտարժույթի դիլերային-բրոկերային առք ու վաճառքի գործունեություն իրականացնողների կողմից կիրառվող հսկիչ դրամարկղային մեքենային փոխարինող՝ համապատասխան ծրագիր պարունակող համակարգչային սարքավորումներին և ցանցային կապի միջոցներին ներկայացվող պահանջները, հսկիչ դրամարկղային մեքենային փոխարինող՝ համապատասխան ծրագիր պարունակող համակարգչային սարքավորումների գրանցման և գրանցումից հանման կարգը, հսկիչ դրամարկղային մեքենային փոխարինող՝ համապատասխան ծրագիր պարունակող համակարգչային սարքավորումների կիրառության կանոնները սահմանում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը՝ հարկային մարմնի հետ համատեղ:

(381-րդ հոդվածը լրաց., խմբ. 21.12.17 ՀՕ-266-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն, 25.06.19 ՀՕ-68-Ն)

Հոդված 382. Հսկիչ դրամարկղային մեքենա կիրառողների պարտականությունները

1. Հսկիչ դրամարկղային մեքենա կիրառող կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները պարտավոր են՝

1) պահպանել Կառավարության սահմանած՝ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության կանոնները.

2) հսկողական գործառույթների իրականացման նպատակով ապահովել հարկային մարմնի պաշտոնատար անձանց անարգել մուտքը դեպի հսկիչ դրամարկղային մեքենայի տեղադրման վայր.

3) ապահովել ցանցային կապի միջոցներով յուրաքանչյուր հսկիչ դրամարկղային մեքենայով (այդ թվում՝ արտարժույթի կամ արտարժույթի դիլերային-բրոկերային առք ու վաճառքի գործունեության մասով կիրառվող հսկիչ դրամարկղային մեքենայով, համապատասխան ծրագիր պարունակող համակարգչային սարքավորումով) օրվա

ընթացքում իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ տեղեկության ուղարկումը հարկային մարմին:

(382-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Հոդված 383. Հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառության թույլտվությունը

1. Արտարժույթի կամ արտարժույթի դիլերային-բրոկերային առք ու վաճառքի գործունեության մասով կիրառվող հսկիչ դրամարկղային մեքենայի, համապատասխան ծրագիր պարունակող համակարգչային սարքավորման, ինչպես նաև համակարգչային ծրագրի կիրառության թույլտվությունը տրամադրում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը՝ համաձայնեցնելով հարկային մարմնի հետ:

Հոդված 384. Հսկիչ դրամարկղային մեքենա կիրառող անձանց գործունեության կասեցումը, կասեցման մասին որոշումների ընդունումը և կասեցման ավարտը

1. Հսկիչ դրամարկղային մեքենաներ կիրառող կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի գործունեությունը սույն մասով սահմանված հիմքերի առկայության դեպքում կասեցվում է, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի: Գործունեության կասեցման համար հիմք են համարվում՝

1) կանխիկ դրամով կամ վճարային քարտերի կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքների միջոցով դրամական հաշվարկներ իրականացնելու պահին և վայրում՝ հարկային մարմնում այդ վայրի հասցեով գրանցված հսկիչ դրամարկղային մեքենայի բացակայության կամ հարկային մարմնում այդ վայրի հասցեով հսկիչ դրամարկղային մեքենա գրանցված չլինելու համար կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ մոտ խախտումն արձանագրելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, նշված խախտումը կրկնելը: Սույն կետում նշված գործունեության իրականացման վայրում գործունեությունը կասեցվում է մինչև սահմանված կարգով այդ վայրի հասցեով հարկային մարմնում գրանցված հսկիչ դրամարկղային մեքենայի ապահովումը.

2) հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառության կանոնների խախտման համար կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ մոտ խախտումն արձանագրելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, նշված խախտումը կրկնելը:

2. Կասեցման ենթակա չէ՝

1) բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման գործունեությունը.

2) նոտարական և (կամ) փաստաբանական գործունեությունը:

3. Կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ գործունեության կասեցման մասին որոշումն ընդունում է հարկային մարմնի ղեկավարը՝ կասեցման հիմք հանդիսացող խախտումն արձանագրելուց հետո՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում:

4. Գործունեության կասեցման մասին որոշման մեջ նշվում են՝

1) գործունեությունը կասեցվող կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, ՀՎՀՀ-ն, իսկ ԱԱՀ վճարողների դեպքում՝ նաև ԱԱՀ վճարողի հաշվառման համարը.

2) կասեցման ենթակա գործունեության վայրի հասցեն.

3) կասեցման ենթակա գործունեությունը.

4) կասեցման հիմքը և կասեցման ժամկետը:

5. Գործունեության կասեցման մասին հարկային մարմնի ղեկավարի որոշումը տրվում է գործունեությունը կասեցվող կազմակերպության ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին կամ անհատ ձեռնարկատիրոջը ոչ ուշ, քան որոշումն ընդունելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

6. Գործունեությունը կասեցվող կազմակերպության ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից դիմումի ներկայացման դեպքում մինչև գործունեության կասեցումը կասեցման ենթակա գործունեության վայրի տարածքում գտնվող շուտ փչացող ապրանքները հեռացնելու կամ դրանց պահպանման և ապահովության մասին հոգալու համար հարկային մարմնի ղեկավարի որոշմամբ տրվում է մինչև երեք աշխատանքային օր ժամանակ: Սույն մասում նշված դեպքում կասեցման ժամկետի սկիզբ է համարվում հարկային մարմնի ղեկավարի որոշմամբ տրված ժամկետը լրանալու օրվան հաջորդող աշխատանքային օրը:

7. Գործունեության կասեցումն իրականացվում է հարկային մարմնի պաշտոնատար անձանց կողմից կասեցման ենթակա գործունեության վայրի տարածքի մուտքը (մուտքերը) կամ տարածք մուտք գործելու այլ հնարավոր ուղիները կնքելու, կապարակնքելու, դրոշմելու, թվային, տառային կամ դրոշմավորման այլ միջոցի կիրառմամբ, որոնք պետք է բացառեն կասեցման ենթակա գործունեության վայրի տարածք մուտք գործելը կամ մուտք գործելու փորձ կատարելը՝ առանց կիրառված միջոցները վնասելու: Սույն մասում նշված միջոցները կարող են փոփոխվել կամ վերացվել միայն հարկային մարմնի կողմից կամ հարկային մարմնի գրավոր թույլտվությամբ:

8. Գործունեության կասեցման մասին հարկային մարմնի որոշման քաղվածքը հարկային մարմինը փակցնում է կասեցման ենթակա գործունեության վայրի մուտքի մոտ՝ հաճախորդների և գնորդների համար տեսանելի մասում, իսկ արտարժույթի և արտարժույթի դիլերային-բրոկերային առք ու վաճառքի գործունեության կասեցման դեպքում՝

հարկային մարմնի որոշման ընդունման պահից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին հարկային մարմինը գրավոր տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին:

9. Գործունեության կասեցման ընթացքում արգելվում է կասեցման ենթակա գործունեության վայրում իրականացնել գործունեություն, գործառույթ կամ գործողություն, բացառությամբ կասեցման հիմքերը վերացնելուն ուղղված գործառույթների կամ գործողությունների: Գործունեության կասեցման ընթացքում սույն մասում նշված գործունեությունը, գործառույթները կամ գործողությունները կատարվում են հարկային մարմնի գրավոր թույլտվությամբ:

10. Գործունեության կասեցման ավարտի ժամկետ է համարվում գործունեության կասեցման մասին որոշմամբ նախատեսված օրը: Եթե գործունեության կասեցման ժամկետը սահմանվել է մինչև կասեցման համար խախտման հիմքի վերացումը, ապա կասեցման ավարտի ժամկետ է համարվում գործունեությունը կասեցված կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից խախտման հիմքերը վերացնելու մասին հայտարարությունը (համապատասխան հիմնավորող փաստաթղթերը) հարկային մարմին մուտքագրելու օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը, եթե այդ ընթացքում հարկային մարմինն ավելի կարճ ժամկետ չի սահմանում: Գործունեության կասեցման ավարտի մասին որոշումն ընդունում է հարկային մարմնի ղեկավարը:

11. Սույն հոդվածով սահմանված դեպքերում հարկ վճարողի գործունեության կասեցումը կարող է փոխարինվել Օրենսգրքի 416-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված տուգանքի վճարմամբ:

(384-րդ հոդվածը լրաց. 21.12.17 ՀՕ-266-Ն, փոփ. 25.06.19 ՀՕ-68-Ն)

Հոդված 385. Դրամարկղային գործառնությունների իրականացումը

1. Դրամարկղային գործառնություններն իրականացվում են դրամարկղի և (կամ) հաշվետու անձանց միջոցով:

2. Դրամարկղային գործառնությունները գրանցվում են թղթային կամ էլեկտրոնային եղանակով վարվող դրամարկղային գրքում: Դրամարկղային գործառնությունների իրականացման, դրանց փաստաթղթավորման, դրամարկղային գրքի գրանցման և դրամարկղային գրքի վարման կարգը սահմանում է Կառավարությունը:

3. Բանկային հաշիվներից ելքագրված կանխիկ գումարի մուտքագրումը կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ դրամարկղ կատարվում է մինչև կանխիկ գումարը բանկային հաշվից հանելու օրվան հաջորդող աշխատանքային օրը: Կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ դրամարկղից ելքագրված կանխիկ գումարի մուտքագրումը կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ բանկային հաշիվներ կատարվում է մինչև կանխիկ գումարը դրամարկղից հանելու օրվան հաջորդող աշխատանքային օրը:

(385-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Հոդված 386. Կանխիկ դրամով վճարումների նկատմամբ սահմանափակումները

1. Ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործարքների դիմաց Հայաստանի Հանրապետության տարածքում կանխիկ դրամով վճարումների նկատմամբ կիրառվում են հետևյալ սահմանափակումները.

1) ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման յուրաքանչյուր գործարքի դիմաց կանխիկ դրամով գումարի վճարման առավելագույն չափը սահմանվում է 300 հազար դրամ (ներառյալ՝ ԱԱՀ-ի գումարը), իսկ մեկ ամսվա ընթացքում այդպիսի գործարքների հանրագումարի մասով՝ 3 միլիոն դրամ (ներառյալ՝ ԱԱՀ-ի գումարը).

2) ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման յուրաքանչյուր գործարքի դիմաց կանխիկ դրամով գումարի ընդունման առավելագույն չափը սահմանվում է 300 հազար դրամ (ներառյալ՝ ԱԱՀ-ի գումարը), իսկ մեկ ամսվա ընթացքում այդպիսի գործարքների հանրագումարի մասով՝ 3 միլիոն դրամ (ներառյալ՝ ԱԱՀ-ի գումարը), բացառությամբ սույն մասի 3-րդ կետով սահմանված դեպքերի.

3) մանրածախ առևտրում ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման յուրաքանչյուր գործարքի դիմաց անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձից կանխիկ դրամով գումարի ընդունման առավելագույն չափը սահմանվում է 3 միլիոն դրամ (ներառյալ՝ ԱԱՀ-ի գումարը), իսկ եթե մանրածախ առևտրում ապրանքների մատակարարման համար սահմանված կարգով դուրս է գրվում ԱԱՀ-ի վերադարձի հարկային հաշիվ, ապա այդ գործարքների դիմաց Հայաստանի Հանրապետության տարածքում կանխիկ դրամով գումարի ընդունման առավելագույն չափը չի կիրառվում:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված սահմանափակումները՝

1) կիրառելի են՝

ա. կոմիսիոներին, գործակալին կամ հանձնակատարին հասանելիք գումարների (միջնորդավճարների) վճարման կամ ընդունման դեպքերում,

բ. կոմիտենտի, պրինցիպալի կամ հանձնարարողի՝ համապատասխանաբար կոմիսիոներից, գործակալից կամ հանձնակատարից գումարների ընդունման դեպքերում:

2) կիրառելի չեն կոմիսիոների, գործակալի կամ հանձնակատարի կողմից համապատասխանաբար կոմիտենտին,

պրինցիպալին կամ հանձնարարողին կանխիկ դրամով գումարի վճարման, ինչպես նաև ապրանքների վերջնական գնորդներից, աշխատանքներ ընդունողներից կամ ծառայություններ ստացողներից կանխիկ դրամով գումարի ընդունման դեպքերում.

3. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված սահմանափակումների կիրառության իմաստով՝

1) կանխիկ դրամով վճարում է համարվում ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման յուրաքանչյուր գործարքի դիմաց կատարվող բոլոր վճարումների (այդ թվում՝ կանխավճարների, մասնակի վճարումների) հանրագումարը.

2) կանխիկ դրամով վճարում չի համարվում այն վճարումը, որի մասով դուրս է գրվել Օրենսգրքի 381-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերության 4-րդ կետով սահմանված՝ ապրանք ձեռք բերող, աշխատանք ընդունող և (կամ) ծառայություն ստացող կազմակերպության, անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի՝ հարկ վճարողի հաշվառման համարը պարունակող՝ հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոն:

4. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված սահմանափակումները չեն տարածվում ներկայացուցչական ծախսերի դիմաց կատարվող վճարումների, ֆիզիկական անձանց կատարվող՝ նրանց անձնական կամ պասիվ եկամուտներին վերաբերող վճարումների (մասնավորապես՝ աշխատավարձի, դրան հավասարեցված վճարումների, նպաստների, կրթաթոշակների, կենսաթոշակների, փոխհատուցման վճարների), գյուղատնտեսական արտադրանք արտադրող՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց հետ կնքված գրավոր պայմանագրերի հիման վրա նրանցից գնված գյուղատնտեսական արտադրանքի դիմաց կատարվող վճարումների, ինչպես նաև անմիջականորեն գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղվող՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանցից միս ձեռք բերելու դիմաց կատարվող վճարումների վրա:

(386-րդ հոդվածը փոփ. 21.12.17 ՀՕ-266-Ն, լրաց. 21.06.18 ՀՕ-338-Ն, խմբ., փոփ. 25.06.19 ՀՕ-68-Ն)

Հոդված 387. Առհաշիվ տրված կանխիկ գումարների նկատմամբ սահմանափակումները

1. Առհաշիվ անձանց կանխիկ գումարների տրման նկատմամբ կիրառվում են հետևյալ սահմանափակումները.

1) նույն անձին առհաշիվ կանխիկ գումար չի կարող տրվել, եթե նրա կողմից նախկինում ստացված առհաշիվ կանխիկ գումարների ծախսման մասին հաշվետվությունը կազմակերպությունում այդ հաշվետվությունների ընդունման համար պատասխանատուին կամ անհատ ձեռնարկատիրոջը դեռևս չի ներկայացվել, բացառությամբ այն դեպքերի, երբ հաշվետվության ներկայացման ժամկետը չի լրացել.

2) կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից առհաշիվ տրված կանխիկ դրամով գումարների նկատմամբ Կառավարության սահմանած՝ հետևյալ ժամկետային սահմանափակումները.

ա. գործուղումից տարբեր նպատակներով առհաշիվ տրված կանխիկ դրամով գումարների՝ ըստ նպատակի ծախսման կամ կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ դրամարկղ կամ բանկային հաշիվ վերադարձնելու առավելագույն ժամկետ,

բ. գործուղման նպատակով տրված կանխիկ դրամով գումարների՝ ըստ նպատակի չծախսված մասի կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ դրամարկղ կամ բանկային հաշիվ վերադարձնելու առավելագույն ժամկետ:

2. Եթե օրենքով կամ օրենքով սահմանված դեպքերում Կառավարության որոշմամբ պետական հիմնարկների համար կանխիկ դրամով գումարների վճարումների և առհաշիվ տրված կանխիկ դրամով գումարների նկատմամբ սահմանված են այլ սահմանափակումներ, ապա Օրենսգրքի 386-րդ հոդվածով և սույն հոդվածով սահմանված սահմանափակումների փոխարեն կիրառվում են այդ սահմանափակումները:

(387-րդ հոդվածը լրաց. 21.12.17 ՀՕ-266-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Հոդված 388. Կազմակերպության ղեկավարի (անհատ ձեռնարկատիրոջ), գանձապահի պարտականությունները կանխիկ դրամի պահպանման գործում

1. Կազմակերպության դրամարկղում (դրամարկղներում) պահվող արժեքների պահպանման, ինչպես նաև փոխադրման անվտանգության ապահովության պատասխանատվությունը կրում է կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը (անհատ ձեռնարկատերը), եթե կազմակերպության կառավարման համապատասխան մարմնի (անհատ ձեռնարկատիրոջ) որոշմամբ այդ պատասխանատվությունը դրված չէ այլ անձի վրա:

2. Գանձապահն իրականացնում է կանխիկ դրամի ընդունումը (մուտքագրումը) կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ դրամարկղ և բացթողումը (ելքագրումը) կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ դրամարկղից:

3. Գանձապահին արգելվում է իր պարտականությունների կատարումը փոխանցել ուրիշ անձանց՝ առանց կազմակերպության ղեկավարի (անհատ ձեռնարկատիրոջ) հրամանի (որոշման):

4. Գանձապահի պարտականությունները չեն կարող դրվել կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ այն աշխատակիցների վրա, որոնք իրավունք ունեն ստորագրել դրամարկղային փաստաթղթերը, բացառությամբ այն

կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի, որոնց աշխատակիցների թիվը չի գերազանցում երեքը:

(388-րդ հոդվածը լրաց. 21.12.17 ՀՕ-266-Ն)

ԳԼՈՒԽ 75

ԱԿՑԻԶԱՅԻՆ ԴՐՈՇՄԱՆԻՇԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ԴՐՈՇՄԱՊԻՏԱԿՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 389. Ակցիզային դրոշմանիշերով ապրանքների դրոշմավորումը

1. Ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորման ենթակա ապրանքներն են (այսուհետ՝ դրոշմավորման ենթակա ապրանքներ).

Ծածկագիրն ըստ ԱՏԳ ԱԱ	Ապրանքախմբի անվանումը	Ապրանքախմբի համառոտ անվանումը
2204	բնական խաղողի գինիներ, ներառյալ՝ թնդեցված գինիները, խաղողի քաղցրահյութ՝ բացի 2009 ապրանքային դիրքում նշվածից	խմիչքներ
2205	վերմուտներ և խաղողի այլ բնական գինիներ՝ բուսական կամ բուրավետ նյութերի ավելացմամբ	խմիչքներ
2206	խմորման ենթարկված այլ խմիչքներ (օրինակ՝ սիդր, պերրի կամ տանձի սիդր, մեղրաբմպելիք). խառնուրդներ խմորման ենթարկված խմիչքներից և խմորման ենթարկված խմիչքների և ոչ ալկոհոլային խմիչքների խառնուրդներ՝ այլ տեղ չնշված կամ չընդգրկված	խմիչքներ
2207	80% ծավալային բաժին կամ ավելի սպիրտի խտությամբ չբնափոխված էթիլային սպիրտ. բնափոխված, ցանկացած խտության էթիլային սպիրտ և այլ սպիրտային թրմօղի	սպիրտ
2208	80% ծավալային բաժնից պակաս սպիրտի խտությամբ չբնափոխված էթիլային սպիրտ. սպիրտային թրմօղի, լիկյորներ և սպիրտային այլ խմիչքներ, այդ թվում՝ մինչև 9 % սպիրտայնությամբ խմիչքներ, ներառյալ՝ ալկոհոլային կոկտեյլներ	խմիչքներ
2402	սիգարներ, կտրած ծայրերով սիգարներ, սիգարելլաներ և սիգարետներ ծխախոտով կամ դրա փոխարինիչներով	ծխախոտի արտադրանք

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված՝ ԱՏԳԱԱ 2207 ծածկագրին դասվող՝ Հայաստանի Հանրապետությունում արտադրվող և Հայաստանի Հանրապետություն ներմուծվող էթիլային սպիրտի վրա ակցիզային դրոշմանիշի առկայությունը պարտադիր է, եթե այդ ապրանքներն արտադրողի կամ ներմուծողի կամ այլ կերպ տարայավորողի կողմից տարայավորված են մինչև 5 լիտր տարողությամբ տարաներով:

3. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված՝ ԱՏԳԱԱ 2204, 2205, 2206, 2208 ծածկագրերին դասվող՝ մինչև 0.05 լիտր տարողությամբ տարաներով տարայավորված խմիչքները, ինչպես նաև ԱՏԳԱԱ 2208 ծածկագրին դասվող՝ մինչև 9 տոկոս ներառյալ սպիրտայնություն ունեցող սպիրտային խմիչքները ենթակա չեն ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորման:

(389-րդ հոդվածը փոփ. 21.06.18 ՀՕ-338-Ն)

Հոդված 390. Դրոշմապիտակներով ապրանքների դրոշմավորումը

1. Դրոշմապիտակներով դրոշմավորման ենթակա ապրանքներն են (այսուհետ՝ դրոշմավորման ենթակա ապրանքներ).

Ծածկագիրն ըստ ԱՏԳ ԱԱ	Ապրանքախմբի անվանումը	Ապրանքախմբի համառոտ անվանումը
0207	ընտանի թռչունների միս և սննդային ենթամթերք՝ 0105 ապրանքային դիրքում դասակարգված, թարմ, պաղեցրած կամ սառեցրած	միս
0209	անյուղ մսից առանձնացված խոզի ճարպ և չհալեցրած կամ այլ եղանակով չստացած ընտանի թռչունների ճարպ՝ թարմ, պաղեցրած, սառեցրած, աղ դրված, աղաջրի մեջ դրված, չորացրած կամ ապխտած	միս
0210	ընտանի թռչունների միս և մսից սննդային ենթամթերք՝ աղ դրված, աղաջրի մեջ դրված, չորացրած կամ ապխտած. մսից կամ մսի սննդային ենթամթերքից ստացված մանր և խոշոր աղացվածքի ալյուր	միս
0401	կաթ և սերուցք՝ ոչ խտացված և առանց շաքարի կամ այլ քաղցրացնող նյութերի հավելման	կաթնեղեն
0402	կաթ և սերուցք՝ խտացված կամ շաքարի կամ այլ քաղցրացնող նյութերի հավելմամբ	կաթնեղեն
0403	թան, մակարդված կաթ և սերուցք, յոգուրտ, կեֆիր և այլ ֆերմենտացված կամ խմորված կաթ և սերուցք՝ խտացված կամ ոչ խտացված, շաքարի հավելմամբ կամ առանց շաքարի կամ այլ քաղցրացնող նյութերի հավելման, համաբուրային հավելումներով կամ առանց դրանց, մրգերի, ընկույզների կամ կակաոյի հավելմամբ կամ առանց դրանց	կաթնեղեն
0404	կաթնային շիճուկ՝ խտացրած կամ չխտացրած, շաքար կամ այլ քաղցրացնող նյութեր ավելացրած կամ չավելացրած, մթերք կաթի բնական բաղադրիչներից՝ շաքար կամ այլ քաղցրացնող նյութեր ավելացրած կամ չավելացրած, այլ տեղում չնշված կամ չներառված.	կաթնեղեն
0405	կարագ և կաթից պատրաստված այլ ճարպեր ու յուղեր, կաթնային մածուկներ.	կաթնեղեն
0406	պանրի տեսակներ և կաթնաշոռ	կաթնեղեն
0901	սուրճ՝ բրված կամ չբրված, կոֆեինով կամ առանց կոֆեինի, սուրճի կեղև և սուրճի հատիկների թաղանթ (պատյան), սուրճի փոխարինիչներ՝ ցանկացած համամասնությամբ սուրճ պարունակող	սուրճ

0902	թեյ՝ համաբուրային հավելումներով կամ առանց դրանց	թեյ
090300 000	մատե կամ պարագվայական թեյ	թեյ
1504	ձկան կամ ծովային կաթնասունների ճարպեր, յուղեր և դրանց զտամասեր՝ չռաֆինացված կամ ռաֆինացված, սակայն առանց փոփոխելու քիմիական կազմը	ճարպեր և յուղեր
1505	ճարպաքրտինք և դրանից ստացվող ճարպանյութեր (ներառյալ՝ լանոլինը)	ճարպեր և յուղեր
1506	կենդանական այլ ճարպեր, յուղեր և դրանց զտամասերը՝ չռաֆինացված կամ ռաֆինացված, սակայն առանց փոփոխելու քիմիական կազմը	ճարպեր և յուղեր
1507	սոյայի ձեթ և դրա ֆրակցիաներ՝ ռաֆինացված կամ չռաֆինացված, սակայն առանց քիմիական բաղադրության փոփոխության	ձեթ
1508	գետնանուշի ձեթ և դրա ֆրակցիաներ՝ ռաֆինացված կամ չռաֆինացված, սակայն առանց քիմիական բաղադրության փոփոխության	ձեթ
1509	ձիթապտղի ձեթ և դրա խառնուրդամասեր՝ չզտված կամ զտված, բայց առանց քիմիական բաղադրության փոփոխության	ձեթ
1510 00	այլ յուղեր և դրանց զտամասերը, որոնք ստացվում են միայն կանաչ կամ սև ձիթապտղից՝ չռաֆինացված կամ ռաֆինացված, սակայն առանց փոփոխելու քիմիական կազմը, ներառյալ՝ այդ յուղերի կամ զտամասերի խառնուրդները ապրանքային 1509 դիրքում ընդգրկված յուղերի կամ դրանց զտամասերի հետ	այլ յուղեր
1512 11 910	արևածաղկի ձեթ	ձեթ
1512 19 900	արևածաղկի ձեթ	ձեթ
1515	այլ չցնդող բուսական ճարպեր, յուղեր (ներառյալ՝ ժոժոբայի յուղը) և դրանց զտամասերը՝ չռաֆինացված կամ ռաֆինացված, սակայն առանց փոփոխելու քիմիական կազմը	ճարպեր և յուղեր
1516 20 960 2	խաղողի կորիզներից յուղ	յուղ

1517	մարգարին սննդի մեջ օգտագործելու համար պիտանի խառնուրդներ կամ պատրաստի մթերք՝ կենդանական կամ բուսական ճարպերից կամ յուղերից կամ տվյալ խմբի տարբեր ճարպերի կամ յուղերի զտամասերից՝ բացի 1516 ապրանքային դիրքում նշված սննդի ճարպերից կամ յուղերից կամ դրանց զտամասերից	մարգարին
1601	երշիկներ և մսից, մսային ենթամթերքից կամ արյունից պատրաստված համանման մթերք. դրանց հիմքով պատրաստված պատրաստի սննդամթերք	պատրաստի սննդամթերք
1602	մսից, մսային ենթամթերքից կամ արյունից պատրաստի կամ պահածոյացված այլ մթերք	մսեղեն
1603	լուծամզվածքներ և հյութեր մսից, ձկից կամ խեցգետնանմաններից, կակղամարմիններից կամ ջրային այլ անողնաշարավորներից	պատրաստի սննդամթերք
1604	պատրաստի կամ պահածոյացված ձուկ, թառափազգիների խավիար և դրա փոխարինիչներ՝ պատրաստված ձկնկիթի հատիկներից	ձկնեղեն
1605	պատրաստի կամ պահածոյացված խեցգետնակերպեր, կակղամորթեր և ջրային այլ անողնաշարավորներ	ձկնեղեն
1806	շոկոլադ և կակաո պարունակող այլ պատրաստի սննդամթերք	կակաո և դրանից պատրաստված մթերք
1901	ածիկային լուծամզուք, պատրաստի սննդամթերք՝ պատրաստված մանր կամ խոշոր աղացվածքի ալյուրից, ձավարից, օսլայից կամ ածիկային լուծամզուքից՝ առանց կակաոյի պարունակության կամ 40% զանգվածային բաժնից պակաս կակաոյի պարունակությամբ ամբողջովին յուղազրկված հիմքի հաշվարկով, այլ տեղում չնշված կամ չներառված, 0401-0404 ապրանքային դիրքերում ընդգրկված հումքից ստացված պատրաստի սննդամթերք՝ առանց կակաոյի պարունակության կամ 5% զանգվածային բաժնից պակաս կակաոյի պարունակությամբ՝ ամբողջովին յուղազրկված հիմքի հաշվարկով, այլ տեղում չնշված կամ չներառված	խտացրած կաթ
1902	մակարոնային արտադրատեսակներ՝ ջերմային մշակման ենթարկված կամ չենթարկված, միջուկով (մսից կամ այլ մթերքից) կամ առանց միջուկի կամ այլ եղանակով պատրաստված, ինչպես, օրինակ՝ սպագետտի, մակարոն, լապշա, եղջրիկներ, խմորագնդիկներ, ռավիոլա, կաննելոն, կուսկուս՝ պատրաստի կամ ոչ պատրաստի սննդի մեջ օգտագործելու համար	պատրաստի մթերք
1903	տապիոկ և դրա փոխարինիչները՝ պատրաստված օսլայից փաթիլների, հատիկների (գրանուլների), ձավարահատիկների, մանրահատիկների կամ նույնանման այլ տեսքով	պատրաստի մթերք

1904	պատրաստի սննդամթերք՝ ստացված հացաբույսերի հատիկները կամ հացահատիկային մթերքը (օրինակ՝ եգիպտացորենի փաթիլներ) փքելու կամ բովելու միջոցով, հացաբույսեր (բացի եգիպտացորենի հատիկներից)՝ հատիկի կամ փաթիլների տեսքով կամ այլ եղանակով մշակված հատիկի տեսքով (բացի մանր և խոշոր աղացվածքի ալյուրից, ձավարից)՝ նախապես եփած կամ այլ եղանակով պատրաստված, այլ տեղում չնշված կամ չներառված	պատրաստի մթերք
2001	բանջարեղեն, մրգեր, ընկույզներ և բույսերի այլ ուտելի մասեր՝ պատրաստված կամ պահածոյացված քացախի կամ քացախաթթվի հավելմամբ	պահածո
2002	լոլիկներ (պոմիդոր)՝ պատրաստված կամ պահածոյացված առանց քացախի կամ քացախաթթվի	պահածո
2003	սնկեր և գետնասնկեր՝ պատրաստված կամ պահածոյացված առանց քացախի կամ քացախաթթվի հավելման	պահածո
2004	այլ բանջարեղեն՝ պատրաստված կամ պահածոյացված առանց քացախի կամ քացախաթթվի հավելման, սառեցված, բացի 2006 ապրանքային դիրքում նշված մթերքից	պահածո
2005	այլ բանջարեղեն՝ պատրաստված կամ պահածոյացված առանց քացախի կամ քացախաթթվի հավելման, չսառեցված, բացի 2006 ապրանքային դիրքում նշված մթերքից	պահածո
2006	բանջարեղեն, մրգեր, ընկույզներ, պտուղների կեղև և բույսերի այլ մասեր՝ շաքարի միջոցով պահածոյացված (շաքարի օշարակով ներծծված, շաքարահյութով պատված, շաքարահյութով եփված, շաքարված)	պահածո
2007	ջեմեր, մրգային ժելե, մարմելադներ, մրգային կամ ընկույզի պյուրե, մրգային կամ ընկույզի մածուկ՝ ստացված ջերմային մշակումից, այդ թվում՝ շաքարի կամ այլ քաղցրացնող նյութերի հավելմամբ	պահածո
2008	մրգեր, ընկույզներ և բույսերի ուտելի այլ մասեր՝ պատրաստված կամ պահածոյացված այլ եղանակով՝ շաքար կամ այլ քաղցրացնող նյութեր կամ սպիրտ պարունակող կամ չպարունակող՝ այլ տեղում չհիշատակված կամ չներառված	պահածո
2009	մրգահյութեր և բանջարեղենի հյութեր՝ չխմորված և սպիրտ չավելացված	հյութ

2101	սուրճի, թեյի կամ մատեի (պարագվայական թեյի) լուծամզուքներ, բնահյութեր և խտածոներ (կոնցենտրատներ) և պատրաստի մթերք՝ դրանց կամ սուրճի հիմքով, թեյի կամ մատեի (պարագվայական թեյի) հիմքով. բոված եղերդ և սուրճի այլ բոված փոխարինիչներ և դրանց լուծամզուքները, բնահյութերը և խտածոները	սուրճ
2105 00	պաղպաղակ և սննդային սառույցի այլ տեսակներ՝ կակաո պարունակող կամ չպարունակող	պաղպաղակ
2201	ջրեր, ներառյալ՝ բնական կամ արհեստական հանքային ջրերը՝ գազավորված կամ չգազավորված, առանց շաքարի կամ այլ քաղցրացնող կամ բուրավետ նյութերի հավելման	ջուր
2202	ջրեր, ներառյալ՝ հանքային և գազավորված ջրերը՝ շաքարի կամ այլ քաղցրացնող կամ բուրավետ նյութերի հավելմամբ և այլ ոչ ալկոհոլային խմիչքներ	ըմպելիք
2203	գարեջուր	գարեջուր
2208	ԱՏԳ ԱԱ 2208 ապրանքային դիրքին դասվող՝ մինչև 9% սպիրտայնության խմիչքներ, ներառյալ՝ ալկոհոլային կոկտեյլներ	կոկտեյլ
2209 00	քացախ և դրա փոխարինիչներ՝ ստացված քացախաթթվից	քացախ
2309	կենդանիներին կերակրելու համար օգտագործվող մթերք	մթերք
2710 19 710 0 2710 19 750 0 2710 19 820 0 2710 19 840 0 2710 19 860 0 2710 19 880 0 2710 19 920 0 2710 19 940 0 2710 19 980 0	քսայուղեր, այլ յուղեր	նավթավերամշակման արտադրանք
2936	պրովիտամիններ, վիտամիններ	վիտամին
3002 20 000	պատվաստանյութ՝ մարդու համար, մանրածախ առևտրի համար	պատվաստանյութ
3002 30 000	պատվաստանյութ՝ կենդանիների համար	պատվաստանյութ

3003	դեղամիջոց՝ թերապևտիկ և պրոֆիլակտիկ նպատակներով օգտագործման համար, մանրածախ առևտրի համար չփաթեթավորված	դեղ
3004	դեղամիջոց՝ թերապևտիկ և պրոֆիլակտիկ նպատակներով օգտագործման համար՝ փաթեթավորված մանրածախ առևտրի համար, բացառությամբ պետության կողմից կենտրոնացված կարգով ձեռք բերվող և երաշխավորված կարգով տրամադրվող ինսուլինի կամ թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութ պարունակող դեղերի, որոնց համար դրոշմապիտակով դրոշմավորում չի պահանջվում	դեղ
3203 00	բուսական կամ կենդանական ծագում ունեցող ներկող նյութեր (ներառյալ՝ ներկող լուծամզուքները, բացի կենդանական ածուխից)՝ որոշակի կամ անորոշ քիմիական բաղադրության, տվյալ խմբի 3-րդ ծանոթագրության մեջ նշված բուսական կամ կենդանական ծագում ունեցող ներկող նյութերի հիմքով պատրաստված պատրաստուկներ	ներկանյութեր
3204	օրգանական սինթետիկ ներկող նյութեր՝ որոշակի կամ անորոշ քիմիական բաղադրության, պատրաստուկներ՝ պատրաստված տվյալ խմբի 3-րդ ծանոթագրության մեջ նշված օրգանական սինթետիկ ներկող նյութերի հիմքով, օրգանական սինթետիկ արտադրանք, որն օգտագործվում է որպես օպտիկական սպիտակեցնող նյութ կամ լյումինաֆոր՝ որոշակի կամ անորոշ քիմիական բաղադրության	ներկանյութեր
3205 00 000 0	գունավոր լաքեր, տվյալ խմբի 3-րդ ծանոթագրության մեջ նշված գունավոր լաքերի հիմքով պատրաստուկներ	լաքեր
3206	ներկող այլ նյութեր, տվյալ խմբի 3-րդ ծանոթագրության մեջ նշված և 3203, 3204 կամ 3205 ապրանքային դիրքերում ընդգրկված պատրաստուկներից տարբեր պատրաստուկներ, որպես լյումինաֆոր օգտագործվող անօրգանական արտադրանք՝ որոշակի կամ անորոշ քիմիական բաղադրության	ներկանյութեր
3207 10 000 0	պատրաստի գունանյութեր, ապակու պատրաստի պղտորիչներ և պատրաստի ներկեր և համանման պատրաստուկներ	ներկանյութեր
3208	ներկեր և լաքեր (ներառյալ՝ արծնները և ողորկալաքերը)՝ սինթետիկ պոլիմերների կամ քիմիապես վերափոխված բնական պոլիմերների հիմքով՝ ոչ ջրային միջավայրում դիսպերսված կամ լուծված, տվյալ խմբի 4-րդ ծանոթագրության մեջ նշված լուծույթներ	ներկանյութեր
3209	ներկեր և լաքեր (ներառյալ՝ արծնները և ողորկալաքերը)՝ սինթետիկ պոլիմերների կամ քիմիապես վերափոխված բնական պոլիմերների հիմքով՝ ջրային միջավայրում դիսպերսված կամ լուծված	ներկանյութեր

3210 00	այլ ներկեր և լաքեր (ներառյալ՝ արծնները, ռոդոկալաքերը և սոսնձային ներկերը), պատրաստի ջրային գունանյութեր՝ կաշվի մշակման համար օգտագործվող	ներկանյութեր
3211 00	պատրաստի չորարարներ	չորարարներ
3212	գունանյութեր (ներառյալ՝ մետաղական փոշիներ և փաթիլներ)՝ ոչ ջրային միջավայրում դիսպերսված, հեղուկ կամ մածուկանման, որոնք օգտագործվում են ներկերի արտադրության մեջ (ներառյալ՝ արծնները), փայլաթիթեղ՝ դրոշմատպման համար, ներկանյութեր և ներկող այլ նյութեր՝ բաժնեծրարված կամ փաթեթավորմամբ՝ մանրածախ վաճառքի համար	գունանյութեր
3303 00	օծանելիք, հարդաջուր	օծանելիք
3304	կոսմետիկ միջոցներ կամ դիմահարդարման և մաշկի խնամքի այլ միջոցներ (բացառությամբ դեղամիջոցների), ներառյալ՝ արևայրուքի դեմ կամ արևայրուքի համար միջոցներ, ձեռքերի կամ ոտքերի մատնահարդարման միջոցներ,	կոսմետիկա
3305	մազերի խնամքի միջոցներ	կոսմետիկա
3306	բերանի խոռոչի և ատամների հիգիենայի միջոցներ, ներառյալ՝ ատամնապրոթեզների ֆիքսման փոշիներն ու մածուկները, միջատամային տարածքները մաքրելու թելեր (ատամները մաքրելու մետաքսաթել)՝ անհատական փաթեթավորմամբ՝ մանրածախ վաճառքի համար	հիգիենայի միջոցներ
3307	միջոցներ՝ սափրվելուց առաջ, սափրվելու ընթացքում կամ դրանից հետո օգտագործելու համար, անհատական օգտագործման հոտազերծիչներ, բաղադրություններ՝ լոգանք ընդունելու համար, մազահեռացման միջոցներ և օծանելիքային, կոսմետիկական ու հարդարման այլ միջոցներ՝ այլ տեղում չնշված կամ չներառված. հոտազերծիչներ՝ նախատեսված շենքերում օգտագործելու համար՝ բուրավետացված կամ ոչ բուրավետացված, ախտահանիչ հատկություններով օժտված կամ առանց դրանց	խնամքի միջոցներ
3401	օճառ, մակերևութային ակտիվ օրգանական նյութեր և միջոցներ, որպես օճառ կիրառվող (կտորների, քառակողիկների կամ կաղապարվածքների ձևով)՝ օճառ պարունակող կամ չպարունակող, մակերևութային ակտիվ օրգանական նյութեր և մաշկը լվանալու համար միջոցներ՝ հեղուկների կամ քսուքների տեսքով՝ կշռաբաշխված մանրածախ առևտրի համար՝ օճառ պարունակող կամ չպարունակող, թուղթ, բամբակ, թաղիք կամ նրբաթաղիք (ֆետր) և չհյուսված նյութեր՝ ներծծված կամ պատված օճառով կամ լվացող միջոցով	օճառ

3402	մակերևութային ակտիվ օրգանական նյութեր (բացի օճառից), մակերևութային ակտիվ նյութեր, լվացող միջոցներ (ներառյալ՝ օժանդակ լվացող միջոցները) և մաքրող միջոցներ՝ օճառ պարունակող կամ չպարունակող (բացի 3401 ապրանքային դիրքի միջոցներից)	օճառ
3403 19 100 0 3403 19 900 0 3403 99 000 0	քսայուղեր, այլ յուղեր	Նավթավերամշակման արտադրանք

2. Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրված կամ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված՝ շշալցված կամ ցանկացած այլ կերպ տարայավորված (փաթեթավորված)՝ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ապրանքների վրա Հայաստանի Հանրապետության տարածքում օտարման ցանկացած փուլում դրոշմապիտակի առկայությունը պարտադիր է, եթե այդ ապրանքներն օտարվում են նույն տարայավորմամբ (փաթեթավորմամբ) ու ապրանքային տեսքով՝ առանց քաշը (ծավալը) փոփոխելու, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի:

3. ԱՏԳ ԱԱ 0405, 0406, 0901, 0902, 0903 00 000, 1806 և 2101 ծածկագրերին դասվող՝ մինչև 100 գրամ (ներառյալ) կամ 100 գրամից առավելագույնը 10 տոկոս շեղումով պարունակություն ունեցող՝ տարայավորված (փաթեթավորված) ապրանքները ենթակա չեն դրոշմապիտակներով դրոշմավորման:

(390-րդ հոդվածը խմբ., լրաց. 21.12.17 ՀՕ-266-Ն, լրաց., փոփ. 21.06.18 ՀՕ-338-Ն, լրաց. 25.06.19 ՀՕ-68-Ն)

Հոդված 391. Ակցիզային դրոշմանիշերով և (կամ) դրոշմապիտակներով դրոշմավորման պարտավորություն կրողները

1. Ակցիզային դրոշմանիշերով և (կամ) դրոշմապիտակներով դրոշմավորման (այսուհետ սույն գլխում՝ նաև դրոշմավորում) պարտավորություն են կրում ԵՏՄ անդամ չհամարվող պետություններից՝ «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով և ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն դրոշմավորման ենթակա ապրանքներ ներմուծող և (կամ) Հայաստանի Հանրապետությունում դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը, բացառությամբ սույն հոդվածով սահմանված դեպքերի:

2. Կազմակերպությունների (բացառությամբ մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպությունների) կամ անհատ ձեռնարկատերերի պատվերով դրոշմավորման ենթակա ապրանքներն այլ հարկ վճարողների կողմից արտադրվելու կամ շշալցվելու կամ այլ կերպ տարայավորվելու (փաթեթավորվելու) և պատվիրատուին վերադարձվելու դեպքում դրոշմավորման պարտավորությունը կրում է պատվիրատուն:

3. Մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպությունների և մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց պատվերով դրոշմավորման ենթակա ապրանքներն այլ հարկ վճարողների կողմից արտադրվելու կամ շշալցվելու կամ այլ կերպ տարայավորվելու (փաթեթավորվելու) և պատվիրատուին վերադարձվելու դեպքում դրոշմավորման պարտավորությունը կրում է այդ ապրանքներն արտադրողը կամ շշալցնողը կամ այլ կերպ տարայավորողը (փաթեթավորողը):

4. Որպես գրավի առարկա՝ գրավառուին հանձնված՝ դրոշմավորման ենթակա չդրոշմավորված ապրանքների տնօրինման իրավունքն օրենսդրությամբ սահմանված կարգով գրավառուին անցնելու դեպքում դրոշմավորման պարտավորությունը կրում է գրավատուն:

5. Օրենսգրքի 5-րդ գլխով սահմանված կարգով իրականացվող համատեղ գործունեության դեպքում դրոշմավորման պարտավորությունը կրում է համատեղ գործունեության հաշվետու մասնակիցը:

6. Արտադրող կամ ներմուծող չհանդիսացող՝ դրոշմավորման ենթակա ապրանքներ օտարող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը մինչև օրենքով սահմանված՝ դրոշմավորման ենթակա ապրանքներն իրենց կողմից առանց դրոշմավորման օտարելու վերջնաժամկետը ներառյալ կարող են Կառավարության սահմանած կարգով դրոշմավորել իրենց մոտ առկա՝ դրոշմավորման ենթակա ապրանքների գույքագրված մնացորդները:

Սույն մասով սահմանված դեպքում արտադրող կամ ներմուծող չհանդիսացող՝ դրոշմավորման ենթակա ապրանքներ օտարող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի նկատմամբ կիրառվում են դրոշմավորման պարտավորություն կրող հարկ վճարողների համար սույն գլխով և ակցիզային դրոշմանիշերի ու դրոշմապիտակների համակարգի կիրառությունն ապահովող համապատասխան իրավական ակտերով սահմանված կարգավորումները, եթե օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ:

(391-րդ հոդվածը փոփ. 21.12.17 ՀՕ-266-Ն, 23.03.18 ՀՕ-261-Ն)

Հոդված 392. Դրոշմավորման ենթակա ապրանքների չդրոշմավորումը

1. Դրոշմավորման ենթակա չեն՝

1) ֆիզիկական անձանց կողմից որպես ուղեկցող բեռ Հայաստանի Հանրապետություն ներմուծվող՝ ԵՏՄ և Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությամբ սահմանված արժեքային, բնաիրային և քանակական չափերը չգերազանցող դրոշմավորման ենթակա ապրանքները.

2) Օրենսգրքի 391-րդ հոդվածին համապատասխան դրոշմավորման պարտավորություն կրող հարկ վճարողների կողմից Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանվող դրոշմավորման ենթակա ապրանքները, ինչպես նաև անմաքս առևտրի խանութում վաճառքի համար նախատեսված դրոշմավորման ենթակա ապրանքները.

3) Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների, դրանց հավասարեցված միջազգային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող դրոշմավորման ենթակա ապրանքները՝ Կառավարության սահմանած կարգով մաքսային մարմնի կողմից տրվող համաձայնության հիման վրա:

(392-րդ հոդվածը փոփ. 21.12.17 ՀՕ-266-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն, լրաց. 25.06.19 ՀՕ-68-Ն)

Հոդված 393. Ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների տրամադրման կարգը

1. Ակցիզային դրոշմանիշերը և (կամ) դրոշմապիտակները տրամադրվում են Օրենսգրքի 391-րդ հոդվածի համաձայն՝ դրոշմավորման պարտավորություն կրող հարկ վճարողներին:

2. Դրոշմավորման պարտավորություն կրող հարկ վճարողները (այդ թվում՝ Օրենսգրքի 391-րդ հոդվածի 6-րդ մասում նշված հարկ վճարողները) ակցիզային դրոշմանիշերը և (կամ) դրոշմապիտակները ստանում են հարկային մարմնից:

3. Օրենսգրքի 389-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ ներմուծվող ապրանքների դրոշմավորման համար նախատեսված ակցիզային դրոշմանիշերն ստացվում են մինչև այդ ապրանքների Հայաստանի Հանրապետություն ներմուծումը, իսկ Օրենսգրքի 389-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ արտադրվող ապրանքների դրոշմավորման համար նախատեսված ակցիզային դրոշմանիշերը, ինչպես նաև Օրենսգրքի 390-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ապրանքների դրոշմավորման համար նախատեսված դրոշմապիտակները՝ մինչև այդ ապրանքների օտարումը:

4. Ակցիզային դրոշմանիշերը և (կամ) դրոշմապիտակները տրամադրվում են էլեկտրոնային եղանակով ներկայացված հայտի և հայտի ներկայացման օրվա դրությամբ նախկինում ստացված ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների օգտագործման մասին հաշվետվության հիման վրա, հայտ ներկայացրած կազմակերպության լիազորած ֆիզիկական անձին (անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անհատ ձեռնարկատիրոջը կամ նրա կողմից լիազորված ֆիզիկական անձին) հայտը ներկայացնելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Սույն մասով սահմանված հայտի և հաշվետվության ձևերը և լրացման կարգերը սահմանում է հարկային մարմինը:

5. Ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների ստացման հայտը մերժվում է, եթե՝

1) սույն հոդվածի 4-րդ մասում նշված հաշվետվությունը չի ներկայացվել.

2) ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների վերադարձը սահմանված ժամկետից ուշացնելու, հարկային մարմնի կողմից հետ չընդունվելու կամ դրանց կորստի համար Օրենսգրքով սահմանված տուգանքը չի վճարվել.

3) դեռևս առկա են նախկինում ստացված՝ ԱՏԳ ԱԱ 2402 ծածկագրին դասվող ծխախոտի արտադրանքի՝ 30 միլիոն հատը և (կամ) ԱՏԳ ԱԱ 2204, 2205, 2206, 2207, 2208 ծածկագրերին դասվող ապրանքախմբի՝ մեկ միլիոն 200 հազար հատը գերազանցող ակցիզային դրոշմանիշեր:

6. Ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների ստացումը հաստատվում է ստացականով:

7. Դրոշմավորման պարտավորություն կրող՝

1) հարկ վճարողները (բացառությամբ Օրենսգրքի 13-րդ բաժնի համաձայն շրջանառության հարկ վճարող համարվող կամ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվող հարկ վճարողների) մինչև ապրանքների օտարումն էլեկտրոնային եղանակով կատարում են գրանցումներ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ մինչև ապրանքների օտարումն էլեկտրոնային եղանակով կատարում են ճշգրտումներ այդ գրանցումներում.

2) Օրենսգրքի 13-րդ բաժնի համաձայն շրջանառության հարկ վճարող համարվող կամ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվող հարկ վճարողները կարող են մինչև ապրանքների օտարումն էլեկտրոնային եղանակով գրանցումներ չկատարել, եթե գրանցման ենթակա բոլոր տվյալները (բացառությամբ տրամադրվելիք դրոշմապիտակների սերիաների և հերթական համարների) նշում են դրոշմապիտակների ստացման հայտում: Սույն կետում նշված հարկ վճարողները անհրաժեշտության դեպքում կարող են մինչև ապրանքների օտարումն էլեկտրոնային եղանակով գրանցումներ կատարելու միջոցով ճշգրտել նախկինում իրենց ներկայացրած դրոշմապիտակների ստացման հայտում նշված տվյալները:

8. Սույն հոդվածի 7-րդ մասի կիրառության իմաստով՝

1) մինչև դրոշմավորման ենթակա ապրանքների օտարումն էլեկտրոնային եղանակով գրանցումների կատարումը և (կամ) գրանցման ենթակա բոլոր տվյալներով դրոշմապիտակների ստացման հայտի ներկայացումը չի դիտվում որպես էլեկտրոնային գրանցումներում կամ դրոշմապիտակների ստացման հայտում նշված ապրանքների օտարում.

2) մինչև դրոշմավորման ենթակա ապրանքների օտարումն էլեկտրոնային եղանակով գրանցվում են դրոշմավորման ենթակա ապրանքների տեսակը, ենթատեսակը (նկարագիրը), տարողությունը (ծավալը, քաշը կամ տվյալ ապրանքատեսակին բնորոշ չափման այլ միավորը), քանակությունը և համապատասխան ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների սերիաներն ու հերթական համարները (այդ թվում՝ միջակայքերով):

9. Հարկային մարմինը յուրաքանչյուր արտադրողի և ներմուծողի (այդ թվում՝ ԵՏՄ անդամ պետություններից) համար վարում են ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների հաշվառման քարտեր՝ ըստ տեսակների: Քարտում նշվում են տրամադրված, հետ ընդունված ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների քանակները, սերիաները և համարները:

(393-րդ հոդվածը փոփ., լրաց. 21.12.17 ՀՕ-266-Ն, խմբ., փոփ. 21.06.18 ՀՕ-338-Ն, փոփ. 25.06.19 ՀՕ-68-Ն)

Հոդված 394. Դրոշմավորման կանոնները

1. Ապրանքների դրոշմավորումն իրականացվում է Օրենսգրքի 393-րդ հոդվածին համապատասխան ստացված ակցիզային դրոշմանիշերը և (կամ) դրոշմապիտակները դրոշմավորման ենթակա ապրանքների վրա փակցվելու միջոցով:

2. Եթե դրոշմապիտակներով դրոշմավորման պարտավորություն կրող հարկ վճարողների կողմից օտարվում են նույն փաթեթում կամ ցանկացած այլ ձևի տարայում գտնվող դրոշմապիտակներով դրոշմավորման ենթակա և ոչ ենթակա ապրանքներ, ապա դրանց դրոշմավորումը և էլեկտրոնային եղանակով գրանցումները (այդ թվում՝ գրանցումներում ճշգրտումներն) իրականացվում են միայն դրոշմապիտակներով դրոշմավորման ենթակա ապրանքի մասով՝ սույն հոդվածի և Օրենսգրքի 393-րդ հոդվածի համաձայն:

3. Եթե դրոշմապիտակներով դրոշմավորման պարտավորություն կրող հարկ վճարողների կողմից օտարվում են նույն փաթեթում կամ ցանկացած այլ ձևի տարայում գտնվող դրոշմապիտակներով դրոշմավորման ենթակա մեկից ավելի ապրանքներ, ապա դրանց դրոշմավորումը և էլեկտրոնային եղանակով գրանցումները (այդ թվում՝ գրանցումներում ճշգրտումներն) իրականացվում են յուրաքանչյուր դրոշմապիտակով դրոշմավորման ենթակա ապրանքի մասով առանձին՝ սույն հոդվածի և Օրենսգրքի 393-րդ հոդվածի համաձայն, բացառությամբ սույն մասի երկրորդ պարբերությամբ սահմանված դեպքերի:

ԱՏԳ ԱԱ 0207 և 0210 ծածկագրերին դասվող՝ ընտանի թռչունների պաղեցված կամ սառեցված մսի դրոշմավորումը և էլեկտրոնային եղանակով գրանցումները (այդ թվում՝ գրանցումներում ճշգրտումները) կարող են իրականացվել յուրաքանչյուր արկղի համար:

4. Դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրող կամ Օրենսգրքի 391-րդ հոդվածի 6-րդ մասում նշված հարկ վճարողները ապրանքների դրոշմավորումը կարող են իրականացնել ապրանքի արտադրության կամ օտարման նախապատրաստման ցանկացած փուլում՝ իրենց կողմից ընտրված տարածքում, բայց ոչ ուշ, քան մինչև այդ ապրանքների օտարումը:

5. Դրոշմապիտակներով դրոշմավորման ենթակա ապրանքներ ներմուծող հարկ վճարողներն ապրանքների դրոշմավորումը կարող են իրականացնել նախքան այդ ապրանքները Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելը կամ ներմուծելուց հետո՝ ներմուծողի ընտրած տարածքում, բայց ոչ ուշ, քան մինչև այդ ապրանքների օտարումը:

6. Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող՝ ԱՏԳ ԱԱ 2204, 2205, 2206, 2207, 2208, 2402 ծածկագրերին դասվող ապրանքների՝ ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորումն իրականացվում է մինչև այդ ապրանքների՝ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծումը, բացառությամբ սույն մասով սահմանված դեպքերի:

Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող՝ ԱՏԳ ԱԱ 2204, 2205, 2206, 2207, 2208, 2402 ծածկագրերին դասվող՝ բոնագրավված, հօգուտ պետության տիրազուրկ ճանաչված կամ ժառանգության իրավունքով պետությանն անցած ապրանքների, ինչպես նաև սիգարների կամ մինչև 25000 շիշ ալկոհոլային խմիչքների դրոշմավորումը կարող է իրականացվել Հայաստանի Հանրապետության տարածքում՝ մինչև մաքսային ձևակերպումների իրականացումը՝ մաքսային հսկողության ներքո:

Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող՝ ԱՏԳ ԱԱ 2204, 2205, 2206, 2207, 2208, 2402 ծածկագրերին դասվող՝ բոնագրավված, հօգուտ պետության տիրազուրկ ճանաչված կամ ժառանգության իրավունքով պետությանն անցած ապրանքների դրոշմավորումն իրականացնում է օրենքով սահմանված՝ հրապարակային սակարկությունների կազմակերպիչը:

7. Դրոշմավորման ենթակա ապրանքի վրա պետք է փակցված լինի չվնասված, ամբողջական ակցիզային դրոշմանիշ և (կամ) դրոշմապիտակ, որոնց գծով էլեկտրոնային եղանակով կատարված գրանցումները պետք է համապատասխանեն դրոշմավորման ենթակա ապրանքի տեսակին, ենթատեսակին (նկարագրին), տարողությանը (ծավալին, քաշին կամ

տվյալ ապրանքատեսակին բնորոշ չափման այլ միավորին) և էլեկտրոնային եղանակով գրանցված սերիային ու համարին:

8. Ապրանքների դրոշմավորման կանոնները (այդ թվում՝ դրոշմավորման ենթակա յուրաքանչյուր ապրանքատեսակի կամ փաթեթի կամ ցանկացած այլ ձևով տարայի վրա դրոշմավորման տեղը) սահմանում է Կառավարությունը:

Օրենսգրքի 390-րդ հոդվածի 1-ին մասի աղյուսակում նշված՝ ԱՏԳ ԱԱ 0207, 0209, 0210, 0406, 1601, 1602, 1603, 1604 և 1605 ծածկագրերին դասվող ապրանքատեսակների՝ էլեկտրոնային եղանակով գրանցված քաշի և օտարման պահին փաստացի քաշի միջև առկա դրական տարբերությունը չի համարվում ապրանքների դրոշմավորման կանոնների խախտում, եթե այդ տարբերությունը չի գերազանցում էլեկտրոնային եղանակով գրանցված քաշի 10 տոկոսը:

9. Արգելվում է ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների օտարումը կամ փոխանցումը (տրամադրումը, հատկացումը) այլ հարկ վճարողների, բացառությամբ «ժամանակավոր արտահանում» (ԵՏՄ անդամ պետությունների մասով՝ «մաքսային տարանցում») մաքսային ընթացակարգերով արտահանված ակցիզային դրոշմանիշերը և (կամ) դրոշմապիտակներն օտարերկրյա պայմանագիր կողմին փոխանցելու, Օրենսգրքի 391-րդ հոդվածի 2-րդ մասում նշված՝ պատվիրատուի կողմից դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրող կամ շշալցնող կամ այլ կերպ տարայավորող հարկ վճարողներին փոխանցելու, ինչպես նաև դրոշմավորման ծառայություն (գործողություն) մատուցող հարկ վճարողներին փոխանցելու դեպքերի:

(394-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն, լրաց. 21.06.18 ՀՕ-338-Ն, 25.06.19 ՀՕ-68-Ն)

Հոդված 395. Ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների նմուշների և տեխնիկական պահանջների սահմանումը

1. Հայաստանի Հանրապետությունում արտադրվող կամ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող ապրանքների դրոշմավորման համար կիրառվող ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների նմուշները, չափը, ձևը, գույնը և տեխնիկական պահանջները սահմանում են հարկային և (կամ) մաքսային մարմինները:

2. Հայաստանի Հանրապետությունում արտադրվող և Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող դրոշմավորման ենթակա ապրանքների ակցիզային դրոշմանիշերը և (կամ) դրոշմապիտակները պետք է տարբերվեն գույնով և համապատասխանաբար՝ «տեղական» կամ «ներմուծված» մակագրությունով:

3. Ակցիզային դրոշմանիշը և (կամ) դրոշմապիտակը պետք է հնարավորություն ընձեռեն Apple iOS 6, Android 4, Windows Phone 8, ինչպես նաև համարժեք կամ առավել բարձր օպերացիոն համակարգերից որևէ մեկով աշխատող համընդհանուր օգտագործման էլեկտրոնային շարժական սարքի (բջջային հեռախոս, պլանշետ և այլն) միջոցով տեսանելի դարձնելու ապրանքն արտադրողի կամ ներմուծողի անվանումը, հասցեն, ՀՎՀՀ-ն, ապրանքի տեսակը, ենթատեսակը (նկարագիրը), ապրանքի տարողությունը (ծավալը, քաշը կամ տվյալ ապրանքատեսակին բնորոշ չափման այլ միավորը, բացառությամբ Օրենսգրքի 390-րդ հոդվածով սահմանված՝ ԱՏԳ ԱԱ 3304, 3305, 3401 և 3402 ծածկագրերին դասվող այն ապրանքների դրոշմավորման համար նախատեսված դրոշմապիտակների, որոնց համար հնարավոր չէ սահմանել համապատասխան չափման միավոր):

4. Ակցիզային դրոշմանիշը և (կամ) դրոշմապիտակը դրոշմավորման ենթակա ապրանքի վրա փակցնելուց (դրոշմավորելուց) հետո պետք է բացառվի այն անվնաս պոկելու հնարավորությունը:

Հոդված 396. Չօգտագործված կամ վնասված ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների վերադարձը

1. Չօգտագործված ակցիզային դրոշմանիշերը և (կամ) դրոշմապիտակները վերադարձվում են դրանց ստացման ամսվան հաջորդող վեցամսյա ժամկետում:

Նշված ժամկետը հարկային մարմնի կողմից հարկ վճարողի դիմումի հիման վրա երկարաձգվում է դիմումում նշված ժամկետով, բայց ոչ ավելի, քան 90 օրով:

Սույն մասում նշված դիմումի ձևը և լրացման կարգը սահմանում է հարկային մարմինը:

2. Վնասված ակցիզային դրոշմանիշերը և (կամ) դրոշմապիտակները վերադարձվում են յուրաքանչյուր կիսամյակի արդյունքներով, մինչև կիսամյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

3. Չօգտագործված կամ վնասված ակցիզային դրոշմանիշերը և (կամ) դրոշմապիտակները հարկ վճարողի կողմից, հարկային մարմնի սահմանած ձևի դիմումի հիման վրա, վերադարձվում են հարկային մարմին:

4. Հարկային մարմինը դիմումն ստանալուց հետո՝ տասը աշխատանքային օրվա ընթացքում, ստուգում է վնասված ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների համապատասխանությունը սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված պահանջներին և ընդունում է որոշում այդ պահանջներին դրանց համապատասխանության (անհամապատասխանության) մասին և որոշման ընդունման օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է հարկ վճարողին:

5. Չօգտագործված ակցիզային դրոշմանիշերը և (կամ) դրոշմապիտակները հարկային մարմինը հետ է ընդունում առանց սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված պահանջներին դրանց համապատասխանությունը ստուգելու:

6. Վնասված ակցիզային դրոշմանիշերը և (կամ) դրոշմապիտակները հարկային մարմինը չի ընդունում, եթե չեն պահպանվել հետևյալ պայմանները.

1) ակցիզային դրոշմանիշերը և դրոշմապիտակները պետք է փակցված լինեն առանձին էջերի վրա՝ առանց ծալքերի և անհարթությունների.

2) պետք է պարզ երևան ակցիզային դրոշմանիշի և (կամ) դրոշմապիտակի սերիան և համարը.

3) ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների պատռվածքի դեպքում պատռված մասերը պետք է միացված լինեն:

(396-րդ հոդվածը լրաց., փոփ. 21.12.17 ՀՕ-266-Ն, փոփ., լրաց. 21.06.18 ՀՕ-338-Ն, փոփ. 25.06.19 ՀՕ-68-Ն)

Հոդված 396.1. Հայաստանի Հանրապետության վավերացված միջազգային համաձայնագրերի հիման վրա ապրանքների դրոշմավորման կարգը

1. Հայաստանի Հանրապետության վավերացված միջազգային համաձայնագրերի հիման վրա հսկիչ (նույնականացման) նշաններով ապրանքների դրոշմավորում սահմանված լինելու դեպքում հսկիչ (նույնականացման) նշաններով ապրանքների դրոշմավորման պարտավորություն կրող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի նկատմամբ կիրառվում են դրոշմապիտակներով դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրող կամ ներմուծող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար Օրենսգրքով, այլ օրենքներով և դրոշմապիտակների համակարգի կիրառությունն ապահովող համապատասխան ենթաօրենսդրական ակտերով նախատեսված կարգավորումները:

(396.1-ին հոդվածը լրաց. 21.12.17 ՀՕ-266-Ն)

Բ Ա Ժ Ի Ն 18

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԵՆՍԳՐՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ԿԱՄ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Գ Լ ՈՒ Խ 76

ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Հոդված 397. Հարկային իրավախախտումը և հարկային պատասխանատվությունը

1. Հարկային իրավախախտում է համարվում հարկ վճարողի կամ հարկային գործակալի հակաիրավական այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար Օրենսգրքով և (կամ) վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված է հարկային պատասխանատվություն:

2. Հարկային պատասխանատվությունը իրավական պատասխանատվության ինքնուրույն տեսակ է, որն ուղղված է պետության ֆինանսական կայունության և ֆինանսական շահերի ապահովմանը՝ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթները խախտելու հետևանքով պետությանը պատճառված նյութական վնասի լրիվ ծավալով հատուցման, հարկային իրավախախտում կատարած հարկ վճարողի նկատմամբ լրացուցիչ պարտավորություն սահմանելու, ինչպես նաև նրան հարկային պարտավորության անհապաղ կատարումը պարտադրելու և հետագա հարկային իրավախախտումները կանխարգելելու միջոցով:

3. Հարկային իրավախախտման համար հարկ վճարողները կամ հարկային գործակալները հարկային պատասխանատվության են ենթարկվում բացառապես Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում և կարգով:

Հոդված 398. Հարկային իրավախախտումների արձանագրումը

1. Հարկային վարչարարության իրականացման ընթացքում հարկային իրավախախտում հայտնաբերելուց անմիջապես հետո հարկային մարմնի պատասխանատու պաշտոնատար անձը կազմում է արձանագրություն, բացառությամբ այն դեպքերի, երբ հարկային իրավախախտումները բացահայտվում և արձանագրվում են հարկային մարմնի կողմից Օրենսգրքով սահմանված կարգով իրականացվող ստուգումների, ուսումնասիրությունների կամ օրենքով սահմանված կարգով իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման կամ հարկ վճարողի անձնական հաշվի քարտերում հարկային պարտավորությունների հաշվառման արդյունքում:

2. Արձանագրության ձևը և լրացման կարգը հաստատում է հարկային մարմինը: Արձանագրությունը պետք է

պարունակի՝

1) արձանագրությունը կազմելու վայրը, տարին, ամիսը, ամսաթիվը և համարը.

2) հարկային իրավախախտում կատարած անձի անունը, ազգանունը, կազմակերպության լրիվ անվանումը, ՀՎՀՀ-ն՝ առկայության դեպքում, նրա բնակության (գտնվելու վայրի) հասցեն, ֆիզիկական անձի անձնագրային տվյալները և (կամ) հանրային ծառայությունների համարանիշը (հայտնի լինելու դեպքում).

3) հարկային իրավախախտումների նկարագրությունը, ժամանակահատվածը, ձեռք բերված տեղեկությունները և այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն կատարվել.

4) ձեռք բերված տեղեկությունների սահմաններում հարկային պարտավորության նախնական հաշվարկը և պատասխանատվության կիրառման իրավական հիմքերը.

5) արձանագրությունը կազմած հարկային մարմնի պաշտոնատար անձի պաշտոնը, անունը, ազգանունը, ստորագրությունը:

3. Կազմված արձանագրությանը կարող են կցվել հարկային իրավախախտման փաստը հիմնավորող համապատասխան փաստաթղթեր, լուսանկարներ, էլեկտրոնային տեղեկություններ պարունակող կրիչներ, նյութեր և անհրաժեշտ տեղեկություններ պարունակող այլ իրեր:

4. Արձանագրությունը կազմելուց հետո այն ներկայացվում է հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարին՝ հետագա ընթացքն ապահովելու նպատակով: Եթե կազմված արձանագրության հիման վրա հարուցվում է վարչական կամ քրեական վարույթ, ապա արձանագրությունը պահպանվում է վարչական կամ քրեական գործում, իսկ եթե վարույթ չի հարուցվում, այն պահպանվում է հարկ վճարողի հարկային գործում՝ հետագա հարկային հսկողության ընթացքում օգտագործելու նպատակով:

5. Հարկային մարմնում վարվող՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտերում Օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով չվճարված հարկային պարտավորությունների առաջացման դեպքում, բացառությամբ ստուգման կամ այլ վարչական ակտերով հարկային պարտավորություններ առաջադրված լինելու դեպքերի, հարկային մարմնի նախաձեռնությամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցվում է չվճարված հարկային պարտավորությունների գանձման վարչական վարույթ, եթե չվճարված հարկային պարտավորության չափը գերազանցում է 200 հազար դրամը կամ հարկային պարտավորության առաջացման օրվանից հետո անցել է երկու ամսից ավելի ժամանակ:

6. Հարկային մարմնի իրականացրած հարկային հսկողության արդյունքներով կազմված ստուգման կամ այլ վարչական ակտերով հարկային պարտավորություններ առաջադրված լինելու դեպքում նշված ստուգման կամ այլ վարչական ակտերը դառնում են անբողոքարկելի ուժի մեջ մտնելուց հետո՝ երկամսյա ժամկետում, և դրանցով արձանագրված հարկային պարտավորությունները հարկ վճարողի կողմից ենթակա են կատարման նշված ակտերն անբողոքարկելի դառնալու օրվան հաջորդող 10-օրյա ժամկետում:

Հարկային մարմնի իրականացրած հարկային հսկողության արդյունքներով կազմված ստուգման կամ այլ վարչական ակտերով արձանագրված հարկային պարտավորությունները սույն մասով սահմանված ժամկետում չվճարվելու դեպքում նշված ստուգման կամ այլ վարչական ակտերը կատարվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

7. Սույն հոդվածի 5-րդ և 6-րդ մասերին համապատասխան՝ գանձման (վճարման) ենթակա պարտավորությունները ենթակա են կատարման մինչև կատարման օրը՝ Օրենսգրքով կամ օրենքով սահմանված կարգով հաշվարկված տույժերի և տուգանքների հետ միասին:

(398-րդ հոդվածը լրաց. 21.06.18 ՀՕ-338-Ն)

Հոդված 399. Հարկային իրավախախտման համար հարկային պատասխանատվություն կիրառելու ընդհանուր պայմանները

1. Հարկ վճարողները կամ հարկային գործակալները հարկային պատասխանատվության ենթակա չեն, եթե հարկային իրավախախտման օբյեկտ հանդիսացող տվյալ հարկային իրավահարաբերությունում առաջնորդվել են Կառավարության կողմից լիազորված՝ ֆինանսական բնագավառում պետական կարգավորում իրականացնող պետական մարմնի պաշտոնական պարզաբանումներով:

2. Հարկ վճարողները կամ հարկային գործակալները հարկային մարմնի կամ օրենքով լիազորված այլ պետական մարմինների կողմից հարկային պատասխանատվության են ենթարկվում Օրենսգրքով սահմանված կարգով ընդունված ստուգման ակտով կամ ուսումնասիրության արձանագրությամբ, եթե Օրենսգրքով նախատեսված է ուսումնասիրության արդյունքում հարկային պարտավորությունների առաջադրում կամ օպերատիվ հետախուզական միջոցառման արդյունքում կազմված վարչական ակտով կամ այլ վարչական ակտով:

3. Հարկ վճարողի կամ հարկային գործակալի կողմից երկու և ավելի հարկային իրավախախտում կատարելու դեպքում հարկային պատասխանատվությունը կիրառվում է յուրաքանչյուր իրավախախտման համար առանձին:

4. Հարկ վճարողին կամ հարկային գործակալին հարկային իրավախախտման համար պատասխանատվության ենթարկելը չի ազատում նրանց կամ նրանց պաշտոնատար անձանց նկատմամբ Հայաստանի Հանրապետության

օրենսդրությամբ սահմանված վարչական, քրեական կամ այլ պատասխանատվության կիրառումից:

5. Հարկային պատասխանատվության կիրառումը հարկ վճարողին չի ազատում Օրենսգրքով սահմանված հարկային պարտավորությունների կատարումից, եթե Օրենսգրքով այլ բան սահմանված չէ:

(399-րդ հոդվածը փոփ. 21.06.18 ՀՕ-338-Ն)

Հոդված 400. Հարկային պատասխանատվության տեսակները

1. Հարկային իրավախախտման համար կարող են կիրառվել հարկային պատասխանատվության հետևյալ տեսակները.

1) նախազգուշացում.

2) տույժ.

3) տուգանք.

4) հարկային իրավախախտման առարկա հանդիսացող գույքի բռնագրավում.

5) հարկ վճարողի գործունեության կասեցում:

2. Նախազգուշացման դեպքում լրացուցիչ հարկային պարտավորություններ չեն առաջանում:

3. Տույժի հաշվարկման դեպքում Օրենսգրքի 401-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկվում է լրացուցիչ հարկային պարտավորություն՝ հարկի գումարը սահմանված ժամկետում չվճարելու կամ սահմանված ժամկետից ուշ վճարելու յուրաքանչյուր օրվա համար հաստատուն տոկոսադրույքով:

4. Տուգանքի նշանակման դեպքում Օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված պահանջները չկատարելու կամ խախտումներով կատարելու համար Օրենսգրքի 77-րդ գլխով սահմանված կարգով հաշվարկվում է լրացուցիչ հարկային պարտավորություն՝ տոկոսային կամ հաստատուն դրույքաչափով՝ արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամով:

5. Հարկային իրավախախտման առարկա հանդիսացող գույքի բռնագրավման դեպքում հարկային իրավախախտման առարկա հանդիսացող գույքը հարկային մարմնի ընդունած՝ բռնագրավման վերաբերյալ որոշման հիման վրա հարկադիր կարգով անհատույց վերցվում է որպես պետական սեփականություն: Հարկային իրավախախտման առարկա հանդիսացող գույքի բռնագրավում նախատեսող հարկային իրավախախտում բացահայտելու դեպքում հարկային մարմինն անհապաղ ձեռնարկում է Օրենսգրքով սահմանված՝ հարկային պարտավորությունների կատարումն ապահովող՝ գույքի արգելանքի ապահովման միջոցը: Գույքը հարկադիր կարգով որպես պետական սեփականություն վերցնելու, պահպանելու և տնօրինելու կարգը սահմանում է Կառավարությունը:

6. Հարկ վճարողի գործունեության կասեցման դեպքում լրացուցիչ հարկային պարտավորություն չի առաջանում: Օրենսգրքով սահմանված դեպքերում կասեցումը կարող է փոխարինվել տուգանքով:

7. Միևնույն հարկային իրավախախտման համար չեն կարող կիրառվել հարկային պատասխանատվության տարբեր տեսակներ, բացառությամբ սույն բաժնով սահմանված դեպքերի:

8. Սույն հոդվածով սահմանված հարկային պատասխանատվության տեսակների նկատմամբ հարկային պատասխանատվության այլ տեսակներ չեն կիրառվում:

(400-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Գ Լ ՈՒ Խ 77

ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՏԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 401. Հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելը

1. Հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.075 տոկոսի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տույժը կիրառվում է ժամանակին չմուծված հարկի գումարի (այդ թվում՝ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերով սահմանված դեպքերում՝ հարկային գործակալի կողմից չվճարված), հարկերի կանխավճարային գումարների, հարկային հսկողության արդյունքներով հայտնաբերված (պակաս ցույց տրված) հարկի գումարի նկատմամբ՝ դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 730 օրվա համար:

3. Սույն հոդվածով սահմանված կարգով տույժեր են հաշվարկվում նաև այն դեպքերում, երբ՝

1) Օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 17-րդ կետով սահմանված մասնագիտական հանձնաժողովը փոփոխում կամ կասեցնում է արտոնյալ որակված սուբսիդիաների, սուբվենցիաների և դրամաշնորհային ծրագրերի որոշումները՝ դրանց շրջանակներում պակաս վճարված կամ չվճարված ԱԱՀ-ի գումարների նկատմամբ.

2) Օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 37-րդ կետով սահմանված՝ լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակ ունեցող հարկ վճարողի կողմից ԵՏՄ անդամ չհամարվող պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված ապրանքների համար Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկվող ԱԱՀ-ի գումարների նկատմամբ՝ սկսված ԵՏՄ անդամ չհամարվող պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված ապրանքների համար ԱԱՀ-ի գումարների վճարման՝ Օրենսգրքով սահմանված վերջնաժամկետին հաջորդող օրվանից, եթե այդ ապրանքները կամ դրանց վերամշակման արդյունքում ստացված ապրանքները ներմուծման օրվանը հաջորդող 180 օրվա ընթացքում չեն վերաարտահանվում Հայաստանի Հանրապետության տարածքից:

(401-րդ հոդվածը փոփ. 21.06.18 ՀՕ-338-Ն)

Հոդված 402. Հարկային հաշվարկը սահմանված ժամկետից ուշ ներկայացնելը կամ չներկայացնելը

1. Հարկ վճարողների կամ հարկային գործակալների կողմից հարկային մարմին ներկայացվող հարկային հաշվարկը Օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված ժամկետից ուշ ներկայացվելու կամ չներկայացվելու դեպքում այդ ժամկետին հաջորդող յուրաքանչյուր 15 լրացած օրվա համար (անկախ 15-րդ օրը ոչ աշխատանքային լինելու հանգամանքից) հարկ վճարողից կամ հարկային գործակալից գանձվում է տուգանք (նաև ստուգման ակտով)՝ հաշվարկված հարկի ընդհանուր գումարի 5 տոկոսի չափով:

Անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց դեպքում սույն մասով սահմանված տուգանքի կիրառության իմաստով, յուրաքանչյուր 15 լրացած օրվա հաշվարկը սկսվում է անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից կատարման ենթակա հարկային պարտավորության մեծությունն արտահայտող վարչական ակտի ամսաթվից:

2. Սույն հոդվածով սահմանված տուգանքի հաշվարկը դադարում է համապատասխան հարկային հաշվարկը հարկային մարմին ներկայացնելու ամսաթվից կամ տվյալ հարկի գծով համալիր հարկային ստուգման ակտի նախագծի ամսաթվից, իսկ անհատ ձեռնարկատեր և նոտար չհամարվող ֆիզիկական անձանց դեպքում՝ նաև այլ վարչական ակտի ամսաթվից:

3. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տուգանքների հանրագումարը չպետք է գերազանցի հաշվարկված հարկի ընդհանուր գումարը:

(402-րդ հոդվածը լրաց. 21.12.17 ՀՕ-266-Ն, փոփ. 25.06.19 ՀՕ-68-Ն)

Հոդված 403. Հարկի գումարը պակաս ցույց տալը

1. Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի յուրաքանչյուր հարկային հաշվարկում հարկի գումարը Օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով հաշվարկվող չափից պակաս ցույց տալու դեպքերում գանձվում է պակաս ցույց տրված հարկի գումարը, ինչպես նաև տուգանք՝ այդ գումարի 50 տոկոսի չափով, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված դեպքերի:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված խախտումը համալիր հարկային ստուգման արդյունքում կազմվող ակտով արձանագրմանը հաջորդող մեկ տարվա ընթացքում կրկին կատարելու դեպքում գանձվում է պակաս ցույց տրված հարկի գումարը, ինչպես նաև տուգանք՝ այդ գումարի 100 տոկոսի չափով, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված դեպքերի: Սույն մասի կիրառության իմաստով՝ խախտումը կրկին կատարելու օր է համարվում նախորդ խախտման արձանագրմանը հաջորդող մեկ տարվա ընթացքում՝

1) մինչև հարկային հաշվարկը հարկային մարմին ներկայացնելու համար Օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված ժամկետը խախտում ներառող հարկային հաշվարկը հարկային մարմին փաստացի ներկայացնելու օրը (անկախ հետագայում ճշտված հարկային հաշվարկներ ներկայացնելու հանգամանքից).

2) հարկային հաշվարկը հարկային մարմին ներկայացնելու համար Օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված ժամկետի ավարտից հետո խախտում ներառող հարկային հաշվարկը հարկային մարմին ներկայացնելու դեպքում՝ հարկային հաշվարկը հարկային մարմին ներկայացնելու համար Օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված ժամկետի վերջին օրը (անկախ հարկային հաշվարկը փաստացի ներկայացնելու օրվանից և անկախ հետագայում ճշտված հարկային հաշվարկներ ներկայացնելու հանգամանքից):

3. Շրջանառության հարկ վճարողների կողմից յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի շրջանառության հարկի հաշվարկում հարկի գումարը Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկվող չափից պակաս ցույց տալու դեպքերում գանձվում է պակաս ցույց տրված հարկի գումարը, ինչպես նաև տուգանք՝ այդ գումարի 100 տոկոսի չափով:

4. Եթե համապատասխան հաշվետու ժամանակաշրջանի հարկային հաշվարկում պակաս ցույց տրված հարկի գումարը (կամ դրա մի մասը) ցույց է տրվել՝

1) տվյալ հաշվետու ժամանակաշրջանին նախորդող՝ տվյալ համալիր հարկային ստուգմամբ ստուգվող

ժամանակաշրջանում ընդգրկված որևէ հաշվետու ժամանակաշրջանում, ապա սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված տուգանքներն այդ գումարների մասով չեն կիրառվում.

2) տվյալ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող՝ տվյալ համալիր հարկային ստուգմամբ ստուգվող ժամանակաշրջանում ընդգրկված որևէ հաշվետու ժամանակաշրջանում, ապա սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված տուգանքներն այդ գումարների մասով կիրառվում են կիսով չափ:

Սույն մասի կիրառության իմաստով՝ հաշվետու ժամանակաշրջաններին նախորդող՝ տվյալ համալիր հարկային ստուգմամբ ստուգվող ժամանակաշրջանում ընդգրկված հաշվետու ժամանակաշրջաններում՝

1) ավելի վաղ ցույց տրված՝ հարկի ավելի գումարները (կամ դրանց մի մասը) մարված են համարվում համապատասխան հաշվետու ժամանակաշրջանի հարկային հաշվարկում ավելի վաղ ցույց տրված՝ հարկի պակաս գումարների (կամ դրանց մի մասի) հաշվին.

2) ավելի վաղ ցույց տրված՝ հարկի պակաս գումարները (կամ դրանց մի մասը) մարված են համարվում համապատասխան հաշվետու ժամանակաշրջանի հարկային հաշվարկում ավելի վաղ ցույց տրված՝ հարկի ավելի գումարների (կամ դրանց մի մասի) հաշվին:

(403-րդ հոդվածը փոփ. 21.12.17 ՀՕ-266-Ն, 25.06.19 ՀՕ-68-Ն)

Հոդված 404. Հարկային վնասն ավելի ցույց տալը

1. Յուրաքանչյուր հարկային տարվա համար հարկային մարմին ներկայացված շահութահարկի հաշվարկում հարկային վնասն ավելի ցույց տալու դեպքում համալիր հարկային ստուգմամբ այդ հաշվետու ժամանակաշրջանի համար ավելի ցույց տված հարկային վնասը պակասեցվում է, այդ թվում՝ Օրենսգրքով սահմանված կարգով հետագա հաշվետու ժամանակաշրջաններ տեղափոխվող չափով:

(404-րդ հոդվածը փոփ. 21.12.17 ՀՕ-266-Ն)

Հոդված 405. Հաշվապահական հաշվառումը սահմանված կարգով չվարելը կամ հաշվապահական հաշվառման տվյալները ստուգում իրականացնող պաշտոնատար անձանց չներկայացնելը

1. «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան հաշվապահական հաշվառումը համակարգչային ծրագրերով վարելու պարտավորություն ունեցող կազմակերպությունների կողմից հաշվապահական հաշվառումը «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված համակարգչային ծրագրերով չվարելը համալիր հարկային ստուգման ընթացքում հայտնաբերելու կամ համալիր հարկային ստուգում իրականացնող պաշտոնատար անձանց գրավոր պահանջով դրան հաջորդող աշխատանքային օրը սույն հոդվածով սահմանված՝ հաշվապահական հաշվառման համակարգչային ծրագրի միջոցով ստեղծված ֆայլի պատճենը (ստուգման հանձնարարականով ընդգրկվող ժամանակահատվածի մասով) ստուգում իրականացնող պաշտոնատար անձանց էլեկտրոնային կրիչով չտրամադրելու դեպքում գանձվում է տուգանք՝

1) 5 միլիոն դրամի չափով՝ Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված՝ նախորդ հարկային տարվա արդյունքներով համախառն եկամտի մեկ միլիարդ դրամի շեմը գերազանցած կազմակերպությունների նկատմամբ.

2) 3 միլիոն դրամի չափով՝ Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված՝ նախորդ հարկային տարվա արդյունքներով համախառն եկամտի 500 միլիոն դրամի շեմը գերազանցած կազմակերպությունների նկատմամբ:

2. Սույն հոդվածով սահմանված դեպքերում հաշվապահական հաշվառման համակարգչային ծրագրի միջոցով ստեղծված ֆայլի պատճենը ստուգում իրականացնող պաշտոնատար անձանց էլեկտրոնային կրիչով տրամադրումն արձանագրվում է հանձնման-ընդունման ակտով, որը ստորագրում են հարկ վճարողը և ստուգում իրականացնող պաշտոնատար անձինք:

3. Սույն հոդվածով սահմանված դեպքերում բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների կամ ներդրումային ընկերությունների կողմից հաշվապահական հաշվառման համակարգչային ծրագրի միջոցով ստեղծված ֆայլի պատճենը ստուգում իրականացնող պաշտոնատար անձանց կողմից պահանջվելու և էլեկտրոնային կրիչով նշյալ պաշտոնատար անձանց տրամադրվելու կարգն ու պայմանները սահմանում է Կառավարությունը:

(405-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Հոդված 406. Ապրանքների մնացորդի հաշվառման կարգը խախտելը

1. Համալիր հարկային ստուգման ընթացքում Օրենսգրքի 346-րդ հոդվածով սահմանված պակասորդ հայտնաբերելու դեպքում ԱԱՀ վճարողից գանձվում է տուգանք՝ պակասորդի գնի (արժեքի) 50 տոկոսի չափով, իսկ Օրենսգրքի 87-րդ

հոդվածով սահմանված՝ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների պակասորդ հայտնաբերելու դեպքում՝ պակասորդի գնի (արժեքի) 50 տոկոսի և դրա մասով Օրենսգրքի 5-րդ բաժնով սահմանված չափով հաշվարկվող ակցիզային հարկի գումարի հանրագումարի չափով: Սույն մասով կամ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված խախտումն արձանագրելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելու դեպքում ԱԱՀ վճարողից գանձվում է տուգանք՝ պակասորդի գնի (արժեքի) 100 տոկոսի չափով, իսկ Օրենսգրքի 87-րդ հոդվածով սահմանված՝ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների պակասորդ հայտնաբերելու դեպքում՝ պակասորդի գնի (արժեքի) 100 տոկոսի և դրա մասով Օրենսգրքի 5-րդ բաժնով սահմանված չափով հաշվարկվող ակցիզային հարկի գումարի հանրագումարի չափով:

2. Չափագրումների ընթացքում Օրենսգրքի 346-րդ հոդվածով սահմանված պակասորդ հայտնաբերելու դեպքում հարկ վճարողներից գանձվում է տուգանք՝ պակասորդի գնի (արժեքի) 50 տոկոսի չափով, իսկ Օրենսգրքի 87-րդ հոդվածով սահմանված՝ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների պակասորդ հայտնաբերելու դեպքում՝ պակասորդի գնի (արժեքի) 50 տոկոսի և դրա մասով Օրենսգրքի 5-րդ բաժնով սահմանված չափով հաշվարկվող ակցիզային հարկի գումարի հանրագումարի չափով: Սույն մասով կամ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված խախտումն արձանագրելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելու դեպքում հարկ վճարողից գանձվում է տուգանք՝ պակասորդի գնի (արժեքի) 100 տոկոսի չափով, իսկ Օրենսգրքի 87-րդ հոդվածով սահմանված՝ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների պակասորդ հայտնաբերելու դեպքում՝ պակասորդի գնի (արժեքի) 100 տոկոսի և դրա մասով Օրենսգրքի 5-րդ բաժնով սահմանված չափով հաշվարկվող ակցիզային հարկի գումարի հանրագումարի չափով: Սույն մասում նշված տուգանքը գանձվում է՝

1) այն հարկ վճարողից, որի մոտ չափագրումների անցկացման հարկային տարվա ընթացքում՝ մինչև չափագրումը որևէ ամսում, իրացման շրջանառությունը գերազանցել է 100 միլիոն դրամը.

2) այն հարկ վճարողից, որի մոտ չափագրումների անցկացման հարկային տարվա ընթացքում՝ մինչև չափագրումը որևէ ամսում, ԵՏՄ անդամ չհամարվող պետություններից «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ներմուծված ապրանքների մաքսային արժեքի, իսկ ԵՏՄ անդամ պետություններից ներմուծված ապրանքների՝ սահմանված կարգով որոշվող ԱԱՀ-ով հարկման բազայի (առանց ակցիզային հարկի) հանրագումարը գերազանցել է 100 միլիոն դրամը:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերի կիրառության իմաստով՝ խախտումը կրկին կատարել է համարվում համալիր հարկային ստուգման ակտի կամ չափագրման արձանագրության ամսաթվից հետո՝ մեկ տարվա ընթացքում՝ մինչև հաջորդ համալիր հարկային ստուգման ակտի նախագծի կամ հաջորդ չափագրման արձանագրության նախագծի ամսաթիվը սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով սահմանված խախտումը կատարելը:

4. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ չափագրումների արդյունքներով պակասորդի հայտնաբերման դեպքում տուգանքը կարող է կիրառվել յուրաքանչյուր հարկային տարվա ընթացքում միայն մեկ անգամ:

5. Սույն հոդվածով սահմանված տուգանքները պակասորդի մասով հանդիսանում են վերջնական հարկային պարտավորություններ:

6. ***(մասն ուժը կորցրել է 25.06.19 ՀՕ-68-Ն)***

(406-րդ հոդվածը փոփ. 25.06.19 ՀՕ-68-Ն)

Հոդված 407. Ապօրինի գործունեությամբ զբաղվելը

1. «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ապօրինի գործունեության հայտնաբերման դեպքում գանձվում է տուգանք՝ այդ գործունեության արդյունքում Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված ձեռնարկատիրական եկամտի 50 տոկոսի չափով, բայց ոչ պակաս 200 հազար դրամից: Սույն հոդվածի կիրառության իմաստով՝ ապօրինի գործունեություն է համարվում առանց օրենքով սահմանված պետական գրանցման (հաշվառման) կամ առանց հարկային մարմնում հաշվառման ձեռնարկատիրական գործունեության (բացառությամբ օրենքով արգելված գործունեության) իրականացումը:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված խախտումն արձանագրվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում խախտման կրկնակի և հետագա (անկախ իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակից) փաստ արձանագրվելու դեպքում գանձվում է տուգանք՝ այդ գործունեության արդյունքում Օրենսգրքին համապատասխան հաշվարկված ձեռնարկատիրական եկամտի 100 տոկոսի չափով, բայց ոչ պակաս 500 հազար դրամից:

3. Եթե իրականացվող ապօրինի գործունեությունը, «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, ենթակա է լիցենզավորման կամ «Գործունեության իրականացման ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, ենթակա է ծանուցման, ապա սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված տուգանքներից բացի, խախտումներ կատարած անձանցից գործունեության յուրաքանչյուր տեսակի մասով գանձվում է նաև լիցենզիան տալու կամ ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար օրենքով սահմանված պետական տուրքի (տարեկան պետական տուրքի գանձման օբյեկտի դեպքում՝ մեկ տարվա պետական տուրքի) դրույքաչափին համապատասխան գումարի չափով վնասի հատուցում: Եթե իրականացվում են մեկից ավելի

լիցենզավորման կամ ծանուցման ենթակա ապօրինի գործունեության տեսակներ և (կամ) դրանք իրականացվում են մեկից ավելի վայրերում (լիցենզավորման կամ ծանուցման ենթակա գործունեությունը միայն լիցենզիայում կամ ծանուցման մեջ նշված վայրում իրականացնելու՝ օրենքով սահմանված պահանջի դեպքում), ապա պետական տուրքի գումարի չափով վնասի հատուցումը գանձվում է գործունեության յուրաքանչյուր տեսակի և (կամ) գործունեության իրականացման յուրաքանչյուր վայրի համար առանձին՝ օրենքով սահմանված պետական տուրքի դրույքաչափերին համապատասխան գումարի չափով:

4. Սույն հոդվածով սահմանված խախտումներ հայտնաբերելու նպատակով իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառման ընթացքում հարկ վճարողի պահանջով հարկային մարմնի պաշտոնատար անձը ներկայացնում է օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու մասին որոշման քաղվածքը:

5. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված տուգանքներն ապօրինի գործունեություն իրականացնողների համար ապօրինի գործունեության մասով վերջնական հարկային պարտավորություն են:

6. Սույն հոդվածով սահմանված տուգանքների կիրառության իմաստով՝ ապօրինի գործունեություն իրականացնողի ձեռնարկատիրական եկամտի որոշման անհնարինության դեպքում ձեռնարկատիրական եկամուտը որոշում է հարկային մարմինը՝ կիրառելով անուղղակի եղանակներով հարկման բազաների և հարկային պարտավորությունների գնահատման համար Օրենսգրքով սահմանված կարգը:

7. Հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի կիրառության իմաստով՝ ձեռնարկատիրական գործունեություն չի համարվում քաղաքացիների՝

1) անձնական գույքի (ներառյալ՝ անշարժ գույքի) և իրերի օտարումը, բացառությամբ Օրենսգրքով սահմանված դեպքերի.

2) գույքը վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնելը (բացառությամբ Օրենսգրքով սահմանված դեպքերի), ոչ նյութական ակտիվների օտարումն ու տոկոսների ստացումը.

3) ***(ենթակետն ուժը կորցրել է 25.06.19 ՀՕ-68-Ն)***

4) սեփական կարիքների բավարարման համար վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող՝ անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձ ինքնավար էներգաարտադրողների արտադրած էլեկտրական էներգիայի հանձնումն էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձին, այդ թվում՝ դրա դիմաց ստացվող հատուցումները, եթե էլեկտրական էներգիա արտադրող իրենց տեղակայանքների դրվածքային հզորությունը չի գերազանցում էլեկտրական էներգիայի տեղակայված իրենց սպառիչների ընդհանուր հզորությունը, բայց ոչ ավելի, քան 150 կիլովատը.

5) քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում հարկային գործակալի համար աշխատանքների կատարումը և (կամ) հարկային գործակալին ծառայությունների մատուցումը:

8. Սույն հոդվածը չի կիրառվում՝

1) սահմանված կարգով հաշվառված և արտոնագիր ստացած՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց նկատմամբ՝ գործունեության այդ մասով.

2) անմիջականորեն գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ և իրացմամբ զբաղվող ֆիզիկական անձանց նկատմամբ՝ գործունեության այդ մասով, ինչպես նաև այն ֆիզիկական անձանց նկատմամբ, որոնց կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեությունն օրենքով սահմանված կարգով կարող է իրականացվել առանց պետական հաշվառման՝ գործունեության այդ մասով.

3) Հայաստանի Հանրապետությունում մշտական հաստատություն ունեցող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի և Հայաստանի Հանրապետությունում մշտական հաստատություն ունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպության նկատմամբ՝ այդ մշտական հաստատությանը վերագրվող գործունեության մասով:

(407-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն, լրաց. 21.06.18 ՀՕ-338-Ն, փոփ. 25.06.19 ՀՕ-68-Ն)

Հոդված 408. Լիցենզավորման կամ ծանուցման ենթակա գործունեությունն առանց լիցենզիայի կամ առանց ծանուցման իրականացնելը կամ առանց թույլտվության կամ առանց լիցենզիայի ընդերքը կամ բնական պաշարներն օգտագործելը կամ առանց արտոնագրի գործունեություն իրականացնելը

(վերնագիրը լրաց. 25.06.19 ՀՕ-68-Ն)

1. Համալիր հարկային ստուգումների ընթացքում և (կամ) «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հայտնաբերված՝ «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան լիցենզավորման ենթակա գործունեությունն առանց լիցենզիայի իրականացնելու կամ «Գործունեության իրականացման ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան ծանուցման ենթակա գործունեությունն առանց ծանուցման իրականացնելու կամ առանց թույլտվության կամ առանց լիցենզիայի ընդերքը կամ բնական պաշարներն օգտագործելու (այդ թվում՝ լիցենզիայի կամ թույլտվության գործողությունը կամ ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքն օրենքով սահմանված կարգով կասեցված լինելու) դեպքում գործունեության յուրաքանչյուր տեսակի մասով կազմակերպությունից կամ անհատ

ձեռնարկատիրոջից գանձվում է տուգանք՝ լիցենզիայի կամ թույլտվության տրման կամ ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար օրենքով սահմանված պետական տուրքի դրույքաչափի տասնապատիկի չափով, բայց ոչ պակաս 500 հազար դրամից:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված խախտումն արձանագրելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, խախտման կրկնակի և հետագա փաստը համալիր հարկային ստուգմամբ և (կամ) օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հայտնաբերվելու դեպքում կազմակերպությունից կամ անհատ ձեռնարկատիրոջից գանձվում է տուգանք՝ լիցենզիայի կամ թույլտվության տրման կամ ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար օրենքով սահմանված պետական տուրքի դրույքաչափի քսանապատիկի չափով, բայց ոչ պակաս մեկ միլիոն դրամից: Սույն հոդվածի կիրառության իմաստով՝ խախտումը համարվում է կրկնակի՝ անկախ լիցենզավորման կամ ծանուցման կամ թույլտվության ենթակա՝ իրականացվող գործունեության տեսակից:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված խախտումներ հայտնաբերվելու դեպքերում խախտումներ կատարած կազմակերպությունից կամ անհատ ձեռնարկատիրոջից գործունեության յուրաքանչյուր տեսակի մասով գանձվում է նաև լիցենզիան տալու կամ ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար օրենքով սահմանված պետական տուրքի (տարեկան պետական տուրքի գանձման օբյեկտի դեպքում՝ մեկ տարվա պետական տուրքի) դրույքաչափին համապատասխան գումարի չափով վնասի հատուցում: Եթե իրականացվում են լիցենզավորման կամ ծանուցման ենթակա մեկից ավելի գործունեության տեսակներ և (կամ) դրանք իրականացվում են մեկից ավելի վայրերում (լիցենզավորման կամ ծանուցման ենթակա գործունեությունը միայն լիցենզիայում կամ ծանուցման մեջ նշված վայրում իրականացնելու՝ օրենքով սահմանված պահանջի դեպքում), ապա պետական տուրքի գումարի չափով վնասի հատուցումը գանձվում է գործունեության յուրաքանչյուր տեսակի և (կամ) գործունեության իրականացման յուրաքանչյուր վայրի համար առանձին՝ օրենքով սահմանված դրույքաչափերին համապատասխան գումարի չափով: Սույն մասով սահմանված վնասի հատուցումը չի գանձվում սույն հոդվածի 6-րդ մասում նշված դեպքում, ինչպես նաև այն դեպքերում, երբ լիցենզիայի գործողությունը կամ ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքը կասեցվել է օրենքով սահմանված կարգով:

4. Սույն հոդվածով սահմանված խախտումներ հայտնաբերելու նպատակով իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառման ընթացքում հարկ վճարողի կամ նրա պաշտոնատար անձի պահանջով հարկային մարմնի պաշտոնատար անձը ներկայացնում է օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու մասին որոշման քաղվածքը:

5. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված տուգանքները չեն կիրառվում այն դեպքերում, երբ լիցենզիայի կամ թույլտվության գործողությունը կամ ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքը կասեցված է առանց լիցենզավորող մարմնի որոշման՝ անկախ օրենքի ուժով կասեցված լինելու հանգամանքից:

6. «Գործունեության իրականացման ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված այն գործունեության տեսակների ծանուցում ներկայացրած կազմակերպություններից և անհատ ձեռնարկատերերից, որոնց նույն օրենքով արգելվում է հարկային տարվա որևէ ամսվա արդյունքներով Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված իրացման շրջանառության, դրան համապատասխանող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի հանրագումարի տասը տոկոսից ավելին հսկիչ դրամարկղային մեքենաներով արտացոլելը, հարկային տարվա որևէ ամսվա արդյունքներով այդ սահմանաչափը գերազանցելու դեպքում համալիր հարկային ստուգմամբ կիրառվում են սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված չափերին համապատասխան տուգանքները: Սույն մասի կիրառության իմաստով՝

1) իրացման շրջանառության սահմանաչափը վերաբերում է գործունեության բոլոր տեսակների մասով հարկ վճարողի՝ Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված իրացման շրջանառությանը՝ անկախ գործունեության՝ ծանուցման ենթակա լինելու հանգամանքից և իրականացվող գործունեության տեսակներից.

2) սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված տուգանքները հաշվարկվում են կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ ծանուցումներով ներկայացրած՝ միայն սույն մասով սահմանված ծանուցման ենթակա գործունեության տեսակներով զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար օրենքով սահմանված պետական տուրքի դրույքաչափերի համապատասխան բազմապատիկ մեծությունների հանրագումարի չափով:

7. Հարկային ստուգումների ընթացքում և (կամ) «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հայտնաբերված՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19.7-րդ և 19.8-րդ հոդվածներով սահմանված գործունեության տեսակներն առանց արտոնագրի իրականացնելու դեպքում գանձվում է տուգանք 500 հազար դրամի չափով: Սույն մասի կիրառության իմաստով՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19.7-րդ և 19.8-րդ հոդվածներով սահմանված գործունեության տեսակների՝ առանց արտոնագրի իրականացում է համարվում նաև պետական տուրքի գումարը նույն հոդվածներով սահմանված չափից պակաս հաշվարկելը:

(408-րդ հոդվածը լրաց. 25.06.19 ՀՕ-68-Ն)

Հոդված 409. Արգելված գործունեությամբ զբաղվելը

1. Համալիր հարկային ստուգումների ընթացքում և (կամ) «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում օրենքով արգելված գործունեություն հայտնաբերելու դեպքում գանձվում է տուգանք՝ այդ գործունեության արդյունքում Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված իրացման շրջանառության 100 տոկոսի չափով, բայց ոչ պակաս տասը միլիոն դրամից:

2. Սույն հոդվածի կիրառության իմաստով՝

1) արգելված է համարվում այն գործունեությունը (այդ թվում՝ գործողությունն ու գործառույթը), որի իրականացումն օրենքով Հայաստանի Հանրապետությունում (այդ թվում՝ օրենքով սահմանված տարածքներում) արգելված է կամ որի իրականացումն օրենքով արգելված է անձանց որոշ խմբերին.

2) արգելված գործունեություն չի համարվում լիցենզավորման կամ ծանուցման ենթակա գործունեությունն առանց լիցենզիայի կամ առանց ծանուցման իրականացնելը կամ առանց թույլտվության կամ առանց լիցենզիայի ընդերքը կամ բնական պաշարներն օգտագործելը, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանց իրականացումն անձանց տվյալ խմբի համար արգելված է օրենքով:

3. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տուգանքը սահմանված կարգով պետական գրանցում չունեցող (չհաշվառված) անձանց համար արգելված գործունեության մասով վերջնական հարկային պարտավորություն է:

4. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արգելված գործունեության իրականացման համար տուգանքների կիրառության առումով, արգելված գործունեություն իրականացնողի իրացման շրջանառության որոշման անհնարինության դեպքում իրացման շրջանառությունը որոշում է հարկային մարմինը՝ կիրառելով անուղղակի եղանակներով հարկման բազաների և հարկային պարտավորությունների գնահատման համար Օրենսգրքով սահմանված կարգը:

5. Սույն հոդվածով սահմանված խախտումներ հայտնաբերելու նպատակով իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառման ընթացքում հարկ վճարողի կամ նրա պաշտոնատար անձի պահանջով ներկայացվում է օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու մասին որոշման քաղվածքը:

(409-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Հոդված 410. Ապրանքների մատակարարման կամ տեղափոխության գործարքների փաստաթղթավորման պարտադիր պահանջները խախտելը

1. «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների ընթացքում ապրանքների մատակարարման կամ տեղափոխության փաստաթղթավորման կամ ապրանքների հետագծելիության ապահովման համար Օրենսգրքով սահմանված պահանջների խախտման՝ Օրենսգրքով սահմանված պահանջները չբավարարող ուղեկցող փաստաթղթով կամ առանց ուղեկցող փաստաթղթի կամ առանց ապրանքների հետագծելիությունն ապահովող էլեկտրոնային սարքի ապրանքների մատակարարման կամ տեղափոխության հայտնաբերման դեպքում, բացառությամբ սույն հոդվածով սահմանված դեպքերի, խախտման հիմք հանդիսացող գործարքի կամ գործողության մասով՝

1) գանձվում է տուգանք այդ ապրանքի գնի (արժեքի) 50 տոկոսի չափով, բայց ոչ պակաս 200 հազար դրամից.

2) սույն մասի 1-ին կետում նշված խախտումն արձանագրվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝

ա. խախտման երկրորդ փաստ արձանագրվելու դեպքում գանձվում է տուգանք՝ անփաստաթուղթ ապրանքների գնի (արժեքի) 100 տոկոսի չափով, բայց ոչ պակաս 500 հազար դրամից,

բ. խախտման երրորդ և ավելի փաստ արձանագրվելու դեպքում գանձվում է տուգանք՝ անփաստաթուղթ ապրանքների գնի (արժեքի) 200 տոկոսի չափով, բայց ոչ պակաս մեկ միլիոն դրամից:

2. Սույն հոդվածի 1-ին մասի կիրառության իմաստով՝

1) գործարքը կամ գործողությունը համարվում է խախտման հիմք, եթե ապրանքների մատակարարման կամ տեղափոխության փաստաթղթավորման կամ ապրանքների հետագծելիության ապահովման համար Օրենսգրքով սահմանված պահանջների խախտումը փաստացի կատարվել է օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման համար օրենքով սահմանված ժամկետներում.

2) խախտումը երկրորդ, երրորդ և ավելի անգամ կատարելու փաստ է համարվում օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում կազմված վարչական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում՝ մինչև օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում կազմվող վարչական ակտն ընդունելու օրը, սույն հոդվածի 1-ին մասով սահմանված խախտման՝ համապատասխանաբար երկրորդ, երրորդ և ավելի անգամներ կրկնվելը:

3. «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների ընթացքում Օրենսգրքով սահմանված կարգով միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվող հարկ վճարողների կողմից ապրանքների մատակարարման կամ տեղափոխության փաստաթղթավորման կամ ապրանքների հետագծելիության ապահովման համար Օրենսգրքով սահմանված պահանջների խախտման՝ Օրենսգրքով սահմանված պահանջները չբավարարող ուղեկցող փաստաթղթով կամ առանց ուղեկցող փաստաթղթի կամ առանց ապրանքների հետագծելիությունն ապահովող էլեկտրոնային սարքի ապրանքների մատակարարման կամ տեղափոխության հայտնաբերման դեպքում կիրառվում է նախազգուշացում, իսկ

նախազգուշացումը կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, սույն մասով սահմանված երկրորդ փաստ արձանագրվելու դեպքում վարչական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից հարկ վճարողը դադարում է համարվել միկրոձեռնարկատիրության սուբյեկտ:

4. Սույն հոդվածի 3-րդ մասի կիրառության իմաստով՝

1) գործարքը կամ գործողությունը համարվում է խախտման հիմք, եթե ապրանքների մատակարարման կամ տեղափոխության փաստաթղթավորման կամ ապրանքների հետագծելիության ապահովման համար Օրենսգրքով սահմանված պահանջների խախտումը փաստացի կատարվել է օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման պահին.

2) խախտման կատարման երկրորդ փաստ է համարվում օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում կազմված վարչական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում՝ մինչև օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում կազմվող վարչական ակտն ընդունելու օրը, սույն մասով սահմանված խախտման կրկնվելը:

5. Օպերատիվ-հետախուզական միջոցառումների ընթացքում Կառավարության հաստատած ցանկում ներառված՝ մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող հողատարածքներ ունեցող սահմանամերձ բնակավայրերում գործունեություն իրականացնող և հարկային արտոնություններից օգտվող հարկ վճարողի կողմից ապրանքների մատակարարման կամ տեղափոխության փաստաթղթավորման կամ ապրանքների հետագծելիության ապահովման համար Օրենսգրքով սահմանված պահանջների խախտման՝ Օրենսգրքով սահմանված պահանջները չբավարարող ուղեկցող փաստաթղթով կամ առանց ուղեկցող փաստաթղթի կամ առանց ապրանքների հետագծելիությունն ապահովող էլեկտրոնային սարքի ապրանքների մատակարարման կամ տեղափոխության հայտնաբերման դեպքում կիրառվում են սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պատասխանատվության միջոցները: Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ա» ենթակետով սահմանված խախտման հայտնաբերման դեպքում համապատասխան վարչական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից հարկ վճարողը դադարում է օգտվել հարկերից ազատման արտոնությունից՝ տվյալ տարվա մնացած ժամանակահատվածում և դրան հաջորդող մեկ տարում:

6. Սույն հոդվածով սահմանված խախտումներն «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հայտնաբերվելու և արձանագրվելու դեպքում օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացման մասին որոշման շրջանակներում իրականացված միևնույն օպերատիվ-հետախուզական միջոցառման ընթացքում արձանագրված բոլոր խախտումները դիտվում և քննարկվում են նույն վարչական վարույթի շրջանակներում՝ որպես խախտման փաստ արձանագրելու մեկ դեպք:

7. Սույն հոդվածով սահմանված խախտումներ հայտնաբերելու նպատակով իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառման ընթացքում հարկ վճարողի կամ նրա պաշտոնատար անձի պահանջով ներկայացվում է օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու մասին որոշման քաղվածքը:

8. Սույն հոդվածով սահմանված տուգանքների կիրառության իմաստով՝ ապրանքի գնի (արժեքի) որոշման անհնարինության դեպքում ապրանքի գին (արժեք) է համարվում խախտումը հայտնաբերելու եռամյակում հարկ վճարողի մոտ երկկողմանի հաշվարկային փաստաթղթերով հիմնավորված նույն ապրանքի վաճառքի (իրացման) միջին կշռված գինը: Եթե խախտումը հարկային մարմնի կողմից հայտնաբերելու եռամյակում հարկ վճարողի մոտ բացակայում են երկկողմանի հաշվարկային փաստաթղթերով հիմնավորված նույն ապրանքի վաճառքի (իրացման) գինը, ապա ապրանքի գինը (արժեքը) հաշվարկում է հարկային մարմինը՝ կիրառելով անուղղակի եղանակներով հարկման բազաների և հարկային պարտավորությունների գնահատման համար Օրենսգրքով սահմանված կարգը: Առանց ապրանքների հետագծելիությունն ապահովող էլեկտրոնային սարքի ապրանքների մատակարարման կամ տեղափոխության դեպքում սույն հոդվածով սահմանված տուգանքների կիրառության իմաստով ապրանքի գին (արժեք) է համարվում ապրանքի ձեռքբերման գինը:

9. Առանց ուղեկցող փաստաթղթի մատակարարվող կամ տեղափոխվող ապրանքի մասով ապրանքներ ձեռք բերող հարկ վճարողների կողմից տեղափոխվելու դեպքում սույն հոդվածով սահմանված տուգանքը ապրանքներ ձեռք բերող հարկ վճարողի նկատմամբ չի կիրառվում, եթե խախտումն արձանագրվելու ժամանակ հիմնավորվում է ապրանքն այլ հարկ վճարողից ձեռք բերվելու և այդ հարկ վճարողի կողմից ուղեկցող փաստաթուղթ չտրամադրվելու հանգամանքը: Այդ դեպքում տուգանքը կիրառվում է ուղեկցող հաշվարկային փաստաթուղթ չտրամադրած՝ ապրանք վաճառող հարկ վճարողի նկատմամբ:

10. Սույն հոդվածի դրույթները չեն տարածվում բանկերի, ապահովագրական ընկերությունների, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների, վճարահաշվարկային և վարկային կազմակերպությունների վրա:

11. Սույն հոդվածի դրույթները ոչ առևտրային կազմակերպությունների նկատմամբ կիրառելի են միայն ձեռնարկատիրական գործունեության մասով:

(410-րդ հոդվածը փոփ., լրաց. 21.12.17 ՀՕ-266-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն, 25.06.19 ՀՕ-68-Ն)

Հոդված 411. Հարկ վճարողի գործունեության իրականացման հասցեում սահմանված տեղեկություններ չփակցնելը

1. Հարկ վճարողի կողմից իր գործունեության իրականացման յուրաքանչյուր հասցեում առավել տեսանելի տեղում

(իսկ գտնվելու և (կամ) կառավարման որոշումների ընդունման, օպերատիվ ֆինանսական ղեկավարման վայրերում՝ համապատասխան ցուցանակների վրա) հարկային մարմնի սահմանած ձևով հայտարարություն (նշելով հարկ վճարողի լրիվ անվանումը (անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հայրանունը), ՀՎՀՀ-ն, գործունեության տվյալ վայրի հասցեն և տվյալ հասցեում իրականացվող գործունեության տեսակը (տեսակները) չփակցնելու դեպքում համալիր հարկային ստուգմամբ գանձվում է 50 հազար դրամի չափով տուգանք՝ յուրաքանչյուր հասցեում չփակցված տեղեկության մասով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված խախտումը համալիր հարկային ստուգման ակտով արձանագրելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելու դեպքում գանձվում է տուգանք՝ յուրաքանչյուր չփակցված տեղեկության մասով 100 հազար դրամի չափով:

3. Սույն հոդվածի կիրառության իմաստով՝ խախտումը կրկին կատարել է համարվում համալիր հարկային ստուգման ակտի ամսաթվից հետո՝ մեկ տարվա ընթացքում՝ մինչև հաջորդ համալիր հարկային ստուգման ակտի նախագծի ամսաթիվը սույն հոդվածի 1-ին մասով սահմանված խախտումը կատարելը:

Հոդված 412. Աշխատողի աշխատանքի ընդունումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով չձևակերպելը և (կամ) սահմանված ժամկետում աշխատողի համար գրանցման հայտ չներկայացնելը

1. Աշխատողի աշխատանքի ընդունումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի և գրավոր պայմանագրի բացակայության) և (կամ) նոր աշխատողի համար Օրենսգրքի 156-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում և ժամկետում գրանցման հայտ չներկայացնելու փաստը հարկային մարմնի կողմից իրականացվող համալիր կամ թեմատիկ հարկային ստուգումների ընթացքում՝ Կառավարության սահմանած կարգով, իսկ ապօրինի գործունեություն իրականացնողների մոտ՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումների ընթացքում Կառավարության սահմանած կարգով արձանագրվելու դեպքում գործատուից (այդ թվում՝ ապօրինի գործունեություն իրականացնողներից կամ սահմանված կարգով հաշվառված և արտոնագիր ստացած՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանցից) գանձվում է տուգանք՝ յուրաքանչյուր չձևակերպված վարձու աշխատողի համար 250.000 դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասի կիրառության իմաստով՝ նոր աշխատողի համար Օրենսգրքի 156-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում և ժամկետում գրանցման հայտ չներկայացնելու համար սահմանված տուգանքը կիրառվում է միայն այն դեպքում, երբ համալիր կամ թեմատիկ հարկային ստուգմամբ հայտնաբերվել է փաստացի աշխատանք կատարող, որի համար գրանցման հայտը չի ներկայացվել մինչև ստուգումը փաստացի սկսելու օրվան նախորդող օրվա ավարտը, իսկ աշխատանքի ընդունելու օրն աշխատանքը փաստացի սկսելու դեպքում՝ մինչև աշխատանքի ընդունելու օրվա ժամը 14:00-ն:

(412-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն, խմբ. 21.06.18 ՀՕ-338-Ն, լրաց. 25.06.19 ՀՕ-68-Ն)

Հոդված 413. Հարկային իրավախախտման առարկա հանդիսացող գույքը

1. Հարկային իրավախախտման առարկա հանդիսացող գույքը Օրենսգրքի 400-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգով ենթակա է բռնագրավման՝

1) Օրենսգրքի 389-րդ և 390-րդ հոդվածներով սահմանված՝ դրոշմապիտակներով կամ դրոշմանիշերով դրոշմավորման ենթակա՝ չդրոշմավորված, ինչպես նաև ապօրինի ձեռք բերված դրոշմապիտակներով կամ դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների իրացման դեպքում.

2) Օրենսգրքի 424-րդ հոդվածով սահմանված՝ ակցիզային դրոշմանիշերով և (կամ) դրոշմապիտակներով դրոշմավորման կանոնի խախտման այն դեպքում, երբ օտարվող ապրանքների ընդհանուր արժեքը վաճառողի մոտ նշված (իսկ նշված չլինելու դեպքում՝ Օրենսգրքով սահմանված կարգով որոշված) գներով գերազանցում է 50 հազար դրամը.

3) Օրենսգրքի 407-րդ հոդվածով սահմանված՝ ապօրինի գործունեության ընթացքում Կառավարության սահմանած ցանկում ընդգրկված ապրանքների իրացման դեպքում:

(413-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Հոդված 414. Արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունները սահմանված կարգով չգրանցելը

1. Արտարժույթի առք ու վաճառքի, արտարժույթի դիլերային-բրոկերային առք ու վաճառքի գործունեություն իրականացնողների կողմից արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունները Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած կարգով չգրանցելու դեպքում հարկ վճարողներից գանձվում է տուգանք՝ չգրանցված գործառնությամբ փոխանակված արժույթի ընդհանուր գումարի՝ արտահայտված Հայաստանի Հանրապետության

դրամով, 25 տոկոսի չափով:

2. Հարկային մարմնի կողմից սույն հոդվածի 1-ին մասով սահմանված խախտումն արձանագրվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, խախտումը կրկին կատարելու դեպքում գանձվում է տուգանք՝ չգրանցված գործառնությամբ փոխանակված արժույթի ընդհանուր գումարի՝ արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամով, 50 տոկոսի չափով:

3. Սույն հոդվածի կիրառության իմաստով՝ խախտումը կրկին կատարել է համարվում համալիր կամ թեմատիկ հարկային ստուգման ակտի կամ ուսումնասիրության արձանագրության ամսաթվից հետո՝ մեկ տարվա ընթացքում՝ մինչև հաջորդ համալիր կամ թեմատիկ հարկային ստուգման ակտի նախագծի կամ ուսումնասիրության արձանագրության նախագծի ամսաթիվը սույն հոդվածի 1-ին մասով սահմանված խախտումը կատարելը:

Հոդված 415. Անապրանք հաշվարկային փաստաթղթեր դուրս գրելը և (կամ) ստանալը

1. Անապրանք փաստաթղթեր դուրս գրած և (կամ) ստացած կազմակերպությունից, անհատ ձեռնարկատիրոջից կամ նոտարից համալիր հարկային ստուգման արդյունքներով գանձվում է տուգանք՝ գործարքի (մատակարարված ապրանքի, մատուցված ծառայության կամ կատարված աշխատանքի) փաստացի կատարումը հավաստող փաստաթղթում նշված՝ այն անապրանք համարվելու համար Օրենսգրքով սահմանված շեղման (դրամական արտահայտությամբ), իսկ կողմերի միջև փաստացի գործարք կատարված չլինելու դեպքում՝ անապրանք փաստաթղթում նշված գումարի չափով: Սույն մասին համապատասխան հաշվարկված տուգանքի գումարը մեկ միլիոն դրամից պակաս լինելու դեպքում տուգանքը կիրառվում է մեկ միլիոն դրամի չափով:

2. Հարկային մարմնի կողմից սույն հոդվածի 1-ին մասով սահմանված խախտումն արձանագրվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, խախտումը կրկնելու դեպքում անապրանք փաստաթղթեր դուրս գրած և (կամ) ստացած կազմակերպությունից, անհատ ձեռնարկատիրոջից կամ նոտարից համալիր հարկային ստուգման արդյունքներով գանձվում է տուգանք՝ գործարքի (մատակարարված ապրանքի, մատուցված ծառայության կամ կատարված աշխատանքի) փաստացի կատարումը հավաստող փաստաթղթում նշված՝ այն անապրանք համարվելու համար Օրենսգրքով սահմանված շեղման (դրամական արտահայտությամբ) կրկնապատիկի, իսկ կողմերի միջև փաստացի գործարք կատարված չլինելու դեպքում՝ անապրանք փաստաթղթում նշված գումարի կրկնապատիկի չափով: Սույն մասին համապատասխան հաշվարկված տուգանքի գումարը 2 միլիոն դրամից պակաս լինելու դեպքում տուգանքը կիրառվում է 2 միլիոն դրամի չափով:

3. Սույն հոդվածի կիրառության իմաստով՝ խախտումը կրկին կատարել է համարվում համալիր հարկային ստուգման ակտի ամսաթվից հետո՝ մեկ տարվա ընթացքում՝ մինչև հաջորդ համալիր հարկային ստուգման ակտի նախագծի ամսաթիվը սույն հոդվածի 1-ին մասով սահմանված խախտումը կատարելը:

4. Սույն հոդվածով սահմանված տուգանքը անապրանք փաստաթուղթ ստացած կազմակերպության, անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի նկատմամբ կիրառվում է միայն այն դեպքում, եթե փաստաթուղթը ստացողի կողմից վավերացվել է և հիմք է հանդիսացել հարկերի և (կամ) վճարների հաշվարկման և (կամ) վճարման համար:

Հոդված 416. Հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության և (կամ) հսկիչ դրամարկղային մեքենաների միջոցով դրամական հաշվարկների կանոնները չպահպանելը

1. Օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերում կանխիկ դրամով կամ վճարային քարտերի կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքների միջոցով դրամական հաշվարկներ իրականացնելու պահին և վայրում հարկային մարմնում այդ վայրի հասցեով գրանցված՝ տեխնիկական պահանջները բավարարող հսկիչ դրամարկղային մեքենայի բացակայության կամ հարկային մարմնում այդ վայրի հասցեով տեխնիկական պահանջները բավարարող հսկիչ դրամարկղային մեքենա գրանցված չլինելու համար կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը տուգանվում է՝

1) 300 հազար դրամի չափով, բացառությամբ սույն մասի 2-րդ կետով սահմանված դեպքի.

2) մեկ միլիոն դրամի չափով՝ հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության մասով:

2. Հարկային մարմնի կողմից սույն հոդվածի 1-ին մասով սահմանված խախտումն արձանագրվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, խախտումը կրկնելու դեպքում կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը տուգանվում է՝

1) 600 հազար դրամի չափով, և կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ գործունեությունն այդ վայրում և այդ մասով կասեցվում է մինչև սահմանված կարգով այդ վայրի հասցեով գործունեության այդ մասով հարկային մարմնում գրանցված հսկիչ դրամարկղային մեքենայի ապահովումը.

2) երկու միլիոն դրամի չափով՝ հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության մասով, և նրա գործունեությունն այդ վայրում և այդ մասով կասեցվում է մինչև սահմանված կարգով այդ վայրի հասցեով գործունեության այդ մասով հարկային մարմնում գրանցված հսկիչ դրամարկղային մեքենայի ապահովումը:

3. Հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության կանոնների (բացառությամբ սույն հոդվածի 5.1-ին մասում

նշված դեպքի) խախտմամբ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության համար կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը տուգանվում է՝

1) 150 հազար դրամի չափով, բացառությամբ սույն մասի 2-րդ կետով սահմանված դեպքի.

2) 600 հազար դրամի չափով՝ հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության մասով:

4. Հարկային մարմնի կողմից սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված խախտումն արձանագրվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, խախտումն առաջին անգամ կրկնելու դեպքում կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը տուգանվում է՝

1) տվյալ գործունեության իրականացման վայրում (առևտրի օբյեկտում կամ ծառայության մատուցման վայրում) տեղադրված հսկիչ դրամարկղային մեքենաներով նախորդ եռամսյակի ընթացքում արձանագրված շրջանառության 0.7 տոկոսի չափով, բայց ոչ պակաս 300 հազար դրամից, բացառությամբ սույն մասի 2-րդ կետով սահմանված դեպքի, և կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ գործունեությունն այդ վայրում և այդ մասով կասեցվում է հինգ օրով.

2) հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության մասով՝ տվյալ գործունեության իրականացման վայրում տեղադրված հսկիչ դրամարկղային մեքենաներով նախորդ եռամսյակի ընթացքում արձանագրված շրջանառության 0.7 տոկոսի չափով, բայց ոչ պակաս մեկ միլիոն դրամից, և նրա գործունեությունն այդ վայրում և այդ մասով կասեցվում է հինգ օրով:

5. Հարկային մարմնի կողմից սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված խախտումն արձանագրվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, խախտումը երկրորդ և ավելի անգամ կրկնելու դեպքում կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը տուգանվում է՝

1) տվյալ գործունեության իրականացման վայրում (առևտրի օբյեկտում կամ ծառայության մատուցման վայրում) տեղադրված հսկիչ դրամարկղային մեքենաներով նախորդ եռամսյակի ընթացքում արձանագրված շրջանառության 0.7 տոկոսի չափով, բայց ոչ պակաս 600 հազար դրամից, բացառությամբ սույն մասի 2-րդ կետով սահմանված դեպքի, և կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ գործունեությունն այդ վայրում և այդ մասով կասեցվում է տասը օրով.

2) հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության մասով՝ տվյալ գործունեության իրականացման վայրում տեղադրված հսկիչ դրամարկղային մեքենաներով նախորդ եռամսյակի ընթացքում արձանագրված շրջանառության 0.7 տոկոսի չափով, բայց ոչ պակաս 2 միլիոն դրամից, և նրա գործունեությունն այդ վայրում և այդ մասով կասեցվում է տասը օրով:

5.1. ՀԴՄ-ի ծրագիրն արտաքին (առևտրային) ծրագրերի հետ ինտեգրած լինելու դեպքում կազմակերպության, անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի կողմից այդ ծրագրերի և (կամ) հսկիչ դրամարկղային մեքենայի ծրագրի միջամտության արդյունքում հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնում տպագրված կամ փաստացի վաճառված ապրանքի, կատարված աշխատանքի կամ մատուցված ծառայության անվանման, ապրանքային դիրքի, աշխատանքի կամ ծառայության կոդի, քանակի և (կամ) ծավալի վերաբերյալ տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն հարկային մարմին ուղարկելու համար կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը տուգանվում են հինգ միլիոն դրամի չափով:

6. Անկախ սույն հոդվածի 1-ին մասի դրույթներից, դրամական հաշվարկներ իրականացնելու պահին և վայրում հարկային մարմնում այդ վայրի հասցեով գրանցված, սակայն Կառավարության սահմանած՝ հսկիչ դրամարկղային մեքենային ներկայացվող տեխնիկական պահանջներին չբավարարող հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառության հայտնաբերման առաջին դեպքում կիրառվում է նախազգուշացում: Սույն մասով սահմանված՝ նախազգուշացման կիրառության համար հիմք հանդիսացող խախտման դեպքը սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված՝ խախտման դեպքերի հաշվարկին չի մասնակցում:

7. Սույն հոդվածի 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով սահմանված դեպքերում խախտումը կրկնելու համար սահմանված տուգանքները կիրառվում են հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության տեսակի և գործունեության այլ տեսակների համար առանձին: Նույն խախտումը կրկնելը համարվում է երկրորդ և ավելի անգամ կատարված խախտում, եթե կատարված խախտումը վերաբերում է սույն մասում նշված՝ գործունեության նույն տեսակին:

8. Սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով սահմանված դեպքերում հարկ վճարողի գործունեության կասեցումը կարող է փոխարինվել տուգանքի վճարմամբ՝ հարկ վճարողի գրավոր դիմումը ներկայացնելու և սույն մասով սահմանված չափով հաշվարկվող տուգանքը վճարելու դեպքում: Տուգանքը վճարվում է կասեցումը չկիրառելու յուրաքանչյուր օրվա համար՝ գործունեության իրականացման տվյալ վայրում (առևտրի օբյեկտում կամ ծառայության մատուցման վայրում) տեղադրված բոլոր հսկիչ դրամարկղային մեքենաներով նախորդ եռամսյակի ընթացքում արձանագրված միջին օրական շրջանառության 0.7 տոկոսի չափով, բայց ոչ պակաս 60 հազար դրամից: Տուգանքի գումարի հաշվառման օր է համարվում դիմումը ներկայացնելու ամսաթվի հաջորդ օրը: Մինչև գործունեության կասեցումը դիմում ներկայացնելու դեպքում սույն մասով սահմանված տուգանքը վճարվում է դիմումում նշված՝ գործունեության կասեցման հաջորդական օրերի համար: Կասեցման ընթացքում դիմում ներկայացնելու դեպքում սույն մասով սահմանված տուգանքը վճարվում է դիմումը ներկայացնելու օրվան հաջորդող օրվանից մինչև կասեցման ավարտը յուրաքանչյուր օրվա համար: Գործունեության կասեցման ժամկետի ընթացքում դիմում ներկայացնելու դեպքում կասեցումը դադարեցվում է դիմումը ներկայացնելու հաջորդ օրվանից: Մինչև գործունեության կասեցումը կամ կասեցման ընթացքում ճշտված դիմում չի ներկայացվում, իսկ ներկայացվելու դեպքում՝ հարկային մարմնի կողմից չի ընդունվում: Սույն մասով սահմանված դիմումի ձևը սահմանում է հարկային մարմինը:

9. Սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով սահմանված դեպքերում տուգանքի մեծությունը հաշվարկելիս հիմք է ընդունվում նախորդ եռամսյակի ընթացքում գործունեության իրականացման այն վայրերում (առևտրի օբյեկտներում կամ ծառայության մատուցման վայրերում) տեղադրված հսկիչ դրամարկղային մեքենաներով նախորդ եռամսյակի ընթացքում արձանագրված շրջանառությունը, որոնց մասով արձանագրվել են խախտումներ:

10. Սույն հոդվածով սահմանված՝ գործունեության կասեցումն իրականացվում է Օրենսգրքի 384-րդ հոդվածով սահմանված կարգով:

11. Գործունեության կասեցման հիմքերի վերաբերյալ հայտարարությունը փակցվում է գնորդների և հաճախորդների համար տեսանելի տեղում:

(416-րդ հոդվածը լրաց. 21.12.17 ՀՕ-266-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն, 21.06.18 ՀՕ-338-Ն, 25.06.19 ՀՕ-68-Ն)

Հոդված 417. Գործունեության կասեցման կանոնները չպահպանելը

1. Գործունեության կասեցման ընթացքում գործունեության կասեցման վայրի տարածքի մուտքը (մուտքերը) կամ տարածք մուտք գործելու այլ հնարավոր ուղիները կնքելու, կապարակնքելու, դրոշմելու, թվային, տառային կամ կիրառված դրոշմավորման այլ միջոցը առաջին անգամ վնասելու և կասեցման վայրում կասեցման մասին որոշմամբ սահմանված գործունեություն, գործառույթ կամ գործողություն առաջին անգամ իրականացնելու դեպքում կազմակերպությունից կամ անհատ ձեռնարկատիրոջից գանձվում է տուգանք՝ 300 հազար դրամի չափով:

2. Կասեցման մասին նույն որոշմամբ գործունեության կասեցման ընթացքում սույն հոդվածի 1-ին մասով սահմանված խախտումը կրկնելու դեպքում կազմակերպությունից կամ անհատ ձեռնարկատիրոջից գանձվում է տուգանք՝ 2 միլիոն դրամի չափով:

(417-րդ հոդվածը փոփ. 25.06.19 ՀՕ-68-Ն)

Հոդված 418. Դրամարկղային գործառնությունները դրամարկղային գրքում չգրանցելը, դրամարկղային գրքի վարման կանոնները խախտելը

1. Դրամարկղային գործառնությունները դրամարկղային գրքում չգրանցելու դեպքում հարկ վճարողից գանձվում է տուգանք՝ 50 հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված խախտումը համալիր հարկային ստուգման ակտով արձանագրելուն հաջորդող մեկ տարվա ընթացքում կրկին կատարելու դեպքում հարկ վճարողից գանձվում է տուգանք՝ 100 հազար դրամի չափով:

3. Դրամարկղային գրքի գրանցման կամ դրամարկղային գրքի վարման սահմանված կարգը խախտելու դեպքում հարկ վճարողից գանձվում է տուգանք՝ 20 հազար դրամի չափով:

4. Սույն հոդվածի 3-րդ մասում նշված խախտումը համալիր հարկային ստուգման ակտով արձանագրելուն հաջորդող մեկ տարվա ընթացքում կրկին կատարելու դեպքում՝ հարկ վճարողից գանձվում է տուգանք՝ 50 հազար դրամի չափով:

5. Սույն հոդվածի 2-րդ և 4-րդ մասերի կիրառության իմաստով՝ խախտումը կրկին կատարել է համարվում համալիր հարկային ստուգման ակտի ամսաթվից հետո՝ մեկ տարվա ընթացքում՝ մինչև հաջորդ համալիր հարկային ստուգման ակտի նախագծի ամսաթիվը, սույն հոդվածի՝ համապատասխանաբար 1-ին կամ 3-րդ մասով սահմանված խախտումը կատարելը:

Հոդված 419. Դրամարկղային գործառնությունների սահմանափակումները չպահպանելը

1. Կանխիկ դրամով գումարի վճարման նկատմամբ Օրենսգրքի 386-րդ հոդվածով սահմանված սահմանափակումները չպահպանելու դեպքում հարկ վճարողից գանձվում է տուգանք՝ կանխիկ դրամով գումարի վճարման թույլատրված չափը գերազանցող գումարների (խախտման գումարներ) հանրագումարի հինգ տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան 500 հազար դրամը, և ոչ ավելի, քան երկու միլիոն դրամը:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված խախտումը դրա արձանագրմանը հաջորդող մեկ տարվա ընթացքում կրկին կատարելու դեպքում հարկ վճարողից գանձվում է տուգանք՝ խախտման գումարների հանրագումարի տասը տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան մեկ միլիոն դրամը, և ոչ ավելի, քան չորս միլիոն դրամը:

3. Կանխիկ դրամով գումարի ընդունման նկատմամբ Օրենսգրքի 386-րդ հոդվածով սահմանված սահմանափակումները չպահպանելու դեպքում հարկ վճարողից գանձվում է տուգանք՝ կանխիկ դրամով գումարի ընդունման թույլատրված չափը գերազանցող գումարների (խախտման գումարներ) հանրագումարի հինգ տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան 500 հազար դրամը, և ոչ ավելի, քան երկու միլիոն դրամը:

4. Սույն հոդվածի 3-րդ մասում նշված խախտումը դրա արձանագրմանը հաջորդող մեկ տարվա ընթացքում կրկին

կատարելու դեպքում հարկ վճարողից գանձվում է տուգանք՝ խախտման գումարների հանրագումարի տասը տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան մեկ միլիոն դրամը, և ոչ ավելի, քան չորս միլիոն դրամը:

5. Կանխիկ դրամով գումարի վճարման և (կամ) կանխիկ դրամով գումարի ընդունման նկատմամբ Օրենսգրքի 386-րդ հոդվածով սահմանված սահմանափակումները չպահպանելու համար սույն հոդվածի 1-4 մասերով սահմանված տուգանքները կիրառվում են համալիր հարկային ստուգմամբ ստուգվող ժամանակաշրջանում՝

1) ապրանքների ձեռքբերման, աշխատանքների ընդունման, ծառայությունների ստացման յուրաքանչյուր գործարքի դիմաց կանխիկ դրամով գումարի վճարման՝ Օրենսգրքով սահմանված առավելագույն չափերի խախտման գումարների հանրագումարի նկատմամբ.

2) ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման յուրաքանչյուր գործարքի դիմաց կանխիկ դրամով գումարի ընդունման՝ Օրենսգրքով սահմանված առավելագույն չափերի խախտման գումարների հանրագումարի նկատմամբ.

3) մեկ ամսվա ընթացքում ապրանքների ձեռքբերման, աշխատանքների ընդունման, ծառայությունների ստացման գործարքների դիմաց կանխիկ դրամով գումարի վճարման՝ Օրենսգրքով սահմանված առավելագույն չափի խախտման գումարների հանրագումարի նկատմամբ.

4) մեկ ամսվա ընթացքում ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործարքների դիմաց կանխիկ դրամով գումարի ընդունման՝ Օրենսգրքով սահմանված առավելագույն չափի խախտման գումարների հանրագումարի նկատմամբ:

6. Սույն հոդվածի 5-րդ մասի՝

1) 3-րդ կետի կիրառության իմաստով՝ խախտման գումարների հանրագումարում չեն ներառվում ապրանքների ձեռքբերման, աշխատանքների ընդունման, ծառայությունների ստացման այն գործարքների դիմաց կանխիկ դրամով վճարված գումարները, որոնց մասով խախտվել են Օրենսգրքի 386-րդ հոդվածով սահմանված՝ ապրանքների ձեռքբերման, աշխատանքների ընդունման, ծառայությունների ստացման յուրաքանչյուր գործարքի դիմաց կանխիկ դրամով գումարի վճարման առավելագույն չափերը.

2) 4-րդ կետի կիրառության իմաստով՝ խախտման գումարների հանրագումարում չեն ներառվում ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման այն գործարքների դիմաց կանխիկ դրամով ընդունված գումարները, որոնց մասով խախտվել են Օրենսգրքի 386-րդ հոդվածով սահմանված՝ ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման յուրաքանչյուր գործարքի դիմաց կանխիկ դրամով գումարի ընդունման առավելագույն չափերը:

7. Սույն հոդվածի 2-րդ և 4-րդ մասերի կիրառության իմաստով՝ խախտումը կրկին կատարել է համարվում համալիր հարկային ստուգման ակտի ամսաթվից հետո՝ մեկ տարվա ընթացքում՝ մինչև հաջորդ համալիր հարկային ստուգման ակտի նախագծի ամսաթիվը, սույն հոդվածի՝ համապատասխանաբար 1-ին կամ 3-րդ մասով սահմանված խախտումը կատարելը:

(419-րդ հոդվածը փոփ. 25.06.19 ՀՕ-68-Ն)

Հոդված 420. Արտոնագրային հարկի հաշվարկման համար ելակետային տվյալը կամ գործակիցը պակաս հաշվարկելը

(հոդվածն ուժը կորցրել է 25.06.19 ՀՕ-68-Ն)

Հոդված 421. Առանց արտոնագրի գործունեություն իրականացնելը

(հոդվածն ուժը կորցրել է 25.06.19 ՀՕ-68-Ն)

Հոդված 422. Ակցիզային դրոշմանիշերը և (կամ) դրոշմապիտակները սահմանված ժամկետում չվերադարձնելը, հետ չընդունելը կամ կորուստը

1. Չօգտագործված (այդ թվում՝ կորած) կամ վնասված ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների վերադարձը Օրենսգրքի 396-րդ հոդվածի՝ համապատասխանաբար 1-ին և 2-րդ մասերով սահմանված ժամկետներից ուշացնելու կամ Օրենսգրքի 396-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դեպքերում հարկային մարմնի կողմից հետ չընդունվելու դեպքում հաշվարկվում է տուգանք՝

1) նախորդ հարկային տարվա ընթացքում ստացված ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների թվաքանակի մինչև մեկ տոկոսի (ներառյալ) չափով ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների վերադարձը սահմանված ժամկետներից ուշացնելու կամ հարկային մարմնի կողմից հետ չընդունվելու կամ դրանց կորստի դեպքում՝ յուրաքանչյուր ակցիզային դրոշմանիշի և (կամ) դրոշմապիտակի համար՝ 50 դրամ.

2) նախորդ հարկային տարվա ընթացքում ստացված ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների թվաքանակի 1-ից մինչև 10 տոկոսի (ներառյալ) չափով ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների վերադարձը սահմանված ժամկետներից ուշացնելու կամ հարկային մարմնի կողմից հետ չընդունվելու կամ դրանց

կորստի դեպքում՝ յուրաքանչյուր ակցիզային դրոշմանիշի և (կամ) դրոշմապիտակի համար՝ 100 դրամ.

3) նախորդ հարկային տարվա ընթացքում ստացված ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների թվաքանակի 10-ից մինչև 50 տոկոսի (ներառյալ) չափով ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների վերադարձը սահմանված ժամկետներից ուշացնելու կամ հարկային մարմնի կողմից հետ չընդունվելու կամ դրանց կորստի դեպքում՝ յուրաքանչյուր ակցիզային դրոշմանիշի և (կամ) դրոշմապիտակի համար՝ 300 դրամ.

4) նախորդ հարկային տարվա ընթացքում ստացված ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների թվաքանակի 50 տոկոսից ավելի չափով ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների վերադարձը սահմանված ժամկետներից ուշացնելու կամ հարկային մարմնի կողմից հետ չընդունվելու կամ դրանց կորստի դեպքում՝ յուրաքանչյուր ակցիզային դրոշմանիշի և (կամ) դրոշմապիտակի համար՝ 500 դրամ:

(422-րդ հոդվածը փոփ. 21.06.18 ՀՕ-338-Ն)

Հոդված 423. Ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների տպագրության ծախսերի փոխհատուցումը

1. Օրենսգրքի 396-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում վերադարձման ներկայացված և հարկային մարմնի կողմից հետ ընդունված՝ վնասված ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների համար հարկ վճարողից, որպես փոխհատուցում, գանձվում են այդ դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների տպագրության համար հարկային մարմնի կատարած ծախսերը:

2. Օրենսգրքի 390-րդ հոդվածում նշված՝ պիտանիության (պահպանման) ժամկետ ունեցող ապրանքները պիտանիության (պահպանման) ժամկետի ընթացքում չօտարվելու և այդ ժամկետի ավարտից հետո Կառավարության սահմանած կարգով դուրս գրվելու դեպքում այդ ապրանքների վրա փակցված դրոշմապիտակների համար հարկ վճարողից, որպես փոխհատուցում, գանձվում են այդ դրոշմապիտակների տպագրության համար հարկային մարմնի կատարած ծախսերը:

3. Այն դեպքում, երբ սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերի կիրառության իմաստով, հնարավոր չէ որոշել դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների տպագրության համար հարկային մարմնի կատարած ծախսերը, այդ ծախսերը հաշվարկվում են՝ հիմք ընդունելով ծախսերի հաշվարկման պահին գործող՝ Կառավարության որոշմամբ դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների համար սահմանված գները:

(423-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն, փոփ., լրաց. 21.06.18 ՀՕ-338-Ն)

Հոդված 424. Ակցիզային դրոշմանիշերով և (կամ) դրոշմապիտակներով դրոշմավորման կանոնները խախտելը

1. Ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների՝ մեկից ավելի անգամ օգտագործման հնարավորությունը չբացառող ձևով կամ առանց դրանց վերաբերյալ սահմանված կարգով էլեկտրոնային եղանակով գրանցումների կատարման կամ ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների գծով էլեկտրոնային եղանակով կամ Օրենսգրքի 393-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով կատարված գրանցումներին չհամապատասխանող դրոշմավորման ենթակա ապրանքներ օտարելու դեպքում, եթե օտարման համար նախատեսված վայրում գտնվող այդ ապրանքների ընդհանուր արժեքը վաճառողի մոտ նշված (իսկ նշված չլինելու դեպքում՝ Օրենսգրքով սահմանված կարգով որոշված) գներով՝

1) չի գերազանցում 50 հազար դրամը, ապա Օրենսգրքի 391-րդ հոդվածով սահմանված՝ դրոշմավորման պարտավորություն կրող անձը վճարում է տուգանք՝ 500 հազար դրամի չափով.

2) գերազանցում է 50 հազար դրամը, ապա Օրենսգրքի 391-րդ հոդվածով սահմանված՝ դրոշմավորման պարտավորություն կրող անձը վճարում է տուգանք՝ ապրանքների ընդհանուր արժեքի 100 տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան մեկ միլիոն 500 հազար դրամը:

(424-րդ հոդվածը փոփ. 24.10.19 ՀՕ-198-Ն)

Հոդված 424.1. Անմաքս առևտրի խանութի կազմակերպչին ապրանքների մատակարարման ժամկետը խախտելը

Օրենսգրքի 89-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով սահմանված ժամկետի խախտման դեպքում կենտրոնացված մատակարարը սահմանված ժամկետում անմաքս առևտրի խանութի կազմակերպչին չմատակարարված ապրանքների գծով վճարում է տուգանք (այդ թվում՝ սույն մասով սահմանված խախտումը կամերալ ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվելու դեպքում)՝ սահմանված ժամկետում անմաքս առևտրի խանութի կազմակերպչին չմատակարարված ապրանքների համար Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկվող ակցիզային հարկի գումարի կրկնակի չափով:

(424.1-ին հոդվածը լրաց. 25.06.19 ՀՕ-68-Ն)

Հոդված 425. Հարկային հաշիվների դուրս գրման սահմանափակումները խախտելը

1. Օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ հարկային հաշիվների դուրս գրման սահմանափակումների խախտմամբ հարկային հաշիվ դուրս գրելու դեպքում հարկ վճարողները պարտավոր են հարկային հաշվում առանձնացված ԱԱՀ-ի գումարը Օրենսգրքով սահմանված կարգով վճարել պետական բյուջե, եթե դուրս գրված հարկային հաշիվը սահմանված կարգով չեղյալ չի համարվել:

2. Օրենսգրքի 62-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման անհատույց կամ իրական արժեքից էականորեն ցածր արժեքով հատուցմամբ գործարքների դեպքում կազմակերպությունները և ֆիզիկական անձինք պարտավոր են Օրենսգրքի 62-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով հաշվարկվող՝ ԱԱՀ-ով հարկման բազային համապատասխանող ԱԱՀ-ի գումարի և հարկային հաշվում առանձնացված ԱԱՀ-ի գումարի դրական տարբերությունը Օրենսգրքով սահմանված կարգով վճարել պետական բյուջե:

(425-րդ հոդվածը փոփ., լրաց. 25.06.19 ՀՕ-68-Ն)

Հոդված 426. Սահմանված կարգի խախտումով հարկային հաշիվ դուրս գրելը

1. Կառավարության սահմանած կարգի խախտմամբ հարկային հաշիվ կամ ճշգրտող հարկային հաշիվ դուրս գրելու դեպքում հարկային հաշիվ կամ ճշգրտող հարկային հաշիվ դուրս գրողը վճարում է տուգանք՝ հարկային հաշվի կամ ճշգրտող հարկային հաշվի լրիվ արժեքով հատուցման գումարի (ներառյալ՝ ԱԱՀ-ի գումարը) կրկնակիի չափով, բայց ոչ պակաս 5 միլիոն դրամից:

(426-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Հոդված 427. Տուգանքի, վնասի հատուցման և փոխհատուցման գումարի վճարման ժամկետները

1. Օրենսգրքի սույն բաժնով սահմանված տուգանքները և Օրենսգրքի 407-րդ հոդվածով սահմանված վնասի հատուցման գումարները համապատասխան բյուջե են վճարվում Օրենսգրքի 398-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում, բացառությամբ Օրենսգրքի 416-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված տուգանքի, որը վճարվում է նույն մասով սահմանված ժամկետում:

2. Օրենսգրքի 423-րդ հոդվածով սահմանված՝ ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների տպագրության ծախսերի փոխհատուցման գումարը վճարվում է համապատասխան վարչական ակտի ամսաթվին հաջորդող տասն օրվա ընթացքում:

(427-րդ հոդվածը փոփ. 25.06.19 ՀՕ-68-Ն)

Հոդված 428. Տուգանքի, վնասի հատուցման և փոխհատուցման գումարի առաջադրումը

1. Օրենսգրքի 407-410-րդ հոդվածներով սահմանված իրավախախտումները «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հայտնաբերվելու և արձանագրվելու դեպքում հարկային պարտավորությունները հաշվարկվում և գանձման են առաջադրվում հարկային մարմնի կողմից «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներին համապատասխան հարուցված վարչական վարույթի շրջանակներում և նույն օրենքով սահմանված կարգով հարկային մարմնի ղեկավարի կամ նրա լիազորած պաշտոնատար անձի ընդունած վարչական ակտով:

2. Օրենսգրքի 422-րդ հոդվածով սահմանված տուգանքը և Օրենսգրքի 423-րդ հոդվածով սահմանված փոխհատուցման գումարը հաշվարկվում և գանձման են առաջադրվում հարկային մարմնի կողմից «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներին համապատասխան հարուցված վարչական վարույթի շրջանակներում և նույն օրենքով սահմանված կարգով հարկային մարմնի ղեկավարի կամ նրա լիազորած պաշտոնատար անձի ընդունած վարչական ակտով:

Բ Ա Ժ Ի Ն 19

ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Գ Լ Ո Ւ Խ 78

ԳՈՒՅՔԻ ԱՐԳԵԼԱՆՔԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ԵՎ ԳՈՒՅՔԸ ԱՐԳԵԼԱՆՔԻՑ ՀԱՆԵԼԸ

Հոդված 429. Գույքի արգելանքը

1. Գույքի արգելանքը հարկային պարտավորության կատարումն ապահովելու նպատակով հարկ վճարողի գույքային իրավունքների սահմանափակմանն ուղղված՝ հարկային մարմնի կողմից իրականացվող գործողություն է: Գույքի արգելանքը կիրառվում է հարկ վճարողի բանկային հաշիվներում և (կամ) դրամարկղում առկա դրամական միջոցների, ինչպես նաև այլ գույքի տնօրինման, տիրապետման կամ օգտագործման իրավունքի՝ հարկային պարտավորությունների չափով սահմանափակման միջոցով:

Հոդված 430. Գույքի արգելանքի կիրառության հիմքերը

1. Չկատարված հարկային պարտավորության չափը 500 հազար դրամ կամ ավելի կազմելու դեպքում, եթե հարկային մարմնի իրականացրած վարչարարության ընթացքում արդեն իսկ ձեռք բերված ապացույցները բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ հարկ վճարողը կարող է թաքցնել, փչացնել կամ սպառել հարկային մարմնի ընդունած իրավական ակտի կատարման համար անհրաժեշտ գույքը, ապա հարկային մարմնի ղեկավարը Օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի հարկ վճարողի գույքի վրա արգելանք դնելու մասին հանձնարարագիր հրապարակելու:

2. Հարկային մարմնի կողմից գույքի արգելանքը կարող է կիրառվել միայն հարկային մարմնի կողմից վերահսկվող հարկային պարտավորության կատարումն ապահովելու նպատակով: Արգելանքի ենթակա է միայն այն գույքը, որն անհրաժեշտ է հարկային պարտավորության կատարումն ապահովելու համար՝ հարկային պարտավորությունների չափով: Հարկային մարմնի կողմից գույքի արգելանքը դրվում է հարկ վճարողի գույքի վրա՝ անկախ այն հանգամանքից, թե ում մոտ է այն գտնվում: Արգելանքը չի կարող կիրառվել այն գույքի նկատմամբ, որի վրա օրենքով բռնագանձում չի կարող տարածվել, կամ որի պահպանման ժամկետը արգելանք դնելու պահին պակաս է երեք ամսից: Արգելանք չի կարող դրվել բանկերի, վճարահաշվարկային կազմակերպությունների, ներդրումային ֆոնդերի (այդ թվում՝ կենսաթոշակային ֆոնդերի) և ապահովագրական (վերաապահովագրական) ընկերությունների բանկային, դեպո կամ կենսաթոշակային հաշիվների և դրամական միջոցների վրա:

Հոդված 431. Գույքի արգելանքի կիրառման ընթացակարգը

1. Գույքի վրա արգելանք դնելու մասին հարկային մարմնի ղեկավարը հրապարակում է հանձնարարագիր՝ երկու օրինակից: Արգելանք դնելու մասին հանձնարարագրում նշվում են հանձնարարագիր հրապարակող պաշտոնատար անձի անունը, ազգանունը, պաշտոնը, հանձնարարագրի տրման տարին, ամիսը, ամսաթիվը, արգելանք դնող մարմնի անվանումը, գույքի արգելանքն իրականացնող պաշտոնատար անձի (անձանց) պաշտոնը, անունը, ազգանունը, հարկ վճարողի անունը, ազգանունը, կազմակերպության դեպքում՝ լրիվ անվանումը, ՀՎՀՀ-ն՝ առկայության դեպքում, իսկ ԱԱՀ վճարողների դեպքում՝ նաև ԱԱՀ վճարողի հաշվառման համարը, չկատարված հարկային պարտավորության չափը և արգելանք դնելու իրավական հիմքերը: Արգելանք դնելիս հանձնարարագրի մեկ օրինակը ուղարկվում է հարկ վճարողին:

2. Հարկ վճարողի գույքի վրա արգելանքը կիրառվում է հետևյալ հերթականությամբ.

1) բանկային հաշիվներում առկա դրամական միջոցներ.

2) դրամարկղում առկա կանխիկ դրամական միջոցներ.

3) արգելանքի ենթակա այլ գույք:

3. Յուրաքանչյուր հաջորդ հերթի գույքի վրա արգելանքը կիրառվում է միայն նախորդ հերթի գույքի վրա արգելանքը կիրառելուց հետո: Առանց նախորդ հերթում ընդգրկված գույքի վրա արգելանք կիրառելու՝ հաջորդ հերթի գույքի վրա արգելանք կարող է կիրառվել, եթե ակնհայտ է, որ նախորդ հերթի գույքի արժեքը անբավարար է պահանջների բավարարման համար: Ընդ որում՝

1) յուրաքանչյուր հաջորդ հերթի գույքի վրա արգելանքը կիրառվում է միայն այն չափով, որը ապահովված չէ նախորդ հերթի գույքի վրա արգելանք դնելուց հետո.

2) այն դեպքում, երբ հաջորդ հերթի գույքի վրա դրված արգելանքն ամբողջությամբ ապահովում է հարկային պարտավորությունը, հարկային մարմինը պետք է ընդունի որոշում՝ նախորդ հերթի գույքն արգելանքից հանելու մասին:

4. Հարկ վճարողի գույքի վրա արգելանքն իրականացնող պաշտոնատար անձը գույքի վրա արգելանք դնելու մասին հանձնարարագրի հիման վրա դրա հրապարակումից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, հարկ վճարողի գույքի վրա արգելանք դնելու մասին ընդունում է որոշում, որտեղ նշվում են որոշումն ընդունելու տարին, ամիսը, ամսաթիվը, վայրը, որոշումն ընդունած անձի պաշտոնը, անունը, ազգանունը, քննվող հարցը, հարկ վճարողի բանկային

հաշիվներում կամ դրամարկղում առկա դրամական միջոցների արգելանք իրականացնելու դեպքում նաև արգելանքի ենթակա գումարի չափը, ընդունված որոշման հիմքերը՝ այն օրենքների կամ այլ իրավական ակտերի վկայակոչմամբ, որոնցով որոշում ընդունող անձը ղեկավարվել է այն ընդունելիս, քննվող հարցի վերաբերյալ եզրահանգումը:

5. Գույքի բացակայության, անբավարարության կամ հարկ վճարողի գտնվելու վայրն անհայտ լինելու դեպքում արգելանքն իրականացնող պաշտոնատար անձը հարկային մարմնի սահմանած ձևով կազմում է համապատասխան արձանագրություն:

6. Գույքի վրա արգելանք դնելիս այն իրականացնող պաշտոնատար անձը յուրաքանչյուր դեպքի համար որոշում է սահմանափակման տեսակները, ծավալները՝ հաշվի առնելով գույքի հատկանիշները, սեփականատիրոջ կամ տիրապետողի համար դրա նշանակությունը և հարկային պարտավորության չափը: Որպես գույքի արժեք՝ ընդունվում է գույքի հաշվեկշռային արժեքը:

7. Հարկ վճարողը զգուշացվում է արգելանքի տակ դրված գույքը կամ դրա առանձին բաղադրամասերը վատնելու, օտարելու, թաքցնելու կամ ապօրինաբար մեկ ուրիշին հանձնելու դեպքում վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկվելու մասին:

8. Արգելանք դնելու մասին որոշումը պարտադիր է բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց, կազմակերպությունների ու ֆիզիկական անձանց համար և ենթակա է կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում: Արգելանք դնելու մասին որոշման պատճենը ոչ ուշ, քան այն ընդունելու հաջորդ օրը, պատշաճ ձևով ուղարկվում է հարկ վճարողին, ինչպես նաև այլ անձանց կամ կազմակերպություններին:

9. Գույքի արգելանք իրականացնող պաշտոնատար անձը չի կարող արգելել հարկ վճարողի ներկայացուցչի մասնակցությունը գույքի արգելանքի իրականացմանը: Սույն հոդվածի կիրառության իմաստով՝ հարկ վճարողի ներկայացուցիչ է համարվում այն անձը, որի լիազորությունները հաստատվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

10. Գույքի արգելանքը կարող է իրականացվել ժամը 8.00-ից մինչև 18.00-ն:

11. Սույն հոդվածով սահմանված գույքի արգելանքի դեպքում առկա հարկային պարտավորության ոչ պակաս, քան 20 տոկոսը մարելու և Օրենսգրքով սահմանված համապատասխան հիմքերի առկայության դեպքում հարկային մարմնի ղեկավարը, հարկ վճարողի դիմումի համաձայն, հարկային պարտավորությունների ապահովման՝ գույքի արգելանքի միջոցը փոխարինում է հարկային պարտավորությունների ապահովման այլ միջոցներով, որի տևողությունը կարող է սահմանվել մինչև ինն ամիս ժամկետով: Գույքի արգելանքի միջոցն Օրենսգրքով սահմանված կարգով հարկային պարտավորությունների ապահովման այլ միջոցներով փոխարինելու վերաբերյալ հանձնարարագրի ձևը սահմանում է հարկային մարմնի ղեկավարը: Հանձնարարագիրը հրապարակվում է երկու օրինակից, որի մեկ օրինակը մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում է հարկ վճարողին:

12. Հարկ վճարողի գույքի վրա արգելանք դնող պաշտոնատար անձի՝ իր իրավասությունների սահմաններում գործողությունների կատարմանը խոչընդոտելու դեպքում արգելանք դնող պաշտոնատար անձը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով սահմանված կարգով արձանագրում է խոչընդոտման փաստը, խոչընդոտող հանգամանքները վերացնելու համար աջակցություն ստանալու նպատակով դիմում է իրավապահ մարմիններին և նրանց օժանդակությամբ շարունակում է գույքի նկատմամբ արգելանք դնելու գործողությունները:

(431-րդ հոդվածը փոփ., խմբ. 21.06.18 ՀՕ-338-Ն)

Հոդված 432. Գույքն արգելանքից հանելը

1. Սույն հոդվածով սահմանված կարգով արգելանքի դրված գույքն արգելանքից հանվում է՝

1) եթե հարկ վճարողի վերաբերյալ ընդունված անհատական իրավական ակտն անբողոքարկելի դառնալուց հետո «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետում և կարգով հարկային մարմինը համապատասխան պահանջ չի ներկայացրել Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն կամ դատարան.

2) եթե հարկ վճարողի հարկային պարտավորությունը դադարել է կամ Օրենսգրքով սահմանված կարգով հարկային պարտավորության գումարը գանձվել է.

3) եթե հարկային մարմնի ղեկավարը հրապարակել է հանձնարարագիր՝ Օրենսգրքով սահմանված կարգով հարկային պարտավորությունների ապահովման՝ գույքի արգելանքի միջոցը հարկային պարտավորությունների ապահովման այլ միջոցներով փոխարինելու վերաբերյալ և արգելանքը փոխարինվել է հարկային պարտավորության ապահովման այլ միջոցով.

4) եթե արգելանքով ապահովված պարտավորության գումարի գանձման մասին անհատական իրավական ակտը դատական կամ արտադատական կարգով ճանաչվել է անվավեր:

2. Հարկային պարտավորության մարման նպատակով անհրաժեշտ գումարը գանձապետական համապատասխան հաշիվ մուտքագրվելուց հետո կամ հարկային մարմնի ղեկավարի կողմից հարկային պարտավորությունների ապահովման՝ գույքի արգելանքի միջոցը հարկային պարտավորությունների ապահովման այլ միջոցներով փոխարինելու

վերաբերյալ համապատասխան հանձնարարագիրը հրապարակվելուց և արգելանքը հարկային պարտավորության ապահովման այլ միջոցով փոխարինվելուց հետո հարկային մարմնի՝ արգելանքն իրականացնող պաշտոնատար անձը պարտավոր է անհապաղ կարգադրություն ուղարկել համապատասխան անձանց և կազմակերպություններին՝ արգելանքը հանելու մասին: Բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների արգելանքի դեպքում նշված կարգադրությունը հարկային մարմնի կողմից սույն մասով սահմանած ժամկետում չներկայացվելու դեպքում հարկ վճարողն իրավունք ունի համապատասխան բանկ ներկայացնելու հարկային պարտավորության վճարման անդորրագիրը կամ Օրենսգրքով սահմանված կարգով պարտավորության գումարի գանձումը հավաստող փաստաթուղթը կամ հարկային մարմնի ղեկավարի կողմից հրապարակված՝ հարկային պարտավորությունների ապահովման՝ գույքի արգելանքի միջոցը հարկային պարտավորությունների ապահովման այլ միջոցներով փոխարինելու վերաբերյալ համապատասխան հանձնարարագիրը և արգելանքը հարկային պարտավորության ապահովման այլ միջոցով փոխարինելու վերաբերյալ համապատասխան փաստաթուղթը, որից հետո տվյալ բանկը մեկ աշխատանքային օրվա ընթացքում արգելանքը հանելու վերաբերյալ հարցում է կատարում հարկային մարմին: Եթե բանկը հարցումն ուղարկելուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, հարկային մարմնից մերժում չի ստանում, ապա արգելանքը հանվում է:

3. Հարկային մարմինն արգելանքը հանելու վերաբերյալ հարցումը չի կարող մերժել հետևյալ հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում.

1) հարկային պարտավորության գումարը մուտքագրվել է գանձապետական համապատասխան հաշիվ.

2) ըստ հարկային մարմնի տվյալների, Օրենսգրքով սահմանված կարգով իրականացվել է հարկային պարտավորության գումարի մարում.

3) հարկային մարմնի ղեկավարը հրապարակել է հարկային պարտավորությունների ապահովման՝ գույքի արգելանքի միջոցը հարկային պարտավորությունների ապահովման այլ միջոցներով փոխարինելու վերաբերյալ համապատասխան հանձնարարագիր և արգելանքը փոխարինվել է հարկային պարտավորության ապահովման այլ միջոցով:

4. Արգելանք կիրառած անձինք և մարմինները պարտավոր են անհապաղ հանել իրենց կիրառած արգելանքը, եթե հարկ վճարողը ներկայացնում է պարտավորությունը լրիվ չափով վճարելը հավաստող անդորրագիրը կամ հարկային մարմնի ղեկավարի հրապարակած՝ հարկային պարտավորությունների ապահովման՝ գույքի արգելանքի միջոցը հարկային պարտավորությունների ապահովման այլ միջոցներով փոխարինելու վերաբերյալ համապատասխան հանձնարարագիրը:

5. Գույքի վրա արգելանք դնելու մասին որոշումը կարող է բողոքարկվել հարկ վճարողից հարկային պարտավորության գումարը գանձելու վերաբերյալ անհատական իրավական ակտը բողոքարկելու համար սահմանված ժամկետում: Գույքի վրա արգելանք դնելու մասին որոշումը դառնում է անբողոքարկելի հարկ վճարողից հարկային պարտավորության գումարը գանձելու վերաբերյալ անհատական իրավական ակտն անբողոքարկելի դառնալու հետ միաժամանակ: Գույքի վրա արգելանք դնելու մասին որոշման արտադատական կարգով բողոքարկումը չի կասեցնում որոշման կատարումը:

6. Արգելանքի տակ դրված գույքը վատնելը, օտարելը, թաքցնելը, ապօրինաբար մեկ ուրիշին հանձնելը, փչացնելը կամ ոչնչացնելն արգելվում է:

(432-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն, լրաց. 21.06.18 ՀՕ-338-Ն)

Հոդված 433. Բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների վրա արգելանք դնելը

1. Սույն հոդվածով սահմանված՝ բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների վրա արգելանք դնելու գործընթացն իրականացվում է էլեկտրոնային համակարգի միջոցով, որի գործողության կարգը և պայմանները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և Կառավարության լիազոր պետական կառավարման մարմնի համատեղ իրավական ակտով: Հարկ վճարողի բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին որոշումը բանկերին և պետական մարմիններին ուղարկվում է էլեկտրոնային համակարգի միջոցով:

2. Առևտրային բանկերն անմիջապես արգելանք են դնում որոշման ստացման պահի դրությամբ հարկ վճարողի բանկային հաշիվներում (այդ թվում՝ որոշման ստացումից հետո բացվող բանկային հաշիվներում) առկա դրամական միջոցների վրա՝ որոշմամբ նախատեսված պարտավորության գումարի չափով, որի մասին առևտրային բանկերը տեղեկատվություն (այդ թվում՝ տվյալ բանկում վարվող՝ հարկ վճարողին պատկանող բանկային հաշիվներում առկա պարտավորության չափով արգելանքի տակ դրված գումարի վերաբերյալ) են ներկայացնում հարկային մարմին: Բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին որոշմամբ առաջին հերթին արգելանք է դրվում Հայաստանի Հանրապետության դրամով ընթացիկ հաշիվների վրա, դրանց վրա դրամական միջոցների անբավարարության դեպքում, ըստ հերթականության, արգելանք է դրվում արտարժույթով ընթացիկ հաշիվների վրա, Հայաստանի Հանրապետության դրամով ավանդային հաշիվների վրա, արտարժույթով ավանդային հաշիվների վրա:

3. Հարկ վճարողի բանկային հաշիվներին դրամական միջոցների բացակայության կամ անբավարարության դեպքում առևտրային բանկերը պարտավոր են արգելանք դնել հարկ վճարողի բանկային հաշիվներին հետագայում մուտքագրվող

միջոցների վրա՝ մինչև բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին որոշմամբ նշված հարկային պարտավորության չափով գումարի ապահովումը կամ արգելանք դնելու մասին որոշման ուժը կորցնելը կամ մինչև Օրենսգրքով նախատեսված արգելանքը հանելու դեպքերի ի հայտ գալը:

4. Այն դեպքում, երբ բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների վրա արգելանք դնելու արդյունքում արգելանք է դրվում հարկ վճարողի մեկից ավելի բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների վրա, և արգելանքի տակ դրված ընդհանուր գումարը գերազանցում է հարկային պարտավորության չափը, կամ բանկային հաշիվներից որևէ մեկին առկա դրամական միջոցներով ապահովվում է հարկային պարտավորության չափը, ապա հարկային մարմինն առևտրային բանկերից ստացված տեղեկատվության հիման վրա կատարում է բանկային հաշիվներում արգելադրված գումարների հաշվարկ, որի արդյունքում հանձնարարություն է ուղարկում արգելանք դնելու մասին նույն որոշմամբ հարկ վճարողի պարտավորությունից ավելի գումարի չափով արգելանք կիրառած առևտրային բանկին (բանկերին)՝ հանելու կամ նվազեցնելու հարկային պարտավորության գումարից ավելի արգելադրված գումարի չափով արգելանքները: Նշված հանձնարարությունն ստանալուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, առևտրային բանկը (բանկերը) պարտավոր են հանել կամ նվազեցնել արգելանքը և համապատասխան տեղեկատվություն ներկայացնել հարկային մարմին:

5. ***(մասն ուժը կորցրել է 21.06.18 ՀՕ-338-Ն)***

6. ***(մասն ուժը կորցրել է 21.06.18 ՀՕ-338-Ն)***

7. Հարկ վճարողի բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին որոշումը, որում բացակայում է արգելանքի տակ դրման ենթակա գումարի հստակ չափը, ենթակա չէ կատարման:

8. Բանկային հաշիվներում հարկ վճարողի ունեցած դրամական միջոցների արգելանք դնելու մասին որոշումը չի տարածվում պետական բյուջե վճարման ենթակա դրամական միջոցների փոխանցման վրա, և հարկ վճարողն իրավունք ունի այդ միջոցներից պետական բյուջե փոխանցումներ կատարելու, եթե այդ դրամական միջոցները գրավի առարկա չեն:

9. Արգելանքի տակ դրված բանկային հաշիվներում առկա դրամական միջոցներից պետական բյուջե կատարվող փոխանցումների վերաբերյալ հարկային մարմնի և բանկերի միջև տեղեկությունները փոխանակվում են հարկային մարմնի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համատեղ սահմանած կարգով:

(433-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն, լրաց., խմբ., փոփ. 21.06.18 ՀՕ-338-Ն)

Հոդված 434. Հարկ վճարողի դրամարկղում առկա կանխիկ դրամական միջոցների վրա արգելանք դնելը

1. Հարկ վճարողի բանկային հաշիվների բացակայության կամ հարկային պարտավորությունները մարելու համար դրանցում առկա դրամական միջոցների անբավարար լինելու դեպքում հարկային մարմինը հարկ վճարողի դրամարկղում ունեցած կանխիկ դրամական միջոցների վրա դնում է արգելանք՝ հարկային պարտավորությունը չգերազանցող գումարի չափով:

2. Հարկ վճարողի դրամարկղում ունեցած կանխիկ դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին որոշումը հարկ վճարողին ներկայացնելու օրը որոշումն ընդունած հարկային մարմնի պաշտոնատար անձը գույքագրում է հարկ վճարողի դրամարկղում առկա կանխիկ դրամական միջոցները և դրանք, ինչպես նաև արգելանքի կիրառման ժամանակահատվածում հարկային պարտավորությունների սահմանում դրամարկղ մուտքագրվող կանխիկ դրամական միջոցներն արձանագրությամբ ի պահ է հանձնում հարկ վճարողին: Հարկ վճարողի դրամարկղում առկա կանխիկ դրամական միջոցների՝ արգելանքի տակ գտնվելու ժամանակահատվածում որոշում կայացրած հարկային մարմնի պաշտոնատար անձն իրավունք ունի ցանկացած ժամանակ գույքագրելու դրամարկղում դրամական միջոցների առկայությունը, ինչպես նաև մուտքագրված և ելքագրված դրամական միջոցների շարժը, որի արդյունքներով կազմվում է արձանագրություն: Դրամարկղում կանխիկ դրամական միջոցների կամ կանխիկ դրամական միջոցների շարժի գույքագրման արձանագրության ձևը սահմանում է հարկային մարմինը, որում նշվում են գույքագրման ամսաթիվը, ժամանակահատվածը, արգելանքի տակ գտնվող դրամական միջոցների արժույթը, արժեքը, քանակը, մուտքագրված դրամական միջոցների արժեքը և դրանց ստացման աղբյուրը, ելքագրված դրամական միջոցների արժեքը և ծախսման ուղղությունները, ի պահ հանձնվող դրամական միջոցների արժույթը, արժեքը, քանակը, գույքագրման ընթացքում դրամարկղային գործառնությունների կատարման դադարեցման ժամանակահատվածը, նշում՝ արգելանքի կիրառման ժամանակահատվածում հարկային պարտավորությունների սահմանում դրամարկղ մուտքագրվող դրամական միջոցների արգելանքի տակ գտնվելու և ի պահ ընդունելու վերաբերյալ, գույքագրմանը մասնակցող անձանց տվյալներն ու ստորագրությունները: Նշված արձանագրությունները հարկ վճարողի դրամարկղում առկա կանխիկ դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին որոշման անբաժանելի մասն են:

3. Դրամարկղում հարկ վճարողի ունեցած կանխիկ դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին որոշումը չի տարածվում պետական և համայնքային բյուջեներ կատարվող վճարումների վրա, և հարկ վճարողն իրավունք ունի դրամարկղում առկա դրամական միջոցներից պետական և համայնքի բյուջեներ վճարումներ կատարելու:

4. Հարկ վճարողի բանկային հաշվին մուտքագրված դրամական միջոցների նկատմամբ կիրառվում են Օրենսգրքի 433-րդ հոդվածով նախատեսված՝ բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների նկատմամբ արգելանք

կիրառելու վերաբերյալ դրույթները:
(434-րդ հոդվածը խմբ. 21.06.18 ՀՕ-338-Ն)

Հոդված 435. Այլ գույքի վրա արգելանք դնելը

1. Հարկ վճարողի բանկային հաշիվների և դրամարկղի բացակայության կամ հարկային պարտավորությունները մարելու համար դրանցում առկա դրամական միջոցների անբավարար լինելու դեպքում հարկային մարմնի պաշտոնատար անձն ընդունում է որոշում հարկ վճարողի այլ գույքի վրա արգելանք դնելու մասին:
2. Արգելանքն իրականացնող պաշտոնատար անձն արգելանքի տակ դրված այլ գույքն ի պահ է հանձնում հարկ վճարողին, իսկ եթե հարկ վճարողը փորձում է արգելանքի տակ դրված գույքը կամ դրա առանձին բաղադրամասերը վատնել, թաքցնել, ապօրինաբար մեկ ուրիշին հանձնել, փչացնել կամ ոչնչացնել, ապա գույքի պահատվությունը հանձնվում է նման գործունեություն իրականացնող մասնագիտացված կազմակերպությանը՝ պահատվության պայմանագրի հիման վրա: Պահատվության հետ կապված ծախսերը կատարում է հարկ վճարողը:
3. Այլ գույքի վրա արգելանք դնելու էլեկտրոնային համակարգի գործողության կարգը և պայմանները սահմանվում են հարկային մարմնի և Կառավարության լիազոր պետական կառավարման մարմինների համատեղ իրավական ակտով:
4. Արգելանք դնելու մասին որոշումն այլ գույքը հաշվառող համապատասխան պետական լիազոր մարմինների կողմից կատարվելուց հետո, եթե հարկ վճարողը հարկային մարմին է ներկայացնում իրեն սեփականության իրավունքով պատկանող այլ գույքի շուկայական արժեքի վերաբերյալ որակավորում ստացած անձանց տված տեղեկանք և գույքը գրավի առարկա չհանդիսանալու վերաբերյալ իրավասու մարմնի տված համապատասխան փաստաթուղթ, ապա հարկային մարմինը ձեռնարկում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված միջոցառումներ և ընդունում է որոշում հարկային պարտավորության չափից ավելի արժեքով արգելադրված գույքի և նախորդ հերթի գույքի վրա դրված արգելանքը հանելու և միայն այն գույքի նկատմամբ արգելանք թողնելու վերաբերյալ, որն ամբողջությամբ ապահովում է հարկային պարտավորությունը:
(435-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն, խմբ., փոփ., լրաց. 21.06.18 ՀՕ-338-Ն)

Գ Լ Ո Ւ Խ 79

ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Հոդված 436. Հարկային պարտավորությունների կատարումն ապահովող այլ միջոցները

1. Գույքի արգելանքի կիրառման անհնարինության կամ հարկային պարտավորությունները մարելու նպատակով արգելանքի տակ դրված գույքի արժեքի անբավարարության կամ կիրառված գույքի արգելանքի ապահովման միջոցի փոխարինման անհրաժեշտության դեպքում հարկային պարտավորությունների կատարումը կարող է ապահովվել հետևյալ միջոցներով.
1) գրավի պայմանագրի կնքում.
2) երաշխիք.
3) հարկ վճարողի կողմից պահանջի իրավունքի զիջում:
2. Հարկային պարտավորությունների կատարումն ապահովող որևէ միջոցի կիրառությունը չի սահմանափակում հարկային պարտավորությունների կատարումն ապահովող այլ միջոցի կիրառությունը:
3. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված՝ հարկային պարտավորությունների կատարումն ապահովող միջոցների կիրառման լիազորությունը հարկային մարմնի ղեկավարը կարող է փոխանցել հարկային մարմնի այլ պաշտոնատար անձի:

Հոդված 437. Գրավի պայմանագրի կնքումը

1. Որպես հարկային պարտավորությունների կատարման ապահովման միջոց՝ հարկային մարմնի և հարկ վճարողի միջև կարող է կնքվել գրավի պայմանագիր:
2. Գույքի գրավի պայմանագիր կնքելու, գրավով ապահովված հարկային պարտավորությունների կատարման, գրավի պայմանագրի դադարեցման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ և Օրենսգրքով:
3. Գրավի պայմանագիր կնքելու դեպքում հարկային պարտավորությունները մարելու նպատակով կազմվում է պարտավորությունների աստիճանական մարման ժամանակացույց, որի տևողությունը կարող է սահմանվել մինչև ինն ամիս ժամկետով: Որպես գրավատու կարող է հանդես գալ ինչպես պարտապանը, այնպես էլ երրորդ անձը: Որպես գրավատու երրորդ անձի հանդես գալու դեպքում գրավի պայմանագրին կցվում է նաև պարտապան հարկ վճարողի

գրավոր համաձայնությունը՝ գրավի պայմանագրին կից կազմված հարկային պարտավորությունների աստիճանական մարման ժամանակացույցի համաձայն, հարկային պարտավորությունները կատարելու վերաբերյալ:

4. Հարկ վճարողի կողմից իր հարկային պարտավորությունները չկատարելու դեպքում հարկային մարմինն իրավունք ունի այդ պարտավորությունները մարելու՝ ի հաշիվ գրավադրված գույքի՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

5. Գրավի առարկա կարող է հանդիսանալ այն գույքը, որի նկատմամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է կիրառվել գրավի իրավունքը: Հարկային մարմնի և գրավատուի միջև կնքվող գրավի պայմանագրով գրավի առարկա չի կարող հանդիսանալ այլ գրավի պայմանագրով գրավի առարկա հանդիսացող գույքը:

6. Եթե գրավի առարկա հանդիսացող գույքը, առանց հարկային պարտավորությունների կատարման, որևէ կերպ իրացվի կամ հանձնվի երրորդ անձի տնօրինմանը, տիրապետմանը կամ օգտագործմանը, ապա գրավի իրավունքը շարունակում է տարածվել գրավադրված գույքի նկատմամբ:

7. Գրավադրված գույքի նկատմամբ ցանկացած գործարքի իրականացումը, անկախ դրա իրականացման նպատակներից, կարող է իրականացվել միայն հարկային մարմնի համաձայնությամբ:

8. Գույքի գրավադրման դեպքում գրավի առարկան կարող է մնալ գրավատուի մոտ կամ գրավատուի միջոցների հաշվին փոխանցվել հարկային մարմնին, որը պարտավոր է ապահովել գրավադրված գույքի պահպանությունը:

9. Գույքի գրավի պայմանագիրը կարող է կնքվել, եթե գրավի առարկայի շուկայական արժեքը գերազանցում է հարկային պարտավորության ապահովման անհրաժեշտ չափն ավելի քան 20 տոկոսով:

10. Հարկային մարմինը գույքի գրավի պայմանագիր կնքելու մասին գրավի առարկայի սեփականատիրոջ առաջարկն ուսումնասիրում է առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

11. Հարկային մարմինը մերժում է գույքի գրավի պայմանագրի կնքումը, եթե՝

1) ներկայացված գույքի գրավի պայմանագիրը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Օրենսգրքով սահմանված չափանիշներին.

2) գրավի առարկայի շուկայական արժեքը ցածր է վճարման ենթակա հարկային պարտավորության գումարի 120 տոկոսից.

3) գրավի պայմանագրի ժամկետը կամ գրավի առարկայի պիտանիության ժամկետը կարճ է գրավի պայմանագրի ժամանակացույցով սահմանված՝ հարկային պարտավորության կատարման վերջնաժամկետից.

4) հարկային մարմինը տեղեկություններ ունի հարկային պարտավորություններ ունեցող հարկ վճարողի կամ գրավատուի ստանձնած պարտավորությունների կատարումից դիտավորությամբ խուսափելու փորձերի վերաբերյալ:

12. Հարկային մարմինը գույքի գրավի պայմանագիր կնքելը մերժելու դեպքում սույն հոդվածի 10-րդ մասով սահմանված ժամկետում տեղեկացնում է դիմողին՝ նշելով մերժման հիմքերը:

12.1. Հարկ վճարողի կողմից պարտավորությունների աստիճանական մարման ժամանակացույցով սահմանված ժամկետում գրավով ապահովված հարկային պարտավորությունների կատարման առաջին իսկ խախտման դեպքում հարկային մարմինը խախտման օրվանից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, հարկ վճարողին և գրավատուին ներկայացնում է գրավոր պահանջ՝ գրավով ապահովված հարկային պարտավորությունների կատարման համար:

12.2. Հարկ վճարողի կողմից գրավով ապահովված՝ չկատարված հարկային պարտավորությունները ենթակա են կատարման այդպիսի պահանջը հարկային մարմնից ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

13. Հարկ վճարողի կողմից սույն հոդվածի 12.2-րդ մասում նշված ժամկետում իր պարտավորությունների չկատարման կամ մասնակի կատարման դեպքում հարկային մարմնի այդ պահանջը սահմանող փաստաթուղթը համարվում է անբողոքարկելի վարչական ակտ, որից հետո հարկային մարմինը գրավի պայմանագիր կնքած անձի նկատմամբ կարող է կիրառել անբողոքարկելի վարչական ակտերի համար Օրենսգրքով նախատեսված հարկային պարտավորությունների հարկադիր կատարման ընթացակարգերը:

14. Գույքի գրավի պայմանագրի կնքման և գրավադրված գույքի վրա բռնագանձում տարածելու հետ կապված ծախսերը կրում է հարկ վճարողը:

(437-րդ հոդվածը փոփ., լրաց., խմբ. 21.06.18 ՀՕ-338-Ն)

Հոդված 438. Երաշխիքը

1. Հարկային պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով հարկային մարմինն ընդունում է երաշխիքներ, որոնք տրամադրում են բանկերը, վարկային կազմակերպությունները կամ ապահովագրական ընկերությունները (այսուհետ՝ երաշխիք տված անձ):

2. Երաշխիք տված անձը երաշխիքով հարկային մարմնի առջև պարտավորվում է կատարել հարկ վճարողի հարկային պարտավորությունները, եթե վերջինս Օրենսգրքով սահմանված կարգով և երաշխիքով սահմանված ժամկետում չի կատարել իր հարկային պարտավորությունները՝ հարկային մարմնի կողմից երաշխիք տված անձին այդպիսի գրավոր պահանջ ներկայացնելու դեպքում: Երաշխիքի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ և Օրենսգրքով:

3. Երաշխիքով հարկային պարտավորությունների կատարման ժամկետը կարող է սահմանվել մինչև ինն ամիս

ժամկետով, որը չի կարող գերազանցել երաշխիք տված անձի լիցենզիայի գործողության ժամկետի ավարտին նախորդող 6-րդ ամսվա 1-ը:

4. Երաշխիքը չի կարող հետ կանչվել երաշխիք տված անձի կողմից:

5. Երաշխիքը հարկային մարմին է ներկայացվում երկու օրինակից, որում պետք է նշվեն՝

1) հարկ վճարողի հարկային պարտավորությունները և դրա մարման ժամկետը, որոնց պատշաճ կատարումն ապահովվում է երաշխիքով.

2) երաշխիքով ապահովված հարկային պարտավորությունները չկատարվելու դեպքում՝ հարկային մարմնի կողմից երաշխիք տված անձից հարկային պարտավորությունների կատարում պահանջելու անվիճելի իրավունքը.

3) երաշխիքով ապահովված հարկային պարտավորությունների կատարման համար երաշխիք տված անձի մոտ դրամական միջոցների առկայության փաստը.

4) երաշխիքի գործողության ժամկետը.

5) երաշխիք տված անձի լիցենզիայի համարը և գործողության ժամկետը:

6. Երաշխիքի ձևը և լրացման կարգը սահմանում է հարկային մարմինը:

7. Հարկային մարմինը երաշխիքն ընդունելու կամ մերժելու նպատակով այն ուսումնասիրում է ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

8. Երաշխիքի ընդունումը մերժվում է, եթե՝

1) երաշխիքը չի համապատասխանում օրենքով և սույն հոդվածի 3-5-րդ մասերով սահմանված չափանիշներին.

2) երաշխիքի գործողության ժամկետը պակաս է երաշխիքով սահմանված հարկ վճարողի կողմից հարկային պարտավորությունների կատարման ժամկետից.

3) երաշխիքը տված անձի՝ օրենքով սահմանված գործունեությամբ զբաղվելու լիցենզիան կասեցված է կամ ուժը կորցրած է ճանաչված.

4) երաշխիք տված անձն ունի չմարված հարկային պարտավորություններ:

9. Երաշխիքի ընդունման կամ մերժման վերաբերյալ հարկային մարմինը համապատասխան գրառում է կատարում տրված երաշխիքի համապատասխան դաշտում և դրա մեկ օրինակը սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված ժամկետում ուղարկում է երաշխիքը տված անձին: Երաշխիքի ընդունումը մերժելու դեպքում հարկային մարմինը նշում է նաև մերժման համար հիմք համարվող պատճառները:

10. Հարկ վճարողի կողմից երաշխիքով սահմանված ժամկետում երաշխիքով ապահովված հարկային պարտավորությունների չկատարման կամ մասնակի կատարման դեպքում հարկային մարմինը երաշխիքով սահմանված հարկային պարտավորությունների կատարման վերջնաժամկետի ավարտից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, երաշխիք տված անձին ներկայացնում է գրավոր պահանջ՝ երաշխիքով ապահովված հարկային պարտավորությունների կատարման համար:

11. Երաշխիք տված անձի կողմից երաշխիքով ապահովված՝ պարտապան հարկ վճարողի կողմից չկատարված հարկային պարտավորությունները ենթակա են կատարման այդպիսի պահանջը հարկային մարմնից ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

12. Երաշխիք տված անձի կողմից սույն հոդվածի 11-րդ մասում նշված ժամկետում իր պարտավորությունների չկատարման կամ մասնակի կատարման դեպքում հարկային մարմնի այդ պահանջը համարվում է անբողոքարկելի վարչական ակտ, որից հետո հարկային մարմինը երաշխիք տված անձի նկատմամբ կարող է կիրառել անբողոքարկելի վարչական ակտերի համար Օրենսգրքով նախատեսված հարկային պարտավորությունների հարկադիր կատարման ընթացակարգերը:

Հոդված 439. Հարկ վճարողի կողմից պահանջի իրավունքի զիջումը

1. Հարկ վճարողի հարկային պարտավորությունների գանձման նպատակով հարկային մարմինն իրավունք ունի հարկ վճարողի պարտապանի (դեբիտորի) նկատմամբ հարկ վճարողի պահանջի իրավունքի զիջման պայմանագրի հիման վրա ձեռք բերելու հարկ վճարողի պահանջի իրավունքը և ստացված գումարներն ուղղելու հարկ վճարողի հարկային պարտավորությունների մարմանը: Ընդ որում, հարկային մարմնին է անցնում հարկ վճարողի պահանջի իրավունքն ամբողջ ծավալով, ներառյալ՝ պարտքի նկատմամբ հաշվարկվող տոկոսների իրավունքը:

2. Հարկ վճարողի հետ պահանջի իրավունքի զիջման պայմանագրի կնքումը հարկ վճարողին չի ազատում հարկային պարտավորությունների կատարումից և դրանք ուշացնելու համար Օրենսգրքով սահմանված կարգով տույժերի հաշվարկումից ու վճարումից:

3. Հարկային մարմինը հարկ վճարողի հետ պահանջի իրավունքի զիջման պայմանագիր կնքելու առաջարկն ստանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ուսումնասիրում է հարկ վճարողի պահանջի իրավաչափությունն ու հիմնավորվածությունը, ինչպես նաև պարտապանի վճարունակությունը՝ դրա մասին գրավոր կարգով տեղեկացնելով պարտապանին: Հարկ վճարող պարտատիրոջ իրավունքները հարկային մարմնին անցնելու համար պարտապանի համաձայնությունը չի պահանջվում:

4. Հարկ վճարողի պահանջի իրավունքի զիջման պայմանագիր կնքելու առաջարկն ընդունվելու դեպքում հարկային մարմինը սույն հոդվածի 3-րդ մասում նշված ժամկետում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական

օրենսդրությամբ սահմանված կարգով հարկ վճարողի հետ կնքում է պահանջի իրավունքի զիջման պայմանագիր, որում նշվում են, մասնավորապես, հարկ վճարողի և հարկային մարմնի իրավունքներն ու պարտականությունները, հարկ վճարողի պարտապանի նույնականացման տվյալները, պահանջի մեծությունը, հաշվարկման կարգը և դրա հիմնավորվածությունը հաստատող հանգամանքները, ինչպես նաև հարկ վճարողի առկա հարկային պարտավորությունների չափերն ու դրանց հաշվարկման կարգը՝ ըստ հարկերի և պարտավորությունների տեսակների: Հարկ վճարողի՝ պայմանագիր կնքելու առաջարկը մերժելու դեպքում հարկային մարմինը սույն հոդվածի 3-րդ մասում նշված ժամկետում հարկ վճարողին գրավոր տեղեկացնում է մերժման պատճառների մասին:

5. Հարկային մարմինը հարկ վճարողի հետ պահանջի իրավունքի զիջման պայմանագիր կնքելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, հարկ վճարողի պարտապանին տեղեկացնում և պահանջում է տասը աշխատանքային օրվա ընթացքում, պարտատիրոջ հանդեպ իր պարտավորության սահմաններում, Օրենսգրքով սահմանված կարգով վճարել հարկ վճարողի հարկային պարտավորությունը: Հարկ վճարողի պարտապանի կողմից սույն մասում նշված ժամկետում հարկ վճարողի նկատմամբ իր պարտավորությունը կամ հարկ վճարողի հարկային պարտավորությունը չկատարելու դեպքում հարկային մարմնի պահանջը համարվում է անբողոքարկելի վարչական ակտ, որից հետո հարկային մարմինը պարտապանի նկատմամբ կարող է կիրառել Օրենսգրքով սահմանված գույքի արգելանքի, ինչպես նաև անբողոքարկելի վարչական ակտերի համար նախատեսված՝ հարկային պարտավորությունների հարկադիր կատարման այլ միջոցները:

Բ Ա Ժ Ի Ն 20

ՀԱՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

Գ Լ Ո Ւ Խ 80

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հոդված 440. Հարկ վճարողի բողոքարկման իրավունքը

1. Հարկային մարմնի ընդունած անհատական իրավական ակտը, ինչպես նաև հարկային ծառայողի գործողությունները կամ անգործությունը կարող են բողոքարկվել հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողով՝ Օրենսգրքով սահմանված կարգով կամ դատարան:

2. Հարկային մարմնի ընդունած անհատական իրավական ակտի, հարկային ծառայողի գործողությունների կամ անգործության բողոքարկման նպատակով հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողով ներկայացված բողոքի ցանկացած փուլում հարկ վճարողը կարող է դիմել դատարան:

3. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան հարկային ստուգումը նշանակելու մասին հետաքննության մարմնի կամ քննիչի որոշումը բողոքարկվում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով, իսկ նշված ստուգման ընթացքում ստուգող անձի գործողությունները և ստուգման արդյունքում կազմված ակտը՝ Օրենսգրքով սահմանված կարգով:

4. Հարկային մարմնի պաշտոնատար անձանց այն գործողությունների բողոքարկումը, որոնք կապված են վարչական պատասխանատվության կիրառման հետ, կատարվում է վարչական իրավախախտումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 441. Հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովը և բողոք ներկայացնելու կարգը

1. Հարկային մարմնի ընդունած անհատական իրավական ակտերի, հարկային ծառայողի գործողությունների կամ անգործության վերաբերյալ վեճերի լուծման նպատակով հարկային մարմնում գործում է հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողով: Հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովը կազմված է նախագահից և ութ անդամից, որոնք հանձնաժողովում իրենց աշխատանքը համատեղում են իրենց զբաղեցրած հարկային ծառայության պաշտոնների հետ:

2. Հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովը ներկայացված բողոքը վարույթ է ընդունում հարկ վճարողի կողմից գրավոր կարգով և հայերեն լեզվով ներկայացված դիմում-բողոքի հիման վրա, որը պետք է պարունակի՝

1) հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովի անվանումը, որին ներկայացվում է բողոքը.

2) բողոք բերող ֆիզիկական անձի անունը, ազգանունը, ՀՎՀՀ-ն (վերջինիս բացակայության դեպքում նշվում է հանրային ծառայության համարանիշը), հասցեն, իսկ կազմակերպության դեպքում՝ կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ՀՎՀՀ-ն, իսկ ԱԱՀ վճարողների դեպքում՝ նաև ԱԱՀ վճարողի հաշվառման համարը, նրա անունից բողոք բերող անձի անունը, ազգանունը և պաշտոնը, ինչպես նաև հեռահաղորդակցման միջոցների տվյալները.

3) բողոքարկման առարկան.

4) բողոք բերողի պահանջը.

5) բողոքին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը.

6) բողոքը կազմելու տարին, ամիսը և ամսաթիվը.

7) բողոք բերող անձի ստորագրությունը, կազմակերպության դեպքում՝ նրա անունից բողոք բերող անձի ստորագրությունը:

3. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված՝ ոչ լիարժեք ներկայացված դիմում-բողոքի դեպքում հարկային մարմինը դիմում-բողոքը ներկայացնող հարկ վճարողին գրավոր տեղեկացնում է դիմում-բողոքում առկա թերությունների մասին և առաջարկում է վերացնել դրանք՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում: Նշված ժամկետում թերությունները վերացնելու և բողոքարկման հանձնաժողովին տեղեկացնելու դեպքում դիմում-բողոքը համարվում է ընդունված այն առաջին անգամ ներկայացնելու օրվանից: Հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովը քննության է առնում նաև թերություններով ներկայացված դիմում-բողոքը, եթե այդ թերությունները չեն խոչընդոտում բողոքի հետագա քննությանը:

4. Հարկային մարմնի ընդունած և ուժի մեջ մտած անհատական իրավական ակտը կարող է բողոքարկվել այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում, իսկ հարկային ծառայողի գործողությունները կամ անգործությունը կարող են բողոքարկվել այն կատարելու կամ ցուցաբերելու օրվանից մեկ ամսվա ընթացքում:

5. Հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովի աշխատակարգը, անհատական կազմը (հաշվի առնելով շահերի բախման սկզբունքի հնարավորինս պահպանությունը), բողոքարկման հանձնաժողովին ներկայացվող դիմում-բողոքի ձևը և դիմում-բողոք բերած անձին հանձնաժողովի նիստի անցկացման վայրի ու ժամանակի մասին ուղարկվող ծանուցագրի ձևը, ինչպես նաև հանձնաժողովի կողմից ընդունվող որոշումների ձևերը սահմանում է հարկային մարմինը:

(441-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Հոդված 442. Հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողով ներկայացվող դիմում-բողոքի քննությունը

1. Հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողով ներկայացված դիմում-բողոքները հարկային մարմինը քննության է առնում և դրանց վերաբերյալ որոշումներ է ընդունում 30 օրվա ընթացքում: Սույն մասով սահմանված ժամկետի հաշվարկը սկսվում է գրավոր դիմում-բողոքը համապատասխան մարմնում մուտքագրվելու օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվանից: Առանձին դեպքերում հարկային մարմնի ղեկավարի որոշմամբ նշված ժամկետը կարող է երկարաձգվել 15 օրով, որի մասին իրազեկվում է դիմումատուն: Նշված ժամկետում դիմում-բողոքի վերաբերյալ պատասխան չտրվելու դեպքում դիմում-բողոքը բավարարելու մասին հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովի որոշումը համարվում է ընդունված:

2. Հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովն ընդունում է հարկ վճարողի դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճելու մասին համապատասխան գրավոր որոշում, եթե՝

1) հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովին ներկայացվող դիմում-բողոքը չի բավարարում Օրենսգրքով սահմանված չափանիշներին, բացառությամբ այն դեպքերի, եթե այդ հանգամանքը չի խոչընդոտում դիմում-բողոքի հետագա քննությանը.

2) հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովին ներկայացվող դիմում-բողոքում հստակ նշված չէ բողոք բերողի պահանջը.

3) հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովին ներկայացվող դիմում-բողոքին կցված չէ բողոքարկվող փաստաթղթերի ցանկը.

4) դիմում-բողոքը բերել է դիմում-բողոք բերելու իրավասություն չունեցող անձը.

5) դիմում-բողոքը չի համապատասխանում ընթացակարգային պահանջներին, և դիմում-բողոքում առկա թերությունները բողոքը ներկայացնող հարկ վճարողը չի վերացրել Օրենսգրքի 441-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետում.

6) դիմում-բողոք բերող հարկ վճարողը հրաժարվում է բողոքից.

7) դիմում-բողոքում նշված պահանջը դուրս է հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովի իրավասություններից.

8) բացակայում է հարկային մարմնի կողմից բողոքարկվող անհատական իրավական ակտի, գործողության կամ անգործության դեպքը.

9) դիմում-բողոքը ներկայացվել է Օրենսգրքի 441-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետի ավարտից հետո.

10) դիմում-բողոք բերած նույն անձի, բողոքարկման նույն առարկայի մասին, միևնույն հիմքերով բողոքի վերաբերյալ առկա է հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովի որոշում, բացառությամբ սույն մասի 1-5-րդ կետերով նախատեսված դեպքերում դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճելու մասին որոշումների, որոնց կարճման հիմքերը վերացնելուց հետո՝ Օրենսգրքի 441-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետում ներկայացված դիմում-բողոքները ենթակա են քննարկման.

11) դիմում-բողոքը ներկայացնող հարկ վճարողը նույն պահանջով դիմել է դատարան.

12) դիմում-բողոք բերած կազմակերպության լուծարման կամ ֆիզիկական անձի մահվան դեպքում:

3. Հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովը հարկ վճարողի դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճելու մասին որոշումն ընդունում է երկու օրինակից, որի մեկ օրինակը որոշումն ընդունելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, տրամադրվում է դիմում-բողոք բերած անձին, իսկ երկրորդ օրինակը պահպանվում է հարկային մարմնում:

4. Հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողով ներկայացված դիմում-բողոքը հանձնաժողովի կողմից քննարկման ընդունելու դեպքում դիմում-բողոք բերած անձը նախապես ծանուցվում է համապատասխան նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին: Բողոքարկման հանձնաժողովի նիստին կարող են մասնակցել դիմում-բողոք բերած անձը, վերջինիս գլխավոր հաշվապահը և (կամ) դիմում-բողոք բերած անձի լիազորած անձը (մասնագետը): Բողոքարկման հանձնաժողովի նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին տեղեկացված՝ դիմում-բողոքը բերած անձի կամ նրա ներկայացուցիչների բացակայությունն արգելք չէ բողոքարկման հանձնաժողովի նիստը շարունակելու և վեճն ըստ էության լուծելու համար:

5. Հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովի նիստերն արձանագրվում են, և կազմված արձանագրությունները ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա բոլոր անդամները: Հանձնաժողովի անդամների ստորագրած արձանագրությունները պահպանվում են հարկային մարմնում այն կազմելու տարվան հաջորդող երեք տարվա ընթացքում՝ հարկային մարմնի սահմանած կարգով:

Հոդված 443. Հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովի որոշումը

1. Հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովն ընդունված դիմում-բողոքի վերաբերյալ կայացնում է պատճառաբանված որոշում՝

1) դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճելու մասին.

2) դիմում-բողոքը բավարարելու մասին.

3) դիմում-բողոքը մասնակի բավարարելու մասին.

4) դիմում-բողոքը մերժելու մասին.

5) վերստուգում անցկացնելու մասին:

2. Հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովի որոշումներն իրավազոր են, եթե այդ որոշումների կայացմանը մասնակցել է հանձնաժողովի անդամներից առնվազն վեց հոգի: Որոշումները կայացվում են բաց քվեարկությամբ, պարզ մեծամասնության ձևով:

3. Հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովի կայացրած որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից: Ընդունված որոշումը կազմվում է երկու օրինակից, որի մեկ օրինակը որոշումը կայացնելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, տրամադրվում է դիմում-բողոք բերած անձին, իսկ երկրորդ օրինակը ուղարկվում է դիմում-բողոք բերած անձի հաշվառման վայրի հարկային մարմին՝ հարկ վճարողի հարկային գործում ընդհանուր սահմանված կարգով պահպանելու նպատակով:

4. Հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովի որոշումները կարող են բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով՝ «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով կամ դատարան:

(443-րդ հոդվածը փոփ. 21.06.18 ՀՕ-338-Ն)

Մ Ա Ս 4

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՄԱՍ

Բ Ա Ժ Ի Ն 21

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Գ Լ Ո Ւ Խ 81

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 444. Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը

1. Օրենսգիրքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ Օրենսգրքի՝ սույն հոդվածի 2-13-րդ մասերով սահմանված դրույթների, որոնք ուժի մեջ են մտնում նույն մասերով սահմանված ժամկետներում:

2. Օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 37-րդ կետը ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից և տարածվում է այդ պահից հետո կատարվող ներմուծումների վրա:

3. Օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 47-րդ կետի «զ» ենթակետը՝ ածանցյալ ֆինանսական գործիքների մասով, 109-րդ հոդվածի 4-րդ մասի 15-րդ կետը և 123-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը ուժի մեջ են մտնում 2017 թվականի հունվարի 1-ից և տարածվում են այդ պահից հետո կնքվող ածանցյալ ֆինանսական գործիքների վրա:

4. Օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 105-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և 125-րդ հոդվածի 2-րդ մասը՝ «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա ստեղծված արժեթղթավորման հիմնադրամի մասով, ուժի մեջ են մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:

5. Օրենսգրքի 109-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետը և Օրենսգրքի 132-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետը՝ ոչ ռեզիդենտ կազմակերպությունների ստացած շահաբաժինների մասով, ուժի մեջ են մտնում 2017 թվականի հունվարի 1-ից և տարածվում են 2017 թվականի հունվարի 1-ից հետո ընկած ժամանակահատվածներին վերագրվող շահաբաժինների վրա:

6. Օրենսգրքի 135-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ շահութահարկի կանխավճարների կատարման այլընտրանքային եղանակին վերաբերող դրույթներն ուժի մեջ են մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:

7. Օրենսգրքի 150-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված՝ օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց ստացած շահաբաժինների՝ եկամտային հարկով հարկմանը վերաբերող դրույթն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից և տարածվում է 2017 թվականի հունվարի 1-ից հետո ընկած ժամանակահատվածներին վերագրվող (այդ ժամանակահատվածների գործունեության արդյունքում ստացվող) շահույթներից՝ որպես շահույթի բաշխում, մասնակցի ստացած շահաբաժինների վրա՝ անկախ «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներից, իսկ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ստացած շահաբաժինների՝ եկամտային հարկով հարկմանը վերաբերող դրույթը տարածվում է 2018 թվականի հունվարի 1-ից հետո ընկած ժամանակահատվածներին վերագրվող (այդ ժամանակահատվածների գործունեության արդյունքում ստացվող) շահույթներից՝ որպես շահույթի բաշխում, մասնակցի ստացած շահաբաժինների վրա:

8. Օրենսգրքի 159-րդ հոդվածի 4-րդ մասն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:

9. Օրենսգրքի 11-րդ (բացառությամբ Օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասի) և 12-րդ բաժիններն ուժի մեջ են մտնում 2021 թվականի հունվարի 1-ից: Օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ անշարժ գույքի հարկի հաշվարկման նպատակով անշարժ գույքի կադաստր վարող մարմնի կողմից՝ ըստ անշարժ գույքի սեփականատերերի՝ Օրենսգրքի 227-րդ հոդվածով սահմանված անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի (ըստ հողամասերի և (կամ) դրանց համապատասխան բարելավումների) ու դրանց համապատասխան կադաստրային արժեքների ու հաշվարկային զուտ եկամուտների վերաբերյալ տեղեկությունները հարկ վճարողներին հաշվառող մարմիններ ներկայացնելուն վերաբերող դրույթն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:

10. Օրենսգրքի 65-րդ գլուխն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից:

11. Օրենսգրքի 348-րդ հոդվածի 10-րդ մասն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից: 2017 թվականի ընթացքում ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարը Կառավարության սահմանած պարզեցված ընթացակարգով և ժամկետներում վերադարձվում է հարկ վճարողին:

11.1 Օրենսգրքի 73-րդ գլուխն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

12. Օրենսգրքի 393-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ ակցիզային դրոշմանիշերը և (կամ) դրոշմապիտակները էլեկտրոնային եղանակով ներկայացվող հայտի հիման վրա տրամադրելու դրույթը ուժի մեջ է մտնում 2017 թվականի հուլիսի 1-ից:

13. Օրենսգրքի 396-րդ հոդվածի 1-ին մասն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից, և դրանով սահմանված ժամկետը տարածվում է այդ ամսաթվից հետո ստացվող ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների վրա:

14. Սահմանել, որ 2017 թվականի հունվարի 1-ից «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի 19-րդ հոդվածի 14-րդ կետի 14.1-ին և 14.4-րդ ենթակետերով սահմանված գործունեության տեսակների համար պետական տուրքի դրույքաչափը կազմում է բազային տուրքի 500000-ապատիկի չափով:

(444-րդ հոդվածը փոփ., խմբ. 21.12.17 ՀՕ-266-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն, փոփ., լրաց. 21.06.18 ՀՕ-338-Ն, խմբ. 25.06.19 ՀՕ-68-Ն)

Հոդված 445. Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու կապակցությամբ Հայաստանի Հանրապետության որոշ օրենքների ուժը կորցրած ճանաչելը

1. Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած են ճանաչվում՝

1) «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-107 օրենքը, բացառությամբ «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի, որն ուժը կորցրած է ճանաչվում 2017 թվականի հունվարի 1-ից.

2) «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի մայիսի 14-ի ՀՕ-118 օրենքը, բացառությամբ այդ օրենքի 6-րդ հոդվածի վերջին պարբերության և 26-րդ հոդվածի 4-րդ կետի, որոնք գործում են մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ.

3) «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության 2000 թվականի հուլիսի 7-ի ՀՕ-79 օրենքը, բացառությամբ՝

ա. «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի աղյուսակի՝ ԱՏԳԱԱ 2208, 2208 30, 2208 40, 2402 20 90011, 2402 20 10011, 2402 90 00013, 2402 20 90012, 2402 20 10012 և 2402 90 00014 ծածկագրերին վերաբերող ակցիզային հարկի դրույքաչափերի, որոնք ուժը կորցրած են ճանաչվում 2017 թվականի հունվարի 1-ից: ԱՏԳԱԱ 2208 ծածկագրին (բացառությամբ ԱՏԳԱԱ 2208 90 330 0, 2208 90 380 0, 2208 90 480 0, 2208 20, 2208 30, 2208 40) դասվող ապրանքների համար ակցիզային հարկի դրույքաչափը 2017 թվականի հունվարի 1-ից սահմանվում է 63 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 630 դրամ, ԱՏԳԱԱ 2208 30, 2208 40 ծածկագրերին դասվող ապրանքների համար ակցիզային հարկի դրույքաչափը 2017 թվականի հունվարի 1-ից սահմանվում է 57 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 3450 դրամ, ԱՏԳԱԱ 2208 90 330 0, 2208 90 380 0, 2208 90 480 0 ծածկագրերին դասվող ապրանքների համար ակցիզային հարկի դրույքաչափը 2017 թվականի հունվարի 1-ից սահմանվում է 55 տոկոս, բայց ոչ պակաս 1 լիտրի համար 550 դրամ, ԱՏԳԱԱ 2402 20 90011, 2402 20 10011, 2402 90 00013, 2402 20 90012, 2402 20 10012 և 2402 90 00014 ծածկագրերին դասվող ապրանքների համար ակցիզային հարկի դրույքաչափը 2017 թվականի հունվարի 1-ից սահմանվում է 15 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1000 հատի համար 6325 դրամ, իսկ ԱՏԳԱԱ 2208 20 ծածկագրին դասվող ապրանքների համար ակցիզային հարկի դրույքաչափը 2017 թվականի հունվարի 1-ից սահմանվում է մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը գործող՝ «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված չափով,

բ. «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասի, որը գործում է մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ.

4) «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի սեպտեմբերի 30-ի ՀՕ-155 օրենքը, բացառությամբ այդ օրենքի 8-րդ և 11-րդ հոդվածների նախավերջին պարբերություններով «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հավաստագրված ռեզիդենտներին վերաբերող դրույթների, որոնք գործում են հավաստագրի տրամադրման օրվանից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը.

5) «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-246-Ն օրենքը, բացառությամբ այդ օրենքի 10-րդ հոդվածի 1.1-ին մասով «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հավաստագրված հարկային գործակալներին վերաբերող դրույթների, որոնք գործում են հավաստագրի տրամադրման օրվանից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը, ինչպես նաև բացառությամբ սույն օրենքի 8.2-րդ հոդվածով նախատեսված դրույթների, որոնք շարունակում են գործել 2014 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում ստացված հիպոտեկային վարկերի մասով.

6) «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի դեկտեմբերի 28-ի ՀՕ-270 օրենքը.

7) «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի դեկտեմբերի 20-ի ՀՕ-245-Ն օրենքը, բացառությամբ այդ օրենքի 3-րդ հոդվածի «բ» կետի, որը գործում է մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ.

8) «Ճանապարհային վճարի մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մարտի 3-ի ՀՕ-203 օրենքը.

9) ***(կետն ուժը կորցրել է 25.06.19 ՀՕ-68-Ն)***

10) ***(կետն ուժը կորցրել է 25.06.19 ՀՕ-68-Ն)***

11) «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության 2012 թվականի դեկտեմբերի 19-ի ՀՕ-236-Ն օրենքը.

12) «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-209-Ն օրենքը.

13) «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 7-ի ՀՕ-236 օրենքը.

14) «Կազմակերպություններին և ֆիզիկական անձանց հարկային հաշվառման վերցնելու և հարկային հաշվառումից հանելու մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի հոկտեմբերի 11-ի ՀՕ-215-Ն օրենքը.

15) «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 22-ի ՀՕ-129-Ն օրենքը.

16) «Հսկիչ-դրամարկղային մեքենաներ կիրառողների գործունեության կասեցման մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի նոյեմբերի 28-ի ՀՕ-220-Ն օրենքը.

17) «Դրամարկղային գործառնությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-501-Ն օրենքը:

(445-րդ հոդվածը փոփ. 21.12.17 ՀՕ-266-Ն, 23.04.19 ՀՕ-23-Ն, 25.06.19 ՀՕ-68-Ն)

(25.06.19 ՀՕ-68-Ն օրենքի 71-րդ հոդվածի համաձայն 25.06.19 ՀՕ-68-Ն օրենքի 68-րդ հոդվածի փոփոխությունները ուժի մեջ են մտնում 25.06.19 ՀՕ-68-Ն օրենքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և կիրառվում են 2019 թվականի հունվարի 1-ից ծագած (ծագող) հարաբերությունների նկատմամբ և գործում են մինչև 2021 թվականի հունվարի 1-ը)

Բ Ա Ժ Ի Ն 22

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Գ Լ Ո Ւ Խ 82

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 446. Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու կապակցությամբ հարկային հարաբերություններ կարգավորող՝ Հայաստանի Հանրապետության որոշ օրենքների գործողության շարունակությունը

1. Օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո իրենց գործողությունը շարունակում են հարկային հարաբերություններ կարգավորող (այդ թվում՝ հարկային արտոնություններ և (կամ) հարկման մեխանիզմներ սահմանող)՝ Օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասում չնշված օրենքները՝ այնքան ժամանակ, քանի դեռ դրանք ուժը կորցրած չեն ճանաչվել, կամ քանի դեռ չեն լրացել այդ օրենքների գործողության ժամկետները:

(446-րդ հոդվածը լրաց. 21.12.17 ՀՕ-266-Ն)

Հոդված 447. Անցումային հարկային հարաբերությունների ընդհանուր կարգավորումը

1. Մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը ավարտված հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող հարկային պարտավորությունները 2018 թվականի հունվարի 1-ից հետո դադարած չեն համարվում և ենթակա են կատարման մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը գործող օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով և ժամկետներում:

2. Մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը ավարտված հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող՝ բնապահպանական վճարի, բնօգտագործման վճարի, ճանապարհային վճարի և հաստատագրված վճարի պարտավորությունները 2018 թվականի հունվարի 1-ից հետո դադարած չեն համարվում և ենթակա են կատարման մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը բնապահպանական վճարի, բնօգտագործման վճարի, ճանապարհային վճարի և հաստատագրված վճարի հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:

3. 2017 թվականի դեկտեմբերի 31-ով ավարտվող հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող հարկային հաշվարկները Օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո ներկայացվում են մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը գործող օրենսդրությամբ սահմանված վերջնաժամկետներում:

4. 2017 թվականի դեկտեմբերի 31-ով ավարտվող հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող հարկային հաշվարկները, մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը գործող օրենսդրությամբ սահմանված լինելու դեպքերում, կարող են ներկայացվել նաև թղթային եղանակով:

5. Օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո հայտնաբերված՝ մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը կատարված հարկային օրենսդրության խախտումների համար կիրառվում են մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը սահմանված պատասխանատվության միջոցները, բացառությամբ Օրենսգրքի 401-րդ հոդվածով սահմանված տույժերի, որոնք կիրառվում են սույն հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով սահմանված կարգով:

6. Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը տույժը վճարում է 0.075 տոկոսի չափով, այդ թվում՝ նաև այն դեպքում, եթե տույժերի հաշվարկը սկսվել է մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը:

7. Մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը սկսված և Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ դեռևս չավարտված տույժերի հաշվարկը Օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո շարունակվում է մինչև հաշվարկի 365-րդ օրը լրանալը:

8. Օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո, քանի դեռ Օրենսգրքով սահմանված դեպքերում հարկային արտոնությունների կիրառության շրջանակները սահմանված չեն համապատասխան իրավական ակտերով, հարկային արտոնությունների կիրառության շրջանակները որոշվում են մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը գործող համապատասխան իրավական ակտերի համաձայն:

Հոդված 448. Օրենսգրքի ընդհանուր մասին վերաբերող անցումային հարկային հարաբերությունների կարգավորումը

1. Օրենսգրքի 51-րդ հոդվածով սահմանված՝ մահացած կամ դատարանի վճռով մահացած ճանաչված ֆիզիկական անձի չկատարված հարկային պարտավորությունները նրա ժառանգին (ժառանգներին) փոխանցելու դրույթները տարածվում են 2018 թվականի հունվարի 1-ից հետո մահացած կամ դատարանի վճռով մահացած ճանաչված ֆիզիկական անձանց՝ 2018 թվականի հունվարի 1-ից հետո առաջացած պարտավորությունների վրա:

Հոդված 449. Օրենսգրքի 4-րդ բաժնին վերաբերող անցումային հարկային հարաբերությունների կարգավորումը

1. Օրենսգրքի 74-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերությամբ սահմանված՝ յուրաքանչյուր հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ ԱԱՀ վճարողի՝ ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարն ԱԱՀ վճարողի գրավոր դիմումի հիման վրա ԱԱՀ վճարողի միասնական գանձապետական հարկային հաշվին մուտքագրվելու դրույթը վերաբերում է Օրենսգիրքն ուժի մեջ մտնելուն հաջորդող հաշվետու ժամանակաշրջանների համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկներով առաջացող փոխհատուցվող գումարներին:

2. ***(մասն ուժը կորցրել է 21.12.17 ՀՕ-266-Ն)***

3. 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ հարկ վճարողների մոտ հարկային հաշիվներում առանձնացված և չհաշվանցված ԱԱՀ-ի գումարները ենթակա են հաշվանցման մինչև 2018 թվականի հունվարի 1-ը գործող կարգով:

(449-րդ հոդվածը փոփ., լրաց. 21.12.17 ՀՕ-266-Ն, փոփ. 25.06.19 ՀՕ-68-Ն)

(449-րդ հոդվածի 1-ին մասը 25.06.19 ՀՕ-68-Ն օրենքի 71-րդ հոդվածի համաձայն վերաբերում է 2019 թվականի հուլիսի 1-ից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկներով առաջացող փոխհատուցվող գումարներին:)

Հոդված 450. Օրենսգրքի 5-րդ բաժնին վերաբերող անցումային հարկային հարաբերությունների կարգավորումը

1. Օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելն ընկած յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար ակցիզային հարկի՝ մեկից ավելի ճշտված հաշվարկ ներկայացնելու դեպքում «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված տուգանքը չի կիրառվում:

2. 2017 թվականի 4-րդ եռամսյակի համար ակցիզային հարկի ամսական վճարումների վերջնաժամկետը սահմանվում է 2018 թվականի հունվարի 20-ը ներառյալ, իսկ դեբետային գումարները հաշվառվում են հարկային հաշվարկի ներկայացման ամսաթվով:

3. Մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ներմուծված և 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ հարկ վճարողների մոտ առկա դիզելային վառելիքի ապրանքային մնացորդների մասով ներմուծման ժամանակ վճարված ակցիզային հարկը՝ յուրաքանչյուր տոննայի հաշվով 22000 դրամի չափով, համարվում է Օրենսգրքի 92-րդ հոդվածի իմաստով ակցիզային հարկի հաշվանցվող (պակասեցվող) գումար և ներառվում է 2018 թվականի հունվար ամսվա հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացվող ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի միասնական հաշվարկում՝ որպես Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված հումքի մասով հայտարարագրում առանձնացված ակցիզային հարկի գումար, և Օրենսգրքի 17-րդ բաժնով սահմանված կարգով իրականացվող ստուգման կամ ուսումնասիրության արդյունքներով հիմնավորվելու դեպքում մուտքագրվում է միասնական հաշիվ: Սույն մասի կիրառությունն ապահովելու նպատակով հարկ վճարողները պարտավոր են հաշվառել 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ դիզելային վառելիքի ապրանքային մնացորդները և դրանց վերաբերյալ տեղեկատվությունը՝ հարկային մարմնի հաստատած ձևին համապատասխան, ներկայացնել հարկային մարմին մինչև 2018 թվականի հունվարի 20-ը ներառյալ:

(450-րդ հոդվածը լրաց. 21.12.17 ՀՕ-266-Ն, փոփ. 25.06.19 ՀՕ-68-Ն)

Հոդված 451. Օրենսգրքի 6-րդ բաժնին վերաբերող անցումային հարկային հարաբերությունների կարգավորումը

1. 2017 թվականի ընթացքում շահութահարկի կանխավճարների կատարման այլընտրանքային եղանակով շահութահարկի կանխավճարները հաշվարկվում և կատարվում են մինչև 2017 թվականի համապատասխան եռամսյակների վերջին ամսվա 15-ը ներառյալ: Մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած եռամսյակների ԱԱՀ-ով հարկվող և ԱԱՀ-ով չհարկվող գործարքների հարկման բազան հաշվարկվում է՝ հիմք ընդունելով այդ եռամսյակների համար հարկային մարմին ներկայացված ԱԱՀ-ի եռամսյակային հաշվարկներում արտացոլված՝ ԱԱՀ-ով

հարկվող և ԱԱՀ-ով չհարկվող գործարքների հարկման բազաները (ամսական ԱԱՀ վճարող համարվողների դեպքում՝ այդ եռամսյակներում ներառված ամիսների համար հարկային մարմին ներկայացված ԱԱՀ-ի ամսական հաշվարկներում արտացոլված՝ ԱԱՀ-ով հարկվող և ԱԱՀ-ով չհարկվող գործարքների հարկման բազաների հանրագումարը):

2. Ռեզիդենտ շահութահարկ վճարողը և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողը Օրենսգրքի 135-րդ հոդվածով սահմանված կարգով շահութահարկի կանխավճարներն առաջին անգամ հաշվարկում և վճարում են 2018 թվականի համար: Մինչև 2017 թվականի շահութահարկի գումարի հաշվարկումը (մինչև 2017 թվականի համար շահութահարկի հաշվարկը հարկային մարմին ներկայացնելը) սույն մասում նշված հարկ վճարողները շահութահարկի կանխավճարները յուրաքանչյուր անգամ կատարում են 2017 թվականի վերջին կանխավճարի գումարից ոչ պակաս չափով, բացառությամբ Օրենսգրքի 135-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքերի: 2017 թվականի շահութահարկի գումարը հաշվարկելուց (շահութահարկի հաշվարկը հարկային մարմին ներկայացնելուց) հետո Օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով առաջին անգամ կանխավճարի կատարման ժամանակ կատարվում է մինչև շահութահարկի հաշվարկի ներկայացումը՝ 2018 թվականի ընթացքում, կատարված կանխավճարների գումարների ճշտում՝ հարկային տարվա սկզբից աճող հանրագումարով և Օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում նշված չափերով:

3. Անհատ ձեռնարկատերերը և նոտարները Օրենսգրքի 135-րդ հոդվածով սահմանված կարգով շահութահարկի կանխավճարներն առաջին անգամ հաշվարկում և վճարում են 2018 թվականի առաջին եռամսյակի համար՝ նախորդ հարկային տարվա գործունեության արդյունքներով հաշվարկված շահութահարկի գումարի փոխարեն հիմք ընդունելով 2017 թվականի հարկային տարվա գործունեության արդյունքներով հաշվարկված եկամտային հարկի գումարը: Մինչև 2017 թվականի եկամտային հարկի գումարի հաշվարկումը (մինչև 2017 թվականի համար տարեկան եկամուտների մասին հաշվարկը հարկային մարմին ներկայացնելը) սույն մասում նշված հարկ վճարողները շահութահարկի կանխավճարները յուրաքանչյուր անգամ կատարում են 2017 թվականի եկամտային հարկի վերջին կանխավճարի գումարից ոչ պակաս չափով, բացառությամբ Օրենսգրքի 135-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքերի: 2017 թվականի եկամտային հարկի գումարը հաշվարկելուց (տարեկան եկամուտների մասին հաշվարկը հարկային մարմին ներկայացնելուց) հետո Օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով առաջին անգամ կանխավճարի կատարման ժամանակ կատարվում է մինչև տարեկան եկամուտների մասին հաշվարկի ներկայացումը՝ 2018 թվականի ընթացքում, կատարված կանխավճարների գումարների ճշտում՝ հարկային տարվա սկզբից աճող հանրագումարով և Օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում նշված չափերով:

4. Մինչև 2014 թվականի հունվարի 1-ը ձեռք բերված (կառուցված, մշակված) հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումների գումարների հաշվարկման նպատակով՝

1) 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ հաշվեկշռային արժեքները Օրենսգրքի ընդունումից հետո համարվում են համապատասխան հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումների գումարների հաշվարկման նպատակով սկզբնական արժեքներ.

2) 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ մնացորդային ամորտիզացիոն ժամանակահատվածները Օրենսգրքի ընդունումից հետո համարվում են համապատասխան հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումների գումարների հաշվարկման նպատակով ամորտիզացիոն նվազագույն ժամկետներ:

5. 2014 թվականի հունվարի 1-ից հետո ձեռք բերված (կառուցված, մշակված) հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումների գումարների հաշվարկման նպատակով՝

1) սկզբնական արժեքների և համապատասխան հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումների գումարների հաշվարկման նպատակով «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով սահմանված կարգով մինչև 2018 թվականի հունվարի 1-ը հաշվարկվող ամորտիզացիոն մասհանումների տարբերությունները՝ հաշվի առած նաև 2014 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում համապատասխան հիմնական միջոցի կամ ոչ նյութական ակտիվի վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերը և օրենքով սահմանված կարգով իրականացված վերագնահատման արդյունքները համարվում են համապատասխան հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումների գումարների հաշվարկման նպատակով սկզբնական արժեքներ.

2) Օրենսգրքի 121-րդ հոդվածով սահմանված՝ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումների գումարների հաշվարկման նպատակով համապատասխան խմբերի ամորտիզացիոն ժամկետների և համապատասխան հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումների գումարների հաշվարկման նպատակով «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով սահմանված կարգով մինչև 2018 թվականի հունվարի 1-ը հաշվարկվող ամորտիզացիոն մասհանումների փաստացի կատարման ժամկետների տարբերությունները համարվում են համապատասխան հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումների գումարների հաշվարկման նպատակով ամորտիզացիոն նվազագույն ժամկետներ:

5.1. Օրենսգրքի 121-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառության իմաստով՝ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վրա կատարված ծախսերը որպես կապիտալ կամ ընթացիկ բնույթի ծախսեր դասակարգելու և հաշվառելու նպատակով սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի դրույթները կիրառելի չեն:

6. 2017 թվականի համար հարկային գործակալների ոչ ռեզիդենտի շահութահարկի ամսական վճարումների վերջնաժամկետը սահմանվում է 2018 թվականի փետրվարի 20-ը ներառյալ:

7. Մինչև 2014 թվականի հունվարի 1-ն ընկած հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող՝ վճարված և փաստացի շահութահարկի գումարից չհաշվանցված նվազագույն շահութահարկի գումարները հաշվանցվում են 2018 թվականի հունվարի 1-ից հետո ընկած հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող՝ ռեզիդենտ շահութահարկ վճարողի տվյալ հաշվետու ժամանակաշրջանի շահութահարկի կանխավճարների գումարները գերազանցող փաստացի շահութահարկի գումարներից:

(451-րդ հոդվածը լրաց., խմբ. 21.12.17 ՀՕ-266-Ն, փոփ. 21.06.18 ՀՕ-338-Ն)

Հոդված 452. Օրենսգրքի 8-րդ բաժնին վերաբերող անցումային հարկային հարաբերությունների կարգավորումը

1. Օրենսգրքի 8-րդ բաժինը կիրառվում է այն հարաբերությունների նկատմամբ, որոնք ծագել են Օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո, իսկ մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը ծագած՝ բնապահպանական հարկի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը բնապահպանական վճարների հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենսդրությունը:

2. Օրենսգրքով բնապահպանական հարկի մասով սահմանված հարկման բազայի այն չափաքանակները, որոնք բնապահպանական վճարների մասով մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը սահմանված չեն եղել, կիրառվում են Օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո հաշվարկվող հարկման բազայի նկատմամբ:

3. Օրենսգրքի ընդհանուր մասով լրացուցիչ պարտավորությունների առաջացման համար սահմանված վաղեմության ժամկետները գործում են նաև Օրենսգրքի 17-րդ բաժնով սահմանված կարգով հայտնաբերված՝ մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը կատարված բնապահպանական վճարների հաշվարկման ու վճարման կարգի խախտումների դեպքում:

4. 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ընդերքօգտագործման, արտադրության և (կամ) սպառման թափոնները հատուկ հատկացված տեղերում պահելու համար բնապահպանական հարկով հարկման բազա է համարվում մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը բնապահպանական վճարի հաշվարկման օբյեկտը:

5. 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ընդերքօգտագործման, արտադրության և (կամ) սպառման թափոնները հատուկ հատկացված տեղերում պահելու համար բնապահպանական հարկը հաշվարկվում է մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը բնապահպանական վճարի հաշվարկման համար սահմանված կարգով և դրույքաչափերով:

Հոդված 453. Օրենսգրքի 9-րդ բաժնին վերաբերող անցումային հարկային հարաբերությունների կարգավորումը

1. Օրենսգրքի 9-րդ բաժինը կիրառվում է այն հարաբերությունների նկատմամբ, որոնք ծագել են Օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո, իսկ մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը ծագած՝ ճանապարհային հարկի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը ճանապարհային վճարների հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենսդրությունը:

2. Օրենսգրքի ընդհանուր մասով լրացուցիչ պարտավորությունների առաջացման համար սահմանված վաղեմության ժամկետները գործում են նաև Օրենսգրքի 17-րդ բաժնով սահմանված կարգով հայտնաբերված՝ մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը կատարված ճանապարհային վճարների հաշվարկման ու վճարման կարգի խախտումների դեպքում:

Հոդված 454. Օրենսգրքի 10-րդ բաժնին վերաբերող անցումային հարկային հարաբերությունների կարգավորումը

1. Օրենսգրքի 10-րդ բաժինը կիրառվում է այն հարաբերությունների նկատմամբ, որոնք ծագել են Օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո, իսկ մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը ծագած՝ բնօգտագործման վճարի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը բնօգտագործման վճարների հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենսդրությունը:

2. Մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը Կառավարության որոշումներով բնօգտագործման վճարի գծով տրված արտոնությունները գործում են մինչև Կառավարության համապատասխան որոշումներով սահմանված ժամկետների ավարտը:

3. Օրենսգրքով բնօգտագործման վճարի մասով սահմանված վճարի բազայի այն չափաքանակները, որոնք բնօգտագործման վճարների մասով մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը սահմանված չեն եղել, կիրառվում են Օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո հաշվարկվող վճարի բազայի նկատմամբ:

4. Օրենսգրքի ընդհանուր մասով լրացուցիչ պարտավորությունների առաջացման համար սահմանված վաղեմության ժամկետները գործում են նաև Օրենսգրքի 17-րդ բաժնով սահմանված կարգով հայտնաբերված՝ մինչև Օրենսգիրքն ուժի

մեջ մտնելը կատարված բնօգտագործման վճարների հաշվարկման ու վճարման կարգի խախտումների դեպքում:
(454-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն)

Հոդված 455. Օրենսգրքի 13-րդ բաժնին վերաբերող անցումային հարկային հարաբերությունների կարգավորումը

1. (մասն ուժը կորցրել է 25.06.19 ՀՕ-68-Ն)
2. 2017 թվականի համար ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտների եկամտային հարկի ամսական վճարումների վերջնաժամկետը սահմանվում է 2018 թվականի փետրվարի 1-ը ներառյալ:
3. Օրենսգրքի 276-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված գործունեության տեսակներ (բացառությամբ ավտոբուսներով և (կամ) միկրոավտոբուսներով իրականացվող ուղևորափոխադրման գործունեության տեսակի) իրականացնող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը 2018 թվականի հունվար ամիսը ներառող հաշվետու ժամանակաշրջանի համար արտոնագրային հարկ վճարելու վերաբերյալ հայտարարությունը ներկայացնում են և արտոնագրային հարկի վճարումը կատարում են մինչև 2018 թվականի հունվարի 31-ը ներառյալ: Կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերն ավտոբուսներով և (կամ) միկրոավտոբուսներով իրականացվող ուղևորափոխադրման մասով 2018 թվականի հունվար և (կամ) փետրվար ամիսների համար արտոնագրային հարկ վճարելու վերաբերյալ հայտարարությունը ներկայացնում են մինչև 2018 թվականի մարտի 1-ը ներառյալ, իսկ 2018 թվականի հունվար և (կամ) փետրվար ամիսների համար ավտոբուսներով և (կամ) միկրոավտոբուսներով իրականացվող ուղևորափոխադրումների համար Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված արտոնագրային հարկի վճարման ժամկետ է սահմանվում մինչև 2018 թվականի հունիսի 20-ը ներառյալ:
(455-րդ հոդվածը խմբ. 08.02.18 ՀՕ-124-Ն, փոփ. 25.06.19 ՀՕ-68-Ն)
(25.06.19 ՀՕ-68-Ն օրենքի 71-րդ հոդվածի համաձայն՝ մինչև 25.06.19 ՀՕ-68-Ն օրենքի պաշտոնական հրապարակման օրը ներառյալ ընթացիկ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության 58.35 միլիոն դրամի շեմը գերազանցած հարկ վճարողները 2019 թվականի ընթացքում շարունակում են համարվել ԱԱՀ վճարողներ)

Հոդված 456. Օրենսգրքի 16-րդ բաժնին վերաբերող անցումային հարկային հարաբերությունների կարգավորումը

1. Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ առկա գերավճարները հաշվառվում են մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը գործող կարգով՝ գանձապետարանի կողմից վարվող պետական բյուջեի միջոցների առանձին ենթահաշվում: Սույն մասում նշված գերավճարների վերադարձն իրականացվում է Օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո գործող կարգով:
2. Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվան նախորդած ժամանակաշրջանների համար հարկ վճարողի ներկայացրած հարկային հաշվարկներով (այդ թվում՝ ճշտված) առաջացած հարկի գումարների նկատմամբ տույժերի հաշվարկման առումով Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ առկա գերավճարները հաշվի չեն առնվում:
3. Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ հարկ վճարողներն ազատվում են նվազագույն շահութահարկի հաշվարկված և չվճարված գումարների, ինչպես նաև սահմանված տույժերի վճարման պարտավորությունից:
4. Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվան նախորդած ժամանակաշրջանների համար Օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո սահմանված կարգով իրականացվող ստուգման արդյունքներով նվազագույն շահութահարկի գումարների գծով հարկային պարտավորություններ չեն առաջադրվում:
5. 2010 թվականի հունվարի 1-ից մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրը հարկային մարմին որևէ հարկային հաշվարկ և գործունեությունը դադարեցնելու մասին հայտարարություն չներկայացրած հարկ վճարողների կողմից մինչև 2010 թվականի հունվարի 1-ը ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար վճարված գումարները հանվում են հաշվառումից, եթե այդ հաշվետու ժամանակաշրջանների համար հարկային հաշվարկներ չեն ներկայացվել:
6. Մինչև 2018 թվականի հունվարի 1-ը հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող հաշվարկներով (այդ թվում՝ ճշտված) առաջացող պարտավորությունները և դեբետային գումարները հաշվառվում են Կառավարության սահմանած կարգով:
7. *(մասն ուժը կորցրել է 23.09.19 ՀՕ-172-Ն)*
8. Եթե Օրենսգրքի 325-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով ԱԱՀ-ի և (կամ) ակցիզային հարկի գծով հարկային պարտավորությունների մարումից հետո հարկային մարմին ներկայացվող՝ ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով կամ ԱԱՀ-ի կամ ակցիզային հարկի հաշվարկներով պակասեցվում են նախկինում հարկային մարմին ներկայացված համապատասխան հաշվարկով հայտարարագրված հարկային պարտավորությունները, ապա հարկ վճարողի անձնական հաշվի քարտում առկա դեբետային գումարների կամ մինչև 2018 թվականի հունվարի 1-ը հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացված՝ ԱԱՀ-ի կամ ակցիզային հարկի հաշվարկներով (այդ թվում՝ ճշտված) առաջացած՝ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի կամ ակցիզային հարկի գումարների հաշվին մարված

գումարը կրկին վերականգնվում է հարկ վճարողի անձնական հաշվի քարտում՝ որպես դեբետային գումար կամ որպես բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի կամ ակցիզային հարկի գումար (չի մուտքագրվում միասնական հաշվին):

(456-րդ հոդվածը փոփ. 21.12.17 ՀՕ-266-Ն, 23.03.18 ՀՕ-261-Ն, փոփ., խմբ. 23.09.19 ՀՕ-172-Ն)

Հոդված 457. Օրենսգրքի 17-րդ բաժնին վերաբերող անցումային հարկային հարաբերությունների կարգավորումը

1. Մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը սկսված և չավարտված հարկային ստուգումները, հարկային ուսումնասիրությունները և հարկային վարչարարության շրջանակներում իրականացվող այլ գործողությունները շարունակվում են և դրանց արդյունքներն ամփոփվում են մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. ԱԱՀ վճարողներն Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու ամսվան հաջորդող ամսվա 1-ի դրությամբ հաշվառում են ապրանքների մնացորդներն՝ ըստ մատակարարման և պահպանման առանձին վայրերի: Այն հարկ վճարողները, որոնք Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու պահին չեն համարվում ԱԱՀ վճարող, սակայն հետագայում որևէ ամսաթվի դրությամբ կհամարվեն ԱԱՀ վճարող կամ նոր ստեղծված (պետական գրանցում ստացած կամ հաշվառված) ԱԱՀ վճարողները կամ այն հարկ վճարողները, որոնց մոտ հարկային տարվա որևէ ամսում ԵՏՄ անդամ չհամարվող պետություններից «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ներմուծված ապրանքների մաքսային արժեքը, իսկ ԵՏՄ անդամ պետություններից ներմուծված ապրանքների՝ սահմանված կարգով որոշվող ԱԱՀ-ով հարկման բազան (առանց ակցիզային հարկի) կգերազանցի 100 միլիոն դրամի շեմը, սույն կետով սահմանված ապրանքային մնացորդների հաշվառումն իրականացնում են ԱԱՀ վճարող համարվելու կամ հարկային տարվա որևէ ամսում 100 միլիոն դրամի շեմը գերազանցելու օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 1-ի դրությամբ: Սույն կետում նշված հաշվառման արդյունքներն արտացոլվում են հարկային մարմնի սահմանած ձևում: Հարկ վճարողները հաշվառման արդյունքները կարող են արտացոլել այլ ձևաչափով, սակայն հարկային մարմնի սահմանած ձևով պահանջվող տվյալների և վավերապայմանների պարտադիր պահպանմամբ:

3. Մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը կիրառության մեջ դրված ակցիզային դրոշմանիշերն ու դրոշմապիտակները շարունակում են կիրառվել այնքան ժամանակ, քանի դեռ դրանք կիրառությունից չեն հանվել մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Ակցիզային դրոշմանիշերն ու դրոշմապիտակները Օրենսգրքով սահմանված կարգով առաջին անգամ կիրառության մեջ են դրվում Օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո:

5. Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ հարկային մարմին ցանցային կապի միջոցով օրվա ընթացքում իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ տեղեկություններ ուղարկող հսկիչ դրամարկղային մեքենաներ չկիրառող կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների համար այդ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր է Կառավարության սահմանած ժամկետներում, բայց ոչ ուշ, քան մինչև 2019 թվականի հունվարի 1-ը:

6. Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ հարկային մարմին ցանցային կապի միջոցով օրվա ընթացքում իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ տեղեկություններ ուղարկող հսկիչ դրամարկղային մեքենաներ չկիրառող կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները (բացառությամբ շրջանառության հարկ վճարողների) մինչև սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված ժամկետը յուրաքանչյուր ամսվա առաջին հինգ աշխատանքային օրվա ընթացքում իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում նախորդ ամսվա ընթացքում յուրաքանչյուր հսկիչ դրամարկղային մեքենայով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ տեղեկություն՝ Կառավարության սահմանած ձևով: Մինչև սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված ժամկետը շրջանառության հարկ վճարողները յուրաքանչյուր հսկիչ դրամարկղային մեքենայով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ եռամսյակային տեղեկությունները ներառում են սահմանված կարգով հարկային մարմին ներկայացվող շրջանառության հարկի հաշվարկում:

7. Եթե մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը որևէ կիսամյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ հարկ վճարողն ունի հաշվետու ժամանակաշրջանում հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարների՝ հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարները գերազանցող գումար (սույն մասի կիրառության իմաստով՝ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումար), ապա այդ գումարն օրենքով սահմանված կարգով պետական գրանցում (հաշվառում) ունեցող հարկ վճարողի գրավոր դիմումի հիման վրա Օրենսգրքի 17-րդ բաժնով սահմանված կարգով իրականացվող ստուգման կամ ուսումնասիրության արդյունքներով հիմնավորվելու դեպքում մուտքագրվում է միասնական հաշվին, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի: Սույն մասի դրույթները տարածվում են յուրաքանչյուր կիսամյակի հաշվետու ժամանակաշրջանների համար հարկային մարմին ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկներով առաջացած՝ հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարների՝ հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարները գերազանցող գումարի (բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումար) վրա:

(457-րդ հոդվածը լրաց. 25.10.17 ՀՕ-191-Ն, 21.12.17 ՀՕ-266-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն, լրաց. 23.09.19 ՀՕ-172-Ն)

(23.09.19 ՀՕ-172-Ն օրենքի պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվա

դրությամբ առկա՝ Օրենսգրքի 457-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված՝ մինչև 5 միլիոն դրամը ներառյալ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումարի մնացորդը մուտքագրվում է օրենքով սահմանված կարգով պետական գրանցում (հաշվառում) ունեցող հարկ վճարողի միասնական հաշվին՝ առանց հարկ վճարողի կողմից դիմումի ներկայացման և Օրենսգրքի 17-րդ բաժնով սահմանված կարգով իրականացվող ստուգման կամ ուսումնասիրության՝ համաձայն նույն օրենքի 6-րդ հոդվածի:)

Հոդված 458. Օրենսգրքի 18-րդ բաժնին վերաբերող անցումային հարկային հարաբերությունների կարգավորումը

1. Օրենսգրքով սահմանված պահանջները խախտելու կամ չկատարելու համար Օրենսգրքի 18-րդ բաժնով սահմանված պատասխանատվության միջոցները գործում են մինչև Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության նոր օրենսգիրքն ուժի մեջ մտնելը՝ դրանով Օրենսգրքով սահմանված պահանջները խախտելու կամ չկատարելու համար պատասխանատվության միջոցներ սահմանված լինելու դեպքում:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ

Ս. Սարգսյան

2016 թ. նոյեմբերի 1
Երևան
ՀՕ-165-Ն